

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վ. Բ.
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ. Ս.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԿՆԵՐԻ
ՊԱՏՄ ՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2015

9(47.925)

F-35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ

հշ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն

5515

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ԱՇԾԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

121

121

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015



ՀՅԴ 94:316.347(=19):394:314
ՊՄԴ 63.3+60.55+ 63.5(22)+60.7
Բ 358

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով
Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ալբերտ

Բարխուդարյան Վ. Բ., Ալեքսանյան Հ.Ս.

Բ 358 Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 441 էջ

Աշխատությունը ներկայացնում է Ռուսաստանի հայ գաղթօջախների բազմադարյա պատմությունը դրանց ձևավորումից մինչև ժամանակակից փուլն ընկած զարգացումները: Առանձին գլուխներով ներկայացված է Ռուսաստանի տարբեր տարածաշրջանների՝ Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Դոնի, Աստրախանի, Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքների հայկական համայնքների պատմությունը՝ նրանց հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային-կրթական կյանքի ասպարեզները, ժողովրդագրական պատկերի շարժընթացը:

Աշխատության մեջ ներկայացված է Ռուսաստանի արդի հայ գաղթօջախների կարևոր դերակատարությունը հայ-ռուսական հարաբերություններում, որն ունի գիտագործնական կարևոր նշանակություն: Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, սփյուռքագետների, պատմական ժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՅԴ 94:316.347(=19):394:314
ՊՄԴ 63.3+60.55+ 63.5(22)+60.7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհասփյուռ հայկական գաղութները կամ համայնքները ձևավորվել են տարբեր դարաշրջաններում և բազմազան հանգամանքների բերումով: Այլ իրավիճակ ստեղծվեց Ռուսաստանի հայկական գաղութների հետ, որոնք առաջացան պատմական որոշակի իրադարձությունների բերումով: Վերջին հաշվով դրանք ընդլայնվեցին Թուրքիայի և Պարսկաստանի ծանր ու ազգակործան տիրապետությունը թոթափելու հայ ժողովրդի ազատագրական տոգորումների արդյունքում:

Հայ ազատագրական միտքը երկար դեգերումներից հետո համոզվելով, որ երկու բռնատիրական պետությունների լծից ազատագրվելը արևմտյան եվրոպական խոշոր պետությունների աջակցության հետ կապելն անհեռանկար է, կողմնորոշվեց դեպի Ռուսաստան: Հյուսիսային կայսրության հետ հույսեր կապելն իրական էր դիտվում տարբեր պատճառովներով:

Հզորացող Ռուսաստանը Պետրոս I-ի և Նրա քաղաքական գիծը Եկատերինա II-ի օրոք ակտիվ քաղաքականություն էր տանում կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու, արևելյան շուկաներին մերձեցնելու, հարավի ծովեր դուրս գալու համար: Այդ քաղաքականությունը իրականացնելու գործում Կովկասի ժողովուրդների մեջ դավանակից հայերին և վրացիներին էր տեսնում իր ձգտումների համակիր: Քրիստոնյա այս երկու ժողովուրդներն իրենց հերթին թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրվելն առնչում էին Ռուսաստանի հարավ առաջանալու հետ: Ուրիշ խոսքով կայսրության ռազմաքաղաքական ձգտումները համընկնում էին հայերի և վրացիների ազատագրական ոգորումների հետ: Դրանք համահունչ էին: Ահա հայ-ռուսական հարաբերությունների աշխուժացման այդ շրջանում ձևավորվեցին Ռուսաստանի հայկական գաղութները:

Ռուսաստանում բնակություն հաստատող հայերը մեծ առանձնաշնորհումներ ստացան, ոչ միայն տնտեսական ասպարե-

գում այլ նաև դավանանքը, ազգային լեզուն, ազգային ինքնությունը պահպանելու հարցում: Օգտվելով պետության տված արտոնություններից՝ ազգային ինքնություն ստացած հայկական համայնքները առևտրա-տնտեսական լայն գործունեություն ծավալեցին, և կարճ ժամանակում նկատելի հաջողությունների հասան: Նրանց բարվոք վիճակը ներազդում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանում օտարի տիրապետության տակ հեծող հայության վրա՝ գորեղացնելով համակրանքը Ռուսաստանի հանդեպ: Հատկանշական է, որ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Անդրկովկասի հայությունը կամավորական զինյալ ջոկատներ էին ստեղծել և ռուսների կողմից ակտիվ մասնակցում էին ռազմական գործողություններին:

Ռուսահայ համայնքներում հայկական բազմաբնույթ գրքեր էին տպագրվում, թերթեր հրատարակվում, ուսումնական հաստատություններ հիմնվում օտար միջավայրում պահպանելով էին հայ մշակույթը: Ավելին՝ հայկական այդ օջախներում ոչ միայն պահպանվում այլև զարգանում էր հայ գիրն ու գրականությունը, արվեստը, գիտությունը: Բավական է վերհիշել Լազարյան ճեմարանի ոչ միայն ուսումնակրթական բնագավառի մեծ ներդրումը, այլև հայագիտության ու արևելագիտության ուղղությամբ կատարած վիթխարի գործունեությունը: Միայն Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի ստեղծագործությունները նկատի առնելով կարելի է գաղափար կազմել գրականության զարգացման մակարդակի մասին:

Ռուսաստանի հայկական գաղութները տարածքային առումով ավելի մոտ լինելով Հայաստանին տեղյակ էին հայրենի երկրում տեղի ունեցող իրադարձություններին ու նրա կարիքներին: Հատկապես նշանավոր ու բազմամարդ հայ համայնքները՝ Մոսկվայի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի ջանում էին օգնության ձեռք մեկնել հայրենի երկրին ինչպես տնտեսական, այնպես էլ լուսավորության և մշակույթի ասպարեզներում:

Նրանք ռուսական առաջավոր մշակույթի ձեռքբերումները տարածում էին Հայաստանում, պայքարում անգրագիտության, խավարամոլության դեմ:

Հայկական գաղութները հարմարվելով ժամանակի պահանջներին պահպանեցին ազգային դիմագիծը մինչև 20-րդ դարի երկրորդ տասնամյակը: Հոկտեմբերյան հեղափոխությունն ու խորհրդային կարգերի հաստատումը ամբողջովին խախտեց հայկական գաղթավայրերի բնականոն գոյության ընթացքը: Ի տարբերություն ցարական Ռուսաստանի վարչատարածքային բաժանման խորհրդային իշխանությունը ստեղծեց ազգային հանրապետություններ և տվյալ ազգությանը վերաբերող հարցերը կենտրոնացան այդ հանրապետություններում: Վերացան գաղութ, համայնք հասկացությունը և նրանցում գործող ազգային, հասարակական կազմակերպությունները: Հայկական համայնքների հայության ազգային կյանքը մնաց անորոշության մեջ: Այդ գաղութներին վերաբերվող ուսումնասիրություններում և, ընդհանրացնող աշխատություններում, այդ թվում՝ պատմության ինստիտուտի հրատարակած հայ ժողովրդի ամբողջական պատմության ծանրակշիռ բազմահատորյակի մեջ, ուր մեծ տեղ է հատկացված ռուսահայ գաղութներին, խորհրդային շրջանի նրանց պատմությունը մնում էր բաց: Հայոց պատմության դպրոցական կամ ԲՈՒՀ-ական դասագրքերում նույնպես խորհրդային հանրապետությունների հայկական համայնքների պատմությունն արտացոլում չէր գտել: Հետխորհրդային վերջին 20-25 տարիներին ժողովրդագրական մեծ տեղաշարժեր կատարվեցին, Ռուսաստանի Դաշնության հայկական համայնքներում և այլ բնակավայրերում խիստ ստվարացավ հայության թվաքանակը:

Հրատապ անհրաժեշտություն էր դարձել ուսումնասիրել ռուսահայ գաղութների հայության պատմության ամբողջական ընթացքը, վերականգնել այդ համայնքների պատմության շարունակականությունը:

Այդ դժվարին խնդրին ձեռնամուխ եղավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատող Հովհաննես Ալեքսանյանը: Նա հետևողականորեն ու մանրակրկիտ ուսումնասիրեց համայնքային մամուլը, հասարակական բազմաբնույթ կազմակերպությունների գործունեությունը, խորհրդային մարդահամարների տվյալները և արխիվային նյութեր: Շրջանառության մեջ դրվեցին բոլոր հնարավոր աղբյուրները, ամբողջացնելով ռուսահայ համայնքների պատմությունը:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն աշխատության մեջ առաջին անգամ տրվում է Ռուսաստանի հայկական գաղութների ամբողջական պատմությունը՝ հիմնադրումից մինչև մեր օրերը: Աշխատության երկրորդ մասում, խորհրդային և հետխորհրդային տարիների պատմությունը շարադրված են ամենայն մանրամասնությամբ, քանի որ այդ փաստերը առաջին անգամ են դրվում լայն շրջանառության մեջ:

Բաժին 1. Ռուսաստանի հայկական գաղթօջախները սկզբնավորումից մինչև 1917 թ.: Գաղթօջախների տնտեսական, հասարակական, հոգևոր-մշակութային կյանքը:

Ռուսաստանի տարածքում հայկական համայնքների կան գաղութների առաջացումը կապվում է հայ-ռուսական հարաբերությունների սերտացման հետ: Հայ հասարակական-ազատագրական միտքը ելք էր որոնում Հայաստանը թուրքական և պարսկական ծանր տիրապետությունից ազատագրելու՝ հանգեցնել այն համոզմանը, որ դա հնարավոր է իրականացնել Ռուսաստանի օգնությամբ: Ռուսական հզորացող կայսրությունն իր հերթին ձգտում էր հարավում ընդարձակել իր սահմանները, դուրս գալ հարավի ծովեր, մերձենալ արևելյան շուկաներին: Այդ նպատակին հասնելու համար Ռուսաստանը փորձում էր հենվել հարավի դավանակից ժողովուրդների՝ հայերի և վրացիների վրա՝ հովանավորյալ քաղաքականություն վարելով քրիստոնյա այդ ժողովուրդների նկատմամբ: Կայսրության այդ քաղաքականությունը համընկնում էր Այսրկովկասի ժողովուրդների ազատագրական ակնկալիքներին: Այսպիսով, Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը համընկնում, համահունչ էին հայերի և վրացիների ձգտումներին:

Ահա նպաստավոր այդ իրավիճակում, ո՞ր Աստրախանում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում հիմնվեցին և ստվարացան հայկական գաղութները:

Բացառություն էին կազմում միայն Ղրիմի հայ համայնքները, որտեղ, հայերը հաստատվել էին դարեր առաջ, իսկ 18-րդ դ. երկրորդ կեսին թերակղզին անցավ Ռուսաստանի տիրապետության տակ:

ՉԼՈՒՄ 1. ՂՐԻՄ¹

Տավրիկյան թերակղզու վրա մշտական հայ բնակչության հաստատվելը սկսվել է այնտեղ թաթարների գալուց առնվազն մեկ և կես դար առաջ, այսինքն՝ 11-րդ դարի վերջերից - 12-րդ - դարում: Հայերը Ղրիմ էին գաղթում տարբեր պատճառներով և տարբեր ուղղություններով: Հաստատվելով այստեղ՝ հայ առևտրական դասը հնարավորություն էր ստանում լայն և շահավետ գործարքներ իրականացնել Արևմուտքի և Արևելքի միջև: Այդ էր պատճառը, որ 12-13-րդ դարերում ղրիմահայոց ղբադմունքների մեջ առևտուրը առավել մեծ տեղ էր բռնում: Առևտրական դասին հետևում էին այլ զբաղմունքների տեր գաղթականները՝ երկրագործերն ու արհեստավորները:

14-րդ դարի 30-ական թվականներին ղրիմահայ գաղթականության շարքերը սովորաբար են: Ոսկե Հորդայից այստեղ են անցնում անհամեմատ ավելի մեծ թվով հայեր, քան հաշվվում էին իրենք՝ ղրիմահայերը: Հայերի՝ Ղրիմ կատարած այս ներհոսքը նշանավորեց նոր փուլ տեղի հայության տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքի զարգացման պատմության մեջ: Ղրիմահայոց թիվը շարունակ ավելանում էր նաև Հայաստանից և հայկական գաղթօջախներից եկող հայության հաշվին: Փոքր և մեծ խմբերով, տարբեր շարժառիթներով վերաբնակվող հայերի մեջ սակավ դեր չէին խաղում նաև տնտեսական ազդակներն ու արհեստների կիրարկման նպաստավոր ոլորտ գտնելու պահանջը: Ղրիմի հայկական գաղթօջախները մշտական համալրում էին ստանում նաև առևտրատնտեսական ու մշակութային

¹ Ղրիմի հայկական գաղութների մասին տես Վ. Ա. Միքայելյան, «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» երկհատորյակ, Երևան, (1964 թ. և 1970 թ.), Ղրիմահայոց պատմություն (1989 թ.): Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. I, Երևան, (2003 թ.): Այստեղ Ղրիմի գաղութի հեղինակը նույնպես ակադեմիկոս Վարդգես Միքայելյանն է (էջ 154-230):

այն աշխույժ կապերի հետևանքով, որ նրանք ամբողջ միջնադարի ընթացքում պահպանում էին Հայաստանի, Հայկական Կիլիկիայի և Արևելյան Եվրոպայի հետ:

Հայ գաղթօջախները տեղաբաշխված էին միջնադարյան Ղրիմի գրեթե բոլոր նշանավոր կենտրոններում: 13-18-րդ դարերում ղրիմահայերը նշանակալից զանգվածներով ապրում էին հետևյալ վայրերում՝ Կաֆայում, Սուրխաթում (Հին Ղրիմ, Եսկի Ղրիմ), Սուդակում, Կեոզլենում (Եվպատորիա), Ղարասուբազարում, Աքմեչեթում (Սիմֆերոպոլ), Բախչիսարայում, Բալակլավայում, Օրաբազարում (Արմյանսկի Բազար, Արմյանսկ), Ինկերմանում և բազմաթիվ զուտ հայկական գյուղերում²:

Բոլոր ուղղակի և անուղղակի տվյալները վկայում են, որ միջնադարյան Ղրիմում իրենց թվաքանակով հայերը թաթարներից հետո բռնում էին երկրորդ տեղը և, հավանաբար, այդ թվաքանակը տատանվել է 140-150 հազարի միջև: Ղրիմի հայկական գաղթօջախների ոչ պաշտոնական կենտրոնը մեծահռչակ Կաֆան էր, որը 14-15-րդ դդ. ուներ 70 հազար բնակիչ: Այդ 70 հազարի 2/3-ը, այսինքն՝ 46 հազարը, հայեր էին³:

Միջնադարյան ղրիմահայ մեծ գաղթօջախներից էր Սուրխաթը: 14-15-րդ դարերում քաղաքն իրեն մերձակա հայկական Սուրբ Խաչ վանքով հայ բնակչության քանակով շատ քիչ էր զիջում Կաֆային:

13-րդ դարից ի վեր հայկական խոշոր գաղութ կար Սուդակում, որտեղ հայերն ունեին իրենց թաղամասը, եկեղեցին և քաղաքի բնակչության մեջ մեծաթիվ էին: Քաղաքի մերձակայքում Սր. Աստվածածին անունով հայկական ավանը Սուդակում հայերի մեծաթիվ լինելն օտարերկրացիներին առիթ էր տվել քաղաքին ու նրա մերձակա տարածքներին տալ «Շովային Հայաստան»:

² Տե՛ս, Հայ գաղթաշխարհի պատմություն, նշվ. աշխ., էջ 158:

³ Միքայելյան Վ., Հայ-իտալական առնչություններ. ջննովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, Եր., 1974, էջ 29:

տան» («Armenia Maritima») կամ «Մեծ Հայաստան» անունը⁴: 14-18-րդ դարերում հայ բնակչությունը ստվարաթիվ քանակով աչքի էր ընկնում Ղրիմի խանության երկրագործական և առևտրաարհեստավորական նշանավոր կենտրոն Ղարասուբագարում: Ձուտ հայկական բերդապահ ավան էր Կազարաթը՝ Սբ. Խաչ վանքին կից և Սուրխաթից 3-4 կմ հեռավորության վրա: Հայկական գաղթօջախ կար նույնիսկ խանության մայրաքաղաք Բախչիսարայում:

Հայկական գաղթօջախներ կային նաև Աքմեդեթում, Խերսոնեսում, Յալթայում, Կերչում, Ինկերմանում, Կեոզլեում, թերակղզու ծովափնյա ու տափաստանային մյուս շրջաններում: Ղրիմահայոց հիմնական զբաղմունքները դրսևորվում էին միջնադարի արտադրատնտեսական կյանքին բնորոշ ձևերում՝ երկրագործության, առևտրի և արհեստագործության մեջ: Առևտրի զարգացումը պայմանավորված էր ամենից առաջ միջազգային ապրանքաշրջանառության մեջ Ղրիմի խաղացած դերով: Սկսած 13-րդ դարի վերջերից ընդհուպ մինչև 18-րդ դարի 70-ական թվականները Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրատնտեսական կապերի ծանրության մի զգալի բաժինը ընկած էր հայ, այդ թվում՝ Ղրիմահայ վաճառականության ուսերին: Պատմական իրադարձությունների բերումով իրեն վերապահված այդ պարտավորությունը նա կարողանում էր գլուխ բերել Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրների ու տարածաշրջանների՝ Լեհաստանի, Հունգարիայի, Վենետիկի, Ջենովայի, Սիրիայի, Կիլիկիայի, Թուրքիայի, Կովկասի, Ոսկե Հորդայի և Ռուսաստանի հետ հաստատած գործուն և փոխադարձ արդյունավետ կապերի շնորհիվ: Դրան մեծապես նպաստում էր լեզուների, Արևելքի ժողովուրդների բարքերի իմացության և առևտրի ասպարեզում ունեցած այն հմտությունն ու ձեռներեցությունը, որոնք հայ վաճառականության անվիճարկելի առանձնաշնորհը հանդիսանալով, նրան ա-

պահովում էին առաջատար դեր Եվրոպա-Արևելք ապրանքափոխանակության մեջ:

Ղրիմահայ վաճառականները լայն մասնակցություն ունեին Կովկասի և Հայաստանի վրայով Պարսկաստանի հետ կատարվող առևտրին: Միաժամանակ Հայաստանի և Պարսկաստանի հայ վաճառականները Ղրիմի մշտական հյուրերն էին. նրանք թերակղզու վրայով իրենց ապրանքը տեղափոխում էին Լվով, իսկ այնտեղից էլ՝ գերմանական քաղաքներ: Գողթնեցի վաճառականները Կաֆայում 18-րդ դարում առանձին հյուրանոց քարվանսարաններ էին զբաղեցնում: Ղրիմահայոց ձեռքում էր գտնվում Չերքեզիայի հետ կատարվող առևտրի մենաշնորհը, ուր Եվրոպացի վաճառականները չէին կարող թափանցել: Առևտրական այս կապերի հետևանքով 14-16-րդ դարերում Չերքեզիա անցած Ղրիմահայերից մի հատված այնտեղ մշտական բնակություն հաստատեց: Ղրիմահայ վաճառականության առևտրական գործարքները մեծ չափերի էին հասնում Կ. Պոլսում, Ջնյուռնիայում և Վենետիկում:

Ղրիմի և Ղրիմահայ գաղթօջախների տնտեսական կյանքում, սկսած 15-րդ դարի երկրորդ կեսից, առանձնակի նշանակություն է ստանում հյուսիսի և սլավոնական երկրների հետ կատարվող առևտուրը:

Ղրիմի վրայով էր անցնում արևելյան ապրանքների՝ դեպի Եվրոպա և արևմտյան ապրանքների՝ դեպի Արևելք տեղափոխող ցամաքային տարանցիկ ճանապարհը, որը կտրում էր ուկրաինական տարածքները, մտնում Լվով, իսկ այնտեղից՝ Եվրոպայի վաճառաչահ քաղաքները: Այդ պատճառով էլ Լվովը, Ղրիմահայերի հաճախակի երթևեկի կայանն էր, այն հենակետը, որտեղ նրանք մտնում էին երկար ժամանակով և գլուխ բերում արևմտաուկրաինական, լեհական, լիտվական ու գերմանական շրջաններում իրենց նախածեռնած գործարքները: Կաֆայի վաճառականական կապիտալի ներկայացուցիչների համար Լվովն այնպիսի կարևորություն էր ստացել, որ նրանք իրենց ջանքերով և դրամով 1363

⁴ Кеппен П., Крымский сборник, СПб., 1837, с. 318.

թ. կառուցեցին տեղի հայկական մայր տաճարը: Լվովում և Գալիցիայի այլ վայրերում, տարանցիկ առևտրի պահանջներից ելնելով, ղրիմահայ առավել մեծահարուստ վաճառականները պահում էին իրենց մշտական գործակալները: Շատ բեղուն էր ղրիմահայ առևտրական դասի ներկայացուցիչների գործունեությունը Մոսկվայում, Մոսկովյան իշխանության և ապա՝ ռուսական միասնական պետության տարածքներում: Այսպիսով, 15-րդ դարի վերջին քառորդից սկսած մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին (1783 թ.), տավրիկյան հայերը առաջատար դեր էին խաղում սլավոնական աշխարհի, մասնավորապես Լեհաստանի ու Ռուսաստանի հետ եղած տնտեսական կապերում:

Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը մահմեդական տիրապետությունից ազատագրելու ծրագրերը յուրովի արձագանք էին գտնում նաև ղրիմահայ գաղութներում: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և դրան հաջորդած տասնամյակում ղրիմահայերը թե՛ մարտի դաշտում և թե՛ դիվանագիտական և այլ բնագավառներում բոլոր ուժերով նպաստում են թերակղզին Ռուսաստանին միացնելու ուղղությամբ ռուսական կառավարության ձեռնարկած քայլերին: Հայերն ու հույները ռուսների հետ միասին կռվում էին թուրք-թաթարական ուժերի դեմ: Նշանակալից թվով հայեր մտել էին ռուսական գործող բանակի շարքերը: Հայերի օգնությամբ ռուսներին հաջողվեց գրավել Օր (Պերեկոպ) անառիկ ամրոցը: Ռուսական բանակին և դիվանագիտությանը մատուցած իրենց ծառայությամբ աչքի ընկան ղրիմահայեր Կարապետ Մերզիևը, Իվանեսը, Մարկոս Կյունուշլին և ուրիշներ: Վերջինը, որը ապագա ծովակալ Լ. Մ. Սերբերյակովի հայրն էր, մեծ դեր խաղաց Ղրիմը Ռուսաստանին միացնելու ժամանակ՝ «բոլոր մուրզաներին դարձնելով Ռուսաստանի կողմը»⁵:

⁵ Присоединение Крыма к России. Рескрипты, письма, реляции и донесения. т. I, Спб., 1887 с. 103.

Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու հեռանկարը ոգեշնչել էր նաև ղրիմահայ համայնքներին: Դա էր Ղրիմը գրավելու և սևծովյան ափերը դուրս գալու համար Ռուսաստանի վարած ռազմական և քաղաքական գործողություններին հենարան դառնալու նրանց դիրքորոշման հիմնական պատճառներից մեկը:

Ղրիմահայ գաղթօջախների կյանքում նաև առաջնակարգ նշանակություն է ստացել արհեստագործությունը՝ դառնալով գաղութահայ զանգվածների կենսապայմանների ապահովման կարևոր միջոցը: Միայն Սուրխաթում կային արհեստների ավելի քան երկու տասնյակ տեսակներ: Զարգացում էին ապրում հետևյալ արհեստները՝ ներկարարությունը, կոշկակարությունը, ոսկերչությունը, ջուլհակությունը, կտավագործությունը, դարբնությունը, հյուսնությունը, գինեգործությունը և այլն:

Արհեստագործությունը շատ ավելի զարգացած էր Կաֆայում, որը կապված էր քաղաքի բնակչության մեծաթիվ լինելու, առևտրի, շինարարության և նավագնացության պահանջների բավարարման հետ:

Կաֆայում հայ արհեստավորներն ունեին իրենց համքարությունները: 1449 թ. կանոնադրությունը ճոպանագործներից և որմնադիրներից պահանջում էր այդ արհեստներից ամեն մեկի համար ունենալ գլխավոր վարպետ, որը պարտավոր էր գրանցել տվյալ ճյուղի արհեստավորներին: Քանի որ բուն Կաֆայում արհեստների նկատմամբ անհամեմատ մեծ պահանջարկ կար, ապա հիշյալ կանոնադրությամբ արհեստավորներին խստիվս արգելվում էր առանց հյուպատոսի թույլատվության Կաֆայից այլ վայր մեկնել աշխատանքի: Կանոնադրական այս կարգը խախտելու դեպքում գլխավոր վարպետը պարտավոր էր զեկուցել իշխանություններին, եթե չէր կամենում կարգը խախտողի փոխարեն տուգանքապատիժ կրել:

Համքարությունները Կաֆայում գոյություն ունեին ոչ միայն ջենովացիների ժամանակ, այլ նաև հետագայում՝ 16-18-րդ դա-

րերում: Այսպես, 1621 թ. Կաֆայում կոչկակարներն ունեին իրենց համքարությունը՝ մեծ վարպետ Պարոնքայի գլխավորությամբ⁶: Հայ շինարար վարպետները հայտնի էին ամբողջ Ղրիմով մեկ, նույնիսկ խանության կենտրոն Բախչիսարայում: Արհեստի տարբեր տեսակներով զբաղվողների թիվը Կաֆայում այնքան մեծ էր, որ քաղաքում նրանք մի առանձին փողոց էին զբաղեցնում: Հունքի առատության հետ էին կապված նաև կաշենշակությունը և կոչկակարությունը: Անասնապահ և կիսաքոչվոր կյանքով զբաղված թաթարները հաճույքով հուճք էին տրամադրում հայերին և հույներին՝ այդ արհեստներով զբաղվելու համար:

1779 թ. Ղոնի շրջան տեղափոխվելուց առաջ էլ արտագաղթեցվող հայերի մեջ արհեստավորները շարունակում էին նշանակալի թիվ կազմել: «Մեր հասարակության մեջ հողատերերը 300 հոգուց ավելի չեն,- գրում էին արտագաղթողները Գ. Պոտյոմկինին 1779 թ. հուլիսի 15-ին,- մնացած բոլորը արհեստավորներ են և վաճառականներ»⁷:

Ղրիմահայության նկատելի մասը կազմում էր գյուղաբնակ ազգաբնակչությունը, սակայն գյուղատնտեսությամբ զբաղվում էր ոչ միայն գյուղական բնակչությունը: Կաֆայի, Հին Ղրիմի, Ղաթսուբազարի և Սուդակի քաղաքաբնակ հայերի զբաղմունքների մեջ նույնպես այն աչքի ընկնող տեղ էր բռնում: Չպիտի մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ Ղրիմի թերակղզին իր բնակչիմայական պայմաններով լայն հնարավորություններ էր տալիս թե՛ այգեգործության ու դաշտավարության և թե՛ անասնապահության զարգացման համար: Այգեգործությունից ու բանջարագործությունից Ղրիմահայերն այնքան մեծ բերք էին ստանում, որ իրենց պահանջները բավարարելուց բացի, նրանք պտուղներ և սոխ էին արտահանում, իսկ հացահատիկների մշակությանը թաթարները ընտելացան շնորհիվ հայերի և հույների, այն էլ՝ 16-րդ դարի կեսերից:

Խաղողագործությունը և զինեգործությունը հայերի մոտ այնքան լավ մակարդակի վրա էին գտնվում, որ գրավել էին օտարերկրացի ճանապարհորդների ուշադրությունը:

Այսպիսով, Ղրիմի թերակղզու տարբեր հաստվածներում հաստատված հայկական գաղթօջախները միօրինակ չեն եղել իրենց զբաղմունքների մեջ: Արհեստագործությունն ու գյուղատնտեսությունը, սկսած 14-րդ դարի 30-ական թվականներից, առաջնակարգ նշանակություն են ձեռք բերել նրանց զբաղմունքներում և առևտրի հետ միասին բավարարել գաղութահայ զանգվածների կենսական պահանջները:

Հայ մշակույթն իր բոլոր դրսևորումներով արգասաբեր զարգացում է ունեցել Ղրիմահայ գաղթօջախներում: Այն անվերապահորեն կիրառելի է և՛ ճարտարապետության ու շինարարական արվեստի, և՛ գրչության ու կրթական գործի, և՛ մանրանկարչության և այլ բնագավառների նկատմամբ:

Հայ գրիչները Ղրիմահայ տարբեր գաղթօջախներում բեղուն գործունեություն են ունեցել: Մեզ են հասել 14-18-րդ դարերում թերակղզու հայաշատ տարբեր կենտրոններում գրված ավելի քան 300 ձեռագիր⁸:

Ամենանշանավոր գրչօջախը Կաֆան էր, ուր և ստեղծել է ձեռագրերի պատկառելի մասը: Եվ դա բնական էր, քանի որ այստեղ էին գործում մի քանի տասնյակ հայկական եկեղեցիներ, վանքեր, դպրատներ: Ղրիմահայոց մեջ կաֆահայերը գտնվում էին թե՛ նյութական և թե՛ մշակութային ավելի բարձր մակարդակի վրա, նրանց կապերն անհամեմատ սերտ ու մշտական բնույթ էին կրում ոչ միայն հայկական, այլև եվրոպական կուլտուրական կենտրոնների հետ:

Գրչության կարևոր կենտրոններից էր Սուրխաթը: Քաղաքին մերձակա Ղրիմահայոց Սբ. Խաչ վանքում, ինչպես նաև Սբ. Աստվածածին, Սբ. Լուսավորիչ և այլ եկեղեցիներում արտագրվել,

⁶ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 174:

⁷ Присоединение Крыма к России. Т. III, Спб., 1887, с. 1257-1258.

⁸ Տե՛ս, Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 189:

կազմվել և ծաղկվել են մի քանի տասնյակ ձեռագրեր, որոնց զգալի մասը պահպանվել է:

Ղրիմահայ տաղասաց-տաղերգուների ստեղծագործությունը մայրենի գեղարվեստական խոսքի ամենատարածված ժանրն էր միջնադարում, որը Ղրիմի գաղթօջախներում ևս բավական բարձրարժեք դրսևորումներ ունեցավ:

Տաղերգուները, թեև հիմնականում հոգևոր դասից էին, բայց նրանց ստեղծագործության մեջ աշխարհիկ թեմատիկան իր արժանի տեղն է գրավել: Պանդխտության, մարդկային և բնության սիրո երգերը մի քանի տաղերգուների մոտ գեղարվեստական բարձր կատարելության են հասցված: Առևտրաարհեստավորական և գյուղական ռամիկ խավերից կազմված ղրիմահայ գաղթօջախների համայնքները աշխարհիկ կյանքով էին ապրում, և նրանց զվարճասեր ու աշխատասեր, բայց նաև վշտալի նիստ ու կացը չէր կարող իր ազդեցությունը չթողնել տաղերգուների ստեղծագործության վրա: Տաղերգուներն արտացոլում էին այն ցավերն ու զգացմունքները, որոնք սրտամոտ էին լայն զանգվածներին:

Հայոց լեզվի հարցը առհասարակ միշտ մտահոգել է ղրիմահայ մտավորականությանը: Կաֆահայերը ստեղծել էին ինքնուրույն քերականական աշխատություններ: Մեզ է հասել, օրինակ, «Ժողովածու քերականական նիւթերի» ձեռագիրը, որն արժանացել է Թովմա Մեծոփեցու ուշադրությանը⁹:

Միջնադարին բնորոշ գիտության առանձին ճյուղեր եղել են ղրիմահայ գաղթօջախներում մշտական ուշադրության առարկա: Դրանց թվում էին աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, հռետորական արվեստը, բժշկագիտությունը, տոմարագիտությունը, պատմագիտությունը: Գիտության զարգացման ամենանշանավոր կենտրոններից էին Ղրիմի Սբ. Խաչ և Կաֆայի Սբ. Անտոնի վանքերը:

⁹ Նույն տեղում, էջ 192:

Հայերը Ղրիմում ճանաչված էին որպես հմուտ բժշկագետներ, նրանց էր խանը վստահում իր հիվանդությունների բուժումը, հանգամանք, որ վկայում է նրանց մոտ բժշկագիտության զարգացման որոշակի մակարդակի մասին:

Պատմագիտության բնագավառում առանձնակի նշանակություն ունեն ղրիմահայ ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև զուտ պատմական բնույթի գործերը: Հիշատակարանների հեղինակ գրիչները դեպքերի և անցքերի սուսկական նկարագրողներ չեն, նրանք շատ հաճախ նաև դրանց մեկնաբաններն են:

1690 թ. Ղրիմում արտագրած «Յայսմաուրքի» մեծադիր յոթ էջերում Դավիթ գրիչը փորձել է տալ ղրիմահայոց պատմությունը 11-րդ դարից մինչև իր օրերը: Քննական մոտեցմամբ, իտալական և հայկական աղբյուրների տեղեկությունների համեմատությամբ, Դավթի պատմություն-հիշատակարանն իր հիմնական հատվածներում ճշմարտապատում է և հույժ արժեքավոր: Դավթից առաջ նույն բանն է արել Մարտիրոս Ղրիմեցին իր «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» տաղում¹⁰:

Ղրիմահայերը ճարտարապետական հոգևոր ու աշխարհիկ տասնյակ ճարտարապետական հուշարձաններ են կառուցել Կաֆայում, Սուրխաթում, Աքմեչեթում, Սուղակում, Արմյանսկի Բազարում, գյուղական մի շարք վայրերում և այլուր: Դրանցից մեզ են հասել համեմատաբար քչերը: Նրանց մեջ ամենանշանավորն, անշուշտ, Սուրբ Խաչ վանքն է՝ իր եկեղեցով: Կառույցը գտնվում է Հին Ղրիմի (Սուրխաթ) անտառապատ ձորալանջին: Հուշարձանի ճարտարապետությունը հարազատ է մնացել Հայաստանի համանման կառույցների ձևին ու ոճին: Թեոդոսիայի երբեմնի արգելանոցում կանգուն վիճակում են գտնվում չորս հայկական եկեղեցիներ¹¹:

¹⁰ Մարտիրոսյան Ա. Ա., Մարտիրոս Ղրիմեցի, Եր., 1958, էջ 142-152:

¹¹ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 194:



Կրթօջախները գործում էին վանքերին, մասամբ՝ եկեղեցիներին առընթեր: Դրանցում գիտելիքներ էին տրվում կրոնագիտությունից, աստվածաբանությունից, քերականությունից, տոմարից, համարողական արվեստից (թվաբանությունից), ճարտասանությունից, գրչությունից, մանրանկարչությունից, փիլիսոփայությունից՝ նայած թե տվյալ պահին կրթօջախն ինչ դասավանդողներ ուներ:

Իսկական դպրատուն էր Սուրբ Խաչ վանքը: 14-18-րդ դարերում այստեղ գրչություն, մանրանկարչություն, թվաբանություն, տոմարագիտություն և այլ առարկաներ էին ուսուցանում դրիմահայ և Հայաստանից եկած կրթյալ վարդապետները: Դպրատներ կային նաև Կաֆայի, Սուրխաթի, Ղարասուբազարի և այլ վայրերի վանքերում և եկեղեցիներում¹²:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ղրիմը ռուսական կայսրությանը միացնելու համար Եկատերինա 2-րդի կառավարությունը մի ամբողջ տասնամյակ (1774-1783 թթ.) դիվանագիտական և ռազմական միջոցներով դիմակայեց Թուրքիայի ոտնձգություններին:

Ղրիմը Ռուսաստանին միացնելու միջոցառումների շարքում ռուսական արքունիքը կարևոր նշանակություն տվեց քրիստոնյա բնակչությանը թերակղզուց դուրս հանելու խնդրին, մի խնդիր, որի իրականացմամբ Ղրիմի խանը, գրկվելով իր հարկատու հիմնական դասերից, ընկնում էր ֆինանսական կախման մեջ ռուսական արքունիքից և դառնում վերջինիս կամակատարը: 1778 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին խանի համաձայնությամբ և ռուսական կառավարության ծախսերով Ղրիմից դուրս բերվեցին նրա հնամենի բնակիչները՝ հույները և հայերը, թվով ավելի քան 31 հազար մարդ: Ղրիմի 15 քաղաքներից և գյուղերից արտագաղթեցված հայերի թիվը կազմում էր 12598 մարդ: Այս հայերն էին, որ մեկ և կես տարի դեգերումներից հետո, 1779 թ. վերջերին

տեղափոխվեցին Դոնի շրջան, հիմնադրեցին Նոր Նախիջևան քաղաքը և նրան մերձակա հինգ հայկական գյուղերը¹³:

Այսպիսով, 1783 թ. թերակղզին միացվեց Ռուսաստանին: Այն թուրքերի կողմից գրավվել էր 1475 թվականին և նրա տիրապետության ներքո մնաց 300 տարի՝ մինչև 1774 թվականը:

Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո ռուսական կառավարությունը միջոցներ ձեռնարկեց թերակղզին կրկին քրիստոնյաներով բնակեցնելու համար: Թեոդոսիան հայտարարվեց պորտո-ֆրանկո, հողատարածություններ հատկացվեցին Չերնիգովի և Վորոնեժի նահանգներից ելած վերաբնակիչներին, իսկ Ղրիմը օտարերկրացիներով բնակեցնելու մասին 1798 թ. ընդունված մանիֆեստը նրանց իրավունք վերապահեց զալ Ղրիմ և հաստատվել թերակղզու ցանկացած վայրում, բացի Սևաստոպոլից:

Նման պայմաններում թե՛ արևմտահայերը և թե՛ նախկին դրիմահայերը ևս ձգտում են հաստատվել Ղրիմում, մանավանդ, որ նրանց համար նեցուկ էին այն երկու հազար հայերը, որոնց, այնուամենայնիվ, հաջողվել էր տարբեր պատճառներով և առիթներով խուսափել 1778 թ. արտագաղթեցումից և մնալ Ղրիմում:

Ղրիմահայ գաղութի վերստեղծման առաջնությունը պատկանում էր հայ կաթոլիկական համայնքին: 1779 թ. Ղրիմից արտագաղթեցված այս համայնքը, սակայն, չտեղափոխվեց Դոնի շրջան և մնաց Եկատերինոսլավ 1-ինում (հետագայում Նովոմոսկովսկ): 1787 թ. համայնքի ներկայացուցիչները դիմում են Գ. Ա. Պոտյոմկինին՝ Ղարասուբազար վերադառնալու խնդրանքով: Նրանց խնդրանքը համահունչ էր Ղրիմը բնակեցնելու կառավարական կուրսին: Հայ կաթոլիկական համայնքի հետ Ղրիմ էին վերադառնում նաև այդ համայնքի դատարանի իրավասության տակ գտնվող լուսավորչական հայերը և հույները: Ընդհանուր հաշվումներով՝ 1709 թ. Ղրիմ վերադարձավ 1000 հոգի, իսկ մինչև 1800 թ. համայնքը համալրվեց ևս 253 հոգով:

¹³ Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 374-384:

¹² Նույն տեղում, էջ 197:

Ղրիմում հայերի վերահաստատմանը 1790-ական թվականներին մեծապես աջակցում էր ռուսահայ թեմի առաջնորդ Դ. Արղուբյանը: Այս առիթով ռուսական բարձրագույն իշխանություններին նրա քանիցս արած դիմումները վերջապես արտահայտություն են գտնում 1799 թ. հոկտեմբերի 28-ի կայսերական հրովարտական. ըստ այդմ, հայերին թույլ էր տրվում հաստատվել Հին Ղրիմ քաղաքում: Թեոդոսիայում հավաքված հայերին էին տրվում մի շարք հայկական եկեղեցիներ: Սուրբ Խաչ վանքին էին հատկացվում նրան մերձակա հողերը: Հայերին շնորհվում էր դավանանքի ազատություն, հոգևոր գործերով նրանք ենթարկվելու էին Էջմիածնի Մայր աթոռին և Ռուսաստանում նրա ներկայացուցչին: Հին Ղրիմ քաղաքը հայերի կողմից բնակեցնելուց և քաղաքին 12 հազ. դեսյատին հող հատկացնելուց հետո քաղաքում հիմնվելու էր հայկական դատարան՝ ռատուշա, որտեղ արտոնվում էր հայերեն լեզվով և հայկական օրենքներով լսել դատական հայցեր: Հայերը դասվում էին պետական բնակիչների շարքը և ստանում տնտեսական զարգացման լայն հնարավորություններ: Նրանք 10 տարի ազատվում էին հարկերից ու տուրքերից, որից հետո վաճառականները տարեկան 1 տոկոս վճարելու էին դրամազլխից, քաղաքաբնակներն ու արհեստավորները ծխահարկ՝ 2 ռուբլի, իսկ գյուղացիները, որոնցից յուրաքանչյուրին տրվում էր 30 դեսյատին հող, յուրաքանչյուր դեսյատինի դիմաց վճարելու էին 5 կոպեկ: Հայերն ազատվում էին զինակոչից և օթևանահարկից: Հայերն ստանում էին առևտրով և արհեստներով զբաղվելու լիակատար ազատություն, կարող էին հիմնել ֆաբրիկաներ, պտղատու այգիներ, թորել գինի և ֆրանսիական օղի¹⁴:

19-րդ դարի առաջին կեսին Հին Ղրիմ քաղաքի և առհասարակ Տավրիկյան նահանգի հայ բնակչության շարքերը համալրում էին ոչ միայն նորնախիջևանցիները. այլև Թուրքիայից, Սուլ-

դովայից և Կովկասից Ղրիմ անցած հայ գաղթականական զանգվածները¹⁵:

1840-ական թվականներին Ղրիմահայոց թիվը արդեն 7000 էր, 1870-ական թվականներին՝ 9000-10000, 1890-ական թվականներին՝ 12-13 հազար, իսկ 1910 թվականին՝ 18-20 հազար¹⁶:

Ղրիմահայությունը նոր շրջանում ևս բնակվում էր թերակղզու երբեմնի հայաշատ բնակավայրերում: Հայության խոշոր կենտրոններ էին Հին Ղրիմը, Թեոդոսիան և Ղարասուրբազարը, մի փոքր ավելի ուշ՝ նաև Սիմֆերոպոլը:

Ղրիմահայերը իրավական առումով գտնվում էին նահանգական և տեղական իշխանությունների իրավասության տակ: Մինչև 1870 թվականը երկու հայ համայնքները՝ Հին Ղրիմի հայ լուսավորչական և Ղարասուրբազարի հայ կաթոլիկական համայնքները, օգտվում էին ներքին ինքնավարությունից:

1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակի հիման վրա բացված Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան շուրջ 60 տարի վարում էր իրեն ենթակա հայ համայնքի տնտեսական, վարչական և դատական գործերը: Ռատուշան շաբաթը 2-3 անգամ գումարում էր նիստեր, որոնց ժամանակ քննարկվում և վճռվում էին խնդրո առարկա հարցերը: Այն ընտրովի մարմին էր. նրա ընտրությունները կատարվում էին երեք տարին մեկ, գաղտնի քվեարկությամբ, պարզ մեծամասնության սկզբունքով: Բացի ռատուշայի երեք անդամից, համայնքը ընտրում էր նաև քաղաքագլուխ և ավագ: Ընտրողներն ու ընտրվածները քաղաքի հայկական եկեղեցում, քահանայի ներկայությամբ ավետարանի վրա երդվում էին լինել անաչառ և անկողմնակալ, ստորագրում էին երդման տեքստի տակ, որը բոլոր տարիների համար անփոփոխ էր:

¹⁵ Նույն տեղում, էջ 200:

¹⁶ Նույն տեղում, էջ 202:

¹⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 198-199:

Վերը նշված կարգով էին տեղի ունենում նաև Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի ընտրությունները: Դատարանը գործեց 80 տարի՝ 1790-1870 թթ.: Նրա կազմի մեջ էին մտնում քաղաքագլուխը և երեք ատենակալները (նրանցից մեկը դատարանի նախագահն էր): Դատարանի պահպանման ծախսերը կատարվում էին պետության հաշվին: Դատարանի գործունեությունը խարսխված է 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի վրա:

Հին Ղրիմի հայկական ռատուշան և Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանը ունեին միևնույն իրավունքներն ու ֆունկցիաները: Նրանց վարույթի տակ եղած գործերը բնությով հայցային էին, քրեական, խնամակալական: Այս մարմիններն էին զբաղվում ընտրությունների, հարկերի գանձման, վաճառականների ցուցակագրման, առևտրի արտոնման և վերահսկման, մաքսերի գանձման և այլ հարցերով:

1779 թ. և 1799 թ. հրովարտակների ընծեռած առանձնաշնորհումներից օգտվում էին միայն վերը նշված երկու համայնքներում ցուցակագրված հայերը: Մինչդեռ Ղրիմահայության մեծ մասի վրա այդ արտոնությունները չէին տարածվում:

Ղրիմահայոց կյանքում ուրույն դեր ուներ եկեղեցին, որը, կրոնական գործերից բացի, մասնակցում էր նաև հասարակական գործերին (հողային, ժառանգավորական խնդիրներ, դպրոցներ և այլն): Մինչև 1803 թ. Ղրիմահայ եկեղեցին ենթարկվում էր Նոր Նախիջևանի հոգևոր կառավարչությանը: 1803 թ. սկսվում է Ղրիմի հոգևոր կառավարչության գործունեությունը: 1840-ական թվականների կեսերից այս պաշտոնը փոխարինվում է Ղրիմի հայկական եկեղեցիների և վանքերի հոգաբարձուի պաշտոնով: Գլխավոր հոգաբարձուն հետևում էր, որպեսզի Ղրիմահայ եկեղեցիների երեսփոխանները և մյուս պաշտոնյաները բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, մանավանդ դրամական գանձումներ և մուծումներ իրականացնելիս: Աշխարհիկ այս պաշտոնը ստեղծվեց Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ,

և այն զբաղեցնողը պարտավոր էր եկեղեցական գումարները պահպանել վատնումներից և աննպատակահարմար ծախսումներից¹⁷:

Ղրիմահայոց տնտեսական կյանքում նոր շրջանում ևս շարունակում էին առաջատար դեր խաղալ առևտուրը, արհեստներն, արդյունաբերությունը ու գյուղատնտեսությունը: 19-րդ դարի երկրորդ կեսից Ղրիմահայ կապիտալը թափանցում է նաև կապիտալիստական արտադրության ոլորտ:

Արդեն 19-րդ դարի առաջին կեսին Տավրիկյան նահանգի տնտեսական զարգացման մեջ աչքի ընկնող մասնակցություն ունեին հայ առևտրական դասի ներկայացուցիչները: Սերտ կապերը ռուսական ներքին շուկայի և Մերձավոր Արևելքի, մանավանդ Թուրքիայի առևտրաարհեստավորական միջավայրի հետ Ղրիմահայերին հնարավորություն էր տալիս շոշափելի դեր խաղալ նահանգի ներքին և արտաքին ապրանքափոխանակման մեջ, հաճախ հանդես գալ առևտրական գանազան գործարքների կազմակերպչի դերում: Հայերի առևտրական գործունեությունը ներառում էր և՛ մանրածախ, և՛ մեծածախ առևտուրը, թե՛ մանր առևտրականին և թե՛ գիլդիաներում ընդգրկված հայ վաճառականներին: Հին Ղրիմի և Ղարասուբազարի հայ կաթոլիկական համայնքները, օգտվելով իրենց շնորհված արտոնություններից, ազատված էին գիլդիաների մեջ մտնելուց. սակայն ովքեր ցանկանում էին, կարող էին նաև անդամակցել գիլդիաներին:

Գիլդիաները բաժանվում էին երեք կարգի, ընդ որում՝ առաջին գիլդիայի մեջ մտնելու համար վաճառականի դրամագլուխը պետք է կազմեր 10 հազար ռուբլի, երկրորդի համար՝ 1000-ից մինչև 10000, իսկ երրորդինը՝ 500-1000 ռուբլի:

19-րդ դարի առաջին տասնամյակներին հայերը շարունակում էին իրենց ձեռքում պահել Կովկասի, և հատկապես, Չերքեզիայի հետ կատարվող առևտուրը: Նրանք Չերքեզիայում պահում էին իրենց առևտրական գործակալները: Նրանց թույլ էր

¹⁷ Նույն տեղում, էջ 203:

տրվել առանց մաքս վճարելու առևտուր անել Չերքեզիայի և Արխազիայի հետ:

19-րդ դարի առաջին կեսին առևտրի ապրանքների մեջ գերակշռում էին պարենամթերքները և հագուստեղենը: Ղրիմ և Ղրիմի վրայով Ռուսաստան էին ներմուծվում մետաքայա և բամբակյա գործվածքներ, հագուստեղեն, մանվածք, սեկ. պղինձ, մետաղ, կավե ամանեղեն, ձյութ, բրինձ, գինի, մեղրամոմ, շաքար, ձեթ, չորացած մրգեր, սուրճ, խունկ և այլն: Ղրիմից և Ղրիմի վրայով Ռուսաստանից արտահանվում էին բուրդ, կաշի, մշակված կաշվեղեն, ալյուր, հացահատիկ, վարսակ, ձկնեղեն, աղյուս, ծխախոտ և այլն:

Մինչև 1870 թ. հայերի մասնակցությունը նահանգի առևտրին շատ ցայտուն դրսևորվում էր Հին Ղրիմ, Ղարասուբազար և Թեոդոսիա քաղաքներում: Հին Ղրիմի և Ղարասուբազարի հայ համայնքների անդամներին վաճառականությանը և մանրածախ առևտրով զբաղվելու թույլտվություն տալու համար ռատուշան և դատարանը ստանում ու բաշխում էին առևտուր արտոնող համապատասխան փաստաթղթերը: Նրանք էին տալիս այն անձնագրերը, որոնք այդ համայնքների անդամներին թույլ էին տալիս մեկ կամ կես տարով բացակայել և Ռուսաստանի այլ քաղաքներում առևտուր անել: 1812 թ. օրինակ, Հին Ղրիմի ռատուշան նման անձնագրեր էր տվել 103 մարդու, հանգամանք, որն, անշուշտ, վկայում է հին դրիմցիների առևտրական լայն կապերը Ռուսաստանի այլ շրջանների հետ¹⁸:

Առևտրի մեջ Սիմֆերոպոլի, Եվպատորիայի, Պերեկոպի ու Թեոդոսիայի դերի բարձրացմամբ գնալով անկում էր ապրում Հին Ղրիմի հայոց առևտրական կյանքը: Հին Ղրիմի հայերի՝ թերակղզու այլ քաղաքներ տեղափոխվելու հետևանքով 1902 թ. այնտեղ մնացել էին ընդամենը 410 հայեր¹⁹:

¹⁸ Նույն տեղում, էջ 205:

¹⁹ Լույս, 1905, էջ 164:

Ձգալի էր հայերի մասնակցությունը թերակղզու ցամաքային առևտրի նշանավոր կենտրոն Ղարասուբազարի առևտրի մեջ: Նրանց մեջ նկատելի էին մեծ դրամագլուխ ունեցողները, որոնցից շուրջ 25 մարդ ամեն տարի անդամագրվում էին 3-րդ, իսկ հետագայում՝ նաև առաջին վաճառականական գիլդիաներին: 1855 թվականին, օրինակ, դատարանի գերատեսչության գծով 3-րդ գիլդիայում ընդգրկվածների թիվը կազմում էր 98 հոգի: Այդ գիլդիայում գրանցված էին նաև քաղաքի 25 հայ լուսավորչական վաճառականներ²⁰:

Հին Ղրիմի նման Ղարասուբազարի առևտրի մեջ ևս շատ ավելի մեծ էր գիլդիաներից դուրս առևտուր անող հայերի թիվը:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին երկրագործության, արհեստների և արդյունաբերության հետ միասին առևտուրը շարունակում էր նշանակալից տեղ բռնել դրիմահայոց տնտեսական գործունեության մեջ՝ հարմարվելով հետոնեֆորմյան շրջանի կապիտալիստական տնտեսության ձևերին ու պահանջներին: Սիմֆերոպոլը, Կերչը, Եվպատորիան, Թեոդոսիան և Ղարասուբազարը դառնում են Ռուսաստանի առևտրի նշանավոր կենտրոններ:

Այս շրջանում դրիմահայ առևտրական դասի գործունեությունն առավել մեծ չափեր է ընդգրկում: Ղրիմի պատերազմի ժամանակ նա իր վրա էր վերցրել Սևաստոպոլի պատերազմական կարիքների մատակարարման մի մասը, իսկ 1860-1870-ական թվականներին շահագրգիռ մասնակցություն ցուցաբերեց երկաթուղու շինարարությանը:

Ղրիմահայ գաղութը իր ներկայացուցիչներն ուներ թերակղզու վրա կատարվող քիչ թե շատ խոշոր ձեռնարկումներում: 1887 թ. մայիսի 30-ին Թեոդոսիայի քաղաքային դումայի նիստում Հ. Այվազովսկին քաղաքը ջրով ապահովելու համար իրեն պատկանող Սուբաշի լճից նվիրաբերում է օրական 50 հազար դույլ ջուր և այդ մասին արած իր հանդիսավոր հայտարարությունը:

²⁰ Крымоблархив, ф. 179, д. 333, л. 3, д. 226, л. 39.

նն ամրապնդում պայմանագրով: Դրա շնորհիվ անցկացվում է 30 կմ երկարությամբ ջրմուղ և 1888 թ. քաղաքն ապահովված էր խմելու ջրով²¹:

Ղրիմահայ մի շարք գաղթօջախների հիմնական զբաղմունքներից էին այգեգործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունը, անասնապահությունը, մասամբ նաև շերամապահությունը: Հողի նկատմամբ բոլոր ղրիմահայերն օգտվում էին հավասար իրավունքներից: Սակայն, չնայած դրան, կային խոշոր հողատերեր և դրանց կողքին միջակ ու սակավահող գյուղացիներ:

Բացի հայկական գյուղերից, գյուղատնտեսությամբ զբաղվում էին Ղարասուբազարի և Հին Ղրիմի հայերը:

Հայերը Ղրիմում շերամապահության հիմնադիրներից էին: 1800 թ. փետրվարի 24-ին ընդունած իր որոշմամբ Սենատը հատուկ ուշադրություն էր դարձրել Հին Ղրիմում շերամապահության զարգացմանը: 1808 թ. քաղաքում նոր բացված հայկական ռատուշայի որոշմամբ Ղզլարից բերվում է 8 ֆունտ թթենու սերմ: Ռատուշան քաղաքում պահում էր հատուկ վերակացու, որը հսկում էր թթենիների պահպանությանն ու շերամապահության զարգացմանը:

Զարգացման կապիտալիստական ուղու վրա կանգնած հայ ունևոր ծեռնարկատերերն ու առևտրականներն իրենց կապիտալը ներդնում էին նաև գյուղատնտեսության մեջ և դառնում խոշոր հողատերեր: Ղրիմում հարյուրավոր և հազարավոր դեսյատին հողեր ունեցող հայերից էին Ս. Թումանովը, ծովակալ Լ. Սերեբրյակովը, Նալբանդովները, Սպենդիարովները, Մուրզանները, Սեֆերովները, Թոփալովները, Ստեփանովները, Քուչնարյանները, Այվազյանները և ուրիշներ:

Խոշոր հողատերերի թիվը փոփոխվում էր, բայց որպես կանոն՝ ավելանալու միտումով. ոմանք ծեռք էին բերում նոր հողեր, իսկ մյուսները՝ այս կամ այն պատճառով վաճառում ունեցված-

քը: Այսպես, օրինակ, 1906 թ. վաճառվեց Սպենդիարովների կալվածքի մի մասը՝ 3937 դեսյատինը, որը կազմում էր Լեոնիդ Սպենդիարովի՝ կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի հորեղբորորդու բաժինը²²: Հավանաբար, ակնավոր երկրաբաններին պարզևատրելու համար Լեոնիդ Սպենդիարյանի անվան մրցանակի հիմնադրումը հենց կազմել է այս վաճառքից ստացված գումարը:

Ղրիմում խոշոր հողատեր էր հայ եկեղեցին: Չնայած նահանգական և տեղական իշխանությունների հետ երկարատև խճճված հողային վեճերին, որոնց լուծման համար 1812-1825 թթ. էջմիածինը որպես կաթողիկոսական հաջորդ Ղրիմում պահում էր Մանվել վարդապետ Գյումուշխանեցուն: Այդուհանդերձ, ղրիմահայ եկեղեցին այստեղ պահպանել էր զգալի քանակով հողեր և անտառներ. հին Ղրիմի շրջանում՝ 1215 դեսյատին, Պերեկոպի գավառում՝ 2767 դեսյատին (Ադի-Ղայդաչ անունով), 18 դեսյատին այգի՝ Սուդակի մոտ, 2-5 դեսյատինի հասնող մի շարք այգիներ՝ հայկական տարբեր եկեղեցիներին, վանքերին կից և այլն:

Հողերից ստացված եկամուտների մի մասը ծախսվում էր հոգևորականների պահպանման և այլ կարիքների վրա, իսկ մյուս մասը՝ ուղարկվում էր Նախիջևան, Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդարան, որից իր բաժինն էր ստանում նաև Մայր աթոռը²³:

Հին Ղրիմի հայկական ռատուշան արհեստավորների անխափան գործունեության համար նրանց ինչ-որ չափով ապահովում էր պարենամթերքով, որպեսզի «նրանք հարկադրված չլինեին բացակայել և չընդհատեն իրենց աշխատանքը»: Այստեղ հայերը հմուտ անվագործներ էին, դարբիններ, քարտաշներ, ջուլհակներ, կոշկակարներ, հացթուխներ և այլն:

Տավրիկյան նահանգում մեծ թիվ էին կազմում արևմտահայ պանդուխտ արհեստավորները: Սիայն Ղարասուբազարում 1832

²¹ Крым, 1889, N 39.

²² Крымоблархив, Ф. 27, оп. 1, д. 9796, л. 1-5.

²³ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 210-211:

թ. կային 89 գրանցված թուրքահպատակ արհեստավոր հայեր: Այստեղ հայ արհեստավորները հիմնականում զբաղված էին հացաբուլկեղենի արտադրությամբ, ոսկերչությամբ, արծաթագործությամբ, դերձակությամբ, վարսավիրությամբ, կոշկակարությամբ և այլն:

Ղրիմահայ տնտեսապես զորեղ ընտանիքների առանձին ներկայացուցիչներ մասնակից են դառնում թերակղզու վրա սկիզբ առնող գործարանային արտադրությանը, դառնալով ձկնորսարանների, կաշենշակման, պահածոների, կղմինդրի, մոմի և այլ ձեռնարկությունների տերեր: 1820-1830-ական թվականներին Թեոդոսիայի երկու ձկնորսարանն էլ պատկանում էին Աբակում Յարությունյանին:

Հին Ղրիմում հայերը հիմնել էին կղմինդրի արտադրության երկու գործարան, ինչպես նաև կաշվի վերամշակման և կրի գործարաններ: Օճառի, մոմի, կաշվի արտադրության ձեռնարկություններ ունեին Ղարասուբազարի և Սիմֆերոպոլի մեծահարուստ հայեր Բ. Մոմջյանը, Գ. Լաֆայեյանը և այլք: 20-րդ դարի սկզբներին Սևաստոպոլում հայտնի ֆաբրիկանտ Գ. Գևորկովը ստեղծել էր շոգեմեքենայի միջոցով աշխատող մակարոնի ֆաբրիկա: Տավրիկյան, Եկատերինոսլավի նահանգներում և Կովկասում լայն սպառում ունեին Սիմֆերոպոլում Ս. Սրապիոնյանի արհեստանոց-ֆաբրիկայի արտադրած կոշիկները: Նկատելի էր հայերի մասնակցությունն աղի արտադրության մեջ, որի գլխավոր հավաքատեղին Արմյանսկ քաղաքն էր²⁴:

Ղրիմահայերն որոշակի հարկեր և տուրքեր էին վճարում պետությանն ու եկեղեցուն: 1863 թ. մայիսի 31-ին Սենատին տրված հրամանով փաստորեն վերացվում էին 1779 և 1799 թվականների հրովարտակներով, ինչպես նաև այլ շնորհագրերով Ռուսաստանում հայերին տրված արտոնությունները: Նրանք պարտավոր էին կայսրության մյուս քաղաքացիներին հավասար

²⁴ Նույն տեղում, էջ 212:

շնչահարկեր ու տուրքեր վճարել, կրել բոլոր տեսակի զեմստվային և զինվորական պարտույթները:

Արտոնություններից օգտվող հայ համայնքների բողոքներին ընդառաջելով՝ Պետական Խորհուրդը 1840 թ. նոյեմբերի 25-ին ընդունում է համապատասխան որոշում՝ նրանց թողնելով իրենց նախկին արտոնություններում: Եվ մինչև 1870 թ., մինչև ռատուշայի և դատարանի փակվելը, Հին Ղրիմի և Ղարասուբազարի նշված հայ համայնքները շարունակում էին օգտվել առանձնաշնորհումներից, սակայն միաժամանակ կրելով հասարակական բնույթի զանազան պարհակներ, զեմստվային, զինվորական և այլ պարտույթներ ու տուրքեր²⁵: Նկատելի չափերի էին այն հարկերը, տուրքերը և մուծումները, որոնք գանձվում էին հոգուտ Ղրիմահայ եկեղեցու:

Եկեղեցական տուրքերն ու գանձումները, որոնք վերցվում էին Ղրիմահայերից, գրեթե նույնությամբ պահպանվեցին մինչև 1920 թվականը՝ մինչև խորհրդայնացումը:

Ուրույն հասարակական-մշակութային կյանք ապրեցին Ղրիմահայերը 19-20-րդ դարերում: Այս բնագավառի շատ հարցեր ունեին համազգային և նույնիսկ համառուսական հնչեղություն, որի պատճառը Ռուսաստանի արտաքին ու ներքին խնդիրներում Ղրիմի խաղացած դերն էր և նաև՝ արևելահայ ու արևմտահայ իրականության հետ տավրիկյան հայ գաղթօջախների ունեցած այլազան առնչությունները: Եկեղեցական հակամարտությունների, դպրոցական գործերի, արտոնությունների համար մղված պայքարի, կուսակցությունների հանդեպ դրսևորած վերաբերմունքի և «զուտ Ղրիմահայ» այլ հարցերի շուրջ ծագած պայքարն ու վեճերը հաճախ իրենց մեջ էին ներքաշում նաև արևելյան ու արևմտահայ տարբեր դիրքորոշման գործիչների՝ վկայելով վիճահարույց խնդիրների համազգային իմաստն ու կարևորությունը:

²⁵ Նույն տեղում, էջ 213:

Արդեն 18-րդ դարի վերջերից սկսած մինչև հաջորդ դարի կեսերը ղրիմահայերը պայքարում էին կաթոլիկ քարոզիչների դեմ, որոնք փորձում էին ղրիմահայերին կաթոլիկացնելու միջոցով և ամրապնդել Հռոմի եկեղեցու ազդեցությունը քրիստոնյա աշխարհում: 1821 թ. նրանց «խռովահույզ արարմանց» դեմ Ղրիմում իր բողոքի ծայրն է բարձրացնում Մանվել վրդ. Գյումուշխանեցին: 1846 թ. կաթոլիկ քարոզիչներին Ղրիմից արտաքսելու խնդրանքով կառավարությանն ու Ն. Աշտարակեցուն է դիմում Հովհաննես Այվազովսկին²⁶:

19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբներին դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես ռուսահայ մյուս գաղութներում, ղրիմահայ գաղթօջախներում ևս, կազմակերպվում և հաջող գործունեություն են ծավալում հոգաբարձությունները, որոնց հիմնական նպատակը կրթական և աղքատախնամ գործերի իրականացում էր: Հոգևոր դասը այս խնդրում հոժարական գործակցում էր գաղութահայ երևելիների հետ, մանավանդ, որ հոգաբարձությունները գործում էին եկեղեցիներին առընթեր և նրանց ազդեցության շրջանակներում:

Հոգաբարձությունները 20-րդ դարի սկզբին նկատելի աշխատանք կատարեցին ղրիմահայ գաղթօջախներում աղքատներին օգնելու և կրթական գործի կազմակերպման բնագավառներում: Հոգաբարձություններ կային Թեոդոսիայի, Ղարասուբազարի, Արմյանսկի Բազարի, Կերչի և Եվպատորիայի գաղթօջախներում: Դրանք բոլորն ունեին իրենց կանոնադրությունները, որոնք կազմված էին մինչև ձևով և սկզբունքներով:

Ա. Հոգաբարձությունը կազմված էր 7 անձից, որոնցից 5-ը ընտրովի էին, իսկ մնացած երկուսից մեկը տեղի երեցփոխանն էր, մյուսը՝ թեմակալի նշանակած անձը: Բ. Հոգաբարձության ընտրովի անդամները հաստատվում էին թեմակալի կողմից և իրենց միջից ընտրում էին նախագահին: Գ. Հարցերը լուծվում էին մեծամասնության սկզբունքով, ծայրերի հավասարության դեպ-

քում վճռական էր նախագահի ծայրը: Դ. Հոգաբարձության հիմնական պարտականությունների մեջ մտնում էին՝ աղքատներին օգնելը, միջոցների որոնումը՝ տվյալ եկեղեցուն կից դպրոց, աղքատանոց և աստվածահաճո այլ հիմնարկների ստեղծման համար և այլն²⁷:

1903 թ. ղրիմահայ հասարակական կյանքը նույնպես ակեղծեց հայկական եկեղեցական գույքի բռնագրավման և ծխական դպրոցների փակման մասին հունիսի 12-ի տխրահռչակ օրենքը: Այն առաջին հերթին հարվածում էր աղքատ ընտանիքներին, որոնց երեխաները, ծխական դպրոցների փակման պատճառով, զրկվում էին նախնական կրթություն ստանալու հնարավորությունից: Միաժամանակ, այդ օրենքը պարարտ հող ստեղծեց հակացարական տրամադրությունների և ազգային-դեմոկրատական մտայնության զարթոնքի համար:

Համազգային նշանակության հարցերն ու երևույթները շարունակ գտնվում էին ղրիմահայերի ուշադրության կենտրոնում: Նրանց ևս ծանր վիշտ պատճառեց հայոց Մեծ եղեռնը: Տեղի հայ գաղթօջախներն ամեն ինչ անում էին եղեռնից տուժածներին օգնելու համար: Այդ գործը դրվել էր կազմակերպված հիմքի վրա. թերակղզու հայաշատ վայրերում ամենուրեք ստեղծվել էին հայկական կոմիտեներ և հանձնաժողովներ, որոնց պարտականությունն էր դրամական և նյութական միջոցներ հավաքել փախստականների օգտին: Արդեն 1915 թ. առ 1-ը հունիսի Էջմիածնի սինդիկատում ուղարկվեց 16.160 ռ.: Օգնությունը շարունակվեց հետագա ամիսներին և 1916-1918 թթ.: Տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորած՝ Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն, Ղրիմի մյուս հայկական կոմիտեների աջակցությամբ, 1915 թ. որոշում է Սիմֆերոպոլում բացել գաղթական հայ երեխաների որբանոց: Քանի որ որբեր ստանալ չի հաջողվում, հավաքված դրամը տրամադրվում է գաղթական հայերի համար սերմացու գնելու նպատակին: Դրամական օգնությանը զուգահեռ՝ ղրիմահայերը պատասպա-

²⁶ Նույն տեղում, էջ 214-215:

²⁷ Նույն տեղում, էջ 220-221:

րում, բնակարանով ու սննդով ապահովում էին Ղրիմ անցած մեծաթիվ արևմտահայ փախստականների: 1915-1920 թթ. Ղրիմում ապաստան գտած հայ գաղթականները զգալի տեղաշարժ մտցրին ղրիմահայության քանակական կազմում, որը նկատելիորեն մեծացավ²⁸:

Ղրիմահայ մշակութային կյանքը բնորոշվում էր ծխական դպրոցների առկայությամբ, որոնք գործում էին եկեղեցիներին առընթեր՝ ուսյալ հոգևորականների գլխավորությամբ: Այդ դպրոցներից առաջինը հիմնվեց Ղարասուբազարում 1816 թ.: Մանվել վարդապետի ջանքերով: Այն պահվում էր ծխականների ծախսերով և եկեղեցական գումարներով: Դպրոցը մանկավարժական կադրերով ապահովվելու համար նրա շրջանավարտներին ուղարկում էին Լազարյան ճեմարան ուսանելու՝ այն ավարտելուց հետո Ղարասուբազար վերադառնալու և տեղի դպրոցում աշխատելու պայմանով:

Հայկական ծխական դպրոցներ կային թերակղզու բոլոր հայաշատ վայրերում: Ըստ 1861 թ. օտարադավանների հոգևոր դեպարտամենտ Գ. Այվազովսկու ուղարկած տեղեկանքի՝ Ղրիմի հայկական ծխական դպրոցներում այդ ժամանակ սովորում էին 225 աշակերտ: Դպրոցներում դասավանդում էին կրոն, հայոց լեզու, թվաբանություն, ռուսաց լեզու: Համապատասխան մանկավարժներ ունենալու դեպքում դասավանդվում էին նաև բարոյագիտություն, քերականություն, ազգային և ընդհանուր պատմություն:

1868 թ. Էջմիածնի Սբ. աթոռի ուսումնական հանձնաժողովի իջեցրած կանոնների համաձայն, ծխական դպրոցները, մնալով եկեղեցիների տնօրինության տակ, կառավարվում էին ընտրովի հոգաբարձուների կողմից: Հայկական «անջատողական» ձգտումները խափանելու համար 19-րդ դարի 60-ական թվականներից Ռուսաստանի լուսավորության մինիստրությունը քանիցս փորձեր է անում հայկական ծխական դպրոցները ենթարկել ի-

րեն: Մինիստրության այդ ձգտումը հայկական շրջանների դիմադրության և արտաքին քաղաքական նկատառումների պատճառով չէր իրականացվում: Միայն 1897 թ. մայիսի 3-ին Պետական Խորհրդի ընդունած որոշմամբ հայկական ծխական դպրոցները այսուհետև հանձնվեցին լուսավորության մինիստրության տնօրինությանը: Հայ հոգևորականությանը միայն իրավունք էր վերապահվում վերահսկելու աշակերտների կրոնական դաստիարակությանը: Բացի կրոնի ուսուցից, մնացած մանկավարժներին նշանակում էին իշխանությունները: Թեմական առաջնորդարանները զրկվում էին ուսումնական գործերին միջամտելուց, թեև հայկական եկեղեցուն էր դարձյալ մնում ծխական դպրոցների նյութատնտեսական հոգսը:

1905 թ. դրությամբ՝ Ղրիմի յոթ հայկական ծխական դպրոցներում սովորում էին 251 աշակերտ: Դպրոցները երկսեռ էին: Աղջիկների համար, բացի ծխական դպրոցներից, 1900-ական թվականներին Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում և այլ տեղերում գործում էին նաև կար ու ձկի դասընթացներ: Ղրիմում վարժարաններ ունեին նաև կաթոլիկ հայերը: Նրանց վարժարանները նույնպես երկսեռ էին²⁹:

Ուսուցման դրվածքով և մակարդակով ղրիմահայ կրթական հաստատությունների մեջ առանձնանում էր Խալիբյան ուսումնարանը: Նրա հիմնադրման հիմքում ընկած էր Գ. Այվազովսկու ներկայացրած նախագիծը, որը, գրեթե անփոփոխ կերպով, 1858 թ. հուլիսի 4-ին հաստատեց Ալեքսանդր 2-րդը: Ըստ այդմ՝ ուսումնարանում սովորողների մի մասը վարձու էր, մի մասը՝ կիսավարձու, իսկ մի մասն էլ՝ ծրիավարժ:

Ուսումնարանը մասնավոր հաստատություն էր, որտեղ սովորել կարող էին անխտիր բոլոր հայ երեխաները՝ անկախ ծագումից, հայրենիքից և դավանանքից: Կաթոլիկ և բողոքական հայ երեխաներին չէր պարտադրվում ունկնդրել կրոնագիտության դասերը՝ ըստ հայ լուսավորչական եկեղեցու կանոնների: Ու-

²⁸ Նույն տեղում, էջ 222-223:

²⁹ Նույն տեղում, էջ 223-224:

սուճնարանի վարչությունն էր նշանակում ուսուցիչներին, կատարում դասագրքերի և դասավանդման ընտրությունը: Ուսումնարանին կից հիմնվել էր տպարան, հրատարակվում էր հանդես: Ուսումնարանում դասավանդվում էին բոլոր այն գիտությունները, որոնք մտնում էին ընդհանուր գիմնագիական կրթության մեջ կամ անհրաժեշտ էին առևտրին նվիրվել ցանկացողների համար:

Ուսման դասընթացը բաժանվում էր վեց դասարանի, ուսուցումը կատարվում էր հայերեն, բացառությամբ ռուսաց լեզվի, ռուսաց պատմության և ֆրանսերեն լեզվի, որոնցից, առաջին երկուսը դասավանդվում էին ռուսերեն, իսկ վերջինը՝ ֆրանսերեն:

Ուսումնարանի ուսումնական մասը ղեկավարում էին վերատեսուչը և նրա նշանակած ուսուցիչներից կազմված խորհուրդը, իսկ տնտեսական մասը՝ վարչությունը, որը բաղկացած էր վեց անդամից և նույնպես գործում էր վերատեսչի նախագահության տակ: Ուսումնարանի վերատեսուչը Գ. Այվազովսկին էր:

Առաջ քաշելով և հաստատել տալով ուսումնարանի՝ որպես մասնավոր հաստատության կարգավիճակը, Գ. Այվազովսկին դրանով պահպանում էր նրա ազգային կրթական ուղղությունը: Միաժամանակ, ուսումնարանի վերատեսուչը պետք է տարեկան տեղեկագիր ներկայացներ Օդեսայի ուսումնական շրջանի կառավարչին՝ ուսուցիչների ու աշակերտների քանակի և ուսուցման ընթացքի վերաբերյալ: Գ. Այվազովսկուն թույլատրվում էր ուսումնարանի պահպանման վրա ծախսել Նախիջևան-Բեսարաբիայի հայկական վիճակի եկեղեցական եկամուտների մի մասը՝ ուսումնարանը տնտեսապես ոտքի կանգնելուց հետո ծախսված գումարները վերադարձնելու պարտավորությամբ³⁰:

Ուսումնարանն աշակերտներին հաղորդում էր բոլոր այն գիտելիքները, որոնք կազմում էին ժամանակի միջնակարգ կրթության հիմունքները: Ըստ այդմ, ավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայոց, ռուսաց, ֆրանսերեն և թուրքերեն լեզուները (ռուսերենը պարտադիր էր ռուսահպատակ, իսկ թուրքերենը՝

³⁰ Նույն տեղում, էջ 225:

թուրքահպատակ երեխաների համար), թվաբանություն, կրոն, նկարչություն, գեղագրություն, երկրաչափություն, պատմություն, աշխարհագրություն, մարմնամարզություն, ֆիզիկա, քիմիա և այլ առարկաներ:

Գ. Այվազովսկու նախաձեռնությունը իրագործվում էր մի ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում հայերի համար կրթական լուրջ օջախները մատների վրա էին հաշվում: Ուսումնարանի սաների մեջ նշանակալից թիվ էին կազմում աղքատ ու որք ձրիավարժ երեխաները՝ 35-40 տոկոսը:

1865 թ. սկսած հալիբյան ուսումնարանը, եկեղեցական գումարներից զրկվելու պատճառով, աստիճանաբար վայրէջք է ապրում, թեև զոյատևում է ևս 6 տարի: Եկեղեցական գումարներն ուսումնարանին չտրամադրելու կապակցությամբ այն պահպանելու շուրջ մինիստրությունների, հալիբյանի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած բանակցությունները, հանձնաժողովներն ու նրանց հանձնարարական առաջարկները ուսումնարանը չեն փրկում փակման վտանգից: 13-ամյա գոյությունից հետո 1870 թ. դեկտեմբերին այն փակվում է:

Խալիբյան ուսումնարանն ուներ իր տպարանը՝ Ղրիմում հայկական առաջին տպարանը: Այն ևս պահվում էր եկեղեցական գումարներով: Նրա տպագրած գրականության մեջ գերակշռում էին դասագրքերը: Տպագրվում էին նաև տարեգրքեր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, գեղարվեստական և պատմական երկեր, թարգմանական և եկեղեցական գրականություն: Ուսումնարանի փակվելուն հետևեց նաև տպարանի փակումը³¹:

Ղրիմահայ գաղութը Ռուսաստանի այն եզակի հայ գաղթավայրերից էր, որի մշակութային զարթոնքը վկայվեց նաև մամուլի սեփական օրգանների ստեղծմամբ: 19-րդ դարի 60-70-ական թվականներին Ղրիմում հրատարակվում էին «Մասյաց աղավնի»

³¹ Նույն տեղում, էջ 227: Տե՛ս նաև Վ. Բարխուդարյան, Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Երևան, 2006, էջ 27-28:

«Ծիածան» և «Դաստիարակ» պարբերականները: «Մասյաց աղավնին», որը 1855 թվականից լույս էր տեսնում Փարիզում, Գ. Այվազովսկու Ղրիմ գալուց հետո իր հրատարակությունը շարունակեց Թեոդոսիայում: Գլխավոր խմբագիր Գ. Այվազովսկին պահպանել էր հանդեսի ուղղությունը՝ նրա էջերից պարզելով ազգային միասնության դրոշը՝ որպես հայ ժողովրդի ազգային բարօրությանը հասնելու պայման:

«Մասյաց աղավնու» էջերում արծարծվում էին արտաքին քաղաքական տեղեկատվություն և տեսություններ, բանասիրություն, պատմական և կրթական խնդիրներ, տեղեկություններ ազգային կյանքից: Հրատարակվում էին նյութեր տնտեսության, լեզվաբանության, բնական գիտությունների, հողվածներ նշանավոր անձանց մասին և այլն:

1873-1874 թթ. խմբագիր-հրատարակիչ Գ. Տեովեթյանը հրատարակում է «Դաստիարակ» հանդեսը՝ նպատակ ունենալով օգտավետ դաստիարակ լինել հայ ազգին: Պարբերականը իր նպատակից դուրս էր համարում կրոնական վիճաբանությունները կամ կառավարությունների մասին խորհրդածություններ անելը: Այն հողվածներ էր տպագրում գյուղատնտեսության, վաճառականության, մանկավարժության, առողջապահության մասին, հաղորդում էր աշխարհագրական և պատմական տեղեկություններ, զետեղում բանասիրական նյութեր, «հետաքրքրական և զվարճալի վիպասանություններ» և այլն: 1874 թ. միջոցների սղության պատճառով հանդեսի հրատարակումը դադարեց:

19-20-րդ դարերում համեմատաբար կարճ ժամանակում ղրիմահայ գաղթօջախները, իրենց երկարատև և տանջալից կազմավորմանը զուգահեռ, ունեցան նաև նկատելի ճարտարապետական-շինարարական գործունեություն: Այս շրջանի ուշագրավ հուշարձանը Յալթայի հայկական եկեղեցին էր, որը կառուցվել է հայ դասական ճարտարապետության ոճով 1909-1916 թթ. ճարտարապետ Տեր-Միկելովի՝ Միքայելյանի նախագծով, մեծահարուստ Տեր-Ղազարյանի ծախսերով: Գեղեցիկ կոթող է Հ. Այ-

վազովսկու պատկերասրահը Թեոդոսիայում, որը կառուցվեց նկարչի նախածեռնությամբ և միջոցներով՝ 1880-ական թվականներին: Երկարամյա ձգձգումից հետո 19-րդ դարի կեսերին վերջապես ավարտվեց Եվպատորիայի հայկական Սբ. Նիկողայոս եկեղեցու շինարարությունը: Հայերը եկեղեցիներ են կառուցել Հին Ղրիմում, Արմյանսկի Բազարում, Սիմֆերոպոլում:

Ղրիմահայությունը ի զորու եղավ տալ գործիչների մի հիանալի համաստեղություն, որոնց անունները ստացան համազգային, համառուսական և նույնիսկ համաշխարհային ճանաչում, և որոնցով կարող է պարծենալ ցանկացած ժողովուրդ: Փոքրաթիվ ղրիմահայության ծոցից դուրս եկան ռազմական գործի, գեղանկարչության և երաժշտության բնագավառի այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք էին ծովակալ Լ. Մ. Սերեբրյակովը (Արծաթագործյանը 1792-1862), աշխարհահռչակ Հովհաննես Այվազովսկին (1817-1900), տաղանդավոր ծովանկարիչ Է. Մահտեսյանը (1857-1908), ականավոր կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը (1870-1928) և Ք. Կարա-Մուրզան (1853-1908), միջազգային ճանաչման արժանացած ջութակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Հովհաննես Նալբանդյանը (1871-1942) և ուրիշներ: Ղրիմում մանկավարժական և գիտական երկարամյա գործունեություն էին ծավալել հայտնի հայագետներ Ք. Քուչներյանը, Մ. Բժշկյանը, Հ. Տեր-Աբրահամյանը, Խ. Ստեփանեն և ուրիշներ:

ԳԼՈՒԽ 2. ԱՍՏՐՆԻԱՆ³²

Վուլգայի ամբողջ հունը 16-րդ դ. կեսերին անցավ Ռուսաստանի գերիշխանության ներքո անցնելը, Ռուսաստանի դուրս եկավ դեպի Կասպից ծով և արևելյան Նախակովկաս, անմիջական շփումների հաստատվեցին Այսրկովկասի, Իրանի և Միջին

³² Աստրախանի գաղութի մասին տես Ա. Թ. Յուխտի, Վ. Ա. Խաչատրյանի աշխատությունները և վերջինիս «Հայ գաղթաշխարհի պատմության» 1 հատորում Աստրախան բաժինը, (էջ 241-294):

Ասիայի հետ. ի՞նչի համար տնտեսական կյանքն աշխուժացնելու, Վոլգայի գետաբերանը առևտրական և ստրատեգիական կարևոր ուղիների հանգույց դարձնելու նպատակով Ռուսաստանի ներքին շրջաններից և Արևելքի հարակից երկրներից գործունյա ազգաբնակչությանը ներգրավելու համար հնարավորություններ ստեղծվեցին:

Ստեղծված իրադրության մեջ ոչ պակաս կարևոր դեր ունեին նաև հայերը, որոնք ձեռք բերեցին գործունեության ոլորտներն ընդլայնելու և իրենց վիճակը բարելավելու նոր հնարավորություններ: Իրանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի և այլ վայրերի բնակչությունն օտարի լծի տակից դուրս գալու նոր ուղի ձեռք բերեց: Այսպիսով, զգալի թվով հայ բնակչության համար Աստրախանում բնակություն հաստատելու բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին:

Հայ ազգաբնակչություն կար Աստրախանում արդեն 16-րդ դ. երկրորդ կեսից, այսինքն, գործնականում ռուսական Աստրախանի գոյության առաջին իսկ տարիներից: 1672-1673 թթ. ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարած Նոր Ջուղայի առևտրական ընկերության ականավոր ներկայացուցիչ Գրիգոր Լուսինկովը հավաստում էր, որ հայերը հարյուր տարուց ավելի է, ինչ բնակվում են Աստրախանում³³:

Շահի սուրհանդակ Խոջա Մուրթազի խնդրագրում (1616 թ.) նշված է, որ «Քուխարացիների և գիլանցիների իջևանատներում բնակվում են հայեր իրենց կանանց և երեխաների հետ, առանց մեկնելու, երեսուն և ավելի տարիներ ի վեր»³⁴: Մշտական հայ բնակչություն էր ապրում ռուսական Աստրախանում արդեն 16-րդ դ. 70–80–ական թվականներին: Հայ ազգաբնակչության կորիզը կազմեցին այն հայերը, որոնք քաղաքը Վոլգայի աջ ափից ձախ ավիղ տեղափոխելու ժամանակ վերաբնակվել էին այնտեղ: Պո-

³³ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 241:

³⁴ Веселовский Н. И., Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, т. III, СПб., с. 61, 123.

վոլժիեի անցումը ավելի հզոր, ընդ որում, քրիստոնյա պետության գերիշխանության ներքո, կայուն տնտեսական կյանք հաստատելու հեռանկարները խթանում էին հայ բնակչության հաստատմանն Աստրախանում՝ Այսրկովկասից և Իրանից այստեղ հայերի նորանոր խմբեր ներգրավելով:

Եթե հայերը սկզբնապես խմբվում էին գիլանցիների իջևանատանը, ապա ժամանակի ընթացքում նրանք սկսեցին առավելապես բնակություն հաստատել Աստրախանի կրեմլից դեպի արևելք, ինչպես նաև արվարձանից դուրս, այսպես կոչված Բելի քաղաքի պարիսպներից այն կողմ: Հենց այդտեղ, Սադովոյ բլրի վրա էլ սկսեց ձևավորվել ռուսական Աստրախանի հայկական առաջին թաղամասը:

Այդ ժամանակաշրջանի (16-րդ դարի վերջ – 17-րդ դ. սկիզբ) հայկական բնակավայրերը ավելի շատ առևտրական ֆակտորիաների էին նման, քան թե՛ գաղութի:

17-րդ դ. երկրորդ-երրորդ տասնամյակներն Աստրախանի հայ բնակչության ավելացման կարևոր հանգրվաններ դարձան, քանզի այդ ժամանակ, Ռուսաստանի ներքին քաղաքական իրադրության ամրապնդման շնորհիվ, այնտեղ հայերին ներգրավելու պայմանները բարելավվեցին: Այստեղ հայկական համայնքների մեծացման բարենպաստ նախադրյալների վրա ավելացավ այնպիսի կարևոր գործոն, որպիսին էր ռուսական կառավարության՝ օտարերկրացի առևտրականների և արհեստավորների նկատմամբ կիրառած հովանավորական քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը հետագայում դարձավ հայերին դեպի Ռուսաստան ներգրավելու և այնտեղ հայկական գաղթավայրեր կազմավորելու որոշիչ գործոն:

1667թ. Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն, պարսկական մետաքսի մենաշնորհային առևտուրը ստանձնելով՝ հայ վաճառականներն երկրի ներսում երթևեկելու իրավունք էին ստանում: Հինգ տոկոսանոց մաքսը նույնիսկ Աստրախանում չվաճառված մետաքսի

գինը դեպի Մոսկվա և Արխանգելսկ ուղարկելիս բարձրացնելու դեպքում էլ վերջին հաշվով ավելի էժան էր ստացվում, քան առևտրի մասին նոր կանոնադրությամբ սահմանված 10 տոկոսանոց մաքսը³⁵:

Այսպիսով, Նոր Ջուղայի առևտրական ընկերության գործարքների շնորհիվ նկատելիորեն մեծացավ հայկական քարվանսարայի առևտրի ծավալը, ավելի հաճախակի դարձան Նոր Ջուղայի ընկերության ծառայողների այցերը Աստրախան, որոնց մի մասը դառնում էին քաղաքի մշտական բնակիչներ: Ընկերության գործունեությանը մասնակից էին դառնում նաև տեղաբնակ հայերը: Գործարարության աշխուժացումը ներգրավում էր Այսրկովկասից և Իրանից եկած հայազգի նոր վերաբնակիչների. դա հանգեցրեց Աստրախանի հայ բնակչության թվաքանակի հետագա մեծացմանը:

Քաղաքի հայ ազգաբնակչության թվաքանակի աճը նպաստեց Աստրախանում հայկական եկեղեցու շենք կառուցելու հարցի լուծմանը: 1660 թ. Մոսկվա ժամանած ջուղայեցի վաճառական Ջաքար Սահրադյանը, որն Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հռչակավոր ադամանդակուռ գահին էր նվեր բերել (ցարդ պահպանվում է Մոսկվայի Կրեմլի Ջինապալատում), դիմեց Աստրախանում եկեղեցի կառուցելու թույլատրություն ստանալու խնդրանքով, որը բավարարվեց:

1706 թ. ջուղայեցի հայազգի Բոգդան Բոգդանովը խնդրագիր է ներկայացնում Աստրախանում «իր միջոցներով» քարաշեն եկեղեցի կառուցելու վերաբերյալ, դա պատճառաբանելով այն իրողությամբ, որ փայտաշեն նախկին եկեղեցին խարխվել է, իսկ հայերի թվաքանակն Աստրախանում նկատելիորեն մեծացել է: Հենց նույն տարում ստացվեց Պյոտր 1-ի թույլատրությունը, սա-

³⁵ Армяно-русские отношения в XVII в., Сборник документов, Ер., 1953, с. 8.

կայն քարաշեն եկեղեցու շինարարությունը ձգձգվեց մինչև 1730-ական թվականները³⁶:

Ռուսաստանի հայ գաղթավայրերի կյանքի և զարգացման վրա միանգամայն դրականորեն ազդեց Պյոտր 1-ինի բարեփոխիչ գործունեությունը: Առևտրի և արդյունաբերության՝ Պյոտրի կողմից խրախուսվող զարգացումը նպաստեց Աստրախանի ռազմական, քաղաքական և տնտեսական նշանակության բարձրացմանը և այնտեղ օտարերկրացի առևտրականներ ու արհեստավորներ ներգրավելուն: Այդ ժամանակաշրջանում ձևավորվեցին տնտեսական և քաղաքական նպաստավոր պայմաններ հայկական համայնքի նշանակալիորեն մեծանալու համար:

Առաջին մարդահամարի տվյալներով, 1724 թ. Աստրախանի արական սեռի հայ բնակչության թվաքանակը 500 մարդ էր, իսկ ընդհանուր թվաքանակը 700-800 շնչից ոչ պակաս, այսինքն՝ 3-4 անգամ ավելի, քան դարի սկզբին, և դա գերազանցում էր քաղաքի բոլոր մնացյալ օտարերկրացիների արվարձանների բնակչությանը միասին վերցրած³⁷:

Աստրախանի ռուս վաճառականությունը, անհանգստացած հայ ազգաբնակչության բացարձակ և հարաբերական աճով, հանդես եկավ հայերի արտոնությունների սահմանափակման կամ վերացման պահանջով՝ ինչպես առևտրաարդյունաբերական գործունեության բնագավառում, այնպես էլ՝ պետական տուրքերի և պարտույթների առումով:

Հայ վաճառականները նախազգուշացնում էին, որ իրենց իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում իրենք ստիպված կլինեն լքել Աստրախանը: Ռուս վաճառականության պահանջները հանդիպեցին Աստրախանի նահանգապետ, ականավոր պետական գործիչ և գիտնական-պատմաբան Վ. Ն. Տատիշչևի հակահարվածին, որն ըստ ամենայնի սատարում էր հայերի տնտեսական գործունեությունը: Նրա առաջարկով Սենատը

³⁶ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 244:

³⁷ Նույն տեղում, էջ 245:

1744 թ. ապրիլի 13-ի հրամանագրով թույլատրում էր օտարերկրացիներին «ժամանակավոր հպատակի» կարգավիճակ տալ: Առանձնապես ուշագրավ էր հրամանագրի այն կետը, որտեղ առաջին անգամ ռուսական օրենսդրության մեջ Աստրախանի արևելքի վերաբնակիչներին ներքին ինքնավարություն և ինքնավար դատավարություն ունենալու իրավունք էր վերապահվում: Իր վերջնական դրսևորումն այն գտավ երկու տարի անց, 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրում և հայերի կողմից 1747 թ. իրենց դատավարչական մարմինն ստեղծելու մեջ³⁸:

Հայկական դատարանը կամ ռատհաուզը, ինչպես այն կոչվել էր 18-րդ դ. ռուսական վարչակարգում տարածում ստացած գերմաներեն տերմինների պատճառով, սկսեց գործել 1747 թ. հունվարից: Նրա պարտականություններից և հետագա գործունեությունից երևում էր, որ այն ոչ միայն դատավարության, այլև ներքին ինքնավարության մարմին էր: Դրանով իսկ ավարտին հասավ Աստրախանի հայկական գաղութի կազմավորման գործընթացը:

17-րդ դ. առաջին քառորդում աստրախանյան առևտուրը սկսեց կանոնավոր բնույթ ստանալ և ձեռք բերեց միջազգային և ներքին պատշաճ նշանակություն: Առևտրական ուղիների հատման վայրում գտնվող Աստրախանն էական դեր էր խաղում համառուսական շուկայի կազմավորման և Ռուսաստանում նախասկզբնական կապիտալի կուտակման գործընթացի մեջ:

Հայերը գործուն մասնակցություն ունեին ինչպես ներմուծման, այնպես էլ Ռուսաստանից արտահանման հետ կապված տարբեր ուղղություններով կատարվող առևտրական գործարքներին: Վավերագրերը վկայում են, որ որոշ հայեր զբաղվում էին վարկային և վաշխառուական գործարքներով: Տեղացի հայերին որպես թարգմանիչներ ընդունում էին աշխատանքի մաքսատանը, որտեղ օգտակար էր արևելյան լեզուների և ապրանքների նրանց իմացությունը:

Օգտվելով Ռուսաստանի խորքերում առևտուր անելու իրավունքից, աստրախանաբնակ հայերը հանդես էին գալիս որպես միջնորդներ՝ ռուս վաճառականներից ապրանքներ գնելու և օտարերկրացի վաճառականներին դրանք վերավաճառելու ժամանակ: Ավելի հարուստ հայ առևտրականներն օգտվում էին այստեղ նաև ռուս առևտրականների՝ վարկ ստանալու մշտական պահանջից: Վարկային գործարքներին հայ առևտրականների մասնակցության հետքեր նշմարվում են վավերագրերում՝ սկսած 17-րդ դարի կեսերից³⁹:

18-րդ դ. առաջին տասնամյակներում Աստրախանի հայերի տնտեսական գործունեության համար առանձնապես բարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Ռուսաստանի արևելյան քաղաքականության աշխուժացումը և Պյոտր 1-ինի կասպիական արշավանքը հանգեցրին Կովկասում և Մերձկասպյան շրջաններում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, հայ-ռուսական քաղաքական կապերի ընդլայնմանը: Ընդլայնվեցին Ռուսաստանի տնտեսական և առևտրական կապերն Այսրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի հետ:

Վոլգայով Աստրախանից հայերի արտահանած ապրանքների տեսականին բաղկացած էր հիմնականում արևելյան ապրանքներից (մետաքս, մետաքայա և բամբակյա գործվածքներ արևելյան ծագում ունեցող սննդամթերքներից՝ բրինձ, գինի, չոր մրգեր, ինչպես նաև տեղական արդյունահանության և արդյունաբերության մթերքներից (ծուկ, աղ): Դրանք Իրանից Աստրախան բերվող ապրանքներն էին:

Եթե 18-րդ դ. 20-30-ական թվականներին աստրախանցի հայերն ավելի շատ զբաղվում էին ներքին, քան թե արտաքին առևտրով, ապա 40-ական թվականներին մոտ մեծանում է նրանց բաժինը Աստրախանից կատարվող արտաքին առևտրում: Աստ-

³⁹ Տե՛ս Անանյան ժ., Խաչատրյան Վ., Հայ վաճառականական կապիտալը Ռուսաստանում 17-18-րդ դդ., «Հայաստանի ժող. տնտեսություն», Ե., 1989, N 8:

³⁸ Նույն տեղում, էջ 245-246:

րախանաբնակ հայերի բաժինը Իրանից կատարվող մետաքսի ներմուծության մեջ կազմում էր 1733 թ. 3,1% (1960 ռ.), 1735 թ. 10,9% (25,1 հազ. ռուբլի), իսկ 1744 թ. 11,2%⁴⁰:

Հետագայում ռուսաստանահպատակ հայերի բաժինն էլ ավելի մեծացավ՝ 1753-1755 թվականներին հասնելով 72-77%-ի, իսկ 1760 թ. 69%-ի: Դա մեծ չափով կապված էր ռուս-իրանական առևտրի և Ռուսաստանի վրայով Իրանի և Եվրոպայի միջև կատարվող առևտրի ծավալի մեծացման հետ, որի պատճառը թուրք-իրանական հարաբերությունների սրումն ու Փոքր Ասիայի վրայով կատարվող տարանցիկ առևտրի խափանումն էր:

Աստրախանի առևտրում հայերի տեսակարար կշռի մեծացման մեջ վճռական դեր էր խաղում խոշոր վաճառականությունը: 18-րդ դարի կեսերին նրա նկատելի աճը բացատրվում է Աստրախանի հայերի տնտեսական և իրավական իրավիճակի բարելավմամբ: 18-րդ դ. 30-40-ական թվականներին սրվեց հայերի պայքարը քաղաքի ռուսական արվարձանի վերնախավի դեմ, որը պահանջում էր սահմանափակել ռուսական հպատակություն չընդունած և արվարձանում, այսինքն՝ համառուսական (քաղքենիների, վաճառականների) դասերում չգրանցված հայերի տնտեսական գործունեությունը⁴¹:

18-րդ դ. առաջին կեսին տեղի է ունենում արհեստագործության նկատելի աճ Աստրախանում: Առևտրի մեջ տեղի ունեցած ընդհատումները դրդում էին ռուսական կառավարությանը ներմուծվող արտադրանքի նկատմամբ պահանջարկը բավարարող միջոցներ ձեռնարկել. դա առաջ բերեց համապատասխան արհեստների և գործարանային արտադրության զարգացում: Դեռևս 1710 թ. հայազգի վաճառական Սաֆար Վասիլևի թույլատրվել էր Թերեքի շրջանում զբաղվել շերամաբուծությամբ: Երկար տարիներ Ռուսաստանում առևտրով զբաղված ջուղայեցի

⁴⁰ Юхт А. И., Торговые связи России со странами Востока в 20-40-х годах XVIII в., "Историческая география России" XVIII в., ч. I, М., 1981, с. 92, 122.

⁴¹ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 252:

Սաֆար Վասիլևը հաստատվեց այդ երկրում՝ դնելով աստրախանյան հայկական Վասիլև-Մակարով-Խաստատով հայտնի տոհմի սկիզբը:

1724 թ. մարդահամարի տվյալների համաձայն Աստրախանում կային 22 հայազգի արհեստագործներ: Սակայն այդ տվյալները թերի են թվում, քանի որ, օրինակ, չեն հիշատակվում ջուլհակները, թեև նրանց թվաքանակը զգալի էր: 1747 թ. տվյալներով, այդ ժամանակաշրջանում Աստրախանում կար 148 հայազգի արհեստավոր, այդ թվում՝ 48 ջուլհակ, 20 ոսկերիչ, 17 դերձակ, 16 կոշկակար, 14 ճոն, 8 ներկարար, 2-ական փականագործ և հացթուխ, մեկական պղնձագործ, դարբին, ատաղձագործ, կազմարար և ներկարար⁴²:

18-րդ դ. երկրորդ կեսին շարունակվում էին պահպանվել այն հիմնական գործոնները, որոնք նպաստում էին հայերի՝ դեպի Ռուսաստան, մասնավորապես, Աստրախան ներհոսքին: Դրանք, մի կողմից, պարսիկների և թուրքերի լծի տակ գտնվելու անտանելի պայմաններն էին, իսկ մյուս կողմից՝ հայերի նկատմամբ ռուսական կառավարության հովանավորչական քաղաքականությունը:

Այդ ժամանակաշրջանում հրապարակվեցին ռուսական կառավարության մի շարք օրենսդրական որոշումներ (ակտեր), որոնք հաստատում էին հայ վերաբնակիչների արտոնյալ կարգավիճակը: 1762 թ. օգոստոսի 10-ին առևտրի ասպարեզում վերացվեցին արգելքները նրանց համար, ովքեր առևտրական ընկերությունների մեջ չէին գրանցված: 1763 թ. հուլիսի 22-ին հետևեց «ժամանած օտարերկրացիների մասին» հրովարտակը, որտեղ նորից հավաստվում էին Ռուսաստանում նրանց իրավունքները և արտոնությունները:

Հրովարտակի պատճեններն աստրախանաբնակ հայերն ուղարկեցին Իրան՝ «իրենց հուսալի բարեկամներին», իսկ այդ

⁴² Юхт А. И., Армянские ремесленники Астрахани в первой половине XVIII века, "Изв. общ. наук АН Арм. ССР", 1958, N 1, с. 38.

պատճենների հիման վրա «բավական մեծ թվով հայեր ներգաղթեցին»։ 1763 թ. վերացվեց Ռուսաստանում հայկական եկեղեցիներ կառուցելու մասին սահմանափակումը։

Հայերի արտոնությունները վավերացվում են նաև կառավարական այլ որոշումներում։ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ վաճառականներից, ֆաբրիկանտներից և գործարանատերերից լրացուցիչ տուրք գանձելու մասին որոշումը կիրառելիս Սենատի 1771 թ. հատուկ հրամանագրով վերապահություն էր արվում այն մասին, որպեսզի աստրախանաբնակ հայերը և թաթարները ոչ մի այլ հարկով չտուրքադրվեն, բացի «այժմ նրանց կողմից վճարվող հարկերից»։

Այդ ամենը վկայում էր հայերին և մյուս օտարերկրացիներին ներգրավելու ուղղությամբ ռուսական կառավարության ծեռնարկած լուրջ միջոցառումների մասին և խթանում դեպի Ռուսաստան նրանց ներգաղթը⁴³։

Աստրախանի հայ բնակչության մեծ մասն ուղղակի կամ անուղղակի կերպով զբաղված էր առևտրի ոլորտում։ Հայ առևտրականները կազմում էին բնակչության նշանակալի հատվածը։ «Աստրախանի նահանգի 1789 թ. տեղեկագրի» համաձայն, Աստրախանում կար 1530 հայազգի առևտրական, այսինքն, արական սեռի 2023 ընդհանուր թվաքանակի երեք քառորդը։ Այդ տարիներին շատ հայերի գրանցում էին վաճառականության մեջ իրենց ունեցած կապիտալի մասին արված հայտարարության համապատասխան։ Առաջին գիլդիային (10 հազար ռուբլուց ավելի կապիտալ) էին պատկանում 11 հայ առևտրական։ Նրանցից մեկը՝ Սինաս Դիլանչյանցը (Դեյանովը) արդեն դասվում էր «անվանի քաղաքացիների» կարգը, քանզի նրա կապիտալը հասնում էր 50 հազ. ռուբլու։ Վաճառական Նիկիտա Կալուստովը (Մկրտում Գալստյանը) ուներ 35 հազար ռուբլի հայտարարված կապիտալ, Մատվեյ Իսաևը և Պետրոս Վարդանովն ունեին 13 հազարական ռուբլի և այլն։ Երկրորդ գիլդիային (այ-

սինքն, 5-ից մինչև 10 հազար ռուբլի կապիտալի առկայության դեպքում) էին պատկանում 16 անձ՝ 86.620 ռ. ընդհանուր կապիտալով։ Ամենից բազմամարդ երրորդ գիլդիան էր (1050-ից մինչև 5 հազար ռուբլի հայտարարված կապիտալ), որի կազմում կար 172 մարդ՝ 183.250 ռուբլի ընդհանուր կապիտալով⁴⁴։

Աստրախանի վրայով կատարվող ռուսական ներմուծման կարևոր բաժինն էր նաև բամբակը և բամբակյա մանվածքը։

Հայերը մասնակցում էին նաև այլ ապրանքների առևտրին՝ Ռուսաստան ներկեր, թանկարժեք քարեր, բրինձ, չիր ներմուծելու և Ռուսաստանից պատրաստի արտադրանք (տնտեսական սպասքեղեն, հայելիներ), ինչպես նաև եվրոպական ապրանքներ՝ մահուդ, շաքար, ներկեր, պերճանքի առարկաներ արտահանելու գործին։

Աստրախանաբնակ հայերն առևտուր էին անում նաև կաքարդիցիների և կալմիկների հետ։ Հյուսիսային ուղղությամբ նրանք արևելյան արտադրանքի իրեր էին տանում Մակարիևյան տոնավաճառ, Մոսկվա, Պետերբուրգ և ռուսական որոշ այլ քաղաքներ, իսկ արևմտյան ուղղությամբ՝ դեպի Չերկասկ և Դոնի այլ շրջաններ։ Վոլգայով և Դոնով անցնող գետային ուղիներից գատ, նրանք սայլերով և սահնակներով ապրանքներ էին փոխադրում նաև ցամաքային ճանապարհներով։

Առևտրի չափերի և բովանդակության վրա մեծապես ազդում էր նաև մաքսային քաղաքականությունը։ Մաքսային մի շարք արտոնություններ տարածվում էին նաև աստրախանաբնակ հայերի վրա։

Աստրախանի հայ բնակչությունը գործունե մասնակցություն էր ունենում մաքսային մարմինների աշխատանքին։ Մաքսատուները երկար ժամանակ միակ պետական հաստատությունն էր, ուր տակավին 18-րդ դարում ծառայության էին ընդունում աստրա-

⁴⁴ Յուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը 18-րդ դարի առաջին կեսին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, N 7, էջ 57-58։

⁴³ Նույն տեղում, էջ 253-254։

խանաբնակ հայերին: Այսպես, 18-րդ դ. 80-ական թվականներին մաքսատան տնօրենի պաշտոնը զբաղեցնում էր հայազգի Իվան Խոջամալովը:

18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին երկար տարիների ընթացքում Աստրախանի մաքսատան տնօրենն էր հայազգի Սեմյոն Սերգեյիչ Իվանովը՝ աստրախանցի խոշոր վաճառականի և մանուֆակտուրայի տիրոջ, հայկական «Դատաստանագրքի» կազմողներից մեկի՝ Սերգեյ Իվանովի (Սարգիս Օհանյանի) որդին և հռչակավոր Լազարյան գերդաստանի ազգականը: Այսրկովկասը Ռուսաստանին միակցելուց հետո նրան ներգրավեցին նաև Բաքվում և Վրաստանում մաքսատներ կազմակերպելու գործի մեջ⁴⁵:

Առաջին մետաքսագործական մանուֆակտուրան Աստրախանում ստեղծվել էր տակավին 1734 թ. Հովսեփ Իզբիլև և Ստեփան Տիգրյանսկի հայորդիների կողմից: 1740-ական թվականներին Աստրախանում ֆաբրիկա հիմնադրեց պետերբուրգցի վաճառական, հայազգի Լուկա Շիրվանովը: 1750 թ. գրանցվեց հայազգի Իվան և Գալուստ Բունիաթովների ֆաբրիկան, որը նրանք գնել էին Իզբիլևից: Այն արտադրում էր տարբեր գույնի մետաքսյա գործվածքներ և այլ իրեր (գլխաշորեր, գոտիներ): Այդպիսին էր նաև Վարազ Իվանեսովի ֆաբրիկայի տեսականին:

Հայերից խոշոր ֆաբրիկատերեր դարձան Պետրոս Վարդանովը, Ռևազ Զալիևը, Սերգեյ Իվանովը: 1769 թ. Աստրախանում արդեն կար ինը մետաքսագործական ֆաբրիկա (Ռուսաստանի ֆաբրիկաների մեկ քառորդը), որոնցից հինգը պատկանում էր հայերին: Հայերին էր պատկանում Աստրախանի ֆաբրիկաների դազգահների երեք քառորդը (153-ից՝ 113-ը): 1787 թ. տվյալներով, հայերին էր պատկանում քաղաքի մետաքսագործական 38 ֆաբրիկաներից 32-ը, և դազգահների 298 ընդհանուր քանակից՝ 268-ը: Աստրախանի մետաքսագործական արդյունաբերության

⁴⁵ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 258-259:

ծաղկման ժամանակաշրջանում այն գրեթե ամբողջապես գտնվում էր հայերի ձեռքում⁴⁶:

Շարունակում էր բարձր մնալ նաև հայազգի արհեստագործների տեսակարար կշիռը: Փաստորեն շատ մանուֆակտուրաներ արհեստագործական արհեստանոցներ էին: Այնտեղ շատ հաճախ աշխատում էին արհեստանոցի տիրոջ ընտանիքի անդամները: Մանածագործական ֆաբրիկաների հետ կապված էին շատ արհեստագործներ, որոնք պատվերը տանն էին կատարում: Տանը շատ պատվերներ կատարում էին կանայք:

1760 թ. Սեմատը հայազգի Սիլվեստր (Սիխբեստրոս) Գերասիմովին նշանակեց Աստրախանի բոլոր արհեստագործների տնօրեն: Նրան տրված հրահանգը համքարային կառուցվածքին բնորոշ սահմանափակումների հավաքածու էր: Արհեստագործներին արգելվում էր երկու արհեստով զբաղվելը: Տնօրենը հետևում էր արտադրանքի որակին: Արհեստագործներն ընտրում էին իրենց ավագներին: Վաճառականներին արգելվում էր «չդրոշմված» (այսինքն՝ չստուգված) չափեր և կշեռքներ գործածելը: Ս. Գերասիմովը դարձավ բավականին ազդեցիկ դեմք ոչ միայն հայկական համայնքի, այլև Աստրախանի տնտեսական ամբողջ կյանքի առումով: Նա շարունակ պայքարում էր վաճառականների և արհեստավորների վերնախավի մաքսանենգութան և այլ չարաշահումների դեմ, ստացել էր «արդյունաբերական պարետ» մականունը:

Հայկական դատարանը կամ ռատիաուզը սկսեց գործել 1747 թ. հունվարից: Այն ինքնավարության և դատական մարմին էր հայերի և կաթոլիկների համար (աստրախանաբնակ կաթոլիկների ճնշող մեծամասնությունը հայեր էին): Նրա գործունեությանը էր թելադրված հատուկ օրենսգիրք կամ դատաստանագիրք ստեղծելու անհրաժեշտությունը: Դատաստանագիրք ստեղծելու աշխատանքը սկսվեց դատարան հիմնելուց անմիջապես հետո: Այն կազմելուն ձեռնամուխ եղան Աստրախանի հայկական հա-

⁴⁶ Նույն տեղում, էջ 259-260:

մայնքի նշանավոր ներկայացուցիչներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը (Կամպանովը) և Սարգիս Օհանյան ը (Սերգեյ Իվանովը): Իրենց բազմամյա աշխատությունը նրանք ավարտեցին 1765 թ.: «Աստրախանի հայերի Դատաստանագիրքը» հայ իրավաբանական մտքի արժեքավոր հուշարձաններից էր⁴⁷:

Ռուսաստանի հայկական համայնքների իրավական դրության մեջ մեծ դեր խաղաց 1785 թ. քաղաքային ռեֆորմը: Քաղաքների մասին 1785 թ. ապրիլի 21-ին հրապարակված կանոնադրության տարբերիչ հատկանիշը «քաղաքաբնակների» կազմն ընդլայնելն ու արվարձանային համայնքի նեղ դասայնության քայքայելն էր:

Նոր կանոնադրության համաձայն, առևտրով զբաղվող ամբողջ բնակչությունը պարտավոր էր գրանցվել գիլդիաների մեջ՝ հայտարարված դրամագլխի գումարին համապատասխան. առաջին գիլդիայում միավորված էին 10-ից մինչև 50 հազար ռուբլի, երկրորդ գիլդիայում՝ 5-ից մինչև 10 հազար ռուբլի, երրորդ գիլդիայում՝ 1-ից մինչև 5 հազար ռուբլի դրամագլուխ ունեցողները: Վաճառականական գիլդիաներում գրանցվելը բավականին մեծ առավելություններ էր տալիս (անդրծովյան առևտրի և այլնի իրավունք), բայց ուղեկցվում էր պարտականությունների (պարհակների) կարգադրմամբ, որոնցից նախկինում հայ ազգաբնակչությունն ազատված էր:

Շատ վաճառականներ, որոնց դրամագլուխը մեկ հազար ռուբլուց պակաս էր, հայտնվում էին քաղաքաբնակների (մեշչանների) դասում: Իսկ քաղաքաբնակների և 3-րդ գիլդիայի վաճառականների առևտուր անելու իրավունքները խիստ սահմանափակ էին: Ուստի և մանր առևտրականների մեծամասնությունը շահագրգռված չէր գիլդիաներում գրանցվելու մեջ: Հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը ձգտում էր քաղաքային նոր դասերից դուրս մնալ: Բարեփոխման տարում Աստրախա-

⁴⁷ Տես Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Եր., 1967:

նում առկա 865 հայկական ծխից 1787թ. (երկու և կես տարի անց) գրանցվել էր սոսկ 244 ծուխը, իսկ մոտ 620 ծուխ (70%-ից ավելին), ըստ ամենայնի, խուսափում էր գրանցվելուց: Դրա հետևանքով Աստրախանի հայ բնակչությունը վարչաիրավական առումով բաժանվեց երկու մասի: Կովկասի գեներալ նահանգապետ գեներալ-պորուչիկ Պ. Ս. Պոտյոմկինի՝ կայսրուհուն ներկայացրած առաջարկություններին հետևեց 1788 թ. հունվարի 26-ի Անվանական հրամանագիրը, որի համաձայն հայերը և մյուս «ասիացիները», որոնք չէին ցանկացել վաճառականների կամ քաղաքաբնակների դասում գրանցվել, մնում էին նախկին կարգավիճակի մեջ⁴⁸:

1785 թ. քաղաքային ռեֆորմը հարուցեց աստրախանաբնակ հայերի բոլոր խավերի դժգոհությունը, քանզի այն վատթարացնում էր նրանց տնտեսական և իրավական վիճակը: Եկատերինա 2-րդի անակնկալ մահն արագացրեց խնդրի լուծումը՝ հայերի համար բարենպաստ առումով: Պավել 1-ը բացասաբար էր վերաբերվում իր մոր օրինադրություններին և վերացրեց դրանցից շատերը: Պավելի 1797 թ. մարտի 1-ի հրամանագրով կարգադրվում էր Աստրախանի հայկական հասարակությանը վերադարձնել նրա նախկին իրավունքները, այն է՝ ժամանակավոր հպատակություն ընդունելը, հարկադրաբար գիլդիաներում չգրանցելը, զորքերին օթևան տալու պարտականությունից ազատելը և այլն: Այդ նույն հրամանագրով ստեղծվեց Աստրախանում առևտուր անող Ասիացիների ընդհանուր դատարան: Այսպիսով, վերականգնվում էին մինչև 1785 թ. գոյություն ունեցող շատ իրավունքներ, մի բան, որին ձգտում էին հասնել հայերը:

Սենատի՝ 1800 թ. նոյեմբերի 19-ի հրամանագրով Աստրախանում գոյություն ունեցող Ասիացիների ընդհանուր դատարանը վերստին բաժանվեց երկու մասի՝ Հայկական դատարանի և Թաթարական դատարանի⁴⁹:

⁴⁸ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 262-263:

⁴⁹ Նույն տեղում, էջ 264-265:

Այդ հրամանագրերով հիմնականում բավարարվեցին քաղաքային կանոնադրության դեմ հանդես եկող հայերի պահանջները, իսկ Աստրախանի հայկական գաղութը վարչական առումով նորից միասնական դարձավ: Հաջորդ տասնամյակներում Աստրախանի հայկական դատարանի կարգավիճակը շարունակում էր հիմնականում անփոփոխ մնալ:

Աստրախանի հայկական գաղութի հասարակական կյանքում կարևոր տեղ էր գրավում նրա բնակչության գործուն մասնակցությունն օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին:

Աստրախանի հետ են կապված հայ ազատագրական շարժման այնպիսի ականավոր գործիչների անուններ, ինչպիսիք էին Իսրայել Օրին, Լազարյանների գերդաստանը, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Հովսեփ Արղության- Երկայնաբազուկը և ուրիշներ: 18-րդ դ. կեսերին Աստրախանում էր գտնվում հայկական և վրացական հեծելավաշտերի հրամանատարությունը: Աստրախանը Ռուսաստանի հայերի թեմի կենտրոնն էր: Աստրախանաբնակ հայերի կապը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի հետ խիստ սերտ էր ու բազմաբնույթ՝ հայրենիքն ազատագրելու նախագիծը կազմելուց ընդհուպ մինչև օտար կեղեքիչների դեմ մղած պայքարին անձամբ մասնակցելը:

Տակավին Պյոտր 1-ինի ձեռնարկած Կասպիական արշավանքի (1722—1723 թթ.) ժամանակներից ի վեր Աստրախանում կազմավորվեցին և հանդերձավորվեցին ռուսաստանաբնակ հայերից զորական ստորաբաժանումներ, որոնք ուղարկվեցին Իրանում և Այսրկովկասում ռազմական գործողություններին մասնակցելու: Մարտական ուժից զատ, հայկական գաղութը ռուսական զորքերին տրամադրում էր որակյալ արհեստագործներ, թարգմանիչներ, ուղեցույցներ և հետախույզներ: 1722 թ. Աստրախանում կազմավորվեց հայ կամավորների ջոկատ ազատագրա-

կան շարժման նշանավոր գործիչ Պետրոս դի Սարգիս Գիլանեցու և Իսրայել Օրու զինակից Մինաս Վարդապետի զխավորությամբ: Ռուսաստանում կազմավորված հայկական զորական ստորաբաժանումները հետագայում կազմեցին հայկական հեծելավաշտեր, որոնք գործում էին ռուսական բանակի հրամանատարության ներքո: Հայկական և հայ-վրացական հեծելավաշտերը գոյատևեցին մինչև 1769 թ. և տեղակայված էին Ղզլարում ու Աստրախանում:

Աստրախանաբնակ հայերի՝ իրենց ժողովրդի ազատագրական պայքարին սրտամոտ վերաբերմունք ունենալու վառ օրինակ եղավ հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Հովսեփ Էմինի այցն Աստրախան 1762-1763 թթ.: Աստրախանում էմինը զինվորագրեց 20 մարդ: 1763 թ. հայ վաճառականության ներկայացուցիչներն էմինին թանկարժեք ընծաներ նվիրեցին, մի հանգամանք, որը վկայում էր էմինի առաքելության ժողովրդականության մասին հայ գաղութի բնակչության շրջանում: 1769 թ. Աստրախանում ծնունդ առավ Հայաստանն ազատագրելու նախագծերից մեկը:

Աստրախանաբնակ Հայերի շփումները ռուսական հրամանատարության հետ առանձնապես ակտիվացան Ա. Վ. Սուվորովի Աստրախան ժամանելուց հետո, որը 1780-1782 թթ. զբաղեցնում էր այդ երկրամասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարի պաշտոնը և մշակում ռազմական արշավանքի ծրագրեր դեպի Իրան՝ Կասպից ծովում և Այսրկովկասում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով: Ա. Վ. Սուվորովը Գ. Ա. Պոտյոմկինին տարածաշրջանի իրադրության մասին պարբերաբար զեկուցագրեր ուղարկելիս հաճախ վկայակոչում էր աստրախանցի հայ վաճառականների տեղեկությունները: Ռազմական գործողությունները նախապատրաստելու մեջ կարևոր տեղ էին գրավում նաև առնչությունները Արցախի մելիքների հետ:

Հայ ազգաբնակչության թվաքանակի արագ աճը Ռուսաստանում անհրաժեշտ դարձրեց այստեղ բնակվող հայերի համար թեմական առաջնորդ նշանակելը: 1717թ. էջմիածնի կաթողիկոսը Ստեփանոս Գաղաթեցուն նշանակեց ռուսաստանաբնակ հայերի թեմական առաջնորդ, որի նստավայրն Աստրախանն էր լինելու: Այդ նույն ժամանակ Գանձասարում գահակալող Աղվանից կաթողիկոս Եսային նույնպես անհրաժեշտ համարեց Ռուսաստանում ունենալ իր թեմական առաջնորդը և այդ պաշտոնին նշանակեց Մինաս վարդապետին՝ նրան եպիսկոպոս ձեռնադրելով: Մինասը ընդհուպ մինչև իր մահը (1740 թ.) բնակվում էր Մոսկվայում կամ Պետերբուրգում և փաստորեն չէր կատարում թեմական առաջնորդի պարտականությունները:

Հայկական համայնքների մեծացումը, օտարերկրացիների մուտքը Ռուսաստան խրախուսող 1762-1763թթ. հրովարտակները, հայկական նոր եկեղեցիների շինարարության արտոնումը, հայերի արտոնությունների ամրագրումը ամրապնդեցին նաև ռուսաստանաբնակ հայերի կարգավիճակը: Դրան համապատասխան Ամենայն հայոց կաթողիկոսը (1763 թ. նոր կաթողիկոս ընտրվեց Սիմեոն Երևանցին) վերանայեց էջմիածնի դերը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և հայ ժողովրդի քաղաքական շահերի ամրապնդման մեջ:

Աստրախանաբնակ հայերը ճիշտ ընկալեցին Սիմեոն կաթողիկոսի քաղաքականության նոր գծերը և ընդունեցին էջմիածնի գերակայությունն Աստրախանի թեմի նկատմամբ, որն իր հավաստումը գտավ 1767 թ. հունվարի 3-ին Սիմեոն կաթողիկոսին հասցեագրված աստրախանաբնակ հայերի նամակում:

1768 թ. հրապարակվեց Եկատերինա 2-րդի հրովարտակը, որը ճանաչում էր էջմիածնի աթոռի հոգևոր իշխանությունը ռուսական կայսրությունում բնակվող հայերի նկատմամբ և նրանց համար եպիսկոպոսներ և այլ հոգևորականներ ուղարկելու նրա իրավունքը: 1773 թ. կաթողիկոսը ռուսաստանաբնակ հայերի հոգևոր առաջնորդի պաշտոնում նշանակեց երիտասարդ արքե-

պիսկոպոս Զովսեփ Արղության Երկայնաբազուկին: Ապագան հաստատեց, թե որքան հաջող էր կատարված այդ անձի ընտրությունը: Հենց Զովսեփ Արղությանի անվան հետ էր առնչվում ռուսահպատակ հայերին վերաբերող բազում խնդիրների լուծումը⁵⁰:

19-րդ դ. 30-40-ական թվականներին Ռուսաստանում սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը: Ջարգանում է ներքին և արտաքին առևտուրը, կատարելագործվում են հաղորդակցության ճանապարհները, երևան է գալիս շոգեմավազնացությունը, սկսվում է երկաթուղիների շինարարությունը:

19-րդ դ. առաջին կեսին հայ բնակչությունը նախկինի պես հիմնականում զբաղվում էր առևտրով և արհեստագործությամբ:

Աստրախանաբնակ հայերի տեսակարար կշիռն Աստրախանի առևտրական շրջանառություններում նախկինի պես բարձր էր⁵¹:

Առևտուրը	Ներմուծում (հազ. ռուբլ.)	տոկոս	Արտահանում (հազ. ռուբլ.)	տոկոս
Ռուսաստանի վաճառականներ	892,454	2,5	678,349	2,2
Հայեր	9.018,816	23,5	4.839,804	12,1
Պարսիկներ	23.027,303	60,0	22.689,379	63,1
Խիվացիներ, բուխարացիներ, թաթարներ	5.317,757	13,9	8.238,421	22,9

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ ժամանակաշրջանում արտաքին առևտրում գլխավորող դիրք էին գրավում պարսիկ վաճառականները, որոնց մեջ, հավանաբար, ներառված էին Իրանի բոլոր հպատակները, այդ թվում՝ հայերը: Այնուհանդերձ,

⁵⁰ Նույն տեղում, էջ 267-268:

⁵¹ "Северный архив" Журнал, ч. 29, СПб., 1827, с. 93.

հայերի մասնակցությունն արտաքին առևտրին աստիճանաբար նվազում էր:

Ռուսաստանի արտաքին առևտրում աստրախանցի հայերի դերի նվազման հիմնական պատճառը նրանց իրավական արտոնյալ կարգավիճակի փոփոխումն էր: Հայերին ռուս հարկատու բնակչության հետ հավասարեցնելու փորձերը, ինչպես վերը նշեցինք, ձեռնարկվում էին տակավին 1785 թ. ի վեր: Հայերի (կամ նրանց զգալի մասի) մշտական դիմադրության շնորհիվ հաջողվում էր ինչ-որ ժամանակի ընթացքում պահպանել իրենց արտոնությունները, սակայն 19-րդ դ. կեսերին դրանք հիմնականում ի չիք դարձան: Արտաքին առևտրում հայերի դերի թուլացման մեկ այլ պատճառ էր արտաքին առևտրի մեջ Աստրախանի նշանակության անկումը:

Ավելի աշխույժ դարձավ հայերի մասնակցությունը ներուսաստանյան առևտրին, Նիժնի Նովգորոդի ամիսներ տևող ամենամյա տոնավաճառներին, որոնք վոլգյան առևտրի կարևոր մասն էին կազմում: Այդ տոնավաճառին, 1844 թ. տվյալներով, եղել են 14.420 եկվոր վաճառական, այդ թվում՝ ռուսներ 12. 311, հայեր՝ 1478, եվրոպացիներ՝ 420, պարսիկներ՝ 120, բուխարացիներ՝ 68, խիվացիներ՝ 15, տաշքենդցիներ՝ 8 մարդ⁵²: Այսպիսով, հայերը կազմում էին տոնավաճառի մասնակիցների ուղիղ 10%-ը՝ ամենաբազմամարդ ազգային խումբը ռուսներից հետո: Հայազգի առևտրականների հիմնական մասն Աստրախանի բնակիչներն էին:

19-րդ դ. 20-ական թվականներին Վոլգայի վրա հայտնվեցին առաջին շոգենավերը: Մինչև 1842 թ. Վոլգա գետով երթևեկող չորս շոգենավերից երկուսը պատկանում էին աստրախանաբնակ հայեր Հալաբովին և Յարալովին, ընդ որում, Յարալովի նավը մի ժամանակ համարվում էր վոլգյան շոգենավերից ամեն

⁵² Мельников П., Нижегородская ярмарка в 1843, 1844 и 1845 гг., Н. Новгород, 1846, с. 286.

նահզորը: 1859 թ. Վոլգայով արդեն լողում էին 34 շոգենավ, որից հինգը պատկանում էին աստրախանցի հայերին⁵³:

Այսպիսով, աստրախանաբնակ ձեռներեց հայերի առևտրական գործարքների ընդգրկումները խիստ ընդարձակ էին և կազմում էին ռուսաստանյան տնտեսական մեխանիզմի գործուն և լիարյուն տարրը:

19-րդ դ. հայերը մեծ դեր էին խաղում Աստրախանում արդյունաբերության և արհեստագործության զարգացման մեջ: 1832 թ. տվյալները վկայում են, որ հայերը կազմում էին աստրախանցի ֆաբրիկանտների և գործարանատերերի մեծամասնությունը: Նրանց էին պատկանում մետաքսի, օճառի և մոմի բոլոր ֆաբրիկաները, կաշվի գործարանների և ներկատների մեծ մասը: Հայկական դատարանի տվյալների համաձայն, 19-րդ դ. սկզբներին հայերը քաղաքում ունեին բամբակե գործվածքեղենի 52 ֆաբրիկա և 30 մետաքսագործական ֆաբրիկա: Այդ ժամանակ քաղաքում արդյունաբերության այս ճյուղն ամբողջապես հայերի ձեռքին էր: Ամենամեծն Օհան Իգնատոսյանի և Հարություն Փարսադանյանի ֆաբրիկաներն էին: Մետաքսե գործվածքեղենի ֆաբրիկաներից խոշորագույնն էին Գրիգոր Ջուրեքովի և Դավիթ Սողոմոնյանի ֆաբրիկաները⁵⁴:

Հայերը նկատելի դեր ունեին կաշվի արդյունաբերության մեջ, նրանք մասնագիտացել էին կաշվի արևելյան տեսակների ամենից առաջ սեկի մշակման մեջ: Այս ճյուղն էլ աստիճանաբար կորցնում է իր երբեմնի նշանակությունը Աստրախանում : 1804-1806 թթ. գործում էր կաշվի 15 գործարան: 1820 թ. դրանց թիվը ինն էր, իսկ հայերին էին պատկանում հինգը: Հայերին պատկանող գործարաններում արտադրվում էր կարմիր և սև սեկ: Խոշորագույնն էին Մակար Ավճալովի, Սահակ Փանոսովի, Հովսեփ Կուբաթովի ձեռնարկությունները:

⁵³ ՀԱԱ, ֆ. 387, ց. 1, գ. 350, թ. 1-3:

⁵⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 272:

19-րդ դ. հայերը նկատելի մասնակցություն ունեին Աստրախանի նաև ճարպահալ (մոմագործության), օճառի և ծխախոտի արդյունաբերության մեջ: Ի տարբերություն մանածագործության և արևելյան տեսակների մեջ մասնագիտացած նյուս ճյուղերի, այդ ճյուղերի աշխատանքը, թեև աչքի չէր ընկնում ձեռնարկությունների թվաքանակով, սակայն ավելի կայուն էր: Հայերին էր պատկանում ճարպամոմագործական ձեռնարկությունների կեսից ավելին և օճառի գործարանների մեծ մասը (դրանք ընդամենը երեք-չորսն էին): 1849 թ. Աստրախանում հիմնադրված ծխախոտի միակ գործարանի տերը հայազգի Արտեմ Բեգյարովն էր⁵⁵:

Ընդհանուր առմամբ հայերը 19-րդ դ. կեսին Աստրախանում պահպանեցին իրենց առաջատար կամ ազդեցիկ դերը արտադրության ավանդական ճյուղերում:

19-րդ դ. առաջին կեսին աստրախանաբնակ հայերի վարչաիրավական կարգավիճակը խարսխվում էր 1799թ. հոկտեմբերի 28-ին Պավել 1-ի շնորհած հրովարտակի վրա:

Որպես դատավարչական սեփական մարմին, հայերին թույլատրվում էր ունենալ իրենց դատարանները, որոնք բաղկացած էին ամեն տարի վերընտրվող երեք դատավորից և գրասենյակի հաստիքից, որը պահվում էր հայ հասարակության հաշվին: Հայկական դատարանն ուներ նաև վարչական պարտականություններ, այն է՝ զեմստվային պարիսկների գանձումը:

1831 թ. հունիսի 2-ին Նիկոլայ Առաջինը հաստատեց Մինիստրների Կոմիտեի Կանոնադրությունը, որի համաձայն, 1799 թ. հրովարտակով սահմանված արտոնությունները պահպանվում էին աստրախանաբնակ միայն 390 հայերի համար, որոնք տեղ էին գտել 1795 թ. մարդահամարում: Մնացյալ բոլոր հայերին առաջարկվեց կամ վեց ամսվա ընթացքում ընդունել մշտական ռուսաստանյան հպատակություն կամ էլ անցնել առևտրով զբաղվող օտարերկրացիների կարգավիճակին:

⁵⁵ Նույն տեղում, էջ 273-274:

Ռուսական քաղաքների հայ համայնքների բնակչության բազմաթիվ բողոքներն այս անգամ հանգեցրին հայերին համառուսաստանյան դասերին հավասարեցնելը սոսկ ժամանակավորապես (մինչև 1847 թ.) հետաձգելուն:

1831 թ. Կանոնադրության իրականացման ընթացքում դրվեց նաև Աստրախանի հայկական դատարանի վերացման հարցը: Չնայած տարիներ տևած համառ պայքարին՝ աստրախանաբնակ հայերին չհաջողվեց պահպանել իրենց ազգային դատավարչական մարմինը: 1840 թ. մարտի 27-ին հետևեց ցարի հրամանագիրը Սենատին, որով վերջնականապես վերացվում էր հայկական դատարանների գործունեությունը Աստրախանում, Ղզլարում և Մոզդոկում: Քաղաքաբնակ հայերն անցնում էին համառուսաստանյան պետական և դատական հաստատությունների վարչական ենթակայության տակ: Նրանց համար վերապահվում էր միայն ներքին գործերն իրենց կողմից ընտրված միջնորդների օգնությամբ քննարկելու իրավունքը:

Հետագայում աստրախանաբնակ հայերին, այնուամենայնիվ, հաջողվեց վերականգնել իրենց երբեմնի արտոնությունների ինչ-որ մասը: Դրանք վերականգնվեցին Պետական Խորհրդի որոշմամբ, որը հաստատվել էր ցարի կողմից 1848 թ. ապրիլի 5-ին⁵⁶:

Աստրախանաբնակ հայերի գործուն մասնակցությունը քաղաքի տնտեսական-հասարակական կյանքի տարբեր բնագավառներին պահանջում էր ունենալ պատշաճ կրթություն:

19-րդ դ. սկզբին հայկական ուսումնարան հիմնադրելու նախաձեռնությամբ հանդես եկավ խոշոր վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը (Աղաբաբովը): Իր վախճանված եղբայրներից ժառանգելով 30 հազար ռուբլի, որոնք այդ դրամը կտակել էին բաբեգործական նպատակների համար, Ն. Աղաբաբյանը դրան ավե-

⁵⁶ Նույն տեղում, էջ 274-276:

լացրեց ևս 20 հազար ռուբլի: 1804 թ. նոյեմբերին Աղաբաբյանը դիմեց ցարին՝ ուսումնարան բացելու խնդրանքով, շարադրելով նաև նրա ծրագիրը: Նպատակն էր ստեղծել արդիական դպրոց, որի ծրագիրը սերտորեն շաղկապված լիներ Աստրախանի հայ ազգաբնակչության առևտրական և ձեռնարկատիրական շրջանների գործնական խնդիրների հետ: Հատկացված 50 հազար ռուբլուց Ն. Աղաբաբյանը 46.250 ռուբլով գնեց քարաշեն իջևանատուն՝ նպատակ ունենալով ուսումնարանը մշտական եկամուտով ապահովելու համար իջևանատան շինությունները տալ վարձակալության: Աղաբաբյանը կառուցեց փայտաշեն հատուկ շենք բուն ուսումնարանի համար: Նա պարտավորվեց նաև իջևանատնից ստացվող եկամուտների հաշվին պահել չքավոր ընտանիքներից սերող 12 սան և նրանց օթևանելու համար քարաշեն հատուկ կողաշենք կառուցեց⁵⁷:

Ուսումնարանի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1810 թ. դեկտեմբերի 12-ին, սակայն ինքը՝ Ն. Աղաբաբյանը, դրանից մի քանի ամիս առաջ վախճանվել էր և ուսումնարանի վերակացու (տեսուչ) նշանակվեց նրա որդին՝ Հովհաննեսը: Հայերենի ավագ ուսուցիչ նշանակվեց հայտնի մանկավարժ Սերովբե Պատկանյանը: Աղաբաբյան դպրոցն ավարտեցին, իսկ հետո այնտեղ դասավանդեցին 19-րդ դ. հայ լուսավորական գործիչներ՝ Հարություն Ալամդարյանը և Գաբրիել Պատկանյանը:

Աշակերտների թվաքանակը տարբեր տարիներին տատանվում էր հիսունից հարյուր հիսունի միջև: Դպրոցում հիմնականում սովորում էին հայ ազգաբնակչության միջին խավերից սերող երեխաները: Դպրոցի ծրագիրը հաշվի էր առնում վարչատնտեսական այնպիսի կարևոր կենտրոնի գործնական պահանջմունքները, որպիսին էր Աստրախանը: Լեզուներից, պատմությունից և կրոնից բացի, դպրոցում դասավանդում էին տրա-

⁵⁷ Տե՛ս Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (18-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ), Երևան, 2006, էջ 19-21:

մաբանություն, ճարտասանություն, աշխարհագրություն, գծագրություն, նավագնացություն:

1821 թ. Հովհաննես Աղաբաբյանի մահից հետո ուսումնարանը նյութական լուրջ դժվարությունների հանդիպեց: 1822 թ. ուսումնարանը հանձնվեց պետական տնօրինության, թեև այն պահպանելու աղբյուրները մնում էին նախկինները, այսինքն՝ իջևանատան վարձակալությունից ստացված գումարները:

1830-ական թվականների կեսերին դպրոցի դրությունը որոշ չափով բարելավվեց: 1847 թ. հրդեհի հետևանքով այրվեցին ուսումնարանի շենքը և ուսուցիչների ու սաների բնակելի տունը: Պատվավոր բարեգործ Դ. Սերգեևը դպրոցի համար նոր շենք վարձակալեց, միաժամանակ հայ ազգաբնակչության շրջանում անցկացված հանգանակության շնորհիվ ժողովվեց 1300 ռ. ավելի⁵⁸:

Աղաբաբյան ուսումնարանում սովորում էր Աստրախանի հայ երեխաների մեծամասնությունը: Քաղաքում կային նաև այլ հայկական ուսումնական հաստատություններ:

19-րդ դ. Աստրախանում բացվել էին մի քանի մասնավոր դպրոցներ: Հատկապես հայտնի էին հայազգի Գ. Բախրովի, Ս. Մխիթարովի, Ս. Նիկիտինի (Սկրտչյանի) և այլոց դպրոցները: Տասնյակ հայազգի աշակերտներ սովորում էին Աստրախանի գիմնազիայում:

1789 թ. Խալդարյանի մահից հետո Հ. Արղությանի ջանքերով գնվեց Խալդարյանի տպարանը՝ որպես թեմի սեփականություն: Տպարանը սկզբում փոխադրվեց Նոր Նախիջևան, իսկ 1795 թ. վերջին՝ Աստրախան:

1796 թ. Աստրախանում տպագրվեց առաջին հայերեն գիրքը «Ատենաբանութիւնը»-ը, ապա «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» և «Էփիմերտեփ»:

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 52, ց. 5, գ. 39, թ. 2-23, գ. 58, թ. 34-36:

1800 թ. տպարանի գործնական ղեկավար Թադևոս վարդապետ Մարուկյանի մահից հետո տպարանի գործունեությունը դադարեց:

Նրա հիմնադրած աստրախանյան «Արևելյան ծանուցմունք» («Վոստոչնիե իզվեստիա») լրագիրը սկզբնապես (1813—1815 թթ.) լույս էր տեսնում միայն ռուսերեն լեզվով: Լրագրի նյութերում մեծ ուշադրություն էր հատկացվում այն թեմաներին, որոնք հետաքրքրում էին նաև Աստրախանում ապրող հայ և այլազգի մյուս բնակչությանը:

1816 թ. հունվարից սկսեց լույս տեսնել երկլեզու «Արևելյան ծանուցմունք» լրագիրը:

«Արևելյան ծանուցմունքը» հայերեն առաջին պարբերական հրատարակությունն էր Ռուսաստանում: Ընդամենը լույս է տեսել լրագրի 27 համար Վայսքիոֆենի մահից հետո լրագրի հրատարակությունը դադարեցվեց:

1818 թ. իր գործունեությունը վերսկսեց թեմին պատկանող հին տպարանը: Աստրախանում նորից սկսեցին հայերեն գրքեր տպագրել: Մոտավորապես քսան տարվա ընթացքում (մինչև 1837 թ.) լույս տեսան 11 հայերեն գիրք: Դրանք հիմնականում կամ ժամասացության գրքեր էին, կամ դասագրքեր⁵⁹:

1840 թ. հայկական դատարանի վերացումից հետո աստրախանցի հայերը գումարում էին հասարակության ժողովներ, որտեղ լուծում էին իրենց ներքին խնդիրները: Կատարվում էին, օրինակ, բանավոր դատարանի անդամների և այլ պաշտոնյա անձանց ընտրություններ:

Ընտրված ավագը մի քանի օգնականների հետ միասին ծառայում էր որպես միջնորդ հայ հասարակության և քաղաքային իշխանությունների միջև վարչական հարցեր լուծելիս: Այդ պաշտոնը պահպանվեց մինչև 1887 թվականը:

Հայկական համայնքի ազգային կյանքի նոր մոդելներ դարձան հասարակական կազմակերպությունները, ժխական (համայնքի) ժողովները, բարեգործական ընկերությունները, գրական խմբակները, ազգային-մշակութային ինքնավարության այլ ձևերը: Աստրախանի հայկական համայնքն ապրում էր ոչ միայն աշխույժ տնտեսական կյանքով, այլև իրեն մասնակից էր զգում այն ամենին, ինչ տեղի էր ունենում Աստրախան քաղաքում, ինչպես նաև հարազատ Հայաստանում և ողջ Ռուսաստանում:

Տակավին 1841 թ. Աստրախանի մի քանի վաճառականներ (Մկրտիչ Սուրաբեկյանը և ուրիշներ) հիմնադրեցին Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալների անվան բարեգործական ընկերությունը: Ընկերության նպատակն էր կրթություն ստանալու համար կարիքավոր երեխաներին օգնելը: Նվիրատվությունների բաշխումը և իրականացումը տնօրինում էր հայկական հոգևոր ուսումնարանների հոգաբարձությունը⁶⁰:

1875 թ. քաղաքում բացվեց 25 տեղանոց աղքատախնամ ապաստարանը: 1877թ. հունվարին սկսեց գործել արհեստագործական դպրոցը: Դպրոցին առընթեր կար 12 հոգու համար հանրակացարան, ուր տեղավորում էին առավել կարիքավոր աշակերտներին, որոնց ապահովում էին սննդով, հագուստով, ուսումնական ձեռնարկներով: Բացի ընդհանուր առարկաներից՝ հայերենից, ռուսերենից, թվաբանությունից և այլն, աշակերտներին ուսուցանում էին հյուսնություն և կոշկակարություն:

1891 թ. Աստրախանում կազմակերպվեց «Հայուհյաց» հոգաբարձական ընկերությունը: Ընկերության նպատակն էր Աստրախանում հայ կանանց կրթության գործին նպաստելը, իգական ուսումնարանին, առանձին չքավոր աշակերտուհիներին նյութապես սատարելը, կարուծևի, ձեռագործության, տնավարության դասավանդման կազմակերպումը: Ընկերության առաջին նախագահ ընտրվեց Մարիամ Էլդարյանը: Երկար տարիներ նախագահ է եղել նաև Ս. Մելիքենցյանը:

⁵⁹ Խաչատրյան Վ. Ա., Հայ տպագրությունը Աստրախանում, «Գիտություն և Տեխնիկա», 1988, N 1:

⁶⁰ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 283-284:

1898 թ. կազմակերպվեց կար ու ձկի հատուկ դպրոց, որտեղ միաժամանակ սովորում էին 20-25 աշակերտուհի:

Աստրախանի հայ հասարակայնության բարեգործությունը կատարվում էր ոչ միայն իրենց համայնքի կարիքները հոգալու, այլև մյուս քաղաքների հայ ազգաբնակչության կամ էլ բուն Հայաստանի օգտին: Այսպես, օրինակ, 1875 թ. Աստրախանում հանգանակվեց 1147 ռ. 65 կոպեկ՝ Արևմտյան Հայաստանում սովյալ հայրենակիցների կարիքները հոգալու, իսկ 1880 թ.՝ 1100 ռ. Վան քաղաքի կարիքավոր հայերին օգնելու համար: 1894 թ. ժողովեցին 2 հազար ռուբլի՝ Կարսի մարզի սովյալների օգտին: Այդ նույն նպատակներով կազմակերպվեցին բարեգործական ներկայացումներ, որոնցից մեկը՝ Աստրախանի ռուս բնակչության նախաձեռնությամբ: 1895 թ. հայ և ռուս բնակչությունը ժողովեց 3000 ռ. Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանությունից մազապուրծ դարձած փախստականների կարիքները հոգալու համար⁶¹:

Բարեգործական գործունեությանն ակտիվորեն մասնակցում էր հայ եկեղեցին, մասնավաճող, որ Աստրախանը թեմի կենտրոն էր: Բուն Աստրախանում կար չորս հայկական եկեղեցի, որոնք հիմնադրվել էին տակավին 18-րդ դարում՝ Աստվածածնի վերափոխման մայր տաճարը, Պողոս և Պետրոս առաքյալների տաճարը, Կատարինե նահատակի եկեղեցին և գերեզմանատան սուրբ Հարության եկեղեցին: 1841 թ. հիմնադրվեց ևս մեկ՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին: Եկեղեցիներն ունեին զգալի եկամուտ: 1900 թ., օրինակ, դրանք կազմում էին 158.316 ռուբլի⁶²: Եկեղեցիներն ունեին նաև զգալի անշարժ գույք՝ շենքեր, հողամասեր, ինչպես նաև կապալով տրվող կրպակներ:

1874 թ. հիմնադրվեց Աստրախանի չքավոր հայերի եկեղեցական հատուկ հոգաբարձություն, որը պարտավոր էր հոգալ

Աստրախանում հայկական ծխական դպրոցների, անկելանոցների, չքավորներին նպաստներ տալու մասին:

1912 թ. աստրախանաբնակ հայերի եկեղեցական հոգաբարձության հիմնադրանքը կազմում էր 470 հազար ռուբլի:

1917 թ. Աստրախանի հայերի հոգաբարձական խորհուրդը որոշեց Աղաբաբյան ուսումնարանը վերափոխել Աստրախանի Աղաբաբյան հայկական գիմնազիայի: Երեք ամիս անց գիմնազիայի կանոնադրությունը հաստատվեց ժամանակավոր կառավարության կողմից:

Գիմնազիայի ծրագիրը համապատասխանում էր դասական գիմնազիայի ծրագրին՝ հայոց լեզվի և գրականության, հայոց հավատի, հայոց պատմության, մշակույթի դասավանդման ավելացմամբ: Այս բոլոր առարկաները դասավանդվում էին հայերեն: Խորհրդային իշխանություն հաստատումից հետո գիմնազիան 1918 թ. վերածվեց խորհրդային դպրոցի և մեկուկես-երկու տասնամյակի ընթացքում հայ աշակերտների համար պահպանվեց հայոց լեզվի և գրականության դասավանդումը:

19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Աստրախանում դրվեց հայկական տպարան և սեփական պարբերական օրգան ստեղծելու անհրաժեշտության հարցը:

1908 թ. ապրիլի 27-ին լույս տեսավ աստրախանահայոց «Լրաբեր» թերթի առաջին համարը: Թերթում հրապարակվում էին նյութեր տեղի հայկական համայնքի կյանքից, Հայաստանից և մյուս հայկական համայնքներից, կատարվում էին թարգմանություններ ռուսական լրագրերից:

1910 թ. հոկտեմբերին Աստրախանում լույս տեսավ «Մեր կյանքը» լրագրի առաջին համարը, որի էջերում մեծ տեղ էր հատկացվում հայկական մշակութային կյանքի իրադարձություններին:

Խորհրդային ժամանակաշրջանում, 1919 թ. Աստրախանում լույս էր տեսնում «Կարմիր բանվոր» լրագիրը՝ ՌԿԿ(բ) տեղի կոմիտեի հայկական բաժանմունքի օրգանը: Լրագրի խմբագիր-

⁶¹ Նույն տեղում, էջ 285-286:

⁶² Մշակ, 1902, N 239:

ներն էին հայ հայտնի բուշկիկներ Աշոտ Խումարյանը և Հայկ Գյուլիքևսյանը: Լույս ընծայվեց ընդամենը 20 համար:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսված Աստրախանի հայկական գաղութի ազգային մշակույթը բնորոշվում է նաև թատերական կյանքի զարգացմամբ:

19-րդ դ. կեսերից կազմակերպվում էին նաև հայկական սիրողական թատերական խմբակներ: Աստրախանում հայկական պրոֆեսիոնալ թատրոնի սկզբնավորումը կապված է նշանավոր հայ դերասան Թովմաս Ֆասուլյաճյանի անվան հետ 1868թ.:

Աստրախանի հայերի ազգային կյանքում վառ իրադարձություն էին 1884 թ. ամռանը քաղաքում հայ մեծ ողբերգակ Պետրոս Ադամյանի հյուրախաղերը: Հետագայում Աստրախան հյուրախաղերի ժամանեցին Սիրանուշը, Վրույրը, Հովհաննես Աբելյանը և հայկական բեմի մյուս ականավոր վարպետները:

Հայկական համայնքը հարուստ էր երաժշտական տաղանդներով ևն: Առավել մեծ հռչակ նվաճեցին Պետերբուրգի և Փարիզի օպերաների մենակատարուհի Նադեժդա Պապայանը և Հայաստանի ժողովրդական դերասան Ալեքսանդր Կարատովը (Կառապետովը):

Հայկական համայնքի մշակութային կյանքի կարևոր դրսևորումներից էր 1908 թ. գրական-գեղարվեստական ընկերության ստեղծումը: 1908-1914թթ. ընթացքում ընկերությունը կազմակերպեց Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Պ. Պռոշյանին, Րաֆֆուն, Գ. Սունդուկյանին և Ա. Շիրվանզադեին նվիրված հորեյանական և թեմատիկ երեկոներ:

Տակավին 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին հայտնի էին աստրախանցի Խաստատովի, Դեյանովի, Ախշարունովի անունները, որոնք ռուսական բանակում զինվորական լուրջ աստիճան էին նվաճել: Գեներալ Դ. Ա. Դեյանովի որդին Իվան Դավթի Դեյանովը 1880-ական թվականներին զբաղեցրեց Ռուսաստանի ժողովրդական կրթության մինիստրի պաշտոնը: Գեներալ Ախշարունովի որդին Դմիտրի Դմիտրևիչ Ախշարունովը, որը հայտնի դար-

ծավ որպես պետրուշևականների հեղափոխական խմբակի անդամ, նշանավոր բժիշկ էր, իսկ նրա եղբայր Նիկողայոսը (Նիկոլայը) ճանաչված գրող էր:

1883-1889 թթ. Աստրախանում ապրեց Ն. Գ. Չեռնիշևսկին: Հասարակական բարձր գիտակցության և պարզապես մարդկայնության դրսևորում էին աստրախանաբնակ հայերից շատերի բարեկամական, ընկերական և վստահություն ներշնչող ամենաբարձրագույններն աքսորյալ Ն. Գ. Չեռնիշևսկու հետ:

Շնորհիվ Աստրախանի հայազգի բնակչության տնտեսական և քաղաքական ակտիվության, տեղի հայկական գաղութն իր բազմադարյան գոյության ընթացքում պատկանելի դեր խաղաց ինչպես քաղաքի ու երկրամասի, այնպես էլ հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կյանքում:

ԳԼՈՒԽ 3. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ⁶³

Հայերը Մերձկասպյան տարբեր շրջաններում բնակվում էին 18-րդ դարի սկզբներից, բայց, երբ կառուցվեց Ղզլարը հայերը փոխադրվում են նորակառույց այս ամրոցը: Ղզլարը, բնակեցման առաջին տարում, 1735-1736 թթ. ունեցել է շուրջ 400 հայ բնակչություն:

1775 թվականի «Աստրախանի նահանգի ցուցակում» նշվում են Ղզլարում բնակվող 1.222 հայեր (63,5%) և 470 վրացիներ (24,4%), այն դեպքում, երբ քաղաքն ուներ ընդամենը 1.924 բնակչություն: Ընդ որում, ներկայացվում էր միայն հարկատու բնակչությունը և, բնականաբար, մեծ թվով հայեր դուրս էին մնացել ցուցակից:

18-րդ դարի 70-ական թվականներին Ղզլար ժամանած Գիլդենշտեդը բավական ուշագրավ տեղեկություններ է թողել Ղզլա-

⁶³ Այս գաղթավայրերի մասին տես Լ. Պողոսյանի աշխատությունները և «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռաշաբաթյակի I հատորը (էջ 346-389):

րի և ղզլարահայերի մասին: Քաղաքի թաղամասերից առաջինը նա հիշատակում է «Չայկական»-ը, որն, ըստ երևույթին, եղել է ամենից շատ բնակեցվածը: Ղզլարի հնագույն շինություններից էր հայկական փայտաշեն եկեղեցին, որը կառուցվել էր 1754 թ՝ ավելի ուշ, քան ռուսականն ու վրացականը: Տարիներ անց, հայ համայնքի թվաքանակի մեծացման հետ պահանջ է զգացվել ունենալ նաև երկրորդ եկեղեցին, որը կառուցվել է 1772 թ.⁶⁴:

1763 թ. հիմնադրված Մոզդոկում բնակվողներին կառավարությունը տալիս էր մեծ արտոնություններ: Եվ պատահական չէր, որ Մոզդոկի առաջին բնակիչները դարձան Ղզլարից գաղթած հայ երկրագործները, արհեստավորներն ու առևտրականները:

Կովկասահայերի անընդհատ ներհոսքի հետևանքով, 1760-ական թվականների վերջերին Մոզդոկն արդեն ուներ 300 և ավելի հայ բնակչություն: Մոզդոկի հիմնադրումից հետո քաղաքը նոր գաղթականներով, հատկապես հայ վաճառականներով համալրելու, նրանց սիրաշահելու և շահագրգռելու քաղաքականությունն եղել է կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում: 1767թ. դեկտեմբերի 31-ին Ղզլարի պարետին ուղղված Արտաքին գործերի պետական կոլեգիայի հրամանում հատկապես ընդգծվում էր նորաբնակների արտոնյալ գոյավիճակի ապահովումը՝ անմաքս առևտուր, վարելահողերի, արոտավայրերի և այգիների՝ ըստ ազգությունների հատկացում, ժողովրդական սովորույթներով առաջնորդվող ազգային դատարանների հաստատում և այլն:

Այսպիսով, 18-րդ դարի 60-ական թվականների կեսերից ևս մեկ հայկական համահավաք գաղթօջախ է ձևավորվում Թերեքի ավազանի երկրորդ խոշոր բնակավայրում՝ Մոզդոկում:

18-դարի երկրորդ կեսին Մոզդոկը, ըստ նրանում բնակություն հաստատած ժողովուրդների, բաժանված էր 3 թաղամասերի՝ հայկական, վրացական և օսական: Առավել բնակեցվածը

հայկական թաղամասն էր: Այստեղ 1778թ. կառուցվել է հայկական առաջին եկեղեցին, իսկ մեկ տարի անց հայ բնակչության թվի մեծացման հետևանքով, անհրաժեշտ է դառնում կառուցելու նաև երկրորդ եկեղեցին⁶⁵:

Թե՛ Մոզդոկում և թե՛ Ղզլարում հայ բնակչության թվաքանակի աճի ընդհանուր գործընթացը ոչ միայն չի ընդհատվել, այլև հետագա զարգացում է ապրել: Այն իրականացվել է 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին՝ Չայաստանից, Իրանի հայաշատ շրջաններից, ինչպես նաև Դերբենդից և շրջակա հայկական գյուղերից հայերի զանգվածային նոր գաղթի և Չյուսիսային Կովկասում վերաբնակվելու հետևանքով:

Ուշագրավ են ռուսահայերի հոգևոր առաջնորդ Զ. Արղուբյանի փաստարկները՝ հայ գաղթականներին Ռուսաստանում բնակեցնելու և նրանց տնտեսական վիճակը բարելավելու կապակցությամբ: Առաջին հերթին նա շեշտը դնում էր հարցի քաղաքական կողմի վրա՝ ընդգծելով այն հանգամանքը, որ Ռուսաստանում բնակվող հայերի վիճակի բարելավումը կնպաստի նրան, որ հայ հայրենակիցներից շատերը ցանկություն կհայտնեն հարևան երկրներից տեղափոխվել և բնակվել Ռուսաստանում: Նույն փաստարկներն էին ընդգծում իրենց խնդրագրերում նաև իրանահայ գաղթականները: Նորեկ ռուսահայ հպատակների համար նույնատիպ արտոնությունների սահմանումը, ինչպիսիք արդեն ունեին Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները, գրում էին դերբենդահայերն իրենց խնդրագրերից մեկում, կնպաստի, որ ոչ միայն հայերը, այլև քրիստոնյա այլ ազգեր հարևան ասիական երկրներից գաղթեն Ռուսաստան:

Ռուսական կառավարող շրջաններն, առաջին հերթին նկատի ունենալով տերության շահերը և լավագույնս պատկերացնելով երկրամասի բնակեցման և տնտեսական յուրացման հեռանկարներն, ընդառաջ գնացին նորեկ հայ գաղթականներին: Շուտով 1799 թ. ապրիլի 15-ին հետևում է Պավել 1-ինի հրամանը

⁶⁴ Չայ գաղթաշխարհի պատմություն, էջ 351-352:

⁶⁵ Նույն տեղում, էջ 353-354:

կառավարող Սենատին՝ նախատեսված հողատարածության կրկնապատիկը հայ գաղթականներին հատկացնելու և բնակարանների կառուցման համար անհրաժեշտ փայտանյութ տրամադրելու մասին, իսկ նրանց, ովքեր կցանկանային բնակվել քաղաքում, թույլատրվում էր Հին Մաջառ կոչված վայրում հիմնել քաղաք և վերանվանել Սուրբ Խաչ: Կրոնի, դատավարության, առևտրի և այլ հարցերում նրանց շնորհվում էին նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները⁶⁶:

19-րդ դարի երկրորդ կեսին Սուրբ Խաչը Պյատիգորսկի օկրուգի հայաշատ քաղաքներից մեկն էր՝ հայկական եկեղեցիներով, հարուստ տոնավաճառներով և ծաղկուն այգիներով: Քաղաքի հայ բնակչությունը հետագայում ևս համալրվեց Դաղստանից, Անդրկովկասից և Իրանից վերաբնակվողների շնորհիվ: Դարի 70-ական թվականների կեսերից նաև ռուս բնակչություն է փոխադրվում Սուրբ Խաչ՝ Ռյազանի, Վորոնեժի և Ստավրոպոլի նահանգներից⁶⁷:

1907 թ. Սուրբ Խաչ քաղաքում կար հայերին պատկանող 369 տուն և 1.962 երկսեռ հայ բնակչություն⁶⁸:

19-րդ դարի 30-ական թվականներին չերքեզահայերը Հյուսիսային Կովկասում հիմնադրեցին Արմավիրի հայկական գաղթօջախը, ևս մեկ հայաբնակ քաղաք երկրամասում, որին վիճակված էր զգալի դեր խաղալ թե Կովկասի տնտեսական կյանքում և թե հայ-ռուսական հարաբերություններում:

Ղզլարից ու Մոզդոկից գատ նորաստեղծ վարչատնտեսական կենտրոնները՝ Եկատերինոդարը, Ստավրոպոլը, Վլադիկավկազը և մյուսները նույնպես տնտեսական գործունեության լայն հեռանկարներ էին խոստանում հայ վաճառականներին: Պատահական չէ, որ վերոհիշյալ քաղաքների առաջին բնակիչների

⁶⁶ Նույն տեղում, էջ 353:

⁶⁷ Стен, Ставропольская губерния в статистическом, географическом, историческом, сельскохозяйственном отношении, Ставрополь, 1987.

⁶⁸ ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 5500, ք. 2-35:

թվում էին նաև հայ վաճառականները, որոնց մի մասը ժամանակավոր, իսկ շատերն արդեն մշտական բնակություն էին հաստատել:

Կուբանի մարզի Մայկոպ քաղաքում հայկական գաղթօջախ է ձևավորվում 19-րդ դարի 60-ական թվականներին: Շահութաբեր առևտրից, ինչպես նաև Մայկոպի շրջակա ազատ և բարեբեր հողերից օգտվելու ձգտումով հայեր են վերաբնակվել այստեղ Նոր Նախիջևանից, Երևանից, Թիֆլիսից, Նախիջևանից, Կովկասի գանազան քաղաքներից և Արևմտյան Հայաստանից: Դարի 80-ական թվականներին Մայկոպն ուներ 50 տուն հայ բնակչություն, որոնք մեծ մասամբ վաճառականությամբ էին զբաղվում⁶⁹:

1777 թ. Ստավրոպոլի բերդի կառուցումից հետո հայ բնակչության առանձին հատվածներ սկսում են վերաբնակվել այստեղ: Առաջին վերաբնակիչների թվում կրկին առանձնանում էին նորնախիջևանցի հայ վաճառականներն ու երկրագործները, որոնք աչքի առաջ ունեին ապագա առևտրաշահ քաղաքի հնարավորություններն ու շրջակա բարեբեր հողերի առկայությունը: 19-րդ դարի առաջին տասնամյակների վավերագրերն արդեն նշում են Ստավրոպոլում հայ համայնքի գոյության, հայկական աղոթատան և նրանում հայ քահանայի ներկայության փաստը:

Վլադիկավկազի նորակառույց բերդաքաղաքը ևս հանգրվանեց հայ գաղթականներ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ տարբեր շրջաններից: Կարճ ժամանակում այստեղ ձևավորվեց փոքրիկ, բայց համահավաք հայկական գաղթօջախ, որը 19-րդ դարի 30-ական թվականների կեսերին ուներ իր եկեղեցին⁷⁰:

19-րդ դարի առաջին կեսում հայկական փոքրիկ գաղթօջախ ձևավորվեց նաև Թերեքի մարզի Գրոզնի ամրոցում, որտեղ հայերը սկսել են բնակվել հիմնադրման առաջին իսկ օրից: Նրանք հիմնականում Գրոզնիում տեղակայված զինվորական գնդերի հայազգի զինծառայողներն էին, ինչպես նաև վաճառա-

⁶⁹ «Նոր դար», 1888, հ. 169, էջ 2-3:

⁷⁰ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 88, վավ. 169:

կաններ: 19-րդ դարի 40-ական թվականների վերջին Գրոզնի ամրոցում արդեն հաստատվել էր փոքրիկ հայ համայնք: Հետագայում Գրոզնու հայերի թիվը զգալիորեն աճեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր շրջաններից հայերի վերաբնակեցման հետևանքով:

Գեորգիևսկը և Կովկասյան գծի մյուս բերդաքաղաքների հարուստ տոնավաճառները շուտով դառնում են հայ վաճառականների կենտրոնացման կարևոր հենակետը: Կովկասի առաջին փոխարքա Պ. Պոտյոմկինի օրոք Նոր Նախիջևանից Գեորգիևսկ են հրավիրվում հայ վաճառականներ, որոնք, կապ հաստատելով չերքեզահայ վաճառականների հետ, աշխույժ առևտուր են սկսում լեռնականների հետ: 1783 թ. Գեորգիևսկում արդեն կար հայկական գաղութ, ուր հայերն ունեին իրենց առևտրական խանութաշարքը:

19-րդ դարի կեսերին զգալի թվով չերքեզահայեր Անդրկուբանից, իսկ հետագայում նաև Արմավիրից փոխադրվում են Պյատիգորսկ: 19-րդ դարի 90-ական թվականներին Պյատիգորսկում կար ձևավորված հայ գաղթօջախ՝ բաղկացած 90 տուն հայերից, որոնց մեծ մասը վաճառականներ էին, իսկ մնացածը՝ արհեստավորներ⁷¹:

19-րդ դարի կեսերից դեպի Դերբենդ հայ գաղթականության նկատելի հոսք է սկսվում Ղզլարից, Աստրախանից, Ղարաբաղից, Շամախուց, Թիֆլիսից, Իրանի հայաշատ տարբեր շրջաններից:

Ռուսական կառավարությունը փաստորեն կազմակերպեց հայերի վերաբնակեցում Թերեքի ավազան՝ ունենալով քաղաքական ու տնտեսական որոշակի շահախնդրություններ:

Մեծամեծ խոստումների և սիրաշահելու միջոցով գաղթը իրականացնելիս ռուսական իշխանությունները, անշուշտ, հետամուտ էին նաև տերության ռազմաքաղաքական շահերին:

Հայ գաղթականներին Ռուսաստանի հովանու տակ ներգրավելն ու արտոնություններով ապահովելը բոլոր ժամանակներ

⁷¹ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 359-360:

րի համար էլ եղել է կարևոր քաղաքական և դիվանագիտական քայլ: Կովկասը վերջնականապես նվաճելու, իսկ այնուհետև Անդրկովկաս ներթափանցելու ձգտումով տարված Ռուսաստանը կովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ համակիրներ և աջակիցներ գտնելու նպատակ ուներ: Խոստումներով և զիջումներով սիրաշահվում էր մի ամբողջ ժողովուրդ, որը, Ռուսաստանի հետ էր կապում օտարի լծից ազատագրվելու հույսը: 18-րդ դարի վերջին Ղուկաս կաթողիկոսը Արղությանի միջոցով շնորհավորական նամակ հղեց Պավել 1-ին կայսերական գահին բազմելու կապակցությամբ և հայերի արտոնությունները պահպանելու ու շարունակելու խնդրանքով: Պատահական չէ, որ կայսրը չհապաղեց հայոց կաթողիկոսին ուղարկել 1799 թ. հոկտեմբերի 28-ի իր բարձրագույն հրովարտակը:

Նոր հրովարտակն Աստրախանի հետ միասին տարածվում էր նաև Ղզլարի ու Մոզդուկի հայ համայնքների վրա, պաշտոնապես հաստատելով նախկինում նրանց համար խոստացված, բայց մասամբ միայն իրագործված արտոնությունները:

Բարձրագույն թույլտվությամբ Աստրախանում, Ղզլարում և Մոզդուկում բնակվող հայերը համարվում էին կայսրության ժամանակավոր հպատակներ: Հրամայվում էր, ազգային սովորույթների և իրավական նորմերի համաձայն դատ ու դատաստան վարել Աստրախանում հիմնված Ասիական ընդհանուր դատարանի սկզբունքով և հայ համայնքից ընտրված անդամների միջոցով: Հայ վաճառականներն ազատվում էին ռուսական վաճառականական գիղիաներում գրանցվելուց: Մետաքսամշակությամբ զբաղվող հայերը և նրանց տներն ազատվում էին զորքին օթանելու պարտականությունից, քանի դեռ նրանք զբաղվելու էին արդյունագործության այդ ճյուղով: Փոխարենը նախատեսվում էր դրամ գանձել նրանցից և հատուկ օթևաններ վարձել զորքի համար: Հրովարտակը Ղզլարի հայերին իրավունք էր վերապահում հողատուրք վճարելու պայմանով վարձակալել Ղզլարի շուրջ գտնվող հողերը:

Նույն պայմանով թույլատրվում էր օգտվել նաև ձկնորսական վայրերից: Աստրախանի, Ղզլարի և Մոզդոկի հայերին թույլատրվում էր կատարել ազատ և անմաքս առևտուր՝ թույլատրված բոլոր ապրանքներով և սեփական մանուֆակտուրային արտադրանքով ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այս վերջին դեպքում հարկ էր վճարել առևտրական կանոնադրությամբ նախատեսված մաքսը: Խրախուսվում էր զարգացնել ամեն տեսակի արդյունագործություն և արդյունաբերություն՝ սեփական ցանկություններին և ունակություններին համապատասխան: Ընդհանուր սկզբունքներով և հիմնական հարցերում արտոնագիրը արտահայտում էր Մոզդոկի և Ղզլարի հայ համայնքների շահերը:

Արտոնագիրը տնտեսական զարգացման ազատ ուղի էր հարթում տակավին 18-րդ դարի վերջերից համայնքների ներսում ձևավորվող առևտրաարդյունաբերական շերտերի համար և որոշակիորեն պաշտպանում էր նրանց շահերը: Արտոնագիրը չամտեսեց նաև հայ հոգևորականությանը՝ վերջինիս համար ապահովելով արտոնյալ վիճակ՝ ընծեռելով նրանց լայն հնարավորություններ և իրավունքներ: Կայսերական հրովարտակը հայոց կաթողիկոսին ճանաչում էր Ռուսաստանում բնակվող հայերի հոգևոր պետ, իսկ նրա ներկայացուցիչ Յովսեփ Արղությանին թույլատրում էր վանքեր ու եկեղեցիներ կառուցել, Աստրախանում ունենալ հայոց հոգևոր կոնսիստորիա և ազատորեն դավանել հայոց կրոնը:

Կայսերական հրովարտակում տեղ գտած արտոնությունների հիման վրա և դրանց շրջանակներում ձևավորվեց Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերի ինքնավարությունը: Ընդհուպ մինչև 19-րդ դարի սկիզբը, այսինքն, մինչև հայկական դատարանների հիմնումը Ղզլարում և Մոզդոկում, հայ համայնքների ներսում դատ ու դատաստանն իրականացվել են համայնքի ավագի կամ ծերերի կողմից, որոնք բանավոր, վիճող կողմերին համոզելու եղանակով հաշտեցրել են նրանց և համապատաս-

խան որոշում կայացրել: Հայ համայնքների գույքային, մուրհակային և այլ հարցերը քննվել են Աստրախանի հայկական-ասիական դատարանում, իսկ քրեական գործերը՝ 1793 թ. Մոզդոկում բացված վերին սահմանապահ դատարանում, որի կազմում ընդգրկված էին նաև հայ և վրաց համայնքներից 2-ական անդամներ. 1802 թվականից վերջինները մտան զավառային դատարանի կազմ:

1799 թ. կայսերական արտոնագրի թույլտվությամբ 1800 թ. Ղզլարում և Մոզդոկում միաժամանակ հիմնվում են հայկական դատարաններ, որոնք 19-րդ դարի սկզբների վավերագրերի մի մասում հիշատակվում են նաև որպես ռատիաուզներ⁷²:

Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայկական դատարանները՝ ազգային սովորույթների և ավանդույթների վրա խարսխված ու դրանց օգնությամբ դատ ու դատաստանը իրականացնելու հատկանիշներն էին, որ բնորոշեցին համայնքների ազգային պատկերը, ընդօժեցին նրանց ինքնուրույն գոյությունը:

Ղզլարի, Մոզդոկի, ինչպես նաև Աստրախանի հայկական դատարանները գործեցին մինչև 1841 թվականը, ի տարբերություն Նոր Նախիջևանի հայկական դատարանի, որը պահպանվեց ընդհուպ մինչև դարի 60-ական թվականների վերջերը: Անկասկած, առաջինների համար հաշվի են առնվել նաև այն հանգամանքը, որ նրանք ոչ թե միատարր հայաբնակ քաղաքներ են, ինչպես օրինակ, Նոր Նախիջևանը, այլ բազմազգ, տարալեզու և տարբեր կրոն դավանող ժողովուրդների բնակավայրեր: Դրանց համար համընդհանուր կառավարման մարմինների և օրենքների հաստատումն անհրաժեշտ էր և հրատապ:

Աշխարհիկ դատարանից բացի, Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերում գործել են նաև համայնքների հոգևոր կառավարչությունները: Հոգևոր կառավարչությունը տնօրինել է հայ համայնքի հոգևոր կյանքի զանազան հարցերը, սահմանել եկեղեցու աստիճանավորների պարտականությունները և իրավա-

⁷² Նույն տեղում, էջ 363-365:

տության շրջանակները, համայնքից գանձվող հասույթների չափը և տնօրինման եղանակները: Հոգևոր կառավարչության միջոցով իրականացվել է կապը էջմիածնի Մայր աթոռի հետ:

Ձևավորվելով օտար միջավայրում Հյուսիսային Կովկասի հայ համայնքները ոչ միայն չծուլվեցին օտարազգ և տարալեզու այդ խառնարանում, այլ ազգային սովորույթների և բարքերի անխոնջ հետևողականությամբ պահպանեցին ազգի դիմապատկերը: Այդ ամենը հայկական գաղթավայրերի ինքնավար գոյությունը ապահովող վճռորոշ լծակն էր, իսկ առանձնաշնորհումների համար հարատև պայքարն ուղղված էր համայնքների ինքնուրույնությունը և անկախությունը պահպանելուն: Առանձին համայնքներով հաստատվելու հանգամանքը հայ համայնքներին ձերբազատում էր դրսի օտարամուտ միջամտություններից:

Եկեղեցու, դպրոցի, ազգային և հասարակական զանազան կազմակերպությունների շուրջը համախմբված կովկասահայերը հետագայում ևս կարողացան պահպանել ազգային ինքնատիպությունը, կենցաղավարության, վարք ու բարքի և նիստուկացի մեջ վաղեմի սովորույթներով առաջնորդվելու ձգտումը:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները տնտեսական ուրույն զարգացում ապրեցին: Ղզլարը հիմնադրվել էր շատ սահմանափակ հողատարածքի վրա: Բերդավանի մոտակա հարևանները կազակական ստանիցաներն էին, որոնց բնակիչները, ծանրաբեռնված զինվորական ծառայությամբ, մասամբ նաև զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Նման պայմաններում հայ վերաբնակիչները ստիպված էին ինքնուրույն սկսելու իրենց տնտեսական կյանքը: Երկրագործության համար բավարար և անհրաժեշտ հողերի բացակայությունը զգալիորեն սահմանափակեց դաշտավարության հացահատիկային կուլտուրաների մշակության հնարավորությունը: Այդուհանդերձ, Ղզլարի հայ զանգվածը, բնակչության առաջնահերթ պահանջները բավարարելու նպատակով, թեև սուղ պայմաններում, բայց ձեռնամուխ եղավ նաև հացահատիկային կուլ-

տուրաների մշակությանը: Ղզլարի շրջակայքում աճեցվող հացահատիկը մասամբ էր միայն բավարարում բնակչության պահանջները, իսկ պահանջարկի մնացած մասը ձեռք էր բերվում Մոզդոկի շրջանից:

Առաջին պլան էր մղված եկամտաբեր և մեծ պահանջարկ ունեցող կուլտուրաների՝ բրնձի, խաղողի, բամբակի, քունջութի, տորոնի մշակումը, մանավանդ որ դրանց անհրաժեշտությունը նախատեսվել էր նաև կառավարության կողմից:

Անասնապահությունը տարածում չստացավ, ղզլարահայերը բավարարվել են հարևան կիսաքոչվոր նողայներից գնված անասուններով և անասնապահական մթերքներով:

Դաշտավարության համար անհարմար բնահողի առկայությունը Մոզդոկի շրջակայքում, անկախ հայ երկրագործների գործադրած ջանքերից, ցանկալի արդյունքի հասցնել չէր կարող: Այդ իսկ նկատառումներով, մոզդոկաբնակ հայերը գերադասեցին ագարակներ հիմնել քաղաքից դուրս, առավել ընդարձակ և նպաստավոր հողատարածքում:

Գյուղատնտեսական կուլտուրաների մշակությամբ առավելապես զբաղվում էր երկրամասի գյուղական վայրերի հայ բնակչությունը: Այսպես, եթե Ղզլարին շրջակա 3 հայկական գյուղերի բնակչությունը, տեղական բնակլիմայական պայմաններից ելնելով, պարապում էր հիմնականում այգեգործությամբ և խաղողագործությամբ, ապա Մոզդոկի մոտ գտնվող Կասակ-Յամա հայաբնակ գյուղի բնակչությունը, հարմարավետ հողատարածքի պայմաններում՝ նաև դաշտավարությամբ և անասնապահությամբ: Հայերը զբաղվում էին նաև այգեգործությամբ և բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Աճեցնում էին նաև խաղող: Ունեին թթնու այգիներ, զբաղվում էին մետաքսի մշակությամբ, իսկ արտադրանքը, տեղում սպառելուց բացի, վաճառքի էին հանում: Նդեսիաբնակ հայերի մի մասը, հատկապես ագարակ ունեցողները, զբաղվում էին նաև անասնապահությամբ:

18-րդ դարի կեսերից ղզլարահայերը զբաղվում էին նաև բունջուրի, բամբակի, տորոնի, իսկ ավելի ուշ՝ նաև դեղնաներկի և կապարի մշակությամբ, որոնք եկամտաբեր էին և լայն պահանջարկ ունեին ռուսական շուկաներում: Քունջուրի և բամբակի մշակությունը Ղզլարի շրջանում շարունակվեց մինչև 19-րդ դարի 30-ական թվականների կեսերը, բայց հետագայում, գրեթե լիովին, անտեսվեց հայ երկրագործների կողմից⁷³:

Ամբողջ Կուբանի մարզում և մասնավորապես Արմավիրում արդյունաբերության զարգացման առանձնահատուկ կողմն էր գյուղատնտեսական հումքի վերամշակությունը: Հենց դրանով էլ բացատրվում էր ալրաղացային, օճառի, յուղի ու ձեթի արտադրության ֆաբրիկաների և գործարանների լայն զարգացումը: Արմավիրում ձիթիան ձեռնարկություններ ունեին Հակոբ Պոպովը, Հախվերդը, Բաբաևը, Բարանովը և այլ հայեր: Արևածաղկի ձեթի արտադրությամբ Արմավիրը 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբներին դարձել էր ամբողջ Հյուսիսային Կովկասի հիմնական կենտրոններից մեկը:

1875 թ. Հովհաննես Տարասովը Արմավիրում և ամբողջ Կուբանի մարզում բացում է առաջին բամբակագտիչ գործարանը: 1913 թ. Արմավիրում արդեն գործում էին չորս նմանատիպ ձեռնարկություններ:

1841 թ. Արմավիրում բացվում են մի շարք խանութներ, որոնք վաճառում էին Ստավրոպոլից և Թիֆլիսից ներմուծված ապրանքներ: 1842 թ. սկսած Արմավիրում գործում էր ամենամյա տոնավաճառ: 19-րդ դարի երկրորդ կեսից կապիտալիզմի զարգացմանը համընթաց տոնավաճառային առևտուրն իր տեղը աստիճանաբար սկսում է զիջել մշտական առևտրին⁷⁴:

Արևելյան Կովկասում առաջինը հայերը նախածեռնեցին շաքարեղեգնի մշակումը: 1835 թ. ղզլարահայ Ե. Մանվելովը Լենքորանից Ղզլար փոխադրեց և աճեցրեց շաքարեղեգնի արմատներ:

Որոշակի էր հայերի ներդրումն երկրամասում այգեգործության, բանջարաբուստանային կուլտուրաների մշակության գործում: 18-րդ դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարին շրջակա այգիներում նրանք աճեցնում էին հիմնականում խաղող, ինչպես նաև խնձորենի, ծիրանենի, սալորենի, տանձենի, բալենի, թթենի: Բանջարանոցներում և բուստաններում մշակում էին սեխ, ձմերուկ, զանազան կանաչիներ, լոբի, բադրիջան, վարունգ և այլն, որոնց մի մասն անծանոթ էր եկվոր ռուս երկրագործներին: Բանջարանոցներ ուներ ղզլարահայերի մեծ մասը: Տնամերձ հողակտորներից ստացված բանջարեղենը հիմնականում սպառվում էր տեղում:

Յուրահատուկ նշանակություն ուներ խաղողագործությունը: Թերեքի ավազանում այդ նոր կուլտուրան մեծածավալ զարգացում ստացավ և շատ եկամտաբեր էր: Խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվում էին նաև այստեղ բնակություն հաստատած կազակները, սակայն տնտեսության այդ ճյուղերն երկրամասում լայն տարածում ստացան հատկապես 18-րդ դարի կեսերից՝ հայերի և վրացիների վերաբնակեցումից հետո:

18-րդ դարի երկրորդ կեսին, շնորհիվ հայ և վրացի վերաբնակիչների, խաղողագործությունը Թերեքի շրջանում և մասնավորապես, Ղզլարում դարձել էր տնտեսության հիմնական ճյուղը: Շուտով, կառավարության հովանավորող քաղաքականության և հայ երկրագործների նախածեռնության շնորհիվ, Ղզլարի ճահճուտները վերածվեցին խաղողի և այլ մրգատու այգիների: Ղզլարահայերին շահագրգռելու նպատակով կառավարությունը մոտ մեկ դար այգետերերից յուրաքանչյուրին խաղողի մեկ տնկած վազի դիմաց 5-ական կոպեկ էր հատուցում, իսկ

⁷³ Նույն տեղում, էջ 368-369:

⁷⁴ Նույն տեղում, էջ 449:

Մոսկվայում պետական հատուկ տեղ էր հատկացված Ղզլարից բերված գինիների պահեստավորման համար:

Հյուսիսկովկասյան բնակավայրերի շարքում Ղզլարն աչքի էր ընկնում նաև թե՛նու լայնածավալ այգիներով: 18-րդ դարի սկզբներից ռուսական կառավարող շրջաններում մեծ ուշադրություն էր դարձվում հարավային երկրամասում, մասնավորապես, Թերեքի ավազանում (ուր կլիմայական նպաստավոր պայմաններ կային թե՛նու աճեցման համար) շերամապահության և մետաքսամշակության զարգացմանը: Մետաքսագործությանը զարկ տալու նպատակով խրախուսվում էր նաև այդ կուլտուրայի մշակությանը լավ ծանոթ հայերի և վրացիների բնակեցումը Արևելյան Կովկասում: Դեռևս 1718 թ. Թերեքի ափին հողեր են տրամադրվում հայազգի Սաֆար Վասիլկին՝ թե՛նիների աճեցման և մետաքսի մշակության համար: Տարբեր արտոնությունների շնորհումը նպատակ ունենալով շահագրգռել և նորանոր վարպետ-մետաքսագործներ հրավիրել Իրանի հայաշատ շրջաններից⁷⁵:

19-րդ դարի 30-ական թվականների կեսերին միայն Ղզլարի շրջակայքում հայերն արդեն աճեցրել էին 500.000 թե՛նի և տարեկան մինչև 75 փութ մետաքս էին արտադրում: Թե՛նիների աճեցմամբ և հում մետաքսի մշակությամբ զբաղվում էին հատկապես հայաբնակ վայրերում: Թե՛նու առատ ծառատունկերով աչքի էին ընկնում Մոզդոկը (1825թ՝ 27.352 թե՛նի), Ղզլարի երեք հայկական գյուղերը (միասին՝ 74.480 թե՛նի), Փարփուչ հայաբնակ գյուղը (45.018 թե՛նի), Գեորգիևսկը (2.001 թե՛նի), Ստավրոպոլը (43.088 թե՛նի), Սարաֆինիկովո գյուղը (1.197 թե՛նի) և այլն⁷⁶: Թե՛նիների մեծամասնությունը պատկանում էր նշված տեղերում բնակվող հայերին, որոնք երկրամասում հում մետաքսի հիմնական մշակողներն էին:

⁷⁵ Նույն տեղում, էջ 370-371:

⁷⁶ Государственный архив Ставропольского края (ГАСК), ф. 79, оп. 1, д. 342, л. 3 об.- 4.

Արհեստագործությունը հյուսիսկովկասյան հայկական գաղթավայրերի տնտեսական կյանքի կարևոր ճյուղերից մեկն էր:

Ղզլարի և Մոզդոկի հայ արհեստավորներն աշխատում էին ներմուծված հումքի հիման վրա: Շուկաներում գնված անասունների կաշին և մորթին օգտագործվում էր կոշկակարության, գդակագործության, մուշտակագործության և մյուս արհեստների համար: Առևտրի միջոցով ձեռք բերված երկաթը, պղինձը, փայտը, ոսկին, արծաթը և այլն նպաստում էին հայերի համար ավանդական դարձած մի շարք այլ արհեստների՝ դարբնության, հյուսնության, ոսկերչության, արծաթագործության զարգացմանը:

Ղզլարում, Մոզդոկում և մյուս հայաբնակ վայրերում հայ արհեստավորներն առևտրական շարքերին կից զբաղեցնում էին կրպակներ, որտեղ և պարապում էին նախընտրած արհեստով: Մի շարք բնակավայրերում լայն տարածում էին գտել արհեստագործության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին տակառագործությունը, հյուսնությունը, աղյուսագործությունը և այլն: Գրեթե բոլոր հայաբնակ վայրերում տարածված էր և բնակիչների նախասիրած զբաղմունքն էր գորգեր և կարպետներ գործելը: Կանայք զբաղվում էին արհեստագործության մի շարք այլ ճյուղերով և՛ բրդի վերամշակումով, ոչխարի, այծի և ուղտի բրդից թելի ստացմամբ և ներկմամբ: Ղզլարում տարածված էր նաև ջուլիակությունը, որով նույնպես միայն կանայք էին զբաղվում:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում զարգացում էին ապրում արդյունաբերության այն ճյուղերը, որոնց համար կար համապատասխան նյութական բազա: Արտադրության այս կամ այն ճյուղին քաջածանոթ հայերն, օգտվելով առանձնաշնորհումներից և կառավարության հովանավորող քաղաքականությունից, ձեռնարկում էին արտադրության այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք նախ համապատասխան նշանակություն ունեին և խրախուսվում էին կառավարության կողմից և երկրորդ՝ առավել շահութաբեր էին թե՛ ձեռնարկատիրոջը և թե՛ պետությանը: 18-րդ դարի վերջերին արդեն Ղզլարում և Մոզդո-

կում գործում էին գինու և օղեթորման գործարաններ, մետաքսամշակման ֆաբրիկաներ, կաշեգործարաններ և այլն: Դրանք թեև վավերագրերում հիշատակվում են որպես «ֆաբրիկա-գործարաններ», բայց ավելի շուտ տնայնագործական արհեստանոցներ էին, մի քանի, երբեմն տասնյակի չհասնող վարձու բանվորների ամկայությամբ, ձեռքի աշխատանքի վրա հիմնված արտադրանքանակով և ձեռնարկության տարեկան ոչ մեծ արտադրագումարով: Ընդհանուր առմամբ, այսպիսին էր պատկերը ընդհուպ մինչև 19-րդ դարի 70-80-ական թվականները: Այդ ժամանակ պարզունակ այս արհեստավորական ձեռնարկություններին փոխարինեցին շոգու և մեխանիկական շարժիչներ ունեցող, մի քանի տասնյակ բանվորներ ընդգրկող և հազարավոր ռուբլիների արտադրագումար ապահովող ֆաբրիկա-գործարանները:

Գինեգործության և օղեգործության զարգացումը Կովկասյան մարզում անմիջականորեն կապվում էր հայ վերաբնակիչների գործունեության հետ: Ղզլարահայերի եկամտի հիմնական աղբյուրը խաղողի սեփական այգիներից ստացվող էժան, մեծ քանակությամբ արտադրվող կարմիր գինին էր (չիխիր), որը մասամբ սպառվում էր տեղում, իսկ հիմնականում փոխադրվում էր Աստրախան՝ վաճառքի:

18-19-րդ գդ. Հարավային Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում հաստատված հայկական գաղթավայրերը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային կյանքի կարևոր կենտրոններ էին: Նրանցից յուրաքանչյուրը կարողացավ ստեղծել բավական ուրույն մշակույթ, որը, լինելով բնույթով ազգային, կրում էր նաև ռուսական միջավայրի ազդեցությունը, միաժամանակ, խաչաձևվում տեղական ժողովուրդների մշակութային կյանքի հետ:

Դպրոցը, աճող սերնդի կրթության և լուսավորության գործը հայ համայնքների առաջնահերթ և հրատապ խնդիրներից էին: Այդ էր պատճառը, որ գաղթավայրերի ղեկավար և հոգևոր գոր-

ծիչներն իրենց ուշադրությունը բևեռում էին հատկապես այդ խնդրի վրա, ձգտելով շուտափույթ լուծում տալ հարցին:

Հյուսիսային Կովկասում հայ կուլտուր-կրթական կյանքի աչքի ընկնող կենտրոնը Ղզլարն էր:

Ղզլարում հայկական առաջին վարժարանը բացվել է 1817-1818 թթ. ժամանակի աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Գևորգ Խուրբվի (1762-1829) օգնությամբ և մասնակցությամբ⁷⁷:

Ղզլարի վարժարանը բացման տարում ունեցել է հարյուրից ավելի աշակերտներ: Դպրոցը պահվել է մի քանի ղզլարահայերի, մասնավորապես, Խոջյան եղբայրների և Գևորգ Խուրբվի միջոցներով: Դասավանդվող առարկաների թվում էին՝ Հին և Նոր կտակարան, եկեղեցական արարողություն, ռուսերեն և հայերեն քերականություն, հռետորություն, թվաբանություն, առևտրական հաշվապահություն առարկաները:

Ղզլարի հայ պատանիների համար բարձրորակ ուսումնարան հիմնելու առաջարկով Եփրեմ կաթողիկոսը 1829 թ. դիմում է Կազանի համալսարանի պրոֆեսորի ընթերակա Մանասևին: Վերջինս այդ մասին հայտնում է Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մ. Մազնիցկուն, որը և շուտով Կազանի համալսարանի խորհրդից ձեռք է բերում ուսումնարանի բացման թույլտվությունը: Մանասևը 1820 թ. ապրիլի 17-ի նամակով Եփրեմ կաթողիկոսին տեղեկացնում է, որ ուսումնական հաստատությունների կանոնադրության համաձայն, իրեն արդեն հաջողվել է ներկա տարվա մարտի 14-ին բացել Ղզլարի գավառական ուսումնարանը: «Ուսումնարանի հիմնադրման տարուց, - հայտնում էր Մանասևը, - շատերն արդեն հասու են դասավանդվող առարկաներին, իսկ ներկայումս ուսումնարանն ունի 90 աշակերտ, որոնց մեծամասնությունը հայեր են»:

Տասնամյակներ շարունակ Ղզլարի գավառական (քաղաքային) ուսումնարանը հայ համայնքի կրթական կարևոր օջախ-

⁷⁷ Լ. Մելիքսեթ-Քեկ, Գևորգ Մելիքսեթյան Խուրբով (նյութեր և նոթեր), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1950, N 1-2:

ներից մեկն էր, որտեղ հարյուրավոր հայ պատանիներ նախնական կրթություն են ստացել: Ղզլարի գավառական դպրոցի վերատեսուչ Դ. Բոզդանովիչի՝ 1867 թ. կաթողիկոսին հղած գեղուցագրից տեղեկանում ենք, որ դպրոցը տեղավորված էր պետական շենքում, ուներ 138 աշակերտ, իսկ ուսուցիչների թվում էին հայոց կրոնուսույցի 1 ուսուցիչ և 1 հայոց լեզվի ուսուցիչ: Դպրոցն ունեցել է հարուստ գրադարան՝ բաղկացած 878 գրքից⁷⁸:

1829 թ. աշնանը բացվում է Ղզլարի մասնավոր արական պանսիոնը, որը չորսամյա դասընթացը դեռ չավարտված, երրորդ տարում՝ 1831 թ. աշնանը, փակվեց:

1871 թ. մայիսի 30-ին, հանդիսավոր պայմաններում բացվում է Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված հայոց քարաշեն ուսումնարանը, որի հիմքը, դեռևս 1867 թ., օրհնել էր Ղզլար այցելած Գևորգ Դ. կաթողիկոսը: Ղզլարի հայ հասարակությունը զանազան առիթներով և տարբեր ժամանակներում դպրոցի կառուցմանը նվիրել էր նշանակալի գումար՝ շուրջ 9.000 ռուբլի: Ուսումնարանն ուներ 3 դասարան և մի նախակրթական բաժին, որոնց սպասարկում էին 5 ուսուցիչներ և մի վերակացու: Տարիներ շարունակ դպրոցի պահպանության աղբյուրներն էին քաղաքի 3 եկեղեցիների դրամագլխի տոկոսները, աշակերտների մի մասի մուծած վարձը և հայ համայնքի նվիրատվությունները:

1872 թ. Ղզլարում բացվում է նաև «Մարիամյան» ուսումնարանը:

Ղզլարի «Մարիամյան» օրիորդաց ուսումնարանը տարիներ շարունակ չուներ սեփական դպրոցական շենք: 1883 թ. ղզլարցի Գ. Մամաջանյանն, ով ընտրվել էր օրիորդաց դպրատան շինության հոգաբարձու, իգական ուսումնարանին է ընծայում մի շքեղ, երկհարկանի տուն:

Դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարում բացվում է նաև մասնավոր իգական ուսումնարան, որի նախածեռնողը Թիֆլիսի Գայանե իգական դպրոցի շրջանավարտ Նինա Անանովան (Շերմազանյանց) էր: Այս տարիներին Ղզլարի արական և իգական ուսումնարաններից յուրաքանչյուրը բաղկացած էր 4 բաժանմունքից (դասարանից), որոնցում ուսանում էին 109 աշակերտ և 70 աշակերտուհիներ:

1820 թ. արքունի դպրոցական իշխանությունների ենթակայությամբ բացվում է Մոզդոկի գավառական ուսումնարանը, որը հայ պատանեկության կրթության կարևոր օջախներից մեկն էր: Ստավրոպոլի նահանգի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Մոզդոկի ուսումնարանը 1862 թ. ուներ 128 աշակերտ, որից ռուսներ՝ 13, վրացիներ՝ 17, հայեր՝ 53, օսեր՝ 40 և լեռնցի՝ 5: Դարավերջին Մոզդոկի քաղաքային երկսեռ ուսումնարանում սովորում էին քաղաքի հայ հասարակության 90 երկսեռ հայ երեխաներ:

Դեռևս 1847թ. Մոզդոկի հայ հասարակությունը խնդրագրով դիմում է թեմի առաջնորդին և 1849 թ. փետրվարի 16-ին, հանդիսավոր պայմաններում կատարվում է Մոզդոկի ծխական ուսումնարանի բացումը: Ծխական ուսումնարանը, սակայն, կարճատև կյանք ունեցավ:

1867թ. Մոզդոկ այցելած Գևորգ կաթողիկոսը, քաղաքի նշանավոր անձանց ներկայությամբ, հայտնում է իր մտադրությունը եկեղեցական գումարով 400 ձրիավարժ աղքատ մանկանց համար 2 ուսումնարան բացելու մասին: Կաթողիկոսի հորդորներից ոգևորված Մոզդոկի պատվավոր քաղաքացի, վաճառական Գրիգոր Թուշմալյանը խոստանում է սեփական ծախսով կառուցել ուսումնարանի քարաշեն շենքը՝ դպրոցի 200 աղքատ մանկանց համար: Այդ վարժարանի բացման հանդեսը կատարվեց 1868 թ. ապրիլին:

Մոզդոկցի Գրիգոր և Քերովբե Թուշմալյանները Աստրախանի հայոց կոնսիստորիա են առաքում ստորագրված պարտավորագիր, խոստանալով 7 տարի ժամկետով սեփական ծախսով ա-

⁷⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 206, վավ. 1961:

պահովել հայկական ուսումնարանն, անհրաժեշտության դեպքում վերանորոգել այն, իսկ 7-ամյա ժամկետը լրանալուց հետո՝ այն մշտապես հանձնել Սբ. Աստվածածին եկեղեցուն:

Դպրոցի համար նյութական ապահով աղբյուր ստեղծելու նպատակով Մոզդոկի ծխական դպրոցի հոգաբարձուներ Մ. Ուլուխանյանցը, Հովհ. Թուշմալյանը, Հ. Գյանջումյանցը և Պ. Շլթյանը 1872 թ. կեսերին, յուրաքանչյուրը 500 ռ. ներդնելով, մոմի գործարան են հիմնում⁷⁹:

1875 թ. բացվում է Մոզդոկի իգական ուսումնարանը, որի շենքը այլ հարմարությունների հետ մեկտեղ իր սենյակներից մեկում ուներ թատերական բեմ, որտեղ մոզդոկահայ թատերասերները հայ օրիորդների մասնակցությամբ ներկայացումներ էին տալիս:

1849 թ. Ստավրոպոլում ևս բացվում է հայկական վարժարան, որը սկզբում ուներ 23 աշակերտ: Դպրոցի հիմնադրումից երկու տարի անց նորմալիսթևանցի վաճառական Ալաջալով եղբայրներն ուսումնարանի համար նոր շենք են կառուցում եկեղեցու գավթում, որտեղ արդեն ուսում էին ստանում 30-ից ավելի մանուկներ:

19-րդ դարի 70-ական թվականներից Ստավրոպոլի հայկական ծխական ուսումնարանները ստանում են մշտապես գործելու և նյութապես ապահով վիճակում գտնվելու երաշխիք: Դպրոցներում դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզու, կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն: Դասընթացն ավարտողները կարող էին ընդունվել գիմնազիա:

Հայ պատանիների և աղջիկների կրթական օջախներից էին նաև Ստավրոպոլի արական և իգական գիմնազիաները:

Եկատերինոդարում, Կուբանի մարզի հայաշատ այս կենտրոնում, դպրոցական կյանքը զգալի աշխուժացում ապրեց դարի 60-ական թվականների սկզբից: Հայոց վարժարանի սկզբնավորման գործում մեծ ծառայություն մատուցեց դեռևս 1856 թ. քաղա-

քի հայ երիտասարդների կամավոր նվիրատվություններով և բարեգործական նպատակով հիմնված ընկերությունը: Դպրոցի բացմանը և հետագա ապահովմանն օգտակար եղան նորմալիսթևանցիները՝ օգնության ձեռք մեկնելով Եկատերինոդարի իրենց ազգակիցներին:

1870 թ. քաղաքում հիմնվում է նաև իգական հայկական դպրոց, որը պահվում էր համայնքի միջոցներով: Այն սկզբում մեկդասյան էր և հիմնադրման հաջորդ տարում ուներ 20 աշակերտուհի և մեկ ուսուցչուհի:

Հյուսիսկովկասյան մյուս հայկական գաղթավայրերում կրթական գործի կազմակերպումը սկսվեց ավելի ուշ՝ 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Կրթական հիմնական օջախներն եկեղեցական ծխական դպրոցներն էին, որոնց բացումը և գոյատևումն անմիջականորեն կապվում էր հայ համայնքների նյութական հնարավորությունների հետ:

Վլադիկավկազում ծխական արական դպրոցը բացվեց 1874 թ., իսկ իգական ուսումնարանը՝ 1883 թ.: Այստեղ առավել առաջադիմեց օրիորդաց դպրոցը, որը, հիմնադրումից մեկ տարի անց, ուներ արդեն 46 աշակերտ, իսկ 1891 թ.՝ գրադարան-մատենադարան՝ 200-ից ավելի գրքերով ու պարբերականներով:

Թերեքի շրջանի հայերի համար կարևոր կրթական օջախ էր 1868 թ. հիմնադրված Վլադիկավկազի արիեստավորական ուսումնարանը:

1872 թ. մեկդասյան արական ծխական դպրոց է բացվում Սուրբ Խաչում, քսան տարի անց այնտեղ հիմնվում է նաև իգական մեկդասյան դպրոց: Այս երկու դպրոցներում դարավերջին արդեն ուսանում էին 85 հայ պատանիներ ու աղջիկներ: Պյատի-գորսկում ևս թեմակալի առաջարկությամբ և մի քանի հայ երիտասարդների նախաձեռնությամբ 1888 թ. հիմնվում է ծխական մեկդասյան արական դպրոց: 1896 թ. տվյալներով դպրոցում սովորում էին 35 աշակերտ:

⁷⁹ «Արարատ», 1873, էջ 465; «Մշակ», 1875, հ. 14, էջ 2:

Դարավերջին Գրոզնու փոքրիկ հայ համայնքը նույնպես արձագանքեց մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին: 1895 Գրոզնիում հիմնվում է ծխական դպրոց և «Աղքատախնամ հոգաբարձություն», որը հոգում էր չքավոր աշակերտների կարիքները: Ժողովրդի առաջարկությամբ նորակառույց ուսումնարանն ի պատիվ թեմի առաջնորդի կոչվելու էր «խորենյան»:

19-րդ դարում բացվում են բազմաթիվ ծխական դպրոցներ. Եկատերինոդարում՝ 1863 թ., Եդեսիա գյուղում՝ 1866 թ., Արմավիրում՝ 1869թ. արական, իսկ 1880 թ. օրիորդաց ուսումնարան, Մոզդոկում՝ 1868 թ., Վլադիկավկազում՝ 1870 թ., Սուրբ Խաչում՝ 1874 թ. և այլն:

Այսպիսով, Ռուսաստանի հարավային ծայրամասում ձևավորված հայկական գաղթավայրերը, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը համաքայլ, ապրում են ազգային զարթոնք, որը դրսևորվեց նաև ազգային լուսավորության և մշակույթի, առավելապես դպրոցական կյանքի զարգացման մեջ: Միայն Աստրախանի թեմում, որի մեջ մտնում էին հյուսիսկովկասյան գրեթե բոլոր հայկական գաղթավայրերը, բացվեցին 14 ազգային դպրոցներ, որոնք ընդհուպ մինչև 80-ական թվականների կեսերը ազգային լուսավորության տարածման հիմնական կրթօջախներն էին:

1884 թ. փետրվարի 16-ի կայսեր կողմից հաստատված «Կովկասի հայ լուսավորական եկեղեցական ուսումնարանի մասին կանոնները» առաջին լուրջ հարվածը հասցրեցին հայ ազգային դպրոցներին:

1885 թ. մարտի 5-ին Թերեքի մարզի ժողովրդական ուսումնարանների տնօրենը, կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուի առաջարկությամբ, հրահանգավորում է Թերեքի մարզի պետին՝ փակելու մարզի տարածքում գործող Վլադիկավկազի երկու մեկդասյան, Մոզդոկի երկու երկդասյան և Ղզլարի արական երեքդասյան և իգական երկդասյան եկեղեցական-ծխական

հայկական դպրոցները: Նույն թվականին փակվում են նաև Կուբանի և Դաղստանի երկրամասի եկեղեցական-ծխական հայկական դպրոցները:

Հայկական դպրոցների դեմ սկսված հալածանքների պայմաններում հյուսիսկովկասյան հայկական դպրոցների մի մասին հաջողվեց պահպանել գոյությունը՝ դրվելով լուսավորության միջխտրության տնօրինության տակ: Գոյատևածն ուսումնական լուսավորության միջխտրության տնօրինության տակ: Գոյատևածն ուսումնական լուսավորության միջխտրության տնօրինության տակ: Գոյատևածն ուսումնական լուսավորության միջխտրության տնօրինության տակ:

Թատերական արվեստի սկզբնավորումը և զարգացումը Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում նույնպես ընթացավ 19-րդ դարի կեսերին տեղի ունեցած հասարակական-քաղաքական տեղաշարժերի անմիջական ազդեցության տակ: Մոսկվայի, Պետերբուրգի և այլ վայրերի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած և հայրենի շրջաններ վերադարձած հայ երիտասարդությանը հուզող հարցերից մեկը ազգի կուլտուրական ու մտավոր զարգացմանը նպաստելու ձգտումն էր: Արևմտահայերի թատերական կյանքում սկսված աշխուժությանը շուտով արձագանքում են նաև ռուսահայերը: Ազգային լեզվով թատրոն ունենալուն նախանձախնդիր ղզլարահայերն այդ մարզում առաջին և հաջողակ փորձն են անում: 1859 թ. դեկտեմբերի 18-ին, 300 քաղաքացիների ներկայությամբ, Հովհ. Քոչարեկյանի և Ս. Իսահակյանի մասնավոր դպրոցների առաջավոր աշակերտների ուժերով, ներկայացվում է Ս. Մանդինյանցի աշխատասիրած «Հայոց լեզուն կամ հարսնախոսություն Սովիոյի կամ Պետրոս և Բարբարե» բեմադրությունը: Աշակերտական ներկայացումների հիման վրա հետագայում, ինչպես Ղզլարում, այնպես էլ հյուսիսկովկասյան մյուս հայաբնակ վայրերում ստեղծվում են սիրողական թատրոններ:

Հյուսիսկովկասյան հայերի թատերական կյանքում կարևոր դեր են կատարել Կ. Պոլսից, իսկ հետագայում նաև Այսրկովկա-

սից հյուրախաղերի եկած նշանավոր դերասաններն ու դերասանական խմբերը: 4. Պոլսից ժամանած Թովմաս Ֆասուլյաճյանը թատերախումբ է կազմակերպում սկզբում Մոզդոկում, իսկ ապա՝ Ղզլարում:

Դեռևս Մոզդոկում եղած ժամանակ Ֆասուլյաճյանը նամակով դիմել էր Ղզլարում ապրող բժիշկ Յովհաննեսյանին՝ այնտեղ նույնպես ներկայացումներ կազմակերպելու մտադրությամբ: Ֆասուլյաճյան ամուսինները 1867 թ. նոյեմբերի սկզբներին ժամանում են Ղզլար: Նրանց խմբի կազմում էին նաև Մոզդոկից հրավիրված Յ. Կուսիկյանը և Վ. Ցարալյանը ու երկու ռուս դեկորատորներ: Շուտով Ֆասուլյաճյանի շուրջն են համախմբվում Ղզլարի առաջադեմ և ուսյալ հայ երիտասարդները, ինչպես նաև քաղաքի հայ մեծահարուստներ՝ Մարգար Մամաջանյանը և Եսայի Իզմիրյանը: Վերջիններիս ջանքերով և դրամական նվիրատվությամբ էլ գլուխ է բերվում քաղաքի կենտրոնում գտնվող շենքերից մեկում թատերաբեմի կառուցումը և թատերական անհրաժեշտ պիտույքների ապահովումը:

Ղզլարի նորակառույց 600 տեղանոց թատերասրահում 1867 թ. նոյեմբերին սկսվել են Ֆասուլյաճյանների դերասանախմբի ներկայացումները: 1867թ. նոյեմբերի կեսերից մինչև 1868 թ. մայիսի կեսերը բեմադրվել են 25 թատերական ներկայացում, որոնց մասնակցել են նաև ղզլարահայ երիտասարդներ և օրիորդներ: Ֆասուլյաճյաններին հաջողվել է գործին մասնակից դարձնել նաև ղզլարահայ օրիորդներից Թամար Ասլանյանին, Աննա Աղաբալյանին և ուրիշներին, որոնց բեմ բարձրանալը, հիփոպի, նոր և հաճելի անակնկալ էր ղզլարահայ թատերասերների կյանքում:

Ղզլարահայ երիտասարդների ջանացողությամբ 1867 թ. վերջապես հաջողվեց Ղզլարում ունենալ առանձին թատերասրահ, որը թեև շատ ընդարձակ չէր, բայց հարմար և բավական էր քաղաքի հայ հասարակության համար:

Այսպիսով, դպրոցի և գրականության միջոցով լուսավորության ծիլերը հայ իրականության մեջ սերմանող երիտասարդ մտավորականությունը ձեռք մեկնեց նաև թատերական արվեստին, որը ժողովրդին հոգևոր սնունդ մատակարարող, նրա մտավոր ու կուլտուրական զարգացմանը նպաստող նոր ուժ էր: Սիրողական թատրոնը միաժամանակ դարձավ հայոց լեզվի ամրապնդման յուրօրինակ դպրոց:

19-րդ դարի 80-ական թվականներից հյուսիսկովկասյան հայ թատերասերները ձեռնամուխ են լինում մի շարք կազմակերպչական խնդիրների լուծմանը, որոնք իրենց հերթին ապահովելու էին թատերախմբերի կայուն և մշտական աշխատանքը: 1892թ. ղզլարահայ թատերասերներին ի վերջո հաջողվում է գնել սեփական շենք, ուր և հարմարեցվում է բեմը՝ անհրաժեշտ պարագաներով: Փորձեր են արվում նաև թատերասերների ընկերություններ ստեղծելու ուղղությամբ: Մոզդոկի թատերասերները դեռևս 1884 թ. մշակում են ապագա ընկերության կանոնադրությունը և դիմում կառավարությանը Նոր Նախիջևանի օրինակով հաստատելու թատերասերների խումբը: 1889 թ. Յ. Յարությունյանի ջանքերով կազմվում է Եկատերինոդարի թատերասերների ընկերությունը, իսկ ավելի ուշ՝ Ղզլարի, Արմավիրի և ուրիշ դրամատիկական ընկերությունները:

Յյուսիսկովկասյան հայերի մշակութային կյանքում նկատելի երևույթ երգչախմբերն իրենց մասնակցությունն են բերում նաև թատերական ներկայացումներին: 1896 թ. Ղզլար է հրավիրվում Քրիստափոր Կարա-Մուրզան, որը կազմում է 100 հոգուց բաղկացած երգչախումբը: Կարա-Մուրզան դարավերջին երգչախումբ է կազմակերպում նաև Արմավիրում, Եկատերինոդարում, համերգներով հանդես է գալիս Վլադիկավկազում, Պյատիգորսկում և հայաբնակ այլ քաղաքներում:

Յյուսիսային Կովկասի հայ համայնքները կուլտուր-մշակութային լայն կապեր էին հաստատել մայր հայրենիքի, ռուսահայ գաղթավայրերի, ինչպես նաև հայ մշակութային այլ օջախների

հետ: Այդ կապերի շնորհիվ գաղութահայ գանգվածները մշտապես իրագեկվում էին հայ իրականության մեջ տեղի ունեցած հասարակական-քաղաքական և մշակութային անցքերին:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներն իրենց շուրջ 300-ամյա գոյության ընթացքում նշանակալի դեր խաղացին երկրամասի տնտեսական և հասարակական կյանքում: Նրանց պատմական անցյալը գաղութահայ պատմության ուշագրավ դրսևորումներից է:

ԳԼՈՒԽ 4. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ⁸⁰

Կովկասի նախադռներում հիմնադրված Դոնի հայկական գաղութը նշանակալից դեր է կատարել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում, հարավային Ռուսաստանի տնտեսական զարգացման մեջ:

Տասնութերորդ դարի երկրորդ կեսին Եկատերինա 2-րդի կառավարման շրջանում (1762-1796) որդեգրվեցին կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու և ծով դուրս գալու՝ դեռևս դարասկզբին Պյոտր Մեծի կողմից կյանքի կոչված քաղաքականության սկզբունքները: Այդ ասպարեզում էական նշանակություն ունեցավ 1768—1774 թթ. ռուս-թուրքական առաջին պատերազմը: Դրա հաղթական ավարտի շնորհիվ Ռուսաստանին հաջողվեց Դրիմի թաթարական խանությունը թուրքիայից անկախ հայտարարել, ապա միացնել ու ամրապնդել իր դիրքերը Սև ծովի առափնյա շրջաններում:

Ռուսական կառավարությունը գիտակցում էր, որ առանց հարավային տափաստանների բնակեցման և տնտեսապես յուրացման անհնար էր ամրապնդել ձեռք բերած ռազմաքաղաքա-

կան հաջողությունները: Ահա թե ինչու կառավարությունը հարավային սահմաններն ընդարձակելուն զուգահեռ մեծ ջանքեր էր գործադրում երկրամասի բնակեցման ուղղությամբ:

Հարավի գրեթե անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու, ինչպես նաև Տավրիկյան թերակղզին կայսրությանը միացնելու նպատակով կազմակերպվում է Դրիմի հայ և հույն բնակչության գաղթը: Դա հարավում տարվող ընդհանուր քաղաքականության դրսևորումներից մեկն էր:

Ցարական զինվորական հրամանատարությունը և իշխանության տեղական ներկայացուցիչները լավ գիտակցում էին գաղթը կազմակերպելու հարցում ստեղծված բարդ իրավիճակը: Նրանք գործադրում էին բոլոր հնարավոր միջոցներն առանց բար-դությունների կազմակերպելու գաղթ: Դրիմաբնակ քրիստոնյաների գաղթը կազմակերպվում է մեծամեծ արտոնություններ տալու, հորդորների, համոզելու, կաշառելու, առանձին դեպքերում հարկադրելու, թաթարական վրեժխնդրության վտանգով նրանց ահաբեկելու միջոցով: 1778 թ. ամռանը գեներալ Ա. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվում է Դրիմի հայաբնակ վայրերից 12600 հայերի գաղթը⁸¹:

Հայերը թեպետև հաշտվել էին գաղթելու գաղափարի հետ, սակայն հեշտ չէր թողնել հարազատ բնակավայրերը, եկեղեցիներն ու վանքերը, ծաղկուն պարտեզները, հարազատների շիրիմները: Տխուր հոգով, իրենց հետ առնելով ինչքը, մագաղաթյա ձեռագրերը, եկեղեցիների անոթները, նշանավոր խաչքարերը հույների հետ միասին, ռուսական զորքի հսկողությամբ նրանք առաջանում էին դեպի հյուսիսային տափաստանները:

Գաղթողները ռուսական սահմանն անցնելուն պես ընկնում են դժվարին կացության մեջ: Չէին բավարարում տրանսպորտի միջոցները, պարենի, հագուստի, վառելիքի խիստ կարիք էր

⁸⁰ Տե՛ս Շահազիզ Երվանդ, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, Թիֆլիս, 1903; Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, գիրք I, Երևան, 1967, գիրք երկրորդ, Երևան, 1985, ինչպես նաև նույն հեղինակի ներկայացրած բաժինը Հայ գաղթաշխարհի պատմության, I հատորում:

⁸¹ Տես Присоєдинение Крыма к России, сост. Дуброван Н., т. II, СПб., 1885, с. 652; Շահազիզ Ե., Նոր Նախիջևանը և Նոր նախիջևանցիք, Թիֆլիս, 1903:

զգացվում: Մեղմ կլիմայի վարժված դրիմցիները չէին դիմանում տափաստանային ձմռան սառնամանիքներին: Նրանցից շատերը, հատկապես ծերերն ու մանուկները զոհ էին դառնում ցրտերին ու համաճարակային հիվանդություններին:

Ի վերջո, հաջորդ տարում դրիմահայերը հասնում են իրենց հատկացված տարածքը և Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտ Դոն գետի աջ ափին հիմնում են Նոր Նախիջևան քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Չալթր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեսվիթա հայկական գյուղերը: Նոր բնակավայրի հիմնադրումը կատարվում է հանդիսավոր արարողությամբ: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի հրավերով քաղաքի հիմնադրման հանդեսին մասնակցում էին Դմիտրի Ռոստովսկու ամրոցի կայազորի պետ Ս. Գուրևը, Դոնի հեծալագորդ և նվազախումբը: Հրազենի որոտալից համազարկերով Դոնի անաղմուկ տափաստաններում ազդարարվում է հայկական նոր քաղաքի հիմնադրումը:

Եկատերինա Բ կայսրուհու՝ 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով դրիմահայերը ստացան մեծ առանձնաշնորհումներ:

Հրովարտակի համաձայն, հայ հասարակությունը տասը տարով ազատվում էր բոլոր հարկերից և պետական ծառայություններից: Տասը տարուց հետո վաճառականները պարտավոր էին վճարել իրենց դրամազլխի մեկ տոկոսի չափով, քաղաքացիները և արհեստավորները՝ յուրաքանչյուր տնից երկուական ռուբլի: Գյուղացիները, որոնցից ամեն մի հարկատու շնչի հատկացվում էր 30 դեսյատին հող, ոչ թե զլխահարկ էին վճարելու, այլ հողահարկ՝ տարին հինգական կոպեկ յուրաքանչյուր դեսյատին հողի դիմաց: Նորաբնակներին ամբողջությամբ վերցված հատկացվում էր 87000 դեսյատին հողատարածք: Նորաբնակներն ազատվում էին զորքին օթևան ու պարեն հատկացնելու (պոստոյ) պարտավորությունից և զինակոչությունից (ռեկրուտ):

Յուրաքանչյուր վերաբնակվող դրիմահայ, մտնելով պետական բնակիչների կարգը, կարող էր տերության ներսում ու նրա

սահմաններից դուրս ազատ առևտուր անել, սեփական միջոցներով առևտրական նավեր կառուցել: Իրավունք էր վերապահվում անհրաժեշտ ֆաբրիկաներ, գործարաններ հիմնել, մրգատու այգիներ գցել, որից ստացված խաղողի գինին վաճառել ինչպես տեղի բնակչությանն, այնպես էլ Ռուսաստանի գավառներում: Թույլատրվում էր նաև խաղողի օղի պատրաստել, սակայն արգելվում էր այն վաճառքի հանել Ռուսաստանում: Այլ խոսքով՝ խրախուսվում էր առևտրի, երկրագործության, արհեստների ու արդյունաբերության զարգացումը՝ նորաբնակների ցանկություններին և ունակություններին համապատասխան:

Շնորհագրի չորրորդ կետը վերաբերում էր դավանանքի հարցին: Թույլատրվում էր կառուցել եկեղեցիներ, զանգակատներ, ազատորեն կատարել հայոց եկեղեցական ծիսակատարություններ՝ ենթարկվելով էջմիածնի Մայր Աթոռի հոգևոր գերիշխանությանը:

Նախիջևան անունով հատուկ քաղաք հիմնելու և քաղաքին 12000 դեսյատին հողամաս տալու հետ միասին հրովարտակում պահանջվում էր քաղաքում հաստատել մագիստրատ և այնտեղ ազգային սովորությունների և իրավական նորմերի հիման վրա դատ ու դատաստան վարել ընտրված դատավորների միջոցով:

Կայսերական շնորհագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում և դրա հիման վրա ձևավորվում է նորահաստատ գաղութի ինքնավարությունը: Ամենից առաջ կազմակերպվում է հայկական մագիստրատը: Այն իրականացնում էր քաղաքի և գյուղերի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները: Հայ հասարակության բոլոր խավերի կողմից երեք տարի ժամանակով մագիստրատում ընտրվում էին հինգ դատավորներ: Դատավարությունը և գործավարությունը կատարվում էր հայերեն լեզվով, Աստրախանի կամ «Հայկական դատաստանագրքի» հիման վրա:

Հայկական գյուղերը, մագիստրատին ենթակա լինելով հանդերձ, ունեցել են նաև կառավարման իրենց տեղական մար-

մինները՝ հանձինս «ավագի» և «ծերերի խորհրդի»: Դրանք ընտրվում էին տվյալ գյուղի հասարակության կողմից: Մագիստրատը բաղկացած էր նախագահից և չորս ատենակալներից: Դրանցից երկուսը զբաղվում էին մագիստրատի դատարանական, իսկ մյուս երկուսը՝ ոստիկանության խնդիրներով: Վերջիններից մեկը կատարել է ոստիկանի պաշտոնը բազարում, իսկ մյուսը՝ հայկական գյուղերում:

Հայկական գյուղերում մշտապես պահպանվել են կառավարման տեղական օրգանները՝ հանձին ավագի և չորս ծերերի խորհրդի: Ատամանը կամ ավագը և ծերերը հետևում էին մագիստրատի հրամանների ու հանձնարարությունների կատարմանը, որոնք վերաբերում էին օրինականության պահպանմանը, հարկերի գանձմանը, հանգանակության անցկացմանը և այլ հարցերի:

Հ. Արղությանը մշակում է հոգևոր իշխանության իրավունքներն ու պարտականությունները սահմանող հատուկ կանոններ: Դրանով ռուսահայ թեմի առաջնորդը փորձում էր կարգավորել եկեղեցու և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունները, եկեղեցին զերծ պահել աշխարհիկ կառավարչության միջամտությունից:

1811 թ. հաստատվում է Դոնի հայկական գաղութի զինանշանը, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեդալներ ու փեթակներ:

Քաղաքը հիմնադրվում է պլանաչափ կարգով, նախապես մշակված նախագծի համաձայն: Կենտրոնական մասում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, որի երկու կողմերում հիմնվում են խանութներ և գործատներ: Փողոցները կառուցվում են ուղղաձիգ դիրքով և, իրար խաչաձևելով, ստեղծում են հավասար մեծության քառակուսի թաղամասեր: Այսպիսով, Դոնի հայ համայնքն, օգտվելով շնորհագրով իրեն վերապահված արտոնություններից, ստեղծեց ազգային լեզվով ու իրավական նորմերով առաջնորդվող իր ներքին կառավարչությունը:

Դոնի ափերին զուտ հայկական քաղաքի և հինգ հայկական գյուղերի հիմնադրումը, հայերին տրված լայն ինքնավարությունը մեծ տպավորություն են գործում ժամանակի հայության վրա: Նոր Նախիջևանում հայկական ինքնուրույն կյանքը վերականգնելու, հայկական մշակույթը զարգացնելու հույսեր էին ծնվում:

Գաղութի հիմնադրման հենց առաջին տարիներից հայության կյանքում էական դեր էր կատարում քաղաքագլուխը: Վերջինիս գործունեության շրջանակները հետզհետե ընդարձակվում էին: 19-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած՝ քաղաքագլուխն արդեն բավականաչափ լայն իրավունքներ ու պարտականություններ ուներ: Նա ոչ միայն դուրս էր եկել ու ենթակա չէր մագիստրատի իրավասությանը, այլև ուղղություն էր տալիս դրան: Այլ խոսքով՝ ինքնավար գաղութի կառավարումն աստիճանաբար կենտրոնանում է քաղաքագլխի ձեռքին:

Գաղութն ուներ համապատասխան եկամուտներ, որոնք քաղաքագլխի իրավասության տակ էին գտնվում: Եռամյակի վերջում, երբ լրանում էր քաղաքագլխի լիազորությունների ժամկետը, նա հասարակությանը հաշվետու էր լինում իր պաշտոնավարության շրջանում ստացված եկամուտների ու կատարած ծախսերի մասին:

Աստիճանաբար աճում էին ինչպես քաղաքի եկամուտներն, այնպես էլ ծախսերը: Այսպես, օրինակ, եթե մինչև 1840-ական թվականները եկամուտները չէին անցնում 10 հազար ռուբլուց, ապա 1859 թ. դրանք կազմում էին շուրջ 21.000, 1872 թ.՝ 34.000, 1884 թ.՝ 131.000, 1896 թ.՝ 244.000, իսկ 1910 թ.՝ 597.000 ռուբլի: Համանման ձևով աճում էին նաև ծախսերը: Այսպես, եթե 1862թ. ծախսերը կազմում էին 30.000 ռ., ապա 1884 թ. դրանք հասնում են 34.000 ռ., իսկ 1910 թ.՝ 568.000 ռ.⁸²:

Նոր բնակավայրում հաստատվելուց անմիջապես հետո սկսվում է քաղաքի, ինչպես նաև գյուղերի շինարարությունը:

⁸² Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Եր., 1985, էջ 46, 47:

Նախագծի համաձայն, քաղաքի կենտրոնում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, ուր կառուցվում է կենտրոնական Ս. Լուսավորչի եկեղեցին: Նրա երկու կողմերում հիմնվում են առևտրական կրպակներ ու արհեստանոցներ: Համեմատաբար կարճ ժամանակում ավարտվում է նաև քաղաքի մյուս հինգ եկեղեցիների կառուցումը: Դրանցից միայն Ս. Կարապետի եկեղեցին և Թովստի գյուղի Ս. Փրկիչն է, որ կառուցվել են հայ ճարտարապետության ոճով, մյուսները հիմնվել են ռուսական-բյուզանդական ոճով:

Հոգևոր շինություններից առանձին ուշադրության է արժանի քաղաքից դուրս, 7 կմ հեռավորության վրա գտնվող Սուրբ Խաչ վանքը: Հիմնադրման շրջանից (1792 թ.) վանքը դառնում է նաև կուլտուր-կրթական նշանավոր օջախ:

1811 թ. հաստատվում է Նախիջևան քաղաքի նոր հատակագիծը, որը պահպանում էր փողոցների ուղղանկյուն ցանցը, քառանկյուն թաղամասերը և նախկին հատակագծի մյուս հատկանիշները:

Հաստատված հատակագծի համաձայն, փողոցների երկու կողմերում աստիճանաբար բնակելի տներ են կառուցվում: Փայտյա կառուցումները փոխարինվում են քարե և աղյուսե շենքերով: Հետզհետե ավելանում են արհեստավորական գործատները և առևտրական խանութաշարքերը, կառուցվում են հյուրանոցներ, հիվանդանոցներ: Բարենորոգվում են ճանապարհները, սալահատակվում են կենտրոնական փողոցները: Քաղաքում անցկացվում է ջրմուղի ցանց, սկսում է գործել ձիաքարշ տրամվայ, հետագայում անց է կացվում նաև էլեկտրական լուսավորություն:

Նոր Նախիջևանը համապատասխան հատակագծով կառուցվելու և ժամանակի ընթացքում բարեկարգվելու շնորհիվ քաղաքաշինական ինքնուրույն նկարագիր է ունեցել և շարունակ գտնվել բարվոք վիճակում: Պատահական չէ, որ այն գրավել է Նովոռոսիայի երկրամաս ժամանած ճանապարհորդների և նշա-

նավոր գործիչների ուշադրությունը: Նրանք զովեստով են խոսել քաղաքի, նրա տնտեսության ու արտադրության մասին: Կոնս Ի. Բեզբրոդկոն, օրինակ, Կովկասում ճամփորդելու ժամանակ, 1812 թ. սեպտեմբերին հասնում է Նոր Նախիջևան և իր օրագրում գրանցում հետևյալը. «Եկա Նախիջևան առավոտյան ժամը 10-ին, դիտեցի քաղաքը: Եղա քարավանատանը, քաղաքը բազմամարդ էր, կանոնավոր փողոցներով: Շինությունները կառուցված էին հայկական ճաշակով: Կային և լավ քարե տներ, բավական մեծ մի քանի քարաշեն եկեղեցիներ, շատ այգիներ: Քաղաքի դիրքը հիանալի է՝ Դոնի ափին, բարձունքի վրա»⁸³:

Հայրենական պատերազմի հերոս Ն. Ն. Ռասկին Ա. Ս. Պուշկինի հետ դեպի Կովկաս կատարած ճանապարհորդության ընթացքում (1820 թ.) այցելում է մերձագոլյան քաղաքները: Իր թողած նամակներում լուրջամբ անցնելով Ռոստովի մոտով, գրում է. «Ամրոցի մյուս կողմը կա ուրիշ արվարձան կամ Նախիջևան անվանվող հայկական քաղաք՝ ընդարձակ, բազմամարդ և առևտրով խիստ հարուստ: Կենցաղով, կառուցումներով, դեմքերով, հագուստով, ամեն ինչով ինքնատիպ է»⁸⁴: Միքայել Նալբանդյանը 1850-ական թվականների վերջերին գրել է. «... քաղաքը բավական գեղեցկաշեն է, տները եվրոպական ճարտարապետությամբ, մանավանդ որ գտնվում էին քաղաքի կենտրոնում, համարյա թե բոլորը քարից ու աղյուսից շինած: Եկեղեցիքը, որ վեց հատ են թվով, հոյակապ և ամենևին նոր ճարտարապետության կանոններով, որոնցից ավագը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, գտնվում է քաղաքի մեջտեղը մի մեծ հրապարակի վրա: Մոտ տեղերը Նախիջևանի շրջակայքում չկան այդպիսի հոյակապ տաճարներ»⁸⁵:

⁸³ Бумаги, относящиеся до Отечественной войны 1812 года. Часть десятая. М., 1908, с. 8.

⁸⁴ Архив Раевских, т. I, С. Петербург, 1908, с. 519-520.

⁸⁵ Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1940, էջ 347:

Նոր Նախիջևանի ու ամբողջ գաղութի բարվոք վիճակը, շրջակա բնակավայրերից դրականորեն առանձնանալու հանգամանքը շեշտվել են անգամ ցարական արքունիք ներկայացվող, գովեստների մեջ խիստ ժլատ ամենամյա պաշտոնական զեկուցագրերում: Տազանրոզի քաղաքապետարանի, որի վարչական ենթակայության ներքո էր Նոր Նախիջևանը, 1850 թ. հաշվետվության մեջ կարդում ենք. «Դոնի Նախիջևանը Նովոռոսիայի երկրամասի լավագույն քաղաքներից մեկն է. վարում է նշանակալից ներքին առևտուր, ունի մի քանի, մասնավորապես, կաշվի շահութաբեր ֆաբրիկաներ ու գործարաններ: Նախիջևանի օկրուգի գյուղացիներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, քաղաքապետության գյուղական մյուս բնակչության նկատմամբ հատկանշվում են ոչ միայն հարստությամբ, այլև առանձնահատուկ բարեկեցությամբ»⁸⁶:

Նոր Նախիջևանն այն սակավաթիվ հայկական գաղութներից է եղել, ուր երկրագործությունը և անասնապահությունը մշտապես նշանակալի դեր են կատարել: Այդ հանգամանքը իր դրոշմն է դրել գաղութի տնտեսական և հասարակական բովանդակ կյանքի վրա:

Ռուսական կայսրությունն առևտուրն ու արդյունագործությունն աշխուժացնելու հետ մեկտեղ հետամուտ էր Նովոռոսիայում նաև երկրագործությունն արմատավորելու և զարգացնելու գործին:

Նովոռոսիայի խոպանը՝ «վայրի տափաստանը», ինչպես կոչվում էր այն, հերկելու, երկրագործությունն արմատավորելու նպատակով ռուսական կառավարությունը նպաստում էր գյուղական բնակչության վերաբնակեցմանը: Նման պարագաներում Դրիմից հայ և հույն բնակչության արտագաղթը կազմակերպվում

է ոչ միայն քաղաքային ազգաբնակչությունից, այլև մեծ չափերով նաև գյուղերից:

Դոնի հարթավայրում բնակություն հիմնած հինգ հայկական գյուղերը 50.000 դեսյատինից ավելի հողատարածք ստացան: Այդ հողային տարածությունների մեծագույն մասն ընկած էր Դոնի ձախ ավին և սահմանակից էր կազակային զորքերի խուտորներին: Դոն գետի վրայով երթևեկելու դժվարությունները գրեթե անօգտագործելի էին դարձնում առանց այն էլ ճահճոտ այդ տարածությունները: Այդ պատճառով հայ հասարակության դիմումի հիման վրա պետական Սենատը լուծում է հայկական գաղութի և Դոնի կազակային զորքերի հողային սահմանների հարցը: Դոնի ձախ ավի հայերին պատկանող 52.000 դես. տարածությունն անցնում է կազակային զորքերին, իսկ վերջիններիս պատկանող գետի աջ ավի Սամբելի տափաստանը տրվում է հայ հասարակությանը: Այդ փոխանակությամբ՝ Սամբելի 50.000 դես. արգավանդ հարթավայրը Դոնի աջափնյա մասի հայերին պատկանող 30.000 դես. հողատարածքին միացնելը լավագույն պայմաններ է ստեղծում երկրագործության զարգացման համար:

Գյուղատնտեսության ճյուղերի մեջ առաջատար տեղ ուներ դաշտավարությունը՝ հացահատիկային կուլտուրաների մշակումը: Հայկական գյուղերում մշակվում էին ցորեն, ինչպես նաև վարսակ, գարի, կորեկ: Վարելահողերը չէին պարարտացվում, բերքատվությունը կախված էր տվյալ տարվա տեղումների քանակից: Դաշտավարության այն ժամանակվա պայմաններում հաջող տարիներին ցանված հացահատիկից մինչ ութ անգամ ավելի բերք էր հավաքվում: Տազանրոզի քաղաքապետարանի 1858 թ. տարեկան հաշվետվության համաձայն, հայ երկրագործները 11276 չետ. զարնանացան ցորենից ստացել են 90208 չետ. բերք: Բերքատվությունը, այսինքն, ցանված և ստացված ցորենի հարաբերությունը հասել է ութի: Այն պարագայում, երբ Մարիուպոլի և Տազանրոզի օկրուգների երկրագործների մոտ բերքատվության այդ հարաբերությունը տատանվում էր 4-6-ի միջև:

⁸⁶ Центральный государственный исторический архив России (ЦГИАР), ф. 1281, оп. 5, д. 60, л. 70-71.

Հայկական գյուղերը արտադրած ցորենի քանակով գտնվում էին Դոնի ավազանի երկրագործների առաջին շարքերում: Տագանրոգի քաղաքապետն արքունիք ներկայացրած հաշվետվության մեջ գրում էր. «Նախիջևանի օկրուգի գյուղացիներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հաջողությամբ մշակում են իրենց դաշտերը և խելացիորեն օգտվում բերքից, մթերքի պակասություն չեն քաշում... Այստեղի տնտեսության գլխավոր մթերքը ցորենն է, որը քաղաքապետության արտաքին առևտրի մեջ առաջին տեղն է բռնում և իր լավորակությամբ արտասահմանում գերադասվում է սևծովյան նավահանգիստներից արտահանվող նույն ցորենի ուրիշ տեսակներից»⁸⁷:

Երկրագործությունը, սակայն, միայն գյուղական բնակչության մենաշնորհը չէր: Քաղաքի բնակչությունը ևս զգալի չափով պարապում էր տնտեսության այդ ճյուղով: Նոր Նախիջևանում երկրագործությամբ, առավելապես անասնապահությամբ զբաղվելու նպատակահարմարությունը նախատեսված էր արդեն պաշտոնապես կայսերական հրովարտակի հինգերորդ հոդվածով քաղաքին հատկացվել էր 12000 դեսյատին արոտավայր:

Գյուղատնտեսական զբաղմունքների մեջ ուրույն տեղ ուներ այգեգործությունը: Այն տարածված էր թե՛ հայկական օկրուգի գյուղերում, թե՛ Նոր Նախիջևանում: Այգեգործության մեջ առանձնահատուկ նշանակություն ուներ խաղողագործությունը: Դոնի տափաստանում խաղողագործության լայն տարածումը կապվում է հայերի անվան հետ: Դրիմի հայերը և հույները, տակավին 14-րդ դարից սկսած արդյունավետ կերպով զբաղվում էին խաղողի և պտղատու այգիների մշակումով⁸⁸: Նրանք այդ զբաղմունքն իրենց հետ նոր բնակավայր տեղափոխեցին և սկսեցին լայնորեն զբաղվել խաղողագործությամբ: Խաղողից մեծ չափերով գինի էր պատրաստվում:

⁸⁷ Նույն տեղում, 96 թ., 56, 57:

⁸⁸ Միքայելյան Վ., Դրիմի հայկական գաղութի պատմություն, Եր., 1964, էջ 200-202:

Հայկական գաղութն առանձնանում էր իր շրջապատի բնակավայրերից մետաքս ստանալու նպատակով թթենու ընդարձակածավալ այգիների մշակմամբ: Այգեգործության այս ճյուղը հետագայում զարգացում չապրեց, ընդհակառակը, աստիճանաբար մարեց:

Դոնի հայերն իրենց այգիներում աճեցնում էին նաև զգալի քանակությամբ խնձորի, սալորի, տանձի, կեռասի, ծիրանի, բալի, դեղձի ծառեր: Բանջարաբուստանային կուլտուրաներից մշակվում էր ձմերուկ, սեխ, վարունգ, կաղամբ, սիսեռ, լոբի, կանաչեղեն:

Նոր Նախիջևանի բնակչությունը ևս զբաղվում էր այգեգործությամբ և անասնապահությամբ: Անգամ 20-րդ դարի սկզբներին, երբ արդյունաբերական ձեռնարկությունները, երկաթուղային ու խճուղային ճանապարհները, փողոցներն ու հրապարակները, տնտեսական օժանդակ շինությունները նշանակալի տարածք էին զբաղեցնում, քաղաքի օգտագործելի հողատարածությունների հիմնական մասը՝ 73 տոկոսը, հատկացվում էր գյուղատնտեսությանը:

Անասնապահություն: Անասնապահությունը նախիջևանցիների տնտեսական կյանքում կարևոր դեր ուներ: Անասնապահության առանձին ճյուղերը ծառայում էին կյանքի տարբեր պահանջները բավարարելուն: Խոշոր եղջերավոր անասուններն ու ձիերը անհրաժեշտ էին դաշտավարության համար՝ որպես քաշող ուժ և տրանսպորտի միջոց, ինչպես նաև պահվում էին ճարպի ու բրդի համար: Լայն սպառում ունեին թե մեկի և թե մյուսի կաշին, միսը, կաթնամթերքը:

Նովոռոսիայի անծայրածիր տափաստանները հնուց ի վեր նպաստավոր պայմաններ են ստեղծել անասնապահության համար: Աշխարհագրական այդ հարմար պայմանները և անասնապահության բազմակողմանի նշանակությունը խթանում էին նրա զարգացումը՝ հենց գաղութի սկզբնավորման շրջանից:

Դոնի հայկական գաղութում զբաղվում էին անասնապահության գրեթե բոլոր ճյուղերով: Երկրագործության նման անասնապահությունը ևս միայն հայկական գյուղերի տնտեսության շրջանակներով չէր սահմանափակվում:

Քաղաքի բնակչությունը, թերևս երկրագործությունից ավելի մեծ չափերով զբաղվում էր անասնապահության տարբեր ճյուղերով և ունեցած անասունների գլխաքանակով երբեմն գերազանցում անգամ գյուղերին:

Նոր Նախիջևանն իր հայկական գյուղերով համարվում էր երկրամասի անասնապահական հարուստ շրջաններից մեկը: Մոտավոր պատկերացում կազմելու համար հիշատակենք, որ 1810 թ. Նոր Նախիջևանն ուներ 5690 խոշոր եղջյուրավոր անասուն և 3595 ձի, իսկ հինգ հայկական գյուղերը՝ համապատասխանաբար 5198 և 880:

1865 թվականին, ավելի քան կես դար անց, հարաբերությունը հետևյալն էր՝ Նոր Նախիջևանում կար 1280 խոշոր եղջյուրավոր անասուն և 1550 ձի, իսկ հայկական գյուղերում՝ 9255 անասուն և 1411 ձի: Դժվար չէ նկատել, որ գյուղերում անասունների գլխաքանակը ավելացել է, իսկ քաղաքում պակասել:

1905 թ. քաղաքն ուներ 1309 խոշոր եղջերավոր անասուն և 2800 ձի⁸⁹: Հատկանշական է, որ Նոր Նախիջևանում ձիաբուծությունն արագորեն առաջադիմում էր: Նշանակում է, քաղաքային բնակչությունը ձին՝ որպես տրանսպորտի միջոց և քաշող ուժ ավելի շատ էր օգտագործում, քան գյուղերում:

Ոչխարաբուծությունը: Հատկապես մեծ տարածում ուներ ոչխարաբուծությունը: Հարավի լայնարձակ մարզագետիկները նպաստավոր պայմաններ էին ստեղծում անասնապահության այս ճյուղի զարգացման համար: Դրանցից զատ, պետությունը մահողի արտադրությունը հումքով ապահովելու նպատակով տարբեր միջոցների էր դիմում՝ ոչխարաբուծությունը խթանելու համար:

Կառավարությունը նախանձախնդիր էր հատկապես նրբագեղմ, նոր ցեղատեսակի ոչխարաբուծության արմատավորման հարցում: Ռուսաստանի հարավում նրբագեղմ ոչխարաբուծությունը տարածելու նպատակով կառավարությունը 1804 թ. հատուկ հրամանագիր ընդունեց: Դրա համաձայն, ոչխարաբուծության այդ ճյուղով զբաղվել ցանկացողներին արտոնյալ պայմաններով հողատարածություն էր տրամադրվում: Օրենքը մեծապես նպաստեց նշված ճյուղի զարգացմանը, և 19-րդ դարի առաջին տասնամյակներում Նովոռոսիայում հսկայական քայլերով ծավալվեց նրբագեղմ ոչխարաբուծության տարածումը: Ստացվող բուրդն արտադրական նպատակներով օգտագործելու համար հիմնվեցին նաև բրդի նախնական մշակման, տեսակավորման ու լվացման ձեռնարկություններ:

Նախիջևանի հողատերերը 1814 թ. Սամբելի հարթավայրի հողատարածքում սկսեցին զբաղվել իսպանական բարձորակ ցեղի ոչխարաբուծությամբ: Կարճ ժամանակում ցեղական ոչխարաբուծության արմատավորումն այնքան առաջ գնաց, որ 1830 թվականին արդեն քաղաքի ֆերմաների 50 տոկոսը ցեղայնացված էր: Մեկ տասնամյակ անց հայկական գաղութի մանր եղջերավոր անասունների 40 տոկոսը, իսկ 1850 թվականին՝ 50 տոկոսից ավելին կազմում էին իսպանական և այլ բարձրացեղ ոչխարների տեսակները: Դոնի հայերը շրջապատի ոչխարաբուծական տնտեսությունների համեմատ ոչխարի ամեն մի գլխաքանակից 2-3 անգամ ավելի բուրդ էին ստանում: Դա կատարվում էր ոչխարի ցեղայնությունը բարձրացնելու, նոր տեսակներ բուծելու շնորհիվ⁹⁰:

Նոր Նախիջևան քաղաքի բնակչությունը սկզբնապես լայնորեն զբաղվում էր նաև անասնապահության այս ճյուղով: 1810 թ., օրինակ, քաղաքը պահում էր 51 հազար, 1824 թ.՝ 27 հազար ոչխար, իսկ դարի կեսերից, փաստորեն, դադարում է անասնա-

⁸⁹ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 80-81:

⁹⁰ Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 157:

պահույնան այս ճյուղով զբաղվել: Բուծվում էր որոշ քանակությամբ ոչխար և այն էլ ազարակատեր աղաների կողմից⁹¹:

Ոչխարաբուծությունը զարգանում է հայկական գյուղերում: Պահպանված տվյալներից երևում է, որ 19-րդ դարի երկրորդ կեսից հայկական գյուղերում (ազարակատեր կալվածատերերի հետ միասին) պահում էին ավելի բան 100 հազար ոչխար: 19-րդ դ. վերջերից արոտավայրերի կրճատման, վարելահողերի ընդարձակման հետևանքով անասնապահության այս ճյուղն այլևս լայն տարածում չի գտնում:

Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային բնույթ ստանալը գնալով բարձրացնում էր հողի արժեքը և նրա վարձակալության գինը: Այսպես, եթե 19-րդ դարի 70-ական թթ. մեկ դեսյատին հողամասը վարձակալության էր տրվում 1, 16 կոպ. արժեքով, ապա 20-րդ դ. սկզբին այդ վարձը հասնում է մինչև 20-25 ռ.:

Հողատարածք ունենալը կյանքի կարևոր կենսապայման էր: Եվ ահա Դոնի հայկական գաղութում հողային տարածքների շուրջը գյուղերի և քաղաքի ունևոր շերտերի միջև այնպիսի սուր և երկարատև հակասություն է սկսվում, որ այդ գործի քննությունը հասնում է մինչև կառավարիչ Սենատ: 1830-40-ական թթ. սրված և հետագա տասնամյակներում էլ պարբերաբար բարձրացվող հողային հարցը իր դրոշմն էր դրել և որոշակի հետք թողել գաղութի հասարակական բովանդակ կյանքի վրա:

Ինչպես նշվեց. Դոնի ափերին հանգրվան գտած դրիմսիայերին պետության կողմից հատկացվեց 87 հազար դես. հողատարածք: Դրանից քաղաքին տրվեց 12 հազար, հինգ հայկական գյուղերին՝ 67, իսկ 8 հազար դեսյատինը՝ Ս. Խաչ վանքին: Քաղաքի աղայական դասն, օգտվելով շերամապահության և նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման նպատակով պետության հովանավորող քաղաքականությունից, գյուղերին պատկանող հողերում ազարակներ է հիմնում և փաստորեն դառնում 8 հազար դես. հողերի սեփականատեր:

⁹¹ Նույն տեղում, էջ 155:

Քաղաքի մեծամեծները հողի համար գյուղերի դեմ տարվող պայքարի ընթացքում հաճախ օգտագործում էին քաղաքում բնակվող երկրագործների հարցը: Դեռևս Դոնի ափերին բնակություն հաստատելու ժամանակ ինքնուրույն տնտեսություն վարելու կարողությունից զուրկ շուրջ 130 երկրագործներ հաստատվում են Նոր Նախիջևանում: Նրանք քաղաքում ունեին «Սաբանչի» անունով փոքր համայնք, այդ պատճառով էլ հաճախ անվանվում էին սաբանչիներ: Քաղաքի աղայական խավն ի վերջո հասնում է նրան, որ գյուղերին պատկանող հողատարածություններից առանձնացնում է 5 հազար հա, հիմնում Եկատերինովկա անունով գյուղ և այնտեղ բնակեցնում քաղաքաբնակ երկրագործներին: Դրանցից զատ այլ պատճառներով ևս բավականաչափ պակասել էին գյուղապատկան հողատարածությունները:

1830 թ. հողերի անհավասար բաշխման դեմ հայկական գյուղերը դիմում են վերադաս իշխանություններին: Եկատերինովկայի նահանգային վարչության և Տագանրոգի քաղաքապետարանի միջև երկարատև գրագրություն է սկսվում: Մինչև 1844 թ. այդ խնդիրը կարգավորելու ուղղությամբ որևէ իրական տեղաշարժ չի կատարվում: Հայկական գյուղերը կրկին բողոքում են նահանգային վարչության հողաչափերի գործելակերպի դեմ: Քաղաքի մեծամեծների ազդեցությամբ նրանք գյուղական բնակչության ամեն մի չնչին 30 դեսյատին հողամաս էին հատկացնում, ոչ թե բնակչության առկա թվին համապատասխան, այլ 1811 թ. մարդահամարի հիման վրա, երբ գյուղական բնակչությունն անհամեմատ փոքրաքանակ էր: Գյուղացիները միաժամանակ հայտնում էին, որ իրենք հողային հարկ են վճարել ոչ թե 1811 թ., այլ՝ 1835 թ. մարդահամարի համաձայն:

Հարցի լուծումը ձգձգվում էր և ընթանում հօգուտ քաղաքի կալվածատիրական շերտերի, որն էլ հայկական գյուղերին հարկադրում է 1845 թ. դիմելու կառավարիչ Սենատին: Վերջինս ստացված դիմումներն ուղարկում է տարբեր ատյաններ՝ դրանց վերջնական եզրակացությունը ստանալու համար:

Արդարադատության նախարարը, ծանոթանալով հայկական գաղութի հողային հարցի պատմությանը, մերժում է եղած առաջարկները: Նա գտնում է, որ հարկ է վերականգնել հինգ հայկական գյուղերի հողային իրավունքները՝ ըստ կայսերական հրովարտակի: 1848 թ. հունիսի 14-ին Պետական խորհուրդը, քննարկելով Նախիջևան քաղաքի և հինգ հայկական գյուղերի վիճելի հողերի հարցը, որոշում է հաստատել արդարադատության նախարարի կարծիքին համերաշխող սենատորների մեծամասնության եզրակացությունը⁹²:

Սենատի հավանությանն արժանացած Պետական խորհրդի որոշմամբ 1851 թվականից ազարակների հողատարածություններն անցնում են հայկական գյուղերին: Այսպիսով, գաղութի կալվածատիրական-վաճառականական շերտերի դեմ երկարատև ու համառ պայքարում հայ երկրագործները կարողացան պաշտպանել իրենց իրավունքները:

Յոդային հարցի շուրջ ծավալված երկարատև պայքարն ինքնին վկայում է հայկական գաղութի տնտեսական կյանքի յուրահատկության, դրա զարգացման աստիճանի մասին: Դրանից միաժամանակ հետևում է, որ հողը եկամտի լավագույն աղբյուր էր: Գաղութի վաճառականական-կալվածատիրական խավի՝ առավել մեծ քանակի հողամասեր ձեռք բերելու ձգտումը պայմանավորված էր գյուղատնտեսական մթերքների՝ շրջանառության ոլորտ մտնելով, ապրանքային բնույթ ընդունելու և դրանից խոշոր շահույթ ստանալու հետ: Երկրագործ բնակչության և կալվածատիրական դասի միջև հակասությունները սրվեցին հատկապես 1830-ական թթ., երբ սկսվեց ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանը:

Գաղութի հիմնադրման սկզբից ի վեր արհեստներն երևան եկան բավականաչափ կատարելագործված տեսքով: Նոր պայ-

մաններում արհեստները հետագա զարգացում ապրեցին: Դրնի ավազանում հաստատվելուց հետո բնակչության անմիջական պահանջարկը և համապատասխան հումքի առկայությունը կանխորոշում ու առաջնային պլան էին մղում արհեստագործական որոշակի ճյուղեր: Առատորեն ստացվող անասունների կաշին ու մորթին լավագույնս խթանում էին կաշեգործական արհեստների՝ կոշկակարության, մուշտակագործության, թամբագործության զարգացումը: Ռոստովի և Տազանրոգի նավահանգիստներով արտահանվող մետաղը հումք էր դարբնության, պայտագործության, պղնձագործության, փականագործության և մյուս արհեստների համար: Միաժամանակ, զարգացում էին ապրում հայերի համար ավանդական այնպիսի արհեստներ, ինչպիսիք են ոսկերչությունն ու արծաթագործությունը:

Նշված արհեստներից գատ, գոյություն ունեին բազմաթիվ այլ արհեստներ, առանց որոնց բնակչությունը չէր կարող հոգալ կյանքի ու կենցաղի առօրյա պահանջները: Դրանցից էին դերձակությունը, գդակագործությունը, հյուսնությունը, ապակեգործությունը և շատ ուրիշ արհեստներ: Դրնի հայերը զբաղվում էին ոսկերչությամբ, արծաթագործությամբ, դարբնությամբ, պղնձագործությամբ, պայտարությամբ, կոշկակարությամբ, մուշտակագործությամբ, կաշեգործությամբ, թամբագործությամբ, դերձակությամբ, գդակագործությամբ, հյուսնությամբ, քարակոփությամբ, մոմագործությամբ և այլ արհեստներով:

Մինչև 19-րդ դարի կեսերը Նոր Նախիջևանն աչքի էր ընկնում որպես արհեստագործական և առևտրական նկարագիր ունեցող քաղաք: Քաղաքի բնակչության զգալի մասը զբաղված էր արհեստագործությամբ: Այսպես, 1793 թվականին արհեստավորական շերտը կազմում էր քաղաքի բնակչության 32, իսկ ամբողջ հայ համայնքի՝ 23 տոկոսը: Երեսուն-երեսունհինգ տարի հետո նրանք կազմում էին քաղաքի բնակչության 13 և ողջ գաղութի 10 տոկոսը: Դա նույնպես պատկառելի թիվ էր: Այդ նույն ժամանակ Անդրկովկասի քաղաքներում մանր արտադրողներն

⁹² ЦГИАР, ф. 1152, оп. 3, л. 66, л. 30-42.

անհամեմատ ավելի ցածր տոկոս էին կազմում: Երևան քաղաքում, օրինակ, արհեստավորները կազմում էին ամբողջ բնակչության 6 տոկոսը: 19-րդ դ. 60-ական թթ. արհեստավորական շերտը կազմում էր քաղաքային բնակչության 5-6 տոկոսը⁹³:

Հասկանալի է, որ արդյունաբերության աճը տնտեսության մեջ, բնականաբար, սահմանափակում էր արհեստների տեսակարար կշիռը:

19-րդ դարի առաջին կեսին արհեստավորական շերտի տոկոսային նման բարձր կազմը վկայում է այն մասին, որ արհեստագործական արտադրանքն իր զգալի մասով սպառվում էր շուկայում:

Դրսի շուկայում առաջնահերթ տեղ էին բռնում Կովկասի լեռնաբնակների համար արտադրվող ձիասարքը՝ թամբ, սանձ և այլ անհրաժեշտ իրեր: Եկատերինոսլավի նահանգի վիճակագրական պատկերը ներկայացնող աշխատություններում ընդգծվում է այլ քաղաքների համեմատությամբ Նոր Նախիջևանում արհեստների որոշակի զարգացած լինելու հանգամանքը: Տազանրոզի քաղաքապետի 1850 թ. տարեկան հաշվետվության մեջ կառավարության ուշադրությունն էր հրավիրվում Նոր Նախիջևանի արհեստավորների թողարկած գենքերի, սանձերի, ձիասարքի և դրանք արծաթյա նուրբ զարդերով պատելու՝ կատարելության հասած վարպետության վրա: Ըստ քաղաքապետի, այդ իրերն աչքի էին ընկնում իրենց աշխատանքի հիանալի արվեստով: Նրանցից մի քանի նմուշ ուղարկված է «Հարավային հանձնաժողովին»՝ Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես ուղարկելու⁹⁴:

Արհեստագործության զարգացման ու մասնագիտացման մասին է վկայում այն, որ հայ համայնքի արհեստավորները ստեղծել էին իրենց կազմակերպությունները՝ համքարությունները: Գաղութի տնտեսական հարաբերություններից բացի, ար-

հեստներն էական դեր են ունեցել նաև հասարակական կյանքում:

Համքարությունները միևնույն մասնագիտության արհեստավորների կազմակերպություններ էին, որոնք ղեկավարվում էին տվյալ միության անդամների կողմից ընտրված գլխավոր վարպետի (ուստաբաշու) կողմից: Համքարությունների անդամների միջև կապ ստեղծողը զբաղմունքի նույնությունն էր, տնտեսական համանման շահերը, կառավարման ընդհանրությունը: Այդ ամենը միությանը տալիս էր եղբայրության բնույթ:

Հավասարության և փոխադարձ օգնության գաղափարը համքարության գլխավոր գծերից մեկն էր: Համքարությունն օգնում էր իր հիվանդ, աշխատանքի անընդունակ դարձած անդամներին: Նման օգնության համար համքարություններն ունեին իրենց դրամական միջոցները, որոնք զոյանում էին ընկերության անդամների մուծած անդամավճարներից, տուգանքներից և այլ աղբյուրներից:

Համքարության անդամների փոխահարաբերությունը հենվում էր դարերով ավանդված սովորության սկզբունքների վրա: Այդ պատճառով էլ դրանք իրենց վարք ու բարքով խիստ պահպանողական էին: Համքարության ղեկավար կազմը ներկայացնում էին ուստաբաշին, նրա մեկ կամ երկու օգնականները (ախսախկալ), գանձապահը (խազնադար) և սուրհանդակը (իգիթբաշի): Արհեստավորական այդ կազմակերպության բարձրագույն օրգանն ընդհանուր ժողովն էր, որին մասնակցում էին նրա բոլոր անդամները: Ընդհանուր ժողովն էր ընտրում համքարության պաշտոնյաներին, լսում նրանց հաշվետվությունը, կատարում հարկերի ու տուրքերի բաշխում և այլ գործեր:

Դրիմի հայ զանգվածները, մայր հայրենիքից իրենց հետ տանելով արհեստներին տիրապետելու վարպետությունը, դարերի ընթացքում ավելի են կատարելագործում այն: Դրիմում նույնպես արհեստագործությունն առաջադիմել էր այն աստիճան, որ արհեստավորները ստեղծել էին իրենց համքարությունները: Նոր

⁹³ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 199-201:

⁹⁴ ЦГИАР, ф. 1281, д. 60, л. 24.

Նախիջևանը Ղրիմից ժառանգեց բավականաչափ զարգացած, բազմաճյուղ արհեստագործություն՝ յուր համքարային կազմակերպություններով⁹⁵:

Նոր Նախիջևանի արհեստավորական կազմակերպությունները հար և նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին: Դրանք միաժամանակ կրել են ռուսական միջավայրի ազդեցությունը: Դա արտահայտվել է աշակերտների ուսուցման համար ավելի կարճ ժամկետ սահմանելու, համքարություններն ուղղակի մագիստրատին ենթարկելու մեջ և այլն: Ռուսաստանում համքարություններն ավելի ուշ առաջացան և լայն տարածում չստացան: 19-րդ դ. կեսերին Նոր Նախիջևանում գոյություն է ունեցել 35-40 համքարություն: Այդ նույն ժամանակ Ռոստով քաղաքում կար ընդամենը 15 համքարություն:

Յետեֆորմյան շրջանում արդյունաբերության զարգացման հետևանքով մանր արտադրողների քայքայումն այնքան ակնբախ էր դարձել, որ Ռ. Պատկանյանը 1879 թ. ցավով ու փստսանքով էր խոսում արհեստավորության վաղեմի ծաղկուն վիճակի մասին: Արհեստավորական դպրոց բացելու նրա նախաձեռնությունն ու ջանքերը բխում էին հայ արհեստագործական կորսված աշխույժ կյանքը վերականգնելու նույն ձգտումից: Անվանի բանաստեղծն արհեստներն առաջին հերթին համարում էր որպես գաղութի բնակչության միջնախավին աղքատացումից ետ պահող կարևոր պայման: Հայ բնակչության վրա ռուսական ազդեցության ուժեղացման պայմաններում նա համքարությունները միաժամանակ դիտում էր որպես ավանդական սովորություններն ու հայերի ազգային նկարագիրը պահպանող, դրսեկ վարք ու բարքին դիմակայող մի կազմակերպություն:

Արհեստագործությունը, սակայն, այնքան մեծ ծավալ էր ընդունել, որ չէր կարող հեշտությամբ տեղի տալ և միանգամից դադարեցնել իր գոյությունը, մանավանդ, որ հայկական գաղութում արդյունաբերությունն առաջացավ ու զարգացավ հենց արհես-

տագործական հիմքի վրա: Բայց հետեֆորմյան ժամանակաշրջանում Դոնի հայկական զանգվածի համքարային կազմակերպություններն արդեն այն աստիճան կորցրել էին իրենց նշանակությունը, որ դրանց մասին որևէ հիշատակություն չի պահպանվել: 20-րդ դ. սկզբներին, ժամանակի ոգուն համապատասխան, համքարությունների փոխարեն ստեղծվում է արհեստավորական վարչություն:

Հայկական գաղութում արհեստագործությունը, հետեֆորմյան շրջանում թուլանալով և ժամանակի պահանջներին համապատասխան փոփոխություններ կրելով հանդերձ, ինչ-որ չափով, այնուամենայնիվ, պահպանում էր իր նշանակությունը: Արհեստագործությունը, արդյունաբերության կողքին և նկատելի չափով դրան լրացնելով, շարունակում էր բնակչության առօրյա պահանջները բավարարող տնտեսական որոշակի դեր կատարել:

Արդյունաբերությունը: Դեռևս 19-րդ դարի առաջին կեսին արհեստագործության կողքին որոշակի տեղ էին զբաղեցնում նաև արդյունաբերական ձեռնարկությունները:

Դրանք ավելի շուտ սովորական տնայնագործական արհեստանոցներ էին, քան թե «ֆաբրիկա-գործարաններ»: Ինչպես նահանգի մյուս քաղաքներում, այնպես էլ Նոր Նախիջևանում «գործարան» էին համարվում այնպիսի ձեռնարկությունները, որոնք աշխատող բանվորների փոքր անձնակազմով և արտադրության պարզունակ ու չնչին քանակով տիպիկ տնայնագործական արհեստանոցներ էին:

Արդյունաբերության զարգացումը գաղութում բնորոշվում էր հետևյալ ճյուղերով.

Ձկնորսություն: Այն Դոնի հայության տնտեսության կարևոր ճյուղերից էր: Ղրիմահայերը բնակության վայր էին ընտրել Դոնի գետափը՝ նկատի առնելով նաև ձկնորսության շահավետ հեռան-

⁹⁵ Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 204-207:

կարները: Պատահական չէր, որ կայսերական շնորհագրում հատուկ սահմանվել էին Դոն գետում ձկնորսությանը զբաղվելու նրանց իրավունքները:

Դոն գետը հարուստ էր տարատեսակ ձկներով, այդ թվում՝ կարմրաձկով: Առաջին շրջանում ձկան արդյունաբերական մշակումը կատարվում էր տնայնագործական խղճուկ ձևերով: 1830-40-ական թթ., արտասահմանից, մասնավորապես Յուլանդիայից մասնագետներ են հրավիրվում, որոնք երկրամասի ձկնարդյունաբերողներին ծանոթացնում են ձկան մշակման տեխնոլոգիային: Ձկան մշակման նոր մեթոդներին տիրապետելը խթանում է ձկնորսության ծավալումը:

Ձկան արդյունաբերական դերը շատ որոշակի էր: Բացի թարմ ու աղ դրված վիճակում օգտագործելուց՝ ձկից ստացվում էր խավիար, ձկնայուղ և սոսիսձ: Սկզբնական շրջանում գաղութում գործում էին ձկնարդյունաբերական երկու ձեռնարկություն, հետագայում դրանց թիվը հասնում է չորսի, ապա՝ յոթի: Յուրաքանչյուր ձեռնարկության բանվորների թիվը հասնում էր 20-25 մարդու:

19-րդ դարի առաջին կեսին ձկնորսության արտադրանքի ծավալը շատ մեծ էր: 1810 թ. Նոր Նախիջևանի օկրուգում (հայկական գաղութում) ձկան որսը տարեկան հասել է 500 տոննայի: 1858 թ. միայն թառափի ընտանիքին պատկանող բարձրորակ ձկան որսը հասնում է 72 տոննայի⁹⁶:

Հետագայում ձկնորսությունը լայն զարգացում ունեցավ Ռոստով քաղաքում, իսկ Նոր Նախիջևանը գրեթե դադարեց զբաղվել արտադրության այս ճյուղով:

Ճարպահալ գործարանները (սալղանները) քաղաքի հյուսիսային մասում տեղավորված փայտյա պարզունակ շինություններ էին: Դրանց թիվը մեծ չէր, տատանվում էր 6-10-ի միջև: Սալղաններում մսագործ վարպետները ոչխարը մորթում էին, ճարպը խոշոր կաթսաներում հալում, տակառների մեջ լցնում ու փա-

կում, ճարպագուրկ միսն էլ հանձնում տիրոջը: Գործարաններում մորթված ոչխարի բոլոր մասերը՝ ճարպը, մորթին, բուրդը, միսը, անգամ փորոտիքն, օգտագործում էին:

Քաղաքի, ինչպես նաև գյուղերի ոչխարաբույծների մի մասը զբաղվում էր ճարպատու ոչխարաբուծությամբ՝ միմիայն ճարպի համար ոչխարներ գիրացնելով: Գործարանատերերը սեփական հոտեր էին պահում, սակայն նրանք մեծ չափերով մորթում ու մշակում էին նաև այլ տնտեսությունների ոչխարը: Ուրիշ քաղաքներում սալղանների բացակայության պատճառով Յուլիսային Կովկասից, Դոնի տափաստաններից և այլ վայրերից ճարպատու ոչխարի հոտերը քշում էին Նախիջևան և մորթում նրա գործարաններում: 1862 թ. Նախիջևանի տասը գործատերեր իրենց ձեռնարկություններում մորթել են ընդհանուր քանակով 80 հազար սեփական ոչխար⁹⁷:

Կաշեգործություն: Ճարպահալ գործարաններում գոյացող մեծաքանակ մորթին այնտեղ միայն շատ նախնական մշակման էր ենթարկվում և կիսաֆաբրիկատ վիճակում վաճառվում կաշեգործական ձեռնարկություններին: Դրանից գատ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ էին մորթում մսի կամ հենց կաշվի համար: Ստեղծվում էր հունքի առատություն, որը և խթանում էր արտադրության այս ճյուղի ծավալումը:

Հայերը կաշեգործության տեխնիկային ծանոթ էին վաղուց: Հատկանշական է, որ 19-րդ դ. սկզբին նահանգի կաշեգործական վեց գործարաններից հինգը գտնվում էր Նախիջևանում: Այլ խոսքով՝ կաշեգործությամբ զբաղանցապես զբաղվում էին հայերը, որը հետագա շրջանում վայրէջք է ապրում: 1861 թ. կար ընդամենը մեկ գործարան: Դա բացատրվում է նրանով, որ կաշեգործությունը հայկական գաղութում խարսխված էր մնացել արհեստագործական հիմքի վրա, այն ժամանակ, երբ Պետերբուրգում և Մոսկվայում գործում էին առաջնակարգ տեխնոլոգիայի հիման վրա կառուցված խոշոր ձեռնարկություններ: Վերջիններս կլա-

⁹⁶ Նույն տեղում, էջ 229:

⁹⁷ ՂԱԱ, ֆ. 139, գ. 488, ք. 11:

նում էին կաշվի հումքը, բարձրորակ կաշի արտադրում և շուկայից դուրս մղում մանր ձեռնարկությունների ցածրորակ արտադրանքը:

Բրդավազ ձեռնարկությունները ևս տնտեսական նշանակալի դեր ունեին: Այս ձեռնարկությունների հիմնումը կապված էր արտաքին առևտրի հետ: Արտասահման բուրդ առաքելու դժվարությունները թելադրում էին տեղում կազմակերպել դրա նախնական մշակումը: Դոնի և նրա վտակ Թեմերնիկի ափին հիմնադրված գործարաններում բուրդը մինչև որոշ աստիճան մաքրվում, լվացվում ու ճերմակացվում էր: Նովոռոսիայում ուշ է սկսել հիմնվել արտադրության այս ճյուղը:

Բրդավազ ձեռնարկությունները, որոնց թիվը չէր անցնում հինգ-վեցից, տնտեսական կարևոր նշանակություն ունեին նաև հետառֆորմյան շրջանում: Նախիջևանի գործարաններում մաքրվում և տեսակավորվում էր մեծ քանակի՝ տարեկան շուրջ 300 հազար փութ բուրդ: Արտադրության այս ճյուղում միայն Մելքոնով-Եզոկով արտադրական առևտրական հայտնի ֆիրման էր, որն անցել էր բրդի շոգենքենայական մշակմանը:

Հայերն օդու և գինու արտադրությանը ծանոթ էին տակավին հնուց: Նովոռոսիայում խաղողագործությամբ և օղեթորմամբ զբաղվելու համար նրանց առանձնաշնորհումների միջոցով օրենքի ուժ էին տվել:

Այդուհանդերձ, Եկատերինոսլավի նահանգում խաղողի օդու արտադրությունը մեծ ծավալ չի ստանում: Խաղողի օդու և գինու գործը բացառապես նախիջևանցիների և Մարիոպոլի հույների մենաշնորհն էր: 19-րդ դ. սկզբներին Դոնի հայերն արտադրում էին 2000-2500 դույլ գինի, իսկ արտադրված օդու վաճառքից ստացվում էր 30 հազար ռուբլուց ավելի գումար: Հետագայում օդու և գինու արտադրությունը, կորցնելով տնտեսական շահավետությունը, խիստ անկում է ապրում: Այն վերածվում է բնակ-

չության զուտ կենցաղային կարիքները բավարարող աննշան ու աննկատ մի ճյուղի⁹⁸:

Այդուսի և կղմինդրի արտադրությունը պայմանավորված էր տեղում շինարարության պահանջներով և այդ պատճառով էլ տևական բնույթ էր կրում: Դրա պատճառը նաև այն էր, որ Դոնի հարթավայրում քարի և փայտի բնական պակասի պայմաններում առաջին պլան էր մղվում կավանյութը: Այդուսի և կղմինդրի գործարանները, բնակչության պահանջը բավարարելուց բացի, արտադրանքի մի մասը վաճառքի էին հանում Ռոստով, Նովոչերկասկ քաղաքներում: Հետագայում հայկական գյուղերն ունեցել են այդուսի սեփական գործարաններ:

Այդուսի արտադրությունը հետևողականորեն ընդարձակվել է: Կղմինդրի արտադրությունը հետառֆորմյան շրջանում աստիճանաբար նվազել է շենքերի տանիքների կղմինդրը հաճախ թիթեղով փոխարինելու հետևանքով:

Ծխախոտի արտադրությամբ Դոնի հայերը սկսել են զբաղվել 19-րդ դարի կեսերից: Չորս-հինգ հայ վաճառական արդյունաբերողներ հիմնել էին իրենց ֆաբրիկաներն, ուր արտադրվում էր թուրքական մինչև հինգ տեսակի ծխախոտ: Դրանց արտադրանքի քանակը փոքր չէր:

Հետագայում արտադրության այս ճյուղը զարգանում է Ռոստովում և հայ խոշոր արդյունաբերողներն իրենց ձեռնարկությունները հիմնում են այնտեղ: Դրանցից էր Ռուսաստանում և արտասահմանում ճանաչում գտած Դ. Քուլչնարյանի ֆաբրիկան: «Քուլչնարյան ընկերության» կապիտալը հասնում էր մեկուկես միլիոն ռուբլու: Ֆաբրիկան տալիս էր բազում մրցանակների արժանացած բարձրորակ արտադրանք: Նշված ձեռնարկություններից բացի կային մետաքսի, բամբակեղենի, մակարոնի, սննդի ու կենցաղային իրերի արտադրության փոքր կարողության բազմաթիվ այլ ձեռնարկություններ:

⁹⁸ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 241-243:

Նոր Նախիջևանի արդյունաբերության զարգացումն ունեւիր առանձնահատկությունները: Հայկական գաղութն իր ներփակ կյանքով ու համեստ հնարավորություններով ի վիճակի չէր խթանելու խոշոր արդյունաբերության զարգացումը: Այդ պատճառով էլ գաղութի խոշոր արդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկություններ էին հիմնում արդյունաբերական զարգացման համար անհամեմատ ավելի լայն պայմաններ ունեցող քաղաքներում, մասնավորապես Ռոստովում:

Նոր Նախիջևանում զարգանում էր գերազանցապես գյուղատնտեսական արտադրանքը մշակող մանր ու միջին արդյունաբերությունը, մինչդեռ Ռոստովը գնալով դառնում էր մետաղածուլական, քիմիական, ծխախոտի և այլ ճյուղերի խոշոր արդյունաբերության կենտրոն: Նոր Նախիջևանի մանր արդյունաբերությունը գալիս էր համալրելու Ռոստովի խոշոր արդյունաբերության արտադրանքը: Արդյունաբերության և բովանդակ տնտեսական կյանքի աճն ու առաջընթացը բնականորեն մասն համընդհանուր կարգավորման էր հանգեցնում, մասնավորապես որ 19-րդ դարի վերջերից սկսած Ռոստովը Նոր Նախիջևանի հետ տնտեսական-արտադրական մի ամբողջական շրջան էր կազմում:

Երկու քաղաքների արդյունաբերության և պռհասարակ տնտեսական կյանքի կոոպերացման ու միավորման գործում նշանակալից էր զանազան բանկերի ու ընկերությունների դերը: 19-րդ դ. վերջերից սկսեցին հիմնվել այդպիսի միավորումներ:

Առևտուրը: Դոնի ավազանն առևտրի ծավալման վիթխարի հնարավորություններ ուներ: Այստեղ էին հանգուցավորվում ցամաքային ու խոշոր առևտրական ճանապարհները: Դոնի և Ազովի ավազանի վրայով էր անցնում Մոսկվայից Կովկաս տանող կարճ ճանապարհը: Այստեղ էին խաչաձևվում Ռուսաստանի կենտրո-

նական նահանգներից, Դրիմից և Ուկրաինայից եկող ցամաքային ճանապարհները:

Դոն գետը երկրամասի հիմնական ջրային երակն էր, որն իր վտակներով մերձագոյան ու սևծովյան շրջանները կապում էր Վոլգայի, Ռուսաստանի կենտրոնական նահանգների, Մոսկվայի և Հեռավոր Սիբիրի հետ: Դոն գետը Ազով և Սև ծովերի միջոցով կապվում էր Միջերկրականի հետ: Դոնի ավազանը, այսպիսով, զտնվում էր ցամաքային առևտրական ճանապարհների խաչաձևման և Ռուսաստանի ներքին նահանգները, մերձվոլգյան շրջանները, Կովկասը և Նովոռոսիան արտասահմանի հետ ջրային ուղիներով միացնելու հանգուցակետում: Հետևաբար, նրա աշխարհագրական դիրքը և բնական պայմանները նպաստում էին առևտրի զարգացմանը:

Առևտրի ծավալման խնդրում դրիմահայերի ծգտումը լիովին համընկնում էր Նովոռոսիայում պետության վարած քաղաքականությանը: Նոր երկրամասը յուրացնելու, տնտեսական կյանքն աշխուժացնելու գործում առաջնակարգ նշանակություն էր ստանում առևտուրը, ուստի և պետությունը ամեն կերպ խթանում էր նրա ծավալումը: Պատահական չէր, որ կայսերական շնորհագրով դրիմահայերին գետային ու ծովային նավեր կառուցելու, ազատ առևտուր անելու ազատություն էր տրվում: Ի տարբերություն հայկական շատ գաղութների, Նոր Նախիջևանն ուներ նաև երկրագործական ամուր բազա: Դա ևս երկրորդական նշանակություն չունեւր առևտրափոխանակային հարաբերությունների ծավալման համար:

Այսպիսով, Նոր Նախիջևանի թե՛ աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները, և թե՛ արտադրության բնույթը, մյուս կողմից էլ պետության հովանավորող քաղաքականությունը բարենպաստ էին առևտրափոխանակային հարաբերությունների զարգացման համար: Դոնի հայերն ակտիվ մասնակցում էին առևտրափոխանակային հարաբերությունների երկու ձևերին՝ թե ներքին և թե արտաքին առևտրին:

Ի տարբերություն երկրամասի մյուս քաղաքների և առաջին հերթին հարևան Ռոստովի՝ Նոր Նախիջևանն ամենից առաջ հայտնի էր որպես ներքին առևտրի աչքի ընկնող կենտրոն: Նոր Նախիջևանի հայերի առևտրական գործունեության այդ յուրահատկությունն այնքան ակնբախ է եղել, որ իր արտահայտությունն է գտել երկրամասի տնտեսական կյանքը բնութագրող փաստաթղթերում: Տագանրոգի քաղաքապետարանի տարեկան հաշվետվություններում, վիճակագրական նյութերի հավաքածուներում հաճախ կարելի է հանդիպել գրեթե նույնությամբ կրկնվող հետևյալ արտահայտությանը. «Ներքին առևտրով զբաղվում են գերազանցապես Նախիջևան քաղաքի հայերը»:

Ռուսաստանում մինչև 19-րդ դ. կեսերը ներքին առևտրի կարևոր կենտրոններ էին տոնավաճառները: Դրանք կազմակերպվում էին տարվա մեջ երկու անգամ, գարնանը և աշնանը՝ մեկ կամ մի քանի շաբաթ տևողությամբ: Մեծ համարում ուներ արևելյան ժողովուրդների և ռուսների շփման ուղու վրա, Վոլգայի և Օկայի միացման տեղում Մակարևյան կամ Նիժեգորոդյան տոնավաճառը: Դա ներքին առևտրի խոշոր կենտրոն և նախիջևանցիների համար վաճառահանման կարևոր շուկա էր: Նախիջևանի վաճառականները մասնակցում էին նաև ուրիշ քաղաքների և, հատկապես, Ռոստովի տոնավաճառներին:

Տոնավաճառային առևտուրն առևտրի պարզունակ ձև էր և հատուկ էր միջնադարին: Հետոնեֆորմյան շրջանում, կորցնելով երբեմնի նշանակությունը, այն աստիճանաբար վերանում է:

Հայկական գաղութը ներքին առևտրի նշանավոր կենտրոն էր համարվում ոչ այնքան տոնավաճառներին մասնակցելու, որքան որպես մշտական առևտրի գերազանցապես մանրավաճառ ապրանքների վաճառահանման վայր: Նախիջևանում, հարևան քաղաքներում, ինչպես և Հյուսիսային Կովկասի ու մերձագոմյան առևտրական հանգույցներում հայերը խանութներ էին բացել: Նրանք ամբողջ տարվա ընթացքում վաճառում էին բազմապիսի ապրանքներ: 1857թ. Եկատերինոսլավի նահանգի վիճակագրա-

կան պատկերը ներկայացնող նյութերի համաձայն երկրամասի մանր ու միջին քաղաքներն ունեին տասից մինչև քսան առևտրական կրպակ: Խոշոր քաղաքներում կային մեծաքանակ կրպակներ. Տագանրոգում՝ 279, Եկատերինոսլավում՝ 216, Ռոստովում՝ 211, Բախմուտում՝ 148, իսկ Նոր Նախիջևանում՝ 368⁹⁹: Եթե նկատի առնենք, որ հայերը վաճառահանման կետեր ունեին նաև երկրամասի մյուս քաղաքներում, ապա պարզ կդառնան հայկական գաղութի առաջատար դիրքերը ներքին մանրածախ առևտրում:

Անշուշտ ամբողջ ներքին առևտուրը չէր պայմանավորված սոսկ հայկական գաղութի արտադրանքի վաճառքով: Դոնի հայերը սեփական արտադրանքից ավելի մեծ չափերով առևտուր էին անում ուրիշ վայրերից գնված ապրանքներով: Առևտրի հիմնական ապրանքը՝ ցորենն, օրինակ, նախքան արտասահման առաքելը ներքին առուծախի առարկա էր դառնում տեղում: Հայ ցորենավաճառների առևտրի զգալի մասը կազմում էր դրսից, գլխավորապես Ռուսաստանի կենտրոնական նահանգներից գնված հացահատիկը: Քաղաքի հյուսիսային մասի ընդարձակ տարածքում կառուցվել էին մինչև 40-ի հասնող ընդարձակ շտեմարաններ՝ իրենց հարակից շինություններով: Դրանք պատկանում էին հայ վաճառականներին: Նրանք իրենց գործակալների միջոցով գյուղացիներից ցորեն էին գնում և ամբարում: Հացահատիկի ներքին առևտուրն այնքան լայն տարածում էր գտել, որ Նոր Նախիջևանի քաղաքային վարչությունը հատուկ լիազոր էր նշանակում դրա վաճառքը վերահսկելու համար: Շտեմարաններում կուտակված հացահատիկն արտասահման արտահանելու փոխարեն հայ առևտրականներն այն հանձնում էին եվրոպական երկրների հետ առևտուր անող Ռոստովի՝ հիմնականում հույն և հրեա վաճառականներին: Վաճառքի հանվող ցորենի քանակի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ 19-

⁹⁹ Материалы для географии и статистики России (Екатеринославская губерния), Сост. В. Павлович, СПб., 1862, с. 216.

րդ դարի վերջերին, բերքառատ տարում, հայկական գաղութը արտահանում էր 600-700 հազար չետվերտ հացահատիկ¹⁰⁰:

Օդու, մասամբ նաև գինու վաճառքի մեջ ևս նորնախիջևան-ցիները գաղութի հիմնադրման շրջանից մինչև 19-րդ դ. 20-ական թթ., մեծ ճանաչում են ունեցել: Օդու վաճառքից ստացվում էր մեծ դրամագլուխ, մինչև կես միլիոն ռուբլի: Չկնա վաճառությունը ևս հանդիսանում էր ներքին առևտրի էական ճյուղերից մեկը: Որսած ձկան քանակն այնքան մեծ էր, որ դրա 90-95 տոկոսը շուկա էր հանվում: Աղ դրված ու չորացած ձուկը, տակառների մեջ դարսված, հարյուրավոր փթերով վաճառքի էր հանվում Վելիկո-ռուսիայի և Մալոռուսիայի նահանգներում, իսկ թարմ վիճակում վաճառվում էր մերձակա գավառներում: Առուծախի առարկա էին նաև տասնյակ փթերով վաճառքի հանվող ձկան յուղն ու սոսինձը: Հայերը նաև զբաղվում էին անասունների, յուղի, կաշվի և մորթու, ծխախոտի, անտրացիտի և այլ ապրանքների առևտուր:

Նոր Նախիջևանի վաճառականների համար առանձնահատուկ նշանակություն ուներ Հյուսիսային Կովկասը: Նրանք իրենց խանութներն ու կրպակներն ունեին այդ երկրամասի առևտրական գլխավոր վայրերում, ուր հատկապես կտորեղենի ու արդու-զարդի մշտական առևտուր էին անում:

«Նախիջևանի հայերը, — կարդում ենք Կովկասի առևտրին վերաբերող վավերագրերից մեկում, — հատկապես առևտուր էին անում կովկասյան գծում, հանքաջրի վայրում՝ Բատալ Բաշինսկում, Ուստլաբինսկում և այլ տեղերում, Գրոզնի ամրոցում, Նալչիկում և այլուր, առավելապես Գեորգիևսկ և Ստավրոպոլ քաղաքներում: Չերքեզներն այդ տեղերն են բերում իրենց ապրանքները և մթերքները՝ ոչխարի և այծի մորթի, կովի և ձիու կաշի, նապաստակի, աղվեսի և կզաքսի անմշակ մորթիներ, մեղրամոմ, մեղր, կովի չիալած յուղ և ճարպ: Այդ ամենը փոխանակում են Նախիջևանի հայերի քաթանի, յուխտի /մշակված փափուկ կաշվե տեսակ- Վ. Բ./ և այլնի հետ: Փոխանակման միջոցով չերքեզ-

¹⁰⁰ Նոր դար, 1888, թիվ 110:

ներից հայերի ստացած մթերքներից և ապրանքներից կովի յուղը և նապաստակի մորթիները վաճառվում են արտասահման ուղարկելու համար, իսկ մյուսները սպառվում են ռուսական կայսրության քաղաքներում և տոնավաճառներում: Չերքեզների հետ հայերի առևտրի տարեկան շրջանառությունը հասնում էր մինչև երկու միլիոն ռուբլի գումարի»¹⁰¹: Այսպիսով, Նոր Նախիջևանի հայկական գաղութը նկատելի մասնակցություն էր ունենում Նովոռուսիայի և Ռուսաստանի կենտրոնական նահանգների մեծածախ ու մանրածախ առևտրին:

Նոր Նախիջևանի արտաքին առևտրի հիմնական ուղին անցնում էր Ազովի ծովով, Տագանրոգի և Ռոստովի նավահանգիստներով:

Արտահանվող հիմնական ապրանքատեսակ հացահատիկի ծավալներն էապես աճեցին 19-րդ դ. 30-40-ական թվականներից: Նոր Նախիջևանի օկրուգում հացահատիկի մշակումն ավելի ապրանքային բնույթ ուներ, քան հարևան գավառներում: Այսպես, եթե մերձագոլյան գավառների հացահատիկի բերքի 50 տոկոսն էր վաճառքի հանվում, ապա Դոնի հայերի բերքի 75-80 տոկոսը մշտապես շուկա էր հանվում¹⁰²: Այդուհանդերձ, նախիջևանցիների ցորենի առևտրի զգալի մասը շարունակ դրսից գնված հացահատիկն էր: Հայ վաճառականները ցորեն էին գնում Ռուսաստանի հացառատ նահանգներում Արատովում, Վորոնեժում, Օրյոլում, Տամբովում, Եկատերինոսլավում, Խարկովում, Ստավրոպոլում, Դոնի և Սևծովյան կազակային երկրամասերում: Գնած ցորենը ջրային ու ցամաքային ճանապարհներով բերում էին Տագանրոգ կամ Ռոստովի արտասահման մեկնող նավերը բարձելու կամ ցորենի արտահանությամբ զբաղվողներին վաճառելու: Արտասահմանում լայն սպառում էր գտնում և բարձրորակ էր համարվում հայ երկրագործների մշակած արնաուտկա ու գարնովկա, ինչպես նաև աշնանացան կամ կարմրահատ կոչվող ցորենը:

¹⁰¹ ՀԱԱ, ֆ. 139, գ. 1541, թ. 77:

¹⁰² Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 283:

Նոր Նախիջևանի նավամատույցը վերակառուցելու նպատակով Եկատերինոսլավի նահանգապետը դիմում է ֆինանսների մինիստրին և նշում, որ Նախիջևանի հացահատիկի տարեկան շրջանառությունը հասնում է ինը միլիոն փոթի¹⁰³: Ցորենավաճառները մշակել էին վաճառքի հատուկ կանոններ և ստեղծել իրենց համքարությունը:

Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էին մանր ու խոշոր եղջերավոր անասունների ճարպը և կովի յուղը: Նախիջևանի ճարպահալ գործարաններում ստացվող ճարպը լցվում էր տակառները և, գրեթե ամբողջությամբ, առաքվում արտասահման: Արտահանվող ճարպի քանակը հասնում էր տարեկան մինչև 40-50 հազար փոթի: Եթե ձուկը վաճառվում էր երկրի ներսում, ապա ձկնկիթը արտահանվում էր: Նախիջևանի հայ վաճառականները 1844-1845 թթ. ընթացքում վաճառել էին 851 տակառ կամ 27271 փութ ձկնկիթ¹⁰⁴:

Մեծ ծավալ էր ընդունել բրդի արտաքին առևտուրը: Տարեկան արտահանվում էր 200-300 հազար փութ բուրդ: Վաճառքի էր հանվում երկու տեսակի՝ իսպանական ցեղատեսակի նուրբ ու երկարամազ բուրդը և տեղական ռուսականը: Բրդի առևտրով զբաղվող հաստատությունները գտնվում էին Ռոստովում: Ռոստովում հաստատված Մելքոնով-Եզովով ձեռնարկության բարձրորակ արտադրանքը հայտնի էր Ամերիկայում. այնտեղ ֆիրմային պատվերներ էին տալիս ըստ համարանիշերի, առանց ընդունված կարգով նմուշները պահանջելու: Արտասահման էին առաքվում նաև երկաթ, կաշի և այլ ապրանքներ:

Արտասահմանյան երկրներից ներմուծվում էին բուսական յուղ, չոր մրգեր, շաքարավազ, նարինջ, կիտրոն, ձիթապտուղ, տարատեսակ համեմունքներ, ինչպես նաև գորգեր, կտորեղեն և այլ ապրանքներ: Դրանի հայկական գաղութի ներքին և արտաքին

առևտրի տարեկան շրջանառությունը 1840 թ. հասնում էր շուրջ ութ միլիոն ռուբլու¹⁰⁵:

Այդուհանդերձ, հայկական գաղութն իր սահմանափակ հնարավորություններով, միջոց չէր ընձեռում հայ վաճառականներին սեփական կապիտալը տեղում լայն շրջանառության մեջ դնելու համար: Եվ քիչ թե շատ ինքնուրույնաբար հանդես եկող հայ առևտրական կապիտալը, գործունեության ասպարեզ չգտնելով Նոր Նախիջևանում, տարածվում էր մերձագոլվյան ավազանում և Հյուսիսային Կովկասում: Այդ պատճառով էլ Նոր Նախիջևանը չէր կարող առևտրի ծավալման, դրա չափերի իրական պատկերը տալ: Գաղութի հայ վաճառականության առևտրական գործունեությունն ավելի մեծ էր, քան այդ երևում է Նախիջևանի օրինակով:

Նոր Նախիջևանում չկային կամ խիստ սակավ էին շատ մեծ կարողության տեր առևտրականներ: Դրա փոխարեն հայկական գաղութում մեծ էր միջին և փոքր կարողության տեր վաճառականների թիվը: Այդ առումով էլ գաղութին ձեռնտու էր իրեն վերապահված առևտրի ազատության պահպանումը: Նրանց Ռուսաստանի վաճառականության հետ միևնույն պայմաններում դնելը վնասաբեր էր՝ մրցակցությանը դիմանալու տեսանկյունից: Նոր Նախիջևանի և առհասարակ ռուսահայ վաճառականության՝ առանձնաշնորհումները պահպանելու ձգտումը դրսևորվեց վաճառականական կարգի՝ գիլդիաների մեջ մտնելուց խուսափելու երկարատև պայրարի ընթացքում:

Նոր Նախիջևանի, ինչպես նաև ռուսահայ մյուս գաղութների առևտրի մյուս առանձնահատկությունն այն էր, որ դրսում այն ծավալվում էր առավելապես ասիական ուղղությամբ: Ասիական ժողովուրդների լեզվին, սովորույթներին ու բարքերին ծանոթ լինելը, նրանց հետ ունեցած կապերը մեծ չափով նպաստում էին առևտրի ծավալմանը:

Նոր Նախիջևանի և Նոր Նախիջևանի գաղութի միջոցով ընդհանուր առմամբ հայկական գաղութի առևտրի շրջանառությունը 1840 թ. հասնում էր շուրջ ութ միլիոն ռուբլու:

105 Новороссийский календарь на 1840 г., с. 154.

¹⁰³ ՀԱԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20, ք. 2:

¹⁰⁴ Նույն տեղում, ֆ. 139, գ. 1318, ք. 1, 17:

Առևտրի դերը, նրա նշանակությունը հայկական գաղութում շատ մեծ է եղել: Տնտեսական կյանքի հիմնական ճյուղերը գաղութում սերտորեն կապված և փոխներգործության մեջ են եղել միմյանց հետ: Փոխադարձաբար կապված լինելով արտադրության հետ՝ առևտուրը նկատելի չափով ներգործել է նրա վրա: Նոր Նախիջևանի արտադրության՝ արհեստագործության, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջընթացը մի զգալի չափով պայմանավորված է եղել առևտրափոխանակային հարաբերությունների զարգացմամբ:

Ռուսահայ մյուս գաղութների նման Նոր Նախիջևանը ևս ապրել է հասարակական-քաղաքական և մշակութային ուրույն կյանք, որը հայ համայնքի համեստ շրջանակներում լծորդել է երկու ժողովուրդների փոխհարաբերություններն ու կապերը: Ռուսահայ գաղութներն արձագանգել ու մասնակցել են մի կողմից՝ ռուսական, մյուս կողմից՝ մայր հայրենիքի հասարակական կյանքի գլխավոր իրադարձություններին:

Դոնի հայ զանգվածն ակտիվ արձագանքել է ռուսական կյանքի խոշոր անցուդարձերին, մասնավորապես երկրին սպառնացող արտաքին վտանգների ժամանակ: Առաջին այդպիսի խոշոր իրադարձությունը 1812 թ. Հայրենական պատերազմն էր: Դեռևս պատերազմից առաջ տեղական աշխարհագորներ կազմակերպելու համար հայ հասարակությունը նվիրաբերում է դրամական մեծ գումար և պարենամթերք:

Դոնի հայ գաղութն առավել գործուն մասնակցություն է ունեցել Դրիմի 1853-1856 թթ. պատերազմին: Հայերը դրամական, պարենի, տրանսպորտի մեծ օգնություն են կազմակերպել ռուսական զորքին: Բավական է ասել, որ 1854-1856 թթ. հայ համայնքն իր միջոցներից պատրաստում է 10500 փութ պաքսիմատ և նվիրում բանակին: Դրանից գատ, առանձին քաղաքացիներ, այդ թվում՝ վաճառականներ Կ. Հայրապետյանը և Ա. Խալիբյանը,

իրենց սեփական միջոցներից պարենի մեծաքանակ նվիրաբերություն են կատարում: Կայսրն, իմանալով հայ հասարակության գովելի արարքը, պաշտոնապես շնորհակալություն է հայտնում:

Դոնի հայությունը սիրալիր ընդունում է զինվորական գումարտակներ, օթևան հատկացնում, կերակրում և տրանսպորտի իր միջոցներով տեղափոխում դեպի ռազմաճակատ: Նախիջևանի բնակիչներն, օրինակ, 1854 թ. ընդունել և փետրվարի 27-ից մարտի 17-ը բնակարանով ու պարենով ապահովել են մոսկովյան հետիոտն զնդի չորս գումարտակ: Շոշափելի էր հայ համայնքի աջակցությունը նաև վիրավորներին ու սևծովյան առափնյա ռազմական գծի ամրությունները պայթեցնելու, անօթևան մնացած զինվորների ընտանիքներին բնակարանով ու սննդամթերքով ապահովելու, վիրավոր զինվորներին խնամելու գործում: Նիկոլայ 1-ին կայսրը շնորհակալություն է հայտնում Դոնի Նախիջևան քաղաքի բնակիչներին՝ իրենց հայրենամկեր և մարդասիրական զգացմունքի համար ու քաղաքը պարգևատրում «Ջանասիրության համար» ոսկե մեդալով և «Վլադիմիրյան ժապավենով»: Դոնի հայությունն իր հայրենասիրական վերաբերմունքն է դրսևորում նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և Առաջին աշխարհամարտի ժամանակ¹⁰⁶:

Նոր Նախիջևանի հայկական գաղութը համանման ձևով արձագանքում և սրտամոտ վերաբերմունք էր ունենում նաև երկրի մշակութային կյանքում կատարվող խոշոր իրադարձություններին: 1899 թ. բովանդակ Ռուսաստանում նշվում էր Ա. Պուշկինի ծննդյան 100-ամյակը: Գաղութի հասարակությունը կազմակերպում է մեծ ցերեկույթ և պոետի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա անունով կոչում քաղաքային գրադարանը: Հայ համայնքն արձագանքում և նշում է նաև Ն. Գոգոլի ու Վ. Ժուկովսկու մահվան 50-ամյակները, որոշում քաղաքում բացել նրանց անունը կրող դպրոցներ:

¹⁰⁶ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 311-322:

Հայ հասարակությունը մեծ նշանակություն է տալիս Լ. Տոլստոյի ծննդյան 80-ամյա հոբելյանին: Դումայի խոսնակ Ա. Սալտիկովի առաջարկով որոշվում է քաղաքի «Ոստիկանական» հրապարակը վերանվանել մեծ գրողի անունով և բացել նրա անունը կրող յոթնամյա ուսումնարան: 1914 թ. Ս. Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ քաղաքային վարչությունը 4000 ռ. զումար է հատկացնում գրողի նկարը ձեռք բերելու և ժողովրդի մեջ տարածելու համար: Տեղական թերթերը տպագրում են նրա ստեղծագործությունները, հրապարակում նրա մասին բազմաթիվ հոդվածներ¹⁰⁷:

Դոնի հայությունն աշխույժ հարաբերությունների մեջ էր մայր հայրենիքի և հայկական գաղութների հետ: Մայր հայրենիքի հետ կապերն ու շփումներն իրականացնում էին բազում եղանակներով: Այն կատարվում էր առաջին հերթին եկեղեցու միջոցով: Սեփական պետության բացակայության պայմաններում հայ եկեղեցու միավորիչ դերը, դրա գործունեության համահայկական ընդգրկումն ավելի նշանակալից էին դառնում:

Նախիջևանցիներն ունեին կրոնական սովորույթով պայմանավորված մայր հայրենիքի հետ կապվելու ավանդույթ: Դոնի հայության մեջ շատ տարածված էր Երուսաղեմ և Մշո Ս. Կարապետի վանք ուխտագնացություն կատարելը: Երուսաղեմ էին գնում մեծահասակներն իրենց «մեղքերը» քավելու համար: Երիտասարդ կտրիճները, հասակ առնելով, ուխտում էին գնալ Սուշ, այցելել Ս. Կարապետի գերեզմանը, վերադարձից հետո իրենց «մուրազին» հասնելու, ընտրած աղջկա հետ ամուսնանալու համար: Դոնի հայերն իրենց համարում էին անեցիների հետնորդներ: Ուստի և Ս. Կարապետ այցելելը զուգակցում էին Անի մեկնելու ուխտագնացությանը:

Ուխտագնացությունը տևում էր երկու-երեք ամիս: Նախիջևանի հեծյալներն անցնում էին Թիֆլիս-Երևան-Էջմիածին գծով: Այդ ընթացքում նրանք հնարավորություն էին ունենում ի

¹⁰⁷ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 420-421:

մոտո ծանոթանալու Անդրկովկասի ու Հայաստանի հայության կյանքին: Գաղութի բնակիչները բազմամարդ խմբերով էջմիածին էին մեկնում նաև ներկա գտնվելու մեռոն օրհնեքի համոզաներին: Կրոնական այդ ծիսակատարությունը ևս հայրենի երկրի հետ կենդանի կապեր հաստատելու լավագույն առիթ էր ընձեռում:

Կենդանի կապերի և ստացվող տեղեկությունների միջոցով բուն Հայաստանում իրազեկ էին դառնում ռուսահայ զանգվածների դրությանը: Ռուսահայերի բարվոք վիճակը ներազդող օրինակ էր թուրք-պարսկական ծանր լծի տակ հեծող հայ ժողովրդի համար:

Դոնի հայությունը սերտ կապերի մեջ էր ռուսահայ համայնքների և այլ երկրների գաղթօջախների հետ: Ռուսաստանի հայկական զանգվածների հետ այդ կապերը դրսևորվում էին համառուսական խոշոր իրադարձություններին արձագանքելու, մայր հայրենիքի հետ այլևայլ խնդիրներով առնչվելու ժամանակ: Նոր Նախիջևանը, որպես առավել հայաշատ օջախ, գտնվում էր այդ փոխհարաբերությունների կենտրոնում: Օրինակ, Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության համար Դոնի հայ գաղութից ընտրվում էր մեկ պատգամավոր: Ակկերմանի, Քիշնևի և այլ հայ համայնքները Նախիջևանի առաջադրած թեկնածուին համարում են նաև իրենց պատվիրակը: Քանի որ ռուսահայ գաղութներում ծվարած հայության ամենաստվար մասը կենտրոնացված էր Նոր Նախիջևանում, մայրաքաղաքի հայ հասարակությունը ևս հարգում էր նրանց ընտրությունը և միանում է դրան¹⁰⁸:

Դոնի հայերը շփումների մեջ էին նաև այլ երկրների հայ զանգվածների և առաջին հերթին Կոստանդնուպոլսի հայության հետ: Աշխույժ կապեր Կ. Պոլսի հայերի հետ գոյություն ունեին տակավին դրիմյան շրջանից: Նորնախիջևանցիները ոչ միայն մոռացության չտվեցին Բոսֆորի ափին հաստատված հայրենակիցների հետ վաղեմի կապերը, այլև դրանք դարձրին ավելի բանուկ: Նախիջևանի որոշ վաճառականներ Կ. Պոլսում ունեին

¹⁰⁸ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 327-330:

մշտական խանութներ, գրասենյակներ: Տնտեսականից զատ կային նաև մշակութային կապեր: Եվ պատահական չէ, որ ջրային ուղիներով իրար հետ կապված երկու հայկական գանգվածների կյանքում շատ ընդհանրություններ կային: 19-րդ դ. 40-ական թթ. ֆրանսիացի երկրաբան Յոնեթ դը Յելլը, շրջելով Նոր Նախիջևանում, այնպիսի տպավորություն է ստանում, որ իրեն թվում է, թե գտնվում է Կոստանդնուպոլսում:

Դոնի հայկական գաղութը հենց հիմնադրման ժամանակվանից շփումների մեջ էր հեռավոր հնդկահայ օջախների հետ:

Նոր Նախիջևանի հիմնադրման առաջին տարիներին ռուսահայ թեմի առաջնորդ Դ. Արղությանը դիմում է հայաշատ օջախներին՝ նյութապես օգնելու նորահաստատ գաղութին: Նոր Նախիջևանում դպրոց, տպարան, աղքատանոց բացելու նպատակով մեծագումար նվիրատվություններ են կատարվում Զնդկաստանի տարբեր վայրերից: Բոլոր այդ նվիրաբերությունների մեջ առավել նշանակալիցն Մասեհ Բաբաջանյանի կտակն էր՝ 100 հազար ռուբլի: Այդ գումարը ստանալու և իր նպատակին ծառայեցնելու հարցը քանիցս բարձրացվում է, բայց միշտ էլ մնում է անհետևանք: 1859 թ. «Յյուսիսափայլ» թերթում Միքայել Նալբանդյանը կրկին հրապարակ է հանում այդ խնդիրը: Նոր Նախիջևանի հայ հասարակությունը ջերմորեն արծագանքում և Մ. Նալբանդյանին ընտրում է պատվիրակ՝ կտակված գումարը ստանալու: Նալբանդյանը 1861 թ. հունիսին հասնում է Կալկաթա: Բավականաչափ արգելքներ հաղթահարելուց հետո Նալբանդյանին հաջողվում է ստանալ կտակված գումարի կեսը և հաջորդ տարվա հուլիսին վերադառնալ հայրենի քաղաք: Նա քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին խնդրում է հայ հասարակության ժողով գումարել կտակների մասին հաշվետու լինելու համար: Հաջորդ օրը ոստիկանությունը խուզարկում է Մ. Նալբանդյանի բնակարանը և բանտարկում նրան: Ճանաչված հրապարակախոսի և գործչի բանտարկությունը մեծ հուզմունք է առաջացնում Նոր Նախիջևանի հասարակության մեջ: Կոստանդ-

նուպոլսի, Փարիզի առաջադեմ հայ մամուլն արծագանքում և ցավ է հայտնում այդ առթիվ: Այդուհանդերձ, Նալբանդյանին հաջողվեց ստանալ վեց տասնամյակ անշարժ մնացած հնդկահայ ժառանգության մեծ մասը՝ 53 հազար արծաթե ռուբլի¹⁰⁹:

Հայաստանի հետ գաղութի հասարակական-մշակութային կապերն ու շփումները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբին ավելի աշխույժ ու սերտ են դառնում: Երկաթուղիների և առհասարակ հաղորդակցության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց նաև ուսանող երիտասարդության և մտավոր գործիչների փոխայցելություններին: Արդեն սովորություն էր դարձել Նոր Նախիջևանի ուսումնարանների բարձր դասարանների աշակերտների այցելությունները Հայաստան և Անդրկովկասի հայաշատ վայրերը: 1909 թ. թեմական դպրոցի տեսուչ Ե. Շահազիզը հոգաբարձությունից միջոցներ էր խնդրում աշակերտների ուղևորությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար: Նա հիմնավորում էր դրա անհարժեշտությունը. «Նկատված է, - գրում էր նա, - դպրանոցիս աշակերտները հայրենիքից հեռու, օտարության մեջ ծնված և սնված լինելով, վերացական մի բան են համարում իրենց սովորածները և լավ չեն կարողանում տպավորել իրենց սրտերում մայր հայրենիքին վերաբերող ամենաեական և իրական տեղեկությունները: Ամեն բան իրենց աչքով տեսնելու հնարավորություն տալու, ամեն բան նրանց համար շոշափելի դարձնելու նպատակով շատ ժամանակ դեռ առաջ միտք էր հղացել պարբերաբար կազմելու աշակերտների ճամփորդություններ դեպի հայրենիք, դեպի նրա նվիրական տեղերը»¹¹⁰:

Նոր Նախիջևանի նշանավոր դեմքերն այցելում էին Հայաստան ու Անդրկովկասի հայկական կենտրոններ, որը ևս ամրապնդում էր ազգակիցների հետ ունեցած կապերը: Այսպես, օրինակ, 1880 թ. դեպի հայրենիք ուղևորություն է կատարում Ռ. Պատկանյանը, լինում է Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում: Վերադարձից

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 333-338:

¹¹⁰ ՀԱԱ, ֆ. 55, ց. 1, թղթ. 1, գ. 73:

հետո հրատարակում է իր ճանապարհորդական տպավորությունները: «Մշակ» թերթի 40-ամյա հոբելյանի առթիվ 1912 թ. Թիֆլիս է այցելում Գր. Չախուշյանը:

Տեղի էր ունենում նաև հակառակ երևույթը: Հայ նշանավոր գործիչների հաճախ այցելում էին Նոր Նախիջևան: Աշխարհագրական հարմար դիրքը և լիաթոք ազգային ոգով ապրող Դոնի հայության հասարակական հետաքրքիր կյանքն անհրաժեշտ էին դարձնում նման փոխայցելությունները: Դրանք էական նշանակություն էին ունենում գաղութի հասարակական մթնոլորտն ազգային ոգով արգասավորելու տեսակետից: 1830 թ. Դորպատ մեկնելու ճանապարհին Խաչատուր Աբովյանն այցելում է Նոր Նախիջևան մնում է տաս-տասնհինգ օր, ժամոթանում Գաբրիել և Պետրոս Պատկանյանների հետ: Պատկանյան եղբայրներին Դորպատից ուղարկած նամակում Աբովյանը դրվատանքով է խոսում քաղաքի և քաղաքագլուխ Խաչիկ Խոմաճյանի մասին, խնդրում հաղորդել նրան նաև Պարրոտի ողջույնը¹¹¹: 1866 թ. ամռանը Նոր Նախիջևան է այցելում Ս. Նազարյանը, որն այնտեղ մնում է մի քանի շաբաթ, ունենում ելույթներ ու հանդիպումներ:

1912 թ. Նոր Նախիջևանի քաղաքային թատրոնի շենքում հայ միջնադարյան արվեստի մասին դասախոսություն է կարդում հայոց պատմության ու մշակույթի քաջ գիտակ Գ. Հովսեփյանը: Մի քանի տարի անց նա նախիջևանցիների առաջ հանդես է գալիս հայ գրի և գրչության արվեստի զարգացմանը նվիրված գեկուցումով: Արևմտահայ նշանավոր գրող Ջապել Եսայանը 1916 թ. Նոր Նախիջևանում գեկուցում է կարդում «Արևմտահայ գրականությունը» թեմայով:

Դոնի հայության հասարակական կյանքում կարևոր երևույթ էին Ամենայն հայոց կաթողիկոսների այցելությունները: Նրանք, ռուսահայ թեմերն այցելելու ժամանակ, մանավանդ ռուսաց կայսեր կողմից ընդունվելուց հետո վերադարձի ճանապարհին, որպես կանոն, կանգ էին առնում Նոր Նախիջևանում: Հայ հոգևոր

¹¹¹ Աբովյան Խ., ԵԼԺ, 10-րդ հատոր, Եր., 1961, էջ 135:

պետերի ժամանումը, իրավամբ, դիտվում էր որպես ամբողջ հայ ժողովուրդը ներկայացնող համազգային գործչի այցելություն և բնականաբար լայն արձագանք էր գտնում: 1867 թ. Աստրախանից Նախիջևան է գալիս կաթողիկոս Գևորգ 4-րդը և արժանանում բարձր ընդունելության: 1895 թ. Նոր Նախիջևան է այցելում հայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, կաթողիկոս Խրիմյան Հայրիկը:

1909 թ. Նոր Նախիջևան է ժամանում կաթողիկոս Մատթեոս 2-րդ Իզմիրյանը¹¹²:

1913 թ. նշվում է համազգային խոշոր իրադարձության՝ հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյա հոբելյանը: Նշանավոր այդ իրադարձությանը անմիջապես արձագանքում է Դոնի հայությունը: Տեղական մամուլում հոդվածներ են տպագրվում, որոնցում բացահայտվում է դրանց համազգային նշանակությունը¹¹³:

Քաղաքի և հայկական գյուղերի բնակիչները պատկառելի գումար՝ 50 հազար ռուբլի, դրամագլուխ են հավաքում և ամբողջությամբ նվիրում դպրոցական գործին:

Երբեմն Նոր Նախիջևանում տեղի ունեցող հասարակական, մշակութային երևույթները դուրս էին գալիս գաղութի նեղ շրջաններից և ձեռք բերում համազգային նշանակություն: Այսպես, օրինակ, Դոնի հայությունը վճռում է հուշարձաններ կանգնեցնել վանքի բակում թաղված իրենց մեծ հայրենակիցներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմներին: Նվիրատվությունների միջոցով հավաքվում է գումար և քանդակագործ Ա. Տեր-Մարությանին պատվիրվում նրանց կիսանդրիները: Նախատեսվում էր 1901 թ. սեպտեմբերին կատարել Ռ. Պատկանյանի, իսկ հաջորդ տարի Մ. Նալբանդյանի հուշարձանների բացումը: Հուշարձանների բացման հանդեսներին մասնակցում էին տարբեր տեղերից ժամանած պատվիրակներ: Հրապարակվում են հեռագրեր

¹¹² Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 120:

¹¹³ Նույն տեղում, էջ 194-195:

«Մշակ», «Լուսն», «Մուրճ» թերթերի խմբագրություններից, ռուսահայ համայնքներից, Բաքվից, Ղարաբաղից, Կարսից, Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Ներսիսյան դպրոցի և այլ վայրերի ուսուցչական կոլեկտիվներից և աշակերտությունից: Ռ. Պատկանյանի վաստակը դրվատող ջերմ հեռագրեր են ստացվում նշանավոր գրողներ Գ. Սունդուկյանից, Պ. Պռոշյանից, Ս. Շահագիզից և շատ ուրիշներից: Ռ. Պատկանյանի հուշարձանի բացումն ընդունում է հայկական մշակույթի գնահատման համազգային բնույթ¹¹⁴:

Դոնի հայկական գաղութի կապերը Մայր հայրենիքի հետ հաճախ գործնական աջակցության բնույթ էին ընդունում: Նոր Նախիջևանում իմանալով, որ միջոցների պակասի հետևանքով ձգձգվում է Էջմիածնի ճեմարանի կառուցումը, 1500 ռ. գումար են նվիրաբերում շենքի շինարարությունն ավարտելու համար: Ապա հայկական գյուղերի հետ միասին ավելի քան 1400 ռ. գումարով ճեմարանի սաների համար գնում են մահճակալներ, անկողին և այլ անհրաժեշտ ապրանքներ: Առանձին քաղաքացիներից Խ. Բախչիսարայցը ճեմարանին նվիրում է 1500 ռ., Ս. Քուշնարյանը 200 ռուբլի, իսկ Մայր Աթոռի տպարանի կարիքների համար ևս 200 ռ. գումար¹¹⁵:

Նոր Նախիջևանում հետևում էին Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին և ամեն կերպ ջանում նպաստել հարազատ ժողովրդի ազատագրման կամ նրա հոգսերը թեթևացնելու գործին: Հասարակական այդ մթնոլորտն արգասավորվում էր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի գործունեության շնորհիվ: Արևմտահայության մարտական ոգին կոփելուն կոչված Ռ. Պատկանյանի ռազմաշունչ բանաստեղծությունները ձեռքից ձեռք էին անցնում: Իմանալով Բեռլինի վեհաժողովի և եվրոպական զորեղ պետությունների կողմից հայերի օրինական պահանջներն անտեսելու մասին՝ Պատկանյանը գրում է «61-րդ -

հողված», «Վեհաժողով» բանաստեղծությունները և զայրույթով դատապարտում է մեծ տերությունների վարքագիծը:

Թուրքիայում 1895-1896 թթ. տեղի ունեցած հայկական ջարդերի հետևանքով արևմտահայերի համար առաջացած ծանր պայմաններում Դոնի հայությունը մեծ գումարի՝ 45.000 ռ. նվիրատվություն է կատարում: Գաղութի նշանավոր գործիչ Մ. Բերբերյանն իր միջոցներով բացում է որբանոց:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության կոտորածների հետևանքով գաղթականության մեծ հոսք սկսվեց դեպի Ռուսաստանի հայաբնակ վայրերը: Փախստականների օգնությանը կազմակերպված ընթացք տալու համար Նոր Նախիջևանը բաժանել էին 26 տեղամասերի, յուրաքանչյուր տեղամասում նշանակել պատասխանատու անձ: 1915 թ. հունվարին արդեն Նոր Նախիջևանը պատսպարում էր 500 գաղթականների: Այդ նույն ժամանակ Անդրկովկասում պատսպարված փախստականների օգտին ուղարկվում է 20.000 ռ. գումար և մեծ քանակությամբ հագուստ: Դոնի հայությունը որբանոց է բացում և 250 որբերի վերցնում իր խնամքի տակ¹¹⁶:

Դոնի հայության հասարակական կյանքն ալեկոծող հիմնական հարցերից մեկը գաղութի առանձնաշնորհումները պահպանելու խնդիրն էր: Այդ հարցն ամենայն սրությամբ դրվեց 1861 թ. գյուղացիական և դրան հաջորդած մյուս ռեֆորմների իրականացման ժամանակ: Պետական ատյաններում բազմակողմանի քննարկումներից հետո 1870 թ. վերացվում է հայկական մագիստրատի գործունեությունը, հետևաբար նաև գաղութի ինքնավարությունը:

Նոր Նախիջևանի առանձնաշնորհումները վերացնելու ընթացքում քննության նյութ դարձավ հայկական գյուղերի և նրանց պատկանող հողատարածությունների խնդիրը: Երկարատև քննարկումներից հետո կառավարիչ Սենատը 1875 թ. մարտի 18-ին ընդունեց որոշում: Այդ որոշման համաձայն, Եկատերինոսլա-

¹¹⁴ Նույն տեղում, էջ 195-196:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 198:

¹¹⁶ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 428:

վի նահանգի հունական և հայկական գյուղերի բնակչությունը դրվեց պետական գյուղացիությանը համահավասար դրության մեջ: Անփոփոխ թողնվեցին գյուղացիների ընդարձակ հողաբաժինները, որոնց նրանք տիրելու էին լիիրաժ սեփականատիրական իրավունքներով:

Նոր Նախիջևանի ինքնավարությունը վերացնելուց հետո թվում էր, թե Դոնի հայ զանգվածը կարող է կորցնել իր ազգային նկարագիրը: Սակայն ստեղծվեցին ժամանակի ոգուն համահունչ և դրան արձագանքող այնպիսի նոր հաստատություններ, որոնք նոր պայմաններում գալիս էին փոխարինելու Դոնի հայության ինքնավար գոյությունը մարմնավորող նախկին հաստատություններին: Դրանցից առաջինը Նոր Նախիջևանի Բարեգործական ընկերությունն էր, որի կանոնադրությունը 1866 թ. կառավարությունը հաստատում է: Ընկերության նպատակն էր օգնել գաղութի աղքատ ընտանիքներին՝ իրենց զավակներին կրթություն տալու գործում, նպաստել գաղութում լուսավորության տարածմանը:

Ավելի համեստ դեր ունեւր «Մարդասիրական ընկերությունը», որը հիմնվեց 1867 թ. Եպիփան Պոպովի ջանքերով: Ընկերության միջոցները փոքր էին և ծախսվում էին գերազանցապես Ս. Խաչ վանքի ժառանգավորաց դպրոցի պահպանման վրա:

Մի խումբ առաջադեմ կանանց և օրիորդների նախաձեռնությամբ 1882 թ. հիմնվում է «Հայուհյաց խնամատար ընկերությունը»: Ընկերությունն իր վրա է վերցնում նյութական միջոցների մեծ կարողություն ունեցող Ս. Հռիփսիմյանց օրիորդաց դպրոցի խնամատարությունը: «Հայուհյաց ընկերությունը» աստիճանաբար հեղինակություն է ձեռք բերում և ճանաչում գտնում որպես Դոնի հայկական գաղութի օգտավետ հաստատություններից մեկը:

Գաղութի ազգային հաստատությունների մեջ առավել նշանավոր էր եկեղեցական հոգաբարձության դերը, որի հիմնադրման պատճառը եղել է Նոր Նախիջևանի կտակված գումարները նպատակահարմար ձևով տնօրինելու անհրաժեշտությունը: Գա-

ղութի ինքնավար մարմինները վերացնելուց և 1874 թ. քաղաքային ռեֆորմը կիրառելուց հետո Նոր Նախիջևանը դրվեց կայսրության մյուս քաղաքներին համահավասար իրավիճակում: Հետզհետե ավելանում էր քաղաքի այլազգի բնակչությունը: Նման պայմաններում կտակների տնօրինումը թողնել քաղաքազլխի իրավասության տակ կնշանակեր այդ եկամուտները գործադրել քաղաքի ամբողջ բնակչության օգտին: Դա նախ կհակասեր կտակների գործադրման նպատակներին և, բացի այդ, ձեռնտու չէր լինի հայ համայնքին: Կտակավանդ գումարները և այլ միջոցները միայն Դոնի հայությանը ծառայեցնելու ձգտումը ծնունդ տվեց կտակների խնդրով զբաղվող հատուկ հաստատություն հիմնելու մտայնությանը: 1889 թ. կառավարության հաստատումով հիմնվեց «Նոր Նախիջևանի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը»: Այս հաստատության ձեռքում կենտրոնացվեց կտակների ամբողջ գործը: Բարեգործական մյուս հաստատությունների նման հոգաբարձությունը ևս իր նպատակն էր համարում հոգալ աղքատների կարիքները: Այդ խնդիրը իրականացնելիս նա ոչ միայն աղքատներին էր օգնություն հասցնելու, այլև միջոցներ էր հայթայթելու եկեղեցիներին կից դպրոցներ, անկելանոցներ և նմանօրինակ այլ հաստատություններ բացելու:

Եկեղեցական հոգաբարձությունը գաղութի ամենահարուստ և արդյունաշատ հաստատությունն էր: Նրա տարեկան եկամուտներն անցնում էին 50 հազարից, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հասնում էին շուրջ մեկ միլիոնի: Հոգաբարձության միայն անշարժ կայքը, որը գնահատվում էր 746 հազար ռուբլով, Նախիջևանից զատ, գտնվում էր նաև Ռոստովում, Եկատերինոդարում, Տազանրոգում, Կամենսկայա ավանում և հեռավոր Կալկաթայում: Հոգաբարձության հաստատություններն էին որբանոցը, անկելանոցը և ճերմակեղենի դպրոցարհեստանոցը:

Բարեգործական ընկերություններն ազգօգուտ գործունեություն են ծավալում ուսման, լուսավորության, Դոնի հայության հասարակական կյանքի, նրա ազգային նկարագիրը պահպանելու գործում: Միայն Նոր Նախիջևանի Բարեգործական ընկերության միջոցներով 1910 թ. ուսանում էին 114 սաներ: Ընկերությունը նախապատրաստեց և երեք հատորով հրատարակեց Ռ. Պատկանյանի և երկու հատորով՝ Մ. Նալբանդյանի երկերը: Հատկանշական է, որ ընկերության անդամներ էին նաև Մոսկվայի, Աստրախանի, Եկատերինոդարի և հայաշատ այլ վայրերի ներկայացուցիչներ¹¹⁷:

Դոնի հայությունը հատկապես երիտասարդությունը ակտիվ մասնակցություն է ունենում երկրի դեմոկրատական շարժումներին: 1870-80-ական թթ. արևելահայ իրականության դեմոկրատական խմբավորումների մեջ առաջավոր մտավորականությունը նարոդնիկությունն էր, որի մեծագույն մասը սովորող երիտասարդությունն էր: Դոնի հայկական գաղութի երիտասարդության շատ ներկայացուցիչներ մասնակցում էին նարոդնիկական «Ձեմյա ի վոյա» և «Նարոդնայա վոյա» կազմակերպությունների տեղական խմբակների աշխատանքներին: Նրանց շարքերում էին Ս. և Պ. Փեշեքերովները, Յ. Շապովալովը, Ռ. Չերնիչևը, Մ. Պոպովը, Մ. Կայալովը և շատ ուրիշ հայեր: Նրանցից շատերը բանտարկվեցին և հալածանքների ենթարկվեցին: Ռոստով-Նախիջևանյան նարոդնիկական խմբակները կապված էին Մոսկվայի և Պետերբուրգի ուսանողության հետ¹¹⁸:

Հայկական գաղութում աստիճանաբար ձևավորվում են հայ հեղափոխական դաշնակցության և սոցիալ-դեմոկրատական կուսակցության առանձին խմբեր: Դաշնակցական կուսակցության ներկայացուցիչներն իրենց գործունեությունն ակտիվացնում են 1903 թ. եկեղեցական գույքի բռնագրավման ժամանակ: Նոր Նա-

խիջևանը կուսակցական առումով նրանք կոչում էին «Նալբանդի» շրջան: Դաշնակցական կուսակցության տեղի ակտիվ գործիչներից էին «Նալբանդ» կազմակերպության ղեկավար, թեմականի ուսուցիչ Համբարձում Տերտերյանը և Սիմոն Վրացյանը: Վերջինս Նոր Նախիջևանում լինելու ընթացքում մասնակցում էր տեղի կուսակցական գործերին:

Գաղութի երիտասարդության շրջանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպության եռանդուն գործիչներից էին թեմական դպրոցի նախկին սաներ Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին) և Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրանք հաճախ էին լինում իրենց ծննդավայրում և ակտիվ ներգրավվում տեղի հասարակական-քաղաքական կյանքի մեջ:

1917թ. վերջին գաղութի բոլոր կուսակցությունների մասնակցությամբ ընտրվում է 60 հոգուց բաղկացած «Հայ համայնական խորհուրդը»: Խորհրդի նախագահ է ընտրվում Ռ. Բերբերյանը, իսկ գործադիր մարմինը՝ Համայնական վարչությունը, գլխավորում էր Ե. Շահագիզը: Համայնական խորհուրդը դարձավ ոչ միայն Նոր Նախիջևանի, այլև հարավային Ռուսաստանի ցիրուցան հայության մշակութային կյանքի այն տնօրենը, որը ինչ-որ չափով ներկայացնում ու պաշտպանում էր հայության շահերը տեղական իշխանությունների առջև¹¹⁹:

Դոնի հայությունը կարողացավ պահպանել ազգային մշակույթի ավանդները և նոր պայմաններին համապատասխան մշակակալից չափով զարգացնել այն: Գաղութի մշակույթի առանձին ճյուղերի զարգացումն ուներ հետևյալ պատկերը:

Կրթությունը: Մատաղ սերնդին ուսուցանելու և դպրոց բացելու խնդիրը մտահոգել է ժամանակի գործիչներին դեռևս գաղութի հիմնադրման տարիներին: Գաղութի հիմնադրումից մի քանի տարի անց Նոր Նախիջևանում բացվում է առաջին վարժարա-

¹¹⁷ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 152-159:

¹¹⁸ Стів Терещенко А. Г., Новоахичеванцы в революционном народническом движении, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1975 N 4:

¹¹⁹ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 264:

նը: Այդ նույն ժամանակ հիմնվում է նաև Ս. Խաչ վանքի դպրոցը: Վերջինս գաղութում առաջին հայկական գիշերօթիկ դպրոցն էր: Աշակերտները բնակվում էին վանքում, սնվում ու սովորում վանքի հաշվին: Դպրոցն աշխույժ կյանք սկսեց այդ տարիներին վանքում տպարան հաստատելու (1790 թ.) շնորհիվ: Նշված և հիմնված մյուս վարժարաններում ուսումնական գործը բարվոք վիճակում պահելու նպատակով նորնախիջևանցիներն որակյալ ուսուցիչներ են հրավիրում: Աստրախանից հրավիրվում է Սերոբվե Պատկանյանը, որը և նկատելիորեն բարելավում է ուսումնական գործը: Այդուհանդերձ Դոնի հայկական գաղութում ժամանակի պահանջներին համապատասխան դպրոց ունենալու հարցը մնում էր չլուծված: Գաղութի բնակչությունը չէր հաշտվում միայն ծխական դպրոցներ ունենալու իրողության հետ: Երկարատև դիմումներից ու զրազրություններից հետո 1850 թ. բացվում է գավառային ուսումնարանը: Այն նկատելի չափով տարբերվում էր ժամանակի ծխական վարժարաններից: Գավառային ուսումնարանը Նոր Նախիջևանի երկարակյաց ուսումնական հաստատություններից էր¹²⁰: Թեև 1857 թ. քաղաքում բացվել էր առաջին իգական դպրոցը, Դոնի հայկական գաղութը 19-րդ դարի երկրորդ կես էր քակոխում ուսումնական գործի ոչ այնքան բարվոք վիճակով: 1860-ական թթ. կեսերին քաղաքում կար չորս ուսումնարան:

Այդ պատճառով էլ բարձրորակ դպրոց ունենալու ցանկությունները և այդ ուղղությամբ գործադրվող ջանքերն ավելի ու ավելի ուժգին էին արտահայտվում: Ազգի լուսավորության մեջ նրա ապագան տեսնող Ստեփանոս Նազարյանը Նախիջևանում ազգային լուրջ դպրոց հիմնելու անհրաժեշտության մասին գրում էր. «Այս պատճառով մտածում ենք, որ դպրոցի առավել պատշաճավոր տեղն է Նախիջևանը, Դոն գետի վրա, Ազովյան, ուրեմն և

Սև ծովին շատ մոտ, իսկ ժողովուրդը բոլորովին հայ և մոտ 20.000 հոգի յուր շրջակա գյուղերով»¹²¹:

1860-ական թթ. բացված ուսումնարանների մեջ նշանավոր էր Սուրբ Խաչ վանքում հիմնված ժառանգավորաց դպրոցը: Այդ դպրոցը հիմնադրվեց 1868 թ. մարդասիրական ընկերության կողմից: Կանոնադրության համաձայն, քանի որ դպրոցը կոչված էր հոգևոր գործիչներ պատրաստելու, լինելու էր կաթողիկոսի ընդհանուր և Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդի անմիջական հսկողության տակ: Դպրոցում, բացի կրոնին վերաբերող առարկաներից, ավանդվում էին նաև պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն, երկրաչափություն և այլ առարկաներ: Թեպետև դպրոցի խնդիրը հոգևոր գործիչներ պատրաստելն էր, սակայն գործնականում այն աշխարհիկ բնույթ ուներ: Այսուհանդերձ, դպրոցական-ուսումնական գործում գաղութը որոշակի հաջողությունների հասավ միայն 1880-ական թթ. սկզբներից:

1880 թ. Նոր Նախիջևանում բացվեց արհեստավորական դպրոցը, որի հիմնադրման նախաձեռնողը, իրականացնողն ու երկարամյա տեսուչը եղել է Ռ. Պատկանյանը: Դեռևս գաղութի հիմնադրման 100-ամյակի օրերին նա անդրադարձել էր այդ հարցին, և որոշվել էր բացել արհեստավորական դպրոց: Նա գաղութի անցյալի ծաղկուն վիճակը բացատրում էր զարգացած արհեստագործությամբ, իսկ իր օրերում նկատվող աղքատությունն՝ արհեստներն արհամարհելով: Դպրոցի մուտքի վրա գրված էին «Բանուկ ձեռքը երբեք չի մուրալ» խորհրդանշական խոսքերը: Դպրոց էին ընդունվում 10-12 տարեկան տղաները: Ուսման տևողությունն էր չորս տարի: Աշակերտները ստանում էին հանրակրթական գիտելիքներ և մասնագիտանում էրեք հիմնական արհեստների՝ փականագործության, ատաղձագործության և կոշկակարության մեջ: Օրվա մեջ հանրակրթական առարկաներին տրամադրվում էր 3, իսկ արհեստներին՝ 4 ժամ: Հատուկ արհես-

¹²⁰ Նույն տեղում, էջ 269:

¹²¹ Հյուսիսափայլ, 1864, թիվ 4, էջ 234:

տանոցներում լավագույն վարպետների մոտ աշակերտները հմտանում էին արհեստների մեջ: Աշակերտների քանակը շատ մեծ չէր, հազիվ հասնում է 50-60-ի: 1911 թ. փականագործի մասնագիտություն էին սովորում 26, ատաղձագործի՝ 15 և կոշկակարի՝ 15 աշակերտ: Աշակերտների մեծագույն մասը Նախիջևանից և շրջակա հայկական գյուղերից էր, իսկ նրանց շուրջ 10-15 տոկոսը՝ այլ բնակավայրերից:

Արհեստավորական դպրոցն իր գոյության երեքուկես տասնամյակում միշտ նեղվել է միջոցների պակասից, քանի որ ծախսերը հաճախ գերազանցում էին եկամուտները: Նկատելի էր նաև այլ երևույթ՝ աշակերտների ցածր առաջադիմությունը և դպրոցից հեռանալը: Նույն 1911 թ. 57 աշակերտից 20-ը դպրոցը թողել-հեռացել էին:

Արհեստավորական դպրոցն այն դերը չկատարեց, որպիսին հույս ուներ Ռ. Պատկանյանը: Դրա պատճառն այն էր, որ դպրոցի գործունեությունը համընկնում էր արդյունաբերության զարգացման և դրա հետևանքով արհեստների քայքայման դարաշրջանի հետ: Այն, փաստորեն, ժամանակավրեպ ձեռնարկում էր:

Նոր Նախիջևանի ուսումնական հաստատությունների մեջ ամենից ավելի նշանակալի դեր է կատարել հոգևոր սեմինարիան կամ թեմական դպրոցը, որը բացվեց 1881 թ.: Դպրոցն ուներ վեց դասարան և եռաստիճան նախակրթարան: Թեմականը ժամանակի միջնակարգ դպրոցների մակարդակով գիտելիքներ էր հաղորդում իր սաներին: Այնտեղ դասավանդվում էին կրոն, հայերեն, ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, մանկավարժություն, հոգեբանություն, տրամաբանություն, բնագիտություն և այլ առարկաներ: Թեմական դպրոցը դարձել էր բազմակողմանի կրթություն սովոր մի հաստատություն: Նրա սաները կյանքի լայն ասպարեզ էին դուրս գալիս և շատ քչերն էին հոգևոր կոչում ընդունում: Դպրոցի առաջին տեսուչն էր նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանը: Նրա մահից հետո այդ պաշտոնը վարում էր լեզվա-

բան Դ. Չարիխյանը, իսկ 1903 թ.՝ վաստակաշատ բանասեր ու մանկավարժ Ե. Շահագիզը: Նա ուներ բավականաչափ հարուստ գրադարան, լավ կահավորված ֆիզիկայի լաբորատորիա և այլն:

Դպրոցի շրջանավարտները տեղում, Ղզլարում, Մոզղոկում, Արմավիրում, Դրիմի հայկական բնակավայրերում, Խարկովում և այլուր մանկավարժական արդյունավետ աշխատանք էին կատարում: Նրա շրջանավարտների մի մասն ուսումը շարունակում էր Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի և կենտրոնական այլ քաղաքների կամ արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Թեմական դպրոցը փաստորեն դարձել էր հարավային Ռուսաստանի հայկական համայնքների կուլտուր-լուսավորական գործի ջահակիրը: Այն միաժամանակ Նոր Նախիջևանի հասարակական-մշակութային կյանքի, ինչպես նաև դեմոկրատական գաղափարների կենտրոնն էր:

Թեմական դպրոցի հիմնադրման հաջորդ տարում՝ 1882 թ., բացվում է «Գոգոյան օրիորդաց հայկական վարժարանը»: Այն բացվեց Նոր Նախիջևանի նշանավոր վաճառական Մկրտիչ Գոգոյանի կտակի հիման վրա: Դպրոց ընդունվում էին 7-11 տարեկան տարբեր խավերից ելած հայ աղջիկները: Ուսման տևողությունը վեց տարի էր: Ռուսաստանի իգական դպրոցների համար սահմանված ծրագրով այս ուսումնարանում ևս ավանդվում էին բազմաթիվ առարկաներ, այդ թվում՝ նաև ձեռագործ: Գոգոյան դպրոցը օգտվում էր պետական գիմնազիաների իրավունքներից: Դպրոցը Նոր Նախիջևանի արգասավոր ուսումնական հաստատություններից էր: Նրա նշանակությունն անուրանալի է գաղութի իգական սեռի կրթության ու դաստիարակության գործում¹²²:

Վերոհիշյալ կրթական օջախներից բացի, Նոր Նախիջևանում կային ծխական ու մասնավոր 6-7 դպրոցներ: Հայկական գյուղերում գործում էին մեկական, որոշ տեղերում՝ երկուական ծխական դպրոցներ: Գյուղերի այդ դպրոցները պահվում էին գյուղի համայնքի, մասամբ՝ եկեղեցու միջոցներով:

¹²² Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 438-439: Գլ. Նախմու մաս

Նոր Նախիջևանում տպարան հիմնելու միտքը հղացել էին դեռևս գաղութի հիմնադրման շրջանում: Այդ խնդիրն ի վերջո հնարավոր եղավ իրականացնել: Գր. Խալդարյանի մահից հետո ռուսահայերի հոգևոր առաջնորդ Յ. Արղությանին հաջողվում է մարել Պետերբուրգում գործող տպարանի պարտքերը և 1790 թ. այն տեղափոխել ու հաստատել Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում: Այն հարավային Ռուսաստանի առաջին տպարանն էր: Տպարանը վեց տարի՝ մինչև 1795թ., գործեց Ս. Խաչ վանքում, ապա մինչև դարի վերջը՝ Աստրախանում: Խալդարյան տպարանը ռուսահայ գաղութներում գործեց քսան տարի և հրատարակեց քառասունչորս գիրք: Տպարանի գործունեության ամենաբեղուն շրջանը նախիջևանյան տարիներն էին: Խալդարյանի տպարանից դուրս եկած գրքերի բովանդակությունից և Յ. Արղությանի գրագրություններից պարզ է դառնում, որ նա հետամուտ էր տպարանը ծառայեցնել ազգային խնդիրներին: Դրանցից առաջինն Արևմուտքից եկող կաթոլիկական պրոպագանդային հակադրվել էր: Այդ նպատակով տպագրում էին «Ավետարան», քարոզգրքեր, առհասարակ հայ եկեղեցու ծեսերին ու նրա դավանանքի այլևայլ հարցերին վերաբերող գործեր: Յ. Արղությանը միաժամանակ ջանում էր տպարանը ծառայեցնել ազատագրական շարժման նպատակներին: Հատուկ ընտրում և հրատարակում էր գրքեր, որոնցում դրվատվում էր Հայաստանի անցյալն ու սերմանվում հայրենի երկիրն ազատագրելու գաղափարը: Նա իր հայրենակիցների մեջ ռուսական կողմնորոշումն ամրապնդելու միտումով հրատարակում էր հյուսիսային կայսրության ներկա ու անցյալի պատմության փառահեղ դրվագներին մվիրված գրքեր: Այդ ամենից գատ, տպարանը ծառայում էր լուսավորության գործին, դպրոցներն ապահովում դասագրքերով, բառարաններով¹²³:

Դժբախտաբար, այդ առաջին տպարանից հետո Դոնի հայությանն երկար ժամանակ վիճակված չէր տպարան ունենալ, թեպետև գաղութի առաջադեմ գործիչները մշտապես մտահոգված

¹²³ Նույն տեղում, էջ 439-440:

էին այդ հարցում: Հատկապես, 1860-70-ական թթ. բազմաթիվ նախաձեռնումներ են լինում (Յ. Տեր-Գաբրիելյան, Յ. Տեր-Սիմոնյան, Ռ. Պատկանյան) տպարան հիմնելու ուղղությամբ, բայց դրանք հաջողությամբ չեն պսակվում: 19-րդ դարի վերջին տասնամյակներին եղել են որոշ տպարաններ, սակայն տեխնիկապես հագեցված, բարեկարգ տպարաններ հիմնվեցին միայն 20-րդ դ. սկզբին:

Գաղութում մտավոր կյանքի մակարդակը հասունացրել էր պարբերական մամուլ ունենալու անհրաժեշտությունը: Նոր Նախիջևանում պարբերական հիմնելու առաջին նախաձեռնողներից էր Ռ. Պատկանյանը: Թույլտվություն ստանալով, նա 1863-1864 թթ. Պետերբուրգում հրատարակում է «Հյուսիս» շաբաթաթերթը: Այս թերթը, որը փաստորեն խմբագրում էր պոետի հայր Գաբրիել Պատկանյանը, 31 համար լույս տեսնելուց հետո փակվեց:

Մինչև 20-րդ դ. սկզբները բազմաթիվ դիմումներ եղան Նոր Նախիջևանում թերթ հրատարակելու վերաբերյալ: Բոլոր այդ փորձերը, սակայն, հանդիպում էին պետական պաշտոնյաների բացասական վերաբերմունքին և մերժում ստանում: Մայրենի լեզվով թերթ հրատարակելու հնարավորությունից զրկված լինելով, գաղութի մտավորականներն իրենց հայացքն ուղղում էին դեպի Ռոստով: Նրանք սկսեցին խմբագրել ու հրատարակել «Պրիազովսկի կրայ» (Ա. Հարությունյան), «Դոնսկայա ռեչ» (Ս. Բերբերյան), «Դոնսկայա պչելա» (Յ. Տեր-Աբրահամյան) և մամուլի այլ օրգաններ¹²⁴:

Միայն 1905-1907 թթ. ռուսաստանյան հեղափոխությունը վերացրեց ցարական բյուրակրատիայի հարուցած արգելքները, և հենց այս շրջանից իրար հետևից սկսեցին հրատարակվել մամուլի տեղական օրգաններ: Հեղափոխության գաղափարներով ոգեշնչված Նոր Նախիջևանի մի խումբ երիտասարդներ 1906 թ. հրատարակում են «Նոր կյանք» խորագրով թերթ: Ուսանող Գ. Անուփյանի խմբագրությամբ այդ պարբերականը գրական, հասա-

¹²⁴ Նույն տեղում, էջ 440-441:

րակական և քաղաքական շաբաթաթերթ էր, որը գոյություն ունեցավ մեկ տարի: Ժամանակագրական առումով «Նոր կյանքին» հաջորդում է 1907թ. հիմնված «Մեր ձայնը» օրաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր Յ. Մալխասյանը:

Թերթն այնպիսի համարում էր վաստակել, որ նրան թղթակցում էին նշանավոր շատ հայ գործիչներ, ինչպես գրող Ա. Շիրվանզադեն, անվանի մանկավարժ Ս. Մանդին յանը և ուրիշներ: Նյութական միջոցների սղության պատճառով՝ 1908 թ. վերջին թերթը փակվում է:

Նոր Նախիջևանի պարբերական մամուլի օրգաններից ամենից երկարակյացը «Լույս» շաբաթաթերթն էր (1910-1914 թթ.), որը գրական-հասարակական ուղղություն ուներ: Այն խմբագրում էր գաղութի աչքի ընկնող դեմքերից բժիշկ Գ. Ռեիզյանը: Ի տարբերություն իր նախորդների՝ «Լույսը» չէր անդրադառնում քաղաքական հարցերի: Դրա փոխարեն այն ուներ ավելի շեշտված կուլտուր-լուսավորական և գրական-գեղարվեստական բովանդակություն: Թերթը լուսաբանում էր Հայաստանի ու հայ իրականության հետ առնչվող երևույթներն ու անցքերը: «Լույսը» դարձել էր Դոնի հայության առօրյա կյանքի երևույթներին արձագանքող, նախիջևանցու սրտին մոտ և ընդունելի պարբերական:

«Լույս» շաբաթաթերթին զուգահեռ, միայն ավելի կարճ ժամանակով, 1912-1914 թթ., հրատարակվում է «Գրիչ» պարբերականը: Ս. Պապայանի խմբագրած սույն շաբաթաթերթից լույս տեսավ ընդամենը 27 համար:

1914-1916 թթ. հրատարակվում էր «Գաղութ» շաբաթաթերթը՝ Ս. Մյասնիկյանի խմբագրությամբ: Թերթը, տեղական ու համահայկական որոշ խնդիրների անդրադառնալով հանդերձ, հազեցված էր պատերազմը և դրա հետ առնչվող անցքերը լուսաբանող նյութերով: 1915-1916 թթ. հրատարակվում էր թեմական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների «Դասընկեր» թերթը, որը գրական գեղարվեստական շաբաթաթերթ էր, և խմորատիպով լույս տեսավ 25 համար:

1918-1920 թթ. Ե. Շահագիզի և Ռ. Բերբերյանի խմբագրությամբ հրատարակվում է «Հայ համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը, որը կոչված էր լուսաբանելու հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայության կուլտուր-լուսավորական, բարեգործական, դաստիարակչական և կյանքի այլ կողմերին վերաբերող հարցեր¹²⁵:

Պարբերական մամուլը էական դեր կատարեց Դոնի հայության հասարակական ու մշակութային կյանքում: Դոնի հայությունը մամուլի միջոցով հասու էր դառնում հայ ժողովրդի կյանքում կատարվող անցքերին, նրա առօրյային և դրանով արգասավորվում ու ազգային լիցք ստանում:

Դոնի հայկական գաղութում զարգացում ապրեց հատկապես գրականությունը: Այս ասպարեզում մեծ էր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի դերը: Նրանք ածել ու ձևավորվել էին հայկական գաղութի միջավայրում: Հեռանալով Նոր Նախիջևանից Մ. Նալբանդյանը չէր կտրվել ու խորթացել հայրենի քաղաքից, նրա հասարակական, մշակութային կյանքից: Ռ. Պատկանյանը մշտապես ապրում ու գործում էր հայրենի քաղաքում: Նա 1860-1880-ական թթ. գաղութի հասարակական-մշակութային կյանքի ամենաեռանդուն գործիչներից էր: Նոր Նախիջևանում մեծ հետաքրքրություն կար նրանց ստեղծագործությունների նկատմամբ: Այդ ազդեցությունն այնքան վիթխարի էր, որ նրանց երկերը, անգամ ձեռագիր վիճակում, ձեռքից ձեռք էին անցնում, երգերի վերածված նրանց բանաստեղծությունները լայն տարածում էին գտնում:

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին գրական-հրապարակախոսական աշխույժ գործունեություն էին ծավալել գաղութի մտավորականության հեղինակավոր գործիչ Մ. Բերբերյանը, մասամբ նաև Շ. Կուրդինյանը և շատ ուրիշներ:

Նոր Նախիջևանում գրական ժանրերից զարգացավ հատկապես դրամատուրգիան, քանի որ արվեստի առավել մեծ տա-

¹²⁵ Նույն տեղում, էջ 441-442:

րածում գտած և ժողովրդականություն վայելող ճյուղը թատրոնն էր: Թատերական արվեստի նկատմամբ հետաքրքրությունը սկսվել էր դեռևս շատ տասնամյակներ առաջ: Մի խումբ երիտասարդներ (Թ. Խաղամյան, Ս. Տիգրանյան, Մ. Քուշնարյան) 1830-ական թթ. աշակերտների մասնակցությամբ դպրոցի շենքում մի քանի տարի շարունակ ներկայացումներ են կազմակերպում: Հետագայում, 1860-1880-ական թթ., Նոր Նախիջևանի թատերական կյանքում կարևոր դեր են խաղում Կոստանդնուպոլսից և Թիֆլիսից հյուրախաղերի եկած դերասաններն ու դերասանական խմբերը: Նշանակալից էր Կ. Պոլսից ժամանած Թ. Ֆասուլյաճյանի ու նրա խմբի գործունեությունը Դոնի ափերին: Մեծ էր հռչակավոր դերասան Պ. Աղամյանի դերը: 1880-ական թթ. նա բազմիցս այցելում է Նախիջևան, մեծապես խթանում գաղութի թատերական կյանքը:

Գաղութում արվեստի այս ճյուղն առաջ մղելու խնդրում կարևոր էր 1880 թ. «Թատերական արվեստ սիրողների ընկերության» հիմնումը: Նրա հիմնադիր անդամներն էին Ի. Չարիխովը, Տ. Պոպովը և ուրիշներ: Շուտով ընկերության նախագահ է ընտրվում և երկար տարիներ եռանդուն գործունեություն ծավալում Գ. Չուբարը: Տեղական թատերական գործին են լծվում Հ. Խաղամյանը, Ղ. Ալաջայանը և շատ ուրիշներ: 1900 թ. շահագործման է հանձնվում թատրոնի նոր, հարմարավետ շենքը, որը ևս նպաստում է թատերական գործի ծավալմանը¹²⁶:

Դոնի հայկական գաղութի հասարակական կյանքի ու մշակութային առաջադիմությունը պայմաններ էր ստեղծել զարգացնելու նաև արվեստի այլ ճյուղեր՝ կերպարվեստը, երաժշտությունը և այլն: Դոնի հայ հասարակության շնորհալի շատ երիտասարդներ դարձան գեղանկարչության ճանաչված դեմքեր: Նրանցից էր Հմայակ Արծաթպանյանը (1876-1919): Նա Մոսկվայում մասնագիտական կրթություն ստանալուց հետո վերադարձել էր հայրենիք և նկարչություն էր ավանդում դպրոցներում: Դեմոկրատա-

¹²⁶ Նույն տեղում, էջ 443:

կան գաղափարներով տոգորված նկարիչը իր ստեղծագործություններում մեծ տեղ էր հատկացրել հայրենակիցների կյանքին ու կենցաղին: Անվանի նկարիչ Ա. Աղաջանյանը (1863-1940) 1904 թ. սկսած ուսուցչություն էր անում Նոր Նախիջևանի ուսումնարաններում:

Տեղի քաղաքային ուսումնարանն է ավարտել և մանկությունն ու պատանեկությունը հայրենի Նոր Նախիջևանում անցկացրել հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը (1880-1972): Մեծ անուն վաստակելով և լայն ճանաչում գտնելով՝ Մ. Սարյանը միշտ էլ կապված էր իր ծննդավայրի՝ Դոնի հայության հետ: «Իբրև մարդ և արվեստագետ ձևավորվելու պրոցեսում, - գրում էր նա, - հսկայական, ուղղակի որոշիչ դեր են կատարել մանկությանս տարիները»¹²⁷:

Իր ծննդավայր Նոր Նախիջևանում դեռևս պատանեկության տարիներին գեղանկարչական աշխատանքներով աչքի է ընկել 20-րդ դ. ռեալիստական կերպարվեստի անվանի ներկայացուցիչ Գրիգոր Շլոյանը (1900-1991): Նկարիչը, 1923 թ. հաստատվելով Խտալիայում, դառնում է «Անի» և «Հայ ազատ արվեստագետների միության» անդամ, մասնակցում դրանց կազմակերպած ցուցահանդեսներին¹²⁸:

Նոր Նախիջևանում զարգացում ապրեց նաև ժողովրդական երաժշտությունը, Դոնի հայկական գաղութում ստեղծվեցին հարսանեկան, աշխատանքային, կենցաղային բազմազան երգեր ու պարեղանակներ: Ժողովրդական երաժշտության կողքին աստիճանաբար իր ուրույն տեղն էր գրավում նաև պրոֆեսիոնալ երաժշտությունը:

Նոր Նախիջևանում թանգարան կազմակերպելու գաղափարը, որի ուղղությամբ գործնական քայլեր կատարվեցին, նմանապես վկայում է մշակութային կյանքի զարգացման մակարդակի մասին:

¹²⁷ Մարյան Մ., Գրառումներ իմ կյանքից, գիրք 1, եր., 1966, էջ 4:

¹²⁸ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 443:

Նոր Նախիջևանը կարևոր դեր կատարեց հայկական մշակույթն ու մշակութային ավանդները պահպանելու և մանավանդ այն ռուսական միջավայրին ծանոթացնելու գործում:

Նոր Նախիջևանի հայկական գաղութը բեղմնավոր ուղի անցավ և մնայուն հետք թողեց հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ:

ԳԼՈՒԽ 5. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ¹²⁹

Մոսկվայում հայերի գտնվելու մասին առաջին հիշատակությունները վերաբերում են XIV դ. երկրորդ կեսին: Ռուսական տարեգրությունը հաղորդում է (1366 թ.), որ Նիժնի Նովգորոդի առաջին տոնավաճառին եկել էին հայ և այլազգի վաճառականներ, որոնք թալանվել էին դեպի Մոսկվա և Նիժնի Նովգորոդ տանող ճանապարհին¹³⁰:

Թաթար-մոնղոլական լծի թոթափումն էական նշանակություն ունեցավ Ռուսիայի համար: Մոսկվայի մեծ իշխանությունն իր ձեռքն առավ ռուսական հողերը միավորելու գործը և բռնեց տնտեսական ու քաղաքական զարգացման ուղի: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ հայերը սկսեցին հաստատվել Մոսկվայում և աստիճանաբար ավելի ու ավելի նկատելի դեր կատարել հզորացող այդ իշխանության առևտրատնտեսական կյանքում:

Հայերի հոսքը դեպի Մոսկվա նկատելիորեն ուժեղանում է XVII դ. առաջին կեսին: Ռուսական մայրաքաղաք էին գալիս ոչ միայն Հայաստանից, Անդրկովկասի հայաբնակ վայրերից, Ղրիմից, Աստրախանից և այլ բնակավայրերից:

¹²⁹ Տես Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դ. կես-XX դ. սկիզբ), Երևան, 2010: Խաչատրյան Վ. Ա., «Հայ գաղթաշխարհի պատմություն» I հատոր (294-345):

¹³⁰ Տես Ոսկանյան Վ., Հայերը Մոսկվայում 15-17-րդ դարերում, ՊԲՀ, 1971, N 1, էջ 25:

Հայերի դերը Մոսկվայում մեծացավ հատկապես 1667 թ. Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության հետ առևտրական պայմանագրի կնքումով, որով բոլոր հայ վաճառականներն իրավունք են ստանում վոլգյան մայրուղով տարանցիկ առևտուր անելու Ասիայի ու Եվրոպայի երկրների հետ՝ վճարելով 5 տոկոսանոց փոքր մաքս¹³¹:

Հայերն այնքան էին ստվարացել, որ սեփական դավանանքն ու ազգային սովորությունները պահպանելու համար պահանջ էին զգում եկեղեցի ունենալու: Լազարյանների հովանավորությամբ 1770-ական թթ. Ստոլպովի նրբանցքի տարածքում կառուցվեց Ս. Խաչ եկեղեցին:

Լազարյանները կարողացան Վազանկոյան գերեզմանատան մի մասը առանձնացնել և այդտեղ XVIII դ. վերջին կառուցեցին Ս. Հարության եկեղեցին, որը Մոսկվայում ցարդ պահպանված միակ հայկական եկեղեցին է: XVIII դ. կեսերին, վերջնականապես ձևավորվեց Մոսկվայի հայկական համայնքը:

1703 թ. Պետերբուրգի հիմնադրումից և 1712 թ. մայրաքաղաք հռչակելուց հետո, օգտվելով Պետրոս I-ի հովանավորյալ քաղաքականությունից, հայերը, առաջին հերթին հայ վաճառականները հաստատվում են ռուսական մայրաքաղաքում: 18-րդ դարի 70-ական թթ. քաղաքի կենտրոնում կառուցվում է Ս. Կատարինե, իսկ 1791 թ. սկսվեց հայկական գերեզմանատանը կից Ս. Հարության եկեղեցու շինարարությանը, որն ավարտվեց 1815 թ.: XVIII դ. դարի առաջին տասնամյակներին ձևավորվում է Պետերբուրգի հայ համայնքը:

Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքների և առհասարակ ռուսահայ կյանքում մնայուն դեր կատարեցին Լազարյանները: Նոր Ջուղայում ծնված Աղազարի երեք զավակները՝ Հով-

¹³¹ Восканян В. , Ново-торговый договор с армянской торговой компанией в 1667 г. ՀԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտությունների), 1947, հ. 6, էջ 29-43:

հաննես, Մինաս և Յովակիմ Լազարյանները հաստատվեցին Մոսկվայում:

Լազարյան ընտանիքի ամենանշանավոր ներկայացուցիչն ավագ եղբայր Յովակիմն էր (1735-1801), որը Մոսկվայում երկար չմնաց, 1758 թ. գրասենյակ բացեց Պետերբուրգում և իր գործունեությունը ծավալեց երկրի նոր մայրաքաղաքում: Մեծ ունակությունների տեր անձնավորություն լինելով՝ նա խելամտորեն օգտագործում էր պալատական ոսկերիչ լինելու հանգամանքը և մտերմական կապեր հաստատում պետության բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Մոսկվայում և Պետերբուրգում հայերի թվաքանակն այնքան փոքր ու չնչին էր, որ նրանք որևէ տեսակարար կշիռ չունեին այդ խոշոր քաղաքների բնակչության ընդհանուր կազմում: Այդուհանդերձ, թեկուզ շատ փոքրաքանակ հայերին ազգային ոգով համախմբելու համար անհրաժեշտ էր ունենալ համայնքային ինչ-որ մարմին: Եկեղեցին էր մնում տեղի հայությանը միավորող և հայրենիքի հետ կապող միակ կազմակերպությունը: Սկզբնական շրջանում ստեղծվեց եկեղեցական հոգաբարձություն, որը տնօրինում էր հայ համայնքների բոլոր գործերը: Կառավարության որոշումով (1883 թ. նոյեմբերի 18) ստեղծվեց 6 հոգուց բաղկացած եկեղեցական խորհուրդներ և 2 համայնքների համար մեկ միասնական խորհուրդ, որը տնօրինում էր բոլոր գործերը: Եկեղեցական խորհուրդներում ընտրվում էին գերազանցապես նշանավոր աշխարհիկ գործիչներ: Խորհուրդը նախագահում էին Լազարյանները¹³²:

1871 թ. վախճանվում է Լազարյան տոհմի արական սեռի վերջին ժառանգը՝ Խ. Լազարյանը: Նա ուներ երկու դուստր, որոնք ամուսնացած էին նշանավոր անձնավորությունների հետ: Նրանցից Սիմեոն Աբամելիքը դարձավ Լազարյանների ժառան-

գորդը: Նա միացրեց երկու իշխանական գերդաստանները, որն այդուհետ անվանվեց Աբամելիք-Լազարյան:

Այսպիսով, ի տարբերություն Ռուսաստանի տարածքում ծավորված մյուս հայկական գաղութների, որոնց ինքնավարությունը մարմնավորում էին ռաթիաուզները կամ մագիստրատները, Մոսկվայի և Պետերբուրգի պարագայում այդ դերը կատարում էր հայերին միավորող միակ ազգային կազմակերպությունը՝ հայոց եկեղեցին: Սկզբնապես այդ միավորումը դրսևորվում էր հոգաբարձության, իսկ XIX դ. 80-ական թթ. սկսած՝ եկեղեցական խորհրդի միջոցով: Վերջինս դարձավ հզոր և գործունեության համահայկական ընդգրկում ունեցող կազմակերպություն:

Ահա թե ինչու հայկական այդ համայնքներում մշտապես առանձնահատուկ նշանակություն է տրվել եկեղեցական խորհրդի գործունեությանը, նրա անդամների և առհասարակ հոգևոր գործիչների ընտրության խնդիրներին: Դրանք եղել են ծխականների ժողովի, ասել է թե հասարակության ուշադրության կենտրոնում: Երբեմն եկեղեցական խորհրդում ընտրվելն այնպիսի սուր բնույթ է կրել, որ արձագանք է գտել համազգային ընդգրկում ունեցող մամուլի էջերում:

Եկեղեցական խորհուրդների կողմից տնօրինվող հայ համայնքների միջոցները գոյանում էին վարձով տրվող բնակարաններից, կատարվող նվիրատվություններից, բանկային տոկոսներից, եկեղեցական ծիսակատարություններից և այլ աղբյուրներից: Պետերբուրգի եկեղեցական խորհրդի եկամուտներն անհամեմատ մեծ էին քան՝ Մոսկվայինը: Լազարյանները Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու երկու կողմում կառուցել էին հինգ հարկանի շենքեր և նվիրել եկեղեցուն: Այդ շենքերի վարձակալությունից վիթխարի գումար էր ստացվում:

Ռուսաստանի մայրաքաղաքների հայ համայնքները թեպետև ստվար չեն եղել, բայց նրանք իրենց համայնքային կազմակերպություններով զբաղվել են ոչ այնքան ներհամայնքային հարցերով, որքան հայ հասարակությանը մտահոգող խնդիրներ

¹³² Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն, նշվ. աշխ., էջ 79-80:

րով: Նրանք ունեցել են հայրենիքին ծառայելու համահայկական գործունեության շառավիղ: Նրանք կազմավորվեցին հայ-ռուսական հարաբերությունների սերտացման, Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու ռուսական կողմնորոշման արմատավորման շրջանում: Նրանք դարձան նոր շրջանի հայ-ռուսական հարաբերությունների սերտացման ակտիվ ու գործուն մասնակիցները: Սկզբնական շրջանում՝ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը, հայ հասարակական միտքը, նաև հայ համայնքների՝ ռուսական արքունիքին մոտ կանգնած նշանավոր գործիչները հետամուտ էին հայրենի երկիրն ազատագրելու ուղղությամբ գործունեություն ծավալելու խնդրին: Հետագայում նրանց զբաղեցնում էր գերազանցապես արևմտահայության պատմական ճակատագրի հարցը:

Հայ համայնքների նշանավոր դեմքերից հատկապես Լազարյաններն էին նպաստավոր պայմաններ ստեղծում Ռուսաստանի միջոցով Հայաստանն ազատագրելու գաղափարակիր ուժերի, առաջին հերթին՝ հայոց եկեղեցու համար: Ի մասնավորի հող էին նախապատրաստում և խթանում առանց այն էլ նման ուղղորդում ունեցող ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղության գործունեությանը:

1779 թ. հուլիսին Հ. Արղությանը Հ. Լազարյանի հետ մեկնում է Պետերբուրգ: Պետական ամենանշանավոր դեմքերից Նովոռոսիայի կառավարիչ իշխան Գրիգորի Պոտյոմկինը, իմանալով նրանց ժամանելու մասին, նույն օրն ընդունում և երկու ժամ հետաքրքրվում հայոց եկեղեցու, նրա դավանանքի և այլ հարցերի շուրջ: Հաջորդ օրը եկեղեցուն հանդիպում է կազմակերպվում կայսրուհու՝ Եկատերինա II-ի հետ, որը իշխան Գ. Պոտյոմկինի միջոցով տեղեկացվում է այդ մասին: Իշխան Գ. Պոտյոմկինի առաջարկով Հ. Լազարյանը և Հ. Արղությանը մեկնում են Ցարսկոյե Սելո, որտեղ Եկատերինա II-ը հարգանքով ընդունում է նրանց: Հ. Լազարյանը կայսրուհուն է հանձնում Հայաստանը Ռուսաստանի

աջակցությամբ պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրելու իրենց խնդրագիրը¹³³:

Մայր հայրենիքի պատմական ճակատագրով մշտապես մտահոգ լինելու՝ ռուսահայ գաղութների և առաջին հերթին մայրաքաղաքների հայ համայնքների վերաբերմունքը շարունակվեց նաև հետագա տարիներին: Հայ-ռուսական հարաբերությունների սերտացման այդ շրջանում Հայաստանն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խնդիրը թվում էր այնքան իրական, որ ռուսահայ առաջադեմ գործիչները մշակում և ռուսական արքունիք են ներկայացնում վերականգնվելիք հայկական պետականության և Ռուսական կայսրության հարաբերություններին նվիրված դաշնագրեր:

Հայտնի է, որ դեռևս 1769 թ. Աստրախանի առևտրաարդու-նաբերական շրջանների նշանավոր ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանը կազմում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ուշագրավ նախագիծ: Դրա մշակմանը մասնակցում կամ հեղինակին խրախուսում են Ռուսաստանի ազդեցիկ հայերից Գ. Կամպանյանը, Հ. Լազարյանը և ուրիշներ: 1783 թ. Հ. Արղությանը ներկայացնում է հայկական պետականությունը վերականգնելու մեկ այլ՝ առավել ծավալուն ու հիմնավոր նախագիծ:

XIX դարում ընդհանուր իրադրության փոփոխության հետ տարբեր ձևեր էին ընդունում գաղութների բնակչության՝ հայրենի երկրին ու հայությանն աջակցելու մեթոդները, բայց այդ ձգտումը և այդ ուղղությամբ կատարվող գործնական քայլերը մշտապես մնում էին անփոփոխ:

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում՝ 1827 թ. աշնանը, երբ ակնհայտ էին դարձել Պարսկաստանի պարտությունը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցը, Պետերբուրգի մի խումբ հայրենասեր մտավորականներ Ռուսաստանի կազմում Հայաստանի իրավաքաղաքական կարգավիճա-

¹³³ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 118:

կը սահմանող նախագիծ են մշակում: Նախագծի հեղինակը Խ. Լազարյանն էր: Նախագծի կազմմանն ակտիվորեն մասնակցել էին իշխան Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը և նշանավոր բանասեր Ալեքսանդր Խուդաբաշյանը:

Նախագծի հեղինակները ջանացել էին Ռուսաստանի կազմում ապահովել Հայաստանի լայն ինքնավարությունը: Նրանք, փաստորեն, առաջարկում էին վերականգնել հայկական թագավորությունը և Նիկոլայ I-ի թվարկվող տիտղոսների թվում ավելացնել նաև «հայոց թագավոր» տիտղոսը:

Ռուսաստանի տիրապետության տակ անցնող Հայաստանում բնակչության քանակն ավելացնելու նպատակով նախագծի 5-րդ հոդվածով անհրաժեշտ էր համարվում Պարսկաստանից հայ բնակչության ներգաղթ կազմակերպելը:

Խ. Լազարյանը մասնակցում է նաև Հայաստանի սահմանների հարցի բարձրացմանը, ջանում է Պարսկաստանի հետ Հայաստանի սահմանագիծ դարձնել ոչ թե Արաքս գետը, այլ Արարատյան լեռնաշղթան, որպեսզի Մակուի գավառը ևս միացվի Հայաստանին, որն իր լեռներով ու կիրճերով կդառնար բնական պատվար: Նախագծի հեղինակները կարևոր նշանակություն էին տալիս երկրի ներքին բարեկարգության, բնակչության իրավական պաշտպանվածության հարցերին: Հայ հայրենասերները դեմ էին արտահայտվում ճորտատիրությանը: Նրանք ճորտությունը դիտում էին որպես հասարակական կյանքում բացասական երևույթներ առաջացնող համակարգ¹³⁴:

Նախագիծը դրական ընթացք չի ստանում, մերժվում է, բայց, անտարակույս, ունենում է էական նշանակություն Հայաստանի անունով առանձին վարչական միավոր՝ Հայկական մարզ ստեղծելու գործում: Մի իրողություն, որը չկատարվեց Վրաստանի պարագայում:

Մոսկվայի ու Պետերբուրգի համայնքային գործիչների՝ Հայաստանում կատարվող իրադարձություններին լավատեսյակ

¹³⁴ Նույն տեղում, էջ 126-131:

լինելը, հայրենիքի առջև ծառայած մեծ ու փոքր խնդիրների լուծմանն ամեն կերպ նպաստելու ջանքերը լավագույնս վկայում են, թե հայկական գաղութները որչափ են կապված եղել հայրենիքի հետ և ապրել նրա պատմական ճակատագրով:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո հայության ուշադրությունը բևեռվեց թուրքական լծից Արևմտյան Հայաստանն ազատագրելու կամ արևմտահայության դրությունը բարելավելու հարցերի վրա:

Իր ժողովրդի պատմական ճակատագրի խնդրում մշտապես նախանձախնդիր՝ ռուսական մայրաքաղաքների հայ համայնքները չէին կարող անտարբեր մնալ և ակտիվորեն չարձագանքել Բեռլինի կոնգրեսից հետո ծավալված հայ ազատագրական շարժումներին:

Արևմտահայության ազատագրման նպատակով հայ երիտասարդները՝ գերազանցապես ուսանողները, Մոսկվայում կյանքի կոչեցին «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որն ուներ իր պաշտոնաթերթը՝ «Ազատության ավետաբեր» խորագրով: Կազմակերպությունը չորս համար անլեզալ տպագրած թերթի և թռուցիկների միջոցով քննադատում էր եվրոպական երկրների քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի հարցում: Արևմտահայության ազատագրումը նրանք կապում էին զինված պայքարի և Ռուսաստանի ռազմական օգնության հետ:

Ցարական հետապնդումների հետևանքով կազմակերպության գործունեությունը խաթարվեց 1884 թ., թեպետև իր գոյությունը պահպանեց ևս երկու տարի¹³⁵:

Ինչպես հայտնի է, XIX դ. 90-ական թթ. կեսերին Թուրքիան Արևմտյան Հայաստանում կազմակերպեց խաղաղ հայ բնակչության կոտորած, որին զոհ դարձավ 300 հազար մարդ: Կոտորածներից փրկված բնակչությունը բռնեց գաղթի ճանապարհը: Գաղ-

¹³⁵ Նույն տեղում, էջ 135-136:

թականությանը պատասպարելու լայն շարժում ծավալվեց հայ իրականության մեջ, որին ակտիվորեն մասնակցեցին մայրաքաղաքների հայ համայնքները:

Մոսկվայի և Պետերբուրգի եկեղեցական միացյալ խորհուրդը տեղեկանում է, որ կոտորածներից փրկված և Ռուսաստանում հանգրվան գտած գաղթականներն անմխիթար վիճակում էին: Խորհուրդը նրանց հատկացնում է 2 հազար ռուբլի՝ հազուստ գնելու և 1000 ռուբլի՝ այլ կարիքներ հոգալու նպատակով¹³⁶:

Պետերբուրգի եկեղեցիների հոգաբարձու Ս. Աբամելիք-Լազարյանը 1900 թ. տեղի եկեղեցական խորհրդին տեղեկացնում է, որ Թուրքիայում Ռուսական կայսրության դեսպան Իվան Զինովևը, ի պատասխան իրենց գրության, հայտնում է, որ ստացել է ուղարկված 13271 ֆրանկ գումարը, որը կազմում էր 5 հազար ռուբլի, փոխանցել է Կ. Պոլիս հայ պատրիարքին՝ որբանոցներ հիմնելու Փոքր Ասիայի այն վայրերում, որտեղ անհրաժեշտ է: Պատրիարքը հայտնել է իր գոհունակությունը և վստահեցրել գումարը նպատակին ծառայեցնելու հարցում¹³⁷:

1903 թ. դեկտեմբերին Մաղաքիա պատրիարքը Ս. Աբամելիք-Լազարյանին տեղեկացնում է երեք տարում ստացված 15 հազար ռուբլի գումարը գործադրելու մանրամասների մասին: Հանգամանորեն ներկայացնում է որբերին, վարպետներին, դպրոցներին հատկացված գումարի չափը: Ս. Կարապետի վանքի որբանոցին տրվող գումարի մի մասը հատկացվել է Մշո Ս. Հովհաննեսի վանքին, որտեղ ևս որբեր էին պատասպարվել: Գյուղերի 34 դպրոցներում, որտեղ 2 հազար աշակերտ էր ուսանում, նոր ուսումնական տարում վերաբացվելու էր նրանց հատկացվող գումարը: Այն գյուղերը, որոնք կարողացել են ոտքի կանգնել, ի գորու են դպրոցի ծախսերը հոգալու, նրանց հատկացվող նպաստը տրվելու էր խիստ կարիք ունեցող ուրիշ գյուղերի: Վերջում պատրիարքը խնդրում էր շուտափույթ ուղարկել որբանոց-

¹³⁶ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 970, թ. 2:

¹³⁷ Նույն տեղում, գ. 989, թ. 11-12:

ների, արհեստանոցների չորրորդ տարվա նպաստները, որպեսզի ծնճան եղանակներին հնարավոր լինի շարունակել նրանց գործունեությունը¹³⁸:

Այդ նույն ժամանակ Մոսկվայի հայ հասարակայնությունը Արևմտյան Հայաստանի սովի մանտված բնակչության համար ժողովում է 2488 ռուբլի և այն նույնպես ուղարկում Կ. Պոլսի հայոց պատրիարքարան:

Այսպիսով, հիշյալ փաստերը հավաստում են, որ XIX դ. վերջերին Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքները, փաստորեն, իրենց վրա էին վերցրել Արևմտյան Հայաստանի դպրոցներին, որբանոցներին, աղքատության մատնված բնակչությանն աջակցելու գործի ծանրության զգալի մասը:

Առաջին աշխարհամարտն սկսվելուց մի քանի ամիս անց, երբ Թուրքիան, որպես Գերմանիայի դաշնակից, մտավ պատերազմի մեջ, հայկական համայնքները Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույսով աշխույժ գործունեություն ծավալեցին: Մոսկվայում 1914 թ. հոկտեմբերի 22-ին տեղի հայության մեծ հավաք հրավիրվեց: Ժողովը նախագահող Ս. Մամիկոնյանը հայրենասիրական ջերմ ելույթ ունեցավ: Նա, սկսելով Բեռլինի համաժողովից, նկարագրեց արևմտահայերի համար ստեղծված դժվարին կացությունը և հորդորեց ամեն կերպ սատար կանգնել ազգակից եղբայրներին¹³⁹:

Պատերազմի ժամանակ կատարվեց մարդկային պատմության մեջ նախադեպը չունեցող ողբերգություն: Երիտթուրքերի կառավարությունն ամենաբարբարոսական մեթոդներով կազմակերպեց հայերի ցեղասպանություն, որին զոհ դարձավ շուրջ մեկուկես միլիոն խաղաղ բնակչություն: Արևելյան Հայաստանը լցվեց հարազատներին կորցրած, տուն ու տեղից, ապրուստի միջոցներից զրկված, սովի ու համաճարակային հիվանդությունների մեջ ընկած անօթևան գաղթականներով, որբերով:

¹³⁸ Նույն տեղում, թ. 23-24:

¹³⁹ Մշակ, 1914, էջ 245:

Համայն հայության շրջանում լայն շարժում սկսվեց փախստականներին պատսպարելու, մահվան ճիրաններից փրկելու համար: Այդ նպատակով անհապաղ ձևավորվեցին բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ: Մայրաքաղաքների հայկական համայնքներն ակտիվ ու գործուն մասնակցություն ունեցան, մանավանդ, որ նրանք ունեին ֆինանսատնտեսական հնարավորություններ և նման պարագաներում հայրենակիցներին օգնության ձեռք մեկնելու փորձ:

Պետերբուրգի եկեղեցական խորհուրդն իր նախաձեռնությամբ 150 հազար ռուբլի գումար է առանձնացնում, որից 50 հազարը դնում է Թիֆլիսի կենտրոնական բյուրոյի տրամադրության տակ՝ ըստ անհրաժեշտության գործադրելու, իսկ 100 հազարը հատկացնում է դեղորայք, սնունդ մատակարարող այն կենտրոններին, որոնք պահի, ստեղծված իրավիճակի խոր գիտակցությամբ կազմակերպված ու արդյունավետ աշխատանք էին կատարում¹⁴⁰:

1914 թ. աշնանը, երկու քաղաքների համայնքներում ստեղծվեցին հայկական կոմիտեներ: Նրանք կոչված էին օգնություն կազմակերպելու պատերազմում վիրավորվածներին, փախստականներին, առհասարակ տուժածներին: Մոսկվայում հայկական կոմիտեի նախագահ ընտրվեց հայ համայնքի ճանաչված գործիչ հրապարակախոս Ստեփան Մամիկոնյանը: Կոմիտեի գործունեությանն ակտիվորեն մասնակցում էին հայ անվանի գործիչներից Ա. Զիվելեգովը, բանաստեղծ Ա. Ծատուրյանը և ուրիշներ: Կոմիտեն իր միջոցներով 1916-1918 թթ. հրատարակեց «Армянский вестник» հանդեսը: Պարբերականը հրապարակ էր ելել ռուս հասարակայնությանը ծանոթացնելու հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, մասնավորապես պատերազմի հետևանքով նրա համար ստեղծված ողբերգական ու դժվարին կացությանը: Հայ մտավորականներից բացի հանդեսին մասնակցում էին նաև ռուս նշանավոր գրողներ Վալերի Բրյուսովը, հայր

և որդի Ալեքսեյ և Յուրի Վեսելովսկիները, Վասիլի Նեմիրովիչ-Պանչենկոն և ուրիշներ: Հայկական կոմիտեի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին հայ ուսանողները:

Մեծ եղեռնի հետևանքները՝ փախստականների հիմնախնդիրները համակողմանիորեն քննարկելու և համակարգելու հարցում շահագրգիռ վերաբերմունքի արտահայտություն էր նաև այն, որ Մոսկվայի և Պետերբուրգի հայկական կոմիտեները նախաձեռնեցին Պետերբուրգում 1916 թ. մայիսի 10-12-ը հրավիրել հայ փախստականների հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հանրագումար: Համագումարի հրավիրումը հրամայական պահանջ էր դարձել: Այն պայմանավորված էր փախստականների հարցում տիրող տմայնագործական խառնաշփոթ գործընթացով, միասնական կենտրոնի ընդհանուր մշակված ծրագրերի բացակայությամբ:

Հասարակայնության ընդհանուր կարծիքն է արտահայտում Ա. Զիվելեգովը, երբ մի շարք առումներով բարձր է գնահատում համագումարի նշանակությունը: Նա գտնում է, որ հաջողվեց փախստականներին աջակցող կազմակերպությունների աշխատանքները համակարգել, միավորել մեկ միասնական կենտրոնի մեջ: Դրանով հանդերձ՝ նա համագումարի հիմնական արդյունքն է համարում այն, որ ռուս հասարակայնությունն իմացավ, թե ինչպիսի ողբերգություն է ապրել հայ ժողովուրդը Թուրքիայում, և թե փախստականներն ինչպիսի վիճակում են Ռուսաստանում: Եվ պակաս կարևոր չէ այն պարագան, որ համագումարը ռուսական հասարակական մտքին նյութ տվեց Հայկական հարցի մասին¹⁴¹:

Այսպիսով, արևելյան երկու պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ գտնվող հայրենի երկրի ազատագրումը մշտապես եղել է հայ մտավոր կենտրոն դարձած Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքների հասարակայնությանը զբաղեցնող ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը: Հայրենիքին ու հայրենակիցներին ամեն կերպ սատար կանգնելու, աջակ-

¹⁴⁰ ՀԱԱ, ֆ. 399, ց 1, գ. 1077, ք. 6:

¹⁴¹ Армянский вестник, 1916, N 16, 17:

ցելու նպատակով երկու հայ համայնքները զնահատելի գործնական ձեռնարկումներ են արել և իրենց որոշակի ներդրումը կատարել:

Ռուսաստանի մայրաքաղաքների հայկական համայնքները, գտնվելով լուսավորության, գիտության, հասարակական աշխույժ կյանքի կենտրոններում, ունենալով բարձր կարգի մտավորականություն, ծառայելով հյուրընկալ երկրի բարեշինմանը, միաժամանակ կապեր են պահպանել և իրենց ներդրումը կատարել մայր հայրենիքում: Այդ գործընթացին ակտիվ մասնակցություն է բերել երիտասարդությունը՝ հայ ուսանողությունը, որի քվաքանակը փոքր չէր: Մոսկվայի համալսարանում 1897 թ. սովորում էին 119 երիտասարդներ, իսկ Պետերբուրգի տարբեր ԲՈՒՅ-երում 1888 թ. սովորում էր 118 հայ երիտասարդ¹⁴²:

Հայրենիքի հետ կապվելու, նրա լուսավորությանը ծառայելու հարցում նվազ չէր Լազարյան ճեմարանի սաների հասարակական դերը, որոնց մի մասը Մոսկվայից ու Պետերբուրգից էր, իսկ բացարձակ մեծամասնությունը կազմում էին դրսեկ պատանիները:

1858 թ. Մոսկվայի ուսանողները, «Մայր Արաքս» երգելով, բացում էին իրենց ուսանողական հավաքը: Այն ընկերական մի միություն էր, որը մեծ ազդեցություն գործեց հայրենիքից կտրված երիտասարդության վրա, նպաստեց շատերի ուսման ավարտին, շատերին դրեց ազգին ծառայելու ուղու վրա:

Պետերբուրգի երիտասարդական հավաքներում միավորող, ուղղություն հաղորդող դերակատարություն ունեին երիտասարդ մագիստրոս Կարապետ Եզյանն ու նրա ընտանիքը: Երիտասարդական այդ հավաքների մասնակից Ա. Երիցյանը, Կ. Եզյանի ընտանիքի մասին գրում է. «Այդտեղ նրա մայրը և քույրը իրանց սիրալիկ և գթասիրաբար ընդունելութիւնով շատերին մոռացնել են տւել ընտանիքի և բարեկամների կարօտը: Այդտեղ շատերն են օգնութիւն ստացել, սփոփւել և մխիթարվել: Այդտեղ շատերն են

նարի խորհուրդ լսել և պաշտպանութիւն գտել: Վերջապէս այդտեղ շատերն են սովորել ճանաչել իրանց պարտականութիւններն ղէպի ընկերը, ղէպի ընտանիքը, հայրենիքը և հասարակութիւնը: Եւ ահա պ. Եզեանցի տունը դարձել էր մի գրաւիչ կենդրոն մայրաքաղաքի հայ ուսանողների համար»¹⁴³:

Ժողովրդավարական, լուսավորական շարժման վերելքի մթնոլորտում 1850-1860-ական թթ. Մոսկվայում ծնունդ առան «Հյուսիսափայլ» և հակառակ ուղղություն ունեցող «Ճռաքաղ» պարբերականները: «Հյուսիսափայլ» ամսագիրը, հանձինս խմբագիր Ս. Նազարյանի և հիմնական աշխատող Մ. Նալբանդյանի, սուր և հետևողական պայքար ծավալեց հետամնացության, տգիտության դեմ:

Երկու համայնքներում արմատացած կարգ էր դարձել ուսանողների ուժերով հայ և ռուս հեղինակների դրամատիկական գործերից տարեկան զոնե մեկ ներկայացում կազմակերպելը: Այդ ներկայացումները կամ հանդեսները հրավիրում էին, որպեսզի դրանց հասույթով օգնեն չքավոր ուսանողներին, նրանց հնարավորություն տան շարունակելու ուսումը: Կազմակերպվում էին նաև այլ ներկայացումներ, համերգներ, պարահանդեսներ, որոնց մասնակցում էին նաև ռուս հասարակայնության ներկայացուցիչներ:

Մոսկվայում ուսանողները կազմակերպում էին երեկույթ, դահլիճը ձևավորում արևելյան հայկական ճաշակով, մուտքը զարդարում զույնզզույն լույսերով ողողված Մեծ և Փոքր Մասիսների մեծադիր պատկերներով: «Մշակ» թերթի թղթակիցը այդ երեկույթի մասին գրում է. «Նրանք տարուց տարի աւելի ու աւելի են գրաւում մայրաքաղաքի այն հասարակութեան ուշադրութիւնը, որի կարծիքն ու վերաբերումը մեզ համար շատ թանգ պէտք է լինի: Նրանք միջոց են տալիս շատերին տեսնել հայութեան

¹⁴³ Երիցյան Ա., Գրիգոր Արծրունու ու նրա քսանը հինգ տարվա գրական գործունեության առթիվ (1865-1890), Թիֆլիս, 1890, էջ 59:

¹⁴² Արծազանք, 1888, նո. 26:

պատկերը աւելի համակրելի ձևով, քան թէ շատ անգամ տեսել ու լսել են նրա մասին»¹⁴⁴:

Մայրաքաղաքների հայությունը ըստ պատշաճի արձագանքում էր ռուսական կյանքի պատմամշակութային էական, հասարակական լայն հետաքրքրություն ներկայացնող երևույթների:

1910 թ. նոյեմբերի 8-ին Լազարյան ճեմարանի տնօրեն Վլադիսլավ Միլլերի նախագահությամբ դասախոսների ու ուսանողների հատուկ նիստ է հրավիրվում Լև Տոլստոյի մահվան առիթով: Պատվիրակություն է ընտրվում ճեմարանի անունից գերեզմանին պսակ դնելու համար: Հեռագիր է հղվում նրա տիկնոջը: Մեծ գրողի անունով ոսկե մեդալ է սահմանվում, որը տրվելու էր «Արևելքը Լ. Տոլստոյի գրվածքներում» ուսանողական լավագույն աշխատանքին: Ի նշան սգի՝ երեք օր դադարեցվում են պարապունքները¹⁴⁵:

Ա. Պուշկինի ծննդյան 100-ամյակի առիթով մի շարք հողվածներ են նվիրում մեծ պոետին, Ա. Ծատուրյանը առանձին գրքով շքեղ հրատարակում է «Բախչիսարայի շատրվանը» պոեմը, որի նկարչական ձևավորումը կատարում է արդեն անուն հանած երիտասարդ նկարիչ Վարդգես Սուրենյանցը¹⁴⁶:

Ամենայն հայոց կաթողիկոսները գահ բարձրանալուց հետո, որպես կանոն, մեկնում էին մայրաքաղաք, հանդիպումներ ունենում արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ըստ անհրաժեշտության հարցեր բարձրացնում, միաժամանակ հովվապետական այց կատարում հայկական համայնքներ:

Գևորգ Դ կաթողիկոսը 1867 թ. ժամանում է Պետերբուրգ: Հայ համայնքը նրան ընդունելու հատուկ ծրագիր է մշակում: Մկրտիչ Սանասարյանի առաջարկով որոշվում է հանգանակություն կատարել և վեհափառի հայեցողությամբ գումարը նպատակաուղղել Արևմտյան Հայաստանում կրթական համակարգի բա-

¹⁴⁴ Մշակ, 1893, N 24:

¹⁴⁵ Երկրամաս, 1910, N 225:

¹⁴⁶ Երկրամաս, 1899, N 88:

րելավմանը: Կատարված հանգանակությունից ժողովվում է 2350 ռուբլի, որը վեհափառն օգտագործում է Արևմտյան Հայաստանում կրթության և այլ պետքերի համար¹⁴⁷:

Մայրաքաղաքների հայ համայնքների կապերը ռուս և հայ իրականության հետ դրսևորվել են կյանքի բոլոր ոլորտներում, կազմել նրանց բուն պատմության անքակտելի մասը: Այստեղ միայն որոշ դրվագներ բերվեցին այդ կապերի խորության և արտահայտման ձևերի մասին:

Պայմանների բերումով տարբեր խավերի շատ հայեր մեկնում էին ռուսական մայրաքաղաքներ՝ գործ գտնելու, սովորելու կամ բախտ որոնելու, գոյատևելու: Նման մարդկանց թվաքանակն այնքան է մեծանում, որ զգացվում է լայն ծավալ ընդունած այդ երևույթը համակարգելու անհրաժեշտություն:

Հետագա տարիներին ևս այդ խնդիրը կարգավորած չէր: Նպատակահարմար էր դիտվում հետևել մայրաքաղաքի կանանց օրինակին, որոնք ընկերություն էին ստեղծել և կարողանում էին թեթևացնել իրենց սեռի երիտասարդների հոգսերը:

Ի վերջո հղանում է Մոսկվայում ընչազուրկների համար աղքատանոց կամ անկելանոց ստեղծելու գաղափարը: Մոսկվայի քաղաքացի Եսայի /Սահակ/ Մովսեսի Գասպարովը (Գասպարյան) 1844 թ. դեկտեմբերի 28-ին 12 կետից կազմված կտակ է անում քաղաքի Ս. Խաչ եկեղեցու մոտ՝ Մյասնիցկի թաղամասում, Մոսկվայի աղքատ հայերի համար տուն կառուցելու և աղքատանոցը պահպանելու մանրամասների մասին¹⁴⁸:

Հաջորդ տարվա մարտին ստացվում է ներքին գործերի մինիստրության համաձայնությունը:

Մոսկվայում մշտապես բնակվողների համար մշակվում է անկելանոցի 27 կետից բաղկացած կանոնադրությունը: Աղքատանոցը կրելու էր հիմնադրի անունը և լինելու էր հայոց կաթողիկոսի ընդհանուր ղեկավարության ներքո: Այն կառավարելու էր Ե-

¹⁴⁷ Մեղու Հայաստանի, 1867, N 42:

¹⁴⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 130, վավ. 396:

րեք հոգուց բաղկացած և երեք տարի ժամկետով ընտրված խորհուրդը: Խորհրդի ավագ անդամը վարելու էր նիստերը և աղքատանոցի գործունեության մասին հաշվետու էր լինելու հասարակությանը: Հասարակությունն իրավասու էր անսահմանափակ քանակով պատվավոր անդամներ ընտրելու: Ծխականների միահանուռ առաջարկով պատվավոր անդամներ են ընտրվում Հովհաննես և Խաչատուր Լազարյանները: Անկելանոցը բացվում է 1849 թ. հունիսին:

Անկելանոցն ուներ եկամուտների և ծախսերի դրական հարաբերակցություն, որը հետագայում մշտապես պահպանվեց:

Գասպարյան անկելանոցը երկարյաց և իր առաքելությունը լիովին արդարացնող հաստատություններից էր: Նա ավելի լայն ընդգրկում ունեցավ, քան ծրագրվում էր հիմնադրման ժամանակ՝ զբաղվել սոսկ մոսկվաբնակ աղքատներով:

Բարեգործական այդ հաստատությունն, անկախ բնակավայրերից, շատ ընչազուրկների օգնեց՝ ապահովելով օթևանով:

Իր կոչումից բացի՝ անկելանոցը դարձավ տեղի հայության իրար հետ կապող, միավորող, գաղութի հասարակական կարևոր հաստատություններից մեկը: Գաղութահայության հավաքները, երեկոյաները հաճախ իրավիրվում էին անկելանոցի՝ 600 հոգու համար նախատեսված ընդարձակ սրահում:

Ուսման նկատմամբ ավանդական մեծ սեր ու հակում ունեցող հայ ժողովրդի պատանիներն ու երիտասարդներն ամեն կերպ ջանում էին կրթություն ստանալ: Հարկ էր տարրական ու միջնակարգ կրթության համար պահպանել ու հոգալ դպրոցների, ուսումնարանների կարիքները, աջակցել երիտասարդներին Ռուսաստանի կամ Եվրոպայի նշանավոր կենտրոններում ստանալու բարձրագույն կրթություն: Մայրաքաղաքի հայերը մեծամասնությամբ իրազեկ էին իրավիճակին և լավ հասկանում էին ընդհանուր դժվարին կացությունում իրենց պարտավորվածությունը: Նրանք համայնքի մյուս անդամների մեջ արթնացնում էին բարոյական պարտքի զգացումը և կոչում ակտիվության: «Մշակ»

թերթին ուղղված թղթակցություններից մեկում կարդում ենք. «... ոչ միայն խօսքով այլև գործով հաստատել, թե հիրաւի մենք հեռի հիւսիսում ևս գիտենք հոգ տանել մեր սովեալ, տառապեալ և ուսումնաժարաւ թշվառ հայրենակիցների վրայ»¹⁴⁹:

Մայրաքաղաքներում բարձրագույն կրթություն ստացող երիտասարդների զգալի մասը Հայաստանի տարբեր շրջաններից եկած չքավոր ընտանիքների զավակներ էին: Նրանցից շատերն ուսումը շարունակելու հնարավորություն չունեին: Երկու համայնքների եկեղեցական խորհուրդների և անհատ բարեգործների միջոցով լուծում էին գտնում երիտասարդության կրթության խնդիրները:

Պետերբուրգում հռչակավոր ծովանկարիչ Հ. Այվազովսկին ցուցահանդես է կազմակերպում, որի մուտքի ամբողջ գումարը հատկացնում է Գեղարվեստի ակադեմիայի չքավոր ուսանողներին: Մինչ այդ նա 1500 ռուբլի էր հատկացրել հօգուտ չքավոր ուսանողների¹⁵⁰:

Մայրաքաղաքների հայկական համայնքները, առաջին հերթին Պետերբուրգի համայնքը, հանձին եկեղեցական խորհրդի, ուշադրության կենտրոնում էին պահում տնտեսական դժվարին կացության մեջ հայտնված որբանոցները: Նման օգնությունները տևական բնույթ են ունեցել: Հիշատակենք միայն Մշո Ս. Կարապետ նշանավոր վանքի որբանոցին օժանդակելու օրինակը: Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նիստը նախագահող Ն. Ադոնցը 1907 թ. հայտնում է Մաղաքիա պատրիարքին, որ, լսելով Մշո Ս. Կարապետ վանքի դժվարին կացության մասին, եկեղեցական խորհուրդը հատկացրեց 600 ռ. գումար: Տարիներ անց՝ 1912 թ., եկեղեցական խորհուրդը կրկին Կ. Պոլսի պատրիարքին հայտնում է, որ խորհուրդը 500 ռուբլի նպաստ է տվել Ս. Կարապետ

¹⁴⁹ Մշակ, 1881, N 28:

¹⁵⁰ Նույն տեղում, 1887, N 16:

վանքի որբանոցին և նույնքան գումար՝ Վարազա վանքի որբանոց-վարժարանին¹⁵¹:

Աջակցություն կազմակերպելու անհրաժեշտություն էր առաջանում նաև անկանխատեսելի երևույթների, բնական աղետների ժամանակ:

1881 թ. Արևմտյան Հայաստանում երաշտի հետևանքով գյուղատնտեսությունը հայտնվում է ճգնաժամային վիճակում: Անբերրիության հետևանքով սովն այնպես է իր ճիրանների մեջ առնում բնակչությանը, որ առանց դրսի օգնության հնարավոր չէր ստեղծված դժվարին կացությունից դուրս գալ: Մոսկվայի հայ համայնքը հանգանակում է 4243 ռուբլի, որից 3500 ռուբլին «Մշակի» խմբագրության միջոցով ուղարկվում է Արևմտյան Հայաստանի սովյալներին և դպրոցներին: Հատկանշական է, որ նվիրատվությանը մասնակցեցին նաև օտարազգիներ՝ Շիշկինը, Կոտելնիկովը, Ստուկինը, Շպիսը, Մալուտինը, Ուսեին Շախը և ուրիշներ¹⁵²:

Արևմտյան Հայաստանում սովն այնպիսի չափեր էր ընդունել և այնպիսի վտանգ ստեղծել, որ անգամ կարիքի մեջ գտնվող ուսանողությունն է հանգանակություն կազմակերպում: Պետերբուրգի հայ ուսանողներին հաջողվում է ժողովել ընդամենը 48 ռուբլի: Տեսնելով, որ այդ գումարը շատ փոքր է, նրանք իրենց ուժերով երկու ներկայացում են տալիս «Դալալ Ղազո», «Գիշերվա սաբրը խեր է», որպեսզի ստացված հասույթն ավելացնեն հանգանակած գումարին և ուղարկեն սովյալներին:

Մոսկվայի հայ ուսանողները հավաքում են 134 ռուբլի 30 կոպեկ և նույնպես ուղարկում հայրենակիցներին¹⁵³:

Հայաստանի տարբեր մասերում բնական աղետները, առաջին հերթին երկրաշարժերի գործած ավերածությունները տնտեսական, սոցիալական դժվարին կացության մեջ էին զգում բնակ-

չությանը: Այդպիսի պարագաներում գաղութահայությունն անտարբեր դիտողի դերում չէր մնում, անմիջապես օգնության էր հասնում հայրենակիցներին: 1889 թ. հզոր երկրաշարժն Ախալքալաքի ամբողջ գավառում բնակչությանը մեծ վնաս պատճառեց: Ամբողջ երկրով մեկ աղետյալներին օգնելու շարժում սկսվեց:

Մոսկվայի հայ հասարակայնությունը 2900 ռուբլի է հավաքում և ուղարկում երկրաշարժից տուժածներին: Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը հապշտապ 1000 ռուբլի գումար է տրամադրում նույն նպատակով¹⁵⁴: Նույնը կատարվեց Էրզրումում, Շամախիում, Ագուլիսում, և այլ վայրերում տեղ գտած բնական աղետների պարագայում:

Վերոհիշյալ օրինակները հյուսիսի հայկական երկու համայնքների՝ հայրենիքի հետ կապվածության աստիճանի, ազգակիցներին նեղ վիճակից, տնտեսական ծանր դրությունից հանելու ընդամենը մի քանի դրվագներ էին միայն:

Հայ ժողովուրդը պատմության հաջորդ փուլը՝ նոր շրջանը թևակոխեց, երբ ժամանակի ազատամտական զարթոնքը, նրա առաջադրած նոր խնդիրներն ազդակ էին դառնում ու խթանում մշակույթի զարգացումը: Հարկավոր էր ժողովրդին լուսավորել, ազգային ոգի ներարկել, բարձրացնել նրա ինքնագիտակցությունը: Բնականաբար, գիտությունը, արվեստը, գրականությունը, մամուլը արձագանքում էին ժամանակի առաջադրած խնդիրներին:

Հատկապես նշանակալի էր եվրոպական գաղափարական կյանքի նվաճումներին հասու Ռուսաստանի առաջադեմ մտքի կենտրոններ Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքների դերը: Հայերը հաղորդակից էին դառնում հասարակական կյանքում, արվեստի, գիտության, լուսավորության ասպարեզներում ռուսա-

¹⁵¹ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 978, թ. 111; գ. 989, թ. 70:

¹⁵² Մշակ, 1881, N 17, 67:

¹⁵³ Նույն տեղում, 1881, N 20, 118:

¹⁵⁴ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 987, թ. 1:

կան մտքի կենտրոններում կատարվող առաջընթացին: Նրանք ռուսական կյանքի նորն ու առաջադեմը լծորդում, անդրադարձ էին կատարում դեպի հայրենի երկիր, դեպի աշխարհասփյուռ հայությունը:

Երբ խոսք է բացվում Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքների ուսումնակրթական գործի մասին, ապա, բնականաբար, Լազարյան ճեմարանն է հառնում մեր առաջ:

Լազարյան տոհմի նշանավոր ներկայացուցիչ Յովհաննես Լազարյանը, մտահոգ լինելով հայ մանուկների ուսման խնդրում, մահից առաջ՝ 1801 թ., 200 հազար ռուբլի է կտակում ուսումնարան հիմնելու համար և կտակակատար է նշանակում կրտսեր եղբորը՝ Յովակիմին: Վերջինս 1812 թ.՝ Յայրենական պատերազմն ավարտվելուց հետո, իր անձնական միջոցներից ևս նկատելի հատկացումներ կատարելով, գործնական բնույթ է տալիս ուսումնարանի հիմնադրմանը: Լազարյան ճեմարանը բացվեց 1815 թ. Մոսկվայում¹⁵⁵:

Ճեմարանն իր գոյության սկզբնական շրջանում՝ բազում դժվարությունների է հանդիպում: Գտնվելով լուսավորության մինիստրության ենթակայության ներքո՝ մինիստրները խոչընդոտում էին ճեմարանի բնականոն աշխատանքները: Ստեղծված դժվարին իրավիճակից ուսումնարանը զերծ պահելու, լուսավորության նախարարության ենթակայությունից հանելու համար Լազարյաններն, ի վերջո, խնդրի կարգավորման խելամիտ եղանակ են գտնում: Նրանք փորձում են օգտագործել Ռուսաստանի կառավարության բարձրաստիճան գործիչների հետ իրենց ունեցած մտերմական կապերը և նրանց միջոցով ապահովել ճեմարանի կանոնակարգված գործունեությունը:

Ճեմարանի հիմնադիր Յովակիմ Լազարյանը 1824 թ. դիմում է Պետական Խորհրդի և մինիստրների կոմիտեի անդամ կոմս Ալեքսեյ Արակչենկին և հայցում է վերջինիս համաձայնությունը, որ

ճեմարանը հանվի լուսավորության մինիստրության ենթակայությունից և դրվի նրա գլխավոր ենթակայության տակ: Ստանալով Արակչենկի համաձայնությունը՝ Եփրեմ կաթողիկոսը դիմում է Ալեքսանդր I-ին: Կայսրը հատուկ հրամանագրով թույլատրում է կատարել նման վերափոխություն:

Դրանից հետո մինչև 1872 թ. Լազարյան եղբայրների՝ Յովհաննեսի և Խաչատուրի խնդրանքով ճեմարանի գլխավոր պետի պաշտոնը զբաղեցնում են կառավարության ամենաբարձր պաշտոնյանները և ապահովում ճեմարանի բնականոն գործունեությունը¹⁵⁶:

Կանոնադրության համաձայն՝ Լազարյան ինստիտուտ էին ընդունվում 10-14 տարեկան 30-40 հայ պատանիներ, որբեր, աղքատ ընտանիքների զավակներ և սովորում հասարակության հաշվին: Սովորում էին նաև հայ և տարբեր ազգերի պատկանող երեխաներ՝ լրիվ կամ զեղչված ուսման վարձ վճարելով: Ուսման ծրագիրը բավականաչափ ընդգրկում էր: Ավանդվում էին առաջին հերթին հույն-ռուսական և հայկական դավանանք, Սուրբ գիրք և եկեղեցու պատմություն, ապա՝ պատմություն, աշխարհագրություն, տրամաբանություն, քերականություն, թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ճարտասանական արվեստ, նկարչություն, երգ, պար: Լեզուներից դասավանդվում էին ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն: Ուսուցումը կազմակերպվում էր 4 աստիճանով՝ բարձր, միջին, ցածր և նախապատրաստական դասարաններով:

Լազարյան ճեմարանում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ ստացվող մշտական եկամուտները չէին բավարարում հաստատության օրեցօր աճող ծախսերը: Մյուս կողմից գրագետ հոգևորականներ ունենալու անհրաժեշտությունը հրատապ լուծում էր պահանջում:

¹⁵⁵ Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն, մշվ. աշխ., էջ 216-217:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 221-222:

Իրար հետ կապ չունեցող մտահոգիչ հիմնախնդիրները լուծելու յուրօրինակ և միաժամանակ հիմնավոր տարբերակ առաջարկեց Խ. Լազարյանը՝ 1837 թ. սեպտեմբերին բարձրագույն ատյաններին դիմելով հետևյալ առաջարկով. Մայրաքաղաքների 5 եկեղեցիները միավորել Լազարյան ճեմարանի հետ և ստեղծել տնտեսական մի ընդհանուր վարչություն, որտեղ տնտեսական միջոցների պակասը կլրացվի մյուսի կողմից: Հիրավի, որպես կանոն, Պետերբուրգի եկեղեցիները եկամուտների մեծ հավելում էին ունենում, իսկ Մոսկվայի եկեղեցիները՝ պակասորդ: Մյուս խնդրի՝ կրթված հոգևորականներ պատրաստելու առնչությամբ Խ. Լազարյանն առաջարկում էր ինստիտուտում բացել հոգևոր բաժին¹⁵⁷:

Կայսրը 1841 թ. հունվարին հավանություն է տալիս ներկայացված վերափոխումներին, իսկ Սենատը հաստատում է այն:

Կայսեր կողմից 1848 թ. մայիսի 10-ին հաստատված ծրագրի համաձայն՝ Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը հավասարեցվում է առաջին կարգի լիցեյներին: Վեցամյա ուսուցումը դարձվում է ութամյա: Ավելացվում են 7-րդ և 8-րդ հատուկ լիցեյական ուսման դասարանները¹⁵⁸:

1850 թ. ընդհատվեց Լազարյան տոհմի արական գծով ժառանգորդությունը. մահացավ Խ. Լազարյանի փոքրահասակ (7 տարեկան) Հովհաննեսը: Նրա ծնողները՝ Խ. Լազարյանը և Մանուկ Բեյի դուստր Եկատերինան, նաև հորեղբայր Հավհաննեսը, ի հիշատակ Լազարյանների վերջին ժառանգի, 60 հազար ռուբլի արծաթ գումար նվիրաբերեցին ճեմարանում աղքատ հայ ընտանիքների 14 երեխաների համար նախապատրաստական բաժին բացելու: Այդպիսի բաժին բացելը հույժ կարևոր էր տարբեր գա-

¹⁵⁷ Մսերեանց Ս., Յիշատակարան կենաց եւ գործոյ մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856, էջ 102:

¹⁵⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ., 119, գ. 56, վավ. 94, թ. 157-159:

վառներում ապրող, լեզու չիմացող ունեզուրկ հայ երեխաներին ինստիտուտ ընդունվելուն նախապատրաստելու համար¹⁵⁹:

Բոլոր գիմնազիաների շրջանավարտներին թույլատրվում էր առանց քննությունների ընդունվել համալսարան, որից չէին օգտվում Լազարյան ինստիտուտի շրջանավարտները: Այդ կարգն ինստիտուտի վրա տարածելու նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որն այնպիսի փոփոխություններ է մտցնում դասավանդվող առարկաների ծրագրերի մեջ, որ ճեմարանը լիովին բավարարի լրիվ միջնակարգ կրթություն ապահովելու պահանջները:

Այդ բարեփոխումների իրականացումը պահանջում էր լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնց աղբյուրը չէր գտնվում: Խ. Լազարյանն ինստիտուտը հանում է ստեղծված դժվարին դրությունից՝ իր անձնական միջոցներից նվիրաբերելով 200 հազար ռուբլի: Նրա այդ քայլը մեծ տպավորություն է գործում բոլորի վրա: Ալեքսանդր II կայսրը նրան պարգևատրում է Սպիտակ առյուծի շքանշանով¹⁶⁰: Այդ բարեփոխումները սկսում են կիրառել 1865 թ., որոնք մեծապես նպաստում են ինստիտուտի բարգավաճմանը: Ինստիտուտ են ընդունվում ունակ սաներ, աճում է աշակերտների թվաքանակը: Եվ դա հասկանալի է: Շրջանավարտներին առաջին հերթին հետաքրքրում էր բարձրագույն կրթություն ստանալու հարցը, ինչը մինչ այդ հնարավոր չէր:

Այդ նույն ժամանակ գլխավոր պետ Վ. Բուտկովը ներկայացնում է ճեմարանը վերափոխելու հետևյալ նախագիծը: Լազարյաններից վերջինի՝ Խ. Լազարյանի մահից հետո ինստիտուտը թողնել նույն կարգավիճակում, սակայն դնել լուսավորության մինիստրության ենթակայության ներքո, իսկ հոգաբարձուի պաշտոնը դարձնել պատվավոր, բայց պահպանել «Լազարյան» անվանումը: Առաջարկվում էր պահպանել նաև ջրավոր հայ երեխա-

¹⁵⁹ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 232-233:

¹⁶⁰ Թադևոսեան Յ., Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վիեննա, 1953, էջ 387-389:

ների համար սահմանված կարգը, ինստիտուտում մտցնել դասական գիմնագիայի լրիվ դասընթաց: Մշակված բարեփոխումների նախագիծն իրականացնելու պարագայում ճեմարանը հենում էր արևելյան լեզուներ ուսուցանելու իր առաքելությունից և վերածվում մոսկովյան սովորական գիմնագիայի:

Խ. Լազարյանը հավանություն չի տալիս ինստիտուտը վերափոխելու առաջարկվող ծրագրին և տնօրենի պաշտոնում 1869 թ. նշանակում է իր փեսային՝ Յովհաննես Դավիդի Դեյանովին:

Յ. Դեյանովն աշխատել էր որպես տեսուչ և լավ ծանոթ էր ինստիտուտին, լուսավորության մինիստրի տեղակալ էր և ճանաչված էր գործիմացությամբ, բարի ու կիրթ վարքագծով: Անտարակույս, հենց Յ. Դեյանովի խորհրդով, որը լավ էր ճանաչում մինիստրին, Խ. Լազարյանը դիմում է անսպասելի ու վճռական քայլի: Ինստիտուտի գլխավոր պետի պաշտոնում հրավիրում է լուսավորության մինիստր կոմս Դմիտրի Տոլստոյին, որոշում ճեմարանը դնել լուսավորության մինիստրության ենթակայության տակ: Դ. Տոլստոյը 1870 թ. մայիսից ստանձնում է գլխավոր պետի պաշտոնը¹⁶¹:

Մինիստրը կրթության, առհասարակ հասարակական երևույթների մասին ուներ իր հաստատուն սկզբունքները: Ճեմարանի հոբեյանի առթիվ նա հետևյալ միտքն է արտահայտել: Չաստատուն են միայն այն բարեփոխումները, որոնք իրենց հիմքում ունեն պատմական հող, որոնք, չկտրելով կապերն անցյալի հետ և պահպանելով նրանում եղած ամեն լավը, չեն ոչնչացնում այն, այլ զարգացնում ու կատարելագործում են ժամանակի ոգուն և հասարակության պահանջներին համապատասխան: Դ. Տոլստոյը այդ տեսանկյունով էր մոտենում ճեմարանում կատարելիք բարեփոխումներին:

Նա ինստիտուտում այնպիսի բարեփոխումներ է կատարում, որը 1872 թ. դեկտեմբերի 16-ին հաստատվում է բարձրա-

գույն հրամանով, և մինչև վերջ՝ 1918 թ., ինստիտուտն առաջնորդվում է դրանով: 1872 թ. Դ. Տոլստոյը հրաժարվում է գլխավոր պետի պաշտոնից, քանի որ ինստիտուտի՝ լուսավորության մինիստրության ենթակայության տակ անցնելով՝ վերացվում է այդ պաշտոնը¹⁶²:

Հարկ է նշել, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայկական լուսավորական հաստատությունների, մասնավորապես դպրոցների նկատմամբ ցարական կառավարության հետադիմական, ազգահալած ձեռնարկումներից Լազարյան ինստիտուտը՝ որպես հատուկ կրթօջախ, դուրս էր թողնվում կամ չնչին չափով էր դրանց ենթարկվում: Օրինակ՝ 1887 թ. ժողովրդական լուսավորության մինիստրության կարգադրությամբ փակվեցին բոլոր գիմնագիաների նախապատրաստական բաժինները, բայց Լազարյան ինստիտուտին բացառություն արվեց, և կարևոր այդ բաժինը պահպանվեց¹⁶³: 1903 թ. հայոց եկեղեցու գույքի պետականացման մասին որոշումը չկիրառվեց Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների նկատմամբ:

Լազարյանների ճկուն քաղաքականության, պետական և ազգային շահերը հմտորեն զուգակցելու, ավելի ճիշտ՝ միատեղելու շնորհիվ ճեմարանը ժամանակի պահանջների ոգով մշտապես բարեփոխվել, բարգավաճել է: Հայ երեխաներին ուսում տալը, նրանց մայրենի լեզվի ու հայ դավանանքի վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ հաղորդելը, ասել է թե կրոնաբարոյական դաստիարակություն ու մտավոր կրթություն տալը, եղել է Լազարյանների հիմնական նպատակը: Ճեմարանի տնօրինությունը հատուկ հոգ էր տանում, ստեղծում բոլոր պայմանները, որ Հայաստանի հեռավոր գավառներից, գյուղերից մանուկները հասնեն Մոսկվա, սովորեն, կրթվեն: Եվ նրանց հաջողվեց երազանքի հասնող իրենց այդ ցանկությունն իրականացնել:

¹⁶² Նույն տեղում, էջ 238-239:

¹⁶³ Մշակ, 1887, N 98: Շատ հավանական է, որ այդ հարցում դրական միջամտություն կատարած լինի ճեմարանն իրեն շատ հոգեհարազատ համարող լուսավորության մինիստր Յովհաննես Դեյանովը:

¹⁶¹ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 236-237:

Դժվար է գերազնահատել ավելի քան մեկ դար անընդմեջ արգաստվոր գործունեություն ծավալած Լազարյան ճեմարանի նշանակությունը լուսավորություն տարածելու, ռուս և եվրոպական քաղաքակրթությունը հայկական միջավայրում տարածելու, գիտություն, կրթության զարգացման գործում, հայ-ռուսական համակողմանի հարաբերություններում: Լազարյան ճեմարանը տվեց արևելագիտության, հայագիտության, մանկավարժության, հասարակական-քաղաքական բնագավառի լայն ճանաչման արժանացած բազմաթիվ խոշոր մասնագետներ, գործիչներ:

Հայկական համայնքները մեծապես նպաստում էին Հայաստանի ու հայաբնակ բնակավայրերի պատանիների՝ Լազարյան ինստիտուտում կրթություն ստանալուն: Նրանք ամեն ջանք գործադրում էին՝ սատար կանգնելու հայկական գավառներում գործող ուսումնարանների կենսունակությունն ապահովելու, նոր դպրոցներ բացելու, տեղերում կրթական համակարգի բարելավման գործին: Եկեղեցական խորհրդի ներդրումն առավել գնահատելի է դառնում, երբ նկատի ենք առնում, որ ճեմարանի սովորողների շատ չնչին մասն էր Մոսկվայի և Պետերբուրգի տեղաբնակ հայերից: Ուսումնարանի սաների կազմն իր մեծագույն մասով համալրվում էր Հայաստանից և հայաբնակ վայրերից եկող պատանիների հաշվին:

Կրթության հարցով եկեղեցական խորհրդի հետ ավելի ընդարձակ ծրագրերով հարաբերվում էին բազմաթիվ հասարակական կազմակերպություններ: Դրանց մեջ առանձնանում էին Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՅԲԸ) և Բաքվի հայոց կուլտուրական միությունը (ԲՀԿՄ):

Խորհուրդը 1908 թ., ընդառաջելով ԿՅԲԸ նախագահ Ս. Հարությունյանի խնդրանքին, 12 հազար ռուբլի է հատկացնում Կովկասի հայաբնակ շրջանների դպրոցների համար:

Միաժամանակ 2000 ռ. է հատկացնում հայրենիքի վերադարձյալ պանդուխտներին և 3000 ռ. գյուղական դպրոցների համար¹⁶⁴:

Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամ, 1908 թ. հուլիսի նիստի նախագահ ականավոր պատմաբան Ն. Ադոնցը տեղեկացնում է ԿՅԲԸ-ին և ԲՀԿՄ-ին այն մասին, որ խորհուրդն առայժմ 8 հազար ռուբլի է հատկացնում Կովկասի հայկական գավառների կենտրոնական գյուղերում մեկական դպրոց բացելու համար¹⁶⁵:

Հայկական գաղութների գործունեության համազգային բնույթը լավագույնս դրսևորվեց Արևմտյան Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Թեև միայն Ռուսական կայսրության հայկական բնակավայրերի կրթական խնդրով զբաղվելն արդյունավետ ու գնահատելի ձեռնարկում էր, սակայն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանն այդ ոլորտից դուրս թողնելը կնշանակեր լուսավորություն տարածելու առաքելությունը թերի կատարել, հայության մեծ մասին դուրս թողնել այդ ծիրից: Փաստորեն անգամ թռուցիկ ծանոթությունը հավաստում է, որ կարևոր այդ հարցում եկեղեցական խորհուրդը խելամիտ ու նպատակաուղղված քաղաքականություն էր վարում:

Խորհուրդը երկու տարի (1908 և 1909 թթ.) 3 հազար ռուբլի է ուղարկում Կ. Պոլսի պատրիարքին՝ 1000-ական ռուբլի հատկացնելու Աթամարի, Ս. Կարապետի և Վարագա վանքի վարժարաններին՝ ուսումնարանները բարվոք վիճակի մեջ դնելու համար¹⁶⁶:

Համանման օգնություն է կազմակերպվել Երամյան, Էրզրումի Սանասարյան, օրիորդաց, Մուշի և այլ վարժարաններին:

Լազարյան ճեմարանը դարձավ հայագիտության, արևելագիտության ձևավորման ու զարգացման նշանավոր կենտրոն: Նրա դասախոսական կազմի հիմնական մասը ուսումնական ծրագրեր, ձեռնարկներ, դասագրքեր կազմելու հետ մեկտեղ ստեղծեց հայոց պատմության, հայ բանասիրության ու հայ եկե-

¹⁶⁴ ՀԱԱ, ֆ. 399, գ. 1048, ք. 75:

¹⁶⁵ Լույն տեղում, գ. 145, ք. 90:

¹⁶⁶ ՀԱԱ, ֆ. 399, գ. 1, գ. 1037, ք. 43:

ղեցու վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ: Ծանրակշիռ է մասանվորապես հայկական սկզբնաղբյուրների հրատարակման ասպարեզում նրանց վաստակը:

Ուսումնական գործընթացին զուգահեռ ստեղծագործական բեղմնավոր աշխատանքներ կատարողներից էր Մսեր Մսերյանը /1808-1873/, Մկրտիչ Էմինը /1815-1890/, որը Լազարյան ճեմարանը, Մոսկվայի համալսարանը ավարտելուց հետո 1838 թ. ճեմարանում անցել է աշխատանքի, զբաղվել է գիտական գործունեությամբ:

Գիտական մեծ նվաճումների է հասել և մնայուն հետք թողել Մ. Էմինի սաներից Քերովբե Պատկանյանը /1833-1889/: Նա մեծ հաջողությամբ սովորել է հին լեզուներ, պարսկերեն, գրաբար: Նա հիմնավորապես ուսումնասիրել է մոնղոլների պատմությունը, խորացել Ասորեստանի պատմության մեջ, սովորել սեպագիր կարդալ և հետազոտել Վանի սեպագիր արձանագրությունները: Նա ուսումնասիրություններ է նվիրել հայոց լեզվին, հայերենի բարբառներին, անհրաժեշտ գիտական ապարատով, հայերեն և ապա ռուսերեն հրատարակել միջնադարյան մի շարք պատմիչների բնագրերը:

Ք. Պատկանյանի աշակերտներից Նիկողայոս Մառը /1864-1934/ նոր փուլ բացեց արևելագիտության, կովկասագիտության, այդ թվում՝ հայագիտության բնագավառում:

Մեծ էր հետաքրքրությունը մասնավորապես միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ուսումնասիրության, նրա հնագիտական պեղումների նկատմամբ:

Եկեղեցական խորհուրդը տեղեկանալով Ն. Մառի կողմից Անի քաղաքի պեղումների մասին և, խորապես ըմբռնելով դրա նշանակությունը, մեծ գումար է հատկացնում պեղումները շարունակելու համար: Անգամ Առաջին աշխարհամարտի տարիներին, եկեղեցական խորհրդի համար ստեղծված ֆինանսական դժվարին ժամանակներում, պեղումներին հատկացվող 3500 ռուբլի գումարը թողնվել է անփոփոխ:

Անի քաղաքի հնագիտական ուսումնասիրության նկատմամբ եկեղեցական խորհրդի դիրքորոշումը դուրս չէր մնում անգամ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի ուշադրությունից: Ակադեմիայի պրեզիդենտ Կոնստանտին Ռոմանովը 1913 թ. հոկտեմբերի 11-ին հատուկ գրությամբ ակադեմիայի և անձամբ իր անունից երախտագիտություն է հայտնում եկեղեցական խորհրդին ակադեմիայի կողմից գործուղված ակադեմիկոս Ն. Մառի գլխավորությամբ Անի քաղաքի պեղումներին տարիներ շարունակ առատաձեռն օգնություն ցույց տալու և անցյալի հուշարձանները պահպանելու համար¹⁶⁷:

Եկեղեցական խորհուրդը միջոցներ է հատկացնում Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսի» և Գյուտ քահանա Աղանյանցի «Դիւան հայոց պատմութեան» բազմահատորյակների հրատարակությանը¹⁶⁸:

Մեծ գրողն ու մտածողը՝ Հովհաննես Թումանյանը, դաշնակցության գործով լինելով Պետերբուրգում, լավ իմանալով ռուսական մայրաքաղաքների հայկական համայնքների գիտակրթական բարձր մակարդակ ունեցող մտավորականության ներուժը, հենց այդտեղ էր բարձրացնում հայագիտության՝ որպես ժողովրդի ինքնությունը հատկանշող, կարևոր մի ուղղության զարգացման հիմնախնդիրները: Նա խորությամբ ու մարգարեաբար էր կանխատեսում քաղաքակրթության զարգացման ուղենիշը, որ տակավին մեկ դար առաջ բարձրացնում էր ազգային ակադեմիա հիմնելու հարցը: Նա լուսավորություն տարածելու, ժողովրդին խավարից հանելու հարցերում յուրովի շարունակում էր Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքների լիբերալ գործիչների գաղափարախոսությունը, բայց առավել գործնական, ընդգրկուն և ապագային միտված առավել խորաթափանց կանխատեսումներով¹⁶⁹:

¹⁶⁷ Նույն տեղում, գ. 1018, թ. 18:

¹⁶⁸ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 281-282:

¹⁶⁹ Թումանյան Հ., ԵԼԺ, հ. 10, էջ 144-147, հ. 6, էջ 355-357:

Վիթխարի էին հայ գրականության ոլորտում կատարված աշխատանքները: Հրատարակվում էին հայ և ռուս գրական ստեղծագործություններ, երկու հասարակական շերտերին ծանոթացնում գրական արժեքներին:

Հրապարակ եկան մամուլի բազմաթիվ օրգաններ, որոնք, որպես կանոն, կարճ կյանք ունեցան, սակայն տեղեկատվություն էին հաղորդում ժամանակի հասարակական-քաղաքական երևույթների, մշակույթի այլևայլ ճյուղերում կատարվող իրադարձությունների մասին:

Թատրոնն արվեստի այն նշանավոր ճյուղերից է, որը հայ ժողովրդի հասարակական զարգացման ասպարեզում նշանակալի դեր է կատարել: Ռուսահայ շրջաններում թատերական ներկայացումները սկիզբ առան Մոսկվայի հայ համայնքում: 1859 թ. Մոսկվայի մի խումբ հայ ուսանողներ կազմակերպում են ներկայացում:

Աստիճանաբար ավելի կատարելագործվեցին ներկայացումները, բարձրացան սիրողական դերասանների մակարդակը, նրանց խաղացած դերերի որակը: Մեծացավ բնակչության հետաքրքրությունը դեպի թատերական ներկայացումները:

Պետերբուրգում ուսանողները 1875 թ. կազմակերպում են Գ. Սունդուկյանի «Պեպոն» և հայկական թեմատիկայով այլ ներկայացում: Շուրջ 10 տարի անց՝ 1884 թ., մայրաքաղաքի ուսանողները ներկայացնում են Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» պիեսը:

Թատերական ներկայացումների որակի բարձրացմանը և հասարակական լայն շրջաններում տարածում գտնելուն մեծապես նպաստում էին նշանավոր դերասանների հյուրախաղերը: Վիթխարի էր հռչակավոր դերասան Պետրոս Աղամյանի այցելությունների նշանակությունը: Մոսկվայի հայ ուսանողների իրավերով 1883 թ. հյուրախաղերի է գալիս Պ. Աղամյանը: Լեփ-լեցուն

դահլիճում նա փայլուն կերպով կատարում է Համլետի դերը՝ արժանանալով ռուս և հայ հանդիսատեսի հիացմունքին¹⁷⁰:

Թատրոնը ինչպես Ռուսաստանի մյուս քաղաքներում, այնպես էլ հատկապես մայրաքաղաքների հայ համայնքներում բազմանշանակ առաքելություն է ունեցել: Գեղագիտական հաճույքից բացի՝ թատրոնը հայրենի ավանդները պահպանելու, հայրենիքի հետ հարաբերվելու ազգապահպան կարևոր լծակ էր: Այն կարևոր գործոն էր ռուսներին հայկական կյանքին ծանոթացնելու, երկու ժողովուրդների մշակութային առնչությունների, փոխհարաբերությունների հարցում:

Հայ համայնքներում երաժշտությունը նույնպես ազգային ավանդները պահպանող, հայրենիքի հետ կապող, ազգային ոգի ներարկող կարևոր գործոն էր: Մոսկվայի եկեղեցիների երգեցիկ խմբի խմբավարի պաշտոնը ստանձնել և երկար տարիներ վարում էր Ռ. Մելիքյանը: Երբ Էջմիածինը 1889 թ. պահանջում է, որ Ռ. Մելիքյանը վերադառնա Մայր Աթոռ, Պետերբուրգի հայ հասարակայնության բազմաթիվ նշանավոր ներկայացուցիչներ ու ծխականներ դիմում են եկեղեցական խորհրդին և հայտնում, որ Ռ. Մելիքյանի կազմած երգեցիկ խումբը քաղաքակիրթ աշխարհին հատուկ նոր երևույթ է մեզանում, և խնդրում են այնպես անել, որ իրենք չզրկվեն այդ քաղցր սաղմոսերգերը լսելուց¹⁷¹:

Հռչակված երաժիշտներից էր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը: Նրա բազմաթիվ ելույթները Պետերբուրգում և Մոսկվայում անցնում էին մեծ հաջողությամբ:

Հայ երաժիշտների կատարմամբ ազգային շատ ստեղծագործություններ էին հնչում մայրաքաղաքներում: Դրանք նպաստում էին ռուս հասարակայնությանը հայկական երաժշտական արվեստին ծանոթացնելուն, ինչպես նաև հայկական համայնքների բնակչության ազգային ոգին ամրապնդելուն:

Այսպիսով, ռուսական մայրաքաղաքների հայկական համայնքներում գրականությունն ու արվեստը ծառայում էին հայ մշակույթի ավանդները տեղի հայության մեջ ամրապնդելու, իր

¹⁷⁰ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 314-319:

¹⁷¹ ՀԱԱ, ֆ.399, ց. 1, գ. 1225, ք. 7, 14, 17:

արմատներից չկտրվելու, այն ռուսական միջավայրին ծանոթացնելու գործին: Միաժամանակ ազգային մշակույթը ռուսական ու եվրոպական մշակույթների փոխազդեցությամբ առաջընթաց քայլեր էր կատարում և այն փոխանցում, տարածում մայր հայրենիքում՝ Հայաստանում:

Սոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքները դարձան հայ մշակույթի արժեքների պահպանման ու զարգացման յուրահատուկ կենտրոններ: Այստեղ հրապարակ եկան հայոց պատմության, բանասիրության և մշակույթի մյուս բնագավառների հիմնարար աշխատություններ: Հայ համայնքները որոշակի ներդրում ունեցան հայ ընթերցողին ռուս և եվրոպական մշակութային արժեքներին ծանոթացնելու հարցում: Նշանակալի է նրանց ներդրումը հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման, երկու ժողովուրդների փոխճանաչման ու հարաբերությունների խորացման գործում:

Բաժին 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՌԴ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Գլուխ 1. Հայկական հասարակական-համայնքային կառույցները Ռուսաստանում հետհեղափոխական տարիներին. Խորհրդային իշխանության հաստատումն ու դրանց գործունեության ավարտը

Առաջին աշխարհամարտի արդյունքում Ռուսաստանի հայկական համայնքների հայության թվաքանակը շեշտակիորեն աճեց, իսկ 1917 թ. հեղափոխությունը Ռուսաստանի հայաբնակ շրջաններում ազգային կյանքի հզոր խթան հանդիսացավ: Քաղաքական բարդ պայմանները խոչընդոտ չղարծան ազգային-համայնքային և կրթամշակութային հաստատությունների ստեղծման համար: Ռուսաստանի հայկական կենտրոններում ազգային կյանքը սկսեցին տնօրինել նախ պատերազմի կարիքների համար հիմնված հայ օգնության կոմիտեները, իսկ ավելի ուշ՝ նրանց հիմքի վրա ձևավորված հայկական ազգային խորհուրդները:

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի, անկայունության պայմաններում երկրի հայկական համայնքներում՝ Դոնում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում և այլ վայրերում ստեղծվեցին ու նկատելի դերակատարություն ստանձնեցին բազմաթիվ հայկական համայնքային կազմակերպություններ, հասարակական-բարեգործական և մշակութային-լուսավորական հիմնարկներ:

Ռուսահայ այն կենտրոններում, որոնք դուրս էին խորհրդային իշխանության վերահսկողությունից, հայկական համայնքային կառույցների օժանդակությամբ գործել են բարեգործական-գաղթականախնամ մարմիններ, դպրոցներ, մամուլի միջոցներ,

կապեր են հաստատվել ՀՀ և նրա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ խոչընդոտել է Ռուսաստանում ազգային կազմակերպությունների գոյությանը, որոնք որակվում էին բուրժուական, ազգայնական-հակախորհրդային և ենթակա էին լուծարման: Խորհրդային իշխանությունն ազգային խմբերի մեջ տարվող աշխատանքներն իրականացնում էր Ազգությունների ժողկոմիսարիատի ազգային բաժանմունքների միջոցով:

1917-1920-ական թթ. Ռուսաստանում գործունեություն ծավալած ազգային-համայնքային կառույցները դիտվում էին նաև որպես սոցիալական անհավասարության, բուրժուական գաղափարախոսության և ազդեցության տարածման «գործիքներ»: Այդ կառույցների փոխարեն ամրապնդվող խորհրդային իշխանությունը նպատակահարմար էր գտնում ձևավորել տեղական խորհուրդներին և գործկոմներին կից հայկական բաժանմունք-սեկցիաներ՝ Հայկական Գործերի Կոմիսարիատի ենթակայության ներքո:

1914-1918 թթ. գործում էր **Մոսկվայի հայկական կոմիտեն**, որն ուղղություն էր տալիս Մոսկվայի հայ համայնքի ազգային-մշակութային և հասարակական կյանքին՝ ստանձնելով համայնքի ղեկավար կենտրոնի դերը, օժանդակում էր հայ կամավորներին, արևմտահայ փախստականներին: Մոսկվայում բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո Կոմիտեն փակվեց:

ՌԽՖՍՀ ժողկոմխորհը (նախագահ Վ. Լենին) 1918 թ. հունիսի 12-ին ղեկրետ է ընդունում «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության խորհուրդները, ռազմա-հեղափոխական կոմիտեները և մյուս բուրժուական կազմակերպությունները լուծարելու մասին»: Այս ղեկրետի հրապարակումով էլ սկիզբ է դրվում խորհրդային իշխանության վերահսկողության

տակ գտնվող բոլոր տարածքային կառույցների՝ խորհուրդների, համայնքային կառույցների, հայ քաղաքական կազմակերպությունների գործունեության դադարեցման գործընթացին: Դեկրետում այդ մասին հստակորեն նշվում էր. «Նկատի ունենալով, որ ՌԽՖՍՀ տարբեր քաղաքներում գոյություն ունեցող հայկական ազգային խորհուրդները և կոմիտեները, ինչպես նաև Հայաստանի պաշտպանության խորհուրդների կամ ռազմա-հեղափոխական կոմիտեների անվան տակ գործող, կամ այլ, բուրժուական կազմակերպությունները փաստացիորեն հանդիսացել և հանդիսանում են Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի մասնաճյուղեր՝ գտնվելով կապի մեջ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության հետ, ինչպես նաև այն, որ այդ բուրժուական կազմակերպությունները, որոնց մեջ են մտնում բացահայտ հակահեղափոխական տարրեր, քողարկվելով Հայաստանի պաշտպանության կեղծ խոսքերով իրականացնում են դրամահավաք և ձևավորում են ջոկատներ հակահեղափոխական Հայկական ազգային խորհրդի տրամադրության տակ դնելու համար և խորհրդային իշխանության դեմ ուղղված քարոզչություն են տանում...»¹⁷² ենթակա էին անհապաղ լուծարման: Այդ կառույցների լուծարումից հետո նրանց փաստաթղթերը, գույքն ու կապիտալը, ինչպես նաև զբաղեցրած շինությունները դրվում էին **Հայկական գործերի կոմիսարիատի** ենթակայության տակ, որը ստեղծվեց 1917 թ. դեկտեմբերին¹⁷³: Այն վայրերում, որտեղ Հայկական գործերի կոմիսարիատը (1917-1921 թթ.) բաժանմունքներ չուներ, վերոհիշյալ գույքը հանձնվելու էր տեղական խորհուրդներին: Չնայած այն հանգամանքին, որ հայկական կառույցների ճակատագիրը կանխորոշված էր, Հայկական ազգային կոմիտեն բողոքարկեց ժողկոմխորհի վերոհիշյալ որոշումը, որի լուսններն անցան հունիսի 27-ին ժողկոմխորհին կից հանձնաժողովում:

¹⁷² Декреты Советской власти, том III, М., 1964, с. 15.

¹⁷³ Ալիխանյան Ա., Հայկական գործերի Կոմիսարիատի գործունեությունը, Ե., 1958, էջ 21:

* Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ (Դաշնային) Սոցիալիստական Հանրապետություն:

Հանձնաժողովի դռնփակ նիստի արդյունքում օգոստոսի 1-ին հայկական ազգային կազմակերպությունների փակման որոշումը համարվեց ճիշտ, իսկ օգոստոսի 3-ին ժողկոմխորհն իր նիստում հաստատեց հանձնաժողովի այդ որոշումը:

Ռուսաստանի հայերի ազգային կյանքի ղեկավարությունը բոլշևիկյան իշխանությունը դրեց Հայկական գործերի կոմիսարիատի վրա, որը գործում էր Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից և մյուս ազգային բաժանմունքների հետ միասին առաջադրանք ուներ պայքար ծավալելու հակահեղափոխության դեմ՝ նրա ազգային դրսևորումներով հանդերձ¹⁷⁴, անշուշտ, նկատի էր առնվում նաև հայկական ազգային կառավարության դեմ տարվելիք գործունեությունը: Կոմիսարիատն իր հակահեղափոխական պայքարի առանցքն էր դիտում Ռուսաստանի տարածաշրջաններում գործող և հայ «բուրժուա-նացիոնալիստական» որակում ստացած հայկական կազմակերպությունների վերացումն ու նրանց ունեցվածքի բռնագրավումը հօգուտ Կոմիսարիատի¹⁷⁵, ինչն էլ նույնօրինակ հակազդեցություն էր բերում. «Ուկրաինան, Կուբանը, Դոնը և Հյուսիսային Կովկասը քաղաքացիական պատերազմի տարիներին ցարական գեներալների ձեռքն անցնելուց հետո Կոմիսարիատի բաժանմունքները դադարում էին գործելուց»¹⁷⁶: Հայկական գործերի կոմիսարիատի գործունեության առաջին փուլում ՌԽՖՍՀ ժողկոմխորհի ղեկրեսող (1918 թ. մարտ) փակվեց Պետերբուրգի Հայկական Ռազմական Կոմիսարիատը, «որի գլուխ կանգնած էր Կերենսկու Շտաբի պետ, գեներալ Բագրատունին: ...Հայկական Կոմիսարիատն իր ձեռքն է վերցրել հայկական դեմոկրատիայի քաղաքական և մշակութային կյանքի ղեկավարումը, ճիշտ է միայն

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 26:

¹⁷⁵ Ալիխանյան Ս., Վահան Տերյանի պետական գործունեությունը, Ե., 1956, էջ 133:

¹⁷⁶ Ալիխանյան Ս., Հայկական գործերի Կոմիսարիատի գործունեությունը, նշվ. աշխ., էջ 47:

խորհրդային տարածքի սահմաններում»¹⁷⁷: Այսպես, Ռուսաստանի տարբեր շրջաններում գործող հայկական բազմաբնույթ կառույցների դեմ պայքարի սկիզբ դրվեց:

Հայկական գործերի կոմիսարիատի նախագահն էր Վառլամ Ավանեսովը (Մարտիրոսյանը), աշխատակցում էին Վ. Տերյանը (տեղակալ), Պ. Մակինցյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ: Ռուսահայերի շրջանում խորհրդային քաղաքականության իրագործումը, մասնավորապես, ազգային քաղաքականության սկզբունքների տարածումը դիտելով իր գլխավոր խնդիրը, Կոմիսարիատը կարողացավ զգալի քարոզչական աշխատանք կատարել մշակութային-լուսավորական ասպարեզում, օգնել Մոսկվայում և Ռուսաստանում կենտրոնացած մեծաթիվ հայ փախստականներին, կարիքավորներին: Այս ուղղությամբ անգնահատելի աշխատանք է իրականացրել Վ. Տերյանը, ում գործունեությունն ընդգրկել է հայ գաղթականներով լեցուն Հյուսիսային Կովկասն ու Պոլվոլժին: Կոմիսարիատի գործունեության վերաբերյալ Վ. Տերյանի կազմած 1918 թ. նոյեմբերի 25-ի հաշվետվության մեջ ներկայացված է այդ շրջաններում Գաղթականական բաժանմունքի իրականացրած գործունեությունը: Հայ գաղթականներին աջակցություն ցուցաբերելու համար ԼԳ ժողկոմատը ավելի քան 6 մլն. ռուբլի է հատկացրել Գաղթականական բաժանմունքին բժշկասանիտարական ջոկատ կազմակերպելու և Պոլվոլժին, Հյուսիսային Կովկաս գործուղելու համար. «Առաջին ջոկատը հուլիսի 29-ին ուղևորվեց Աստրախան ընկ. Տերյանի գլխավորությամբ՝ իր հետ տանելով անհրաժեշտ քանակի գումար և երկու վագոն դեղորայք ու այլ ապրանքներ Աստրախանի և Հյուսիսային Կովկասի փախստականների կարիքների համար»¹⁷⁸:

Կոմիսարիատն ու նրա տեղական բաժանմունքներն Աստրախանում, Դոնի Ռոստովում, Արմավիրում, Սարատովում, Խար-

¹⁷⁷ Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении, сб. док., Е., 1957, с. 243.

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 247:

կովում և այլ վայրերում հայ գաղթականների համար բացել են հիվանդանոցներ, որբանոցներ, հոգացել կարիքները: 1919-1920 թթ. ընթացքում Կոմիսարիատը ստեղծել է իր տեղական բաժանմունքների լայն ցանցը «...սկսած Սիբիրից մինչև Բելոռուսիա և Բաքու»¹⁷⁹:

1919 թ. Կոմիսարիատը ձեռնամուխ է եղել Ուկրաինայի տարածքում հայկական ազգային կազմակերպությունների վերացման և միաժամանակ Կոմիսարիատի բաժանմունքներ ձևավորելու գործին: Ուկրաինայում Հայկական գործերի կոմիսարիատի լիազոր է նշանակվել Ս. Մարգարյանցը, բաժանմունքներ են հիմնվել Կիև, Խարկով և Օդեսա քաղաքներում:

Հայկական գործերի Կոմիսարիատը գործեց մինչև 1921 թ. մարտ ամիսը, երբ ՌԽՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատի որոշմամբ լուծարվեց:

Հետհեղափոխական տարիներին Ռուսաստանում նշանակալի գործունեություն ծավալած համայնքնային կառույցները մի քանիսն էին:

Նոր Նախիջևանի և Դոնի հայ համայնքի ազգային-մշակութային կյանքն այս շրջանում տնօրինում էր 60 հոգուց բաղկացած Համայնական Խորհուրդը, որն ընտրվել էր 1917 թ. վերջին՝ գաղութի հայ հասարակությունը ներկայացնող կուսակցություններից (ՀՅԴ, ՍԴ Հնչակյան և այլն): «Համայնական Խորհուրդը, փաստորեն, ոչ միայն Նոր Նախիջևանի ու հայկական գյուղերի, այլև Հարավային Ռուսաստանի ցիրուցան հայության մշակութային կյանքի տնօրենը դարձավ»¹⁸⁰: ներկայացնելով հայ համայնքի շահերն ու դիրքորոշումը իշխանության տեղական մարմինների առջև: Համայնական Խորհուրդն ուներ Նախագահություն և գործադիր մարմին՝ Ազգային Համայնական Վարչություն: Համայնական Խորհրդի գործադիր կառույցներն ու մշտական հանձնա-

¹⁷⁹ Ալիխանյան Ս., Հայկական գործերի Կոմիսարիատի. գործունեությունը, էջ 38:

¹⁸⁰ Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Ե., 1985, էջ 264:

ժողովները հստակ տարանջատված էին. իրենց կազմով առավել մեծաթիվ էին ֆինանսատնտեսական և մշակութային հանձնաժողովները:

Համայնական Խորհրդի Նախագահությունը բաղկացած էր 5 անդամներից, որի նախագահն էր Ռ. Բերբերյանը:¹⁸¹ Ազգային Համայնական Վարչությունը գլխավորում էր Ե. Շահազիզը, ում խմբագրությամբ էլ լույս էր տեսնում համայնքային շաբաթաթերթը՝ «Հայ համայնք»-ը, որը մեծ դերակատարություն ունեցավ համայնքի ներքին կյանքի կազմակերպման գործում:

Նոր Նախիջևանի Հայկական Համայնքի կանոնակարգը բաղկացած էր 24 կետից. «Համայնքային Խորհուրդը խնամք և հոգատարություն էր տածելու՝ հայության լուսավորության, պատասպարման, տնտեսական զարգացման, տեղի հայկական մշակութային-լուսավորական, բարեգործական հաստատությունների, հայ մամուլի հանդեպ»¹⁸²:

Համայնական Վարչությունն, ըստ կանոնակարգի, բաղկացած էր 25 տարեկանը լրացած 3 անդամից, որոնք ընտրվում էին երեք տարով: Դոնի Նախիջևանի հայ համայնքը, հանձինս Վարչության, իրականացնում էր իր քաղաքացիական և գույքային իրավունքները, ձեռք էր բերում շարժական և անշարժ գույք, օտարում այն, մտնում պայմանագրային իրավահարաբերությունների մեջ, օգտվում իրավական պաշտպանությունից և այլն:

Դոնի Նախիջևանի հայկական համայնքի կանոնակարգը Ռոստովի օկրուգային դատարանի որոշմամբ գրանցվել է 1918 թ. օգոստոսի 11-ին:

Հայկական համայնքային կառույցի գործունեությունը շարունակվել է մինչև 1920-ական թթ. սկիզբը, երբ անհրաժեշտ էր նոր կանոնադրություն հաստատել, որը կհամապատասխաներ ՌԽՖՍՀ կազմակերպությունների և միությունների մասին դեկրե-

¹⁸¹ Армянский настольный календарь на 1919 года, Ростов-на-Дону, 1918, с. 20.

¹⁸² Նույն տեղում, էջ 17:

տին: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Դոնի Գործադիր Կոմիտեին կից Ազգային Փոքրամասնությունների Խորհուրդը չի վերագրանցել Դոնի Նախիջևանի հայկական համայնքը և նրա նախկին կանոնադրությունը: Դոնի մարզի Ազգությունների Խորհրդի տեղեկանքում, որն ուղղված էր Հայկական Համայնքային Խորհրդի Նախագահության նախագահ Ղ. Քրիստոսությունին, մասնավորապես, գրված էր. «...ինչպես երևում է Դոնի մարզի Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի գործերից, 1922 թ. հուլիսի 17-ին Դոնի Գործկոմի անունով ստացվել է դիմում բժիշկ Քրիստոսությունից, ուր ներկայացված էին նշված կազմակերպության (համայնքի) գլխավոր նպատակները, վերջինիս գրանցման առնչությամբ: Քրիստոսությունը, լրացնելով հաստատված հարցաթերթը (անկետայն) և դիմումը, կանոնադրության մանրամասն չներկայացնելու հանգամանքով այն դեռևս չի քննարկվել»¹⁸³: Վերագրանցման հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով՝ Համայնքային Խորհրդի ընդհանուր ժողովը գործող կանոնադրության մեջ փոփոխություններ է կատարել կանոնադրության վերջնական տարբերակն ընդունելու համար: Նախևառաջ, ամրագրվել է այն կետը, ըստ որի. «Համայնքը կազմակերպվում է միավորելու համար հայազգի քաղաքացիներին, որոնք բնակվում էին Նախիջևան, Դոնի Ռոստով քաղաքներում և Դոնի մարզի տարածքում...»¹⁸⁴, այսպիսով, համայնքի անդամ կարող էր դառնալ մարզի յուրաքանչյուր հայ բնակիչ: Ամրագրված երկրորդ կարևոր դրույթն այն էր, որ կազմակերպությունը չէր զբաղվելու քաղաքական-կրոնական գործունեությամբ, այլ միայն մշակութային ձեռնարկներով: Ինչ վերաբերում էր կրթամշակութային նոր կառույցների հիմնմանը, ապա համայնքը պետք է առաջնորդվեր գործող օրենսդրությամբ և ամեն անգամ ստանար Դոնի երկրամասային իշխանությունների հատուկ թույլ-

¹⁸³ Государственный архив Ростовской области (ГАРО), ф. 1818, оп. 1, ед. хр. 477, л. 22.

¹⁸⁴ Նույն տեղում, ք. 9:

տվությունը: Սահմանված էին Համայնքի գործերի կառավարման դրույթները, անդամների իրավունքներն ու պարտականությունները: Փաստորեն, հստակ սահմանվում էին Համայնքի գործունեության և իրավասությունների շրջանակները: Համայնքային Խորհրդի 1922 թ. օգոստոսի 3-ի նիստում կանոնադրության վերջնական տարբերակը մշակելու և ներկայացնելու համար քննարկումներ են կազմակերպվում, որին Ղ. Քրիստոսությունի նախագահությամբ մասնակցել են 31 հոգի: Քրիստոսությունի զեկույցից հետո նիստի մասնակիցները որոշել են. «...ընդունել Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի առաջարկն ու հանձնարարել Խորհրդի ներքոհիշյալ 10 անդամներից կազմված հանձնաժողովին... ղեկավարվելով հին կանոնադրությամբ մշակել նորը, համաձայն նոր օրենսդրության և այն ներկայացնել հաստատման»¹⁸⁵: Քրիստոսությունի հանձնաժողովը, կարճ ժամկետում, փոփոխել և գործող օրենքներին համապատասխանեցրել է Դոնի Նախիջևանի հայկական համայնքի կանոնադրությունը, որն էլ 1922 թ. օգոստոսի 5-ին հաստատվել է Համայնքային Խորհրդի ընդհանուր ժողովում: Վերափոխված կանոնադրությունը բաղկացած էր 21 կետից: Հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ճշգրտվել էին ձևակերպումները, հաճախակի էին դարձել «գործող օրենքներին համաձայն» հավելումները:

Համայնքային Խորհրդի կազմը հասցվել էր 36 անդամի, որոնք հանդիսանում էին ինչպես տեղական հայկական մշակութային կառույցների, այնպես էլ երկրամասի այլ համայնքների ներկայացուցիչներ: Հետագայում, արհեստականորեն հարուցած ձգձգումների արդյունքում, համայնքային կառույցը փակվել է:

Դոնի Նախիջևանի և տարածաշրջանի հայությունը բազմաշերտ էր սոցիալական, լեզվամշակութային առումներով, քանի որ այստեղ էին կենտրոնացել Անդրկովկասից, Թուրքիայից, Պարսկաստանից և Բալկաններից փախստական դարձած հայ

¹⁸⁵ Նույն տեղում, ք. 60:

զանգվածներ: Ուստիև պատահական չէր, որ Դոնի հայության շրջանում աստիճանաբար սկսեցին երևան գալ հայրենակցական կազմակերպություններ՝ Պարսկահայերի և Աղբակահայերի հայրենակցական միությունները:

Պարսկահայերի հայրենակցական միությունը ձևավորվել է Դոնի Ռոստովում, միության կանոնադրությունը հաստատելու համար 1919 թ. ապրիլի 25-ին խնդրագիր է ներկայացվել Դոնի Ռոստովի օկրուգային դատարան: Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրության դրույթները Դոնի Ռոստովի օկրուգային դատարանում քննարկվել են ապրիլի 29-ին և որոշվել է գրանցել այն՝ մտցնելով շահույթ չհետապնդող կազմակերպությունների ու միությունների ռեեստր: Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրությունը բաղկացած էր 30 կետից, որոնք ներկայացնում էին միության նպատակներն ու կառույցի կառավարմանը վերաբերող դրույթները: Հաստատված կանոնադրությամբ Միության նպատակների առանցքն էր. «Դոնի Ռոստովում հիմնել կրթական օջախներ և հասարակական ժողով, որոնք պետք է ծառայեին ազգային, մշակութային-լուսավորչական գործին»¹⁸⁶: Միությունն անհրաժեշտ էր համարում կազմակերպել դասախոսություններ, գրական-գեղարվեստական երեկոներ, ստանալ հայալեզու և օտարալեզու տպագիր հրատարակություններ ու թերթեր, ունենալ ընթերցասրահ և գրադարան: Նպատակահարմար էր դիտվում աջակցել նման հայրենակցական միությունների կազմակերպմանը նաև այլ քաղաքներում. «...հնարավորության սահմաններում բարոյապես և նյութապես աջակցել հայերին հայրենիքում վերաբնակվել, կազմակերպել քարոզ վերաբնակիչներին օգնելու նպատակով»¹⁸⁷:

Դոնի Ռոստով քաղաքում հիմնադրվել է **Աղբակահայերի հայրենակցական միություն**, որի խնդրագիրը Ռոստովի օկրուգային դատարանին իր կանոնադրությունը հաստատելու մասին նե-

¹⁸⁶ ГАРО, ф. 181, оп. 3, ед. хр. 491, л. 2.

¹⁸⁷ Նույն տեղում:

րկայացվել է 1919 թ. օգոստոսի 22-ին: Աղբակահայերի հայրենակցական միության և նրա կանոնադրության հիմնադիրների կազմը գլխավորում էր Խոսրով Մկրտիչը: Աղբակահայերի հայրենակցական միության կանոնադրությունը, գրեթե նույնությամբ, կրկնում էր Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրությունը, նրանում առաջադրված էին նույն խնդիրներն ու նպատակները: Միակ տարբերությունը կայանում էր ընտրովի վարչական մարմնին օժտած լիազորությունների իրականացման ժամկետների մեջ: Խոսրով Մկրտիչն, ում վստահված էր կանոնադրության գրանցման հետ կապված հարցերը, արդեն հաստատված կանոնադրության տարբերակը հետ է ստանում դեկտեմբերի 4-ին. «1919 թ. դեկտեմբերի 2-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանն Աղբակահայերի հայրենակցական միությունը մտցրել է շահույթ չհետապնդող կազմակերպությունների և միությունների ռեեստր»¹⁸⁸:

Համայնքային և հայրենակցական կազմակերպություններից բացի, որոնք հիմնվել ու գործում էին Նոր Նախիջևան և Դոնի Ռոստով քաղաքներում, մշակութային-լուսավորական կազմակերպություններ էին ծնունդ առել նաև Դոնի գյուղական հայության շրջանում: Այսպես, Նեսվիթայի մշակութային-լուսավորական միությունն առաջինն էր, որը 1918 թ. հոկտեմբերի 8-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանում գրանցվել է, որի նպատակն էր. «...սեփական անդամների շրջանում զարկ տալ մշակութային-լուսավորական և կոոպերատիվ պայմաններին, հնարավորություն ընծռել ազատ ժամանակ ստանալ կրթական և մտավոր զբաղմունքներ»¹⁸⁹:

Նմանօրինակ խնդիրներ էր հետապնդում նաև Դոնի մյուս հայաբնակ գյուղում՝ Մեծ Սալայում կազմավորված մշակութային-լուսավորական միությունը: Կազմակերպությունը, որը կոչվում էր «Մեծ Սալայի և շրջակա գյուղերի մշակութային-լուսավոր-

¹⁸⁸ ГАРО, ф. 151, оп. 3, ед. хр. 539, л. 8.

¹⁸⁹ Նույն տեղում ед. хр. 141, л. 2.

րական միություն», հիմնադրել էին Լ. Նոր-Արևյանը, Մ. Դիրացուկը, Կ. Պոպովը, Չեբանովա-Խաչխայանը, որոնք դեռևս 1918 թ. մարտի 16-ին դիմել էին Ռոստովի օկրուգային դատարան միության կանոնադրությունը հաստատելու խնդրանքով: Այս դիմումը մերժվել է 1918 թ. մարտի 22-ին. «...Մեծ Սալայի և շրջակա գյուղերի մշակութային-լուսավորական միության Վարչության գտնվելու վայրը կանոնադրության մեջ չեն նշվելու պատճառով»:¹⁹⁰ Ինչպես երևում է, միության կանոնադրության մեջ առկա անհամապատասխանությունները գործող օրենքներին, հետագա ամիսների ընթացքում ևս հնարավորություն չեն տալիս գրանցելու արդեն փաստացի գոյություն ունեցող միության կանոնադրությունը: 1918 թ. հոկտեմբերի 15-ին Ռոստովի օկրուգային դատարան է ուղղվում նոր խնդրագիր՝ կանոնադրությունը հաստատելու համար:

Միության կանոնադրության գրանցումը ձգձգվել է ընդհուպ 1919 թ. հունվարը: Միության ծրագրերում առանցքային նպատակ էր դիտվում լուսավորության խնդիրներ լուծել. «Միությունը նպատակ ունի նպաստելու լուսավորության տարածմանը Մեծ Սալայում և նրան շրջակա հայկական գյուղերում»¹⁹¹:

Դոնում հիմնված վերոհիշյալ կազմակերպություններից զատ, որոնք ունեին համայնքային, ազգային-հայրենակցական, մշակութային-լուսավորական ընդգծված ուղղվածություն, գործել են նաև աղքատախնամ և հասարակական-բարեգործական այլ միություններ: Դրանց շարքում խիստ հետաքրքրական են հայ կանանց զխավորած կազմակերպությունները, որոնք հիմնականում ուղղված էին փախստականների, աղքատների և հասարակական այլ խնդիրների լուծմանը: Այդպիսի կազմակերպություններ գործում էին թե՛ Դոնի Ռոստովում, թե՛ Նոր Նախիջևանում,

քայց նրանց վերաբերյալ առկա տվյալները սուղ են. «Դոնի Ռոստովում գործում էր հայ կանանց բարեգործական միությունը»¹⁹²:

Դոնում գործել է նաև հայկական ուսանողական կազմակերպություն, որի կանոնադրության օրինակը թվագրված է 1922 թ. նոյեմբերի 23-ով: Այդ կազմակերպությունը կոչվում էր «Դոնի Ռոստովի հայկական ուսանողական հայրենակցական միություն»¹⁹³:

Ղրիմահայերի ազգային համայնքային կյանքը տնօրինեցին Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն ու Վարչությունը: 1917 թ. ռուսական հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժ նկատվեց նաև Ղրիմի հայության շրջանում: Ղրիմահայերը, բնակվելով հայկական կենտրոններից հեռու, այս շրջանում օտարացած էին՝ պատճառը խառնամուսնություններն էին, կրթությունը պետական դպրոցներում և այլն: Պետական ռուսական ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդությունն արագորեն ռուսանում էր, խոսելով միայն ռուսերենով՝ բացարձակ մոռանալով մայրենին:

Ղրիմի հայության թվաքանակը հասնում էր մոտ 15 հազարի: Տասնյակ տարիներ առանձին-առանձին բնակվող տեղի հայության երկու մասերը՝ կաթոլիկներն ու հայ լուսավորչականները մերձեցման փորձեր կատարեցին, և նույնիսկ, լուսավորական նպատակներով հիմնեցին միասնական կառույց՝ Հասարակական Տուն. «Ստեղծվեց միասնական կառույց դպրոցական, ազգային և մշակութային գործերը վարելու համար»¹⁹⁴:

Այնուհանդերձ, այս թույլ փորձերը լուրջ արդյունքներ չտվեցին, անհրաժեշտ էին լուրջ ջանքեր ցանկալի նպատակին՝ Ղրիմում հայ կյանքի ինքնորոշմանը հասնելու համար՝ «Մի կողմից ազգային ոգով դաստիարակված փոքրաթիվ մտավորական հա-

¹⁹⁰ Նույն տեղում, էդ. քր. 42, լ. 2.

¹⁹¹ Նույն տեղում, էդ. քր. 43, լ. 2.

¹⁹² Армянский настольный календарь на 1919 года, с. 25.

¹⁹³ ГАРО, ф. 1818, оп. 1, էд. քր. 477, լ. 75.

¹⁹⁴ Армянский настольный календарь на 1919 года, с. 24.

յությունը, մյուս կողմից, շրջապատող օտար և շատ ուժեղ մշակույթն, արգելք են հանդիսանում Ղրիմի թերակղզու հայության ազգային վերածննդի գործում»¹⁹⁵:

Հայրենասիրական գզացմունքների վերելքը, ազգային նվիրական ձգտումներն, որն համակել էր կովկասահայությանն, իր արծազանքները գտավ նաև ղրիմահայության շրջանում, որտեղ շարժումը գլխավորեցին Ղրիմի «եկվոր» հայերը:

Այսպես, 1918 թ. հունվարին Սիմֆերոպոլում գումարված ղրիմահայերի համագումարը Հայրենիքի պաշտպանության համար կազմակերպեց դրամահավաքներ ղրիմահայերի շրջանում, որոնք անցան չափազանց վատ, տեղի հարուստ հայերն ականջալուր էին հայրենիքի կարիքներին և իրենց նվիրաբերած մանրադրամը որպես ողորմություն էին դիտում. «Գիտակցությունը, որ նվիրաբերությունը հայրենիքի պաշտպանության գործին յուրաքանչյուր հայի սուրբ պարտականությունն է, չկար տեղաբնակ ղրիմահայերի մոտ»¹⁹⁶:

1918 թ. սկսված թուրքական արշավանքի, Արդվինի, Բաթումի ու Անդրկովկասի ուրիշ կենտրոնների անկման հետևանքով, Ղրիմի թերակղզի գաղթական հայության նոր հոսք սկսվեց. «1915-1920 թթ. Ղրիմում ապաստան գտած հայ գաղթականների զգալի տեղաշարժ մտցրին ղրիմահայության քանակական կազմում, որը նկատելիորեն մեծացավ»¹⁹⁷: Ղրիմի հայկական կոմիտեները և տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորած Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն իրենց ջանքերն ուղղեցին հայ գաղթականությանն օժանդակելու գործին: Ցանկանալով օգնել գաղթականներին Սիմֆերոպոլցի հայուհիները բացեցին «Մեկ գավաթ թեյ»-ը (Чашка чая), որով փորձում էին հոգալ հայրենակիցների խնդիրները: Այս շրջանում, երբ Ղրիմում ակտիվանում էր թաթարական ազդեցությունը, հայության շրջանում ևս նկատվե-

ցին տեղաշարժեր՝ սկսեցին ակտիվ դեր վերցնել տեղաբնակ ղրիմահայերը:

1917-1918 թթ. Ղրիմի հայ հասարակության և ղրիմահայ կազմակերպությունների գործունեությունն ընթանում էր անկազմակերպ, չկար համայնքային կենտրոնական կառույց: Այնուհանդերձ, նախորդ տարիների գործունեությունն ու կուտակված փորձը լավ նախադրյալներ ստեղծեցին Ղրիմում Հայ Համայնական Խորհուրդ և Վարչություն հիմնելու համար, որոնք համայնքին տվեցին կազմակերպական նոր որակ, իսկ ազգային խնդիրների լուծման համար իրական հնարավորություններ: 1919 թ. հունվարին գումարվում է Ղրիմի Համահայկական համագումար, որի ժամանակ մշակվում և ընդունվում են Համայնական Խորհրդի ընտրությունների կարգը, Խորհրդի կանոնադրությունը և այլ հարցեր. «...Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդը ընտրված է տյն տարւայ փտրւար ամսին ընդհանուր ընտրողական իրաւունքի հիման վրայ քառակ սիստեմով»¹⁹⁸:

Ղրիմում, ինչպես ռուսահայ մյուս համայնքներում, հայ հասարակական-քաղաքական կյանքում իր լուրջ դերակատարմամբ աչքի ընկնող ՀՅԴ-ն ակտիվորեն մասնակցեց Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի ընտրություններին. «Ընտրություններին մրցում էին երկու ցուցակ՝ N 1 անկուսակցականների ցուցակը և N 2 «Ղաշնակցութեան» առաջարկած ցուցակը: Առաջին ցուցակից անցան 20 անդամ, 2-ից՝ 16: Խորհրդի անդամների ընդհանուր թիւն է 36»¹⁹⁹:

Ընտրությունների արդյունքում հաղթած անկուսակցականների թեկնածու Պետրոս Մալաֆյանն էլ ընտրվում է Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի նախագահ, ավագ փոխնախագահ է դառնում Սմբատ Տեր-Ստեփանյանը, երկրորդ

¹⁹⁵ Նույն տեղում:

¹⁹⁶ Նույն տեղում:

¹⁹⁷ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Ե., էջ 223:

¹⁹⁸ ՀԱԱ, ֆ. 1265, ց.1, գ. 40, թ. 25:

¹⁹⁹ Նույն տեղում:

փոխնախագահին էր Յ. Միրզոյանը (անկուսակցական), իսկ «Խորհրդի քարտուղարն է՝ պ. ՈՆ. Ոնոփեանը»:²⁰⁰

Համայնական Խորհրդին կից գործել են մի շարք հանձնաժողովներ, այդ թվում՝ ֆինանսական-բյուջետային, ժողովրդական լուսավորության, խնամատարական, գաղթականական և վերստուգիչ:

Ղրիմի Հայ Համայնական Խորհրդի ձևավորումից հետո կազմվում է նաև գործադիր մարմին՝ Համայնական Վարչություն, որն ուներ մի շարք բաժանմունքներ. «Համայնական վարչութեան նախագահն է պ. Երևանդ Քեֆչեան, անդամներ՝ Սիմ. Համալեան (քարտուղար, վարիչ ժողովրդական Լուսավորութեան և վիճակագրական բաժանմունքների), Ար. Արծրունի (վարիչ գաղթականական բաժանմունքի), Սիմ. Գրիկեան (վարիչ խնամատարական բաժանմունքի), Յար. Կարապետեան (գանձապահ) և Արշակ Բարխուդարեան (տնտեսական բաժանմունքի վարիչ)»²⁰¹:

1919 թ. ընդունված Սիմֆերոպոլի Հայ Համայնքի կանոնադրությունը բաղկացած էր 27 կետից, որոնք վերաբերում էին Համայնական Խորհրդին ու Վարչությանը, նրանց իրավասություններին ու պարտականություններին, համայնքի անդամներին: Կանոնադրության առաջին կետով սահմանվում էր. «Սիմֆերոպոլ քաղաքում բնակվող հայերը հիմնում են Սիմֆերոպոլի Հայկական համայնք՝ իրենց անդամների ազգային-մշակութային կյանքը կառավարելու նպատակով»²⁰²: Այս մասին առանձին խոսվում է նաև Կանոնադրության չորրորդ կետում, ուր համայնքի ազգային-մշակութային կյանքի տնօրեն դիտվում էր Սիմֆերոպոլի Հայկական համայնքը:

Համայնքի անդամ կարող էր դառնալ յուրաքանչյուր հայ, ով բնակվում էր Սիմֆերոպոլի շրջանում և չէր մերժում իր՝ հայ

ազգությունը (2-րդ կետ): Համայնքի յուրաքանչյուր անդամ 21 տարեկանից սկսած ձեռք էր բերում ակտիվ և պասիվ ընտրական իրավունք:

Ինչպես հայ լուսավորչականների, այնպես էլ հայ կաթոլիկների կրոնական, հոգևոր-դաստիարակչական և եկեղեցական գործերին Համայնքի իրավասությունը չէր տարածվում:

Համայնական Խորհրդի նախագահության՝ Խորհրդի նախագահի, նախագահի ընկերների (տեղակալ) և քարտուղարի լիազորությունների ժամկետը մեկ տարի էր:

Համայնական Խորհրդի գործադիր մարմինը հանդիսանում էր երկու տարի ժամկետով ընտրվող Համայնական Վարչությունը, որը բաղկացած էր երեք անդամից: Համայնական Վարչության իրավասությունն էր Համայնքի անդամների ցուցակագրումը, Խորհրդի որոշումների իրագործումը, զեկուցումների ներկայացումը համայնքի գործերի վերաբերյալ, Համայնքի դրամական միջոցների հավաքումն ու ծախսումները, անդամների գույքային և քաղաքացիական շահերի պաշտպանությունը՝ լիազորագրերի և երաշխավորագրերի տրամադրմամբ:

Կանոնադրության վերջին կետով սահմանվում էր, որ Համայնքի լուծարման դեպքում, Խորհրդի որոշումով, բոլոր միջոցներն ուղղվելու են հայկական մշակութային խնդիրների լուծմանը և փոխանցվելու են այդպիսի խնդիրներով զբաղվող հաստատությանը:

Արդեն 1919 թ. սկզբին Սիմֆերոպոլում ամբողջական տեսք և ձևավորում ստացան համայնքային կառույցները, որոնք անմիջապես անցան համայնքին հուզող խնդիրների կարգավորմանը:

1919 թ. օգոստոսի 1-ին Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն իր նիստում հաստատում է 1919 թ. (մարտի 10-դեկտ. 31) մուտքերի և ծախսումների ցանկը, որը կազմել էր ֆինանսական հանձնաժողովը: Վերոհիշյալ ցանկով 1919 թ. ընթացքում Համայնքի անդամները վճարումներ էին կատարելու ըստ առանձնացված վճարման խմբերի: Համայնական Խորհրդի

²⁰⁰ Նույն տեղում:

²⁰¹ Նույն տեղում:

²⁰² ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 28-29:

նիստում ընդունված այս փաստաթղթի նախատեսվող ծախսումային մասից ակնհայտ է դառնում համայնքային կառույցների գործունեության ամբողջ դաշտը, որն ընդգրկում էր ոչ միայն տեղի մշակութային-կրթական կյանքի ասպարեզը, այլ նաև հայ գաղթականությունն ու զինվորությունը:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն իր 1919 թ. օգոստոսի 1-ի նիստում հաստատում է նաև ֆինանսական հանձնաժողովի կողմից մշակված մեկ այլ փաստաթուղթ, որով սահմանվում էին համայնական տուրքերի չափերն, ըստ որի բնակչության տարբեր խմբերից գանձվելու էին տուրքեր համապատասխան իրենց եկամտային և գույքային ունեցվածքի: Առանձնացվեցին 18 այդպիսի խմբեր:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի կանոնադրության 12-րդ կետով սահմանված էր, որ Խորհուրդը նպատակադիր էր հարաբերությունների մեջ մտնել այլ հայկական համայնական կառույցների հետ, սակայն այստեղ ևս խնդիրներ կային:

Այսպես, Սիմֆերոպոլի Հայկական Համայնական Վարչության նամակից (1919 թ. օգոստոսի 16) ուղղված «Նոր Նախիջևանի և Ռոստովի Հայ Համայնական Վարչությանը» պարզ է դառնում գոյություն ունեցող թույլ կապը երկու հարևան հայաբնակ երկրամասերի հայկական կառույցների միջև: Հետաքրքրական է, որ վերոհիշյալ նամակը պատասխան նամակ էր Դոնի հայկական համայնքային կառույցի նույն թվականի մարտի 15-ի գրության, այսինքն, ուղիղ հինգ ամիս անց գրված նամակի: Սիմֆերոպոլի Համայնական Վարչությունն իր նամակում ներկայացնում էր համայնքային կառույցների վիճակը և գործունեության ուղղությունները՝ նշելով Խորհրդի նոր նախաձեռնություններից ընթացիկ ուստարում «Տավրիկյան Հայկական Գիմնազիայի» և մանկապարտեզի բացման մտադրությունը. «Վարչությունս ուրախութեամբ ապագայում և իրազեկ կը պահի Ձեզ իւր գործունեութեանը ու կեանքին: Յոյսով ենք, որ այսուհետև

հնարաւոր կը լինի հաստատել մեր մինչև սերտ փոխ-յարաբերութիւններ, որոնց արդիւնքը, անշուշտ, շօշափելի կը լինի մեր նորակազմ Խորհրդի ու նրա գործադիր մարմնի համար»²⁰³:

Հայկական համայնքային կառույցների միջև առկա այդ թույլ կապի մասին է խոսում նաև վերոհիշյալ նամակի եզրափակիչ տողը, որից պարզ է դառնում, որ Դրիմի գործել է նաև մեկ այլ հայկական կառույց. «Աւիւրդ չենք համարում յայտնել Ձեզ և այն, որ Համայնական Խորհուրդ ու Վարչութիւն գոյութիւն ունի նաև մեր հարևան Եւպատորիայում»: 1919 թ. օգոստոսի 16-ով թվագրված այս նամակի վերջում, որպես Խորհրդի Վարչության նախագահ, նշվում էր Սիմ. Համայնանի անունը:

Սիմֆերոպոլի Համայնական Վարչության 1920 թ. մարտի 31-ից ապրիլի 13-ը տեղի ունեցած նիստի արձանագրություններից տեսնում ենք, որ Վարչության նախագահն է Ե. Քեֆչյանը, ով նիստի մասնակիցներին հաղորդել է ՀՀ ներկայացուցիչ Սաղաթեյանի պատվին ընդունելություն կազմակերպելու անհրաժեշտության մասին²⁰⁴:

ՀՀ ներկայացուցչի ընդունելությանը հրավիրվել են Համայնական Խորհուրդը, Վարչությունը, Դրիմի հայերի Կենտրոնական կոմիտեն, Հայ Լուսավորչական եկեղեցական Հոգաբարձությունը և Հայ Կաթոլիկ եկեղեցու, հայրենակցական միությունների և այլ հաստատությունների ներկայացուցիչներ, որոնք մասնակցության համար պետք է վճարեին 500 ռուբլի:

Հետաքրքրական է, որ Համայնական Վարչության արձանագրված վերջին նիստը (թվով 88) տեղի է ունեցել 1920 թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 9-ը:

Բայցևայնպես, տարբեր հայկական կառույցների միջև գործակցության և, ընդհանրապես, թույլ կապի կարևոր պատճառն էր հանդիսանում Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի

²⁰³ Նույն տեղում, թ. 25:

²⁰⁴ Государственный архив Автономной республики Крым (ГААРК), ф. 4988, оп. 1, д. 4, л. 34.

հետևանքով առաջ եկած դժվարություններն ու հաղորդակցության հնարավորությունների բացակայությունը:

1919 թ. վերջից - 1920 թ. աշունը Ղրիմը դարձավ քաղաքացիական պատերազմի ակտիվ թատերաբեմ, ուր կենտրոնացել էին «սպիտակ շարժման» վերջին ուժերը, որոնք թերակղզուց տարհանվեցին:

Ղրիմում գործող հայկական համայնքային և ազգային մյուս կառույցների ճակատագիրը որոշակիանում է արխիվային մի փաստաթղթից, ուր ներկայացվում է Ղրիմհեղկոմի կողմից ձևավորված Արտակարգ Եռյակի զեկույցը՝ Ղրիմի տարածքում հայկական ազգային հիմնարկների լուծարման գործընթացի ու արդյունքների մասին: Արտակարգ Եռյակը, որի անդամ էր նաև Մ. Մանուկյանը (ձևավորվել էր 1920 թ. նոյեմբերի 30-ին), իր գործունեությունը շարունակել է 1920 թ. նոյեմբերի 30-ից- 1921 թ. փետրվարի 1-ը և լուծարել է թերակղզու 7 քաղաքների բոլոր հայկական ազգային հաստատությունները²⁰⁵: Եռյակի հաշվետրվությունից պարզորոշ երևան է գալիս Ղրիմում գործած և լուծարված հայկական կառույցների ամբողջական ցանկը:

Սիմֆերոպոլ քաղաքում փակվել են Հայկական Համայնական Խորհուրդը, Հայկական Բարեգործական Ընկերությունը, Հայկական Կաթոլիկ Բարեգործական Ընկերությունը, «Մեկ գավաթ թեյ» Հայկական Բարեգործական Ընկերությունը, ինչպես նաև 2 հայկական հայրենակցական կազմակերպությունները՝ Թուրքահայերի և Տայքի²⁰⁶:

Եվպատորիայում և Յալթայում փակվել են տեղերի Հայկական Համայնական Խորհուրդներն ու Հայկական Բարեգործական Ընկերությունները, Սևաստոպոլում՝ Եկեղեցական և դպրոցական Հոգաբարձությունը:

Ղարասուբազարում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը, Կաթոլիկ Բարեգործական Ընկերությունը,

Հայկական Գաղթականական Կոմիտեն և Դպրոցական Հոգաբարձությունը:

Ստարի Կրիմում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը, Որբախնամ Կենտրոնական Կոմիտեն, Հայկական Դպրոցական Հոգաբարձությունը:

Թեոդոսիայում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը և Հայկական Հեղափոխական Կոմիտեն:

Արտակարգ Եռյակը Ղրիմի հայկական բոլոր այս հաստատությունների լուծարումից հետո, նրանց շարժական ու անշարժ գույքը հաշվառել և փոխանցել է խորհրդային իշխանություններին: Բռնագրավվել և Պետբանկի բաժանմունքներին է փոխանցվել 18.270.675 վրանգեյան ռուբլի, խորհրդային 7750 ռուբլի և կերենսկյան կառավարության 120 ռուբլի: Բռնագրավված 3 ոսկյա ժամացույցները փոխանցվել են Ղրիմհեղկոմին²⁰⁷:

Վերոհիշյալ փաստաթղթի վերջում, Արտակարգ Եռյակն իր վրա դրված առաջադրանքն ավարտված համարելով, առաջարկ էր ներկայացրել Ղրիմհեղկոմին դեկրետ հրապարակել հանձնաժողովի լուծարման մասին:

Հետաքրքրական է, որ Ղրիմհեղկոմի նախագահ Պոլյակովի որոշումով թերակղզու հայկական հաստատություններին պատկանող բոլոր կնիքների առգրավվման մասին վկայող ակտից երևում է, որ այստեղ առկա են նաև Սիմֆերոպոլի «Դարբին»-ի խմբագրության (1917), Տավրիկյան արևմտահայերի հայրենակցական միության (1917), Աքսորյալների ազատման Սիմֆերոպոլի հյուսիսային ենթակոմիտեի (կնիքի մեջտեղում գրված՝ Խոտորջրոյ և Մոխրակոյտի) կնիքները²⁰⁸:

Այսպիսով, հեղափոխությունից մինչև 1920 թ. աշուն քաղաքացիական պատերազմի ավարտն ու խորհրդայնացումը, Ղրիմի հայ համայնքն ունեցավ կարճատև, սակայն ազգային-համայնքային կյանքով ապրելու կարևոր մի շրջան, իսկ տարածաշրջա-

²⁰⁵ ГААРК, ф. 1188, оп. 3, л. 31, л. 1.

²⁰⁶ Նույն տեղում:

²⁰⁷ Նույն տեղում:

²⁰⁸ Նույն տեղում, թ. 6:

նի խորհրդայնացումից հետո բոլոր ազգային-համայնքային կազմակերպությունները փակվեցին:

Օդեսան, իր կողմը ձգելով Գրիգորիոպոլի և հարակից շրջանների հայությանը, վերածվել էր բավականին սովոր հայ համայնք ունեցող կենտրոնի: Առաջին աշխարհամարտի տարիներին քաղաքը հանգրվան է հանդիսացել Բալկաններից և արևմտյան ռազմաճակատից այստեղ տեղաշարժվող բազմա-հազար հայ փախստականների և նախկին ռազմագերիների համար:

ՀՀ հետ շփումների դժվարությունը, քաղաքական անկայուն պայմանները, հայ հասարակական հիմնարկների բացակայությունն ու եղածների խղճուկ վիճակը պարարտ հող էին հայությանն իր արմատներից կտրելու համար: Իրավիճակը շտկելու էր միտված **Օդեսայի Հայոց Ազգային Խորհրդի հիմնադրումը:**

Օդեսայի հայ համայնքի կյանքում բացառիկ իրողություն էր 1918-1920 թթ. հրատարակված «Հոսանք»-ը, որը ոչ միայն վերհանեց և արծարծեց համայնքի ներքին խնդիրները, այլև գործուն մասնակցություն ունեցավ ազգային կյանքին լիցքեր հաղորդելու և հայությանը միավորելու համար: Ընդգծելով Օդեսայի հայության հիմնահարցերը՝ «Հոսանք»-ն առանձնացնում էր նաև հույս ներշնչող հայ հաստատությունների առկայությունը՝ հայկական հյուպատոսարան, գաղթականական մարմիններ, Հայ տիկնանց ընկերություն, Ուսանողական հայրենակցություն, որոնք կոչված էին գաղութի կյանքին հասարակական բովանդակություն հաղորդել. «Դժբախտաբար, նրանց կողքին կան մի շարք հին ու ուրիշ հաստատություններ ևս, որոնք սակայն և ոչ մի գործ, հետևաբար կենդանության նշաններ չեն ցոյց տալիս»²⁰⁹: Օդեսայում գործող հայկական վերոհիշյալ հաստատությունների միավորման և մեկ համայնքային մարմին ձևավորելու պատասխանատու գործին լծվեց տեղի հայկական հյուպատոսարանը: 1919 հունվարի 31-ին Ուկրաինայում ՀՀ

դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Չամոյանի նախագահությամբ խորհրդակցություն է գումարվում, որին մասնակցել են քաղաքի անվանի հայ հասարակական գործիչներ, պայմանավորվածություն է ձեռք բերվել նոր ժողով հրավիրել քաղաքի հայկական հաստատությունների ամբողջ կազմերի մասնակցությամբ:

Օդեսայում ազգային-համայնքային հիմնարկության ստեղծման ուղղությամբ գործնական քայլեր կատարվեցին 1919 թ. փետրվարին, երբ դրվեցին կառույցի հիմքերը. «Ամսիս 5-ին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պ. Գ. Խ. Չամոյեանի նախագահությամբ կայացաւ մի ժողով, որին ներկայ էին Օդեսայի բոլոր հասարակական հաստատութիւնների անդամները», իսկ ժողովի հիմնական հարցը Ազգային Խորհրդի հիմնումն էր՝ իր սեկցիաներով, հոգուտ գաղթականների և գերիների երեկութի կազմակերպումը և այլն. «Ժողովը հարկ գտաւ, որ Օդեսայի անգործունեայ հաստատութիւնները Ազգային Խորհրդի հաստատուելովը լուծւին, իսկ գործ և արդիւնք ցոյց տուող հաստատութիւնները շարունակեն գոյութիւնը Ազգ. Խորհրդի ղեկավարութեամբ»²¹⁰: Փետրվարի 23-ին կայացած ընդհանուր ժողովում (236 մասնակից) գաղտնի քվեարկությամբ ընտրվում են Ազգային Խորհրդի 16 անդամները, որից հետո ժողովականները «միաձայն որոշեցին յանձնարարել Ազգային Խորհրդին լսելի դարձնել նաև Օդեսայի հայութեան պահանջը, թէ Հայաստանը պիտի լինի անկախ և միացեալ, պարփակելով իր մէջ Կովկասեան Հայաստանը, Թիւրքական Հայաստանի 6 վիլայեթները և Կիլիկիան ու Ջեթթունը»²¹¹: Փետրվարի 25-ին կայացած Ազգային Խորհրդի առաջին նիստում ընտրվում է նախագահությունը՝ նախագահությամբ Բարսեղ Գ. Թայիրյանի, Խորհրդի քարտուղար է ընտրվում Հովհ. ավ. ք. Չուբարյանը. «Փոխնախա-

²⁰⁹ Հոսանք, Օդեսա, 1919, № 27, էջ 2-3:

²¹⁰ Նույն տեղում, № 28, էջ 4:

²¹¹ Նույն տեղում, № 33, էջ 4:

գահութեան պաշտօնի համար ընտրուեցան պպ. Յ. Բաղդասարեան և Յ. Մընտիկեան»²¹²:

«Յոսանք»-ն իր 1919 թ. մարտի 22-ի համարում տեղեկացնում էր Օդեսայի Ազգային Խորհրդի ընդունած ազգային տուրքի որոշման մասին. «Ամեն չափահաս հայ և հայուհի, որ մշտապես կամ ժամանակաւորապես ապրում է Օդեսայում կամ Խերսոնշչինայում և ունի որևէ գոյք կամ եկամուտ, պարտաւոր է ազգային տուրք վճարել»²¹³: Ազգային Խորհրդի ֆինանսական լիազորի ներկայացրած ազգային տուրքի գանձման մեխանիզմը հստակորեն կյանքի կոչելու և կառույցը պատահական մուտքերից կախման մեջ չդնելու, այլ մշտական հոսքեր ապահովելու համար տեղի հայութիւնը բաժանվեց 4 կատեգորիաների:

Օդեսայի Յայոց Ազգային Խորհուրդն իր գործունեության առանցքն էր դիտում Յայաստանին նյութական և բարոյական աջակցությունը, անգամ փորձեց բժավոր տիֆի դեմ պայքարելու համար Օդեսայի հայ բժիշկների մի խումբ գործուղել հայրենիք:

1919 թ. ապրիլին Օդեսայում իշխանությունն անցավ Ուկրաինայի Խորհրդային կառավարությանը, դժվարին ժամանակներ սկսվեցին համայնքային կառույցների համար:

Ազգային Խորհրդի գործունեությունը, ցավոք, կարճ տևեց, քանի որ «Յոսանք»-ի արդեն 1919 թ. ապրիլի 19-ի համարից հստակ երևում է, որ Օդեսայում հայ համայնքի գործերի տնօրինման համար սկսում է հանդես գալ Ազգությունների գործերի ժողկոմատի հայկական բաժանմունքը:

Օդեսայի Յայոց Ազգային Խորհրդի հետագա ընթացքի մասին տեղեկությունները բացակայում են, սակայն միանշանակ է, որ Խորհրդային իշխանության հաստատումով այն դատապարտված էր, ինչպես դա տեղի ունեցավ Դրիմի և Դոնի հայկական համայնքային կառույցների պարագայում:

Այսպիսով, նախկին ռուսական կայսրության տարածքում

ծնունդ առած հայկական համայնքային, հասարակական, բարեգործական, մշակութային և այլ կազմակերպությունները զգալի ավանդ ունեցան հայ կյանքի կազմակերպման և ուղղորդման գործում: Յայկական այս կառույցներին էր վերապահված քառսային պայմաններում հայտնված հայ համայնքների, հազարավոր հայ փախստականների ու անօթևանների, նախկին հայ ռազմագերիների պատսպարման, կերակրման բուժօգնության և մի մասին հայրենիք վերադարձնելու դժվարին գործը: Ռուսաստանում քաղաքական անիշխանության և առճակատման պայմաններում հայկական այս կազմակերպություններն էին ներկայացնում և պաշտպանում տեղի հայության շահերը: Նյութական և մարդկային սուղ ռեսուրսների պայմաններում հայկական այդ կազմակերպություններին հաջողվեց զգալիորեն թեթևացնել ինչպես գաղութահայ, այնպես էլ այստեղ կուտակված տարագիր հայության բազում կարիքների մի մասը: Ռուսահայ այս կազմակերպություններն, ոգևորությամբ ընդունելով ՀՀ անկախությունը, պատրաստակամորեն նվիրվեցին հայրենիքին օժանդակելու գործին, տեղերում լայնորեն քարոզեցին ազգային վերածննդի ու միասնության գաղափարներ:

ՀՀ-ն իր հերթին քայլեր իրականացրեց կամուրջ դառնալու մայր հայրենիքի ու գաղութահայ զանգվածների միջև՝ վերջիններիս ներուժն օգտագործելով և ներգրավելով Յայաստանի կարիքների թեթևացման գործին: Պատահական չէ, որ նորաստեղծ ՀՀ-ն դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնեց Յյուսիսային Կովկասի, Դոնի, Ուկրաինայի և նախկին ռուսական կայսրության հայաշատ այլ կենտրոններում, տեղերում մեծապես նպաստելով հայկական կառույցների գործունեությանը և անգամ դրանց ձևավորմանը: Հատկանշական է, որ Հարավային Ռուսաստանի մեծաթիվ հայությունը հանդիսանում էր այն կարևոր օղակը, որը կամրջող դեր խաղաց Հարավային Ռուսաստանի ոչ Խորհրդային պետական միավորների և ՀՀ միջև:

1919 թ. հունիսին ՀՀ կառավարությունն այդ նպատակով

²¹² Նույն տեղում, № 34, էջ 3:

²¹³ Նույն տեղում, № 38, էջ 2:

Հյուսիսային Կովկաս է գործուղում Մ. Հարությունյանին. «...Մարտիրոս Հարությունյանը գործուղվել էր Դոնի, Կուբանի ու Թերեքի երկրամասեր և Ուկրաինայի հայաշատ քաղաքներ՝ ուսումնասիրելու և պարզելու Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ու հյուպատոսական մարմինների, Ազգային խորհուրդների և ազգային այլ կազմակերպությունների գործունեությունը, նրանց ունեցած դժվարություններն ու տեղ գտած թերությունները: Իրողություն է, անշուշտ, որ Հայաստանի անվտանգության շահերից ելնելով (ՀՀ-ն հայտնվել էր թշնամական օղակում) Հարությունյանի առաքելության նպատակն էր Եկատերինոդարում բանակցել Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարների հետ»²¹⁴: ՀՀ կառավարությունը մտադիր էր ապրանքափոխանակության ճանապարհով Եկատերինոդարից Հայաստան ներկրել հաց, զինամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ: Դա հրատապ խնդիրներից մեկն էր, որը ծառայել էր երկրի ղեկավարության առաջ: Եկատերինոդարից Հայաստանի համար ապրանքների առաքումը կազմակերպելու համար Կիկի և Թիֆլիսի դիվանագիտական միսիաներից ու այլ վայրերից Կուբան էին գործուղվում հայկական պատվիրակություններ, որոնք Եկատերինոդարի Հայոց ազգային խորհրդի նախագահ Նիկոլայ Սաթունյանի առաջարկով տեղում ստեղծեցին ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանին անհրաժեշտ մատակարարումներն ապահովելու համար:

ՀՀ-ում տիրող լարված սոցիալ-տնտեսական վիճակը մեղմելուն էր ուղղված երկրի կառավարության տարբեր գերատեսչությունների առաքելությունները ռուսահայ համայնքներում՝ ֆինանսական կարիքների կարգավորման նպատակով: Այսպես, Դոնի հայ համայնքին ուղղված գրությունով տարածաշրջան է

²¹⁴ Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Ե., 2006, էջ 26-27:

գործուղվում Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների Միության ներկայացուցիչ Մ. Ռուշանյանցը, ուր ասվում էր. «Ն. Նախիջևանի Հայ համայնքը իր պատմական հայրենասիրութեամբ մեր անմխիթար իրականութեան մէջ իր ցայտուն ու ջինջ էջերն է գրաւել: Քաղաքական խոտոր հարածները կրելուց յետոյ, այժմ իւր ազատութեան նախօրեակին նոյն մեր ժողովուրդը տառապում է սովից: Մենք դիմում ենք ունևոր դասին և արդիւնաբերողներին ընդառաջ գնալու մեզ և հնարաւորութեան սահմաններում վարկ բանան Հայկօօսպին»²¹⁵:

Անհետաձգելի ու կարևոր խնդիր էր հայ գաղթականության և զինվորականության հարցը, հայ համայնքների մտավոր և նյութական ռեսուրսներն ի նպաստ Հայաստանի օգտագործելը. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում, հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելու խնդրով»²¹⁶: Այսպես, միայն Ռուսաստանի հարավում՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի և Հյուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում հանգրվանել էին հազարավոր հայ գաղթականներ ու նախկին ռազմագերիներ, որոնք գտնվում էին անտանելի պայմաններում և տեղական բնակչության անբարեհաճ վերաբերմունքի ներքո: Հայ գաղթականությունն ենթարկվում էր անհիմն հալածանքների, որակվում սադրիչ-ավտոնոմիստ և Կովկասում ռուսին թալանող, վռնդող, իսկ տեղական հայ կոմիտեներն ի վիճակի չէին իրավիճակը կառավարել: Այսպիսին էր Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդին ուղղված Դոնի և Հյուսիսային Կովկասի հայ զվարականների կոմիսար Սիրաք Գրիգորյանի 1918 թ. հունիսի 28-ի նամակի բովանդա-

²¹⁵ ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 70:

²¹⁶ Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 61:

կությունը: Եման բովանդակություն ունեցող նամակներով Թիֆ-
լիսի Հայոց Ազգային խորհրդին ահազանգել են նաև Կիևում ՀՀ
դեսպան Գ. Չամոյանը և տեղերի հայ ազգային կազմակերպու-
թյունները. «Մեր քաղաքացիների, գաղթականների և ռազմագե-
րիների դրությունը իրապես ծանր է: Դոնում, Ղրիմում և Ռուսաս-
տանի հարավում կուտակվել են մինչև 100.000 գաղթականներ և
5.000 ռազմագերիներ առանց որևէ կազմակերպված օգնու-
թյան...»²¹⁷:

ՀՀ ռազմական նախարարությունն իր պատվիրակին՝ փոխ-
գնդապետ Վլասկին, 1918 թ. հոկտեմբերին գործուղել է Եկատե-
րինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրա-
մանատարության «Հատուկ խորհրդակցությանը» կից հայ-
կական բանակի ներկայացուցիչ, որի գործունեության առանց-
քում էին լինելու. Կամավորական բանակի գլխավոր հրամանա-
տարության միջոցով հայտնաբերել Ռուսաստանի հարավում կու-
տակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին ու
զինվորներին, որոնք ազատվել էին գերմանա-ավստրո-հունգա-
րական զերությունից, ապա նրանց հայրենիք տեղափոխել,
երկրորդ՝ Հայաստանին հաց, զինամթերք և այլ ապրանքներ
ուղարկելու խնդիրները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լայն
քարոզչություն է ծավալել Հյուսիսային Կովկասի և Դոնի հայու-
թյան շրջանում՝ չհարելու երկու քաղաքական ուժերից ոչ մեկին:
ՀՀ կառավարությունը մտահոգված էր քաղաքացիական պատե-
րազմի թոհուրոհում հայտնված հայության վիճակի և վարքագծի
վերաբերյալ:

Վրացական բանակի հարձակումը Սոչիի ուղղությամբ և հայ
բնակչության նկատմամբ բռնություններն առիթ դարձան որպես-
զի Գագրայի Հայոց Ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարի 24-
ին (մարտի 9) խնդրանքով հանդես գա Ա. Դենիկինի առաջ՝
պաշտպանելու Սուխումի շրջանի հայությանը վրացական

բանակի վայրագություններից: Այդ մասին անգլիական հրամա-
նատարությանն ուղղված իր գրության մեջ նշում է Ա. Դենիկինը՝
այն առիթ դարձնելով սևծովյան շրջանից վրացական ուժերին
դուրս մղելու իր գործողություններն իրականացնելիս. «Սոչիի
շրջանի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներն ինձ
խնդրել են Սուխումի մարզի, մասնավորապես Գուդաուտի գյուղի
հայերին պաշտպանել վրացական բանակի բռնություններից»²¹⁸:
ՀՀ կառավարության զգուշավոր և չեզոք քաղաքականությունը
Կամավորական բանակի նկատմամբ իր հերթին հղի էր
հարաբերությունների վատթարացման հեռանկարով, ինչի մասին
ահազանգում էին նաև ՀՀ դիվանագիտական կորպուսի ներկա-
յացուցիչներն իրենց նամակ-զեկույցներում: Այսպես, Վրաստա-
նում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանն
արտգործնախարարին ուղղված զեկույցում զգուշացնում էր
Ռուսաստանի հարավում շարունակվող հայ գաղթականների ար-
տահոսքի և նրանց ճակատագրի մասին. «Այս դժբախտների
դրութիւնը սոսկալի է Կամավորական բանակի նոյնիսկ սրտագին
վերաբերմունքի օրով, իսկ մեր յարաբերութիւնների վատթարա-
նալով այս գաղթականների դրութիւնը կմօտենայ վերջնական
բնաջնջման: Անհրաժեշտ է բարեկամական յարաբերութիւններ
պահպանել թէ Հայաստանում բնակող և ծառայող ռուսների
հետ և թէ նրանց միջոցով այն «Ռօսիա»-ների հետ, որոնք ներկա-
յունս գոյութիւն ունին»²¹⁹: Այնուհետև նշվում էր, որ ոչ ցանկալի
զարգացումների պարագայում լուրջ վտանգի էին ենթակա Կա-
մավորական բանակի վերահսկողության տակ գտնվող Թերեքի և
Կուրանի հայ գաղթականությունը:

Այսպիսի նրբանկատ և հավասարակշիռ մոտեցումն ան-
հրաժեշտ էր՝ խուսափելու համար հնարավոր քաղաքական
սխալ հաշվարկներից, հարևանների հետ առճակատումից, որը
կարող էր վնասել նաև տասնյակ հազարավոր հայ գաղթա-

²¹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, I մաս, ք. 129:

²¹⁸ Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 181:

²¹⁹ Նույն տեղում, էջ 192-193:

կաններին. «...Նովոռոսիյսկում կամաւորական բանակը պահում է զինակոչի ենթակայ հայ երիտասարդներին եւ գերմանական գերութիւնից վերադարձող գերիներին, ցուցակագրելով նրանց զինւորական պետի մօտ: ... Հայաստանի դէպի ռուսները ունեցած վերաբերմունքի փոփոխման լուրերով կօզուեն մեր բազմաթիւ չկանեցողները եւ կստեղծեն մի տրամադրութիւն, որով մեր գաղթականների դրութիւնը կդառնայ կրիտիքական»²²⁰:

1919 թ. ՀՀ կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նաև ծովակալ Ա. Կուլչակի գլխավորած Սիբիրի կառավարության հետ՝ Օմսկում (ապա Իրկուտսկ) Հայաստանի ներկայացուցիչ հաստատելով Ուկրաինայում ՀՀ նախկին ներկայացուցիչ Գ. Չամոյանին, որի գլխավոր խնդիրն էր պաշտպանել ՀՀ և Սիբիրի ու Հեռավոր Արևելքի հայության շահերը: ՀՀ ներկայացուցչի ընդունելության ժամանակ Ա. Կուլչակը խոստացել է մեծապես աջակցել Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ բնակչության և գաղթականության իրավունքների պաշտպանությանը, լուծում տալ նրանց խնդիրներին: 1920 թ. նախօրեին Կուլչակի վերջնական պարտությունից հետո, ՀՀ Սիբիրի դիվանագիտական առաքելությունը մնաց և շարունակեց ևս որոշ ժամանակ գործել, որպես ՀՀ ներկայացուցիչ Օմսկ-Իրկուտսկի, Վերին Ուզինսկի, Չիտայի և Վլադիվոստոկի խորհրդային կառավարությունների մոտ. «...այժմ այս կողմերում ցրված փոքրաթիվ հայերը վայելում են նույն իրավունքները, ինչ որ ունեն օտար պետությունների հպատակները»²²¹:

Գ. Չամոյանը լայն գործունեություն է ծավալել Սիբիրի և Հեռավոր Արևելքի տարբեր անկյուններում ապրող հայ համայնքների կազմակերպման և աշխուժացման համար: Այստեղ հսկա տարածության վրա՝ Օմսկից Վլադիվոստոկ, ցրված էին հայ հնաբնակներն ու գաղթականները, ռուսական բանակից զորացրված հայ սպաներն ու զինվորները (հայտնվել էին 1918 թ. մար-

²²⁰ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 114, ք. 75:

²²¹ Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 227:

տից), թուրքական բանակի ռազմագերի հայ զինվորները: Միմյանցից անկախ ստեղծվում էին հայ ազգային խորհուրդներ, կազմակերպություններ ու միություններ, որոնք սակայն միավորված չէին և գործում էին ոչ այնքան արդյունավետ. «Հայոց ազգային խորհուրդներ ստեղծվեցին Օմսկում (նախագահ՝ Ադամ Ալեքսանյան), Տոմսկում (նախագահ՝ բժիշկ Միրզախանյան), Իրկուտսկում (նախագահ՝ Վարդան Ղարիբյան), Չիտայում (նախագահ՝ Վահրամ Նալբանդյան), Վլադիվոստոկում (նախագահ՝ ինժեներ Սաֆարյան) և այլուր»²²²:

Սիբիրի հայության շրջանում զինակոչիկներ հավաքագրելու և Հայաստան ուղարկելու քայլեր էր իրականացրել դեռևս 1917 թ. հոկտեմբերին Իրկուտսկում հիմնված հյուպատոսության ղեկավար Ա. Յաղուբովը (Յաղուբյան), իսկ 1919 թ. մայիս-հունիսին Խարբինում տեղի և Վլադիվոստոկի Հայոց Ազգային խորհուրդների նախաձեռնությամբ գումարվել է Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ ներկայացուցիչների համագումար՝ նպատակ ունենալով ստեղծել ցաքուցրիվ գործող հայ ազգային խորհուրդների ու տարբեր կազմակերպությունների կենտրոնական խորհուրդ. «...Այժմ Սիբիրոյ եւ Ծայրագուն Արևելքի մէջ գտնուում են մօտ երեք հազար հայեր, որոնք բոլորն ալ գրեթէ հարուստ և բարեկեցիկ են և որոնց համար Համագումարը մշակեց ծրագիր և ստեղծեց յաջող Կենտրոնական Վարչութիւն, որուն վրայ Համագումարը սրբազան պարտք դրաւ ամէն կարելի միջոցներով զանոնք կապել Հայրենիքին հետ և նւիրող ու զոհաբերող հայեր պատրաստել...»²²³: Համագումարի նախագահ Վասակ Տեր-Պողոսյանի՝ ՀՀ վարչապետին հասցեագրած նամակից (1919 թ. հունիսի 25) պարզ է դառնում մոտ մեկ ամիս տևած համագումարի օրակարգի հիմնական հարցերը. Սիբիրի և Հեռավոր Արևելքի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդի ստեղծում, նյութական օգնության կազմակերպում Հայաստանին, գաղթա-

²²² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, ք. 175-178:

²²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, ք. 15:

կանության և հայության վերադարձը հայրենիք և ազգային գորագնդերի կազմակերպում: Համագումարը որոշեց 1,5 մլն ռուբլու փոխառություն տրամադրել Հայաստանին անհրաժեշտ ապրանքներ գնելու և ուղարկելու, 1 մլն ռուբլու հանգանակություն կատարել հոգուտ ՀՀ սովյալների, դիմել Սիբիրի և Յեռավոր Արևելքի ռուսական իշխանություններին զորակոչի ենթական հայերին ազատել ՀՀ ուղարկելու համար: Այդ նպատակով ստեղծվեց հատուկ հանձնախումբ, որը հանգանակությունների միջոցով հավաքեց 5 մլն ռուբլի՝ հայկական բանակին անհրաժեշտ հանդերձանք գնելու համար. «Համագումարը Սիբիրի և Յեռավոր Արևելքի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ ընտրեց Տարաս Սուրինովին: Նա խոշոր ծեռնարկատեր էր և նախապատրաստվում էր կազմակերպել Հայկական ազգային բանկ՝ Հայաստանի Հանրապետությանը օգնելու համար»²²⁴: Սիբիրի և Յեռավոր Արևելքի հայությունը պատրաստակամ էր Հայաստանին օժանդակելու խնդրում և նախաձեռնությունն այդ հարցում վերցրել էր իր ձեռքը:

Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումով ընդհատվեցին հայ համայնքների հետ նորոգված աշխույժ կապերը, լուծարվեցին կամ փակվեցին Ռուսաստանի տարածքում գործող բազմաբնույթ հայկական կառույցները: Ռուսաստանի տարածքում գործող համայնքային կազմակերպությունները վերագրանցման և իրենց աշխատանքների շարունակման խնդիրներ ունեցան, նրանց լիազորություններն ու գործունեության ոլորտները հանձնվեցին տեղերում գործող կուսկազմակերպությունների հայկական սեկցիաներին, որոնք էլ ազգային շրջաններում իրականացնում էին խորհրդային իշխանության ազգային քաղաքականության հիմնադրույթներից բխող գործունեություն:

²²⁴ Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 230:

Այդուհանդերձ, հետհեղափոխական տարիներին Ռուսաստանում ստեղծված հայկական ազգային կազմակերպություններն ունեցան կարևոր առաքելություն:

- ապաստան տվեցին և սովահարությունից փրկեցին Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության արդյունքում փախստական դարձած տասնյակ հազարավոր հայերի: Թեև նրանց խնդիրներն ամբողջովին լուծել հնարավոր չէր, սակայն մազապուրծ ու անօթևան հայ զանգվածներին ցուցաբերվեց սոցիալական և առողջապահական օգնություն, բացվեցին որբանոցներ, կացարաններ և այլն:

- համախմբեցին հայությանը տեղերում գործող հայկական կազմակերպությունների շուրջը, հիմնեցին նաև հայրենակցական միություններ՝ առաջացած խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար:

- կազմակերպեցին գաղթական հայության մի մասին հայրենիք վերադարձնելու գործը, թեև առկա սուղ հնարավորություններին և քաղաքական անբարենպաստ պայմաններին, ուր ներքաշված էին Անդրկովկասն ու Ռուսաստանը:

- հայկական կազմակերպություններն ու միությունները դարձան հայ ազգային-մշակութային կյանքի իրական տնօրենը՝ հոգ տանելով մշակութային և կրթական խնդիրների լուծմանը:

- նպաստեցին օտար ափերում հայտնված հայ զանգվածների աստիճանական ինտեգրմանը նոր միջավայրին, ապահովեցին նրանց հետագա զարգացումը, քանի որ նոր պայմաններին դժվար էր հարմարվել լեզու, տեղական մշակույթ և օրենք չիմացող հայերին:

Այսպիսով, Ռուսաստանում խորհրդային իշխանության հաղթանակն ազդարարեց ոչ միայն հայկական, այլ նաև ազգային բոլոր հաստատությունների լուծարման մասին: Մինչ այդ հայկական տեղական կառույցներն ամբողջովին տնօրինում էին համայնքային կյանքը, որում նկատելի էին աշխուժությունն ու թարմ լիցքերը: Խորհրդային իշխանությունների ազգային քաղա-

քականությունը բացասական հետևանքներ ունեցավ Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայության համար: ԽՍՀՄ-ում, ազգային հիմունքների վրա ստեղծելով առանձին հանրապետություններ, խորհրդային իշխանությունները, միևնույն ժամանակ, անտեսեցին այդ հանրապետություններում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ազգային հանրապետությունները, այդ թվում՝ ՀԽՍՀ-ն, խիստ սահմանափակ հնարավորություն ունեին սատարելու իրենց սահմաններից դուրս բնակվող ազգակիցներին՝ լուծյալները հետևելով նրանց համայնքային կյանքի քայքայմանը:

Խորհրդային տարիներին պաշտոնական և գիտական հրապարակումներում Հայաստանի սահմաններից դուրս ապրող միլիոնական հանրապետությունների հայության վերաբերյալ չէր կիրառվում գաղթօջախ, սփյուռք բնորոշումը: Այս մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ հայերն (այդ թվում Հայկական ԽՍՀ-ում բնակվող), որպես Խորհրդային Միության լիիրավ քաղաքացիներ, «պատմական նոր հանրության»՝ խորհրդային ժողովրդի բաղկացուցիչ մասն են:

Հարկ է ընդգծել իրողությունը, որ հայկական այդ համայնքները միասնական պատմական կենսագրություն են կերտել նախ ռուսական կայսրության, ապա նաև խորհրդային պետության կազմում՝ շուրջ երկու դար գտնվելով նույն մշակութային-հասարակական և սոցիալ-քաղաքական միջավայրում: Առանձնահատուկ կողմերով հանդերձ, պատմական ընդհանրությունը կիրառական է նաև հետխորհրդային տարածաշրջանի նորակախ հանրապետությունների հայ համայնքները բնորոշելու համար:

Խորհրդային համակարգի քաղաքականությունը մշակութային-կրթական, սոցիալ-հասարակական բնագավառներում, ինչպես նաև մերժողական վերաբերմունքը կրոնի ու եկեղեցու նկատմամբ լրջագույն սպառնալիք դարձան հայ ազգային-համայնքային կյանքի համար:

Խորհրդային հանրապետությունների հայահոծ շրջաններում կուսակցական տեղական օրգանների կազմում գործել են հայկական սեկցիաներ, որոնք զգալի աշխատանք են տարել հայության շրջանում՝ ներկայացնելով, քարոզելով և ներգրավելով վերջիններիս խորհրդային գաղափարախոսության դաշտ: ԽՍՀՄ-ում կիրառվող ռուսականացման քաղաքականությունը և համայնքներում հայկական ազգային հաստատությունների բացակայությունն անհնարին էին դարձնում տեղի հայության ազգային-մշակութային հետագա գործունեությունը: Անհամեմատ քույլ էր ազգամշակութային ծուլումն ու ներգործությունը մահմեդական բնակչություն ունեցող միլիոնական հանրապետություններում:

Խորհրդահայ համայնքների պատմության ուսումնասիրությունն ունի կարևոր քաղաքական բաղկացուցիչ. ԽՍՀՄ-ում «վերակառուցման» տարիներից սկսած և փլուզումից հետո ընկած ժամանակաշրջանում լիովին բացահայտվեց «ազգային քաղաքականության» սնանկությունն ու կոնֆլիկտայնությունը, նախկին միլիոնական հանրապետություններում աճեց ազգայնականությունը: Հետխորհրդային տարբեր հանրապետություններում, այդ թվում՝ Ռուսաստանի որոշ տարածաշրջաններում բնակվող հայությունը հայտնվեց ազգայնական դրսևորումների թիրախի դերում. մեջտեղ էր բերվում ոչ տիտղոսակիր ազգ լինելու, կրոնական-ազգային, ավելի բարեկեցիկ ապրելու և բազմապիսի այլ «նկատառումներ», ավելին՝ տեղ գտան բռնությունների և արտաքսման դեպքեր: Այս նկատառումներից ելնելով՝ առանձնակի կարևորություն է ներկայացնում նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայության պատմության ուսումնասիրությունն ու ներկայացումը, նրանց այստեղ հաստատվելու, գործունեության ու դերի վեր հանումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՌԻՖՏԱՅ-ՈՒՄ

ՌԻՖՏԱՅ կազմավորումից հետո նրա առանձին տարածաշրջաններում՝ Հյուսիսային Կովկասում, Դոնում և Ղրիմում, հարյուրամյակների ընթացքում համալրվող հայ ազգաբնակչությունն առկա էթնիկ խմբերի մեջ շարունակում էր մնալ մեծաքանակ թվակազմ ունեցող ազգային փոքրամասնություններից մեկը: Հիշյալ տարածաշրջանների հայությունն իր բազմամարդ ու ազդեցիկ դերակատարությունը փաստում է նաև ժամանակակից փուլում:

1920-1930-ական թթ. ինչպես ՌԻՖՏԱՅ-ում, այնպես էլ միութենական այլ հանրապետություններում կյանքի կոչվեց իրենց պատմական հայրենիքի սահմաններից դուրս բնակվող էթնիկ խմբերի ազգային պահանջմունքների և շահերի բավարարման քաղաքականություն:

Այն կրում էր ձևական բնույթ և հիմնականում հետապնդում էր որոշակի մարտավարություն, քան ռազմավարական հետաքրքրություն այդ նույն էթնիկ խմբերի նկատմամբ:

Հյուսիսային Կովկասի էթնիկ գործընթացներով զբաղվող Վ. Բելոզերովն իրավամբ նշում է, որ հայկական էթնիկ խումբը հարթավայրային Նախակովկասի գաղութացման հիմքում է եղել սլավոնների, հույների և գերմանացիների հետ մեկտեղ: 1920-ական թթ. տարածաշրջանի բնակչության էթնիկ կառույցի պահպանված այս տեսակը նա բնորոշել է ավարտված գաղութացման փուլ, որին հետևել են Հյուսիսային Կովկասի ազգային-տարածքային վերակառուցման սոցիալական փորձարկումները²²⁵:

1923 թ. ապրիլին անցկացված ՌԿ/Բ/Կ XII-րդ համագումարն ազդարարեց անցում արմատավորման (коренизация) քաղաքականության: Այն նշանակում էր պետական շինարարու-

թյան և կուսակցական աշխատանքներում լայնորեն ներգրավել տեղական, ոչ ռուս էթնիկ խմբերի ներկայացուցիչներին:

Արմատավորման քաղաքականությունն ուղեկցվեց այլ էթնիկ խմբերի անդամների /ոչ ռուս/ ծանրակշիռ ներկայացուցչությամբ պետական կառավարման օղակներում, կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու, հարկային և այլ արտոնություններով: Այս միջոցառումները որոշակիորեն նպաստեցին ազգային առաջընթացին՝ հիմքեր ստեղծվելով ՌԻՖՏԱՅ ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի համար ձևավորելու ազգային շրջաններ և գյուղխորհուրդներ:

Հյուսիս-կովկասյան երկրամասային խորհուրդների 1924-1925 թթ. ընտրություններում ազգային փոքրամասնությունները մեծ ակտիվություն դրսևորեցին, որը սակայն անհամաչափ էր տեղական մարմիններում նրանց ներկայացվածության աստիճանի համեմատ՝ կապված թե թվաքանակի, թե ակտիվության հետ: Այդ իրողության վրա ուշադրություն էր հրավիրել Հյուսիս-կովկասյան երկրագործկոմի 1925 թ. գարնանային պլենումը: Խնդիրն ավելի վաղ քննարկել էր նաև ազգային փոքրամասնությունների շրջանում աշխատանքներ տանելու համար ստեղծված կուսկազմակերպության և խորհրդային իշխանության ազգային սեկցիաների քարտուղարների խորհրդակցությունը:

Հյուսիս-կովկասյան երկրամասային իշխանության մարմինները 1925 թ. նոյեմբերին Դոնի Ռոստովում կայացած հերթական խորհրդակցության ընթացքում, վերլուծելով ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը խորհրդային շինարարության մեջ, ընդունել են «Երկրամասի ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքների մասին» բանաձև, որում արձանագրված էր, որ բնակչության ազգային և լեզվական առանձնահատկությունների անտեսումը վարկաբեկում է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ կուսակցության և խորհրդային իշխանության ընդունած հեղի-

²²⁵ Белозеров В., Этническая карта Северного Кавказа, М., 2005, с. 63.

նակավոր հրահանգ-ցուցումները: Առաջարկվում էր ազգային փոքրամասնությունների համախումբ (կոմպակտ) բնակեցման վայրերում արագ տեմպերով ձևավորել ինքնավարության «փոքր ձևեր»՝ ազգային շրջաններ, օկրուգներ և գյուղխորհուրդներ: Ընդ որում, ազգային գյուղխորհուրդները դառնալու էին ինքնավարության ցածր, ստորին տեսակը կամ օղակը:

Ազգային գյուղխորհուրդները, որպես կանոն, իրենց մեջ ներառում էին իրար մոտ գտնվող մի քանի բնակավայրեր, ուր բնակվում էին նույն ազգության ներկայացուցիչներ: Ձևավորվել են նաև երկու և ավելի ազգություններից կազմված խառը գյուղխորհուրդներ:

Մինչև 1920-ական թթ. կեսերն ազգային գյուղխորհուրդները հիմնվել են 1923 թ. նոյեմբերի 21-ի ՀամԿենտգործկոմի Վարչական հանձնաժողովի շրջաբերականի և նույն թվականի հոկտեմբերի 8-ի ՀամԿենտգործկոմի և ժողկոմխորհի հրահանգների հիման վրա:

Այնուհանդերձ, ազգային գյուղխորհուրդների ձևավորումը կանոնակարգվեց և արագացավ Հյուսիս-կովկասյան երկրամասի՝ որպես վարչատարածքային միավոր ձևավորումից հետո (1924 թ.): Ազգային գյուղխորհուրդների առանձնացման ծրագիրը կազմվում էր մարզային /օկրուգային/ գործկոմների կողմից:

ՀամԿենտգործկոմի 1926 թ. ապրիլի 29-ին հրապարակված «Ազգային գյուղական խորհուրդների առանձնացման վերաբերյալ» նամակի հիման վրա, որը դարձավ հիմնարար փաստաթուղթ գործընթացի ձեռնարկի առումով, սկսվեց ազգային գյուղխորհուրդների ձևավորումը:

Նախատեսվում էր խառը էթնիկ կազմ ունեցող շրջաններում առանձնացնել ազգային միատարր կազմ ունեցող գյուղական բնակավայրեր և ստեղծել ինքնուրույն գյուղխորհուրդներ:

Այն դեպքերում, երբ նման գյուղխորհուրդների ձևավորման համար բնակչության թվաքանակը չէր բավարարում պահանջ-

վող նորմերը, դրանք կարող էին հիմնվել երկրամասային, մարզային և օկրուգային գործկոմների որոշումներով:

Հյուսիս-կովկասյան երկրամասի Կանոնադրության VII-րդ գլխի համաձայն, բոլոր գյուղխորհուրդներն ունեին իշխանության միասնական կառուցվածք, այն տարբերությամբ, որ ազգային գյուղխորհուրդներն, իրենց ազգային բնույթից ելնելով, ստանում էին ներկայացուցչության բարձր հարաբերակցություն խորհրդում: Սահմանված էր, որ յուրաքանչյուր 50 բնակչի հաշվով պետք է ընտրել 1 պատվիրակ, սակայն այն հաշվով, որ պատգամավորների թվաքանակը խորհրդում չգերազանցեր 100 մարդը և թեկնածուների 1/3-ը:

Այսպիսի գյուղխորհուրդների առանձնահատկությունը դա ազգային լեզվի լայն կիրառման հնարավորության ընձեռումն էր գործավարության ու դատավարության մեջ, մշակութային-լուսավորական և կրթական ասպարեզներում հատկապես:

Հյուսիս-կովկասյան երկրամասի ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող աշխատակիցների 1927 թ. խորհրդակցությունն ընդունել է «Ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող խորհրդային աշխատանքների վերաբերյալ» բանաձև, որում ուշադրություն էր հրավիրվում ազգային գյուղխորհուրդներում գործավարությունը մայրենի լեզվով իրականացնելու վրա:

Արդեն 1928 թ. Հյուսիսային Կովկասում կասզմակերպվել էին 158 ազգային գյուղխորհուրդներ, որից 22-ը՝ հայկական²²⁶:

Հայկական ազգային գյուղխորհուրդներ էին ձևավորվել Դոնի և Մայկոպի օկրուգներում՝ յուրաքանչյուրում 7-ական, Չերնոմորիեում՝ 5, Ստավրոպոլում՝ 2, Թերեքում՝ 1: Հետագայում

²²⁶ Акоюн В.З., Национальные сельсоветы на юге России в 20–30-е гг. XX в., Армяне юга России: история, культура, общее будущее: материалы Всероссийской научной конференции (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону) /отв. ред. акад. Г.Г. Матишов, Ростов н/Д, Изд-во ЮНЦ РАН, 2012, с. 14

հայկական ազգային գյուղխորհուրդների թվաքանակն ընդլայնվել է:

Առաջիններից մեկը, որպես ինքնուրույն ազգային գյուղխորհուրդ, 1924-1929 թթ. Ստեպնովսկի շրջանի (ավելի ուշ մտցվել է Մոզդոկի, ապա Կուրսկի շրջանի կազմի մեջ) կազմի մեջ առանձնացվեց հայկական Եղեսիան²²⁷: 1930-ական թթ. Եղեսիայի հիմքի վրա կազմակերպվել են երեք կոլտնտեսություններ: Եղեսիայի դպրոցում ուսուցումը մինչև 1943 թ. տարվել է հայերենով, որից հետո այն վերածվել է ռուսական դպրոցի՝ հայերենի դասավանդմամբ:

Հյուսիսային Կովկասում ապաստան գտած հարյուրավոր արևմտահայերի և կարսեցիների, Մոզդոկ քաղաքից 50 կմ, հյուսիս գտնվող խոպան տարածքներում տրամադրված հողերի և վարկերի օգտագործմամբ, հաջողվեց 1928 թ. հիմնադրել, հայկական Արարատ գյուղը: Հյուսիս-կովկասյան երկրագործկոմի 1931 թ. փետրվարի 13-ի որոշման հիման վրա Արարատն առանձնացվել է որպես ազգային գյուղխորհուրդ՝ դուրս գալով Նադեժդենսկի գյուղխորհրդի կազմից, որում նախապես գտնվում էր²²⁸: Կարճ ժամանակում գյուղում բացվել է տարրական դպրոց, ուր կրթությունն ընդհուպ 1940-ական թթ. սկիզբը տարվում էր մայրենի լեզվով:

Վերոհիշյալ հայկական գյուղխորհուրդներից բացի առկա էին նաև խառը կազմով գյուղխորհուրդներ:

Ընդհանուր առմամբ, Չերնոմորիեի օկրուգի գյուղական խորհուրդներում 1926-1927 թթ. հայ անդամների թիվը կազմում էր 181-204 մարդ²²⁹:

Հետաքրքրական է, որ կոլիկտիվացման քաղաքականության կիրառումն էականորեն նպաստել է ազգային կոլտնտեսությունների ձևավորման գործընթացին և Կուրսում /Կանասկի շրջան/ առաջիններից մեկը հիմնվել է հայկական «Трудовая Армения» կոլտնտեսությունը, ուր այդ նպատակով վերաբնակեցվել են հայ բնակիչներ ամբողջ երկրամասից: Ընդ որում, տեղական իշխանություններին հրահանգվել է վերաբնակիչներին հատկացնել նախկինում կազակներին պատկանող հողերը, տները, կառույցները, գույքը և հայ գաղթական-վերաբնակիչների տեղավորման արդյունքում իրականացնել ազգային կոլտնտեսությունների խոշորացում:

1920-ական թթ. Ղրիմի հայությունը ևս հանդես բերեց հասարակական ակտիվություն, որը դրսևորվեց տեղի կուսակցական և անկուսակցական շրջանակների համագումար-քննարկումներում, որոնք վերաբերում էին երկրամասի հայության կյանքի ամենատարբեր ոլորտներին: Այսպես, առաջին համադրիմյան հայկական անկուսակցական համագումարը տեղի ունեցավ Սիմֆերոպոլում 1926 թ. հունվարի 23-26-ը, որի ավարտին ընդունվեցին համագումարի բանաձևերը:

«Կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության խնդիրների մասին ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների վերաբերմամբ» բանաձևում առանձնահատուկ ընդգծվում էր Խորհրդային իշխանության քաղաքականությունն ազգային հարցի և ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման ուղղությամբ, որը զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռել փոքր ազգերին. «Խորհրդային քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների վերաբերմամբ հիմնվում է այն ձգտումի վրա, վոր վոչնչացնում է մեծ ազգերի ճնշումն ու տիրակալությունը... փոխում է ազգային փոխհարաբերությունները...»: Բանաձևում նշվում էր երկրի տնտեսության համար կարևորություն ունեցող «երեսներս դեպի գյուղ» նոր նշանաբանի մասին և

²²⁷ Симонян Р., Едесия-Эдиссия: Историко-этнографический очерк (К 200-летию создания села), с. Эдиссия, 1998, с. 75.

²²⁸ Акопян В. З., Ставропольский Арарат, Амаинк (Община), Пятигорск, 1996, с. 33.

²²⁹ Минасян М., Армяне Причерноморья, Е., 1990, с. 131.

գյուղատնտեսության մեջ հատուկ մշակույթներով զբաղված հայ գյուղացիության դերի աստիճանական բարձրացման մասին, որի համար անհրաժեշտ էր դիտվում. «Գրավել հայ ազգաբնակչությանը դեպի Խորհրդային գործոն շինարարության, վերընտրական պայքարի մեջ ուշադրության առնել գյուղխորհուրդների մեջ գրավելու այն վայրերում, ուր նրանք կազմում են փոքրամասնություն, հեշտացնելով գյուղխորհրդի մեջ նրանց ներկայացուցչությունը»:

Համագումարը շեշտել է հայ գեղջուկ-կնոջ մասնակցության բացակայությունը հասարակական և պետական կյանքում, ամբողջ ազգաբնակչության ուշադրությունն է հրավիրել վերացնելու այդ բացթողումը՝ հայ կանանց հասարակական կյանքի մեջ լայնորեն ներգրավելու ճանապարհով²³⁰:

Բանաձևի հաջորդ կետերում ողջունվում էր ազգային գյուղխորհուրդների կազմակերպումը, քանի որ այն ապահովում էր ոչ միայն մայրենի լեզվով ուսուցումը դպրոցներում ազգային փոքրամասնությունների համար, այլև մայրենի լեզվով գործավարություն, հասարակական-քաղաքական և մշակութային աշխատանքների կազմակերպում և նույնիսկ դատավարություն: Լուրջ հնարավորություններ էին բացվում ոչ միայն գյուղական, այլ նաև քաղաքաբնակ դրինահայերի համար տարբեր հասարակական և պետական հաստատություններում ներգրավվելու ուղղությամբ:

Այսպիսով, ակնհայտ է, որ 1920-ական թթ. կեսերին Ղրիմի հայաբնակ գյուղերում ևս ազգային գյուղխորհուրդների ձևավորման խնդիրն օրակարգային էր և, դրանք կազմավորվել են: Դրա լավագույն վկայությունն էր նույն թվականի վերջին (1926 թ.) շարք մտած 14 նոր հայկական դպրոցները, որոնք գործում էին գյուղերում և ավաններում (Ասմա, Ազատ, Հայկաշեն, Շահունյանովկա, Կիշկենե, Սարպուզ, Կալմուկարա և այլն):

Ղրիմի գյուղական վայրերում հայկական դպրոցական ցանցի ստեղծմանը նպաստել է նաև գյուղխորհուրդների մանրացման քաղաքականությունը և դրանց ձևավորումն ազգային հիմքի վրա (հետաքրքրական է, որ Հյուսիսային Կովկասում կիրառվել է գյուղխորհուրդների խոշորացման և նոր միայն ազգային հիմքի վրա գյուղխորհուրդների ձևավորման քաղաքականություն)՝ հնարավոր դարձնելով առավելագույնս ընդլայնված դպրոցական ցանց ունենալու համար²³¹:

Հյուսիսային Կովկասում տարածքային առումով իրար մոտ գտնվող մաքուր ազգային և էթնիկ կազմով խառը գյուղխորհուրդների հիմքի վրա տարբեր տարիների ձևավորվեցին 10 ազգային շրջաններ, այդ թվում՝ երկուսը հայկական:

Հայկական ազգային շրջան /1925-1953 թթ./:

1925 թ. մարտի 10-ին Հյուսիս-կովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի կազմում հիմնվեց Հայկական ազգային շրջանը: Հայկական ազգային շրջանի կազմի մեջ մտան Խաղիժենսկի շրջանի Գոթխ, Գունայ, Ելիսավետպոլսկոյե, Կուբան-Արմյանսկի, Ռեժեթի և Չերնիգոլյան գյուղխորհուրդները և Կուբանի օկրուգի Գորյաչիկյուչի շրջանի Սադովի գյուղխորհուրդը: Մայկոպի օկրուգի Հայկական ազգային շրջանը կազմակերպվեց գլխավորապես հայերով բնակեցված գյուղական խորհուրդներից, շրջկենտրոնը Ելասիվետպոլսկոյե (Շահունյան) գյուղն էր:

Հայկական ազգային շրջանը զբաղեցնում էր Մայկոպի օկրուգի հարավ-արևմտյան մասը, սահմանակից էր Կուբանի և Չերնոմորիեի օկրուգներին՝ կազմելով 1.286 քռ. կմ²³²:

Հայկական ազգային շրջանի կազմակերպումը հնարավոր դարձավ Մայկոպի օկրուգի գործկոմի Հյուսիս-կովկասյան երկրային մարմինների առջև հանդես բերած միջնորդության

²³¹ Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Ե., 2011, էջ 151-152:

²³² Աдобաշյան Բ., Образование в составе Краснодарского края Армянского района, Вестник архивов Армении, Е., 1970, N 3/27/, с. 169.

²³⁰ Резолюция первой Всекрымской армянской беспартийной конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, 1926, с. 23.

արդյունքում: Ազգային շրջանի կազմակերպման անհրաժեշտությունը պատճառաբանվում էր շրջկենտրոնից և օկրուգային կենտրոնից հայկական բնակավայրերի հեռու գտնվելով, որը խոչընդոտում էր հիմնականում հայերով բնակեցված գյուղխորհուրդների տնտեսական և մշակութային վերելքին:

Հատուկ հանձնաժողովը, հետազոտելով հայկական բնակավայրերը, Հյուսիս-կովկասյան երկրկոմին ներկայացրել էր հայկական գյուղի տնտեսական և մշակութային ծանր վիճակը: Հանձնաժողովի եզրակացության մեջ նշվել է հայկական գյուղերում դպրոցական-կրթական գործի թույլ վիճակը, որի արդյունքում անգրագիտությունը կազմում էր 80%: Մատնանշվել է առողջապահական ցանցի բացակայությունը, լեռնային գոտիով կտրվածության արդյունքում շրջանի ավելի քան 5 հզ բնակչի թույլ կապը խորհրդային իշխանության հետ և այլն: Հանձնաժողովի եզրակացության մեջ նշվում էր հայկական ազգային շրջանի ձևավորման անհրաժեշտությունը²³³: Այսպես ծնունդ առավ Մայկուպի օկրուգի Հայկական ազգային շրջանը:

Չերնոմորիեի օկրուգի Սոչիի շրջանի հայկական գյուղխորհուրդները չմտան ձևավորված Հայկական ազգային շրջանի կազմի մեջ, քանի որ նրանք Կովկասյան լեռնազանգվածով կտրված էին Հայկական շրջանից:

1925 թ. նոյեմբերի 1-ին անցկացվել են Հայկական շրջանի գյուղխորհուրդների ընտրություններ, նույն ամսին տեղի ունեցած աշխատավորների շրջանային համագումարում ձևավորվել է Հայկական շրջանի գործկոմ, որի առաջին նախագահ է ընտրվել Հայրապետյանը:

1926 թ. փետրվարին գումարված շրջանային նստաշրջանը շրջագործկոմի աշխատանքները սոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացի առումով գնահատել է բավարար, մինչև նույն ժամանակ, առանձնացրել թերացումները ճանապարհային

շինարարության և անտառտնտեսությունների զարգացման առումով:

1928 թ. դրությամբ Հայկական շրջանի ցանքատարածքները կազմում էին շուրջ 2 հզ հա (1978.5 հա), որից ծխախոտագործության նպատակով օգտագործվում էր ավելի քան 300 հա (338.2 հա): Շրջանում մշակովի ցանքատարածությունների զգալի մասը հատկացվում էր եգիպտացորենի՝ հայկական տնտեսությունների հիմնական սննդատեսակի աճեցմանը: Ծխախոտագործության մեջ մասնագիտացված հայկական տնտեսություններում (շուրջ երեսուն կոոպերատիվներ) զգալի տարածում ունեին «Սասուն», «Տրապիզոն» «Տիկ-կուլակ» տեսակները, որոնց բերքատվությունը մեկ հա-ից կազմում էր 60-70 փութ:

1928 թ. Հայկական ազգային շրջանում հաշվվում էին 1.302 տնտեսություններ, որոնց շուրջ 1/3-ն ուներ հողի մշակման անհրաժեշտ աշխատանքային գործիքներ (գութան և այլն), մյուս տնտեսությունները կիրառում էին պարզ գործիքներ՝ բահեր, ինքնաշեն կալսիչ մեքենաներ և այլն: Հայկական շրջանի տնտեսության մեջ կարևոր օղակ էր հանդիսանում անասնապահությունը, որը շրջանի կազմավորումից հետո՝ 1925-1928 թթ., արձանագրեց անասնազխաքանակի աճ 14%-ով:

Հայկական ազգային շրջանի կազմավորումից հետո որոշակի առաջընթաց արձանագրեց նաև կրթական-լուսավորական ասպարեզը. 1926 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով անգրագետ էր շրջանի բնակչության 76.6%-ը:

Հայկական շրջանի ժողկրթբաժինը յուրաքանչյուր բնակավայրում կազմակերպել էր ակումբներ, լիկբեզներ, որոնք նկատելիորեն կրճատել են հասուն տարիքի բնակչության անգրագիտության մակարդակը:

1927-1928 թթ. Հայկական շրջանում գործում էին 23 հայկական դպրոցներ՝ 26 ուսուցիչներով: Այդ դպրոցներում սովորում էին 1.120 աշակերտ: Չնայած մանկավարժական կադրերի

²³³ Նույն տեղում, էջ 168:

և ձեռնարկների անբավարար լինելուն՝ ուսուցումը դպրոցներում անճանաչելիորեն փոխել է շրջանի կրթական-լուսավորական դիմագիծը:

Հաջողությամբ գործում էր հայկական թատրոնը, հրատարակվում էր «Մուրճ-մանգաղ» պարբերականը, տպագրվում էր հայկական գրականություն և այլն:

Հայկական ազգային շրջանի իշխանության օղակներում լայնորեն ներգրավվեցին տեղական ազգության ներկայացուցիչները: Հետաքրքրական է շրջկոմի ՀԼԿԵՄ կազմակերպության ղեկավար Խլիջյանի պաշտոնից ազատման դրվագը՝ հայերենին վատ տիրապետելու պատճառով, քանի որ իշխանությունները խրախուսում էին հայերեն լեզվի գործածումը հասարակական և պետական տարբեր ոլորտներում:

1929 թ. ՀամԿ/բ/Կ ԿԿ նոյեմբերյան պլենումը գյուղատնտեսության ոլորտում կոլեկտիվացման անցնելու որոշում ընդունեց, իսկ ՀամԿ(բ)Կ Հյուսիս-կովկասյան երկրկոմը որոշեց երկրամասի համընդհանուր կոլեկտիվացումն իրականացնել 1929-1931 թթ.: Այսպիսով, Հայկական շրջանը թևակոխեց սոցիալ-տնտեսական իրողությունների նոր փուլ: Հարկ է նշել, որ Հայկական շրջանում նոսր բնակեցվածության հետևանքով և մեծաթիվ փոքր բնակավայրերի (թվով 54) առկայությամբ պայմանավորված, դժվարություններ էին առաջանում բնակչությանը խորհրդային շինարարության մեջ ներգրավելու հարցում: Ավելին, ըստ ОГПУ-ի ամփոփագրերի, Հայկական շրջանում Հայրապետյանի գլխավորությամբ գործում էր դաշնակցական-անջատողականների խումբ, որի նպատակն էր «անկախության հասնել»՝ Սոցիի հայկական տարածքում: Հայրապետյանի խումբը լուրջ խոչընդոտ էր հանդիսանում և կոլեկտիվացման տարիներին շրջանը դիտարկվում էր հրոսակախմբերի օջախ: Այնուհանդերձ, Հայկական ազգային շրջանը մտավ 1920-1930-ական թթ. սկսված վերափոխումների շրջափուլ:

Թեև 1930 թ. Հյուսիս-կովկասյան երկրամասում օկրուգա-

լին բաժանումը վերացվեց, սակայն շրջանային վարչատարածքային բաժանումը պահպանվեց. պահպանվեց նաև Հայկական շրջանը:

1930-ական թթ. վերջին ազգային շրջան տերմին-բնորոշումը դադարեց կիրառվելուց և ուղղակի նշվում էր Հայկական շրջան:

1934 թ. Հայկական ազգային շրջանի բնակչությունն, ըստ հարկային հաշվառման տվյալների, կազմում էր 9900 մարդ, որոնք բնակվում էին 8 գյուղխորհուրդների կողմից սպասարկվող 52 բնակավայրերում: Վերջիններս հիմնականում փոքրաթիվ բնակչություն՝ 25-250 բնակիչ ունեցող բնակավայրեր էին: Հայերը կազմում էին շրջանի բնակչության շուրջ 85%-ը (1932 թ.):

Հայկական ազգային շրջանի իրական ձեռքբերումներից էր դպրոցական տարիքի երեխաների 100 % ներգրավումն առաջին աստիճանի դպրոցներում (արդեն 1931 թ.): Կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ կարևոր քայլ էր 1931 թ. անցկացված կուրսերը կուսակցական-կոմերիտական բջիջների քարտուղարների և կոլտնտեսությունների ակտիվի համար, որոնց մեջ գերակշռում էին հայերը:

1931 թ. սկսվեց շրջանային աշխատակազմի և գյուղական կազմակերպությունների հայացումը և անցումը հայերենով գործավարությանը, սակայն իրական արմատավորում տեղի չունեցավ:

1931 թ. սեպտեմբերի 11-ին շրջկենտրոն էլիսավետապոլսկոյե գյուղում տեղի ունեցած Հայկական շրջանի Նախագահության վերահսկիչ հանձնաժողովի նիստում նշվել է արմատավորման քաղաքականության դեմ ուղղված հակազդեցության մասին: Պաշտոնական գրագրությունը հայերենով վարելու համար առաջարկվում էր հիմնել հայերեն լեզվի խմբակներ ղեկավար և ստորին կազմի աշխատակիցների համար, 1931թ. հոկտեմբերի 1-ից հայերեն լեզվի ուսուցման մշտական կուրսեր

բացել գյուղական քարտուղարների, գործավարների և հաշվապահների համար²³⁴։

Միևնույն ժամանակ, առաջարկ է ներկայացվել շրջագործկոմի աշխատակազմը ձևավորել այնպես, որ պատասխանատու քարտուղարն ու ընդհանուր բաժնի վարիչը տիրապետեն և հայերենին, և՛ ռուսերենին։

Քանի որ տեղաբնակ հայերը վատ էին տիրապետում գրավոր լեզվին, ուստի խնդիրը լուծելու համար մասնագետներ էին հրավիրվում այլ վայրերից և Հայաստանից, որոնք էլ իրենց հերթին հաճախ անհրաժեշտ մակարդակի չէին տիրապետում ռուսերենին կամ տեխնիկական բառապաշարին։

Հայկական ազգային շրջանի գործկոմի որոշմամբ, շրջանի բոլոր կազմակերպություններն ու հաստատությունները պարտադիր կարգով 1931 թ. դեկտեմբերի 1-ից պետք է գործավարությունը տանեին հայերեն լեզվով։

Հետաքրքիր է նշել, որ այդ ժամանակաշրջանում շրջանային և գյուղական կազմակերպություններում աշխատող 311 աշխատակիցներից 80-ը եկվոր հայեր էին, 13-ը՝ տեղացի։ Առկա մարդկային ռեսուրսով սահուն անցում ապահովել հայերենով գործավարության գործնականում շատ դժվար էր։

Հայկական ազգային շրջանի ղեկավար կազմի որոշ աշխատակիցներ, ինչպես օրինակ, շրջանի ֆինբաժնի վարիչ Ա. Սիմոնյանը և շրջագործկոմի պատասխանատու քարտուղար Խ. Աղվանդովը նկատողություն-զգուշացում են ստացել շրջանում գործավարությունը հայերենով չվարելու համար։ Ավելին՝ Ա. Սիմոնյանը հեռացվել է նաև կուսակցության շարքերից։

1932 թ. օգոստոսի 8-ին Հայկական շրջանի շրջկոմի բյուրոն արձանագրել է, որ «Արմատավորման շրջանային հանձ-

նաժողովը լուծարվել է և նրա գործառույթները փոխանցվել են շրջագործկոմին։ Այդ պահից սկսած շրջանային կազմակերպությունների մեծ մասը /ՀԽՍ, Союзтабаксырье, Райфо, Банк, РИК և այլն/ բացահայտ չեն ցանկանում գործավարությունը տանել մայրենի լեզվով, չնայած աշխատակազմերում աշխատակից հայերի կշռի շարունակական աճին»։ Որոշում է ընդունվել տեղեկացնել Հյուսիս-կովկասյան երկրկոմի կուսակցական մարմնին առ այն, որ մի շարք երկրամասային գերատեսչություններ /Միլիցիայի շրջանային վարչությունը, Պետբանկի երկրամասային գրասենյակը, Երկրկուլտնտես միությունը/ շրջանից հետ են կանչել ազգային-աշխատակիցներին և նրանց փոխարեն ուղարկում են ռուսներին և այլ ազգությունների ներկայացուցիչների՝ այդ կերպ արգելակելով արմատավորման կուրսի ավարտին։

Հայկական ազգային շրջանի շրջկոմն ու վերահսկիչ հանձնաժողովն իրենց հերթին գործուն քայլեր չեն ձեռնարկել արմատավորումն ավարտին հասցնելու համար, որի վառ վկայությունն է հայատառ փաստաթղթերի բացակայությունը։ Գործավարության հայացման ուղղությամբ կատարված իրական քայլերից էին միայն հայալեզու փաստաթղթերի բլանկ-ձևաթերթիկներներն ու կնիքը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով։ Այս ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունք էր նաև շրջանային «Բերքի համար» թերթը, որը տպագրել է հայերեն նյութեր։ «Բերքի համար» եռօրյան հանդիսանում էր ՀամԿ/ԲԿ Կրասնոդարի երկրամասի Հայկական շրջկոմի և շրջխորհրդի օրգանը /խմբ.՝ Հ. Առաքելյան և Բ. Փոթիկյան/, հրատարակվել է 1933-1940 թթ.²³⁵։

1932-1935 թթ. Ելիսավետպոլսկոյե շրջկենտրոնում հրատարակվել է նաև ՀամԿԵՄ Ազով-Սևծովյան երկրամասի շրջկոմի օրգան «Երիտասարդ բոլշևիկ»-ը։

²³⁴ Иванцов И. Г., Малоизвестные факты истории Армянского района в 1920-1930-е гг., *Армяне юга России: история, культура, общее будущее: материалы Всероссийской научной конференции* (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону) նշվ. աշխ., էջ 57։

²³⁵ Հայ պարբերական մամուլը։ Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Մ. Ա. Բաբլոյան, Ե., 1986, էջ 201։

Հայկական շրջանի ՀամԿ/բ/Կ շրջանային կոմիտեի 1934 թ. նոյեմբերի 27-ի ընդլայնված պլենումը նշել է, որ շրջանում տարվող արմատավորման քաղաքականությունն այդպես էլ չի ավարտվել:

Ազգային ինքնավարությունների վերացումը շրջանային և գյուղխորհուրդների մակարդակով Կուբանում սկսվել է 1930-ական թթ., թեև այդ քաղաքականությունը Հայկական շրջանին առնչվեց հետպատերազմյան տարիներին: 1943-1946 թթ. Հայկական շրջանի կենտրոնը դարձավ Չերնիգովսկոյե գյուղը:

1953 թ. օգոստոսի 22-ին Կրասնոդարի երկրամասում լուծարվեցին 72 առկա շրջաններից/, որոնց թվում էր Հայկական ազգային շրջանը, իսկ նրա տարածքը բաժանվեց հարևան շրջանների միջև:

Այսպես ավարտվեց Հայկական ազգային շրջանի գոյությունը, որը թեև վարչական առումով ինքնուրույն չէր, սակայն որոշակիորեն ներկայանում էր որպես ազգային միավոր:

Մյասնիկյանի ազգային շրջան /1926-1963 թթ./:

ՌԽՖՍՀ տարածքում երկրորդ հայկական ազգային շրջանը կազմակերպվեց 1926 թ. Դոնում: 1926 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Դոնի օկրուգում բնակվում էին ավելի քան 44 հզ հայեր²³⁶, իսկ հայաշատ Նոր/Դոնի Նախիջևանը հետզհետե ավելի ու ավելի էր ինտեգրվում Դոնի Ռոստովի հետ՝ 1929 թ. Պրոլետարսկի շրջան անունով մտնելով նրա կազմի մեջ: Դոնի Նախիջևանի հարակից հայկական գյուղերը մտցվել էին Աքսայի շրջանի կազմի մեջ:

1925 թ. հոկտեմբերին կայացած Դոնի օկրուգային խորհրդակցությունը, որը նվիրված էր խորհրդային շինարարությանը, «Ազգային փոքրամասնությունների շրջանում աշխատանքների մասին» բանաձև ընդունեց, որում ընդգծվում էր 6

գյուղխորհուրդներից կազմված հայկական ազգային շրջան ձևավորելու նպատակահարմարությունը: Խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց հարցը դնել այդ տարածքի բնակչության քննարկմանը, որի արդյունքում ռուս ազգության բնակիչները որևէ դժգոհություն ու կասկած չհայտնեցին խնդրի նկատմամբ:

1926 թ. մարտի 8/9-ի Դոնգործկոմի նախագահության որոշման հիմքի վրա, այն է՝ Աքսայի շրջանի հայկական բնակավայրերի առանձնացումով ձևավորել հայկական ազգային շրջան, հիմք դրվեց Մյասնիկյանի հայկական ազգային շրջանի կազմավորմանը²³⁷: Դոնգործկոմի որոշման մեջ նշվում էր, որ ազգային շրջանի կազմակերպումն անմիջականորեն համապատասխանում է հայ ժողովրդի ցանկություններին և դրանով Դոնի օկրուգի հայ բնակչությունը տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն է ստանում՝ համապատասխան իր լեզվի և կենցաղի պայմանների: Դոնի Հայկական ազգային շրջանն անվանվեց Մյասնիկյանի անվան ի պատիվ անվանի պետական-քաղաքական գործչի՝ ծնունդով նորոնախիջևանցի Ալեքսանդր Մյասնիկյանի: Մյասնիկյանի ազգային շրջանի մեջ մտան Չալթր, Դրիմ, Սուլթան-Սալա, Նեսվիթա գյուղխորհուրդները: Շրջանի վարչական կենտրոնը 1926-1928 թ. Նոր Նախիջևանն էր, 1928-1929 թ. սեպտեմբերի 12-ը՝ Դրիմը, ապա՝ Չալթրը:

1926 թ. մայիսի 10-ին տեղի է ունեցել Մյասնիկյանի շրջանի խորհուրդների հիմնադիր համագումարը և այդ օրն էլ ընդունված է համարել ազգային շրջանի կազմավորման օր: Մյասնիկյանի ազգային շրջանի շրջկոմի առաջին քարտուղարն Ա. Միկոյանի ընկեր և հետևորդ էմանուիլ Գիգոյանն էր, իսկ շրջգործկոմը գլխավորել է Դերենիկ Ապրեսյանը²³⁸:

Մյասնիկյանի ազգային շրջանի կազմի մեջ մտան նաև

²³⁶ * Всесоюзная перепись населения 1926 года, том IX, Российская Социалистическая Федеративная Советская Республика, М., 1929, с. 38, 252-253; Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 64:

²³⁷ В семье единой, Мясниковский райисполком, Ростов-на-Дону, 1989, с. 8.

²³⁸ Мясниковский район, сост. Гизгизов Т.В., Ростов-на-Дону, 1999, с. 66.

դեռևս 1922-1927 թթ. հիմնված նոր գյուղական բնակավայրերը Տրուդ (Աշխատանք) կոմունան, որը վերանվանվեց Լենինական, Կրասնի Դրիմը, Լենինականը և Վեսյոլի խուտորը, որոնցում նույնպես գլխավորապես հայեր էին բնակվում: Ավելի ուշ Մյասնիկյանի շրջանի կազմի մեջ մտան նաև Խապյորի (1929), Կալինինի (1933) և Պետրովսկի գյուղխորհուրդները:

1920-ական թթ. վերջին Մյասնիկյանի շրջանում սկսված կոլեկտիվացումն ավարտվել է 1930 թ.՝ կոլտնտեսությունների մեջ միավորելով գյուղացիության 98 %-ը:

1936 թ. հունվարի 1-ի դրությամբ շրջանում կար 20 կոլտնտեսություն, ցանքատարածքները կազմում էին ավելի քան 35 հզ հա:

1926 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Մյասնիկյանի շրջանի բնակչությունը կազմում էր շուրջ 25 հզ մարդ, որից հայեր էին ավելի քան 24 հզ-ը²³⁹: Մեծ Հայրենականի նախօրեին շրջանի բնակչությունը հասնում էր 28 հզ-ի:

Մյասնիկյանի ազգային շրջանի կազմակերպումը մեծապես նպաստել է Դոնի հայության ազգային ինքնության և մշակույթի պահպանմանը:

1963 թ. Մյասնիկյանի շրջանը միավորվել է Նեկլինովսկի շրջանի հետ, որի արդյունքում կորցրել է հայկական ազգային շրջանի կարգավիճակը²⁴⁰, թեև 1965 թ. Մյասնիկյանի շրջանը, որպես առանձին վարչատարածքային միավոր, կրկին վերականգնվել է:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում և ուսումնասիրման անհրաժեշտություն ունի հայկական ազգային գյուղխորհուրդներից և շրջաններից դուրս Հյուսիսային Կովկասի տարբեր վարչատարածքային միավորներում, քաղաքային և գյուղական բնակավայրերում տեղաբաշխված հայության հասարակական-քաղաքական կյանքի գործընթացները:

Միանշանակ է, որ հայության այս հատվածը ևս որոշակիորեն ներգրավվել է ազգային փոքրամասնությունների նկատմամբ տարվող քաղաքականության մեջ, որի կարևոր դրսևորումներից էր ընտրական գործընթացներին ու տարբեր մակարդակների տեղական իշխանության օղակներում ներգրավվածությունը:

Այս առումով նշանակալի իրողություն էր ազգային փոքրամասնությունների համախումբ բնակության քաղաքային և գյուղական վայրերում ազգային ընտրական տեղամասերի ձևավորումը: Ազգային ընտրական տեղամասերում ընտրվում էին այս կամ այն, այդ թվում՝ հայկական էթնիկ խմբի ներկայացուցիչները, որով էլ հնարավորություն էր ստեղծվում քաղաքային խորհուրդներում ապահովել ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը²⁴¹:

Հետաքրքրական է, որ ազգային ընտրական տեղամասերում աշխատանքները տարվում էին մայրենի լեզվով, իսկ ընտրական գործընթացների ժամանակ քվեարկությունն ավելի ակտիվ էր, քան այլ տեղամասերում: Այդպիսի հայկական ազգային ընտրական տեղամասեր էին ձևավորվել Նոր Նախիջևանում, Պյատիգորսկում, Վլադիկովկասում և այլուր:

Այսպիսով, 1920-ական թթ. ՌԽՖՍՀ-ում ձևավորված հայկական ազգային շրջաններն ու գյուղխորհուրդները որոշակիորեն ստանձնեցին հայկական էթնիկ խմբի համախմբման, ազգային լեզվի, մշակույթի և տնտեսական զարգացման դերակատարություն:

Ազգային ինքնավարության այս ցածր միավորները միտված էին բավարարելու ազգային պահանջումներն ու շահերը, որը թեև լիարժեք իրականացնել չէր հաջողվում, սակայն անհրաժեշտ գործառույթ էր ռուսահայ ազգային-համայնքային կառույցների լուծարումից հետո:

²⁴¹ Армяне Ставрополя и Терека Коллективная монография под общей ред. В. З. Акопяна, Пятигорск, 2007, с. 153.

²³⁹ Կազմում էր ՌԽՖՍՀ գյուղական հայ բնակչության ավելի քան 30%-ը:

²⁴⁰ Мясниковский район, նշվ., աշխ., էջ 68-69:

Ի վերջո Յուսիսային Կովկասում, Դոնում, Ղրիմում ապաստանած տասնյակ հազարավոր հայ գաղթականներ, օգտվելով խրախուսվող ազգային համախումբ բնակեցման քաղաքականության հնարավորությունից, վերջապես դարձան հայկական միջավայրի լիարժեք մասնիկը, հողակտոր ստացան /այդ թվում՝ կազակական ստանիցաներում/, ազատվեցին անվերջանալի թվացող տեղաշարժերից ու դեգերումից: Այս համատեքստում նկատելի էր նաև ազգային գյուղխորհուրդների, կոլեկտիվացման տարիներին կյանքի կոչված կոլտնտեսությունների ու ազգային շրջանների դերը:

Խորհրդային իշխանություններն այս կերպ ձգտում էին բարձրացնել ազգային փոքրամասնությունների կուլտուրական, տնտեսական և քաղաքական մակարդակը՝ նրանց լայնորեն ներգրավելով խորհրդային շինարարության մեջ և ամրապնդելով հավատարմությունը խորհրդային կարգերին:

Գլուխ 3. Կրթամշակութային կյանքը, դպրոցը, գրական կյանքը, մամուլը

Ռուսաստանում ամենանշանավոր հայկական կրթական հաստատություն Լազարյան ճեմարանն իր գործունեության մեկ դարում տվեց 2000-ից ավելի շրջանավարտներ, որոնք դարձան մանկավարժներ, զինվորականներ, պետական ծառայողներ, դիվանագետներ և հոգևոր գործիչներ: Ճեմարանը ծանրակշիռ դեր կատարեց հայ և ռուս ժողովուրդների մշակութային մերձեցման և բարեկամության գործում: Լազարյան ճեմարանն, ինչպես Ռուսաստանի մյուս հայկական ուսումնական հաստատությունները, նոր շրջան թևակոխեց ռուսական հեղափոխությունից հետո, վերակազմվելով ստեղծված պայմաններին համապատասխան, ապա ծառայելով որպես Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն Մոսկվայում:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն, ապա նաև հոկ-

տեմբերյան հեղաշրջումը ռուսահայ ազգային կյանքի ակնկոծում առաջացրին: Հայության շրջանում հույսեր արթնացան ազգային-համայնքային կյանքի զարթոնքի առումով, այդ թվում՝ հայ համայնքների ազգային կրթության վերածննդի և զարգացման ծրագրերի առնչությամբ. «1917 թ. մայիսի 20-ին Աստրախանի հայերի հոգաբարձական խորհուրդը որոշեց Աղաբաբյան ուսումնարանը (որը շարունակաում էր մնալ քաղաքի հայկական կրթության հիմնական օջախը) վերափոխել Աստրախանի Աղաբաբյան հայկական գիմնազիայի: Երեք ամիս անց գիմնազիայի կանոնադրությունը հաստատվեց ժամանակավոր կառավարության կողմից»²⁴²: Հետաքրքրական է, որ այս գիմնազիայի ծրագիրը համապատասխանում էր դասական գիմնազիայի ծրագրին՝ հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, մշակույթի և կրոնի դասավանդման ավելացմամբ:

Բոլշևիկյան մենիշխանության հաստատումով, Ռուսաստանը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ, իսկ հայկական համայնքներն իրենց վրա կրեցին քաղաքական ցնցումները: Եթե Յուսիսային Կովկասում և Դոնում, ուր բնակվում էր Ռուսաստանի հայության հիմնական զանգվածը, խորհրդային կարգերն ամրապնդվեցին 1920 թ., ապա Մոսկվայում, Պետրոգրադում և այլն, խորհրդային իշխանությունը հաստատվել էր ավելի վաղ՝ արդյունքում տարբեր տարածաշրջաններում գտնվող հայ համայնքներին դնելով տարբեր սոցիալ-քաղաքական պայմանների մեջ: Քաղաքացիական պատերազմի տարիներին տարբեր կերպ դրսևորվեցին նաև հայ համայնքների ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլ նաև մշակութային-կրթական կյանքը: Խորհրդային իշխանության պատվար Պետրոգրադում, Մոսկվայում և այլ վայրերում տեղ գտան կրթական քաղաքականության նոր մոտեցումներ, հիմք էր դրվում խորհրդային դպրոցին, իսկ մասնավորաբար, Դոնում, Յուսիսային Կովկասում և դեռևս չխորհրդայ-

²⁴² Հայ գաղթաշխարհի պատմություն, մշվ. աշխ., էջ 288:

նացած մյուս տարածաշրջաններում նախկին դպրոցական համակարգը շարունակեց գոյատևել ևս մի որոշ ժամանակ:

1918 թ. դեկտեմբերի 23-ին Համառուսաստանյան Կենտրոնականի որոշմամբ լուծարվեց Համառուսաստանյան Ուսուցչական Միությունը, նրա տեղական կառույցները: Դեկրետը ստորագրել էին Կենտրոնականի նախագահ Սվերդլովը և Կենտրոնականի քարտուղար Վ. Ավանեսովը: Ուսուցչական Միությունը և նրա ղեկավար օղակները մեղադրվում էին հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հակահեղափոխական «Հեղափոխության և հայրենիքի փրկության Կոմիտե»-ի հետ գործակցելու մեջ:

1917-1919 թթ. հիմնականում նախանշվեցին և օրենքով ամրագրվեցին խորհրդային իշխանության նոր մոտեցումներն ու քաղաքականությունը կրթական ասպարեզում: Իրականում խորհրդային իշխանության քաղաքականությունը գիտակրթական համակարգում իրենից ներկայացնում էր ոչ թե բարեփոխում, այլ նպատակ էր հետապնդում սկզբունքորեն նոր կրթական համակարգի հիմք դնել: Այդ խնդրի իրականացման ճանապարհին տեղի ունեցավ հրաժարում կրթական համակարգի նախկին մոդելից և ինստիտուտներից: Խորհրդային իշխանության դեկրետներն ու որոշումները հստակորեն բացահայտում են նոր խորհրդային դպրոց հիմնելու ծրագիրը: Այս ճանապարհին դուրս մղվեց կրթական համակարգի ակունքներում կանգնած այնպիսի կառույց, ինչպիսին եկեղեցին էր:

Խորհրդային դպրոցական համակարգը հրաժարվեց ազգային կրթության և դաստիարակության սկզբունքից: Խորհրդային դպրոցը պետք է լիներ միայն պետական, մշակվելու էր ուսուցման նոր ծրագիր:

Փոփոխությունները, որոնք տեղ գտան Խորհրդային Ռուսաստանի կրթական համակարգում չէին կարող համընդհանուր և միաժամանակ կիրառություն ունենալ, քանի որ երկիրը ներքաշված էր քաղաքացիական պատերազմի մեջ, ենթարկվել

էր օտարերկյա ներխուժման, արդյունքում չէր վերահսկվում տարածքի զգալի մասը:

Ռուսաստանի այն տարածաշրջաններն, ուր ավանդաբար ստվար հայ համայնքներ էին առկա՝ Դոնը, Հյուսիսային Կովկասը, Ղրիմը, նաև Միջին Ասիայի մի շարք շրջանները, խորհրդային կարգերն ամրապնդվեցին ավելի ուշ՝ ի տարբերություն համեմատաբար փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող կենտրոնական շրջանների: Ուստի, այս տարածաշրջանների հայկական համայնքները, մինչ խորհրդային իշխանության տակ անցնելը, կարճ ժամանակով՝ 1917-1920 թթ, ունեցան ազգային-մշակութային, համայնքային կյանքի նպաստավոր պայմաններ: Այստեղ գործող հայկական համայնքային կառույցներն ու կրթամշակութային հաստատությունները, թեև նյութական դժվարություններին, մեծ մասամբ, շարունակեցին գործել:

Այսպես, վերոհիշյալ ժամանակահատվածում Դոնում և Ղրիմում ստեղծվել և գործում էին «Հայ Ուսուցչական Միություն»-ները: Խորհրդային իշխանությունների ձեռնարկած ռեֆորմները և անցումը խորհրդային դպրոցին այստեղ տեղ գտան ավելի ուշ: Դոնի Նախիջևանի և օկրուգի «Հայ Ուսուցչական Միություն»-ը հիմնվել էր 1917 թ., իր շարքերում ուներ 120 անդամ²⁴³: Միության նախագահն էր Ավետիս Տեր-Հարությունյանը:

Ղրիմի «Հայ Ուսուցչության Միություն»-ը ստեղծվել էր 1918 թ. և բաղկացած էր 20 անդամներից: Այստեղ կառավարման խորհրդի անդամները 3-ն էին՝ Ել. Գրիկյան, Ա. Արծրունի և Ս. Տեր-Ստեփանյանը²⁴⁴:

Վերոհիշյալ շրջանում Դոնում գործել են հայկական բազմաբնույթ ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ Դոնի Նախիջևանի հայկական Հոգևոր Սեմինարիան (մանկավարժական կազմը 13 հոգի էր):

²⁴³ Армянский настольный календарь, с. 24.

²⁴⁴ Նույն տեղում:

1. Առևտրական ուսումնարանը, որը գործում էր Դոնի Ռոստով քաղաքում (8-ամյա էր) և պատկանում էր Պարսկահայերի հայրենակցական միությանը²⁴⁵:

2. Արհեսավորական ուսումնարանը, որը գործում էր սբ. Յամբարծման եկեղեցուն կից: Տնօրենն էր Դոնի Նախիջևանի Յամայնական Խորհրդի Նախագահության քարտուղար Ջ. Խոշաֆյանը:

3. 1-ամյա արական «Թորոսյան» ուսումնարանը, որը գործում էր սբ. Թեոդորոս եկեղեցուն կից:

4. 1-ամյա արական «Յամբարծում» ուսումնարանը, որը գործում էր սբ. Յամբարծման եկեղեցուն կից (տնօրենն էր Միքայել Չուբարյանը):

Դոնի իգական ուսումնական հաստատություններից իրենց գործունեությունն էին շարունակում Դոնի Նախիջևանի 7-ամյա «Գոգոյան» գիմնազիան, Դոնի Նախիջևանի 1-ամյա «Սանդուխտյան» (սբ. Նիկողայոս եկեղեցուն կից), 2-ամյա «Յոնիփսիմյան» ուսումնարանները²⁴⁶: Վերջինը նույնպես գործում էր հայկական եկեղեցուն կից, որի հոգաբարձուների Խորհրդի նախագահն էր Ե. Շահագիզը:

1919 թ. հոկտեմբերի 11-ով թվագրված փաստաթղթից, որը կազմված էր Դոնի Ռոստովի հայկական հյուպատոս Գր. Չալխուշյանին ներկայացնելու համար, տեղեկանում ենք Յայկական Յամայնքի կողմից խնամակալվող ուսումնական հաստատությունների վերաբերյալ. «Յայկական Յամայնքը խնամակալում է Նախիջևան և Դոնի Ռոստով քաղաքների բոլոր ուսումնական հաստատությունները՝ լրացնելով նրանց բյուջեների դեֆիցիտը և ամեն կերպ հոգ տանելով նրանց առաջադիմությանը»²⁴⁷: Այնուհետև նշվում էր Ռոստով-Նախիջևանի հայկական կրթական հաստատությունների թիվը. «Երկու քաղաքներում հայկական

²⁴⁵ Նույն տեղում, էջ 25; ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 49:

²⁴⁶ Армянский..., с. 24-25.

²⁴⁷ ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 49:

ուսումնական հաստատությունները յոթն են. Հոգևոր սեմինարիան, Գոգոյան իգական գիմնազիան, Պարսկահայերի 8-ամյա առևտրական ուսումնարանը, երկամյա եկեղեցական-ծխական իգական սբ. Յոնիփսիմյան ուսումնարանը և երեք եկեղեցական-ծխական դպրոցներ եկեղեցիներին կից»²⁴⁸:

Վերոհիշյալ հայկական 7 ուսումնական հաստատությունների ուսուցչական և աշակերտական կազմն ուներ հետևյալ պատկերը. երկու սեռի սովորողների թիվը հասնում էր մինչև 2.000-ի, «սովորեցնողների թիվը-100»²⁴⁹:

Դոնում գործող հայկական ուսումնական հաստատությունների աշակերտական կազմի և պայմանների մասին տվյալներ է ներկայացնում Դոնի Նախիջևանի Յամայնական Խորհրդի նախագահ և տարագիր դարձած Ռ. Բերբերյանն իր ընդարձակ հոդվածում տպագրված 1934 թ. Փարիզի «Վեմ» հանդեսում: Ռ. Բերբերյանն իր «Նոր-Նախիջևանի անցեալն ու ներկան» հոդվածում գրել է. «...ցոյց տալու համար, թե ինչ չափով Նոր-Նախիջևանի գաղութը ընթանում էր հայ մշակոյթի զարգացման ճանապարհով՝ բաւական է այստեղ բերել ցանկը այն զուտ հայկական վարժարանների, որտեղ կրթութիւն էր ստանում երկու սեռի հայ աշակերտութիւնը (նախնական և միջնակարգ/»²⁵⁰: Այնուհետև, Յամայնական Խորհրդի նախկին նախագահը մեջբերում է այդ վարժանների ցանկը՝ 9-ամյա Թեմական դպրոց, Գոգոյան իգական գիմնազիա (ութղասեան), Սանդուխտյան և Յոնիփսիմյան իգական դպրոցներ, Յամբարծման և Ս. Թորոս ծխական դպրոցներ և Սահակ-Մեսրոպյան քաղաքային դպրոց. «Այս եօթ դպրոցները ունէին իրենց սեփական քարէ շէնքերը»²⁵¹:

Յանրագումարի բերելով Դոնի հայկական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը, որոնք առանձնացվել էին Ռ. Բերբերյանի կողմից, կարող ենք նշել, որ Նոր Նախիջևան

²⁴⁸ Նույն տեղում:

²⁴⁹ ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 49:

²⁵⁰ Վեմ, Փարիզ, 1934, Յունևար-Փետրուար, էջ 12:

²⁵¹ Նույն տեղում, էջ 13:

քաղաքում գործում էին տարբեր տիպի (թեմական, ծխական և այլն) զուտ հայկական 8 դպրոցներ՝ արական և իգական: Բացի այս Նոր Նախիջևանում գործում էին ոչ զուտ հայկական ավելի քան 5 պետական և մասնավոր ուսումնական հաստատություններ՝ մեծաթիվ հայ աշակերտներով: Դոնի հայկական գյուղերում միասին կար 12 դպրոց ու վարժարան, Դոնի Ռոստով քաղաքում երկու իգական գիմնազիա, ինչպես նաև Ռ. Բերբերյանի կողմից չիժատակված Պարսկահայերի Առևտրական ուսումնարանը (Դոնի Ռոստով): Բոլոր վերոհիշյալ ուսումնական հաստատությունների թիվը միասին կազմում էր 28՝ չիաշված Ռոստովի այլ դպրոցներ, ուր սովոր հայ աշակերտություն կար: Այսպիսի լայն և զարգացած դպրոցական ցանց էր առկա Դոնում մինչև խորհրդային կարգերի այստեղ ամրագրումը:

Դոնի հայկական ուսումնական հաստատությունների զգալի մասը դադարեց գործելուց 1920 թ., իսկ փոքր մասն էլ գոյատևեց մինչև 1920-ական թթ. սկզբները, ինչպես՝ Սբ. Խաչ վանքի դպրոցը:

1918 թ. Ղրիմում բնակվող հայության շրջանում ևս 1917 թ. հեղափոխությունն ազգային-համայնքային լիարժեք կյանքով ապրելու հույսեր արթնացրեց: Կրթական-մշակութային կյանքի զարթոնքի համար առաջնային էր դիտվում նոր ուսումնական հաստատությունների հիմնումը. «Ղրիմի հայերի համար օրակարգային հարց էր հանդիսանում ազգային գիմնազիայի բացման խնդիրը: Այդպիսի գիմնազիան, անշուշտ, կարող էր հսկայական դեր խաղալ և պահել հայությանը շրջապատողների ծուլումից և օտար տարրերից»²⁵²: 1918 թ. Ղրիմում հայկական գիմնազիա բացել չի հաջողվում, այդ խնդիրն ավելի լայն արժարժման է ենթարկվում ռուսահայ տարբեր համայնքներում: Գիմնազիայի կազմակերպման համար սկզբնական շրջանում բավականին համեստ խնդիր էր դրված՝ կայացնել 1-ին և 2-րդ դասարանները. «Գիմնազիան նախատեսվում է մոտավորապես

40-50 սովորողների համար»²⁵³: Առաջին երկու դասարանների համար նախատեսվում էր ծրագրային 14 առարկա՝ դասավանդումը տարվելու էր հայերենով, բացառությամբ՝ ռուսերեն լեզվի և պատմության: Գիմնազիայի բացմանը զուգահեռ նախատեսվում էր հայկական մանկապարտեզ բացել մոտ 50 երեխաների համար²⁵⁴:

Դեռևս 1916-1917 թթ. Եկատերինոդարում գործել են երկու հայկական գիմնազիա, ուր 1917թ. «...հոկտեմբերի 27-ին հայոց գիմնազիայի դահլիճում կայացաւ հայ զինւորական և քաղաքացիական մասերի ընդհանուր ժողով այստեղ կազմակերպելու հայ զինւորական միութեան ճիւղ»²⁵⁵, իսկ արդեն հետհեղափոխական շրջանում՝ 1920 թ., կար հայկական 2 պրոգիմնազիա²⁵⁶:

1917 թ. հայկական գիմնազիայի վերակազմավորված Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, միջնակարգ ուսումնական հաստատության իր ծրագրով, շարունակեց գործել մինչև խորհրդային իշխանության հաստատումը: Ավելի ուշ, ՌԽՖՍՀ Կենտգործկոմի 1918 թ. հուլիսի 19-ի որոշման հիման վրա, Աստրախանի մյուս պետական կրթական հաստատությունների թվում, հայոց երկսեռ գիմնազիան փակվել է, վերածվել միասնական աշխատանքային դպրոցի. «Աղաբաբյան հայոց երկսեռ գիմնազիան վերափոխվել է խորհրդային միասնական աշխատանքային հայկական դպրոցի (9-ամյա ծրագրով), որը գոյատևել է մինչև 1922 թվականը»²⁵⁷:

Լուրջ թափ էր հավաքել ուսումնական գործի կազմակերպումը Սոչու շրջանում, որի լավագույն վկայությունն է Սոչու հայկական դպրոցների խորհրդի գործունեությունը. «1918 թ.

²⁵³ ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, թ. 27:

²⁵⁴ Նույն տեղում, թ. 2:

²⁵⁵ «Ռազմիկ», Թիֆլիս, 1917, 20 նոյեմբեր:

²⁵⁶ Հայ Սփյուռք Հանրագիտարան, էջ 471:

²⁵⁷ Ձաքարյան Հ., Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը (1809-1918 թթ.), Ե., 1999, էջ 84:

²⁵² Армянский настольный календарь на 1919 года, с. 35.

Սոչիի հայկական դպրոցների խորհուրդը Թիֆլիսից հրավիրեց ևս 28 հայ ուսուցիչների Ե. Ջարաֆյանի գլխավորությամբ»²⁵⁸:

Այսպիսով, Ռուսաստանի տարածքում մինչև հեղափոխությունը գործող, ինչպես նաև նորարաց, հայկական ուսումնական հաստատությունները 1917-1920 թթ. ապրեցին կարճատև, սակայն բեղուն ժամանակաշրջան:

Սովար հայ բնակչություն ունեցող Դոնը, Հյուսիսային Կովկասը, Ղրիմն ու Պովոլժիեն արդեն 1920 թ. աշնանը խորհրդային էին, սակայն որոշ հայկական ուսումնական հաստատություններ մինչև 1920-ական թթ. սկիզբը շարունակեցին գործել, մի մասն էլ դադարեցին գոյություն ունենալ հեղափոխությունից անմիջապես հետո, որոնցից էր Պյատիգորսկի ծխական ուսումնարանը²⁵⁹:

Ռուսաստանի հայության շրջանում խորհրդային քաղաքականությունը և գաղափարները քարոզելու համար, որպես տեղի հայության ներկայացուցչական մարմին Հայկական Գործերի Կոմիսարիատին փոխանցվեցին խորհրդային իշխանության տակ գտնվող տարածաշրջանների հայկական կազմակերպությունների և հաստատությունների փաստաթղթերը, ունեցվածքը: Հայկական Կոմիսարիատը խորհրդային իշխանության մոտ ընդունվեց որպես միակ օրինավոր կառույցը, որը ներկայացնում էր հայության շահերը: Կոմիսարիատի իրավասության ներքո, նախևառաջ, անցավ Լազարյան ճեմարանը: Խորհրդային իշխանության հաստատումից հետո Լազարյան ճեմարանի լիարժեք գործունեության համար ծանր ժամանակներ եկան. «Դրանցից գլխավորն էր Լազարյաններին պատկանող ձեռնարկություններից ստացվող եկամուտների դադարեցումը և Լազարյան հիմնադրամի փաստացի վերացումը»²⁶⁰, տնտեսական ճգնաժամը, քաղաքացիական պատերազմը,

սաների շրջանում հիվանդությունների հաճախականությունը ևն: Պարապմունքները Լազարյան ճեմարանում վերոհիշյալ պատճառներով դադարեցին 1918 թ. մարտին:

ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը Լազարյան ճեմարանի գործունեության վերահսկողությունը հանձնեց Հայկական Կոմիսարիատին: Ստեղծված անկանոն և քառային պայմաններից ելնելով՝ հայկական մամուլում և, մասնավորաբար, «Армянский вестник»-ում լայնորեն քննարկվում էր Լազարյան ճեմարանը Կովկաս տեղափոխելու հարցը, ինչին ընդդիմանում էին հայ բոլշևիկները. «1918 թ. հունիսին հայկական ազգային գործերի Կոմիսարիատի առաջարկությամբ ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը, լուսժողկոմի պաշտոնակատար Մ. Պոկրովսկու, հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովի և քարտուղար Վ. Տերյանի ստորագրությամբ, որոշում է հրապարակում Պողոս Մակինցյանին Լազարյան ինստիտուտի կոմիսար նշանակելու մասին»²⁶¹: Այս նշանակումից անմիջապես հետո, ստեղծվեց ինստիտուտի Խորհուրդը, ուր մտնում են Պ. Մակինցյանը, Ն. Մառը, Հ. Օրբելին, Կ. Կոստանյանը, Ջ. Մսերյանը և Վ. Տերյանը: Այս քայլով Լազարյան ճեմարանի փակման կամ տեղափոխման խնդիրը ժամանակավորապես մղվեց հետին պլան: Լազարյան ինստիտուտի առընչությամբ առավել կարևոր էր ժողկոմխորհի դեկրետը՝ Լենինի ստորագրությամբ (դեկրետի նախապատրաստմանը մեծ դեր ունեցավ Պ. Մակինցյանը), որն հրապարակվեց 1919 թ. մարտի 4-ին, ուր ճեմարանը վերանվանվում էր Հայկական Ինստիտուտ. «Մոսկվայի Հայկական ինստիտուտը (նախկին Լազարյան ինստիտուտ), որը սպասարկում է հայ աշխատավոր զանգվածների մշակութային-լուսավորական կարիքները բաղկացած է Միասնական աշխատանքային դպրոցի առաջին և երկրորդ աստիճաններից՝ հայերեն լեզվով դասավանդմամբ, պատմա-բանասիրական և սոցիալ-տնտեսական ֆակուլտետներ-

²⁵⁸ Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1983, հ.2, էջ 161:

²⁵⁹ Амайнк ("Община"), Пятигорск, 1997, вып. 6, с. 26.

²⁶⁰ Հայ գաղթաշխարհի պատմություն, նշվ. աշխ., էջ 322:

²⁶¹ Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, Е., 1982, с. 9-10.

րից՝ ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով դասավանդմամբ»²⁶²։ Դեկրետն ամրագրում էր Կոմիսարիատի դերն ինստիտուտի կառավարման գործում, որի ենթակայությանն էին անցնում նախկին Լազարյան ինստիտուտի կապիտալն ու գույքը։ Հետագայում Հայկական Ինստիտուտը վերածվել է Առաջավոր Ասիայի ինստիտուտի, ապա՝ Արևելյան կենդանի լեզուների ինստիտուտի։

Լազարյան ճեմարանի առընթեքամբ նոր որոշում կայացվեց 1921 թ. հոկտեմբերի 1-ին, երբ արդեն Հայաստանը խորհրդային էր։ ՌԽՖՍՀ Կենտգործկոմի որոշումով Մոսկվայում հիմնվեց Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տունը. «...Նախկին Լազարյան ինստիտուտը, որը կառուցվել էր հայ բուրժուազիայի միջոցներով, վերանվանել «Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն» և բոլոր նյութական արժեքներով հանձնել Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարության տրամադրությանը»²⁶³։ Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան պահպանման և ղեկավարման պատասխանատվությունը հանձնվեց Մոսկվայում Հայկական ԽՍՀ ներկայացուցչին։ Այդ պաշտոնը մինչև 1922 թ. զբաղեցնում էր Ս. Տեր-Գաբրիելյանը, ով նշանակալի դերակատարություն ունեցավ կազմակերպչական առումով։ Այսպիսով, ԽՂՍՏ-ը կրկին վիճակվեց ստանձնել հայկական մշակութային հիմնարկի դերակատարությունը՝ դառնալ խորհրդահայ մշակույթի կենտրոնը Մոսկվայում (1921-1953 թթ.)։ Ինչ վերաբերում էր այստեղ գործող հայկական տարրական դպրոցին, ապա այն գոյատևեց ընդամենը մի քանի տարի. «1924 թվականին Մշակույթի Տանը կից ստեղծվեց առաջին հայկական դպրոցը Մոսկվայում բնակվող հայ երեխաներին մայրենի լեզվով ուսուցանելու համար»²⁶⁴։

Խորհրդային դպրոցի առաջին տարիներին, ամբողջ կրթա-

²⁶² Декреты Советской Власти, том 4, М., 1968, с. 466.

²⁶³ Каграманов Н., նշվ. աշխ., էջ 10:

²⁶⁴ Նույն տեղում, էջ 28:

կան համակարգը հայտնվել էր բավականին ծանր իրադրության մեջ՝ մի կողմից անհրաժեշտ էր լուծել նյութական խնդիրներ, մյուս կողմից՝ ավարտին հասցնել նախանշված վերափոխումները։ Խնդիրներն ընդհանուր էին և հատուկ նաև ազգային դպրոցների համար, այդ թվում՝ հայ դպրոցին։

1920-ական թթ. սկզբին կասկածի տակ էր դպրոցական ոլորտում տարվող քաղաքականության հետագա ընթացքն, ինչի մասին անթաքույց բարձրաձայնվում էր ժամանակակից մամուլի էջերում, այդ թվում՝ տեղերի հայկական թերթերում²⁶⁵։

1920-ականներին դժվարին սոցիալ-տնտեսական և գաղափարական-քաղաքական իրավիճակ էր տիրում Ռուսաստանի կրթական համակարգում։ Պահանջվեցին երկար տարիներ հաղթահարելու առկա հիմնախնդիրներն, որոնց հիմնարար լուծումներին խորհրդային իշխանության առաջին տարիներին հնարավոր չէր հասնել։ Նման դժվարին պայմաններում հայկական դպրոցների գործունեության ապահովումը ժողովուսավորության հայկական սեկցիաներից մեծ ջանքեր էր պահանջում։

Դրնում առավել սուր հիմնախնդիր էր դիտվում հայկական գյուղերի դպրոցների ենթակայության հարցը մարզայինից շրջանային ժողովուսբաժիններին փոխանցելու հարցը. «Մի ուրիշ կարևոր հարց զբաղեցնում է ներկայումս մեր գիւղական ուսուցչութեան, այդ այն է, որ գիւղական դպրոցները դուրս գալով Դոնոբնարոբրազի իրաւասութիւնից, միացել են շրջանային նարոբրազի հետ, որի կեդրոնը Ազովն է։ Այս երևոյթն ունի իր շատ անյարմարութիւններն որովհետև, նախ՝ այդ կենտրոնից նրանք շատ հեռու են գտնուում, ուրեմն յարաբերութիւն պայպանելը մեծ դժւարութիւնների հետ է կապւած, ուստի և շատ անյետաձգելի հարցեր մնում են չլուծւած ու անորոշ, և երկրորդ՝ Հայկական Բիւրոյի համար վերացել է հսկողութեան յարմարութիւնները և խզւել է այն բարոյական կապը, որպիսին գո-

²⁶⁵ Բանվոր, Նոր Նախիջևան, 1921, № 52, էջ 1:

րից՝ ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով դասավանդմամբ»²⁶²։ Դեկրետն ամրագրում էր Կոմիսարիատի դերն ինստիտուտի կառավարման գործում, որի ենթակայությանն էին անցնում նախկին Լազարյան ինստիտուտի կապիտալն ու գույքը։ Հետագայում Հայկական ինստիտուտը վերածվել է Առաջավոր Ասիայի ինստիտուտի, ապա՝ Արևելյան կենդանի լեզուների ինստիտուտի։

Լազարյան ճեմարանի առընչությամբ նոր որոշում կայացվեց 1921 թ. հոկտեմբերի 1-ին, երբ արդեն Հայաստանը խորհրդային էր։ ՌԽՖՍՀ Կենտգործկոմի որոշումով Մոսկվայում հիմնվեց խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն. «...Նախկին Լազարյան ինստիտուտը, որը կառուցվել էր հայ բուրժուազիայի միջոցներով, վերանվանել «խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն» և բոլոր նյութական արժեքներով հանձնել Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարության տրամադրությանը»²⁶³։ խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան պահպանման և ղեկավարման պատասխանատվությունը հանձնվեց Մոսկվայում Հայկական ԽՍՀ ներկայացուցչին։ Այդ պաշտոնը մինչև 1922 թ. զբաղեցնում էր Ս. Տեր-Գաբրիելյանը, ով նշանակալի դերակատարություն ունեցավ կազմակերպչական առումով։ Այսպիսով, ԽՂՄՍ-ը կրկին վիճակվեց ստանձնել հայկական մշակութային հիմնարկի դերակատարությունը՝ դառնալ խորհրդային մշակույթի կենտրոնը Մոսկվայում (1921-1953 թթ.)։ Ինչ վերաբերում էր այստեղ գործող հայկական տարրական դպրոցին, ապա այն գոյատևեց ընդամենը մի քանի տարի. «1924 թվականին Մշակույթի Տանը կից ստեղծվեց առաջին հայկական դպրոցը Մոսկվայում բնակվող հայ երեխաներին մայրենի լեզվով ուսուցանելու համար»²⁶⁴։

Խորհրդային դպրոցի առաջին տարիներին, ամբողջ կրթա-

²⁶² Декреты Советской Власти, том 4, М., 1968, с. 466.

²⁶³ Каграманов Н., նշվ. աշխ., էջ 10։

²⁶⁴ Նույն տեղում, էջ 28։

կան համակարգը հայտնվել էր բավականին ծանր իրադրության մեջ՝ մի կողմից անհրաժեշտ էր լուծել նյութական խնդիրներ, մյուս կողմից՝ ավարտին հասցնել նախանշված վերափոխումները։ Խնդիրներն ընդհանուր էին և հատուկ նաև ազգային դպրոցների համար, այդ թվում՝ հայ դպրոցին։

1920-ական թթ. սկզբին կասկածի տակ էր դպրոցական ուղորտում տարվող քաղաքականության հետագա ընթացքն, ինչի մասին անթաքույց բարձրաձայնվում էր ժամանակակից մամուլի էջերում, այդ թվում՝ տեղերի հայկական թերթերում²⁶⁵։

1920-ականներին դժվարին սոցիալ-տնտեսական և գաղափարական-քաղաքական իրավիճակ էր տիրում Ռուսաստանի կրթական համակարգում։ Պահանջվեցին երկար տարիներ հաղթահարելու առկա հիմնախնդիրներն, որոնց հիմնարար լուծումներին խորհրդային իշխանության առաջին տարիներին հնարավոր չէր հասնել։ Նման դժվարին պայմաններում հայկական դպրոցների գործունեության ապահովումը ժողլուսավորության հայկական սեկցիաներից մեծ ջանքեր էր պահանջում։

Դրոնում առավել սուր հիմնախնդիր էր դիտվում հայկական գյուղերի դպրոցների ենթակայության հարցը մարզայինից շրջանային ժողլուսբաժիններին փոխանցելու հարցը. «Մի ուրիշ կարևոր հարց զբաղեցնում է ներկայումս մեր գիւղական ուսուցչութեան, այդ այն է, որ գիւղական դպրոցները դուրս գալով Դոնոբնարոբրազի իրաւասութիւնից, միացել են շրջանային նարոբրազի հետ, որի կեդրոնը Ազովն է։ Այս երևոյթն ունի իր շատ անյարմարութիւններն որովհետև, նախ՝ այդ կենտրոնից նրանք շատ հեռու են գտնուում, ուրեմն յարաբերութիւն պայպանելը մեծ դժւարութիւնների հետ է կապած, ուստի և շատ անյետաձգելի հարցեր մնում են չլուծւած ու անորոշ, և երկրորդ՝ Հայկական Բիւրոյի համար վերացել է հսկողութեան յարմարութիւնները և խզել է այն բարոյական կապը, որպիսին գո-

²⁶⁵ Բանվոր, Նոր Նախիջևան, 1921, № 52, էջ 1։

յութին ունէր առաջին օրերին»²⁶⁶։ Այսպիսի անհարմարությունների կարգավորումն օրապահանջ խնդրի էր վերածվել։

Անգրագիտության վերացմանն ուղղված քայլերը բերում էին դպրոցական ցանցի անընդհատ ընդլայնման. «Դոնի շրջանային ժողովրդական Կրթութեան Բաժնի Հայկ. Սեկցիան վերջին ամսւայ (մարտ) ընթացքում անգրագետների համար բաց է արել 6 դպրոց զանազան գործարանների բանւորութեան համար։ Եռանսեայ դասընթացքը վերջացնելուց յետոյ՝ ընթերցաւարտների համար բացւելու են 1-ին աստիճանի դպրոցներ։...Դեռ բացւելու են մի քանի դպրոցներ ևս...»²⁶⁷։ Այս ուղղությամբ իրականացվող ծրագրերն ավարտվեցին միայն 1930-ական թթ., երբ համատարած անգրագիտության վերացման խնդիրը լուծվեց։

Չնայած մեծ ջանքերին ու ցանկությանը՝ 1920-ական թթ. չհաջողվեց ամբողջովին լուծել կրթական համակարգի առաջ ծառայած հիմնական խնդիրները՝ անհրաժեշտ քանակի դպրոց-հաստատությունների ապահովումը, դպրոցական տարիքի բոլոր երեխաների ներգրավում ուսուցման գործընթացի մեջ, ծրագրերի մշակումը, ուսումնական ձեռնարկների անհրաժեշտ քանակի ապահովումը ևս։ Վերը թվարկած բոլոր խնդիրներն էլ հատուկ էին տեղերում գործող հայկական դպրոցներին և դարձել էին հայության մտահոգության առարկան։ Այսպես, ստվար հայ բնակչություն ունեցող Կրասնոդարի (Եկատերինոդար) հայ հասարակությունն ի նպաստ դպրոցի մի շարք միջոցառումներ է իրականացրել՝ ներգրավելու և բարձրացնելու տեղի հայության մասնակցությունը համայնքի համար անհետաձգելի կարևորություն ունեցող կրթօջախի կայացմանը։ Այդ նպատակով կարևորվում է 1922 թ. հոկտեմբերի առաջին կեսին անցկացրած «դպրոցական յոթնօրյակ» միջոցառումը, և արդյունքում, հոկտեմբերի 15-ին հրատարակած միօրյա թերթը՝ նվիրված դպրո-

ցին ու նրա հիմնախնդիրներին²⁶⁸։ Միօրյա թերթը, որը կոչվում էր «Հայ դպրոցի օրը» իր էջերում լայնորեն ներկայացնում էր տեղի դպրոցական կյանքի անթույլատրելի, անմխիթար վիճակը, կոչ էր անում փրկել դպրոցը։

Նովոռոսիյսկում, ուր մեծաթիվ հայեր էին ապրում և գաղթականություն կար, 1924 թ. դրությամբ հայկական դպրոցներ էին գործում. «Նովոռոսիյսկում կան երկու I կարգի դպրոց. ռայոնում մեծամասնությունը անգրագետ են»²⁶⁹։

Դեռևս 1920 թ. ապրիլի 22-ին Կուբան-Չերնոմորյան ՌԿ որոշումով երկրամասում բնակվող ազգային փոքրամասնություններն իրավասու էին կրթական-ուսումնական գործը կազմակերպել մայրենի լեզվով, իսկ ժողովրդական զանգվածների մշակութային մերձեցման առումով պարտադիր էր ռուսերեն լեզվի դասավանդումը։ 1921 թ. դրությամբ ներկայիս Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների թիվը հասնում էր 51-ի²⁷⁰, որից 22-ը՝ Սոչիի շրջանում։

Կուբան-Չերնոմորիեում, որի կազմում 1926 թ. առանձնացվեց Հայկական շրջանը, ծանր իրավիճակ էր տիրում կրթական գործի կազմակերպման առումով։ Բոլոր բնակավայրերում հիմնվեցին ակումբներ և անգրագիտության վերացման կայաններ։ Շրջանում իրադրությունը փոքրիշատե շտկվեց միայն 1920-ական թթ երկրորդ կեսին. «1927-1928 ուստարում Հայկական շրջանում գործում էին 23 հայկական դպրոցներ՝ 26 ուսուցիչներով»²⁷¹։ Ուսումնական գործընթացում ներգրավված էին 1.120 աշակերտ։ Այնուհանդերձ, դպրոցական գործի կազմակերպման առումով ակնառու թերություններ ու դժվարություններ կային՝ հատկապես մանկավարժական կազմի և ուսումնական ձեռնարկ-

²⁶⁶ Նույն տեղում, էջ 2։

²⁶⁷ Նույն տեղում, № 5, էջ 2։

²⁶⁸ Հայ դպրոցի օրը, Կրասնոդար, 1922, № 1, էջ 2։

²⁶⁹ Լրաբեր Հայաստանի Ոգնության Կոմիտեյի Մոսկվայի Եյուլի, Մոսկվա, 1924, № 1, էջ 12։

²⁷⁰ Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1979, № 3(55), էջ 121։

²⁷¹ Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1970, № 3(27), էջ 173։

ների անբավարարություն, որը բնորոշ էր նաև մյուս հայկական դպրոցներին:

1926 թ. Դոնում առանձնացվեց Հայկական շրջանը (Մյասնիկյանի շրջան), որի 8 հայկական գյուղական վայրերում էլ գործում էին դպրոցներ, որտեղ կրթությունը տարվում էր հայերենով²⁷²:

1927 թ. դրությամբ Աբխազիայում գործում էին 72 հայկական դպրոցներ, ուր սովորում էին 3.926 աշակերտներ²⁷³: Այստեղ թե՛ դպրոցական ցանցի ընդլայնումը, թե՛ սովորողների թիվը կտրուկ աճեց հատկապես հաջորդ տասնամյակում՝ 1930-ական թթ.:

Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի երկրամասում 1920-ականների սկզբին տեղի նախկին հայկական դպրոցների հիմքի վրա գործում էին հայկական կրթական հաստատություններ: Այսպես, 1924 թ. դրությամբ Ստավրոպոլում գործում էր մեկ հայկական դպրոց. «Կա երկսեռ դպրոց 78 աշակերտ-աշակերտուհիներով, գրադարան, ուր կան 605 հայերեն և 145 գրքեր այլ լեզուներով: Թե՛ դպրոցը և թե՛ գրադարանը պահվում են տեղական միջոցներով»²⁷⁴: Երկրամասի հայկական գյուղերից ամենամեծում՝ Եղեսիայում, նույնպես գործում էր հայկական դպրոց:

1920-ական թթ կեսերին, ԽՍՀՄ-ում ՆԷՊ-ի քաղաքականության կիրառման շնորհիվ որոշակի տնտեսական կայունացում արձանագրվեց, որն անմիջապես իր դրական ազդեցությունը թողեց նաև մշակութային-կրթական ասպարեզի վրա՝ մեծացավ այս ոլորտներին տրվող հատկացումների չափը: Այս ամենն իր դրական ներգործությունն ունեցավ նաև ազգային շրջանների,

²⁷² Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России: 25-27 ноября 2003 г., М., 2006, с. 268.

²⁷³ Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1983, № 2(66), էջ 164:

²⁷⁴ Լրաբեր Հայաստանի Օգնության Կոմիտեյի Մոսկվայի Ելուղի, նշվ. աշխ., էջ 12:

մասնավորապես, ռուսահայ համայնքների կրթական-լուսավորական ցանցի բարեկարգման և ընդլայնման վրա. «Վերջին տարիներում ժողովրդական տնտեսական բարելավումից հետո, մեծապես բազմացել է նաև կուլտ-կրթական հիմնարկների ցանցը օրինակ՝ Հյուս. Կովկասում հայերն ունեցել են 100 I-ին աստիճանի և 5 II-րդ աստիճանի դպրոց, 300 ուսուցչով, իսկ այս 25/26 ուսումն. տարում միմիայն Սոչիի շրջանում հայկ. I-ին աստիճ. դպրոցների թիվը մոտ 100-ի յե հասնում, 135 ուսուցիչ-ուհիներով»²⁷⁵: Հյուսիսային Կովկասում հայկական կրթական ցանցի ընդլայնումն ակնհայտ էր, թեև՝ ոչ բավարար, քանի որ ընդգծվում էր անգրագիտության բարձր տոկոսը հատկապես տարածաշրջանի գյուղական հայության շրջանում:

Սևծովյան ավազանի մյուս հայաբնակ երկրամասում՝ Ղրիմում նույնպես, 1920-ականների սկիզբը մշակութային-կրթական առանց այն էր անգույն կյանքի անկումային փուլ հանդիսացավ: Այստեղ իրավիճակը շտկվեց 1920-ական թթ. երկրորդ կեսին միայն:

Ղրիմահայերի մշակութային-կրթական ասպարեզի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող իրադարձություն էր 1926 թ. հունվարին տեղի ունեցած I Համաղրիմյան Հայկական անկուսակցական համագումարը, որի արդյունքում ընդունվեցին բանաձևեր: Առանձնանում էր Ս. Համալյանի «Կուլտուր-կրթական աշխատանքը Ղրիմի հայ ազգաբնակչության մեջ» զեկույցի հիման վրա ընդունված բանաձևը, ուր նշվում էր. «Լսելով Ղրիմի Ազգային Փոքրամասնությունների խորհրդի զեկույցումը, Համաղրիմյան հայկական անկուսակցական համագումարը շեշտում է Ղրիմի հայ աշխատավորության կուլտուրական շինարարության գործի մեջ տեղի ունեցած հառաջադիմությունը առանձնապես այս վերջին յերկու տարվա ընթացքում»²⁷⁶:

²⁷⁵ Խորհրդային Հայաստան, Ե., 1925, № 264 (1318), էջ 1:

²⁷⁶ Резолюции Первой Всекрымской Армянской Беспартийной Конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, 1926, с. 31.

Համագումարը հավանություն տվեց Ղրիմի Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի կողմից, մոտակա ուստարվա համար կազմած, ղրիմահայերի մշակութային-լուսավորական զարգացման և ամրապնդման միջոցառումներին, ուր առաջարկվում էր. «Հայկական առաջին աստիճանի դպրոցների ցանցի մեծացումը յեկող ուսումնական տարվանից Սևաստոպոլում և ճանկոյում, հայկական դպրոցներ բանալու միջոցով, այլ և քիչ թե շատ խիտ հայ ազգաբնակչություն ունեցող գյուղական վայրերում: Բոլոր հայկական դպրոցների ներմուծումը հաստատուն ցանցի մեջ համապատասխան Ռայոնական բյուջեների հաշվին»²⁷⁷:

Բանաձևի 5-րդ կետով անհրաժեշտ էր դիտվում. «Մի քանի հայկական դպրոցների (Կերչ, Սիմֆերոպոլ) աստիճանական աճումն ու անցումը դեպի յոթնամյա դպրոցները, նրանց կից հանրակացարաններով, Ղրիմի համայն հայ ազգաբնակչության կարիքների բավարարության համար, չվերածելով սակայն վերջիններս հասարակական միջոցներով պահվող դպրոցների, թողնելով հանրակացարանները պահելու գործը ազգաբնակչությանը»²⁷⁸:

Ինչ վերաբերում էր անգրագիտության վերացմանն ուղղված միջոցառումներին՝ նախատեսվում էր, հատկապես գյուղական վայրերում, բացել մի շարք լիկկայաններ և նրանց հատկացնել ձեռնարկներ մայրենի լեզվով:

Համագումարը լուրջ տեղաշարժեր բերեց, քանի որ այստեղ շարք մտան նոր դպրոցներ. «...Ղրիմում, 1926 թ. գործեցին 14 նոր հայկական դպրոցներ՝ 500 սովորողներով՝ գյուղերում և ավաններում՝ Ամնա, Հայկաշեն, Ազատ, Կիչկենե, Սարպուզ, Կալմուկարա, Փուրլուջա, Ազամատ, Գրինիչկա, Բարին, Ջանայ, Շահումյանովկա, Մոնաստիրկա, Անտոնովկա»²⁷⁹: Գյուղական

²⁷⁷ Նույն տեղում, էջ 32:

²⁷⁸ Նույն տեղում:

²⁷⁹ Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1983, № 2/66), էջ 163:

վայրերում հայկական դպրոցական ցանցի ստեղծմանը նպաստեց նաև գյուղխորհուրդների մանրացման քաղաքականությունը և ազգային հիմքի վրա դրանց ձևավորումը՝ հնարավոր դարձնելով առավելագույնս ընդլայնված դպրոցական ցանց ունենալու:

Խորհրդային իշխանությունների ձեռնարկած դպրոցական համակարգի բարեփոխումների արդյունքում 1920-ական թթ. դպրոցը կրեց նյութատեխնիկական, ուսումնադաստիարակչական և բարոյահոգեբանական դժվարություններ, լրջորեն ընկավ կրթության որակը:

1930-ական թթ. կրթական համակարգի ֆինանսավորման աճի արդյունքում ամբողջ ԽՍՀՄ տարածքում կառուցվեցին մոտ 30 հզ դպրոց, կրկնակի անգամ ընդլայնվեց մանկավարժական ուսումնական հաստատությունների ցանցը, լայն թափով շարունակվեց պայքարն անգրագիտության վերացման ուղղությամբ. «Առաջին հնգամյա ծրագիրը նախատեսում էր իրականացնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համընդհանուր տարրական ուսուցումը 1932 թվականին»²⁸⁰: Աղքատիկ ֆինանսավորման, թույլ նյութատեխնիկական բազայի, անհրաժեշտ քանակի դասագրքերի և ուսուցիչների պակասի արդյունքում համընդհանուր տարրական կրթության (всеобщий) ծրագիրը տապալվեց. «Համընդհանուր պարտադիր տարրական կրթությունն ամբողջ երկրում, ընդհանուր առմամբ, իրականացվեց երկրորդ հնգամյակի ավարտին (1937թ.)»²⁸¹: Համընդհանուր կրթության ծրագրի ներդրումն ուղեկցվեց տարրական և միջնակարգ դպրոցական համակարգի բարեփոխումներով, ավելին՝ տեղի ունեցավ շրջադարձ դեպի նախահեղափոխական դպրոցի ավանդույթները, դեպի ֆունդամենտալ կրթությունը: Ազգային կրթությունն ազգային հանրապետություններից դուրս մեծ դժվարություններ էր կրում և աստիճանաբար վերացվեց:

²⁸⁰ Նույն տեղում, էջ 515:

²⁸¹ Նույն տեղում:

1937/1938 ուստարին կարևոր սահմանագիծ է, քանի որ ամբողջ երկրում ավարտվեց անցումը համընդհանուր տարրական կրթության, ուստիև հայկական ուսումնակրթական ցանցի առկա պատկերը նույնպես անհրաժեշտ է քննել այս սահմանափուլով:

1930-ական թթ վերջին հայկական դպրոցները դեռևս շարունակեցին իրենց գործունեությունը ՌԽՖՍՀ տարածքում, մասնավորաբար, Դոնում և Հյուսիսային Կովկասում: Այստեղ հայկական դպրոցական ցանցն ավելի ընդլայնվեց՝ իր ներքո համախմբելով հայ աշակերտությանը:

1930-ական թթ. ՌԽՖՍՀ տարածքում գործող հայկական կրթական հաստատությունները ժառանգեցին դեռևս 20-ական թթ. առկա խնդիրները: Այս շրջանին հատուկ էին դպրոցական ցանցի զարգացման և վերազինման, կրթական ծրագրերի նորացման և համապատասխանեցման, որակյալ կադրերով համալրման, դաստիարակչական և առաջադիմության խնդիրները:

Արդեն 1930-ական թթ. այս տարածաշրջանում հիմնականում լուծված էին ուսումնական հաստատությունների շենքային խնդիրներն, որոնք կային 20-ական թթ., դրված էր դրանց վերանորոգման և նորերի կառուցման առաջնահերթությունը:

1937/1938 ուստարվա սկզբին Ազով-Սևծովյան երկրամասում, ուր ավանդաբար հայկական կրթական հաստատությունների լայն ցանց էր առկա, գործում էին տարբեր աստիճանի և կարգի դպրոցներ. «Երկրամասում հայկական տարրական դպրոցների թիվը հասնում է 100, թերի միջնակարգ դպրոցների թիվը-37, լրիվ միջնակարգ դպրոցների թիվը-8, աշակերտության ընդհանուր քանակը մտ. 13 հազարի, ուսուցիչների թիվը մոտ 600: Այնուամենայնիվ, հայկական դպրոցները վորակյալ կադրերի մեծ կարիք են զգում»²⁸²:

Ազով-Սևծովյան երկրամասի հայկական կրթական հաստատությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ուներ

1920-ական թթ. հիմնված Ա. Մյասնիկյանի անվան Ազով-Սևծովյան երկրային Հայկական Մանկավարժական Ուսումնարանը (տնօրեն Ա. Իսրայելյան), որը մասնագետներ էր պատրաստում ՌԽՖՍՀ հայկական դպրոցների համար. «Յերկրային Հայկական մանկավարժական ուսումնարանը միակն է մեր յերկրամասում, վորը պատրաստում է կադրեր յերկրամասի հայկական դպրոցների համար»²⁸³: Լազարյան ճեմարանի և մյուս հայկական գիմնազիաների, ուսումնարանների դերն, ինչ-որ չափով, ստանձնած այս հաստատությունը գտնվում էր Դոնի Ռոստովում, ընդունելություն էր կատարում դպրոցական և նախադպրոցական բաժիններում, ուներ նաև հեռակա բաժին (ղեկ. Հովհաննիսյան): Ուսումնարան կարող էին ընդունվել ԽՍՀՄ 15-35 տարեկան այն քաղաքացիներն, ովքեր ունեին թերի միջնակարգ կրթություն. «Բոլոր ընդունվողները յենթարկվում են պարտադիր ստուգման թերի միջնակարգ դպրոցի ծրագրով՝ հետեվյալ առարկաներից - հայոց լեզու (բանավոր եվ գրավոր), ռուսաց լեզու (բանավոր յեվ գրավոր), թվաբանություն (բանավոր յեվ գրավոր), հանրահաշիվ (գրավոր), յերկրաչափություն (բանավոր), աշխարհագրություն (բանավոր)»²⁸⁴: Ազով-Սևծովյան երկրամասի Հայկական Մանկավարժական Ուսումնարանում, այնուհանդերձ, լուծված չէին ուսումնադաստիարակչական և կուլտուր-կենցաղային բնույթի հիմնախնդիրներ:

Հայկական դպրոցներում ուսումնական տարվա ավարտին անցկացվող ստուգում-քննությունները վեր էին հանում բազմաբնույթ թերություններ, որոնց մասին լայնորեն բարձրաձայնվում էր «Բոլշևիկ»-ի էջերում: Այսպես, 1937/1938 ուստարվա նախաշենին ստուգումներն երկրամասի հայկական դպրոցներում ցույց էին տվել, որ. «Ընթացիկ ուսումնական տարում յերկրամասի հայկական թերի միջնակարգ դպրոցների հայոց լեզվի և գրականության դասատուների 75 տոկոսը, իսկ պատմության

²⁸² Բոլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 62, էջ 3:

²⁸³ Սույն տեղում, № 77, էջ 3:

²⁸⁴ Սույն տեղում, № 78, էջ 4:

դասատուների մոտ 60-61 տոկոսը չունեյին համապատասխան կրթություն»²⁸⁵:

«Բուլշևիկ»-ի 1937 թ մայիսի 31-ի համարը տպագրել էր Մոսկվայի մի թղթակցություն, որի հեղինակն էր Լուսժողկոմատի հրահանգիչ Ալ. Դոստյանը: Հոդվածը, որը վերնագրված էր «Ինչպես կատարել ստուգումները հայկական դպրոցներում», մանրամասնում էր դրանց կիրառման կարգն ու չափորոշիչները միաժամանակ հստակորեն ներկայացնելով այդ դպրոցների իրական վիճակը: Ալ. Դոստյանն, առանձնացրել էր այն խնդիրները, որոնց առաջ հայտնվել էր հայ դպրոցը: Դրանք էին՝ ուսումնական ծրագրերը, դասաժամերի ցանցը, մանկավարժական կադրերի կազմը և այլն. «Առանձնակի բարդությունների առաջ են կանգնած վոչ միայն Ռոստովի, Արմավիրի, Գրոզնու և այլ քաղաքների միջնակարգ հայկական դպրոցները, այլև նույնիսկ մեր գյուղական մասսայական (օրինակ՝ Յեդեսիայի) դպրոցները»²⁸⁶: Հայկական դպրոցներում մայրենի լեզվի և գրականության դասավանդման որակը մի կողմից, մյուս կողմից՝ տարբեր բարբառների առկայությունը խանգարիչ հանգամանք էին հանդիսանում դպրոցի իրական կայացման համար. «Այստեղ աշակերտության խոշոր տոկոսն են կազմում տեղի կամ դրսից յեկած այն յերեխաները, վորոնք չեն տիրապետում վոչ միայն գրական, այլ և առհասարակ հայերեն լեզվին: Յերեխաները խոսում են թուրքերեն, չերքեզերեն, զանազան տեղական բարբառներով, և, պարզ է, վոր գրական լեզուն սովորելու և այդ լեզվով դպրոցական ծրագիրն անցնելու համար այդպիսի յերեխաները դժվարացնում են դպրոցի աշխատանքները»:

Ռոստովի մարզի ազգային փոքրամասնությունների դպրոցների խնդիրները լայնորեն շոշափվեցին 1938 թ. հունվարի 5-9-ը Ռոստովում անցկացված ուսուցչական խորհրդակցության ժամանակ, որին ներկա են գտնվել տարբեր շրջանների 50

ուսուցիչներ՝ հայկական, գերմանական, լեհական, քաթարական և ասորական դպրոցներից. «Ռրակարգում դրված էր յերկու հիմնական հարց՝ պայքար աշակերտների հետամնացության և յերկրորդ տարին մնալու դեմ և ուսուցիչների քաղաքական լուսավորությունը»²⁸⁷: Քննարկված առանցքային հարցերից պարզ է, որ այդ անհանգստացնող երևույթները մեծ չափերի էին հասել, դրանց լուծումը հրատապ խնդիր էր դարձել: Խորհրդակցության ժամանակ բարձրացվել են ուսումնական ծրագրերին, դասագրքերին, լեզվին և գրականությանը, մեթոդիկային վերաբերող խնդիրներ: Հայկական դպրոցներում տիրող իրավիճակը կարելի է միանշանակ բնորոշել որպես քայքայման եզրին հասած, քանի որ ոչ բարեհաջող դպրոցների շարքում նշվել էր անգամ Ռոստովի Ս. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ նյութատեխնիկական բազան բավական լայն էր և սուր չէր կադրային խնդիրը: Թվարկելով դպրոցների հիմնական դժվարություններն՝ առանձնացվել են նաև հետևյալները. «...դպրոցները կատարելապես զուրկ են դասագրքերից: Հայկական դպրոցներում, օրինակ, դասագրքերի բացակայության պատճառով դասացուցակից դուրս է հանված հայկական գրականությունը. դասերին ստիպված պարապում են բանավոր կերպով կամ ոգտվում թերթերից, ժուռնալներից»: Հայերեն դասագրքերի խնդիրը 1920-1930 թթ. հանդիսանում էր համայնքներում մեր դպրոցի առանցքային և ամենացավոտ կողմը, որն այս փուլում այդպես էլ չի հաջողվել լուծել:

Հայկական դպրոցին հատուկ ևս մի լուծում չստացած խնդիր էր հանդիսանում դպրոցական ծրագրերի բացակայությունը, ինչպես նաև անհամապատասխանությունը տեղի պայմաններին. «Դպրոցները պարապել են առանց ծրագրի, առանց ղեկավարության, և այսոր պետք է արձանագրել, վոր մի շարք դպրոցներ (Մյասնիկյան ռայոն) մեկ ու կես և նույնիսկ յերկու տարով հետ են մնացել: Հայկական դպրոցների

²⁸⁵ Լույն տեղում, № 62, էջ 3:

²⁸⁶ Լույն տեղում, № 48, էջ 3:

²⁸⁷ «Բուլշևիկ», 1938, № 4, էջ 4:

վերաբերյալ պետք է ասել, վոր նրանք մնացել են անթույլատրելի կացության մեջ-դպրոցները յենթարկվում են ՌԽՖՍՐ Լուսժողկոմատին, բայց պարապում են Հայաստանի դպրոցների ծրագրով և դասագրքերով (լեզվից և գրականությունից), վորոնք ռուսական դպրոցների ծրագրից շատ են տարբերվում»²⁸⁸:

Խորհրդակցությունը ժողուսբաժինների ոչ արդյունավետ աշխատանքը պայմանավորում էր նաև այն հանգամանքով, որ Լուսժողկոմատ և շրջանային լուսբաժիններ էին ներթափանցել ժողովրդի «թշնամիները» և վնասարարություն կատարել տարիներ շարունակ. «Պետք է զորահավաքել լուսավորության ֆրոնտի բոլոր պիտանի և գործոն ուժերը և միահամուռ կերպով ոգնել դպրոցին՝ դուրս բերելու համար նրան ծանր վիճակից: ամենից առաջ մարզային և ռայոնական լուսբաժիններում պետք է անհապաղ նշանակել ընդունակ ղեկավարներ և հրահանգիչներ, վորոնք ի վիճակի լինեն կարճ ժամանակում կարգի բերել նացմենական դպրոցները»,- ըստ մասնակիցների սա էր իրավիճակը շտկելու ճանապարհը: Խորհրդակցության մասնակիցների համոզումն էր, որ. «Լուսժողկոմատը պետք է կտրուկ միջոցներ ձեռք առնի նացմենական դպրոցներն ապահովելու անհրաժեշտ դասագրքերով, թե ռուսերեն և թե մայրենի լեզուներով»²⁸⁹: Դպրոցական կայուն ծրագիր ունենալու համար անհրաժեշտ էր շտկել գործող ծրագրերը, մասնավորապես, ռուսերեն լեզվի և գրականության, ավելացնել դրանց ժամաքանակը: Նույն ծրագրային խնդիրներն ունեին նաև հայկական դպրոցներն, որի լուծման համար անհրաժեշտ էր դիտվում հետևյալը. «...Լուսժողկոմատը Ռոստովի մարզի լուսբաժնի միջոցով պետք է Հայաստանի դպրոցների ծրագիրը վերամշակի և հարմարեցնի ռուսական ծրագրերին: Լուսբաժինը պետք է հայոց լեզվի մասնագետներից կազմված հատուկ հանձնաժողովի՝ ծրագրի վերամշակման գործում ձեռնարկած աշխատանք-

ներին (սեպտեմբեր, 1937) համապատասխան ընթացք տա հայկական դպրոցների ուսման վորակը պահանջված չափին հասցնելու համար»²⁹⁰:

Առկա խնդիրներին զուգահեռ, երրորդ հնգամյա ծրագրի (1938-1942 թթ., որն անավարտ մնաց) շրջանակներում քննարկումներ էին ընթանում ընդլայնելու հայկական դպրոցական ցանցը. «Մյասնիկյան ռայոնում... ժողովրդական լուսավորության յերրորդ հնգամյա պլանում նախատեսվում է 1938 թվին կառուցել լրիվ միջնակարգ դպրոցներ՝ 2ալթրում - 800 աշակերտների համար, Թոփտում և Մեծ Սալայում՝ 400-ական աշակերտների համար, 1940 թվին ևս մի լրիվ միջնակարգ դպրոց Նեղվիղովկայում 400 աշակերտների համար: Թերի միջնակարգ դպրոցներ նախատեսվում է կառուցել Լենինավանի գյուղխորհրդի «Հեղափոխության ալիք» կոլխոզում՝ 1938 թվին և Վեսելեվսկի գյուղխորհրդի Վեսելի խուտորում՝ 1942 թվին»²⁹¹: Երրորդ հնգամյակի ընթացքում Մյասնիկյանի շրջանում նախատեսվում էր բացել նաև 12 նոր մանկապարտեզներ, կառուցել ակումբներ Մեծ Սալայում՝ 400 տեղով, Նեղվիղովկայում և Լենինավանում 300-ական տեղով, Նեսվիթայում 200 տեղով:

Մյասնիկյանի շրջկոմի և շրջխորհրդի օրգան «Կոմունար»-ն իր 1941 թ. հունիսի 19-ի համարում լայն տեղ է հատկացրել Ղրիմ գյուղի N 5 միջնակարգ դպրոցի 1940/1941 ուստարվա աշխատանքային արդյունքների ամփոփմանը, ուր հողվածով հանդես էր եկել նույն դպրոցի տնօրեն Մ. Խաչիկյանը: Ընդգծվել է արտադասարանական աշխատանքների լայն ծավալը, ընթացիկ տարում հարստացված գրադարանը, նոր կազմակերպված ռազմական, ֆիզիկական և բնագիտական կաթինետների գործունեությունը: Այս հաջողություններին զուգահեռ, դպրոցի հիմնական խնդիրը հանդիսանում էր առաջադիմության ապահովումը. «Ղրիմի միջնակարգ N 5 դպրոցն 1940/1941 ուսումնական

²⁸⁸ Նույն տեղում:

²⁸⁹ Նույն տեղում:

²⁹⁰ Նույն տեղում:

²⁹¹ Նույն տեղում, 1937, № 80, էջ 4:

տարում ուներ բավականին աչքի ընկնող թերություններ, վորի ամենագլխավորն է հառաջադիմության ցածր լինելը: Դասարան մնացողները կազմում են 11 տոկոս»²⁹²: Ինչպես երևում է հայ դպրոցի այս ցավոտ կողմը դեռ երկար ժամանակ չէր հաջողվում հաղթահարել:

1930-ական թթ. լուրջ աշխատանք ծավալվեց անգրագիտության վերացման ուղղությամբ, խնդիրը հիմնականում իր լուծումը ստացավ: Այսպես, Մյասնիկյանի շրջանում 1937 թ. վերջին կային մոտ 1700 կիսագրագետ և անգրագետ, որոնց հետ տարվելիք աշխատանքների համար մարզային լուսբաժինը հատկացրել էր 50 հզ ռուբլի. «Ռայոնի աշխատավորության մեծ տոկոսը մինչև հեղափոխությունն անգրագետ էր, սակայն այժմ գրագետները կազմում են 90 տոկոս»²⁹³: Այս ուղղությամբ տարվող աշխատանքներում ևս թերացումներ կային, սակայն մասսայական անգրագիտության հաղթահարումն հայ աշխատավորության շրջանում հաջողվեց իրագործել:

Այսպիսով, 1917 թ. հեղափոխությունից հետո նախկին ռուսական կայսրության տարբեր անկյուններում հայ դպրոցի հետագա զարգացումն ու ճակատագիրը դրսևորվեց տարբեր կերպ: Դոնում և Յուսիսային Կովկասում համայնքային կյանքի ակտիվացման արդյունքում հայկական կրթական կյանքը դրական տեղաշարժեր արձանագրեց, պահպանեց դպրոցի դիմագիծն անգամ դժվարին նյութական կացության պայմաններում: Այստեղ իրադրությունը կտրուկ փոխվեց տարածաշրջանի խորհրդայնացումից անմիջապես հետո, իսկ 1920-ական թթ. դարձան տեղի հայկական դպրոցների համար վերակառուցման, գոյապահպանման ժամանակաշրջան: Տեղի հայկական դպրոցական ցանցը խիստ կրճատվել էր, լուծված չէին շենքային պայմաններն, առկա էին ուսումնական գործընթացի կազմա-

²⁹² «Կոմունար», 1941, № 55, էջ 4:

²⁹³ «Բոլշևիկ», 1938, № 6, էջ 4:

վերական խնդիրներ, ուսումնական, ձեռնարկների և կադրերի պակաս:

ԽՍՀՄ-ում դպրոցին, այդ թվում՝ ազգային դպրոցներին հատկացվող միջոցները կտրուկ աճեցին միայն 1930-ական թթ., որը ցրեց լայնորեն շրջանառվող խորհրդային դպրոցի անկման, կազմալուծման տրամադրությունները:

ՌԽՖՍՀ հայության կոմպակտ բնակության շրջաններում, մասնավորապես, Դոնում, Կուբանում, Յուսիսային Կովկասում, ուր հայ կյանքի և մշակութային-կրթական խորը արմատներ կային, հաջողվեց հայ դպրոցը վերականգնել խորհրդային դպրոցի համակարգում: Այնուհանդերձ, հայ դպրոցը բազմաթիվ խնդիրներ ուներ՝ որակյալ մանկավարժական կադրերի պակաս, ուսումնական ձեռնարկների անբավարարություն կամ լիակատար բացակայություն, ծրագրային դժվարություններ և սրանցից բխող ուսման որակի ցածր մակարդակ: Հայկական դպրոցներում կադրային պակասը չէր հաջողվում լուծել անգամ Ռոստովում հիմնադրված Հայկական Մանկավարժական Ուսումնարանի առկայության պայմաններում, թեև խնդիրը զգալիորեն մեղմվեց:

1930-ական թթ. մեծ աշխատանք տարվեց անգրագիտության վերացման ուղղությամբ, մշակութային-կրթական ձեռքբերումները հող ձևավորեցին հետագա առաջընթացի համար:

Չետպատերազմյան տարիներին ՌԽՖՍՀ հայկական համայնքների կրթամշակութային կյանքը թևակոխեց անկման մոր շրջափուլ: Այն պայմանավորված էր պատերազմում մարդկային և նյութական ահռելի կորուստներով, առաջնային դարձած վերականգնման դժվարին աշխատանքներով, հայաիծ համայնքներում գործադրված լայնամասշտաբ բռնություններով:

ՌԽՖՍՀ տարածքում հայկական կրթամշակութային կյանքը հիմնականում կազմակերպված էր Դոնի, Կուբանի և Յուսիսային Կովկասի հայաշատ քաղաքային և գյուղական շրջաններում:

Դոնի հայկական կրթական և մշակութային հաստատությունների թվաքանակը սկսել էր կրճատվել 1930-ական թթ.

վերջից, երկրամասում գործում էին հայկական 15 դպրոցներ, որից 8-ը՝ Մյասնիկյանի ազգային շրջանի գյուղերում: 1950-ական թթ. սկզբին Մյասնիկյանի ազգային շրջանի հայկական դպրոցներում հայերենին զուգահեռ մտցվեցին նաև ռուսերեն կրթությամբ դասարաններ, իսկ 1956/1957 ուստարում բոլոր հայկական դպրոցներն անցան ռուսական կրթական ծրագրի: Սա հարուցեց տեղի հայության դժգոհությունը և միայն 1965 թվականից շրջանի դպրոցական կրթական ծրագրերում վերականգնվեց հայոց լեզու առարկայի դասավանդումը²⁹⁴:

Կուբանի (Կրասնոդարի երկրամաս) հայկական կրթական հաստատությունների ցանցը բավականին մեծ էր՝ պայմանավորված մեծաթիվ հայ բնակչությամբ. «Երկրամասի հայկական դպրոցների ամենածաղկուն տարիներն են 1930-1955 թթ., երբ համարյա բոլոր հայաբնակ գյուղերում և գյուղակներում, բազմաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքներում գոյություն է ունեցել 134 հայկական դպրոց: Դրանցից 81-ը եղել է տարրական, 39-ը՝ 7-8-ամյա և 14-ը՝ միջնակարգ (10-ամյա)»²⁹⁵:

1953 թ. Կրասնոդարի երկրամասի կազմում գտնվող Հայկական ազգային շրջանի լուծարումից հետո երկրամասի հայկական դպրոցների թիվը նկատելիորեն կրճատվել է: Հետպատերազմյան բոլոր մարդահամարների տվյալներով Կրասնոդարի երկրամասի հայության թվաքանակի անշեղ աճին հակառակ հայկական կրթական ցանցը սկսեց կտրուկ կրճատվել: Դպրոցներում մտցվեց ռուսական կրթական ծրագիր, իսկ հայերենը դասավանդվում էր որպես ինքնուրույն առարկա: Որոշ

²⁹⁴ Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России (25-27 ноября 2003 г.), М., 2006, с. 268.

²⁹⁵ Անտոնյան Ա., Հանձնահայության պատմությունից, Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 3 (55), 1979, էջ 121:

տվյալներով եթե երկրամասի հայկական դպրոցների թիվը 1951 թ. 140 էր, ապա 1967 թ.՝ 12, իսկ 1992 թ.՝ 3²⁹⁶:

1967/1968 ուստարում ՌԽՖՍՀ Կրասնոդարի երկրամասի հայկական կրթական ցանցը և ներկայացված էր 12 դպրոցներով և 2133 աշակերտներով: Վերոհիշյալ դպրոցներից 6-ը տարրական էին, 3-ը՝ ութամյա, 3-ը՝ միջնակարգ:

Հյուսիսային Կովկասի հայաշատ կենտրոններ Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկովկասում, Ստավրոպոլում և քազմաթիվ այլ բնակավայրերում ազգային կյանքի օջախների դեր կատարող հայկական կրթական հաստատությունները հայրենանվեր գործունեություն ծավալեցին ընդհուպ մինչև պատերազմը, սակայն լուծարվեցին 1940-ական թթ. զգալի ժամադր պատերազմական շրջանում, մյուսները՝ հետպատերազմյան առաջին տարիներին: Պյատիգորսկի հայկական դպրոցը փակվել է հետպատերազմյան տարիներին, իսկ Կիսլովոդսկի հայկական դպրոցը, որի հիմնադրման հարցում մեծ է եղել Վ. Տերյանի աջակցությունը, գործեց մինչև 1940-ական թթ. կեսերը²⁹⁷: Տևական ընդմիջումից հետո՝ 1972 թ., տեղի հայ մանկավարժների ջանքերով Կիսլովոդսկի երեք դպրոցներում կազմակերպվեցին հայոց լեզվի ֆակուլտատիվ խմբեր²⁹⁸, որոնք սակայն գործել են ընդամենը մեկ տարի:

ՌԽՖՍՀ հայկական կրթամշակութային հաստատությունների շարքում ուրույն դերակատարությամբ առանձնանում է նախկին Լազարյան ինստիտուտի հարկի տակ 1921-1953 թթ. գործունեություն ծավալած Մոսկվայի Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տունը: Մշակույթի Տունը դարձավ Ռուսաստանում

²⁹⁶ Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, նշվ. աշխ., էջ 295:

²⁹⁷ Армяне Ставрополя и Терека, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007, с. 16-17; Акопяна В. З., Церковь, ставшая символом общины, Хамаинк, вып. 3, Минеральные Воды, 1996, с. 5.

²⁹⁸ Акопян Т., "Язык-сердце народа", տես Хамаинк, вып. 3, Минеральные Воды, 1996, с. 21-22.

հայկական մշակույթի խոշոր կենտրոն՝ ներկայացնելով
Խորհրդային Հայաստանի և հայ ժողովրդի ձեռքբերումները:

1939 թ. Մոսկվայի Խորհրդային Հայաստանի Մշակույթի
Տանն անցկացվել է Խորհրդային Հայաստանի գրականության և
արվեստի տասնօրյակը, որը Խորհրդահայ մշակույթի առաջին
Համամիութենական ներկայացումն էր: Մշակույթի Տանը գործում
էր գրադարան, հրատարակչություն, թանգարան, կանոնավոր
կերպով կազմակերպվում էին հասարակական-քաղաքական,
գրական և երաժշտական երեկոներ, նկարիչների ցուցահանդես-
ներ, որոնց մասնակցում էին նաև մոսկվահայերը:

Հայրենական պատերազմի տարիներին Խորհրդային
Հայաստանի Մշակույթի Տունը, պատերազմական իրականու-
թյան պայմաններում կիսադատարկ էր, այստեղ գրեթե աշխա-
տանքներ չէին տարվում: Մշակույթի Տան ստուդիաներն
էվակուացվել էին, իսկ շինությունը ծառայում էր որպես Կույբիշևի
շրջգործկոմի ակումբ և միայն 1945 թ. ԽՍՀՄ ԳԽ Նախագա-
հության որոշումով այն վերադարձվել է:

Մշակույթի Տան գործունեությունը որակական նոր փուլ
մտավ թատերական գործիչ Սուրեն Սարուխանյանի տնօրինու-
թյան տարիներին (1944-1952 թթ.): Մշակույթի Տան նոր
ղեկավարության առջև դրվել է աշխատանքները դադարեցրած
ստուդիաների վերականգնումը, այլ ոչ թե նորովի ձևավորումը,
իսկ ստուդիաների գործունեությունն ուղղվել է ոչ թե նոր կադ-
րերի ուսուցմանն ինչպես 1920-1930-ական թթ., այլ Խորհրդային
Հայաստանի արվեստի ոլորտի աշխատակիցների մասնագի-
տական վերապատրաստմանն ու վերաորակավորմանը²⁹⁹:

Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան գործունեության
վերաբերյալ 1946 թ. կազմված տեղեկանքի համաձայն հաստա-
տության հիմնական նպատակն էր Հայաստանի համար վերա-
պատրաստել թատերական գործի մասնագետներ: Լրացուցիչ

²⁹⁹ Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, ГЗП.
աշխ., էջ 100.

Ֆինանսական միջոցներ հայթայթելու և հայկական մշակույթի
ժողովրդականացման նպատակով պարբերաբար կազմակերպ-
վում էին ցուցադրական համերգներ, երեկոներ, դասախոսու-
թյուններ և զեկույցներ Հայաստանի պատմության վերաբերյալ:
Մշակույթի Տունն ուներ 300 տեղանոց համերգային դահլիճ,
գրադարան-ընթերցարան, ցուցասրահներ, մի քանի լսարաններ:
Գործում էին կոմպոզիտորական, ռեժիսորական, պարարվեստի,
նկարչության և քանդակագործության բաժինները /ստուդիա/,
ուր զբաղված էին 42 մարդ³⁰⁰:

Անդրադառնալով Մշակույթի Տան ֆինանսավորման հար-
ցերին՝ նշվում էր, որ այն իրականացնում է հանրապետության
գործկոմը /նկատի է առնվում Հայկական ԽՍՀ-ն/ և ստուդիայի
աշխատանքների համար տարեկան բաց է թողնվում ավելի քան
1.5 մլն ռուբլի³⁰¹:

1946 թ. սկսած Ռ. Սիմոնովի ղեկավարությամբ հայկական
Մշակույթի Տանը կազմակերպվել են ռեժիսորական դասընթաց-
ներ, որոնց շրջանավարտները (Ա. Արմենյան, Տ. Վարդազարյան,
Ռ. Մինասյան, Վ. Վարձիգուլյան և այլք) երկար տարիներ ղեկա-
վարել են Հայաստանի շրջանային թատրոնները: Նույնպիսի
դասընթացներ են կազմակերպվել նաև կոմպոզիտորների,
նկարիչների, կինոռեժիսորների և գրողների համար: Այսպիսով,
Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան ստուդիաները դարձել
էին հայ ստեղծագործական կադրերի կատարելագործման
յուրօրինակ բազա Մոսկվայում:

1946-1949 թթ. Մոսկվայի հայկական Մշակույթի Տանը Ռ.
Սիմոնովի, Վ. Փափազյանի ղեկավարությամբ անցկացվել են
երիտասարդ կինոռեժիսորների կատարելագործման կուրսեր,
որոնց մասնակցել են Յ. Երզնկյանը, Լ. Վաղարշյանը, Գ. Սար-
կիսովը և ուրիշներ:

³⁰⁰ ЦАОПИМ (Центральный архив общественно-политической истории
Москвы), ф. 635, оп. 1, д. 886, л. 15.

³⁰¹ Նույն տեղում:

Առանձին ուսումնական դասընթացներ են կազմակերպվել նաև երիտասարդ հայ կոմպոզիտորների համար, որին մասնակից են դարձել Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը և Ա. Խուդոյանը և ուրիշներ:

Հատուկ դասընթացներ են կազմակերպվել պարարվեստի հայ ներկայացուցիչների համար (Սիլվա Մինասյան, Թերեզա Գրիգորյան, Պավլինե Բուռնազյան և ուրիշներ), ովքեր առաջատար դիրքեր են զբաղեցրել Ա. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում:

Երիտասարդ հայ գրողների գործուղումը Մոսկվայի հայկական Մշակույթի Տուն 1949-1950 թթ. կարևոր նշանակություն է ունեցել նրանց ստեղծագործական վերելքի համար: Հայ ստեղծագործողների խմբում են եղել Ս. Կապուտիկյանը, Գ. Եմինը, Ս. Մարգարյանը, Բ. Շողերյանը, Ա. Սահինյանը և ուրիշներ:

1946-1952 թթ. Մոսկվայի Հայաստանի Մշակույթի Տանը մասնագիտական դասընթացներ են անցել նաև նկարիչներ Կ. Վարդանյանը, Ա. Պապյանը, Վ. Ասլանյանը և Վ. Խաչիկյանը:

Մոսկվայում Հայաստանի Մշակույթի Տունը իրավամբ դարձել էր հայկական մշակութային կենտրոն Ռուսաստանում, որի դերակատությունն ահռելի էր հայ ստեղծագործական մտավորականության որակական վերելքի ասպարեզում: Հայաստանի Մշակույթի Տան կարևոր առաքելություններից մեկն էլ ՌԽՖՍՀ և մյուս միութենական հանրապետությունների մշակույթի հետ ծանոթությունն էր, որի նպատակով կազմակերպվում էին թեմատիկ ցուցահանդեսներ Հայաստանի ստեղծագործողների և Մոսկվայում սովորող հայ ուսանողության համար³⁰²:

1944-1950 թթ. Մոսկվայում Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան գործունեության վերաբերյալ տնօրեն Ս. Սարուխանյանի զեկույցի համաձայն ստեղծագործական ստուդիաներով անցել են 99 նկարիչ, կոմպոզիտոր, ռեժիսոր, քննադատ, գրող, դրամատուրգ, ճարտարապետ, երաժիշտ և այլն: Անցկաց-

վել են ավելի քան 300 գեղարվեստական երեկոներ և համերգներ³⁰³:

1951 թ. լայնորեն նշվեց Մոսկվայում Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան գործունեության հրեյանական 30-ամյակը: Այդ ընթացքում նա հսկայական դեր խաղաց մշակույթի ոլորտի հայ մասնագետների պատրաստման և կայացման գործում: Մշակույթի Տան տարբեր բաժինների կազմակերպված ու արդյունավետ աշխատանքները մեծապես պայմանավորված են եղել Ս. Սարուխանյանի մասնագիտական և վարչական փայլուն գործունեությամբ:

1953 թ. Մոսկվայի Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տունը դադարեց գործելուց՝ խորը հետք թողնելով հայ մշակույթի, կրթության զարգացման և տարածման գործում: Դեռևս Խորհրդային տարիներին հստակորեն ընդգծվել է, որ Մշակույթի Տան չարդարացված լուծարումը վնասել է ժողովուրդների մշակութային մերձեցման գործին³⁰⁴:

Հատկանշական է, որ 1960/1961 ուստարում ԽՍՀՄ ԲՈՒՀ-երում ուսանել են 36.7 հզ հայ ուսանողներ, որից Հայաստանում միայն 19.1 հզ (51.9 %), որը նմանօրինակ ամենացածր ցուցանիշն էր մյուս հիմնական էթնիկ խմբերի մեջ և բացատրվում էր միութենական այլ հանրապետություններում մեծաթիվ հայ քնակչության առկայությամբ³⁰⁵:

1960-ական թթ. հայ և ռուս գիտնականների ու մշակութային գործիչների ջանքերով, Հայկական ԽՍՀ և Ռոստովի մարզային իշխանությունների աջակցությամբ կանխվեց հայկական պատմաճարտարապետական մեծարժեք Սուրբ Խաչ վանական համալիրի քանդման փորձը: Կատարվեցին վերականգնողական աշխատանքներ և 1972 թ. բացվեց Հայ-

³⁰³ Լույն տեղում, էջ 125:

³⁰⁴ Худавердян К. С., Культурные связи Советской Армении, Е., 1977, с. 75.

³⁰⁵ Национальный состав населения СССР (по итогам переписи 1959 г.), под ред. П. Г. Подьячих, М., 1961, с. 53-54.

³⁰² Каграманов Н., նշվ. աշխ., էջ 124:

ռուսական բարեկամության թանգարանը, իր հայ և ռուս ժողովուրդների բարեկամության պատմության ցուցանմուշներով³⁰⁶:

Մինչև 1980-ական թթ. ավարտը Ռուսաստանի հայկական կրթական հաստատությունների թիվը սկսել է նվազել և միայն 1990-ական թթ. սկսած, ՌԴ-ում հայ ազգային կյանքի վերելքով պայմանավորված, բացվել են նոր կրթօջախներ:

2005 թ. տվյալներով ՌԴ տարածքում գործում էին 19 հայկական պետական հանրակրթական դպրոցներ, որոնցից 6-ական Սոչիում և Դոնի Ռոստովում³⁰⁷: Հայկական դպրոցներ են գործում նաև Արմավիրում, Ստավրոպոլի մարզի Եդեսիա հայկական գյուղում և այլն:

2008 թ. դրությամբ ՌԴ-ում գործում էին շուրջ 100 հայկական կիրակնօրյա դպրոց: Միայն Սոչի քաղաքում հայոց լեզվի դասընթացներ են կազմակերպվում 16 դպրոցներում: Ստավրոպոլի երկրամասի տարբեր քաղաքներում գործում են հայկական 9 կիրակնօրյա դպրոցներ: Հայոց լեզվի դասընթացներ են կազմակերպվում նաև Նովոսիբիրսկի մի շարք դպրոցներում:

Հայկական համայնքնային կազմակերպություններին, մշակութային կենտրոններին և եկեղեցիներին կից դպրոցներ են գործում Սարատով, Ոչական, Վորոնեժ, Վոլգոգրադ, Օմսկ, Սմոլենսկ, Պենզա, Կրասնոյարսկ, Կալինինգրադ, Տյումեն և Աստրախան քաղաքներում³⁰⁸:

Հայկական կիրակնօրյա դպրոցներ են գործում նաև Մոսկվայում, Պուշկինոյում, Իվանովոյում: Հայոց լեզվի ուսուցման և հայեցի դաստիարակության դասընթացներ են կազմակերպվում ՌԴ-ում ՀՀ դեսպանատանը կից կիրակնօրյա դպրոցում, «Լույս»

³⁰⁶ 225-летию основания города Нахичевани-на-Дону и сел Мясниковского района Ростовской области, Ростов-на-Дону, 2004, с. 77.

³⁰⁷ Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Ե., 2010, էջ 113-114:

³⁰⁸ <http://noev-kovcheg.ru/mag/2008-06/1193.html#xz32YPKPrsl> (N 6 (129) Июнь 2008 г.)

կենտրոնում, մի շարք մանկապարտեզներում, Սանկտ Պետերբուրգի Լազարյանների անվան դաստիարակության կենտրոնում և այլն:

ՌԴ-ում գործող հայկական կրթական հաստատությունների ցանցը բավական լայն է հատկապես Հյուսիսային Կովկասի Դաշնային և Հարավային Դաշնային օկրուգներում, որոնց գործունեությունը կարևոր նախապայման է հայկականության պահպանման համար, ազգային մշակույթի և լեզվի ամրապնդման համար, որը դիմագրավում է լուրջ մարտահրավերներ: Հայության ազգային դիմագծի պահպանումը, օտար միջավայրում տարրալուծման մարտահրավերները նոր հրամայականներ են դրել ինչպես համայնքնային, այնպես էլ հայաստանյան և համահայկական կառույցների առջև՝ ակտիվորեն ներգրավվելու այսօրինակ խնդիրների լուծման գործին:

Գրական կյանքը: 1920-1930-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում հայ գրական-գեղարվեստական կյանքի ոլորտում լուրջ դերակատարություն են ունեցել Պյատիգորսկի, Մոսկվայի գրական խմբակցությունները, Հյուսիսային Կովկասի և Դոնի խորհրդային գրողների հայ գրական սեկցիաները:

Պյատիգորսկի Հայ Գրական Գեղարվեստական Խմբակցությունն ու նրա «Ալիք» գրական ժողովածուն ծնունդ են առել Հյուսիսային Կովկասում 1919 թ. «...այս տարւայ գարնան սկզբներում, հիմնեց Պյատիգորսկի Հայ Գրական-Գեղարվեստական Խմբակցութիւնը, որն իրեն նպատակ է դրել՝ համախմբել իր շուրջը գեղարվեստի զանազան ճիւղերում գործող գաղութիս փոքրաթիւ երիտասարդներին, որոնք իրենց համեստ ոյժերով պիտի սպասաւորեն հայրենի գեղարվեստին»³⁰⁹: Այս նպատակով էլ Գրական Գեղարվեստական Խմբակցությունը գործնական քայլեր է իրականացրել թատերական և երաժշտական ասպարեզներում համապատասխան սեկցիաներ հիմնելով, ավելի ուշ՝ հրատարակել գրական սեկցիայի «Ալիք» ժողովածուն: «Ալիք»

³⁰⁹ «Ալիք», Պյատիգորսկ, գրք. 1, 1919, էջ 3:

գրական ժողովածուն տպագրվում էր Պյատիգորսկի տպարանատեր Գևորգ Սուքիասյանցի տպարանում, ով մեծապես աջակցում էր այդ գործին. «...գրական որևէ հանդեսի հրատարակությունը հայրենի երկրից դուրս գաղութներում-կրկնակի դժվարությունների հետ է կապված: Ամենից առաջ նիւթերի կողմից. Հանքային Ջրերի հայ գաղութում պրոֆեսիոնալ գրողներ չըկան, որպեսզի կարողանայինք աւելի ճոխացնել մեր ժողովածուի էջերը արժէքաւոր գրածքներով»³¹⁰:

Խմբակցությունն իր խոսքում, որը տպագրվել է որպես ժողովածուի նախաբան, ընդգծում էր. «...ժամանակակից թանգութիւնը մեզ երբէք յուսահատութեան դռան չէ կանգնեցրել. մեզ մտավախութիւն պատճառողը եղել է գաղութի վերաբերմունքը դէպի մեր՝ մեծ ծախսեր կլանող գործը... Իհարկէ, մենք այնքան էլ լաւատես հաւակնութիւն չունինք մեր այս ժողովածուի վերաբերմամբ, բայց, յամենայն դէպս, մեզ թւում է, որ նա որոշ հետաքրքրութիւն ներկայացնում է իրանից»³¹¹:

Խմբագրությունն իրատեսորեն էր գնահատում «Ալիք»-ի հնարավորությունները, սակայն լի էր վճռականությամբ սկսած գործի հաջողության նկատմամբ. «...մանաւանդ քաղաքացիական այս պատերազմի ընթացքում, և երբ որ այդ դժար ուղին հարթւած է, ինքնին դա ոգևորութեան մի աղբիւր է մեր ապագայ աւելի արգասաւոր գործունէութեան»:

«Ալիք»-ի խմբագրությունը մատնանշել էր աշխատակիցներին իրենց գործունէության մեջ կատարյալ ազատ թողնելու և որևէ սահմանափակության մեջ չդնելու մասին՝ սկսած ուղղագրությունից մինչև ոճը, դարձվածքները և այլն: «Ալիք» գրական ժողովածուն բովանդակում էր երկու բաժիններ՝ գրական և բանասիրական, ուր գրվածքներով հանդես էին գալիս բանաստեղծներ Վահրամ Չիթունին, Լևոն Բզնունին, Ք. Բաշինջադյանը, Գ. Երկունին, Ար. Հովհաննիսյանը, արծակագիրներ Մխիթար Հա-

րութունյանը, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Ն. Տիրունցը և այլք: Գրական այս ուժերի մասնակցությամբ էլ «Ալիք» ժողովածուն իր շուրջը համախմբեց Հյուսիսային Կովկասի (Եկատերինոդար, Արմավիր, Եսսենտուկի, Ռոմանովսկի և այլն) հայ գրական ուժերը:

1920 թ. հունվարի 12-ի խմբակցության չորրորդ գրական հավաքը նվիրված էր «Ալիք»-ի առաջին գրքույկին, որի ժամանակ ունկնդրության են արժանացել Ե. Տեր-Մարտիրոսյանի «Մենություն» գրվածքն, որը ներկայացնում էր գյուղական տառապող ուսուցչի հոգեկան ապրումները, ինչպես նաև Վ. Չիթունու «Խաչված երագներ» ու «Որպես երկու մանուկներ» աշխատանքները:

1920 թ. հունվարի 26-ի Ընդհանուր ժողովը, լսելով գործունէության հաշվետվությունը, որոշում է կայացրել «Ալիք» ժողովածուի երկրորդ գրքույկի հրատարակման մասին: Պյատիգորսկի Գրական Գեղարվեստական Խմբակցությունը նշել է նաև հայ անվանի գրական և ազգային գործիչների հոբելյանները: Հ. Թումանյանի 50-ամյակի առթիվ «Ալիք»-ի առաջին գրքույկում անդրադարձ-հոգված է գրվել, իսկ 1920 թ. ապրիլի 4-ին Խրիմյան Հայրիկի ծննդյան 100-ամյակի առթիվ ծրագրվել էր հրատարակել միօրյա թերթ՝ ամբողջովին նվիրված հոբելյարին³¹²:

Միջոցառումները նպատակ են հետապնդել ապահովելու նաև նյութական բազա, նվիրատվություններ: Այնուհանդերձ, արդեն 1920 թ. սկզբին Հյուսիսային Կովկասը դառնում է քաղաքացիական պատերազմի ակտիվ թատերաբեմ, որը արգելակում է նաև Պյատիգորսկի խմբակցության գործունէությանը. «Փետրարի 15-ին և 22-ին նշանակւած հերթական հավաքոյթները չկայացան քաղաքական իրադարձութիւնների պատճառով»³¹³:

Պյատիգորսկի խմբակցության հետագա գործունէությունը

³¹⁰ Նույն տեղում:

³¹¹ Նույն տեղում:

³¹² «Ալիք», Պյատիգորսկ, գրք.2, 1920, էջ 62:

³¹³ Նույն տեղում:

ու «Ալիք»-ի հրատարակությունը դադարել են: Թեև իր կարծատև գործունեությանը Պյատիգորսկի Հայ Գրական Խմբակցությանն որոշ չափով հաջողվեց իր առանցքի շուրջ համախմբել Հյուսիսային Կովկասի հայ գրական ուժերն, անհայտությունից հանել նրանց և հրամցնել հասարակությանը, կազմակերպել հրատարակություն:

Խորհրդային տարիներին նշանակալի դերակատարություն ունեցավ Մոսկվայում հիմնված հայ Գրական Գեղարվեստական «Մուրճ և Մանգաղ» խմբակցությունը, որը դարձավ հայ գրական-գեղարվեստական մտքի կենտրոնը Ռուսաստանում 1920-ական թթ. «1922 թ. գարնանը մի խումբ հայ երիտասարդ գրականագետների մէջ միտք յղացաւ համախմբել գրականութեանն ու արւեստին նւիրած նոր ու սկսնակ ուժերին»³¹⁴: Խմբակի հիմնադիր և նոր անդամների 1922 թ. մայիսի 13-ի ընդհանուր ժողովում ընտրվում է ժամանակավոր Վարչություն, իսկ օգոստոսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում հաստատվում է նոր Վարչություն և խմբագրական կոլլեգիա:

Խմբագրության գործունեությունն ամփոփվել է ներքին հավաքույթների, հրապարակային դասախոսությունների և երեկույթների, հրատարակչության մեջ:

Գրական խմբակի աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել Գուրգեն Հայկունին, Ա. Արշարունին, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Շամունցը, Աբովը և ուրիշներ: Մի շարք հասարակական երեկույթների մասնակիցներն են դարձել տեղի հայ երաժշտական խմբակի անդամները, դրամատիկական ստուդիայի ուսանողները, ռուս պրոլետգրողների «Դարբնոց» (Кузница) խմբակցությունը և այլք: Դասախոսություններով հանդես են եկել Գ. Հայկունին («Երեքի» դեկլարացիան և Չարենցի ստեղծագործությունները), Հ. Գյուլի-Քևայանը («Պրոլետարական պոեզիան») և այլն: 1922 թ. դեկտեմբերի 30-ին ի պատիվ Համառուսական X-րդ համագումարի հայ պատգամավորների

կազմակերպված երեկույթին մասնակցել են Հայաստանի ժողովուրդի նախագահ Ս. Լուկաշինը և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը:

Գրական Խմբակցության հրատարակչական գործը, հակառակ հոռետես տրամադրությունների, ուշացումով, սակայն գլուխ բերվեց. «Նիւթական միջոցների բացակայութիւնը, տպագրական, տէխնիկական ոչ բաւարար պայմանները, և այլն, այս ամենը, սակայն, չկասեցրին սկսւած գեղեցիկ գործը»³¹⁵:

Խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներից խորհրդահայ տարբեր համայնքներում սկսվեցին հրատարակվել պարբերականներ, այդ թվում՝ գրական-ստեղծագործական հանդեսներ, ուր ամփոփվում էին հայ գրողների և ստեղծագործ ուժերի գրվածքները: Այդպիսի հրատարակություններից էր գրական-գեղարվեստական և սատիրական օրգան «Քուրա»-ն, որն հրատարակվում էր Մոսկվայում և հանդիսանում «Մուրճ և Մանգաղ» գրական խմբակի հանդեսը:

«Քուրա» հանդեսը կոչված էր համախմբելու պրոլետարական ստեղծագործական մտքի նախահեղափոխական փոքրաթիվ ուժերը, ապահովելու պրոլետարական մտավորականության և մշակութային կյանքի զարգացումը. «Պրոլետարական խաւերի ծնունդ-մտաւոր ուժերի բեղմնաւորումն և զարգացումը երաշխիք են, անշուշտ, որ վաղը բանւոր դասակարգի առաջ պիտի բացւին ու ծաղկին գիտութեան և գեղարւեստի նորանոր հորիզոններ...»³¹⁶: «Քուրա» հանդեսն, որի առաջին համարը տպագրվել է 1923 թ. մարտին, խմբագրում էր Գ. Հայկունին: Հանդեսի առաջին համարի առաջաբանում Գ. Հայկունին ներկայացնում էր հայ պրոլետգրողների առջև ծանրացած հիմնական խնդիրը, այն է՝ հանդես գալ պրոլետարական կուլտուրայի առաջապահ դիրքերում, դառնալ հայ բանվորության զինակիցը:

«Մուրճ և Մանգաղ» խմբակցության համանուն հրատարակությունը

³¹⁵ Նույն տեղում, էջ 15:

³¹⁶ Նույն տեղում, էջ 1:

³¹⁴ «Քուրա», Մոսկվա, № 1, 1923, էջ 13:

րակչությունը, բացի մի ամբողջ շարք գրքերի լույսընծայումից, գրադվել է նաև թարգմանություններով՝ հայ ընթերցողին ծանոթացնելով ռուսական և համաշխարհային նորագույն, հեղափոխական գրականության հետ: Հրատարակչությունն իր նպատակներից մեկն էլ տեսնում էր նրանում, որ պետք էր խրախուսել տաղանդավոր, երիտասարդ սկսնակներին, անհայտության գրկից հրապարակ հանել շնորհալի և կենսունակ գրական ուժերին, ովքեր որոշակի անցում էին կատարել դեպի պրոլետարական գրականություն:

Գրական խմբակցությունը հպարտությամբ ընդգծում էր, որ. «Մոսկվայի Գրական-գեղարվ. խմբակցութեան «Մուրճ և Ման-գաղ» հրատարակչութիւնը իր բովանդակալից ու սիրուն գրքերով արդէն բռնել է իր հանրօգուտ ու պատուաւոր տեղը հայ հրատարակչութեան պատմութեան մէջ: Եւ ոչ մի անաչառ պատ-մագիր այլևս անգօր է լռությամբ անցնելու հայ գրականութեան մէջ այդ փայլուն շինարարական ու ստեղծագործական գործի վրայից: Ամբողջ Ռուսաստանի ու Կովկասի հայ իրականութեան մէջ, չհաշւած պետական հրատարակչութիւնը, նա այսօր առաջինն ու միակն է»³¹⁷: Այնուամենայնիվ, խմբակցությունն իրավացիորեն գտնում էր, որ ամեն ինչ կատարյալ չէ, ուստիև կոչ էր անում կուսակցական, հասարակական և գրական համապատասխան շրջանակներին, զորավիճ ու նեցուկ հանդիսանալ կարևոր այդ ձեռնարկին:

«Քուրա»-ի 2-րդ համարն լույս է ընծայվել 1923 թ. հոկտեմբեր ամսին, որտեղ բացի գեղարվեստական բաժնից, տպագրված նյութերն ունեին տեսական և քննադատական բնույթ: Այստեղ ներկայացված գեղարվեստական, տեսական և քննադատական բաժիններում հանդես են եկել նոր գրական ուժեր (Մ. Դարբինյան, Բ. Սահակյան, Յ. Խաչանյան և այլն): 1928 թ. հոկտեմբերին հրատարակված «Քուրա»-ն ներկայանում էր որպես հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստա-

կան, գիտական-քննադատական ավանախ, և ներկայացնում Մոսկվայի՝ Խորհրդային Հայաստանի Կուլտուրայի Տան հրատարակչությունը:

«Քուրա»-ի խմբագրության նպատակներից էր բավարարել «...P.C.Փ.C.P.-ում ապրող հարյուր հազարավոր հայ բանվորա-գյուղացիական մասսաների կուլտուրական պահանջների մի մասը: Քուրա-ն պիտի իրագործե շրջանիս կուլտուրական անհատ ուժերի կամ խմբավորումների ավելի լայն ու կուռ համախմբումը պրակտիկ, ստեղծագործական հողի վրա: Քուրան՝ քաղաքական-հասարակական, գիտական, գրական-գեղարվեստական և քննադատական ավանախներով պիտի բավարարե շրջանիս հայ մասսաների կուլտուրական լայն պահանջների նվազագույնը...»³¹⁸:

Ավանախում տեղ էր գտել Մոսկվայի հայ ուսանող Ս. Ալի-խանյանի «Հայ ուսանողության անելիքները» հոդվածն, ուր բացահայտվում էր հայ ուսանողությանն առաջադրվող խնդիրները: Ընդգծելով, որ Մոսկվան և Պետերբուրգը հայ մտավորականության և հեղափոխական գործիչների համար եղել են կրթական դարբնոց, առանձնացվում էին ներկայի պահանջներից բխող հետևյալ խնդիրները. «Հայ ուսանողը, լինի այն կուսակցական, բանվոր թե ինտելիգենտ, մոռացության չպիտի տա այն հանգամանքը, վոր յեթե ինքը չորս հազար վերստ տարածություն կտրելով՝ ուղարկվել ե այստեղ սովորելու, նա պիտի սովորի միայն այն յերկրի համար, վորը նրան ուղարկել է: Դեպքեր են լինում, յերբ Հայաստանից թոշակ ստացող ուսանողը բարձրագույն դպրոց ավարտելով՝ հետ չի գնում աշխատելու»³¹⁹: Մոսկվայի Հայ Գրական Գեղարվեստական խմբակցությունն ու նրա «Քուրա» հանդեսը լուրջ աշխուժություն մտցրեցին ոչ միայն Մոսկվայի հայ մտավոր կյանքում, այլև դարձան այն օղակը, որի շուրջ համախմբվեցին գրական-գիտական նշանակալի ուժեր:

³¹⁷ Նույն տեղում, էջ 15:

³¹⁸ Քուրա, 1928, III, էջ 10:

³¹⁹ Նույն տեղում, էջ 161:

Այս դրական կողմերով հանդերձ, «Քուրա»-ն ներկայացնում և քարոզում էր միայն հայ պրոլետարական գրականությանը, գտնվելով ժամանակի գաղափարական-քաղաքական հայացքների ներքո, ուր, բացակայում էին գրական, հասարակական, գաղափարական ազատությունն ու բազմակարծությունը: Այդ հանգամանքը չի նսեմացնում «Քուրա»-յի արժեքն ու կարևորությունը, որը կարողացավ ուղղության տալ Մոսկվայի Հայ գրական կյանքին 1920-ական թթ.:

Հյուսիսային Կովկասի Պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական սեկցիան ձևավորվել է 1926 թ.³²⁰, որին նախորդել էին Կրասնոդարի, Նովոռոսիյսկի, Դոնի Ռոստովի և Արմավիրի պրոլետարական գրողների խմբերը: Հյուսիսային Կովկասի պրոլետգրողների հայկական ասոցիացիայի անդամների թվաքանակն ըստ անդամատոմսերի 36 էր, որոնք հիմնականում գյուղական և բանվորական միջավայրից ելած երիտասարդներ էին ու հանդես էին գալիս մեծամասամբ հայալեզու գրվածքներով: Հայ գրողների այս սեկցիայից գրականության մեջ առավել մեծ հետք թողեց Գրիգորի Բոյաջիկը (1909-1974 թթ.), ով տեղաբնիկ հայ էր և գրում էր ռուսերենով: Նրա գրական կյանքի վերելքը 1960-ական թթ. էին, երբ դրսևորվեց նաև քննադատի որակները:

Արդեն 1930-ական թթ. ՌԽՖՍՀ հայ գրական-հասարակական կյանքում առանձնահատուկ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում Դոնի խորհրդային գրողների միության հայկական սեկցիան:

1930-ական թթ. Դոնի հայ գրական ուժերն իրենց վրա կրեցին Միության ներսում լայնորեն կիրառվող հետապնդումների և «մերկացումների» քաղաքականությունը, անհիմն կերպով ենթարկվեցին հալածանքների: Առավել մեծ չափերով այդ հետապնդումները սուր շարունակություն ստացան բռնաճնշումների հիմնական փուլում՝ 1937 թ., որին անդրադարձել և

լայնորեն շոշափել է ժամանակի հայկական կուսակցական մամուլը: Այսպես, «Բուլշևիկ»-ն իր 1937 թ. հունիսի 6-ի համարում «Բուլշևիկյան անխնա քննադատությամբ մերկացնել թշնամուն» հողվածում լուսաբանում էր Դոնի Ռոստովի խորհրդային գրողների եռորյա ժողովի արդյունքները. «3 օր անընդհատ գրողների և ընթերցողների ակտիվը քննարկում էր տրոցկիստական-ֆաշիստական գործակալության լրտեսական, դիվերսիոն, վնասարարական գործողությունը խորհրդային գրականության մեջ:...Գրողների ժողովը պարզորոշ կերպով յերևան հանեց խորհրդային ժողովրդի այդ թշնամիների գործունեության ամբողջ էությունը առանձնապես մեր յերկրամասում»³²¹:

Դոնի խորհրդային գրողների տեղական կառույցի հակախորհրդային գործելակերպի և գրաքննադատության բացակայության մեղավորությունը ժողովի մասնակիցները դրեցին տեղի ղեկավար կազմի վրա, որոնք մեծապես շեղել և սխալ ճանապարհի վրա էին դրել երիտասարդ ուժերին: Դոնի երկրամասում հակախորհրդային գործունեություն ծավալելու մեղադրանքով ժողովը «մերկացրել» էր մի շարք հայազգի ստեղծագործողների. «Ձակրուտկինը (մանկավարժական ինստիտուտ) ժողովականների առաջ պարզեց քննադատ Լինինի կապերը ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ, թե ինչպես նա հրատարակված պուշկինյան ժողովածվում քողարկված կերպով տեղավորել էր լրտես Թաթուլովի վնասարար հողվածը: Թաթուլովի հակախորհրդային գործունեության փաստերի շարանում հիշատակվեց և այն, թե ինչպես իր մերկացման նախորդակում, պրոլետարական մեծագույն բանաստեղծ Մայակովսկու մասին արած զեկուցման մեջ նա աշխատել է կեղտոտել Մայակովսկու անունը, նսեմացնել նրա պրոլետարական պոեզիայի առաջնակարգ դերը:...Ժողովում պարզվեց ժողովրդի թշնամիներ Վարդանյանի, Գոգոբերիձեյի և ուրիշների քողարկված վնասարարական աշխատանքը, յերբ նրանք ամեն կերպ աշխատում էին իրենց

³²⁰ ГАРО, Ф. Р-1475, оп. 1, л. 3, л. 81.

³²¹ Բուլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 54, էջ 3:

ազդեցության տակ առնել մեր յերիտասարդ, անգամ և լավ գրողներին»³²²:

Յետաքրքրական է, որ վերոհիշյալ ժողովում քննադատության են արժանացել ազգային փոքրամասնությունների շրջանում գրական կադրերի պատրաստման աշխատանքները, քննադատության և ինքնաքննադատության պակասը, որը հնարավորություն կբացեր վեր հանել թերացումները և չչեղվել ուղուց՝ «անադարտորեն» իրականացնելու համար կուսակցության գլխավոր գիծը խորհրդային գրականության մեջ:

«Բոլշևիկ»-ն իր հետագա համարներում ևս անդրադարձել է խորհրդային գրական այս կառույցի շրջանակներում տարվող «զտումներին», որին զոհ էին դառնում անգամ իրենք «մերկացնողները»: Այսպես, 1937 թ. հոկտեմբերի 18-ին «Բոլշևիկ»-ն արտատպում է երկրամասի կենտրոնական մամուլում՝ «Մոլոտ»-ում, հոկտեմբերի 15-ին տպագրված Զ. Ղուկասյանի «Գրականագետների դիմակի տակ» հոդվածն, ուր «բացահայտված» էր երկրամասի հակախորհրդային հայ գրական խմբակն ու նրա թշնամական գործունեությունը, որի համար տանիք էր ծառայել նաև հայալեզու կուսակցական օրգանը՝ «Բոլշևիկ»-ը: Վերոնշյալ հոդվածը սկսվում էր հետևյալ տողերով. «Ժողովրդի թշնամիները, բուրժուական նացիոնալիստները, քիչ վնաս չհասցրին յերկրամասի հայկական կուլտուրային և գրականությանը: Այժմ մերկացված լրտես և դիվերսանտ Ավագովը, որը յերկար ժամանակ գործում էր յերկրային (այժմ մարզային) «Բոլշևիկ» թերթում, անց էր կացնում բացահայտ վնասարարական հակահեղափոխական գիծ: Մաքսանենգությամբ քաշ տալով հակահեղափոխական-տրոցկիստական և ազգայնական «զաղափարներ», Ավագովն ամեն բան անում էր, վորպեսզի վիժեցներ յերկրամասի բազմահազար հայ բնակչության կոմունիստական լուսավորությունը և դաստիարակությունը: ...Ավագովը մերկացված և

անվնաս և դարձված, բայց նրա արմատները դեռ մինչև վերջ արմատախիլ չեն արված»³²³:

«Մոլոտ»-ում հանդես եկող Զ. Ղուկասյանը նույն պիտակավորմամբ մեղադրանք է ներկայացնում «Բոլշևիկ»-ի մեկ այլ պատասխանատու աշխատակցի՝ Արսեն Զովհաննիսյանին, որին անվանում է անսկզբունք և բարոյագուրկ, իրեն «պոետ» հորջորջող անձնավորություն: Ա. Զովհաննիսյանի ծանոթությունը Դոնի հայ գրական և քննադատական այն շրջանակի հետ, որոնց թվում էին Թաթուլովն ու Վարդանյանը, նրան դասում էր հակաժողովրդական-թշնամական գրական ճամբարի շարքը. «Հայտնի է, օրինակ, վոր տրոցկիստական դիվերսանտ Վարդանյանը, որը գործում էր Տազանրոզում, շատ հետաքրքրվում էր Զովհաննիսյանի անձնավորությամբ: Ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ միասին Տազանրոզում նա կազմակերպեց այդ խորամանկի «ստեղծագործական» երեկույթները... Իրականում Զովհաննիսյանի ամբողջ ստեղծագործությունը - դա բացահայտ հակահեղափոխական-տրոցկիստական մաքսանենգությունն է: Նա ունի մի քանի «գրական աշխատություններ»: Այդ գրքերում քաշ է տրվում զգվելի ֆաշիստական գրպարտություն խորհրդային ժողովրդի և մեր երկրի դեմ»³²⁴: Մեջտեղ էին բերվում Ա. Զովհաննիսյանի ստեղծագործություններն ու դրանցում թույլ տրված «շեղումները», այսպես. ««Լուսաբացի լիրիկա» գրքում նա անում է ստոր պրովոկացիոն հարձակում Լենինի և Լենինիզմի դեմ, խորհրդային ժողովրդի դեմ և հենց այդ տեղ էլ բառացիորեն վերլուծում է Զուղա Տրոցկու հակահեղափոխական մտքերը: Մյուս գրքում, - «Յերգեր հաղթական վերելքի»՝ Զովհաննիսյանը կոպիտ կերպով խեղաթյուրում է Մարքսի ուսմունքը»³²⁵: Ա. Զովհաննիսյանի թշնամական դիտված ստեղծագործությունների թվին էր դասվում նաև 1934 թ. լույս

³²² Նույն տեղում:

³²³ Նույն տեղում, № 100, էջ 2:

³²⁴ Նույն տեղում:

³²⁵ Նույն տեղում:

ընծայված «Կարմիր տախտակի վրա» գիրքը, որը որակվել էր «քաղցր շշմջուն» թշնամու առաջ. «...ամբողջ գիրքն իսկապես նվիրված է երկու «հերոսների»- Յեղիազարյանին և Դոկուկինին, այժմ մերկացված տրոցկիստական դիվերսանտներին և լրտեսներին: Հովհաննիսյանը ներկեր չի խնայում ստորաքարշ զեղումների համար ֆաշիստական թունդ ավազակների առաջ, նրանց անունները նա արտասանում է բառացիորեն յուրաքանչյուր եջում և վոչ այլ կերպ, քան այսպիսի մականուններով՝ «մեր անփոխարինելի ղեկավարներ», «ամենասիրելի», «թանկագին» և այլն: ... Հովհաննիսյանը մի ժամանակ գլխավորելով յերկրամասի պրոլետարական գրողների հայկական սեկցիան, յեռանդուն կերպով քաշ էր տալիս տրոցկիստական-ավերբախյան «գաղափարիկներ»³²⁶:

Հակահեղափոխական գրական գործունեության մեղադրական էր ներկայացվում «Բոլշևիկ»-ի մեկ այլ աշխատակից և Դոնի Ռոստովի մանկավարժական ինստիտուտի դասախոս Եգոր Բարսեղյանին. «Այս «պրոֆեսորը» զրպարտիչ յեւոյթներում կուսակցության, խորհրդային պետության և կոլխոզնիկների դեմ վոչ միայն հետ չի մնում, այլ նույն իսկ գերազանցում է իր զինակից Հովհաննիսյանին: 1934 թվին նա լույս է ընծայում «Ունեվոր կյանքի ուղին» բրոշյուրը»³²⁷: Ե. Բարսեղյանի վերոնշյալ աշխատությունը լեւինիզմի և կոլտնտեսային կարգի դեմ ուղղված բացահայտ սադրանք էր դիտվում. «Բրոշյուրում անամոթաբար և դիտավորյալ կերպով խեղաթուրված են ընկեր Ստալինի աշխատություններից բերված մեջբերումները: Մի տեղում թույլ է տրված բառերի ուղղակի թշնամական տեղադրություն: Ուրիշ տեղում Բարսեղյանը ցինիկաբար պնդում է, վոր իբր թե «սերմային ֆոնդի գտման հետևանքով մեր դաշտերը ծածկվեցին մոլախտով» (էջ 24) և այլն, և այլն»³²⁸: Ե. Բարսեղյանի երկրորդ

³²⁶ Եւոյն տեղում:

³²⁷ Եւոյն տեղում:

³²⁸ Եւոյն տեղում:

աշխատությունը՝ «Աշխատանքի սոցիալիստական ձևերը», որը լույս էր տեսել Ավագովի խմբագրությամբ 1933 թ., դիտվում էր հակաստալինյան և նրա քաղաքական-գաղափարական հակառակորդ Տրոցկու ընդգծված ցիտատներով լի. «Նա (նկատի է առնվում աշխատությունը) նույնպես լի յե տրոցկիստական զրպարտիչ հարծակումներով ընդդեմ կոմունիստական կուսակցության, ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի: ... Այդպես են Հովհաննիսյանի և Բարսեղյանի իսկական դեմքերը, վորոնք խորհրդային գրականագետների դիմակի տակ թագնվել են հայկական «Բոլշևիկ» թերթում: Այստեղ նրանք անպատիժ կերպով անում են իրենց գարշելի, հակահեղափոխական գործը»³²⁹:

«Մոլոտ»-ի էջերում տպագրված «բացահայտումներն» առիթ դարձան, որպեսզի «Բոլշևիկ»-ի խմբագրական կազմին Ս. Գիգոյանի գլխավորությամբ, թերթի կուսկազմակերպության 1937 թ. հոկտեմբերի 16-17-ի ժողովում մեղադրանք ներկայացվի հակահեղափոխական մտքեր և քաղաքական սխալներ թույլ տալու համար. «Համարել հաստատված, վոր մի շարք հակահեղափոխական գրքեր հրատարակված են «Ազով-Սևոնյան հրատարակչության» հայկական բաժանմունքի նախկին խմբագիր Հ. Պոտենցի կողմից, վորի մասին հաղորդել ՀԿ/բ/Կ Յերևանի քաղկոմին որտեղ ներկա ժամանակ նա գտնվում է»³³⁰:

Բացահայտ հակահեղափոխական գործունեության մեղադրանքով Արսեն Հովհաննիսյանին կուսժողովը հեռացրեց թերթի խմբագրակազմից և խորհրդային Գրողների Միության մարզային բաժանմունքի առաջ հարց բարձրացրեց նրա անդամության հնարավորության բացառման վերաբերյալ, իսկ Եգոր Բարսեղյանի վերաբերյալ բոլոր նյութերը որոշվեց հանձնել այն կուսկազմակերպությանն, ուր նա գտնվում էր:

«Մոլոտ» թերթի էջերում «բացահայտված» հակահեղափոխական և ժողովրդի թշնամի որակումը ստացած գրականագետ-

³²⁹ Եւոյն տեղում:

³³⁰ Եւոյն տեղում:

ներն, որոնք իբրև թե բույն էին դրել «Բոլշևիկ»-ի խմբագրությունում, ինչպես պարզ է դառնում 1938 թ., զրպարտությանմ գոհ էին: Այսպես, «Բոլշևիկ»-ի 1938 թ. փետրվարի 11-ի համարում տպագրված «Զրպարտողը մերկացնողի դիմակի տակ» հոդվածում բացահայտվում է ոչ միայն «Բոլշևիկ»-ի, այլ նաև «Մոլոտ»-ի արդեն նախկին աշխատակից Յ. Ղուկասյանի զրպարտիչ գործունեությունը: Սուր քննադատության է արժանացել մամուլի միջոցների անհարկի շտապողականությունը, ինքնապահովագրման տրամաբանությունը զրպարտիչ հոդված թերթի էջերում գետեղելու համար: Միևնույն ժամանակ, իրավացիորեն նշվում էր, որ հապշտապ և հախուռն «որոշման» հեղինակները, խորամուխ չլինելով գործի էությանն, իրենք են ինքնաքննադատության և զգաստության ոչ պատշաճ դրսևորում հանդես բերել. «Նույն հանցագործ վերաբերմունքն է ցույց տվել Արսեն Յովհաննիսյանի նկատմամբ նայել խորհրդային գրողների Միության Ռոստովի բաժանմունքը: Վերջինիս համար բավական է յեղել «Մոլոտի» հոդվածը և «Բոլշևիկի» կուսակցական ու կոմյերիտական կազմակերպության վորոշումը, վորպեսզի կենդանական ահով բռնվեր, առանց ծանոթանալու Յովհաննիսյանի գրվածքների ու սխալների հետ և նրա բացակայությամբ վորոշում հաներ գրողների Միության թեկնածությունից հեռացնել Արսեն Յովհաննիսյանին»³³¹: Շարունակելով նման իրականության փակ կողմերի բացահայտումը՝ մեջտեղ են բեռվում Ա. Յովհաննիսյանին վերագրված «հակաժողովրդական» դիրքը. «Այն, վոր 1935 թվին Տագանրոգի կուսքաղաքային կոմիտեն, վորի քարտուղարն էր այդ ժամանակ ժողովրդի թշնամի Ս. Վարդանյանը, կազմակերպում է այդ ժամանակ Ռոստովում գումարված գրողներին կոնֆերանսին մասնակցող 17 գրողներից գրական յերեկո, վորտեղ մասնակցում է նաև Արսեն Յովհաննիսյանը: Զրպարտչի համար բավական է միայն, վոր յեղել է գրական յերեկույթ, վորտեղ մասնակցել է Արսեն Յով-

³³¹ Նույն տեղում, 1938, № 14, էջ 3:

հաննիսյանը... վորպեսզի նրան թշնամիների շարքը դասի»:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. հանձին Պյատիգորսկի, Մոսկվայի և Դոնի Ռոստովի Հայ Գրական Խմբակցությանների ու տեկցիաների, «Ալիք», «Քուրա» իրատարակչությանների ռուսահայ գրական կյանքում երևան եկավ նկատելի աշխուժություն:

Մամուլը: Հետհեղափոխական առաջին տարիները բեկունճային ժամանակաշրջան էին Ռուսաստանի տարածքում բնակվող հայության գրական-իրատարակչական գործունեության համար: Այդ տարիներին Ռուսաստանի տարբեր երկրամասերում գտնվող հայկական համայնքները թևակոխեցին երկրում ծավալվող ներքաղաքական խմորումների ժամանակաշրջան:

1916-1918 թթ. Մոսկվայում կյանքի կոչվեց «Արմյանսկի վեստնիկ» պարբերականը՝ Յ. Ամիրյանի և Ա. Ջիվեյեգովի ջանքերի շնորհիվ, որը շուտով դարձավ եզակի մամուլի օրգան, զարգացման նոր հարթության վրա դնելով հայ-ռուսական հասարակական, մշակութային-գրական կապերը: «Արմյանսկի վեստնիկ»-ը, փաստացիորեն, հանդիսանում էր 1914 թ. հիմնված Մոսկվայի հայկական կոմիտեի տպագիր օրգանը. «Լրագիրը, որ լույս էր տեսնում ամեն ամիս, հիմնադրվել էր ռուս ընթերցողին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին, Հայաստանի պատմությանը, Հայկական հարցին ծանոթացնելու նպատակով»³³²: «Արմյանսկի վեստնիկ»-ը իրատարակվեց ռուսերեն լեզվով, որը հնարավորություն ընձեռեց պարբերականի աշխատակիցների կազմում ընդգրկելու ռուսական գրական միջավայրի նշանավոր դեմքերի՝ Մ. Գորկուն, Վ. Բրյուսովին, Ա. Բլոկին, Ա. և Յու. Վեսելովսկիներին, Վ. Նեմիրովիչ-Ռանչենկոյին և այլոց: «Արմյանսկի վեստնիկի» ծառայություններից մեկը կայանում է հենց նրանում, որ նա հանդես եկավ, որպես հայ գրականության ու մշակույթի պրոպագանդիստ ռուսական միջավայրում³³³: «Արմյանսկի վեստնիկ»-ն իր ողջ

³³² Նույն տեղում:

³³³ Արշարունի Ա., Մոսկվայի հայ մամուլը, Ե., 1971, էջ 253:

գոյության ընթացքում մեծ ուշադրություն դարձրեց հայ գրական արժեքները ռուսերեն լեզվով ներկայացնելու գործին, ուստիև բոլոր համարներն էլ լույս տեսան հայ գրական երկերով. «Երկու հարյուր գրական գործ տպագրվեցին շաբաթաթերթում, մեծ մասամբ չափածո գրվածքներ»³³⁴: Պարբերականը կարողացավ իր շուրջը համախմբել մտավորական անվանի ու կարող ուժերի, լուսաբանել հայ ազգային կյանքի հրատապ հարցեր: «Արմյանսկի վեստնիկ»-ի շուրջ ձևավորված մթնոլորտը հնարավորություն տվեց թերթի էջերում լայնորեն արծարծելու հայ կյանքի բազմաթիվ խնդիրներ, հայ իրականության և ապագայի, պատերազմի հետևանքների հաղթահարման հիմնահարցեր: Նախևառաջ, պատմական, մշակութային և գրական հողվածակներ կրկններ հրապարակվեցին հայ ժողովրդի պատմության փառավոր էջերի վերաբերյալ, որոնք ռուս հանրությանը մոտիկից էին ներկայացնելու այն ժողովրդի անցյալին, որի բախտն ու ֆիզիկական գոյության ճակատագիրն օրակարգի հարց էր դարձել:

Խորհրդահայ անդրանիկ պարբերականը՝ «Կոմունիստ»-ը, հրատարակվել է Մոսկվայում 1918- 1919 թթ. և հանդիսանում էր ՌԽՖՍՀ Ազգությունների ժողկոմատին առընթեր Հայկական Գործերի Կոմիսարիատի օրգանը:

«Կոմունիստ»-ի 47 աշխատակիցների թվում էին Վ. Տերյանը (խմբագիր), Ալ. Մյասնիկյանը, Պ. Մակինցյանը, Զ. Բժշկյանը, Ա. Կարինյանը, Զ. Հակոբյանը: Շաբաթաթերթը քաղաքական պարբերական էր, որը հիմնականում տպագրում էր խորհրդային կառավարության դեկրետները, հայաստանյան և միջազգային իրադարձություններին նվիրված տեղեկատվություն:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին՝ 1918-1919 թթ., Մոսկվայում հրատարակված երկրորդ պարբերականը «Կարմիր դրոշակ»-ն էր, «Կոմունիստ»-ի անմիջական հաջորդը՝ գրեթե միևնույն աշխատակազմով: «Կոմունիստ»-ը Կոմիսարի

րիատի օրգանն էր, իսկ «Կարմիր դրոշակ»-ը՝ հայ կոմունիստների մամուլի օրգանը: Հասարակական-քաղաքական այս պարբերականի առաջին համարի առաջնորդող հողվածը կրում էր «Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն» վերնագիրը, թեև հրատարակիչը Հայկական Գործերի Կոմիսարիատն էր: «Կարմիր դրոշակ»-ը հրատարակվեց 1919 թ.: Թերթի (լույս է տեսել 16 համար) խմբագիրն էր Ա. Կարինյանը³³⁵, իսկ աշխատակիցների թվում էին Վ. Տերյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Հայկունին, Զ. Բժշկյանը, Վ. Ավանեսովը: «Կոմունիստ»-ին և «Կարմիր դրոշակ»-ին չհաջողվեց թղթակիցների լայն ցանց ստեղծել ու ապահովել մշտական տեղեկատվություն, ինչը պայմանավորված էր Ռուսաստանի քաղաքական իրողություններով՝ երկրի հաղորդակցության խափանումներով: Մոսկվայի բոլշևիկյան հայ մամուլի հիմնական խնդիրներից էր Ռուսաստանի հայաբնակ վայրերում առաջացած կոմունիստական մամուլին ուղղություն տալը:

Պյատիգորսկում 1918 թ. հրատարակվել է «Կարմիր օրեր»-ը, իսկ 1919 թ. Աստրախանում՝ «Կարմիր բանվոր»-ը³³⁶: Ավելի ուշ՝ 1920-1921 թթ., Կրասնոդարում լույս տեսան բոլշևիկյան հայ մամուլի ևս երկու օրգաններ՝ «Բանվորի ձայնը»-ը և «Կարմիր աստղ»-ը:

Արմավիրում առաջին պարբերականին՝ «Կարիք»-ին, որը կարճ ժամանակով լույս տեսավ 1917 թ., հաջորդեց 1918 թ. կրկին կարճ ընթացք ունեցած բոլշևիկյան «Բանվորի ձայն»-ը. «Արմավիրում խորհրդային իշխանության հաստատումից հետո, 1920 թ. թերթը կրկին սկսում է լույս տեսնել, որպես ՌԿ/ԲԿ Արմավիրի հայկական սեկցիայի օրգան: Թերթի խմբագիրն էր Արշակ Երտևյանը»³³⁷:

1920 թ. Արմավիրում հրատարակվում է նաև «Բանվորի

³³⁵ Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 502:

³³⁶ Արշարունի Ա., նշվ. աշխ., էջ 293:

³³⁷ Погосян Л., նշվ. աշխ., էջ 170:

կարիք» շարաքաթերթը (խմբ. Գ. Վեքիլյան), իսկ 1924 թ. «Աշխատանքի ճանապարհ» օրաթերթը, որը հանդիսանում էր կուսակցության Արմավիրի հայկական սեկցիայի օրգանը. «1918-1921 թթ. Խորհրդային Ռուսաստանի տարբեր քաղաքներում հրատարակվում էին 19 հայկական թերթեր»³³⁸:

Այս շրջանի խորհրդահայ պարբերական մամուլն արտացոլեց հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող պայքարը՝ արտահայտելով կուսակցական-գաղափարական գիծը, միևնույն ժամանակ ունենալով նաև իրենց խոցելի կողմերը, որոնցից առավել նկատելի էր նաև հայ (նաև հայաստանյան, կովկասահայ) իրականությունից կտրված լինելը:

Առաջին աշխարհամարտի տարիներին ռուս հասարակությանը հայ իրականության հետ ծանոթացնելու, պատերազմի հետևանքով հայությանը հասցված արհավիրքները լուսաբանելու համար Օդեսայում հրատարակվում է հասարակական-քաղաքական, գրական ամսագիր «Армяне и Война» անունով:

Ամսագիրը հրատարակվել է 1916-1917 թթ., լույս են տեսել ամսագրի ընդամենը 12 համար: Առաջին իսկ համարում ամսագրի խմբագիր-հրատարակիչ Ա. Ունանովն ընդգծում էր. «Մեր ամսագրի գլխավոր և հիմնական նպատակը ռուս և հայ մտավորականությանը հայ իրականության հետ լայնորեն ծանոթացնելն է»³³⁹: Ամսագրի ընթերցողների շրջանակը բավական լայն էր, որին բաժանորդագրվում էին Մոսկվայում, Պետրոգրադում, Սամարայում, Կիևում, Խարկովում, Դոնի Ռոստովում, Իրկուտսկի նահանգում (գ. Ինոկենտևսկոյե), ինչպես նաև Անդրկովկասում՝ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում ևն. «...ամսագրի մեծ մասը տարածվում էր Ռուսաստանի հարավի հայկական գաղթօջախներում»³⁴⁰: Ամսագրի կայացմանն ու աշխատանքներին ներգրավվել էին հայ և ռուս հայտնի հրապարակախոսներ,

³³⁸ Սույն տեղում:

³³⁹ Армяне и Война, Одесса, 1916, N 1, с. 2.

³⁴⁰ Բանբեր Հայաստանի արխիվների, №3 (18), 1967, էջ 282:

գրականագետներ, հասարակական գործիչներ՝ Վ. Բրյուսովը, Յ. Վեսելովսկին, Գ. Չալխուշյանը, Մ. Բերբերյանը, Մարիետա Շահինյանը և այլք:

Ս. Գազիևը մատնանշում էր այն դժվարություններն, որ կրում էր խմբագրությունը. «Հիանալի հասկանալով, որ մենակ տանել այդպիսի դժվար գործը ուժերից վեր է և Օդեսայում չունենալով ոչ մի հայ աշխատակից, ես դիմեցի Կովկասի շատ հայ հրապարակախոսների, գրականագետների և հասարակական գործիչների՝ խնդրելով համագործակցություն: ...Ստիպված էի դիմել անցանկալի արտասպումների ուրիշ մամուլի միջոցների հետաքրքիր նյութերի, որոնք վերաբերում էին հայությանը՝ կապված պատերազմի հետ»³⁴¹:

Ամսագրի տարբեր համարներում ներկայացվել է տարածաշրջանի հայկական կոմիտեների (Օդեսա, Ակկերման, Սիմֆերոպոլ, Յալթա) ստեղծումն ու գործունեության որոշ դրվագներ:

Օդեսայում 1918-1920 թթ. հրատարակվել է «Հոսանք» գրական, հասարակական-քաղաքական թերթը, որը խմբագրում էր Հ. Բաղդասարյանը: Թերթն իր առջև նպատակ էր դրել վերհանել Օդեսայի հայ համայնքի կյանքի և հասարակական-քաղաքական իրողությունները. «Ճշգրիտ տեղեկություններ տալ մեր գաղութին ընդհանուր քաղաքական եւ մանաւանդ ազգային իրադարձի եւ դրութեան մասին, շիտակ եւ անաչառ կերպով լուսաբանել հասարակական, ազգային ինչպէս նաեւ տեղական բնոյթ ունեցող կարեւորագոյն խնդիրները»³⁴²:

Թերթը ներկայացնում էր, որ Օդեսայում կենտրոնացել էին հազարավոր հայ փախստականներ Ռումինիայից, Բուլղարիայից, Արևմտյան Հայաստանից, Թուրքիայից, հարյուրավոր նախկին հայ ռազմագերիներ, ովքեր մտադիր էին անցնել Հայաստան և օգնություն էին հայցում:

Թերթի «Տեղական կյանք» բաժնում շոշափվել են գաղութի

³⁴¹ Армяне и Война, 1917, N 11-12, с. 158.

³⁴² «Հոսանք», Օդեսա, 1918, № 1, էջ 1:

ամենահրատապ խնդիրները՝ ինչպիսիք են տեղի հայ հասարակական հիմնարկների գործունեությունը, գաղթականության և ռազմագերիների հարցերը, հայկական հյուպատոսարանի գործունեությունը, համայնքային կառույցի ձևավորման ընթացքը և այլն:

«Ներքին տեսություն» բաժինն, արտացոլելով ոչ միայն գաղութահայ կյանքի անցուդարձն, առանձնանում էր «Մեր կարիքները», «Մեր ցաւերից», «Հայութեան ապագայնացումը» հողվածաշարերով, ուր ներկայացվում էր գաղութահայ կառույցների գործունեությունը:

Լուրջ խնդիրների շարքում «Հոսանք»-ն առանձնացնում էր Օդեսայում կուտակված գաղթականության խնդիրների լուծումը. «...սուր կարիքը, որ աչքի է զարնում իւր քանակով և որակով՝ դա Օդեսայի հայ գաղթականութիւնն է, աւելի ուղիղ՝ նրա չքաւոր մասը: Երկու տարի անցաւ արդէն այն օրից, երբ հայ գաղթականները Ռումանիայից մեծ և փոքր խմբերով եկան Օդեսա, ոմանք անմիջապէս առաջ գնացին Ղրիմ, Նախիջևան, իսկ մեծ մասը մնաց Օդեսայում: Դժար և ծանր էր նրանց վիճակը սկզբում ոչ լեզու գիտէին, ոչ քաղաքին ծանօթ էին, ոչ օրէնքներին և ոչ սովորութիւններին: Սոսկալի ծմեռն էլ չափից դուրս շատ զոհեր տարաւ»³⁴³:

«Հոսանք»-ի 1919 թ. մարտի 15-ի համարից հստակորեն տեղեկանում ենք Օդեսայում նոր ռուսալեզու հայ թերթի հրատարակության մասին. «Այսօր լոյս է տեսնում տեղումս ռուսերէն լեզուով «Վեստնիկ Արմենիի» հայ թերթը, որ ամբողջապէս նւիրւած է լինելու հայ ժողովրդի և Հայաստանի շահերին»³⁴⁴:

Օդեսայում խորհրդային կարգերի հաստատումով եզրափակվեց ազգային-համայնքային կյանքի փոքր-ինչ ակտիվացած ընթացքը: Շնորհիվ «Հոսանք»-ի լրջորեն լուսաբանվեցին ոչ

միայն Օդեսայի, այլ նաև հարակից հայ գաղութների և համայնքների իրական պատկերը:

Դռնի հայ գաղութում գրական-մշակութային և հասարակական-քաղաքական մտքի զարգացումը նոր լիցքեր ստացավ հանձին «Հայ Համայնք» շաբաթաթերթի: «Հայ Համայնք» շաբաթաթերթը խմբագրեցին Դռնի հայ գաղութի նշանավոր դեմքեր Ե. Շահագիզն ու Ռ. Բերբերյանը: «Հայ Համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը տպագրվում էր Ս. Ավագյանի տպարանում 1918-1920 թթ.³⁴⁵: Թեև շաբաթաթերթի կարճատև գոյության շրջանին, ձևավորվեց ազգային-համայնական մամուլի օրգան, որն առանձնահատուկ դեր ունեցավ գաղութի կյանքում՝ դառնալով Ռուսաստանի հարավի հայության խոշոր և ազդեցիկ պարբերականը:

«Հայ Համայնք»-ն արժարժում էր ամենատարբեր խնդիրներ և իր էջերում առանցքային տեղ էր հատկացնում Համայնական խորհրդի և Վարչության գործունեության լուսաբանմանը, տեղական կյանքի անցուդարձին, կովկասյան իրականությանը, հայ գաղթականության խնդիրներին, Ռուսաստանի տարբեր հայ գաղթօջախների կյանքին, մշակութային-կրթական խնդիրներին:

Համայնական կառույցների գործունեության լուսաբանմանը նվիրված բաժինը հաճախակի վերնագրված էր «պաշտօնական»՝ ընդգծելով շաբաթաթերթի՝ Համայնական կառույցների օրգան լինելու հանգամանքը: Այս բաժնում մանրակրկիտ ներկայացված էր նաև Համայնական խորհրդի և նրա ֆրակցիաների դիրքորոշումը համայնքային կյանքի տարբեր ոլորտների ու խնդիրների առնչությամբ: Համայնական խորհրդի նիստերի լուսաբանման նշանակությունն ավելի մեծ էր, քանի որ այն տարածաշրջանում ազդեցիկ հայկական կառույց էր, որի հետ շատ ազգային խնդիրների լուծումը կապում էր նաև նորանկախ ՀՀ-ն: «Հայ Համայնք»-ի 1918 թ. հուլիսի 22-ի համարում ներկա-

³⁴³ Նույն տեղում, № 12, էջ 1:

³⁴⁴ Նույն տեղում, № 37, էջ 4:

³⁴⁵ Հայ պարբերական մամուլը. Համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Բաբլոյան Մ., Ե., 1986, էջ 116:

յացված էր Համայնական Խորհրդի նիստերից մեկի օրակարգն ուր քննարկվել են համագործակցության առաջարկներ. «1918 թ. յուլիսի 8-ին կայացաւ Նոր-Նախիջևանի Հայ Համայնական Խորհրդի նիստը: Նախագահուն էր Ռ. Բերբերյանը: Ներկայ են 35 պատգամավոր: Նախագահը ժողովը բանալով յայտարարում է որ Ուկրայնական կառավարութեան կից Հայաստանի կոմիսարիատի ներկայացուցիչ Ա. Տօնեան, որ ներկայումս այստեղ է կոմիսարիատի նախաձեռնութեամբ առաջարկում է յուլիսի 10-ին Համայնական Խորհրդի ժողովարանում գումարել մի համագումար, որտեղ պիտի մասնակցեն Ուկրայնայի, Ղրիմի, Դոնի և Մոլդաւիայի հայ կազմակերպութիւնների ու կոմիտէների ներկայացուցիչներ՝ վճռելու մի շարք կարևոր հարցեր, որոնք վերաբերում են թէ վերոյիշեալ պետութիւնների մէջ ապրող հայերի ազգային կազմակերպութիւններին և թէ նորակազմ Հայկական պետութեան ներքին կազմակերպութեան»³⁴⁶:

«Հայ Համայնք»-ն իր «Տեղական կյանք» բաժնում լուսաբանում էր Նոր Նախիջևանում և Դոնում գործող բազմաթիվ հայկական կազմակերպությունների, կոմիտեների, հոգաբարձությունների գործունեությունն ու դրանց հաշվետվությունները: Թերթի «Գյուղական կյանք» բաժնում տեղ էին գտնում Դոնի հայկական գյուղերի ընթացիկ կյանքը, հայ գյուղացու առօրեական խնդիրները:

«Հայ Համայնք»-ի համար կարևոր նախապայման էր իր էջերում չճշտված տեղեկատվության հրապարակումը, ինչից խուսափում էր խմբագրությունը. «Հրապարակի վրայ գտնուող թերթերին որքան էլ թոյլատրելի լինի այս և այն պատահական ստացած լուրերը տպել, այդ բանը թոյլատրելի չէ համայնքի պաշտօնական օրգանին»³⁴⁷: Նման մոտեցումը, որ ցուցաբերում էր «Հայ Համայնք»-ի խմբագրությունը, խոսում է նրա լրջմիտ գործելաոճի և պատասխանատվության գիտակցման մասին,

ինչը միայն դրական կողմերով կարող է բնութագրել այս օրգանին:

Գաղթականության խնդիրը «Հայ Համայնք» շաբաթաթերթի էջերում զբաղեցրել է առանցքային տեղ, քանի որ այն հանդիսանում էր հրատապ լուծումներ պահանջող և խիստ արդիական քեմա: «Հայ համայնք»-ի բոլոր համարներում էլ մեծ տեղ է զբաղեցրել հայ գաղթականության հոգսերը թեթևացնելուն ուղղված կոչերը: Շաբաթաթերթը լուսաբանել է նաև Վրաստանի և Ադրբեջանի վերաբերմունքը դեպի հայ գաղթականները, ինչպես նաև նրանց փրկելու «արինաժոր» Հայաստանի քայլերը: «Հայ Համայնք»-ի կողմից գաղթականության խնդիրը մշտապես ուշադրության կենտրոնում ունենալու շնորհիվ, հնարավոր է որոշակիորեն խոսել ոչ միայն նրանց տեղաբաշխման շրջանների, այլ նաև գաղթի հիմնական ուղղությունների և թվի, տեղերում ձեռնարկված օգնության վերաբերյալ:

Դոնի հայ գաղութի և նրա կյանքի լուսաբանումից բացի, «Հայ Համայնք»-ը հաճախակի է անդրադարձել տարբեր համայնքների հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Այդ տեղեկատվությունն առավել հաճախ էր Դոնին մոտ գտնվող հայաբնակ տարածաշրջաններից՝ Կուբանից, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից, Ղրիմից, Ուկրաինայից և այլն:

Հատկանշական է, որ վերոհիշյալ տարածաշրջաններում գործող հայկական կառույցներն ու հիմնարկներն իրենց գործունեության դաշտի և ուղղությունների վերաբերյալ հրահանգավորվում էին Ռոստովից կամ Թիֆլիսից, ինչն էլ հեշտացնում էր նրանց ձեռնարկումների լուսաբանումը «Հայ Համայնք»-ի էջերում: Այսպես, շաբաթաթերթը լուսաբանելով Ղրիմի հայությանը, ազգային խնդիրներով մտահոգվելու առթիվ, գրում է. «Հունւար 13-ին Սիմֆերոպոլում գումարեց Տաւրիկեան (բացի Ղրիմից նաև 3 գավառները մասնակցում էին, որ հիմա Ուկրաինային էին անցել) նահանգի հայկական հերթական (վերջինը

³⁴⁶ Հայ Համայնք, 1918, հ. 11, էջ 137:

³⁴⁷ Նույն տեղում:

1917 թ. դեկտ. 18-ին) համագումարը: Համագումարը գտաւ, որ ազգի դրութիւնը «շատ փափուկ է և վտանգի ենթակայ»³⁴⁸: Շաբաթաթերթն իր հաջորդ համարներում ևս անդրադարձել է դրիմահայերի համագումարին, ներկայացնելով նրան հաջորդած գործնական քայլերը. «Կոմիտէներ հիմնեցին Տաւրիկի հետևեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում՝ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Եալթա, Սուդակ, Եւպատորիա, Ղարասուբազար, Ջանկոյ, Հին-Ղրիմ, Սուբաշի, Կերչ, Թեոդոսիա, Արմեանսկ և Մելիտոպոլ»³⁴⁹:

«Հայ Համայնք» շաբաթաթերթը բազմաթիվ հրապարակումներ է նվիրել Դոնի և մյուս հայ գաղթօջախների մշակութային-կրթական, ազգային լեզվի պահպանման հրատապ խնդիրներին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թերթի էջերում տպագրված Երվանդ Շահագիզի «Հայերն ու Վրացիները» հոդվածաշարը, որը բացահայտում էր երկու հարևան ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունները ժամանակակից փուլում: Ե. Շահագիզն իրավամբ գրում էր, որ հայերն իրենց լավագույն ներկայացուցիչների բերանով բազմիցս նշել են և քարոզել կովկասյան ազգերի համերաշխության գաղափարը, թեև մահմեդականների հետ պատմական հանգամանքների բերումով հաշտ լինել չէին կարող. «...բայց ընդհանրապես մեղմ դիրք են բռնել (հայերը-Հ.Ա.) և հատեցուցիչ եղանակ ընտրել, միշտ աչքի առաջ ունենալով Կովկասում ստեղծւած ազգերի փոխարաբերութեան փափուկ վիճակը, որ այդպիսի վէճերից ու բանակռիւներից կարող էր չարաչար փորձութիւնների հանդիպել»: Այսպիսով, Ե Շահագիզը նշում էր, որ հայերի հանդեպ վրաց պետական շրջանակների քայլերն ուղղված էին քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում մեծ դիրքերի հասած Վրաստանի մեծաթիվ հայ ազգաբնակչության թուլացմանն ու աստիճանական դուրս մղմանը երկրից. «Վրաս-

տանը անկախ հասարակապետութիւն հրատարակելով իրան, կազմում է իւր կառավարութեան դահլիճը որը հենց առաջին քայլերից ցոյց է տալիս այնպիսի թթու ազգայնական շովէն ու հակադեմոկրատիք գործունէութիւն, որ զարմացնում է բոլոր շրջանները: ...վրացիք դէն ձգելով իրանց երեսից կեղծ սոցիալ-դեմոկրատութեան դիմակը, դուրս են գալիս ասպարէզ իբրև զուտ վրացի ազգային գործիչներ հակահայ և հակառուս գործելակերպով»³⁵⁰:

«Հայ Համայնք» շաբաթաթերթի գործունէությունը ծանրակշիռ ներդրում էր ոչ միայն Դոնի հայ գաղթօջախի, այլ նաև ամբողջ Հարավային Ռուսաստանի հայության հոգևոր-լուսավորական, հասարակական-քաղաքական մտքի զարգացման ասպարեզում: Կյանք մտնելով բարդ ու ցնցումներով լի ժամանակաշրջանում, «Հայ Համայնք»-ն իր կարճատև գոյության ընթացքում ստանձնեց և պատասխանատվությամբ կրեց իրեն բաժին ընկած լուրջ դերա-կատարությունը՝ շարունակելով Դոնի հայ մամուլի հարուստ ավանդույթները, սակայն իր մեջ ամփոփելով ժամանակի շունչն ու ազատ միտքը: «Հայ Համայնք»-ը մյուս հայ պարբերական մամուլի օրգանների շարքում ունեցավ իր ուրույն տեղն ու ձեռագիրը, սակայն, ինչպես մյուս հայկական համայնքային պարբերականները, 1920-ականների սկզբին դադարեց գոյություն ունենալ. ազդարարված էր Դոնի խորհրդահայ մամուլի ժամանակը:

ՌԽՖՍՀ հարավում հայ պարբերական մամուլն անգամ հետհոկտեմբերյան շրջանում (1917-1920 թթ.) կարողանում էր ազգային խնդիրներ վեր հանել՝ անկախ իր քաղաքական հայացքներից: Խորհրդային իշխանության ամրապնդումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց, եկել էր խորհրդահայ մամուլի ժամանակը. «Այլ կերպ դասավորվեց պարբերական մամուլի ճակատագիրը նոր իշխանության օրոք: Հայ պարբերական մամուլն ազգային էր միայն իր լեզվական կատարումով, սակայն

³⁴⁸ Նույն տեղում, հ .9, էջ 114 :

³⁴⁹ Նույն տեղում, հ.11, էջ 140:

³⁵⁰ Նույն տեղում, հ.23, էջ 331:

ոչ իր բովանդակությամբ: Նույնիսկ համեմատաբար լիբերալ 20-ական թթ. անցանկալի էր համարվում «ազգային մշակույթի» մասին հիշատակումը: Որպես կանոն, 1917 թվականից հետո հայկական թերթերը Մյասնիկովսկի ազգային շրջանի հայկական կուսակցական սեկցիաների պաշտոնական օրգաններն էին»³⁵¹:

Այս ժամանակաշրջանում հայ պարբերականներ են տպագրվել Դոնի, Հյուսիսային Կովկասի, Կուբանի հայկական կենտրոններում. «1918-1922 թթ. թերթեր են հրատարակվել երկրի հարավում «Կարմիր օրեր»-ը՝ Պյատիգորսկում, «Բանվորի ձայն»-ը՝ Արմավիրում, «Կարմիր աստղ»-ը՝ Կրասնոդարում, «Բանվորի կռիվ»-ը, «Խարիպկիթ»-ը և «Բանվոր»-ը՝ Նոր Նախիջևանում»³⁵²:

1922-1925 թթ. Հյուսիսային Կովկասի հայկական պարբերական մամուլի համար դադարի տարիներ էին, որն անսովոր էր շուրջ 200.000 հայ բնակչություն ունեցող տարածաշրջանի համար: 1920-ական թթ. կազմակերպվեց Հյուսիս-Կովկասյան երկրամասը, խորհրդային իշխանություններն աստիճանաբար գիտակցեցին նման մեծաթիվ ազգային փոքրամասնություն շրջանում գաղափարական աշխատանքի անհրաժեշտությունը, որն առանց մամուլի միջոցների ցածր արդյունավետություն էր ունենալու: Երկրամասի հայ պարբերականների հրատարակության վերականգնման ուղղությամբ առաջին քայլերն իրականացրեցին հայկական կուսակցական սեկցիաները. «1925 թվականի փետրվարին հայկական կուսակցական սեկցիան ՀամԿ/Բ/Կ երկրային կազմակերպության առջև հարց դրեց իր տպագրական օրգանի հրատարակության մասին: Սեկցիան ոչ քիչ դժվարություններ հաղթահարեց, մինչև որ աշնանը լույս տեսավ «Մուրճ-

Մանգաղ» նոր թերթի առաջին համարը»³⁵³: Մյասնիկյանի ազգային շրջանի կազմակերպումով, «Մուրճ-Մանգաղ» թերթը դարձավ շրջկոմի և կուսակցիայի միասնական մամուլի օրգանը: Դոնի Ռոստովում 1931-1937 թթ. հրատարակվեց «Գրոհ» թերթը, որպես Համկոմկուսի Հյուսիսային Կովկասի երկրկոմի, ապա ՀամԿ/Բ/Կ Ազով-Սևծովյան երկրկոմի օրգան՝ հանդիսանալով «Մուրճ-Մանգաղ»-ի շարունակությունը³⁵⁴: Հետաքրքրական է, որ «Գրոհ» թերթն ուներ նաև նույնանուն հավելվածը կիսագրագետների համար, որը տպագրվել է 1931-1933 թթ.: հանդիսանում էր Ազով-Սևծովյան երկրամասի Լուսժողխորհի և «Կորչի անգրագիտությունը» ընկերության օրգանը³⁵⁵: «Մուրճ-Մանգաղ»-ի և «Գրոհ»-ի անմիջական շարունակությունը հանդիսացավ «Բուլշևիկ»-ը, որը տպագրվեց 1937-1938 թթ. Դոնի Ռոստովում դառնալով նոր ձևավորված ՀամԿ/Բ/Կ Ռոստովի մարզկոմի օրգանը: Տարբեր անվանումներով և հրատարակչական կուլեկտիվի գրեթե նույն կազմով Դոնի Ռոստովում հանդես եկած այս պարբերականը, Անդրկովկասից դուրս ամենազանգվածային ու փորձառու հայ օրգանն էր 1920-1930-ական թթ.:

«Բուլշևիկ»-ն իր էջերում մանրակրկիտ ներկայացնում էր Դոնի և Հյուսիսային Կովկասի հայության կյանքի ամենատարբեր կողմերը՝ դպրոցը, մշակութային-գրական կյանքը, հայ գյուղացուն և բանվորին, հայ կուսակցական և կոմերիտական կազմակերպություններին ևն: Թերթի էջերում լայնորեն քննարկվել է Մյասնիկյանի և Հայկական ազգային շրջանների սոցիալ-տնտեսական, կուսակցական-վարչական ղեկավարման խնդիրներն ու հաջողությունները:

1938 թ., բռնությունների լայն ալիքի շրջանում, դադարեց թերթի աշխատանքը: Այս ալիքի հորձանուտում հայտվեց նաև Չալթրում 1931-1941 թթ. հրատարակվող՝ ՀամԿ/Բ/Կ Ռոստովի

³⁵¹ Акопян В., К истории национальной периодической печати Северного Кавказа в 20-е годы (армянская газета "Мурч Мангак"), Тезисы научной конференции: Армяне на Дону и Северном Кавказе, Ростов-на-Дону, 1993, с. 25.

³⁵² Նույն տեղում:

³⁵³ Նույն տեղում:

³⁵⁴ Հայ պարբերական մամուլը. Համահավաք ցուցակ (1794-1980), նշվ. աշխ., էջ 188:

³⁵⁵ Նույն տեղում:

մարզի Մյասնիկյանի շրջկոմի, շրջգործկոմի և շրջպրոֆխորհրդի եռօրյա օրգանը՝ «Կոմունար»-ը: «Բոլշևիկ»-ն իր 1937 թ. հուլիսի 21-ի համարում գրում էր «Կոմունար»-ի խմբագրակազմի վերաբերյալ կուսժողովի իրականացրած «բացահայտումների» մասին. «...առանձնապես կանգ են առնում ռայկոմի նախկին կուլտպրոպաժվար և ներկայիս «Կոմունար» թերթի խմբագիր Ռհանյանի քայքայիչ գործունեության վրա»³⁵⁶:

Հայ կյանքի բազմաթիվ կողմերն արտահայտող «Բոլշևիկ»-ը հասու էր Դոնի, Հյուսիսային Կովկասի և Միության տարբեր կենտրոնների հայ իրականությանը: Այս տարածաշրջանում 1930-ական թթ. հրատարակվող խորհրդահայ մամուլի միջոցներից էին Տուսպետում 1932 թ. հրատարակվող «Գրոհ»³⁵⁷-ը (խմբ.՝ Հ. Առաքելյան), որն ունեցավ հրատարակված 32 համար և հանդիսանում էր ՀամԿ/ԲԿ Հյուսիսային Կովկասի երկրկոմի Առջու Հայկական շրջանի հրատարակություն՝ հատկապես միտված ծխախոտագործության զարգացմանը: 1940-1953 թթ., Կրասնոդարում ընդհատումներով լույս է տեսել «Կոմունար»-ը՝ Կրասնոդարի երկրամասի Հայկական շրջկոմի և շրջխորհրդի (գյուղ Շահունյան) օրգանը:

Տեղերում հրատարակվող խորհրդահայ մամուլն արտացոլել է հայ համայնքների պատմության առանցքային դրվագներ, որոնց ներկայուցումն ու վեր հանումն ունի կարևոր պատմաքաղաքական և արդիական նշանակություն:

Այսպիսով, ռուսահայ մամուլն իր առանձնահատուկ դերակատարությունը շարունակեց հետհեղափոխական շրջանում և՛ արձանագրելով ձեռքբերումների մի նոր շրջան:

Հյուսիսային Կովկասի մի շարք հայաշատ կենտրոններում՝ Եկատերինոդարում, Արմավիրում, և այլն հրատարակվել են

³⁵⁶ Բոլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 71, էջ 2:

³⁵⁷ Հայ պարբերական մամուլը. Համահավաք ցուցակ (1794-1980), նշվ. աշխ., էջ 195:

հայկական այլ պարբերականներ, որոնք կարճատև գործունեությունից հետո դադարեցրել են հրատարակությունը:

Ռուսահայ համայնքների այս շրջանում հրատարակված մամուլը հստակորեն կարելի է բաժանել 1917-1920 թթ. փուլի, երբ նրանք հանդես էին գալիս որպես ազգային-համայնքային հիմնարկների պաշտոնաթերթեր և 1920-1941 թթ. փուլի, երբ խորհրդային հայ մամուլն արտահայտում էր գաղափարախոսության սկզբունքները, իշխող կուսակցության քաղաքական գիծը և զերծ էր ազգային նկարագրից:

ԳԼՈՒԽ 4. Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԽՖՍՀ-ում 1920-1989 թթ.

Առաջին աշխարհամարտը, Հայոց ցեղասպանությունը, 1917 թ. ռուսական հեղափոխությունն ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը, Ռուսաստանի տարբեր անկյուններում ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ փախստականների համար դարձան լրջագույն փորձությունների տարիներ:

Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրվեցին հայերի նոր զանգվածներով: ՌԽՖՍՀ-ում բնակվող հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, լեզուներին տիրապետելը, գրագիտության աստիճանն ու այլ գործընթացներ հանգամանորեն դիտարկվել են Խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. անցկացված մարդահամարներով: 1920-ական թթ. անցկացվել են 3 մարդահամարներ՝ 1920 թ. Համառուսաստանյան, 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային և 1926 թ. Համամիութենական մարդահամարները: 1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացվել են ևս երկու Համամիութենական մարդահամարներ՝ 1937 թ.³⁵⁸ և 1939 թ.: 1939 թ. մարդահամարը կազ-

³⁵⁸ 1937 թ. մարդահամարն անցկացվեց բարդ պայմաններում և նույն թվականի սեպտեմբերի 25-ին նրա արդյունքները հայտարարվեցին թերի, մարդահամարի կազմակերպումն՝ անբավարար: Իրականում այս մարդահամարի նյութերը «ծերբակալվեցին» և տասնամյակներ

մակերպված և նախապատրաստված էր, արդյունքում վեր հանվեց բնակչության և նրա էթնիկ կազմի վերաբերյալ պաշտոնական պատկերը 1930-ական թթ.:

1920 թ. Համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարը վիճակագրական արդյունքներ էր ներկայացրել ռուսաստանյան 44 նահանգներից (ընդամենը 48-ն էին): Հայ ազգաբնակչությունն առկա էր մարդահամարի արդյունքներն ամփոփած 44 նահանգներից 41-ում: Մարդահամարի արդյունքում Ռուսաստանում (առանց ինքնավար միավորների) արձանագրվել է 137.119 հայ, որոնց մեջ գերակշռում էին քաղաքաբնակները:

Աղյուսակ № 1

Հայերը Խորհրդային Ռուսաստանում ըստ 1920 թ. օգոստոսի 28-ի մարդահամարի

N	Ռուսաստան ³⁵⁹ , որից՝	ամբողջը	քաղաքաբնակ	գյուղաբնակ
		137.119	85.664	51.455
1	Կուբան-Չերնոմորիե	58.769	36.084	22.685
2	Դոն	42.562	19.868	22.694
3	Թերեք	24.736	19.481	5.255
4	Ստավրոպոլ	3.131	2.721	410
5	Աստրախան	2.709	2.631	78
6	Մոսկվա	2.162	2.113	49
7	մյուս 35 նահանգներում միասին	3.050	2.766	284

շարունակ պահվեցին արխիվներում: Մարդահամարն անցկացվեց գիտական նորմերի բացահայտ խախտումներով, քանի որ մամուլում, հրատարակված բրոշյուրներում և հանդեսներում արդեն նախանշվում էին մարդահամարի արդյունքները, ըստ որի սպասվում էին «բացառիկ հաջողություններ և հսկայական տեղաշարժեր» բնակչության թվի աճի, կրթության մակարդակի և գրագիտության, աթեիստական տրամադրությունների աճի կտրվածքով: ԽՍՀՄ քաղաքական ղեկավարության «պատվիրած» մարդահամարը վեր էր հանելու երկրի ժողովրդագրական պատկերի բուռն զարգացումը, որն անհամեմատ մեծ էր լինելու կապիտալիստական աշխարհում առկա արդյունքներից³⁵⁸ (Տես, Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, М., 1991, с 4-5):

³⁵⁹ Жизнь Национальностей, книга I, (VI), М., 1924, с. 32.

Հյուսիսկովկասյան երկրամասի՝ Կուբան-Չերնոմորիեի, Թերեքի, Ստավրոպոլի և Դոնի հայ ազգաբնակչությունը միասին կազմում էր 129.126 մարդ: Ռուսաստանում հոծ գյուղական հայ բնակչություն ունեցող շրջանները ևս գտնվում էին Հյուսիսային Կովկասում, մասնավորապես, Կուբան-Չերնոմորիեում և Դոնում:

Հյուսիսային Կովկասի էթնիկ խնդիրներով զբաղվող Վ. Բելոզերովն իրավամբ նշում է, որ արդեն 1920 թ. Կուբան և Չերնոմորիե նահանգների հայ բնակչության թվաքանակը համապատասխանաբար կազմում էր 45.3 հզ և 13.0 հզ, որոնցից 65.1 %-ը և 41.8 %-ը քաղաքային բնակիչներ էին³⁶⁰: Վ. Բելոզերովը, որպես առավել հոծ հայ համայնքներ նույն շրջանում, առանձնացնում էր նաև Մայկոպի, Եկատերինոդարի, Սոչիի և Տուապսեի շրջանները: Հեղինակը ճիշտ է նկատում, որ տարածաշրջան հայության իսկական հոսք սկսվել է 1894-1895 թթ., ապա նաև Թուրքիայում 1915-1916 թթ. և Անդրկովկասում 1918 թ. տեղի ունեցած հայության ջարդերից հետո, որոնց արդյունքում արդեն 1917 թ., ներգաղթային գործընթացներից հետո, Հյուսիսային Կովկասում ձևավորվել էր բազմամարդ հայկական գաղութ՝ կազմելով երկրամասի բնակչության 1.3 %-ը³⁶¹:

Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում հայության թվի կտրուկ աճը պայմանավորված էր հայ գաղթականների այստեղ կոմպակտ հաստատվելով. «Հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմը հանգեցրին դեպի Հյուսիսային Կովկաս զգալի ներգաղթային հոսքի: Գաղթականների հոսքը միայն Հյուսիսային Օսեթիա կազմեց ավելի քան 50 հզ մարդ, որոնցից մոտ 20 հզ հարավային օսեր էին... փախստական հայերը նախկին Կարսի մարզից և Թուրքիայից էին (մոտ 3800 ընտանիք): Հայերի տեղավորման հիմնական արեալը դարձավ Տուապսե-Խադի-ժենսկը, ուր նրանք, ստանալով հող, սկսեցին աճեցնել ծխախոտ և եգիպտացորեն, սակայն մի մասն էլ հաստատվեց ավելի հյու-

³⁶⁰ Белозеров В., նշվ. աշխ., էջ 49:

³⁶¹ Նույն տեղում:

սիս ընկած գյուղական վայրերում (Դոնի, Սալսկի, Թերեքի և Ստավրոպոլի օկրուգներում) կամ էլ քաղաքներում (Վլադիկովկասում, Արմավիրում, Մոզդոկում և Պրիկուսսկում)»³⁶²:

1920 թ. անցկացված մարդահամարն առաջինն էր 1920-ական թթ. և լուրջ տեղեկատվական հիմք դարձավ հաջորդ մարդահամարների անցկացման ժամանակ՝ հնարավորություն ընձեռելով հետևել ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններին Ռուսաստանում:

1923 թ. ԽՍՀՄ-ում անցկացվում է առաջին մարդահամարը, որն ընդգրկում էր միայն քաղաքային բնակավայրերը և պարունակում էր վիճակագրական տվյալներ ոչ միայն էթնիկ կազմի, սեռի, այլ նաև բնակչության զբաղվածության վերաբերյալ (ինքնագործ, ոչ ինքնագործ խմբեր):

ՌԽՖՍՅ-ն ուներ 125.794 քաղաքային հայ բնակիչ³⁶³, որից Կուբան-Չերնոմորիե նահանգում՝ 34.811, Դոնում՝ 17.208, Թերեքում՝ 17.762, Մոսկվայում՝ 4.634: Դրիմի ԻԽՍՅ-ում և Լեռնային ԻԽՍՅ-ում համապատասխանաբար բնակվում էին 6.875 և 7.587 հայեր:

ՌԽՖՍՅ քաղաքային հայ բնակչությունն, ինչպես երևում էր նախորդ մարդահամարից, գլխավորապես կենտրոնացած էր Յյուսիսային Կովկասի վարչատարածքային միավորներում, ուր ավանդաբար բնակվել է հոծ հայ ազգաբնակչություն: 1920 թ. մարդահամարն արդյունքների հետ համեմատած, 1923 թ. քաղաքային մարդահամարը արձանագրել է քաղաքաբնակ հայության աճ, ինչն, անշուշտ, միայն բնական աճի արդյունք չէր, այլ հետևանք էր նաև տվյալ վայրերում տասնյակ հազարավոր հայ փախստականների վերջնական հաստատման: Նրանց մի մասն էլ տեղաշարժվեց ՌԽՖՍՅ այլ նահանգներ՝ կտրուկ մեծացնելով տեղի հայության թիվը:

1923 թ. քաղաքային մարդահամարով առաջին անգամ վեր

հանվեց բնակչության զբաղվածության պատկերը, ինչի արդյունքում հնարավոր է դիտարկել աշխատանք, եկամուտ ունեցողների (ինքնագործ) թվաքանակը: ՌԽՖՍՅ քաղաքային հայ բնակչության 36,1%-ը ներկայացնում էր բնակչության ինքնագործ խումբը: Այս հարաբերակցությունն ավելի բարձր էր արական սեռի շրջանում կազմելով 56,4%:

1926 թ. Համամիութենական մարդահամարով ավելի ընդգրկվում ու համընդհանուր պատկեր է ներկայացվում բնակչության ոչ միայն էթնիկ կազմի, սեռի, տեղաբաշխման, այլ նաև մայրենի լեզվի, գրագիտության աստիճանի վերաբերյալ:

Աղյուսակ № 2

Հայերը ՌԽՖՍՅ-ում ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարի

	ամբողջը	արական	իգական	մայրենի լեզուն հայ. ռուս. այլ			գրագետ	գրագետ ազգ. լեզվով
ՌԽՖՍՅ ³⁶⁴ որից՝	195.410	101.069	94.341	170428	22823	2159	98.19 3	53.172
քաղաքաբնակ	116.157	59.564	56.593	94.270	20.09	1795	67.51 0	28.272
գյուղաբնակ	79.253	41.505	37.748	76.158	2.731	364	30.68 3	24.900
Չերնոմորիե	27.729	14.781	12.948	27.079	551	99	9.738	8153
Դոն	44.504	22.366	22.138	38.806	5552	146	25.00 7	15.941
Թերեք	21.423	10.733	10.690	20.056	1293	74	9.146	3739
Կուբան	21.023	10.953	10.070	18.438	2421	164	10.36 5	5488
Արմավիր	19.198	9.690	9.508	15.371	2850	886	9.401	3605
Մայկոպ	9.801	5.076	4.725	9.406	361	34	2.822	2067
Մոսկվա նահ.	6718	3662	3056	3927	2705	86	5907	2531
Դրիմի ԻԽՍՅ	10.713	5469	5244	8965	1730	18	6.431	3179
ք. Վլադիկովկաս	6529	3311	3218	5798	536	195	2935	1168
ք. Գրոզնի	5843	3066	2777	4793	965	85	2753	1538

³⁶² Նույն տեղում, էջ 55:

³⁶³ Итоги Всесоюзной городской переписи 1923, ч. IV, М., 1927, с. 33.

³⁶⁴ Всесоюзная перепись населения 1926 года, Российская Социалистическая Федеративная Советская Республика, М., 1929, с. 38.

Մարդահամարով արձանագրված ՌԽՖՍՀ 195.410 հայազգի բնակիչները գլխավորապես կենտրոնացած էին Դոնի, Չերնոմորիեի, Թերեքի, Կուբանի, Արմավիրի, Մայկոպի և Ստավրոպոլի (2.237 մարդ) օկրուգներում:

1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարը ցույց տվեց ՌԽՖՍՀ-ում բնակվող հայության իրական թվաքանակն ու տեղաբաշխման շրջանները: Հյուսիսկովկասյան երկրամասի բոլոր նահանգներն ու ինքնավար հանրապետությունները հայաբնակ էին: Հյուսիսային Կովկասի հայությունը միասին կազմում էր 168.109 մարդ (որից՝ Դաղստանի ԻԽՍՀ-ում՝ 5923 հայ): Հյուսիսային Կովկասի և Դոնի հայ բնակչությունը միասին կազմում էր ՌԽՖՍՀ ամբողջ հայ բնակչության 86%-ը:

ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության մոտ 87 %-ի համար հայերենը հանդիսանում էր իր մայրենի լեզուն, իսկ 11,6%-ի համար դա ռուսերենն էր (մնացյալը նշել են մեկ այլ լեզու): Գրագետ էր ՌԽՖՍՀ հայության մոտ 50%-ը, իսկ վերջիններիս կեսից ավելին գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Հայերենն իր մայրենի լեզուն էր համարում Չերնոմորիեի օկրուգի հայ ազգաբնակչության 97,6%-ը, որն ամենաբարձր ցուցանիշն էր ՌԽՖՍՀ-ում: Արդեն 1920-ական թթ. ՌԽՖՍՀ-ում կային հոծ հայ բնակչություն ունեցող քաղաքներ, որոնց գերակշիռ մասը գտնվում էր Հյուսիսային Կովկասում և Դոնում: ՌԽՖՍՀ քաղաքային հայ բնակչության թիվը 116.157 էր, գյուղականը՝ 79.253:

Այսպես, ամենամեծ թվով քաղաքային հայ բնակչություն ուներ Ռոստով-Նախիջևանը՝ 17.592, ապա Արմավիրը՝ 13.768, Կրասնոդարը՝ 13.469, Մոսկվան՝ 6.369 մարդ: Ստվար քաղաքային հայ բնակչություն ունեին Նովոռոսիյսկը՝ 4.122, Պյատիգորսկը՝ 4.294, Պրիկումսկը՝ 4.924 և Դզլարը՝ 3.156: Մեծաթիվ հայություն էր ապրում նաև ինքնավար քաղաքներ Վլադիկովկասում և Գրոզնիում:

Քաղաքաբնակ հայերը մեծ թիվ էին կազմում նաև Հյուսիսային Կովկասի մի շարք այլ վայրերում՝ Կիսլովոդսկում, Կրոպոտ-

կինում, Սոզոկում և այլն. «Հյուսիսային Կովկասի խոշոր քաղաքներում, Կուբանում և Ստավրոպոլում հայերը երրորդն էին ռուսներից և ուկրաինացիներից հետո»³⁶⁵: Քաղաքային հայ բնակչությունն իր թվաքանակով երրորդն էր Արմավիրում (ամբողջ բնակչության 19 %-ը), Կրասնոդարում (8.6%-ը), Նովոռոսիյսկում (6.3 %-ը) և Պյատիգորսկում (7.9 %-ը): Թերեքի օկրուգի Պրիկումսկ և Դաղստանի Դզլար քաղաքներում հայերն իրենց թվաքանակով երկրորդն էին՝ կազմելով բնակչության համապատասխանաբար 31 %-ը և 33 %-ը: ՌԽՖՍՀ ամենահայաշատ քաղաք Ռոստով-Նախիջևանում հայերն իրենց թվաքանակով երկրորդն էին՝ կազմելով քաղաքի բնակչության մոտ 5.7 %-ը:

ՌԽՖՍՀ գյուղական հայ բնակչությունը ևս, գլխավորապես Հյուսիսային Կովկասում էր բնակվում և տեղաբաշխված էր երկրամասի, առանց բացառության, բոլոր վարչական միավորներում և օկրուգներում, բայց առանձնանում էին հոծ բնակչության մի քանի շրջաններ: Ամենահայաշատ գյուղական շրջանը Դոնի օկրուգի Մյասնիկյանի շրջանն էր, ուր բնակվում էր ամբողջ ՌԽՖՍՀ գյուղաբնակ հայության 30,3%-ը (24.059 մարդ): 1926 թ. Մյասնիկյանի շրջանն ուներ 6 գյուղխորհուրդ, 15 բնակավայր՝ 4434 տնտեսությունով: Դոնի օկրուգի բոլոր 11 գյուղական շրջաններում էլ առկա էր հայ բնակչություն. Դոնի գյուղաբնակ հայության թվաքանակի կտրվածքով երկրորդը Մեչետինսկի շրջանն էր, ուր բնակվում էին 1.064 գյուղաբնակ հայեր:

ՌԽՖՍՀ-ում հայ գյուղական բնակչության թվաքանակով երկրորդը Չերնոմորիեի օկրուգի Սոչիի շրջանն էր, ուր բնակվում էր 17.237 մարդ կամ օկրուգի գյուղական հայության 80%-ը, ստվար հայ բնակչություն ունեին Տուապսեի (2.081) և Անապայի (1.337) գյուղական շրջանները: Մայկոպի օկրուգի Արմյանսկի շրջանն ուներ 6218 գյուղական հայ բնակիչ, Բելորեչենսկի շրջանը՝ 1.109:

³⁶⁵ Терещенко А., նշվ. աշխ., էջ 5:

Կուրանի և Արմավիրի օկրուգներում գյուղական հայ բնակչությունը, գրեթե հավասարաչափ, տեղաբաշխված էր օկրուգների գյուղական շրջաններում: Կուրանի օկրուգի գյուղական հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ շրջաններում՝ Ուստ-Լաբինսկում 1.224 հայ, Գորյաչի-Կյուչում՝ 1.022, Սլավյանսկում՝ 891: Արմավիրի օկրուգում գյուղական հայությունը թվով ամենամեծն էր Կրասնոսկինի շրջանում՝ 703 մարդ: Թերեքի օկրուգում առանձնանում էր Ստեպնովսկի շրջանը, ուր բնակվում էին 3.717 գյուղաբնակ հայեր:

Դաղստանի ԻսՄՅ-ում բնակվող գյուղական հայությունը (1.036 մարդ) հիմնականում Կյուրինսկի շրջանի Ղարաբաղլի գյուղն էր ներկայացնում: Ղարաբաղլիի 135 տնտեսությունից 134-ը հայկական էր, 633 բնակչից 629-ը՝ հայ³⁶⁶:

Ուրբանիզացման մակարդակը բարձր էր նաև Ղրիմի հայության շրջանում՝ հասնելով 2/3-ի: Ղրիմի ամենամեծ թվով հայ բնակչություն ունեցող քաղաքը Սիմֆերոպոլն էր, ուր բնակվում էր 2.364 հայ կամ Ղրիմի հայության 22 %-ը: Ղրիմի մյուս հայաբնակ քաղաքներն էին Սևաստոպոլը՝ 875, Կերչը՝ 862, Յալթան՝ 789, Թեոդոսիան՝ 670, Ղարասուրբազարը՝ 401 հայ բնակիչներով: Մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր հայ բնակչություն ունեին նաև Եվպատորիա, Ջանկոյ, Յին Ղրիմ, Սուդակ, Արմյանսկ, Գուրգուֆ, Բալակլավա, Ալուպկա, Ալուշտա, Սակի, Բախչիսարայ քաղաքները:

Ղրիմի գյուղական հայ բնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր Թեոդոսիայի (1.092), Ջանկոյի (919), Ղարասուրբազարի (788) և Սիմֆերոպոլի (433) գյուղական շրջաններում:

Ղրիմի հայությունը սփռված էր թերակղզու բոլոր 10 շրջաններում անխտիր, իր թվաքանակով էթնիկ խմբերի մեջ զբաղեցնում էր 8-րդ տեղը՝ կազմելով Ղրիմի ԻսՄՅ բնակչության

1.5 %-ը³⁶⁷: Ղրիմի հայ բնակչության թվակազմի վերաբերյալ վերևում բերված տվյալների հավաստիությունն ամրապնդվում է Սիմֆերոպոլի արխիվային փաստաթղթերից³⁶⁸, ընդ որում, հայության թվի և տեղաբաշխման առումով տվյալներ են առկա նաև 1930 թ. հունվարի 1-ի հաշվառման արդյունքում: 1930 թ. հունվարի 1-ի դրությամբ Ղրիմի հայության թիվը կազմել է 12.110 մարդ, որից քաղաքաբնակ՝ 8020, գյուղաբնակ 4090 մարդ³⁶⁹:

1926 թ Չամանիթենական մարդահամարով ճշգրտվել են նաև ՌեսՊՍՅ եվրոպական մասի հայ բնակչության թիվն ու տեղաբաշխումը: Այսպես, ՌեսՊՍՅ Յյուսիսային շրջանի (Արխանգելսկ, Վոլոգդա, Սևերո-Դվինսկ նահանգներ և Կոմի ինքնավար մարզ) և Լենինգրադ-Կարելական շրջանի (Լենինգրադի, Մուրմանսկի, Նովգորոդի, Պսկովի, Չերեպովեցի նահանգներ և Կարելական ԻսՄՅ) հայ բնակչության բացարձակ մեծամասնությունը բնակվում էր Լենինգրադի նահանգում (1756 հայ, որից Լենինգրադ քաղաքում՝ 1664): Յյուսիսային շրջանի մեջ մտնող մարզերում միասին բնակվում էին ընդամենը 25 հայ, իսկ Լենինգրադ-Կարելական շրջանում՝ 1786:

Հատկանշական է, որ 1923 թ. քաղաքային մարդահամարով Լենինգրադի նահանգում արձանագրվել էր 1022 հայ, իսկ 1926 թ. մարդահամարով գրանցվել է հայության թվի աճ 72 %-ով: Յայերն այստեղ հիմնականում քաղաքաբնակ էին, գյուղական հայ բնակչության թիվը Լենինգրադ-Կարելական շրջանում կազմում էր 27 մարդ³⁷⁰: Լենինգրադ-Կարելական շրջանում քաղաքաբնակ հայության տոկոսային կշիռը կազմում էր 98.5 %, որն ամենաբարձր ցուցանիշն էր ամբողջ ԽՍՀՄ հայության

³⁶⁷ Итоги десятилетия Советской власти в цифрах 1917-1927 гг., М., 1927, с. 58.

³⁶⁸ ГААРК, Р- 663, оп. 2, д. 457, лл. 92-93.

³⁶⁹ Նույն տեղում:

³⁷⁰ Всесоюзная перепись населения 1926 года, том 1. Северный район. Ленинградско-Карельский район., М., 1928, с. 113.

³⁶⁶ Материалы Всесоюзной переписи населения 1926 года по Дагестанской АССР, выпуск 1, Махач-Кала, 1927, с. 89.

կտրվածքով: Ամենաբարձր մյուս ցուցանիշերից մեկը, որ նկատվում էր Լենինգրադ-Կարելական շրջանի հայության մոտ, դա ռուսերենը, որպես մայրենի լեզու համարելն էր: Այս ցուցանիշը շրջանի հայերի մոտ կազմել է 48.3 %, իսկ գրագիտության մակարդակով հայությունը նույնպես առանձնանում էր: Գրագետ էր շրջանի հայության 90.6%-ը, որոնց 41%-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով:

ՌԽՖՍՐ Արևմտյան շրջանում (Բրյանսկի և Սմոլենսկի նահանգներ) հայ ազգաբնակչությունը փոքրաթիվ էր, ընդամենը 93 մարդ, որոնց 3/4-ից ավելիի համար մայրենի էր հայերենը:

ՌԽՖՍՐ Կենտրոնական-Արդյունաբերական շրջանն ընդգրկում էր 10 նահանգներ, որոնք բոլորն էլ հայաբնակ էին: Այս շրջանի դերն ու նշանակությունը կարևորվում էր նրանով, որ նրանք էր գտնվում մայրաքաղաք Մոսկվան: Մոսկվայի, որպես միութենական մայրաքաղաքի, վարչատնտեսական դերի մեծացումը նպաստեց այստեղ հայ համայնքի թվի և դերի աճին, որը չնայած ռուսահայ մյուս համայնքների ազգային կյանքի անկմանը, նրանց շարքում բացառություն կազմեց: Մոսկվայի նահանգում էր բնակվում Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի հայության թվի մոտ 95%-ը (6.718 մարդ), որից Մոսկվայում՝ 6.369 հայ³⁷¹: Հայերենը մայրենի լեզու էր Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի հայության ավելի քան 58 %-ի համար, ռուսերենը՝ 40.6 %-ի: Շրջանի հայության 87.8 %-ը գրագետ էր, ընդ որում, 42.3%-ը՝ նաև հայերենով: Հայաբնակ էին նաև Մոսկվայի նահանգի այլ քաղաքներ՝ Օրեխովո-Չուևո, Սերպուխով և այլն, ուր ընդհանուր հաշվով բնակվում էին 226 հայեր: Նահանգի գյուղական վայրերում բնակվում էին 123 հայեր: Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի մյուս 9 նահանգներում միասին

³⁷¹ Всесоюзная перепись населения 1926 года, том 2, Западный район. Центрально-Промышленный район., М., 1928, с. 135.

բնակվում էին 370 հայեր, որոնց մեջ իր 93 հայ բնակիչների թվով շրջանում երկրորդն էր Նիժեգորոդյան նահանգը:

ՌԽՖՍՐ Կենտրոնական-Սևահողային շրջանում (Վորոնեժի, Կուրսկի, Տամբովի և Օրյոլի նահանգներ) բնակվում էին 797 հայեր, որոնց 50.9 %-ը՝ Վորոնեժի նահանգում (406 մարդ): Վորոնեժ քաղաքի հայության թիվը 299 մարդ էր: Կուրսկի և Տամբովի նահանգներից յուրաքանչյուրում ապրում էր շրջանի հայության 21 %-ից մի փոքր ավելին: Կենտրոնական-Սևահողային շրջանի հայության ավելի քան 66 %-ի համար մայրենի էր հայերենը, սակայն ազգային լեզվին տիրապետում էին նշվածից ավելի մեծ թվով հայեր՝ 404 արական և 266 իգական սեռի ներկայացուցիչ³⁷²: Գրագիտության աստիճանով Կենտրոնական-Սևահողային շրջանի հայությունն ուներ միջին ռուսաստանյան ցուցանիշ, որը կազմում էր մոտ 68 %:

ՌԽՖՍՐ Միջին-Վոլգյան շրջանը, Պոլովոժինն ընդհանրապես, գաղութահայ բնակության հնագույն կենտրոններից էր, ուր գոյություն է ունեցել կազմակերպված և տնտեսապես ամուր դիրքեր զբաղեցնող հայ համայնք: Միջին-Վոլգյան շրջանում (Սամարայի, Պենզայի, Ուլյանովսկի, Օրենբուրգի նահանգներ, Թաթարստանի և Չուվաշական ԻԽՍՐ-ներ) 1926 թ. մարդահամարի տվյալներով բնակվող հայության (498 մարդ) մոտ 48 %-ը կենտրոնացած էր Սամարայի նահանգում (239 մարդ), իսկ բուն Սամարա քաղաքում հայերի թիվը 222 մարդ էր: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Թաթարստանի ԻԽՍՐ կենտրոնն էր՝ Կազանը: Հայ ազգաբնակչությունը ցրված էր նաև շրջանի մյուս վարչական միավորներում՝ բացառությամբ Չուվաշական ԻԽՍՐ-ի: Այստեղ գյուղաբնակ հայության թիվն աննշան էր՝

³⁷² Всесоюзная перепись населения 1926 года, том 3, Центрально-Черноземный район. Средне-Волжский район Нижне-Волжский район, М., 1928, с. 34.

ընդամենը 18 մարդ: Շրջանի հայության 66 %-ից ավելիի համար հայերենը մայրենի լեզու էր, գրագետ էր հայության մոտ 68 %-ը:

Ստորին-Վոլգյան շրջանի լավ ավանդույթներ ունեցող հայկական գաղութները, մասնավորապես, Աստրախանի հայ համայնքը, խորհրդային շրջանում նույնպես բավականին բազմամարդ էր: Այսպես, 1926 թ. մարդահամարի տվյալներով Աստրախանի հայության թիվը 3.001 մարդ էր, որը կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության 1.7 %-ը: Ստորին-Վոլգյան շրջանի ամբողջ հայության թիվը 4.334 մարդ էր, որից գյուղաբնակ էր ընդամենը 204 մարդ (4.7%-ը): Աստրախանը հանդիսացել է այն կենտրոններից մեկը, ուր բազմահազար հայ փախստականներ էին կենտրոնացել, ուստիև այլ տվյալներով հայության թիվն այստեղ անհամեմատ մեծ է եղել. «Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմների տարիներին ուժեղացել է Արևմտյան Հայաստանից և Անդրկովկասից հայ փախստականների հոսքը Աստրախան, քաղաքի հայ բնակչությունն աճել է՝ հասնելով 10-11 հազարի»³⁷³: Քաղաքի հայության վերոհիշյալ թվական տվյալներն անրապնդված չեն փաստաթղթային, պաշտոնական կամ վիճակագրական նյութերով, ինչն էլ կարելի է ընդունել միայն վերապահումով, թեև այս ժամանակշրջանում տեղ են գտել հայության անընդհատ տեղաշարժեր:

Ստորին-Վոլգյան շրջանում հայ բնակչության թվաքանակով երկրորդը Ստալինգրադի նահանգն էր, ուր բնակվում էին 703 հայեր: Ստալինգրադի նահանգի հայությունը կազմում էր ամբողջ շրջանի հայ բնակչության ավելի քան 16 %-ը, իսկ Սարատովի նահանգի հայությունը՝ ավելի քան 11 %-ը: Ընդամենը մեկ-երկու տասնյակ հայ բնակչություն ունեին Կալմիկական ԻՍ-ն և Պովոլժիեի Գերմանական ԻԽՍՀ-ն: Հայերենը մայրենի էր շրջանի հայության մոտ 87 %-ի համար, իսկ Աստրախանի կտրվածքով այն կազմում էր մոտ 90 %: Գրագետ էր Ստորին-

Վոլգյան շրջանի հայության մոտ 73 %-ը, որոնց ընդամենը 30.8 %-ն էր գրագետ իր ազգային լեզվով:

1920-ական թթ. Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի տարածաշրջաններում հայ բնակչությունը փոքրաթիվ էր ու ցրված տարբեր վարչատարածքային միավորներում: 1926 թ. մարդահամարով Ուրալում բնակվում էին ընդամենը 121 հայ³⁷⁴, Սիբիրում՝ 575³⁷⁵, Հեռավոր Արևելքում՝ 256³⁷⁶:

Ուրալում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում* միասին բնակվում էին 985 հայ, որոնց մոտ 74 %-ը գրագետ էր, իսկ 2/3-ի համար մայրենին հայերենն էր:

1926 թ. մարդահամարը վեր է հանել տվյալներ Դոնի և Չերնոմորիեի հայության տարիքային կազմի վերաբերյալ, գրագիտության աստիճանը յուրաքանչյուր տարիքային կազմի համար: Այսպես, Դոնի օկրուգի հայության շրջանում արձանագրվել էր հետևյալ պատկերը.

- մինչև 4 տարեկան - 2.888 արական և 2.731 իգական սեռի բնակիչ, ընդ. 5.619 մարդ,
- 5-14 տարեկան - 4.895 ար. (2.849-ը գրագետ) և 4.726 իգ. (2.454-ը գրագետ), ընդ. 9.621, 15-24 տարեկան - 4.542 ար. (3.968 գրագետ) և 4.584 իգ. (3.213 գրագետ), ընդ. 9.126,

³⁷⁴ Всесоюзная перепись населения 1926 года, том 4, Вятский район, Уральская область. Башкирская АССР, М., 1928, с. 104.

³⁷⁵ Всесоюзная перепись населения 1926 года, том 6, Сибирский край. Бурято-Монгольская АССР, М., 1928, с. 12

³⁷⁶ Всесоюзная перепись населения 1926 года, том 7, Дальне-Восточный край. Якутская АССР, М., 1928, с. 8.

* Հարկ է նշել, որ հետտեղափոխական Ռուսաստանի Հեռավորարևելյան տարածաշրջանի սահմանների փոփոխությունների արդյունքում և խորհրդային իշխանության հաստատումից հետո տեղերում բնակվող հայության զգալի մասը տեղափոխվել է Հյուսիսային Չինաստան-Խարբին, Չանչուն, Սանջուրիայի և արևելաչինական երկաթգծի երկայնքով ընկած քաղաքները (Տեւ, «Ասպարեզ», Գլենդեյլ, Յունուար 18, 1992):

³⁷³ Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 477:

• 25-34 տարեկան - 3.486 ար. (3.132 գրագետ) և 3.435 իգ. (2.284 գրագետ), ընդ. 6.921: Դոնի հայության տարիքային կազմի մյուս խմբերի տվյալների ամբողջությամբ հնարավոր է դառնում առանձնացնել հետևյալը. արական սեռի շրջանում գրագետ էր հայության ավելի քան 65 %-ը, իգական սեռի շրջանում՝ 47 %-ը: Վերոհիշյալ ցուցանիշը Ռոստով-Նախիջևանի հայության շրջանում ավելի բարձր էր, գրագետ էր արական սեռի հայերի 74 %-ը, իգական՝ ավելի քան 65 %-ը:

Չերնոմորիեի օկրուգի հայության տարիքային կազմն ու գրագիտության աստիճանն ըստ 1926 թ. մարդահամարի ներկայացնում էր հետևյալ պատկերը.

• մինչև 4 տարեկան - 2.617 արական և 2.430 իգական սեռի բնակիչ, ընդ. 5.047 մարդ,

• 5-14 տարեկան - 4.147 ար. (2.110-ը գրագետ) և 3.707 իգ. (1.360-ը գրագետ), ընդ. 7.854,

• 15-24 տարեկան - 2.358 ար. (1.790 գրագետ) և 2.192 իգ. (811 գրագետ), ընդ. 4.550,

• 25-34 տարեկան - 1.763 ար. (1.201 գրագետ) և 1.737 իգ. (387 գրագետ), ընդ. 3.500:

Նմանօրինակ տվյալներ են վեր հանվել Դրիմի ամենատվար գյուղական հայ բնակչություն ունեցող Թեոդոսիայի շրջանի կտրվածքով, ուր բնակվող 1.092 հայերից գրագետ էր 525-ը (48 %-ը), իսկ տարիքային կազմը բավականին երիտասարդ էր՝ մինչև 30 տարեկանները կազմում էին 714 մարդ կամ շրջանի հայության 66 %-ը:

Ակնհայտ է, որ Դոնի օկրուգում, ուր հայ կրթական-մշակութային կյանքի ավանդույթներն ավելի խորն էին դրված, հայ բնակչությունն իր գրագիտության աստիճանով առանձնանում էր; Ավագ տարիքային կազմերի շրջանում գրագիտության մակարդակն ուներ ավելի ցածր ցուցանիշներ:

1926 թ. ՌԽՖՍՀ կազմում գտնվող Կիրգիզական ԻԽՍՀ և

Կազակական (Ղազախական) ԻԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ առկա տվյալներն ունեին հետևյալ պատկերը՝ Կազակական ԻԽՍՀ -ում՝ 636, իսկ Կիրգիզական ԻԽՍՀ-ում՝ 278 մարդ³⁷⁷:

ՌՖՍՍՀ հայերի թվաքանակն ըստ 1937 թ. մարդահամարի տվյալների կազմում էր 163.277 մարդ³⁷⁸:

1926 թ. մարդահամարի արդյունքների հետ համեմատած (ՌՖՍՍՀ հայ բնակչությունը կազմում էր 195.410 մարդ) 1937 թ. մարդահամարն արձանագրել էր ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի անկում 32.132 մարդով, ուստիև ակնհայտ է, որ այս մեծ տարբերությունն անիրական էր: 1937 թ. մարդահամարի նյութերի «ծեբբակալումը» և արխիվացումը, նրանց մասնակի կորուստն, ավելի հանգամանալի անդրադարձ կատարելու հնարավորություն չեն տալիս: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ Մոսկվայի հայ ազգաբնակչությունը արձանագրել էր կրկնակի աճ նախորդ մարդահամարի համեմատ:

1939 թ. Համամիութենական երրորդ մարդահամարը նույնպես անցկացվեց խիստ վերահսկողության ներքո, բայց նրա կազմակերպական խնդիրներն ավելի մտածված էին ու նախապատրաստված:

ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ 1939 թ. մարդահամարը տվել է բավականին ամփոփ տվյալներ, որոնք արտացոլում են հայության ընդհանուր թիվը, տեղաբաշխումը վարչական միավորներում, դրանցում հայերի տեսակարար կշիռը, քաղաքային և գյուղական բնակչությունը:

³⁷⁷ Всесоюзная перепись населения 1926 года, том VIII, Казакская АССР: Киргизская АССР, М., 1928, с. 16.

³⁷⁸ Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, М., 1991, с. 85.

Ուսումնական ՌԽՖՍՀ ամբողջ հայ ազգաբնակչության թիվը հանրապետության բնակչության մեջ կազմում էր 0,2 % և առավել մեծաթիվ էթնիկ խմբերի մեջ գրավում էր 19-րդ տեղը:

Աղյուսակ № 3

Հայերը ՌԽՖՍՀ-ում ըստ 1939 թ. մարդահամարի

	ամբողջը	բնակչության մեջ %-ով	քաղաքաբնակ	գյուղաբնակ
ՌԽՖՍՀ ³⁷⁹ որից	218.156	0,2	135.850	82.306
1. Կրասնոդարի երկ.	60.501	1,9	27.451	33.050
2. Օրջոնոկիձեի երկ.	29.633	1,5	19.639	9994
3. Ոոստոլի մարզ	49.339	1,7	28.980	20.359
4. ք. Մոսկվա	13.682	0,3	13.682	-
5. Ղրիմի ԻԽՍՀ	12.923	1,1	7857	5066
6. Յուլիսիս - Օսական ԻԽՍՀ	8932	2,7	8628	304
7. Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ	8441	1,2	8141	300

Յուլիսիսկովկասյան տարածաշրջանի վարչական միավորների հայ ազգաբնակչությունը շարունակում էր կազմել ՌԽՖՍՀ-ի հայ ազգաբնակչության հիմնական մասը, իսկ նրանցից Յուլիսիս-Օսական ԻԽՍՀ-ում հայերն ունեին ամենաբարձր տոկոսային կշիռը բնակչության մեջ: Քաղաքաբնակ էր ՌԽՖՍՀ հայության 62,2 %-ը, իսկ Մոսկվայի հայ ազգաբնակչության թիվը շարունակաբար աճում էր՝ կազմելով ՌԽՖՍՀ ամբողջ հայության 6,2%-ը: ՌԽՖՍՀ Յուլիսիսկովկասյան տարածաշրջանում 1920-30-ական թթ. անընդհատ տեղի ունեցող տարածքային վերածակավորումները հանգեցնում էին այս կամ այն վարչական միավորում հայության թվի պատկերի տատանումների, որը սակայն տարածաշրջանի հայ ազգաբնակչության ընդհանուր թվի վրա ազդել չէր կարող: Այսպիսին էին ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակն ու նրա տեղաբաշխման հիմնական շրջանները 1920-30-

³⁷⁹ Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги., М., 1992, с. 59.

ական թթ. և Մեծ Հայրենականի նախօրյակին, որից հետո ՌԽՖՍՀ-ում, նրա առանձին տարածաշրջաններում տեղի ունեցան ժողովրդագրական պատկերի լուրջ փոփոխություններ:

1939 թ. մարդահամարով ամբողջ ԽՍՀՄ-ում բնակվում էին 2.152.860 հայեր (ԽՍՀՄ բնակչության 1.26 %-ը), որոնք ԽՍՀՄ էթնիկ խմբերի մեջ իրենց թվով գրավում էին 10-րդ տեղը: Այս մարդահամարով, միայն Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր 1.061.997 հայ, այսինքն, ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը 49.33 %-ը, իսկ մյուս միութենական հանրապետություններում միասին՝ 1.090.863 հայ կամ 50.67 %-ը:

1939 թ. մարդահամարը վերջինն էր 1930-ական թթ. ու նախապատերազմական շրջանում, որի ավարտից հետո ամբողջ ԽՍՀՄ-ում, նրա առանձին հանրապետությունների էթնիկ ու ազգային խմբերի մեջ տեղ գտան ժողովրդագրական լուրջ փոփոխություններ:

Հայրենական պատերազմում հայության վիթխարի ներդրումը, հարյուր հազարավոր մարդկային կորուստները, սովը և համաճարակները, Յուլիսիսային Կովկասից և Ղրիմից հազարավոր հայերի աքսորը Միջին Ասիա, Ուրալ, Ալթայ և Սիբիր, լուրջ փոփոխություններ մտցրեցին միութենական հանրապետությունների, այդ թվում՝ ՌԽՖՍՀ, հայության թվաքանակի և տեղաբաշխման շրջանների մեջ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին նկատելիորեն տուժեցին ՌԽՖՍՀ հայկական այն համայնքները, որոնք հայտնվեցին ֆաշիստական օկուպացիայի տակ գտնվող շրջաններում, հայ բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տարհանման և աքսորի:

Ղրիմահայությունը պատերազմի տարիներին սաստիկ տուժեց ոչ միայն ֆաշիստական օկուպացիայի հետևանքով, այլ դարձավ ստալինյան բռնության զոհը՝ արմատախիլ լինելով

հայրենի վայրերից և միայն 1950-ական թթ. արքայազներին արդարացրեցին, կատարվեց մասնակի վերադարձ:

Ղրիմը 1954 թ. ՌԽՖՍՐ կազմից հանվեց և մտցվեց Ուկրաինական ԽՍՀ կազմ, իսկ թերակղզու հայությունը հաջորդ Համամիութենական մարդահամարներում արդեն ներկայացվում է Ուկրաինական ԽՍՀ հայության ընդհանուր թվաքանակի մեջ:

ՌԽՖՍՐ հայ ազգաբնակչությունն աճեց նաև հետպատերազմյան շրջանում և գործուն մասնակցություն ունենալով երկրի պետական, տնտեսական, գիտական-մշակութային և կյանքի մյուս ոլորտներում:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները կարևոր նշանակություն ունեին, քանի որ առաջինն էին հետպատերազմյան շրջանում և արձանագրեցին բնակչության թվաքանակի վերաբերյալ նոր տվյալներ:

Այս համատեքստում կարևոր էր դառնում նաև բնակչության տեղաբաշխման շրջանների փոփոխության իրողությունը, նոր տարածքների շարունակական յուրացումը Ղազախստանում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ³⁸⁰, որից միայն Հայկական ԽՍՀ-ում 1.551.610 մարդ կամ 55.7%-ը:

Մարդահամարի տվյալներով Հայկական ԽՍՀ-ից հետո իրենց հայ բնակչության մեծաթվությամբ առանձնանում էին Վրացական ԽՍՀ-ն (442.916 մարդ³⁸¹), Ադրբեջանական ԽՍՀ-ն (442.089 մարդ) և ՌԽՖՍՐ-ն (255.978 մարդ):

³⁸⁰ http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8

³⁸¹ Минасян М., Этнические меньшинства Грузии; потенциал интеграции на примере армянского населения страны, Е., 2006, с. 10.

Հայ ազգաբնակչությունը ՌԽՖՍՐ-ում ըստ 1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների³⁸²

N	ամբողջը	Մայրենի լեզու		
		հայերեն	ռուսերեն	այլ
ՌԽՖՍՐ, որից՝	255.978	170.536	84.536	906
արական	136.713	92.132	43.996	585
իգական	119.265	78.404	40.540	321
քաղաքաբնակ, որից՝	171.611	98.986	71.951	674
արական	92.346	54.934	36.979	433
իգական	79.265	44.052	34.972	241
գյուղաբնակ, որից՝	84.367	71.550	12.585	232
արական	44.367	37.198	7.017	152
իգական	40.000	34.352	5.568	80
ք. Մոսկվա	18.379	6.184	12.097	98
ք. Լենինգրադ	4.897	1.575	3.278	44
Կրասնոդարի երկ.	78.176	59.925	18.103	148
Ստավրոպոլի երկ.	25.618	17.077	8.464	77
Ռոստովի մարզ	49.305	35.455	13.826	24
Յյուսիս-Օսական ԻԽՍՀ	12.012	9.137	2.764	111
Չեչենա-Ինգուշ ԻԽՍՀ	13.213	8.722	4.451	40
Ղաղստանի ԻԽՍՀ	6.530	4.472	2.044	14
Ադրբեջան ԻՄ	3.013	2.211	788	14

1939 թ. մարդահամարին հաջորդած քսան տարիների ընթացքում ՌԽՖՍՐ հայության թվաքանակն աճել էր 37.822 մարդով:

1959 թ. մարդահամարի տվյալներով ՌԽՖՍՐ հայությունը կազմում էր ԽՍՀՄ-ում բնակվող ամբողջ հայության ավելի քան 9%-ը: Հայերենը մայրենի լեզու էր ՌԽՖՍՐ հայության 66.6 %-ի

³⁸² Итоги Всесоюзной переписи населения 1959 года, РСФСР, М., 1963, с. 301-340.

համար, իսկ Մոսկվայի և Լենինգրադի հայության գերակշիռ մասի համար մայրենին ռուսերենն էր: Քաղաքաբնակ էր ՌԽՖՍՀ հայության շուրջ 67%-ը:

ՌԽՖՍՀ հայության հիմնական բնակության շրջանները շարունակում էին մնալ Յուսիսային Կովկասի և Դոնի վարչատարածքային միավորները, ուր կենտրոնացած էր ռուսահայության ճնշող մասը:

Հաջորդ Համամիութենական մարդահամարն անցկացվել է 1970 թ. և նպատակ ուներ ապահովելու ԽՍՀՄ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ասպարեզների զարգացման վիճակագրական պատկերը:

1970 թվականի Համամիութենական մարդահամարի տվյալներով ՌԽՖՍՀ-ում բնակվող հայերի թվաքանակը կազմում էր 298.718 մարդ կամ ԽՍՀՄ ամբողջ հայության 8.4%-ը:

Աղյուսակ № 5

ՌԽՖՍՀ սուբյեկտների հայություն թվաքանակը, մայրենի, ռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների³⁸³

N	Ամբողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու տիրապետողներ		
		հայ.	ռուս.	այլ	հայ.	ռուս.	այլ
Կրասնոդար	98.589	76.207	22.263	119	7.910	64.295	405
Ադղեական ԻՍ	5.217	4.088	1.119	10	370	3.617	42
Ստավրոպոլ	31.096	21.188	9.878	30	3.343	18.800	214
Աստրախան	1.784	861	912	11	228	819	22
ք. Լենինգրադ /քաղխորի. ենթ. բնակավայրերով/	6.628	2.290	4.286	52	1.366	2.172	172

³⁸³ Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, М., 1973, стр. 324.

ք. Մոսկվա /քաղխորի. ենթ. բնակավայրերով/	25.584	9.008	16.448	128	5.595	8.453	741
Մոսկվայի մարզ	5.683	2.296	3.360	27	1.100	2.110	184
Ռոստով	53.620	37.383	16.220	17	5.287	31.471	164
Պադտանի ԻԽՍՀ	6.615	5.041	1.563	11	276	4.530	95
Կարադինա-Բալկարական ԻԽՍՀ	2.033	1.364	647	22	120	1.241	40
Յյուսիս-Օսական ԻԽՍՀ	13.355	10.345	2.925	85	573	9.582	138
Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ	14.543	10.081	4.437	25	1.017	8.896	107

1970 թ. ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդ մարդահամարի համեմատ գրանցել էր հայության աճ 42.740 մարդով կամ 16.7 %-ով: Հիշյալ մարդահամարով ՌԽՖՍՀ ամբողջ հայության 33 %-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում: Ռոստովի մարզում էր բնակվում ՌԽՖՍՀ հայության շուրջ 18 %-ը, որը նախորդ մարդահամարի համեմատ աճել էր 8.8%-ով³⁸⁴: Վերոհիշյալ երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում էին ՌԽՖՍՀ հայության կեսից ավելին: Հատկանշական է, որ Յյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում էր առկա էր սովոր հայ բնակչություն, ընդ որում, ինչպես գյուղական, այնպես քաղաքային շրջաններում: Այսպես օրինակ, 1970 թ. մարդահամարով, Կովկասյան Հանքային Ջրերի ագլոմերացիային բնորոշ էր քաղաքաբնակ հայության բարձր տոկոսային կշիռը³⁸⁵: Մոսկվայում էր կենտրոնացած ՌԽՖՍՀ հայության 8.5 %-ը, որը նույնպես զգալիորեն բարձր էր նախորդ մարդահամարների ցուցանիշերից:

³⁸⁴ Национальный состав населения Ростовской области (по данным Всесоюзной переписи населения 1970 г.), Ростов н/Д, 1974, с. 5.

³⁸⁵ Белозеров В., Этническая карта Северного Кавказа, М., 2005, с.115.

ՌԻՖՏԱՅ սուբյեկտների հայությունը թվաքանակը, մայրենի, ռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1979 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների³⁸⁶

N	Ամբողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազատ տիրապետողներ		
		հայ.	ռուս.	այլ	հայ.	ռուս.	այլ
ՌԻՖՏԱՅ, որից՝	364.570	238.071	125.646	853	32.783	213.629	3.673
Կրասնոդար երկ.	120.797	89.973	30.739	85	9.167	78.780	394
Ստավրոպոլ երկ.	40.504	26.487	13.956	61	3.572	23.350	290
Ռոստով մարզ	56.902	39.008	17.860	34	5.376	34.773	141
Զեչենա-Ինգուշական ԻԽՍՀ	14.621	10.196	4.403	22	792	9.369	86
Հյուսիս-Օսական ԻԽՍՀ	12.912	9.805	3.037	70	380	9.217	110
Ադրբեյջան ԻԽ	6.359	4.926	1.424	9	347	4.474	41

ՌԻՖՏԱՅ հայությունը կազմում էր ԽՍՀՄ-ում բնակվող ամբողջ հայության 8.8 %-ը: 1979 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ԽՍՀՄ-ում բնակվող հայությունն իր թվաքանակով երկրի էթնիկ խմբերի մեջ մեծաթվությամբ 8-րդն էր³⁸⁷ և կազմում էր ամբողջ ԽՍՀՄ բնակչության ընդամենը 1.58%-ը: Հայերենը մայրենի լեզու էր ՌԻՖՏԱՅ հայության ավելի քան 65 %-ի համար:

1989 թ. Համամիութենական վերջին մարդահամարը նախորդի համեմատ արձանագրել է ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակի աճ 471.991 մարդով:

Հայության թվաքանակի նկատելի աճ էր արձանագրվել ՌԻՖՏԱՅ-ում. այստեղ բնակվող շուրջ 532 հզ հայերից Հյուսիսային Կովկասում բնակվում էր 355.6 հզ. մարդ կամ ՌԻՖՏԱՅ

հայության 66.7%-ը, ընդ որում, նրանց գերակշիռ մասը (67%), ապրում էր քաղաքներում³⁸⁸: Սոսկվայի հայ ազգաբնակչության թվաքանակը զգալի աճ էր արձանագրել երեսուն տարում՝ 1959–1989 թթ., աճելով 2.5 անգամ և կազմելով շուրջ 43.5 հզ մարդ³⁸⁹:

1989 թ. մարդահամարի տվյալներով ՌԻՖՏԱՅ Կրասնոդարի երկրամասի հայերի թվաքանակը նույնպես զգալիորեն աճել էր: Երկրամասի հայության 25.4 %-ն ուներ բարձրագույն, անավարտ բարձրագույն կամ միջին մասնագիտական, 58.6 %-ը՝ միջնակարգ կամ ոչ լրիվ միջնակարգ, 11.3 %-ը՝ տարրական կրթություն: Այս ցուցանիշը քաղաքային բնակավայրերում կազմում էր համապատասխանաբար 31.3, 55.6, և 9.1 %, գյուղերում՝ 17.3, 62.7 և 14.3 %:

Կրասնոդարի երկրամասի քաղաքների հնաբնակ հայության շրջանում զգալի թիվ են կազմում ծառայողները, մտավորականությունը, իսկ 1970-80-ական թթ. վերաբնակվածների շրջանում՝ ձեռներեցները: Հնաբնակ հայերը ապրում են Անապայի, Գորյաչի Կլուչի, Բելորեչենսկի, Ապշերոնսկի, Տուապսեի, Լազարևսկի, Խոստիանսկի և Ադլերի շրջանների ավելի քան 100 գյուղական վայրերում:

Կրասնոդարի երկրամասում համշենահայերի համախումբ տեղաբաշխումը հատկապես գյուղական վայրերում և (թեև ներսում առկա էր բաժանումը տրապիզոնցիների, օրդուցիների և ջանիկցիների, այն վայրերի անուններով, որտեղից տեղափոխվել էին) շարունակվող մեկուսացումը հիմնական էթնիկ միջուկից՝ Հայաստանի հայերից, նպաստեցին նրանց յուրահատուկ էթնոմշակույթի կոնսերվացմանը՝ որպես հայ էթնոսի պատմաազգագրական խմբերից մեկը: 1989 թ. մարդահամարով Կրասնոդարի երկրամասի հայության 75. 2 %-ն իրենց մայրենի լեզուն համարում էին ազգայինը, 24. 7%-ը՝ ռուսերենը: Քաղաքաբնակ հայերի

³⁸⁸ Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, с. 357.

³⁸⁹ Арутюнян Ю., Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Е., 2011, с. 15.

³⁸⁶ Численность и состав населения СССР (По данным Всесоюзной переписи населения 1979 года), М., 1984, стр. 74-91.

³⁸⁷ СССР в цифрах в 1984 году, М., 1985, с. 12.

68.2%-ի համար հայերենը մայրենին էր, գյուղաբնակների՝ 84 %-ի:

1989 թ. մարդահամարով Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ-ում բնակվող հայերի 97.4%-ը քաղաքաբնակներ էին և կենտրոնացած էին հիմնականում Գրոզնիում (դեռևս 1959 թ. 11.533 հայ): Այստեղ բնակվող հայության 73.2 %-ն իր մայրենի լեզուն համարում էր հայերենը, 26.7 %-ը՝ ռուսերենը: 1990-ական թթ. սկզբից և Չեչնիայում ռազմական իրադարձությունների ծավալմանը զուգահեռ, տեղի հայությունը հեռացել է հիմնականում Ստավրոպոլի երկրամաս³⁹⁰:

1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով ՌԽՖՍՀ մի շարք վարչական միավորներում ևս արձանագրվել են հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալներ: Մասնավորապես, հայաբնակ վարչական միավորներից էին եվրոպական մասի Վորոնեժի, Պենզայի, Կուրսկի, Բելգորոդի, Յարոսլավլի, Սմոլենսկի, Կալուգայի մարզերը, Սիբիրի և Հեռավոր Արևելքի մարզերից Տյումենն ու Ամուրը:

Ընդհանուր առմամբ, 50 տարվա ընթացքում՝ 1939-1989 թթ., ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը ավելի քան կրկնապատկվել էր (2.152.860 հայ 1939 թ., 4.623.232 հայ 1989 թ.), իսկ Հայկական ԽՍՀ-ում՝ գրեթե եռապատկվել (1.061.997 հայ 1939 թ., 3.083.616 հայ 1989 թ.):

ՌԽՖՍՀ հայությունն իր հերթին 1920-1989 թթ. արձանագրեց թվաքանակի կտրուկ աճ՝ գրեթե քառապատկվելով: ԽՍՀՄ փլուզման նախօրեին ՌԽՖՍՀ-ում բնակվում էր Միության ամբողջ հայ բնակչության 11.5 %-ը: ԽՍՀՄ փլուզումից հետո էլ Ռուսաստանի հայ ազգաբնակչության թվաքանակը շարունակեց կտրուկ մեծանալ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական պատճառներով:

Աղյուսակ № 7

ՌԽՖՍՀ առանձին վարչական միավորների հայության թվաքանակը, քաղաքաբնակների և գյուղաբնակների թվային կազմը, համեմատությունը 1970թ., 1979 թ., 1989 թ. Համամիութենական մարդահամարների տվյալներով

ՌԽՖՍՀ տարբերակներ ³⁹¹	Ամբողջ բնակչությունը		Քաղաքաբնակ			Գյուղաբնակ		
	1970	1979	1970	1979	1989	1970	1979	1989
Կրամորալ	98.589	20.797	53.179	68.231	101.897	45.410	52.566	80.320
Ստավրոպոլ	31.096	40.504	22.614	28.805	47.075	8.482	11.699	25.455
Ռոստով	53.620	56.902	35.024	37.557	39.419	18.596	19.345	23.184
Վոլգոգրադ	2.898	4.229	2.698	3.934	5.940	200	295	844
Աստրախան	1.784	.646	1.624	1.552	2.362	160	94	445

³⁹⁰ Белозеров В., Этническая карта Северного Кавказа, т. 2: 293: 320

³⁹¹ Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 года, М., 1990, с 103-149.

Մտված	5.529	.410	9.245	4.245	6.442	8.111	1.284	968	1.134
ք. Մտված	25.738	31.553	43.989	25.712	31.489	43.989	26	64	-
ք. Լեռնագրադ	6.678	995	12.070	6.678	7.995	12.070	-	-	-
Կոմի ԻՍՄԳ	1.276	2.104	2.171	831	1.572	1.739	445	532	432
Պալատանի	6.615	6.463	6.260	5.471	5.459	5.321	1.144	1.004	939
Հյուսիս-Օսական	13.355	12.912	13.619	12.802	12.451	13.074	553	461	545
Կարադիմա-Բակարական	2.033	2.184	3.512	1.788	2.035	3.164	245	149	348
Չեչենա-Ինգուշական	14.543	14.621	14.824	13.667	14.126	14.445	876	495	379
Սյրենական ԻՄ	5.217	6.359	10.460	2.559	3.331	5.197	2.658	3.028	5.263
Կարաչայա-Չերեքական	1.036	1.524	2.369	644	1.089	1.822	392	435	537

Գլուխ 5. Հայության հոգևոր-եկեղեցական կյանքը ՌԽՖՍՀ-ում

Խորհրդային կարգերի հաստատումով Հայ Առաքելական եկեղեցին ենթարկվեց նոր հասարակարգի թելադրած օրենքներին՝ եկեղեցին և հոգևոր արժեքները թևակոխեցին իրավազրկման, նվաստացման և գոյապահպանման ժամանակաշրջան:

Խորհրդային Ռուսաստանում, ապա նաև խորհրդային մյուս հանրապետություններում ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ:

Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցու նկատմամբ կիրառված պայքարի և բռնությունների մեթոդները դարձան էտալոնային մյուս հանրապետություններում:

Խորհրդային իշխանության՝ ժողկոմխորհի, առաջին օրենսդրական որոշումներից էր 1918 թ. հունվարի 20-ի դեկրետը «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին», ուր ասվում էր. «Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար»³⁹²:

1922 թ. Համառուսաստանյան Կենտգործկոմը գաղտնի դեկրետ ընդունեց եկեղեցական արժեքների առգրավման մասին՝ սովի դեմ պայքարի, միաժամանակ սեփական զանձարանը լցնելու ու եկեղեցուն վճռական հարված հասցնելու նպատակով:

Ուղղափառ եկեղեցին, չդիմանալով աճող ճնշմանը, 1922-1923 թթ. տրոհվեց մի քանի հոսանքների, որոնցից նորոգչողական կամ «կենդանի» կարմիր եկեղեցական հոսանքը խրախուսվում էր պետության կողմից՝ ուղղորդվելով պաշտոնական պատրիարքության դեմ: Նորոգչողական հոսանքը կամ «ազատ եկեղեցականների» շարժումը Կովկաս և Հայաստան թափանցեց

³⁹² Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը կրոնի և եկեղեցու մասին, Ե., 1960, էջ 55-56:

կարճ ժամանակ անց՝ հանդես գալով որպես «ընթացող» պաշտոնական եկեղեցու դեմ. «Ազատ եկեղեցու հիմնադրմանը 1925 թ. մայիսին հաջորդեց նաև միաբանության՝ «Ազատ եկեղեցական եղբայրության» ստեղծումը»³⁹³.

«Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի առաջին համարում «Մեր նպատակն ու ծրագիրը» վերնագրի ներքո ներկայացված էր եղբայրության երկու հիմնական մասերից բաղկացած ծրագիրը, որը վերաբերում էր եկեղեցական կյանքի բոլոր ոլորտներին, ուր մատնանշվում էր, որ. «...այն հանգամանքը, որ Ռուսաստանից դուրս գտնված մեր յեկեղեցական կյանքը իր վարչական և մասամբ ել՝ ծխական խնդիրներում բոլորովին նման չէր ռուսահայ յեկեղեցական կյանքին»³⁹⁴.

«Ազատ եկեղեցականներ»-ը, նպատակ ունենալով պառակտել հայ եկեղեցին, մերժում էին հայ հոգևորականությանը և Գերագույն Գոգևոր Խորհուրդը՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով կաթողիկոսին:

«Ազատ եկեղեցական եղբայրություն»-ը գործունեություն էր ծավալել ոչ միայն Անդրկովկասի հայ հավատացյալների շրջանում, այլ նաև հայահոծ տարբեր վայրերում. «Թե Զայաստանի շրջաններում, թե Խորհրդային գաղթավայրերում ստեղծվում էին «Ազատ եկեղեցական եղբայրություն»-ներ, դրանց սաղրիչ գործունեությանը սատար էին կանգնում որոշ հոգևորականներ՝ ահաբեկված սպառնալիքներից կամ կաշառված ինչ-ինչ խոստումներով: «Զայ եկեղեցու դեմ ուղղված քայքայիչ գործողությունների ոլորտն ընդգրկում էր նաև Զեռավոր Արևելքը»³⁹⁵.

ԻՍԶՄ-ում հիմնադրվում է Անաստվածների Միություն, որը

³⁹³ Ղազարյան Խ. Ռ., Բարենորոգչական նախաձեռնությունները Զայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 218:

³⁹⁴ Տեր-Չարությունյան Զ., Մեր նպատակը. Զայոց յեկեղեցական բարեփոխությունը յեվ նրան հասնելու միջոցները, Թիֆլիս, 1926, էջ 6:

³⁹⁵ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ. Բեիրուդյան Ա., Ե., 1994, էջ 4:

հավակնում էր դառնալ զանգվածային շարժում ուղղված հավատքի և եկեղեցու դեմ, իսկ 1937 թ. ԽՍՀՄ-ը հռչակվեց «համատարած աթեիզմի երկիր»:

Եկեղեցու և կրոնի դեմ ուղղված արշավի արտառոց ձևեր ու մեթոդներ մշակելու անհրաժեշտություն չկար՝ եկեղեցին խեղդելու համար ավելացվեցին քահանաների եկամտահարկը:

«Զայրենիք»-ն իր էջերում քննարկում էր Մայր Աթոռը Սիրիա փոխադրելու հարցը, անհանգստությունը. «...այն բացառիկ ծանր պայմաններն էին, որոնց մեջ այսօր գտնվում է հայոց եկեղեցին, այն անօրինական հալածանքները, որոնց ենթակա է տարիներ ի վեր Էջմիածնի և հայ հոգևորականությունը Խորհրդային Ռուսիո մեկ ծայրից մյուսը...»³⁹⁶:

1930 թ. մայիսին վախճանվում է Գևորգ Ե Ամենայն Զայոց կաթողիկոսը և նրա տեղակալ Խորեն սրբազանը դիմեց Զայաստանի Կենտգործկոմին և Ժողկոմխորհին՝ թույլատրելու գումարել Ազգային եկեղեցական ժողով և իշխանությունները զիջեցին, հակառակ այն պարագային, որ ռուս ուղղափառ եկեղեցին չուներ հոգևոր առաջնորդ և սկսած 1925 թ. բազմիցս բարձրացնում էր այդ հարցը:

Կաթողիկոսի առաջիկա ընտրություններին մասնակցելու համար հոգևոր թեմերում անհրաժեշտ էր անցկացնել պատգամավորների ընտրություններ. «Սակայն ԽՍՀՄ-ում գտնվող թեմերի մեծ մասում բացակայում էին առաջնորդները, որոնք պիտի կազմակերպեին ընտրությունները: Այդ նպատակով էլ Ս. Էջմիածնից տեղեր ուղարկվեցին Մայր Աթոռի ներկայացուցիչներ: Միևնույն ժամանակ, ԳԶԽ-ը որոշում է. «...առաջադրել Խորհրդային Միության սահմաններում եղած թեմերի առաջնորդներին ընտրությունների գործը ղեկավարելիս առաջնորդվել նախապես տրված հրահանգներով, միաժամանակ հարմարվե-

³⁹⁶ Նույն տեղում, էջ 70:

լով պայմաններին՝ արագացնել և թեթևացնել պատգամավորների ընտրության գործը»³⁹⁷:

1931 թ. դրությամբ խորհրդահայ թեմերն անմխիթար վիճակում էի գտնվում:

Հյուսիսային Կովկասի և Աստրախանի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդապարյանը ծանր հիվանդ էր և խնդրում էր Մայր Աթոռին հարգել հրաժարականի իր դիմումը:

Նոր Նախիջևանի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, վկայակոչելով իր գիտական աշխատանքները, խնդրում էր իրեն փոխադրել Էջմիածին:

Բաքվի և Թուրքեստանի առաջնորդ Մաթևոս արքեպիսկոպոս Մաթևոսյանը բողոքում էր իր բնակության պայմաններից և հիվանդությունից: Իրականում թեմակալ առաջնորդը լարված հարաբերությունների մեջ էր Ադրբեջանի իշխանությունների հետ: Ծանրագույն վիճակում էին Վիրահայ և Արցախի թեմերը:

Խորհրդային Ռուսաստանի հայկական թեմերում, մասնավորապես, Հյուսիսային Կովկասում տիրող անմխիթար վիճակը մանրամասն բնորոշված է կաթողիկոսին ուղղված Նովոռոսիյսկի ժխատեր Գևորգ քահանա Օրդուխանյանի դիմումներում, որը ճաշակեց նաև աքսորի դառնությունը. «Մեր եկեղեցին վտանգի մեջ է, մեր սուրբ հավատը ոտնակոխ է լինում, մանավանդ վտանգի մեջ է մեր խեղճ ու կրակ ազգի ամբողջությունը... մեր կենտրոնը՝ Արմավիրը լուռ է Չաքարիայի նման. ոչ մի միջոց, ոչ մի խորհրդակցություն... երևանից եկած մի քանի երիտասարդների քարոզությունները հասարակության խավարագույն մասերում հաջողություն են գտնում... Իրավապես սա մեր՝ ռուսահայերիս եկեղեցու ճգնաժամն է. իրավապես սա Ռուսաստանում ցրված անթիվ հայերի դամբանականն է»³⁹⁸: Գևորգ քահանա Օրդուխանյանը 1925 թ հունվարի 3-ին կաթողիկոսին ուղարկած իր նամակում գրում է, որ իրեն ձերբակալել են նախորդ տարվա

օգոստոսի 9-ին: Ապա ներկայացնելով Նարիմուն (Տոմսկի նահանգ) իր անհուսալի դրությունը, հագուստի և սննդի պակասությունը, օգնություն էր հայցում:

Նովոռոսիյսկի հայոց եկեղեցու և Մայկոպի հայաբնակ գյուղերի (Հայկական շրջան) աղոթատների փակման կապակցությամբ Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոսը դիմել է ԳՀԽ-ին իր 1929 թ ապրիլի 25-ի և մայիսի 22-ի նամակներով, ուր գրված էր. «Անցյալ 1928 թվի վերջին ամիսներին Հայկական ռայոնի գյուղական իշխանության ներկայացուցիչներն ու գյուղական մի քանի կոմսոմուներ սկսել են հայ հավատացյալներին նեղել և սպառնալիքներով պահանջել, որ աղոթատները հանձնեն: Հայկական ռայոնի հայ գյուղերից զլխավորն ու ազդեցիկը Խոյթա գյուղն է եղել, որը ուներ Ս. Խաչ աղոթատուն 1883 թվից: 1928 թվի նոյեմբերի վերջերին տեղական իշխանությունը սպառնալիքներով գրավել է այդ աղոթատունը: Այնուհետև նույնպիսի միջոցներով վերցրել են նաև Գունայկա, Պերեվալնայա, Սաղովայա, Մարաթուկ գյուղերի հայոց աղոթատները»³⁹⁹:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը տեղի էր ունեցել 1922 թ., որը զլխավորում էր Մալանցը: Ստավրոպոլի հայ լուսավորչական միությունը 1923 թ. հունիսի 29-ին դիմել է Ստավրոպոլի Մարզգործկոմին, գրանցելու միությունը համապատասխան գործող կարգի, ըստ այդմ, որպես միության հիմնադիրներ, հանդես են եկել թվով 178 հավատացյալ հայեր, որոնք ստորագրել են վերոհիշյալ դիմումի տակ: Արդեն 1924 թ. փետրվարին պայմանագիր է կնքվում Ստավրոպոլ քաղաքի Բանվորների և Կարմիրբանակայինների Պատգամավորների Խորհրդի հետ, ըստ որի Ստավրոպոլի հայկական եկեղեցին անժամկետ և անվճար օգտագործման էր վերցվում իր եկեղեցական-ժխատական առարկաներով՝ դրանք պահպանելու պարտավորություններով: Հարկ է նշել որ, այս

³⁹⁷ Նույն տեղում, էջ 244:

³⁹⁸ Նույն տեղում, էջ 49-50:

³⁹⁹ Նույն տեղում, էջ 185-186:

պայմանագրի տակ ստորագրել են 48 անձինք⁴⁰⁰, ուր հստակորեն մատնանշված էին կրոնական համայնքի գործունեության պայմանները՝ հակախորհրդային ուղղվածության քաղաքական հավաքների անթույլատրելիություն, զրքերի, թերթիկների բաժանում-վաճառքի բացառում: Արգելվում էր ելույթների և քարոզի անցկացումն ուղղված խորհրդային իշխանության կամ նրաներկայացուցչի դեմ և այլն:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու գործունեությունն իրականացվում էր խիստ ծանր պայմաններում և հակակրոնական քարոզարշավի մթնոլորտում: Արդեն 1929 թ. վերջին Ստավրոպոլի հայկական եկեղեցին և նրա հետ միասին նաև ծխական դպրոցը փակվեցին, գույքն առգրավվեց, իսկ կից գտնվող գերեզմանները թալանվեցին:

Եկեղեցու դեմ ուղղված պայքարն, ինչպես նաև հակակրոնական քարոզարշավն ենթադրում էր ոչ միայն եկեղեցիների փակում, նրա սպասավորների նկատմամբ բռնությունների և աքսորի կիրառում, այլ նաև ֆինանսական հարկադրում: 1930 թ. ապրիլի 9-ին Յուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արք. Վարդապարյանի նամակից՝ ուղղված կաթողիկոսին, պարզվում է, որ Արմավիրի ֆինտեսչությունը ծանր հարկեր է դրել առաջնորդի վրա՝ պահանջելով դրա անհապաղ մուծումը: Գրեթե նույն բովանդակությամբ, ԳՀԽ-ի անունով հայտարարություն է արել Նոր Նախիջևանի թեմական խորհուրդը 1930 թ. փետրվարի 26-ին: Այստեղ խոսվում էր ծանր հարկումների պատճառով քահայանագործումից հրաժարված Մեծ Սալա և Նիսվիթա գյուղերի քահանաների, ինչպես նաև փակված եկեղեցիների մասին. «Ներկայիս փակված են թեմիս եկեղեցիներից-1 (Լենինգրադի Ս. Կատարինե եկեղեցին՝ պետական հարկը վճարելու անկարողության պատճառով, 2 (Նիսվիթա գյուղի Ս. Յովհաննու Կարապետի եկեղեցին՝ քահանայի հրաժարվելուն և

պահանջված նորոգությունը կատարելու նյութական միջոց չլիները պատճառով և 3 (Սիմֆերոպոլի Ս. Աստվածածին եկեղեցին...)»⁴⁰¹:

Այսպիսի պայմաններում, 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցեցին ԽՍՀՄ և արտասահմանի հայկական թեմերի պատգամավորները: Նոյեմբերի 12-ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, իսկ Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահ՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը:

1934 թ. մայիսին կաթողիկոս Խորեն Ա-ն իր կոնդակով Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին նշանակեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ տարվող բանակցություններում հայ եկեղեցու ներկայացուցիչ: 1934 թ. արտասահման ուղարկվեց ԳՀԽ-ի նախագահ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը՝ որպես նվիրակ և լիազոր ներկայացուցիչ սփյուռքի եկեղեցական գործերում:

Փարիզի «Վեմ» հանդեսը, փաստում էր էջմիածնի իրավազուրկ վիճակը խորհրդային Միությունում, ակտիվության կոչ էր անում սփյուռքի կենտրոններին. «... խորհրդային սահմաններում եկեղեցին, ազգային հաւաքական կեանքի տեսակետից, իրաւազուրկ էւ այլեւս անարժէք հաստատութիւն է...»⁴⁰²: «Վեմ»-ն իր էջերում լուրջ քննարկման առարկա էր դարձրել էջմիածնում մշակվող հայ եկեղեցու Սահմանադրության նախագիծն, այդ խնդրի վրա էր հրավիրում ամբողջ սփյուռքի, մանավանդ, նրա ղեկավար շրջանների ուշադրությունը, գտնելով, որ այդ եկեղեցական ժողովը պետք է գումարել սփյուռքում և այն ավելի շուտ շոշափելու է իրենց շահերը:

Խորհրդային իշխանությունը շարունակեց հետամուտ լինել

⁴⁰⁰ Аванесов Б., Духовная жизнь армянской общины города Ставрополь, Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2006, № 2 (108), էջ 95:

⁴⁰¹ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), նշվ. աշխ., էջ 213:

⁴⁰² Վեմ, Փարիզ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1934, էջ 121:

հայ եկեղեցու նկատմամբ հալածանքին: Լենինգրադի մարզից վտարվում է հայ եկեղեցու միակ քահանա Նիկոլայ Քուրոյանը, իսկ 1937 թ. մարտի 2-ին կնքվում է Աստրախանի միակ հայկական եկեղեցին: 1938 թ. սկզբին բանտարկվում է Մոսկվայի հայոց եկեղեցու միակ քահանա Արշակ Ճանճիկյանը՝ դատապարտվելով տասը տարվա ազատազրկման, իսկ հունիսի 22-ին Մոսխորիդի որոշմամբ փակվում է Լազարյանների միջոցներով կառուցված տեղի հայկական եկեղեցին: Շուտով փակվում է Լազարյանների միջոցներով կառուցված Լենինգրադի հայոց եկեղեցին նույնպես:

1930-ական թթ. հայ հոգևորականությունը բռնաճնշվեց, որի արդյունքում, փաստացիորեն, Հայ Առաքելական եկեղեցու կառույցը ՌԽՖՍՀ տարածքում, մասնավորապես, Հյուսիսային Կովկասում վերացվեց: Փակվեցին, ապա տարբեր տարիների վերացվեցին Արմավիրի, Աստրախանի, Նոր Նախիջևանի, Կրասնոդարի, Ստավրոպոլի, Սուրբ Խաչի /Բուդյոնովսկի/, Պյատիգորսկի, Գրոզնու, Ղզլարի, Մոզդուկի և այլ բնակավայրերի հայկական եկեղեցիները⁴⁰³:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Խորեն Ա Մուրադբեկյանը բռնության զոհ դարձավ: Կանխագալով մոտալուտ դժբախտությունը՝ Խորեն Ա-ն փորձառու գործչին հատուկ հեռատեսությամբ, իրեն տեղակալ էր նշանակել՝ աչքի առաջ ունենալով Գևորգ Ե կաթողիկոսի մահվանից հետո հայ եկեղեցուն ստեղծված խառնակ վիճակը: Հայ եկեղեցու շուրջ ստեղծված տագնապը խորհրդահայ համայնքներից գատ փոխանցվել էր նաև արտասահմանի հայաշատ կենտրոններ:

1938 թ. սահմանագիծ հանդիսացավ Խորհրդային Միությունում Հայ Առաքելական եկեղեցու դեմ վճռական քայլերի անցնելու համար, հայ եկեղեցու գլխին կախվել էր փորձությունների նոր վտանգ:

1938-1939 թթ. փոխվեց միջազգային ռազմաքաղաքական իրավիճակը, սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը և արդեն. «1940 թվականի սկզբներին իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հանդեպ սկսեց փոխվել»⁴⁰⁴: Խորհրդային իշխանությունների ճնշումը թուլացավ, ինչը սակայն, չէր նշանակում եկեղեցու հետ հաշտություն: Միջազգային իրադրությամբ պայմանավորված՝ ավելի «մեղմ» քաղաքականությունն եկեղեցու նկատմամբ դարձավ նրա փրկության միակ օղակը: Հայ Առաքելական եկեղեցու ղեկի մոտ կանգնած էր Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանը:

Խորհրդային իշխանությունն արտասահմանի հայության աչքում իր հեղինակությունը բարձրացնելու և ֆաշիզմի դեմ պայքարում եկեղեցու ունեցած կշիռն օգտագործելու համար երկրի ներսում, թույլատրեց Ազգային եկեղեցական ժողովի անցկացում: 1941 թ. ապրիլի 10-13-ը տեղի ունեցած Ազգային եկեղեցական ժողովը ցանկալի արդյունքի չբերեց, կաթողիկոս չընտրվեց. «Թեև արտասահմանյան թեմերից մի քանի պատվիրակներ էին ժամանել, և ժողովի աշխատանքներին մասնակցեցին Խորհրդային Միության առկա թեմերի ներկայացուցիչները, սակայն ներկաների թիվը չէր բավարարում կաթողիկոսի ընտրություններ անցկանելու համար»⁴⁰⁵: Արտասահմանի հայ եկեղեցական թեմերը մի քանի պատվիրակ էին ուղարկել ժողովին, ինչն ակնհայտ անվստահության էր նշանակում հանդեպ Խորհրդային վարչակարգը և նրա եկեղեցական քաղաքականությունը: Այնուհանդերձ, ժողովը որոշեց ԳՀԽ-ի նախագահ Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանին թողնել ղեկավարելու Հայ Առաքելական եկեղեցին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգընտիր տեղապահի կոչումով, իսկ ԳՀԽ-ն լիազորվեց. «...պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ միութենական հանրապետության և արտասահ-

⁴⁰³ Акопян В. 3., Армянская Апостольская церковь города Пятигорска, Пятигорск, 2007, с.13.

⁴⁰⁴ Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994, էջ 134:

⁴⁰⁵ Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 135:

մանյան թեմերը ծանոթանալու նրանց իրական վիճակին, հոգևոր իշխանության գործունեության, վերահսկողության և ըստ հարկի ցուցումներ տալու նպատակով»⁴⁰⁶: Ազգային եկեղեցական ժողովի այս որոշումն ամենաօպտիմալն էր ստեղծված իրավիճակում և «համապատասխանում էր ինչպես էջմիածնի կաթողիկոսության, այնպես էլ ԽՍՀՄ-ում գտնվող հայոց թեմերի հավատացյալների ձգտումներին, որոնց նպատակն էր վերականգնել և վերաբացել բոլշևիկների կողմից փակված վանքերն ու եկեղեցիները»⁴⁰⁷:

Այս խնդիրներին հետամուտ լինելուն խանգարեց ռազմաքաղաքական իրավիճակի սրումը՝ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը: Ինչպես ռուս ուղղափառ եկեղեցին, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցին չէր կարող հեռու մնալ տեղի ունեցող իրադարձություններից, ժողովրդին պայքարի ոգեկոչելուց: Արդեն, 1941 թ. հուլիսի 5-ին հայ եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհուրդը թշնամու դեմ պայքարի կոչով դիմեց աշխարհի հայ հավատացյալներին:

Հայ Առաքելական եկեղեցուն պարտադրված վիճակից դուրս բերելու և նրա դիրքերը ամրապնդելու համար միակ ճանապարհը Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանն, իրավացիորեն, տեսնում էր ակտիվ քաղաքական գործունեության ու բարեգործության մեջ:

Հայ եկեղեցու ձեռնարկների գնահատականն էր Ստալինի 1943 թ. հունվարի 26-ի հեռագիրն ուղղված Գևորգ արք. Չորեքյանին, ուր ասվում էր. «Խնդրում եմ իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը...»⁴⁰⁸: Այս արձագանքին սպասող հայ եկեղեցու համար ակտիվ գործելու և պաշտոնապես ճանաչվելու իրավունք էր տրվում: Ավելին,

⁴⁰⁶ Նույն տեղում, էջ 135-136:

⁴⁰⁷ Նույն տեղում, էջ 136:

⁴⁰⁸ Տերչանյան Ա., Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), Ե., 2001, էջ 47:

ընդգծելու համար պետություն-եկեղեցի «շտկված» հարաբերությունները, Ստալինի ցուցումով 1943 թ. նոյեմբերի 28-ին ժողկոմ-խորհն որոշում կայացրեց հայտերի ներկայացման դեպքում եկեղեցիների վերաբացման կարգի մասին, որը սակայն, իրականացվեց մասամբ:

1945 թ. ապրիլի 19-ը շրջադարձային էր հայ եկեղեցու պատմության մեջ՝ Գևորգ արք. Չորեքյանին Կրեմլում ընդունեց Ի. Ստալինը: Այս համդիպմանն Ազգընտիր տեղապահը ներկայացրեց էջմիածնի հետագա գործունեության համար անհրաժեշտ պահանջ-խնդիրներ, սակայն դրանցից ամենազլխավոր ձեռքբերումն Ազգային եկեղեցական ժողովի գումարման և կաթողիկոսի ընտրություններ անցկացնելու թույլտվությունն էր:

Ազգային եկեղեցական ժողովի բացումը տեղի ունեցավ 1945 թ. հունիսի 16-ին, ուր ներկա էին. «Արտասահմանի թեմերից՝ Եգիպտոսի, Ամերիկայի, Արևելյան, Բուլղարիայի, Իրանա-Հնդկական և Թեիրանի, Ռումինիայի և Աստրախանի թեմական ներկայացուցիչն իրենց թեմերի պատգամավորներով: ՍՍՌ Միության թեմերից՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքու-Թուրքեստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի թեմական առաջնորդներն իրենց պատգամավորներով. ընդամենը 102 պատգամավոր, որոնցից 28 հոգևորական և 74 աշխարհական»⁴⁰⁹:

Հունիսի 22-ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ արք. Չորեքյանը (Գևորգ Զ):

1945 թ. Ազգային եկեղեցական ժողովը շրջադարձային նշանակություն ունեցավ. «Եկեղեցու կառուցվածքում հայտնվեցին նոր թեմեր ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում»⁴¹⁰:

1920-1930-ական թթ. խորհրդահայ թեմերում՝ Հյուսիսային Կովկասից մինչև Հեռավոր Արևելք, հայ եկեղեցին և նրա

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 97; Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 170:

⁴¹⁰ Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 174:

սպասավորներն ենթարկվեցին բռնությունների, դատավարության, աքսորի և պառակտման:

Խորհրդային բռնաճնշիչ համակարգի՝ հայ եկեղեցուն, նրա սպասավորներին ու հավատացյալներին հասցրած վնասները հսկայական էին: Հետպատերազմյան տարիներին Հայ Առաքելական եկեղեցին դանդաղորեն, սակայն կարողացավ վերագտնել իրեն և կրկին ստանձնել իր հոգևոր-ազգային դերակատարությունը:

Միջազգային ռազմաքաղաքական իրավիճակով և Երկրորդ համաշխարհային պատերազմով պայմանավորված խորհրդային իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հանդեպ սկսել էր փոխվել արդեն 1940-ական թթ.: Խորհրդային իշխանությունների ճնշումը թուլացավ, որն ամենևին էլ չէր նշանակում եկեղեցու հետ հաշտություն և նրա դիրքերի վերականգնում: Այդ դժվարին փուլում Հայ Առաքելական եկեղեցու ղեկի մոտ կանգնած էր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Այսպիսով, Հայ Առաքելական եկեղեցու զահին յոթ տարվա բացակայությունից հետո բարձրացավ Գևորգ Զ-ն, ում վիճակված էր անելանելի թվացող իրավիճակից դուրս բերել եկեղեցին: Ազգային եկեղեցական ժողովն ընդունեց Հայ Առաքելական եկեղեցու նոր սահմանադրություն, իսկ շատ չանցած վերականգնվեց ճեմարանի գործունեությունը, տպարանը, վանքի գրադարանը, «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը:

Հետևում մնացին սարսափելի հալածանքներն ու խորը ճգնաժամը, եկեղեցին վերագտավ իրեն, ամրապնդեց խարխված հիմքերը, վերականգնվեց Էջմիածնի հեղինակությունն ու դերը, նրա համազգային նշանակությունը:

1945 թ. Ազգային եկեղեցական ժողովն իր որոշումներով, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությամբ, հայ եկեղեցուն վերակազմվելու և գործելու հնարավորություն ընձեռեց՝ իր պատմական դերը կատարելու հայության հոգևոր-մշակութային կյանքում:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ խորհրդային իշխանությունների առաջ հանդես էր գալիս ազգասեր ձեռնարկներով՝ կազմակերպել արևմտահայերի ներգաղթ, լուծել բռնադատված և աքսորված հոգևորականների խնդիրը, 1944 թ. Ղրիմից աքսորված հայերի վերադարձի կազմակերպում իրենց բնակության նախկին վայրեր կամ Հայաստան⁴¹¹:

Գևորգ Զ կաթողիկոսի գործունեությունը համառ ու նվիրակա էր. «Գևորգ Զ Հայրապետը, պետական այրերի քարացած մտածողութանը հակադրելով իր նուրբ դիւանագիտութիւնը, կարողացաւ կանգնեցնել համայնավարական հակազգային եւ հակաեկեղեցական քաղաքական գիծը եւ ստիպեց հաւիտենականն ու մնայուն արժէքները զանազանել ժամանակաւորից»⁴¹²:

Գևորգ Զ-ի գահակալությամբ ավարտվեց, շրջվեց Հայ Առաքելական եկեղեցու դեմ սպառնալի չափերի հասած հալածանքների պատմափուլը, որը գործնականում հանգեցրել էր հայ եկեղեցական կառույցի թուլացմանն ամբողջ ԽՍՀՄ տարածքում, երբ խորհրդահայ համայնքներում փակվել և քանդվել էին տասնյակ հայկական եկեղեցիներ, իսկ կանգուն մնացածները վերածվել էին պահեստների կամ ակունքների:

Այնուհանդերձ, հետպատերազմյան տարիներին խորհրդային հանրապետություններում ապրող հայության նոր սերունդն արդեն միավորված չէր համայնքային կամ եկեղեցական կառույցի շուրջը, հայ դպրոցը լայնորեն ներկայացված չէր, երիտասարդ սերունդն անհաղորդ է մնացել ազգային կյանքին:

Նույնիսկ հետպատերազմյան շրջանում նկատվող շրջադարձը լիարժեքորեն չլուծեց հայ եկեղեցու առջև ծառայած

⁴¹¹ Մաղոյեան Ա., Գևորգ Զ Չորեքչյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին, 2011, էջ 163-164:

⁴¹² Սարգսեան Եղիշէ աւ. Քահյ., «Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը». Գեորգեան ճեմարան. Աստուածաբանական համալսարան (1945-2006), Ս. Էջմիածին, 2009, էջ 57:

խնդիրները, ավելին՝ շարունակվեցին եկեղեցիների փակումն ու ավերը:

Գևորգ Զ Չորեքյանի գահակալությամբ Հայ Առաքելական եկեղեցում սկսված նորոգիչ գործընթացը շարունակվել և ավելի ամուր հիմքերի վրա է դրվել Վազգեն Վեհափառի օրոք:

Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետին կից ՀԵԳԽ-ի (Հայ եկեղեցու Գործերի Խորհրդի) նախագահ Հր. Գրիգորյանի՝ Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետի նախագահ Ա Քոչինյանին ուղղված 1955 թ. մայիսի 6-ի գրությունը տեղեկանք էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության ազգային-եկեղեցական ժողովի անցկացման վերաբերյալ: Դրա համաձայն Ազգային եկեղեցական ժողովին մասնակցելու համար արտասահմանյան թեմերից սպասվում էր 31 հոգևորական և 39 աշխարհական, ներքին թեմերից՝ 12 հոգևորական և 88 աշխարհական մասնակից:

Ըստ այդմ, Նոր Նախիջևանի և Բաքու-Թուրքեստանի թեմերից մասնակցելու էին 1-ական հոգևորական և 6-ական աշխարհականներ, Հյուսիսային Կովկասի թեմից և Լեռնային Ղարաբաղից՝ 1-ական հոգևորական և 7-ական աշխարհականներ, Վրաստանի թեմից՝ 1 հոգևորական և 17 աշխարհական, իսկ Կիրովաբադից՝ 1 հոգևորական և 4 աշխարհական⁴¹³:

1955 սեպտեմբերի 30-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, Ամենայն Հայոց 130-րդ կաթողիկոս է ընտրվել Վազգեն եպիսկոպոս Պալճյանը (Վազգեն Ա (1955-1994 թթ.):

Վազգեն Ա կաթողիկոսն իր գահակալության տարիներին մեծ ավանդ ունեցավ հոգևոր-մշակութային վերածննդի, եկեղեցաշինության, հայ եկեղեցու միասնության հաստատման և հայրենիք-սփյուռքյան համայնքներ կապերի ամրապնդման գործում: Վազգեն Ա-ի գահակալության տարիները, հակառակ

խորհրդային Միության ճնշող քաղաքականությանը, եղել են բեղուն ու արդյունավետ, հայ եկեղեցին իր հովվապետի ճկուն գործելակերպի շնորհիվ մնացել է իր բարձունքի վրա⁴¹⁴:

Վազգեն Ա-ն, կաթողիկոս ընտրվելուց ամիսներ առաջ, ուղևորություն է կատարել Հայ Առաքելական եկեղեցու «ներքին» թեմերում՝ իրավիճակին մոտիկից ծանոթանալու համար, քանի որ համարվում էր կաթողիկոսի առաջիկա ընտրությունների հիմնական հավակնորդը: Վազգեն եպս. Պալճյանը հակասական տպավորություններ էր ստացել ԽՍՀՄ-ում գործող հայ հոգևորականության և եկեղեցիների աշխարհական ակտիվի մասին՝ անթաքույց կարծիք հայտնելով, որ փոքրիկ բացառություններով հանդերձ, հոգևոր սպասավորների շրջանում ազնիվ, կրոնիկ և ժողովրդիկ նվիրված մարդիկ չկան և ակնհայտ են դիրքի չարաշահման ու եկեղեցական գումարների յուրացման փաստերը⁴¹⁵:

Հայ Առաքելական եկեղեցու ԽՍՀՄ թեմերում առկա էր որոշակի ներքին պայքար հոգևորականների, եկեղեցական խորհուրդների և թեմական խորհուրդների միջև, որն արդյունք էր ԳՀԽ-ի թուլացման, փոխհարաբերությունները կարգավորող հրահանգի և կանոնակարգի բացակայության:

Անթույլատրելի, կարգազանց իրավիճակ ու անմաքուր պայքար էր առկա բոլոր թեմերում: Ընչաքաղց պայքարի և խռովությունների մեջ էին թե Բաքուն, թե Կիրովաբադը, թե Ռոստովը, թե Չալթրը, և թե Թբիլիսին ու Լեռնականը⁴¹⁶:

Վազգեն Պալճյանի այցը Մոսկվա նրան բերել էր եզրահանգման, որ տեղի հայ արեղաները հոգևոր ծառայության համար անհրաժեշտ նվազագույն տվյալներ չունեին և հոռի գծերից բացի ոչինչ չեն սովորել՝ չխոսելով նյութական միջոցների շռայլ վատնումների մասին:

⁴¹⁴ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 4:

⁴¹⁵ Վալերազեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա (1955-1994թթ.), նշվ. աշխ., էջ 102:

⁴¹⁶ Նույն տեղում, էջ 103-104:

⁴¹³ Վալերազեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա (1955-1994թթ.), փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ, կազմող՝ Գ. Եազըճեան, Եր., 2008, էջ 130:

Չնայած հայ եկեղեցու խորհրդային թեմերում նկատելի այս խնդիրներին, թեմական առաջնորդների անգործությանը և սպասվող ահռելի աշխատանքներին, Վազգեն Պալճյանին ոգևորել էր հայ հավատացյալների կրոնասիրությունն ու ազգասիրությունը:

Վազգեն Ա-ի օրոք վերանորոգվել են ինչպես Հայաստանի եկեղեցիները՝ Մայր Տաճարը, Էջմիածնի սբ. Հռիփսիմեն, սբ. Գայանեն, սբ. Շողակաթ վանքերը, Գեղարդավանքը, Խոր Վիրապը, Օշականի սբ. Մեսրոպ Մաշտոց, Երևանի սբ. Սարգիս, սբ. Զորավոր, սբ. Հովհաննես եկեղեցիները, այնպես էլ «Բաքվի, Մոսկվայի, Դոնի Ռոստովի և Արմավիրի եկեղեցիները»⁴¹⁷:

Վազգեն Ա-ի ձեռնարկած շինարարական-վերանորոգչական գործունեությունն ապահովվում էր հիմնականում արտասահմանյան թեմերի և բարերարների (հատկապես Գ. Կյուլպենկյան հիմնարկության) հատկացումներով, քանի որ ԽՍՀՄ թեմերից ստացվող եկամուտներն անբավարար էին: Այսպես, 1958 թ. Մայր Աթոռի տարեկան եկամուտը Մայր Տաճարից և ներքին հինգ թեմերից կազմել էր մոտ երկու միլիոն ռուբլի⁴¹⁸:

Վազգեն Ա-ի ջանքերի շնորհիվ արդեն 1956 թ. փետրվարի 9-ին ՌԽՖՍՀ Մինիստրների Սովետի որոշմամբ Մոսկվայի հայկական եկեղեցին⁴¹⁹ փոխանցվել է հայ հավատացյալներին, որին անմիջապես հաջորդել է հայ եկեղեցու ժամանակավոր գործադիր մարմնի նշանակումը: Գործադիր մարմնին հանձնարարվել է շփումներ հաստատել պետական համապատասխան մարմինների հետ, ընդունել եկեղեցին, կից շենքերը, գերեզմանա-

տունը, բավարարել քաղաքի հայության կրոնական պահանջ-մունքները և հաշվետու լինել ԳՀԽ-ին⁴²⁰:

Վազգեն Ա-ի ազգանվեր, եկեղեցասեր գործունեության ու ջանքերի վկայությունն են խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում նրա ցուցաբերած աննահանջ դիրքորոշումն ու քայլերը Հայկական ԽՍՀ և միութենական հանրապետությունների հայկական հոգևոր-մշակութային հաստատությունները վերադարձնելու ուղղությամբ:

Այդ համատեքստում կարևոր էին ԽՍՀՄ պետական մարմինների ու ղեկավարության առջև ունեցած ձեռնարկները (նամակները Ն. Բուլգանին, Ն. Խրուշչով, Ա. Կոսիգին և այլոց), որոնցում ակնհայտ դրսևորվել են կաթողիկոսի՝ որպես մեծ հայրենասերի, հոգևոր առաջնորդի և ազգային-պետական գործչի հատկանիշները:

Կաթողիկոս Վազգեն Ա-ն ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ (1955-1958 թթ.) Ն. Ա. Բուլգանինին հասցեագրած նամակում (1956 թ. մայիսի 12) ընդգծել էր հայ եկեղեցու անխզելի կապերը հայ սփյուռքի հետ, անվերապահ և նվիրական մասնակցությունը Հայրենական պատերազմում, միևնույն ժամանակ, բարձրացնելով հարցերի լայն շրջանակ.

«...Ձեր բարձր ուշադրությանն ենք ներկայացնում խորհրդային Միության ներսում գտնվող, մեծաթիվ հայ բնակչությամբ շրջաններում նոր եկեղեցիների բացման խնդիրը, ինչը մենք հույժ կարևոր խնդիր ենք համարում հետևյալ նկատառումներից ելնելով:

ա. Աղբյուրների տարածքում բնակվում է կես միլիոնից ավել հայեր, սակայն այնտեղ գոյություն ունեն ընդամենը երկու եկեղեցի՝ Բաքվում ու Կիրովաբադում: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում, որտեղ ապրում են շուրջ 200 հազար հայեր կա միայն մեկ եկեղեցի, այն էլ ոչ թե մարզային կենտրոնում, այլ հեռավոր գյուղերից մեկում: Եկեղեցի չկա նաև Նախիջևանի

⁴¹⁷ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, նշվ. աշխ., էջ 4:

⁴¹⁸ Վաերագրեր Հայ եկեղեցու պատմության: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա (1955-1994թթ.), նշվ. աշխ., էջ 557:

⁴¹⁹ Խոսքը վերաբերում է Մոսկվայի հայկական գերեզմանատանը կից Սբ. Հարության եկեղեցուն: Այն Մոսկվայի հայ համայնքին վերադարձնելու տարեթիվ է նշվում նաև 1954 թ., Տես Рафиенко Л. С., Армянский религиозный, культурный и благотворительный центр в Москве в конце XVIII-первой трети XX вв., Московский регион: этноконфессиональная ситуация, М., 2000, с. 116.

⁴²⁰ ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 108, ք. 53:

երկրամասի հայ բնակչության շրջաններում: Գործող եկեղեցի չկա Միջին Ասիայի հանրապետություններում, որտեղ հայ բնակչության թվաքանակը հասնում է մինչև 100 հազարը: Վրաստանի հանրապետությունում, որտեղ 400 հազարից ավել հայ կա, գործում են չորս եկեղեցիներ՝ երկուսը Թբիլիսիում և երկուսն էլ հեռավոր շրջաններում: Եկեղեցի չկա հայ մեծաթիվ բնակչությամբ այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Բաթումին և Սուխումին:

Այդ բոլոր փաստերն հայտնի են Խորհրդային Հայաստան այցելող բարձրաստիճան հոգևորականությանը և հասարակական ականավոր գործիչներին և ստիպված ենք նշել, որ դա տեղիք է տալիս անբարենպաստ կարծիքի՝ մեր երկրում եկեղեցական գործի դրվածքի մասին»:

Վազգեն Ա-ն իր նամակում ընդգծում էր ԽՍՀՄ հայերով բնակեցված մարզերից ստացած բազմաթիվ խնդրագրերի մասին, որտեղ հավատացյալ հայերը բողոքում էին, որ զրկված են գործող եկեղեցիներից, անհրաժեշտ ծեսերի կատարումից և հոգևոր մխիթարանքից:

Այսպիսով, Վազգեն Ա-ն ԽՍՀՄ կառավարությունից խնդրում էր հայկական փակված եկեղեցիների վերաբացման թույլտվություն հայահոծ շրջաններում՝ առանձնացնելով նաև հայ ժողովրդի համար դրանց պատմական մեծ նշանակությունը, որոնց թվում էին Ռոստովի մարզի Սուրբ Խաչ եկեղեցին, Գանձասարն ու Տաթևը:

Նույն նամակում կաթողիկոսն անդրադարձել է նաև խորհրդահայ համայնքներում հայ կրթական խնդիրներին, դպրոցական ցանցի ընդլայնման հարցերին:

«Արտասահմանյան հայերից շատերը որոշ դժգոհություն էին արտահայտում այն բանի համար, որ հայ հոծ բնակչությամբ Վրաստանի և Ադրբեջանի առանձին շրջաններում ու քաղաքներում շատ հայկական դպրոցներ ընդհանրապես փակ են, իսկ որտեղ կան՝ անբավարար են լիովին ընդգրկելու համար հայ

երեխաներին, որոնք ցանկանում են ուսանել մայրենի լեզուն: Այսպես, օրինակ, Դոնի Ռատովում, Կրասնոդարում, Արմավիրում, Պյատիգորսկում, Բաթումիում, Սուխումիում, անդրկասպյան հանրապետություններում և այլ տեղերում, որտեղ մինչև 1937 թ. գոյություն են ունեցել հայկական միջնակարգ դպրոցներ, ներկայումս դրանք բոլորովին չկան:

Մենք ցանկանում ենք հավաստիացնել Ձեզ, մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ Բուլզանին, որ մեր նամակում շոշափված հարցերը ներկայացնում են ողջ հայ ժողովրդի ամենաանկեղծ զգացմունքները ու նվիրական երազանքները»⁴²¹:

Միանգամայն դրվատանքի արժանի այս ազգասեր կեցվածքը Վազգեն Ա-ն դրսևորեց բազում անգամներ, սակայն խորհրդային կենտրոնական իշխանություններն այս հարցադրումների ճնշող մասը նույնիսկ քննարկման չդրեցին, ավելին՝ համապատասխան օղակներով կաթողիկոսին հասկացնել տվեցին դուրս չգալ զուտ եկեղեցական գործերի տնօրինման շրջանակներից:

Այսպիսի իրականությունը հիասթափություն ապրող կաթողիկոսին չհուսալքեց, ավելին, հովվական այցեր, իրականացնելով խորհրդահայ համայնքներ ու եկեղեցական թեմեր, Վազգեն Ա-ն հանդես է բերել անկտորում կամք ու հավատ՝ հայ եկեղեցու դիրքերը շտկելու, վանքերն ու եկեղեցիները վերանորոգելու, վերադարձնելու առումով:

Վազգեն Ա-ն, ընդհանուր առմամբ, խնդրում էր թույլտվություն բացելու համար 9 եկեղեցի և մատուռ Հայկական ԽՍՀ, 36 եկեղեցի և ուխտավայր միութենական մյուս հանրապետությունների տարածքում, Սբ. Էջմիածնի ենթակայությանը փոխանցել Գանձասարի, Տաթևի և Սուրբ Խաչի (Դոնի Ռատով) վանքերը⁴²²:

⁴²¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5787, թթ. 1-8

⁴²² ՀԱԱ, ֆ. 823, ց. 4, գ. 23, թթ. 1-3:

Խորհրդահայ թեմերում հայկական եկեղեցիների վերադարձման խնդիրը լուծելու համար Վազգեն Ա-ն 1958 թ. նամակով դիմել է նաև ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի Նախագահ Ն. Խրուշչովին, ուր հայրենադարձության կազմակերպման, հարևան Ադրբեջանի և Վրաստանի կազմում գտնվող պատմական հայկական երկրամասերի Հայաստանին միավորելու հարցերի հետ մեկտեղ մասնավորապես նշվում էր, «Սրտի խոր ցաւով Մենք պէտք է հաստատենք, որ կայ չափազանց կարևոր խնդիր մը, որն իր լուծումը բաւարար չափով չէ ստացած առ այսօր: Ան հայ եկեղեցիներու բացման հարցն է... միայն Սովետական Հայաստանի սահմաններուն մէջ ընդամենը քանի մը եկեղեցիներ ու վանքեր բացուեցան: Մինչդեռ Հիւսիսային Կովկասի, Վրաստանի, Ատրպեյճանի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի մէջ առ այսօր որեւէ մէկ եկեղեցի եւ վանք չէ բացուած... Բոլորին յայտնի է, որ Հայաստանի եւ հարեւան հանրապետութեանց մէջ նախապէս հազարէ աւելի եկեղեցիներ գործած են: Մեր այսօրուան պահանջը անհամեմատ փոքր է, նուազագոյնէն ալ պակաս, անուանապէս՝ Սովետական Միութեան այն շրջաններուն մէջ, որտեղ մեծ թիւով հայեր կ'ապրին, առաւելաբար Հայաստանին դրացի հանրապետութեանց մէջ ընդամենը քանի մը տասնեակ (երեսունքառասուն) եկեղեցի բանալ՝ այսօր գործող 44 եկեղեցիներուն կողքին: Մենք կ'ուզենք մասնայատուկ կերպով ընդգծել, որ այս հարցը, չափազանց հասկնալի պատճառներով, շատ կարևոր հանգամանք մըն է նաեւ արտասահմանի հայոց աչքերուն մէջ...»⁴²³:

Վազգեն Ա-ն առանձին դիմումներով հանդես է եկել նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետին կից ՀԵԳԽ-ի առաջ առաջարկներ ներկայացնելով ու պարզաբանումներ պահանջելով:

⁴²³ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955-1994թթ.), նշվ. աշխ., էջ 672-673:

Հատկանշական է, որ ԽՍՀՄ-ում հակակրոնական պայքարը և աթեիստական գաղափարախոսությունն ուժեղացնելու քաղաքականությունը նոր սրացում է ստացել հետստալինյան շրջանում: Այդ քաղաքականության արդյունքում խորհրդային տարբեր հանրապետություններում շարունակվել է հայկական եկեղեցիների փակման ու ավերման գործընթացը, հոգևորականներին նոր հարկային դրույքաչափերով ծանրաբեռնելու և եկեղեցու նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու փորձերը:

Հայ եկեղեցիների շուրջ անմխիթար վիճակ էր տիրում հատկապես Վրացական ԽՍՀ-ում, Ադրբեջանական ԽՍՀ-ում և ՌԽՖՍՀ-ում:

Ուշագրավ է Վազգեն Ա-ի 1958 թ. օգոստոսի 26-ի բողոքագիրն ուղղված ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարյանին, ուր մտահոգություն և հիասթափություն է արտահայտվել Ադրբեջանական ԽՍՀ-ում հայկական եկեղեցիների շարունակվող անմխիթար վիճակի և Հյուսիսային Կովկասի Պյատիգորսկ քաղաքի հայկական եկեղեցին քանդելու տեղական իշխանությունների քայլի առնչությամբ⁴²⁴ (հակառակ տրված խոստումների, որ եկեղեցին վերաբացվելու է):

Հիշյալ նամակում Վազգեն Ա-ն հանգամանալիորեն ներկայացրել է Կովկասյան Հանքային Ջրերի շրջանի հայաիոծ Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ և Եսենտուկի քաղաքների ավելի քան 25 հազար հայ ազգաբնակչության և հավատացյալների ցանկությունը՝ գործող տեսնել շուրջ 30 տարի առաջ փակված իրենց երկու եկեղեցիները (Պյատիգորսկում և Կիսլովոդսկում): Վազգեն Ա-ն հույս էր հայտնում, որ ՀԵԳԽ-ի նախագահն այդ նամակի բովանդակության վերաբերյալ տեղյակ կպահեր Հայաստանի և միութենական պատկան մարմիններին:

Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ ոտնձգությունները շարունակել են ՌԽՖՍՀ-ում, երբ 1959 թ. հուլիսին վերջնականապես լուծվել է Դոնի Ռոստով քաղաքի հայկական եկեղեցու փակ-

⁴²⁴ Նույն տեղում, էջ 680:

ման հարցը՝ Կ. Մարքսի հրապարակի վերակառուցման նպատակով. «Քննարկելով Ռոստոփի Մարզգործկոմի որոշումը, ԿՊԳԽ-ը (ԽՍՀՄ կառավարությանը կից Կրոնական Պաշտամունքների Գործերի Խորհուրդ, նախագահ՝ Ա. Պուզին) համաձայնութիւն տուեց Ռոստով քաղաքի հայկական տաճարի փակմանը ելնելով այն բանից, որ տաճարից ոչ հեռու, քաղաքում կայ եւս մէկ, գրանցուած հայկական եկեղեցի, որտեղ էլ Ռոստով քաղաքի հայ հաւատացեալները կարող են իրենց կրօնական պահանջ-մունքները կատարել»⁴²⁵:

Նոր Նախիջևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր դժվարին գոյությունն ապրել է մինչև 1960-ական թթ., երբ ավերվել է⁴²⁶:

Հայ Առաքելական եկեղեցու առջև ծառայած վերոհիշյալ հարցերն ու առաջիկա ծրագրերը Վազգեն Ա-ի կողմից բարձրացվել են ԽՍՀՄ Մինիստրների Սովետի Նախագահի առաջին տեղակալ Ա. Կոսիգինի հետ 1960 թ. հոկտեմբերի 1-ին կայացած հանդիպման ժամանակ: Վազգեն Ա-ն իր գոհունակությունն է փոխանցել արտասահմանի եկեղեցական թեմեր պարբերաբար այցելելու հնարավորության ընձեռման համար՝ նշելով, որ արտասահմանում մեծ ոգևորություն են առաջացնում երկրում հայկական պատմական հուշարձանների վերականգնման աշխատանքները և այդ առումով օգտակար էր դիտում հատուկ փաստագրական ֆիլմի նկարահանումը՝ հայկական գաղթօջախներում ցուցադրելու համար:

Անդրադարձ կատարելով հայ եկեղեցու ներքին խնդիրներին՝ Վազգեն Ա-ն դրանք անմիջականորեն շաղկապել էր արտասահմանում Մայր Աթոռի հեղինակության հետ. «Ինձ աննպատակայարմար է թոււմ, որ մեր դիրքերն արտասահմանում թուլանան: Հիմա ՍՄՀՄ տարածքում կան աննշան թուով հայկա-

⁴²⁵ Նույն տեղում, էջ 756:

⁴²⁶ Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, Москва, 1998, с. 292.

կան եկեղեցիներ, եւ եթէ դրանց մի մասը փակուի, ապա դա կվճասի արտասահմանում մեր գործին: Վերջին երկու տարուայ ընթացքում, մասնաւորապէս նման երեւոյթ գրանցուեց Հիւսիսային Կովկասում, ինչպէս նաեւ Աստրախանում, Կրասնոդարում եւ այլուր: Կուզէի պարոն Կոսիգինի, ինչպէս նաև կառավարութեան բարձր ուշադրութիւնը հարւիրել այն բանի վրայ, որ ներկայումս գոյութիւն ունեցող եկեղեցիների նուազագոյն քանակը պէտք է պահպանել ի շահ արտասահմանում մեր ընդհանուր գործի»⁴²⁷:

ԽՍՀՄ հայկական եկեղեցական թեմերում հակաեկեղեցական մոր ալիքի հարվածը թուլացնելու և հնարավոր մեծ կորուստներից խուսափելու համար Վազգեն Ա-ն նրբանկատորեն շեշտադրել է դրա վտանգավորությունն արտասահմանի հայության հետ հարաբերությունների առումով:

Վերոհիշյալ հանդիպմանը կաթողիկոսը բարձրացրել է նաև ճեմարանի սաների թվաքանակի անցանկալի կրճատման և զորակոչման հարցերը, Բաքվի և Մոսկվայի թեմակալ առաջնորդների բնակարանի, հայրենադարձության կազմակերպման և ազգային-եկեղեցական ժողով գումարելու խնդիրները:

Հարկ է նշել, որ Ա. Կոսիգինի հետ հանդիպումն ունեցել է կարևոր և գործնական նշանակություն, երկրի բարձրագույն իշխանություններն արագ արձագանքել են կաթողիկոսի կողմից բարձրացված հարցերին, որոնց մի մասը լուծում է ստացել:

Կարգավորվել են ճեմարանի սաներին զորակոչից ազատելու, 1962 թ. ազգային-եկեղեցական մոր ժողովի հրավիրման, ֆիլմ ստեղծելու, հրատարակությունների հարցերը և այլն: Առանձին արձագանքի են արժանացել Բաքվի և Մոսկվայի թեմակալ առաջնորդների բնակարանի, փակված եկեղեցիների խնդիրները:

Ա. Կոսիգինի հետ Վազգեն Ա-ի հանդիպման ընթացքում բարձրացրած հարցերի առնչությամբ ԽՍՀՄ ԿՊԳԽ-ն կաթողիկո-

⁴²⁷ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955-1994թթ.), նշվ. աշխ., էջ 890-891:

սին տեղեկացրել է, որ Աստրախանի հայկական եկեղեցին փակվել է գոյություն ունեցող կրոնական ընկերության ինքնալուծարման և եկեղեցական շինություններից հավատացյալների հրաժարման պատճառով, իսկ Կրասնոդար քաղաքի եկեղեցին հայ հավատացյալներից վերցվել է շինության վթարային լինելու պատճառով, սակայն այդ հարցը դեռևս քննարկման փուլում է⁴²⁸։

Միևնույն ժամանակ նշվում էր, որ Ռոստովի հայկական եկեղեցուն երկրորդ հոգևորականի գրանցմանը տեղական իշխանությունները չեն խոչընդոտում, սակայն անհրաժեշտ է հավատացյալների կողմից հարցի առաջադրում։

ՌԽՖՍՀ տարածքում հայկական եկեղեցիների փակման և եկեղեցու սպասավորների եկամտահարկի չափերի բարձրացման վերաբերյալ Վազգեն Ա-ն իր դժգոհությունն է հայտնել նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանին ուղղված նամակում։ Այդ առնչությամբ Վազգեն Ա-ն Հեգհու-ի նախագահ Ս. Գասպարյանի հետ հանդիպմանն ընդգծել է, որ այդ քայլերն եկեղեցու նկատմամբ նոր քաղաքական վերաբերմունքի արդյունք են և հանգեցնելու են էջմիածնից հոգևորականության հեռացման։

ԽՍՀՄ տարածքի հայ եկեղեցական թեմերում առկա խնդիրները և խորհրդային իշխանությունների վերաբերմունքը հնարավորություն չեն տվել Հայ Առաքելական եկեղեցին դնել հարկավոր բարձրության վրա։

1964 թ. մայիսի 22-ին ԽՍՀՄ ԿՊԳԽ նիստը, քննարկելով Հեգհու-ի նույն թվականի ապրիլի 2-ի թիվ 91 նամակը, համաձայնություն է տվել հայ եկեղեցու Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի թեմը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի վերակազմակերպմանը՝ այդ թեմի կենտրոնը Ռոստովից Մոսկվա տեղափոխելով⁴²⁹։

⁴²⁸ Նույն տեղում, էջ 918։

⁴²⁹ ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 254, ք. 18։

Այս որոշումից հետո՝ 1966 թ., Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի նախկին թեմերի և Մոսկվայի հովվության⁴³⁰ միավորմամբ կազմավորվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը⁴³¹ Մոսկվա կենտրոնով՝ առաջնորդանիստը Մոսկվայի Սբ. Հարության եկեղեցին։ Նորաստեղծ թեմը միավորել է ԽՍՀՄ հանրապետությունների հայ եկեղեցական համայնքները՝ բացառությամբ Անդրկովկասի։

1988 թ. ապրիլին գրանցվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սանկտ-Պետերբուրգի համայնքը, վերաբացվել և համայնքին է վերադարձվել քաղաքի Սբ. Հարության, իսկ ավելի ուշ՝ Սբ. Կատարինե եկեղեցին⁴³²։ 1991թ. հիմնվել է Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդությունը։

Մինչև 1990-ական թթ. սկիզբը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմն ուներ ընդամենը 7 եկեղեցի՝ Մոսկվայի Սբ. Հարության, Սանկտ Պետերբուրգի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Չալքերի, Վլադիկովկասի, Բուդյոնովսկի /Մուրբ Խաչ/ եկեղեցիները։

Վազգեն Ա-ի գործունեության հետ են կապված միջեկեղեցական կապերի ամրապնդման ճանապարհով Հայ Առաքելական եկեղեցին նոր բարձրության վրա դնելը, ազգային խնդիրներին սատարելը։ Իր մեծ հեղինակությամբ նա կանգնել է 1980-ական թթ. համազգային զարթոնքի դիրքերում, կարեկցել և աջակցել է

⁴³⁰ Մոսկվայի հովվությունը գործել է 1956-1966 թթ.։ Այն գլխավորել են հայր Մեսրոպն (1956 թ. հունիս-հուլիս) ու սրբազան Պարզևը (1956-1966 թթ.)։

⁴³¹ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը գլխավորել են եպիսկոպոս Պարզև Գևորգյանը (1966-1976 թթ.), արքեպիսկոպոս Տիրան Կյուրեղյանը (1976-2000 թթ.)։ 2000 թ. հոկտեմբերից թեմը գլխավորում է եպիսկոպոս Եզրաս Ներսիսյանը։

⁴³² 2000 թ. հուլիսի 12-ին Սանկտ Պետերբուրգի վերանորոգված Սբ. Կատարինե եկեղեցին միասնաբար օծել են հայ Առաքելական և ռուս ուղղափառ եկեղեցիների առաջնորդները՝ Գարեգին Երկրորդն ու Ալեքսի Երկրորդը։

բազմահազար հայ փախստականներին, գոտեպնդել Լեռնային Ղարաբաղի ազատամարտի զինվորներին:

Այսպիսով, խորհրդային տարիներին հայկական տասնյակ եկեղեցիներ ավերվեցին, քանդվեցին և օգտագործվեցին այլ նպատակներով: Եկեղեցու դեմ արշավի տարիներին, չնայած կրած մեծ զրկանքներին, բազմաթիվ հայկական եկեղեցիներ հանդիսացան ազգային-համայնքնային կյանքի դրսևորման յուրօրինակ կենտրոններ՝ շարունակելով ծառայել հայության հոգևոր, կրթական, մշակութային առաջընթացին:

Հայ Առաքելական եկեղեցին Վազգեն Ա-ի առաջնորդությամբ, դիմակայելով ծանր փորձություններ, կարողացավ ազատվել ամբողջատիրական համակարգի կապանքներից և գործունեության լայն հնարավորություն ստանալ՝ իր ազգամեր գործը շարունակելու համար:

* * *

ՌԴ կազմավորումից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի կոնդակով /1997 թ. հունվարի 13-ին/ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվել է երեք թեմերի.

1. Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի, որի առաջնորդը միաժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչն է Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության մոտ: Թեմի վարչական սահմաններն ընդգրկել են նաև Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Բելոռուսը, Մոլդովան և Մարծ-բալթիկան:

2. Հարավային Ռուսաստանի թեմի⁴³³, որի առաջնորդանիստն է Կրասնոդարի Սբ. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին: Թեմն ընդգրկում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում

⁴³³ Թեմը 1997-2000 թթ. գլխավորել է Ծայրագույն վարդապետ Եզնիկ Պետրոսյանը, որից հետո մինչև օրս թեմի առաջնորդն է եպիսկոպոս Մովսես Մովսեսյանը:

և Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում գործող հայկական եկեղեցիներն ու համայնքները:

3. Ուկրաինայի թեմի, որը դեռևս 1991թ. սեպտեմբերի 1-ի վճռագրով կազմակերպվել էր որպես թեմ /կանոնական ճանաչում է ստացել 1997 թ./: Թեմի առաջնորդանիստն է Լվովի Սբ. Աստվածածին Վերափոխման եկեղեցին:

Հետխորհրդային տարիներին սկսվել է ՌԴ հայկական եկեղեցիների վերականգնաճ ու նորերի կառուցման ակտիվ աշխատանքներ: 1990-ական թթ. հայկական հասարակական կազմակերպությունների և կրոնական համայնքների կողմից հսկայական աշխատանք տարվեց կանգուն մնացած եկեղեցիների վերականգնման ուղղությամբ Արմավիրում, Վլադիկովկասում, Բուդյոնովսկում, Եդեսիայում և այլն:

ՌԴ հայկական համայնքի թվաքանակի աննախադեպ աճով և բնակության աշխարհագրության ընդլայնումով պայմանավորված հայկական եկեղեցիների շինարարություն է ծավալվել, ինչպես հայաստանում, ավանդական համայնքներում, այնպես էլ այնտեղ, որտեղ եկեղեցիներ չեն եղել:

Հայկական եկեղեցաշինությունն ընդգրկել է Հյուսիսային Կովկասը, Կենտրոնական Ռուսաստանը, Ուրալը, Սիբիրն ու Հեռավոր Արևելքը:

1990-ական թթ. - 2013 թ. նորակառույց տասնյակ հայկական եկեղեցիներ իրենց հոգևոր-լուսավորչական գործունեությունն են ծավալել Մոսկվայում, Նովոռոսիյսկում, Կրասնոդարում, Ադլերում, Տենգինկայում, Պյատիգորսկում, Սոչիում, Ստավրոպոլում, Կուրգանինսկում, Կիսլովոդսկում, Ապշերոնսկում, Կալինինգրադում, Նիժնի Նովգորոդում, Վսեվոլժսկում, Կիրովում, Վոլգոգրադում, Կրասնոյարսկում, Նովոկուզնեցկում, Բառնաուլում, Վլադիվոստոկում և այլուր:

Պյատիգորսկի ծխական խորհուրդը կազմակերպվել էր 1991 թ., որի պահանջով էլ հատկացվեց համապատասխան

տարածք և ՌԴ-ում կառուցված առաջին եկեղեցին Պյատիգորսկի Սբ. Սարգիս աղոթատունն էր, որն օծվել է 1992 թ.⁴³⁴:

Տասնյակ հայկական եկեղեցիների շինարարությունը գտնվում է ընթացքի մեջ, մյուսների համար հատկացվել են հողատարածքներ:

Գրեթե բոլոր հայկական եկեղեցիներին կից գործում են կիրակնօրյա դպրոցներ կամ մշակութային կառույցներ, որոնք կարևոր առաքելություն են ստանձնել տեղերում հայապահպանության, ազգային մշակույթի, լեզվի տարածման ու քարոզչության իրականացման ուղղությամբ:

2009 թ. սեպտեմբերի 23-ին Հայ Առաքելական Եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի կյանքում տեղի ունեցավ մեծ իրադարձություն՝ հանդիսավոր շուքով նշվեց առաջնորդարանի բացումը:

ՀԱԵ Հարավային Ռուսաստանի թեմի Առաջնորդարանը



Մոսկվայի Սբ. Պայծառակերպության եկեղեցի



ՀԱԵ Հվ. Ռուսաստանի հայոց թեմի Թեմական խորհրդի անդամների ցուցակը (2012 թ.)

1. Տեր Արամ ավագ քահանա Հունանյան – ք. Պյատիգորսկ
2. Տեր Հարություն ավագ քահանա Բայադյան - ք. Կրասնոդար

⁴³⁴ Акопян В. З., Возраждение церковной жизни армян Пятигорска, Армяне Ставрополя и Терека, Коллективная монография, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007, с. 198-199.

3. Քահանա Սարգիս Պողոսյան – ք. Կիսլավոդսկ
4. Ազատ Ասատուրով - ք. Սոչի
5. Մարտին Հովհաննիսյան (ատենապետ) - ք. Կրասնոդար
6. Նիկոլայ Քոչյան - ավան Նովոմիխայլովսկ
7. Գեորգի Պողոսով - ք. Նովոռոսիսկ
8. Գարիկ Ավետիսյան - ք. Արմավիր
9. Ժիրիկ Մխոյան - ք. Ստավրոպոլ
10. Ռազմիկ Արամյան – գ. Սուվորովկա
11. Վլադիմիր Գրիգորյան - Դաղստանի Հանրապետություն
12. Դոմին Սարուխանյան — ք. Կրասնոդար
13. Վալերի Ցուգունյան - ք. Գեորգիևսկ
14. Ալբերտ Այվազյան - ք. Կրասնոդար
15. Արթուր Պողոսյան – ք. Պյատիգորսկ

Վերստուգիչ հանձնաժողովի կազմը

- 1.Տեր Մակար ավագ քահանա Տերտերյան - ք. Արմավիր
- 2.Հարություն Գևորգյան - ք. Կրասնոդար
- 3.Արթուր Մինան - ք. Կիսլավոդսկ

ՌԴ հայության հոգևոր կյանքի նորոգության և վերելքի ակնառու դրսևորում էր Մոսկվայի Սբ. Պայծառակերպության եկեղեցու կառուցումը ռուսահայ բարերարների ջանքերով:

2013 թ. սեպտեմբերի 17-ին Մոսկվայում հանդիսավորապես օծվել է Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդանիստ Սբ. Պայծառակերպության եկեղեցին ու եկեղեցական համալիրը: Եկեղեցին ՌԴ հայության գլխավոր հոգևոր կենտրոնն է և ՀՀ-ից դուրս գտնվող ամենամեծ հայկական կրոնական համալիրը, որը զբաղեցնում է շուրջ 25 հզ քառ. մետր տարածք և տեղավորում է ավելի քան հազար մարդ: Համալիրի հեղինակն է ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը:

Մոսկվայի կենտրոնում ազգային ճարտարապետական կանոններին համահունչ կառուցված հայկական եկեղեցական համալիրի շինարարական աշխատանքներն սկսվել էին 2006 թ. և ընդգրկել Մայր Տաճարը, Սուրբ Խաչ եկեղեցին, Առաջնորդարանի շենքը, կրթամշակութային, վարչական և հյուրանոցային մասնաշենքերը, հանդիսությունների ու հյուրասիրությունների սրահները, թանգարանը: Եկեղեցական համալիրը կառուցվել է բաց ծիրանագույն, իսկ Մայր Տաճարը՝ Հայոց պատմական Անի մայրաքաղաքին հարակից քարհանքերից բերված վարդագույն տուֆով և գոտորված է խաչերով, զարդաքանդակներով ու մեսրոպատառ գրերով: Համալիրն իր ամբողջ տեսքով ու հարթաքանդակներով ներկայացնում է հայ ժողովրդի և հայոց պատմության դարակազմիկ էջերը՝ գրերի գյուտը, քրիստոնեության ընդունումը, հավատքի ու հայրենիքի համար մղված պայքարը, ոսկե դարը և այլն: Զարդաքանդակներն ու պատկերաքանդակները ներդաշնակորեն համադրված են եկեղեցական համալիրով մեկ սփռված հայ քանդակագործության խորհրդանիշ բազմաթիվ խաչքարերի հետ:

Մայր Տաճարի օծման հանդիսավոր ծիսակատարությունը կատարել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, արարողությանն իր օրհնությունն է բերել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլը:

Հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Ռուսաստանի պետական և հասարակական գործիչներ, Հայ Առաքելական եկեղեցու ՀՀ և արտերկրի թեմերի, ՌԴ կրոնական հարավանությունների առաջնորդներ, ներկայացուցիչներ և բարերարներ⁴³⁵:

⁴³⁵ <http://www.president.am/hy/foreign-visits/item/2013/09/16/President-Serzh-Sargsyan-attended-the-ceremony-of-consecration-of-Armenian-Church-in-Moscow-foreign/>

Օծման արարողությանը հաջորդել են եկեղեցու բակում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող «Սիրո և եղբայրության» հուշաղբյուրի բացումը, եկեղեցու վարչական շենքի նախասրահում «Հայերը Մոսկվայում. պատմական ուղին» ցուցահանդեսը, որը կազմակերպել են Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմը, Հայաստանի ազգային արխիվը, ՌԴ արխիվի դաշնային գործակալությունը, Մոսկվայի արխիվի գլխավոր վարչությունը եւ Մոսկվայի կենտրոնական պետական արխիվը:

Հարուստ ցուցադրանյութով ներկայացվել է Մոսկվայի հայ համայնքի պատմության ավելի քան հինգհարյուրամյա ժամանակաշրջանը՝ XIV դ. վերջից - XX դարի սկիզբը: Ցուցահանդեսը կոչված էր նպաստելու հայ ժողովրդի կյանքում եկեղեցու և համայնքի դերի ընկալմանն ու բարձրացմանը, հայկական եւ ռուսական մշակույթների փոխհարստացման գործընթացին:

Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից թեմի համար կարևոր այս իրադարձության առթիվ նաև վաթսուներեք անձանց, իբրև Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ եկեղեցու բարերարների, Սրբատառ Կոնդակներով շնորհվեցին Հայ եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» և «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ շքանշաններ հանձնվեցին Սամվել Կարապետյանին և Վլադիմիր Յակունինին:

Հայ Առաքելական եկեղեցին, որպես հայ ինքնության կրիչներից ու բաղադրիչներից մեկը, նոր զարթոնք ստացավ ՌԴ հողի վրա, ազգային և համայնքային կյանքում առկա մարտահրավերներին, իրողություններին դիմակայելու ու կենսական խնդիրներ լուծելու համար:

2014 թ. սեպտեմբերի 4-ին Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի երկրամասի հայկական Եդեսիա գյուղում հանդիսավորապես նշվել է Սբ. Աստվածածին եկեղեցու 100-ամյակը, իսկ հոկտեմբերին՝ Վլադիկովկասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 170-ամյակը:

ՈՂ հայկական եկեղեցիները

**Սանկտ Պետերբուրգի
Սրբ. Կատարինե եկեղեցին**



**Դոնի Ռոստովի Սուրբ Խաչ
եկեղեցին⁴³⁶**



Աստրախանի Սրբ. Զոհիսիմե եկեղեցին



Վլադիվոստոկի Սրբ. Քնորգ եկեղեցին




⁴³⁶ Սուրբ Խաչ եկեղեցին փակվել է 1931 թ.: 1960-ական թթ. եկեղեցու քանդույնը կարողացավ կանխել Մ. Սարյանը: 1968-1972 թթ. եկեղեցին վերանորոգվել է, որից հետո ծառայել որպես հայ-ռուսական բարեկամության բանգարան: 2007 թ. մարտին Ռոստովի մարզի վարչակազմը եկեղեցին վերադարձրել է Հայ Առաքելական եկեղեցուն, որը ներկայումս գործում է, ունի կիրակնօրյա դպրոց, ժողովներ է գումարում Սուրբ Խաչ երիտասարդական միությունը:

**Բառնաուլի Սրբ. Զոհիսիմե
եկեղեցին**



**Կալինինգրադի Սրբ. Ստեփանոս
եկեղեցին**



**Վոլգոգրադի
Սրբ. Քնորգ եկեղեցին**



**Կիրովի Սրբ. Ամենափրկիչ
եկեղեցին**



Կրասնոյարսկի Սբ. Սարգիս եկեղեցին
Կառուցվել է 1998-2003 թթ.



Նիժնի Նովոռոդի Սբ. Ամենափրկչի
եկեղեցին:
Կառուցվել է 2008-2013 թթ.



Նովոկուզնեցկի /Մոսնովկայի/ Սբ.
Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, օձվել
է 2008 թ.



Աղչերի Սուրբ Սարգիս եկեղեցին
Կառուցվել է 1993-98 թթ.:



Թենգինկայի Սուրբ Կարապետ
եկեղեցի
Օձվել է 2003 թ. հոկտեմբերին



Կրասնոդարի երկրամասի
Օտրադնայա գյուղի Սրբոց Առաքելոց
եկեղեցին



Նովորոսիսկի Սբ. Գրիգոր Լուսավորիչ
եկեղեցի



Կրասնոդարի Վարդանյան
կրթամշակութային կենտրոնը⁴³⁷



⁴³⁷ Չորսհարկանի տուֆակերտ կենտրոնը գտնվում է Կրասնոդարի կենտրոնական թաղամասերից մեկում՝ Չարավային Ռուսաստանի Չայոց թեմի Առաջնորդարանի և Առաջնորդանիստ սուրբ Չովհաննես Ավետարանիչ եկեղեցու հարևանությամբ: «Վարդանյան կրթամշակութային կենտրոն»-ում գործում են «Նարեկ» պարի համույթը և «Արմատ» կիրակնօրյա դպրոցը: Նույն այս շենքում տարվում են հանրակրթական տարրական գիմնազիայի ստեղծման աշխատանքները: Դասարանները կենտրոնում կահավորված են կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան, իսկ 250 տեղանոց համերգային դահլիճը կառուցված է զեղազիտական ոճով և գունա-ծայնային սարքավորումների բարձր որակով: Քիչ հեռու ծավալվում են ապագա Մայր Տաճարի նախահիմքերը:

Գլուխ 6. ՌԴ հայ համայնքն արդի փուլում.

Թվաքանակի ու տեղաբաշխման ընդլայնում, ինքնակազմակերպական խնդիրներ

6.1 «Ռուսաստանի հայերի միություն»

Համառուսաստանյան հասարակական կազմակերպության ստեղծումն ու գործունեության ուղղությունները

Վերակառուցման քաղաքականության անցման փուլում խորհրդային իշխանությունները թույլատրեցին հանդես գալ հասարակական տարբեր նախաձեռնություններով՝ ձևավորելու հասարակական միավորումներ, մշակութային-լուսավորական և ազգային-հայրենակցական կազմակերպություններ⁴³⁸:

Ազգային կյանքի վերելքին, հայկական կազմակերպությունների ստեղծմանն ու ընդլայնմանը Ռուսաստանում լուրջ ազդակ հաղորդեց նաև Լեռնային Ղարաբաղում ծավալված ազգային-ազատագրական շարժումը: Ռուսաստանի հայ համայնքներում հասարակական-քաղաքական և ազգային կյանքը սկսել է վերականգնվել 1980-ական թթ. վերջին: Վերակառուցման քաղաքականությունը ազգային զարթոնքի և ինքնակազմակերպման կարևոր փուլ էր Ռուսաստանի, ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետությունների հայության համար, որը ծնունդ տվեց բազմաթիվ ազգային կազմակերպությունների, ինչին հետևելու էր դրանց համախմբման դժվարին գործընթացը⁴³⁹:

1988 թ. սկզբին Մոսկվայի Սբ. Հարության եկեղեցու բակում տեղի են ունեցել բազմամարդ հանրահավաքներ ի պաշտպանություն ԼՂ ինքնորոշման իրավունքի, որոնց արդյունքում 1988 թ. մարտի 13-ին ծնունդ է առել առաջին հայկական կազմակերպությունը՝ «Ղարաբաղ» կոմիտեն: Կոմիտեի ձևավորման ակտիվ

⁴³⁸ Այդ կազմակերպությունների շարքում առաջինն ուկրաինական Սլավուտիչն էր, որին հետևեցին մյուս ազգային միավորումները:

⁴³⁹ Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009, с. 105.

անդամներից էին Կորյուն Նահապետյանը, Մանուկ Շամիրովը, Ռուբեն Գևորգյանը և այլք:

Հետագա ամիսներին ձևավորվել են «Բարև ձեզ» (1988 թ. ապրիլի 12, նախագահ՝ Ս. Բարաթով), «Հյուսիսափայլ» (1988 թ. օգոստոսի 29, նախագահ՝ Կ. Մեժլումյան) «Մաշտոց» (1988 թ. նոյեմբերի 20, նախագահ՝ Ա. Պողոսյան) մշակութային միությունները, «Վասպուրական» երիտասարդական միավորումը (1988 թ. դեկտեմբերի 14, նախագահ՝ Ա. Տերյան) և այլք:

Ամմիջապես սկսվել է այդ կազմակերպությունների համախմբման և զանազան կողողինացիոն խորհուրդների ձևավորման գործընթացը, որն ավարտին հասավ 1989 թ. հունիսի 20-29-ին ձևավորված Մոսկվայի քաղաքային հայկական մշակութային կազմակերպության հիմնումով: Վերջինս, հավակնելով իրականացնել համայնքային կառույցի գործառույթներ, գոյատևեց մեկ տարի՝ մինչև 1990 թ. հունիսի 13-ը, որից հետո տրոհվեց: Կազմակերպության խորհրդի նախագահն էր Արամ Սիմոնյանը, Վարչության նախագահը՝ Վահան Էմինը: Պառակտումից հետո կազմակերպության խորհուրդն ու Վարչությունն առանձին-առանձին հրատարակում էին «Արմյանսկի վեստնիկ»-ի իրար մրցակից երկու տարբերակները:

Ռուսաստանում հայերի համայնքային կազմակերպություն ունենալու ձգտումը դարձել էր օրակարգային, ուստի 1991թ. նոյեմբերի 30-ին Մոսկվայի Պառլամենտական կենտրոնում տեղի է ունեցել «Մոսկվայի հայ համայնք» (Московская армянская община) կազմակերպության հիմնադիր ժողովը: Կազմակերպության խորհուրդը գլխավորել է Ռուբեն Մելքոնյանը, իսկ Վարչությունը՝ Գեղամ Խալաթյանը:

1992 թ. հունիսի 25-ին նորաստեղծ համայնքային այս կազմակերպությունը նույնպես տրոհվել է: Նրանից հեռացած անդամները հիմնել են նոր կառույց՝ «Մոսկվայի հայ համայնք» (Армянская община Москвы) անունով, որը գրանցվել է 1993 թ.

փետրվարի 16-ին (Խորհրդի նախագահ՝ Ս. Գրիգորյան, Վարչության նախագահ՝ Գ. Խալաթյան):

1993 թ. հունիսի 20-ին Մոսկվայում հիմնադրվել է նաև Մոսկվայի հայկական համագումար, իսկ վերջինիս հիմքի վրա 1993 թ. հուլիսի 22-ին՝ Միջազգային հայկական համագումար կազմակերպությունները, որոնց նախագահն էր Սերժ Ջիլավյանը:

1994 թ. ապրիլին Մոսկվայում սկսում է լույս տեսնել երկլեզու «Հյուսիսափայլ» հանդեսը: Նույն թվականի նոյեմբերին հիմնադրվել է «Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոն» միջազգային միավորումը, իսկ ղեկտեսներին՝ «Հայկական համաշխարհային համագումար»-ը:

ՌԴ-ում հայկական ազգային կառույցների ձևավորման նոր փուլի զարկը հանդիսացավ 1996 թ. հունիսին «Ազգային մշակութային ինքնավարությունների մասին» ՌԴ օրենքի ընդունումը: Օրենքի ընդունումից անմիջապես հետո Մոսկվայում և մարզերում գրանցվել են բազմաթիվ հայկական կազմակերպություններ⁴⁴⁰:

Մոսկվա քաղաքի վարչական տարածքի՝ Հարավ-Արևմտյան օկրուգի հայկական ինքնավարության (նախագահ՝ Ս. Գրիգորյան) հիմքի վրա 1997 թ. սեպտեմբերի 3-ին գրանցվեց համաքաղաքային ազգային ինքնավարությունը: Մոսկվայի մյուս 9 օկրուգներում ևս սկիզբ առավ ինքնավարությունների ձևավորման դժվարին գործընթացը, բայց քանի որ արդեն առկա էր համաքաղաքային կառույցը, նորերի գրանցումը և համաքաղաքային ինքնավարության, որպես մեկ լիարժեք միավորի, օրինականության (լեգիտիմության) հարցը ցավագին էր ընդունվում համայնքի ներսում:

1998 թ. փետրվարի 15-ին Մոսկվա քաղաքի 9 օկրուգային հայկական ազգային-մշակութային ինքնավարությունները հիմնադիր կոնֆերանս հրավիրեցին «Արբատ» հյուրանոցում համա-

քաղաքային լեգիտիմ կառույց ձևավորելու համար (Խորհրդի նախագահ է ընտրվել Վ. Արծրունին), սակայն այն գրանցել չհաջողվեց: Այսպիսով, 1990-ական թթ. Մոսկվայում հիմնված տարատեսակ հայկական մշակութային, ազգային-համայնքային կազմակերպությունների միավորման գործընթացը ձախողվեց, դրանք գործում էին հիմնականում առանձին-առանձին, ակնհայտ էր մրցակցությունը: Շուրջ 10 տարի տևած միավորման փորձերն արդյունք չտվեցին, միասնական կազմակերպություն չհաջողվեց ձևավորել: Ինչն էլ իր հերթին նոր մոտեցումներ ու կամք էր պահանջում:

1999 թ. սեպտեմբերի 4-ին ծնունդ առավ նոր ռեգիոնալ հասարակական համայնքային կազմակերպություն՝ «Միացում»-ը, որի նախագահն էր Ն. Մուրադյանը: 2000 թ. մայիսի 25-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթելում» անցկացված հիմնադիր համագումարում այդ կազմակերպությունը (գրանցվել էր մինչև համագումարի հրավիրումը) վերակազմավորվեց նոր համայնքային կառույցի, սակայն հին անվանումով՝ «Մոսկվայի հայկական համայնք» (Խորհրդի նախագահ՝ Ն. Թևանյան, Վարչության նախագահ՝ Գ. Ռ. Հարությունով):

Ռուսաստանի Դաշնության տարբեր սուբյեկտներում գործող հայկական կազմակերպությունները միավորելու և Համառուսաստանյան հայկական ազգային-համայնքային կազմակերպություն ձևավորելու քայլերը հաջողությամբ պսակվեցին նոր դարագլխին:

Մինչ այդ, 1999 թ. սեպտեմբերին Երևանում գումարված «Հայաստան-Սփյուռք» առաջին խորհրդաժողովը կարևոր խթան հանդիսացավ աշխարհասփյուռ հայկական համայնքներին հարենի հարկի տակ հանդիպմանը, կազմակերպական գործը ազդակ դարձավ այդ աշխատանքներին մասնակցող հետխորհրդային հանրապետությունների հայկական նորաստեղծ ազգային-համայնքային կառույցների միավորման և ամրապնդման համար:

⁴⁴⁰ Հայ Սփյուռք հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 489:

Համառուսաստանյան հայկական ազգային-համայնքային կազմակերպության ձևավորման գործում առանձնակի նախաձեռնություն հանդես բերեց անվանի հայ գործարար Արա Աբրահամյանը: Նրա գլխավորությամբ կազմվեց Նախաձեռնող խումբ, որը ձեռնամուխ եղավ հիմնելու «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը: Նախաձեռնող խմբի առաջին քայլերից էր Մոսկվայի ու մարզերի հայազգի մտավորականության հետ կապերի հաստատումը և նրանց այդ գործընթացի մեջ ներգրավելը: Կազմակերպական կոմիտե ձևավորելու առաջարկին արձագանքեցին հարյուրավոր մարդիկ՝ լծվելով Ռուսաստանի հայկական համայնքների Համառուսաստանյան համագումար հրավիրելու գործին:

2000 թ. հունվարին մերձմոսկովյան ժուկովկա հանգստյան տանը տեղի է ունեցել Նախաձեռնող խմբի առաջին հավաքը, որը հաստատել է հայկական հասարակական կազմակերպություն հիմնելու նախագիծը և Ռուսաստանի տարբեր հայկական կառույցներին հրավիրել է իրենց պատվիրակներին գործուղել Կազմկոմիտե:

1990-ական թթ. ռուսահայ կազմակերպությունների միավորման անպտուղ փորձերը հաշվի առնելով՝ որոշում կայացվեց հրաժարվել այդ կառույցները միավորելու ուղղահայաց սկզբունքից, այն է՝ հայերի Համառուսաստանյան կազմակերպություն հիմնելուց հետո միայն ռեգիոնալ կառույցները նրա ներքո միավորելու մոտեցումից: Որոշվեց մտավորական ուժերի համախմբում իրականացնել կենտրոնում և համայնքներին լիարժեք ինքնուրույնություն տրամադրել տեղերում, որոնց շնորհիվ հակասությունների և բախման շրջանակը զգալիորեն թուլանում էր:

2000 թ. փետրվարի 12-ին կայացել է Կազմկոմիտեի առաջին նիստը, որը գլխավորել է Արա Աբրահամյանը: Ռուսաստանի հայերի համայնքային կազմակերպության ձևավորման գործում մեծ ներդրում ունեցան Ա. Չիլինգարովը, Ա. Միհրանյանը, Գ. Աղայանը, Գ. Գաբրիելյանցը, Ս. Գրիգորյանը, Վ.

Արծրունին, Շ. Կարապետյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Գ. Խալաթյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Ս. Գևորգյանը, Կ. Ուդումյանը և այլք:

2000 թ. մարտի 10-ին մերձմոսկովյան «Պետրովո-դալնեյե» հանգստյան տանը տեղի է ունեցել Ռուսաստանի 45 սուբյեկտների հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որը հավանություն է տվել կազմակերպության Կանոնադրության նախագծին, Համառուսաստանյան հայկական հասարակական այդ կազմակերպության անվանում է առաջարկել հաստատել «Ռուսաստանի հայերի միություն»-ը և նշանակել է հիմնադիր համագումարի օրը:

«Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության **հիմնադիր համագումարը** հրավիրվել է 2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթել»-ում, որին մասնակցել են հայկական համայնքների 183 պատվիրակներ ՌԴ 44 սուբյեկտներից: «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության նախագահ է ընտրվել Ա. Աբրահամյանը: Համագումարն ընտրել է նաև Խորհուրդ, Վարչություն և Վերահսկիչ հանձնաժողով, որոնց կազմի մեջ են մտել գիտության, արվեստի և մտավորական անվանի գործիչներ, Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ, գործարարներ ՌԴ տարբեր մարզերից⁴⁴¹:

«Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության հիմնադրման գործում մեծ էր նաև Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Եզրասի և Հարավային Ռուսաստանի հովվության առաջնորդ եպիսկոպոս Մովսեսի դերակատարությունը: «Ռուսաստանի հայերի միության» հիմնադիր համագումարին մասնակցել են ՌԴ աշխարհիկ և հոգևոր իշխանության բարձրագույն ղեկավարությունը:

⁴⁴¹ <http://www.sarinfo.org/way/syezd1.shtml>

ՌԴ նախագահ Վ. Պուտինը մասնավորապես ընդգծել է ՌԴ քաղաքացի հայերի հավասարակշիռ ու իմաստուն դիրքորոշումը հասարակական զարգացման հարցերում, որի շնորհիվ ամրապնդվում են ՌԴ-ՀՀ ռազմավարական գործընկերությունը՝ հույս հայտնելով, որ հիմնադիր համագումարը նպաստելու է քաղաքացիական համաձայնությանն ու խաղաղությանը երկրում:

Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդն իր խոսքում համոզմունք է հայտնել, որ հիմնադրված Համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպությունը նպաստելու է ռուս և հայ ժողովուրդների ավանդական բարեկամությանը, խաղաղության և համաձայնության ամրապնդմանը բազմազգ ու բազմակրոն ՌԴ-ում:

Հիմնադրումից անմիջապես հետո «Ռուսաստանի հայերի միություն»-ը լայնամասշտաբ աշխատանքներ է ծավալել ազգային ինքնության, մշակույթի և լեզվի պահպանման, ինքնակազմակերպման և այլ ուղղություններով: Այդ նպատակով մեծ ուշադրություն է հատկացվել հետևյալ խնդիրներին ու նպատակներին.

- ազգային հանրակրթական և կիրակնօրյա, ինչպես նաև օժտված երեխաների համար դպրոցների կազմակերպմանն ու աջակցությանը ազգային համույթներին,

- ռեզիդենտների հայկական համայնքների կառուցվածքի ուսումնասիրմանը, նրանց ներգրավվածությանը ձեռնարկատիրական գործունեության մեջ, աշխատանքի այլ ոլորտներում: Նպատակային ծրագրերի իրականացմանն աշխատատեղեր հիմնելու նպատակով, առանձին դեպքերում հայերի վերաբնակեցման ծրագրերի իրականացմանն այնպիսի ռեզիդենտներում, որտեղ առկա են աղապտացիայի և կեցության համար բարենպաստ պայմաններ:

- գործունեության նոր տեսակների յուրացմանը՝ հայկական համայնքների մոբիլիզացմանը դաշնային և տեղական իշխանության մարմինների ընտրություններում: Ապահովելու

հայկական համայնքի քաղաքական լուսավորում՝ ավելի գիտակցված և հիմնավորված ընտրություն կատարելու թեկնածուների կամ նախընտրական բլոկների միջև:

- հատուկ ուշադրության բևեռում այլ ազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատմանն ու խորացմանը՝ միջլեզու համերաշխության և արդյունավետ ինտեգրման համար ռուսական մշակութային տարածքում:

- Հիմնադիր համագումարից անմիջապես հետո իրականացված քայլերից էին.

- անմիջապես ձևավորվեցին ՌՀՄ կառուցվածքային ստորաբաժանումները, իսկ ՌՀՄ ղեկավար կազմում (որպես փոխնախագահ) տեղ գտան ՌԴ առավել խոշոր հայկական համայնքների՝ Մոսկվայի, Պետերբուրգի, Կրասնոդարի, Դոնի Ռոստովի, Ստավրոպոլի և Նովոսիբիրսկի կառույցների ղեկավարները:

- ՌՀՄ կառուցվածում առանձնացվեցին գործունեության հետևյալ ոլորտները կարգավորող մարմինները (բլոկները).

ինֆորմացիոն-վերլուծական, որն իրականացնելու էր մոնիտորինգ հայկական համայնքների շրջանում, աշխատելու էր ՁԼՄ-ների հետ, փոխանակելու էր տեղեկատվություն,

ֆինանսա-տնտեսական, որը կազմակերպելու էր ֆինանսատնտեսական գործունեությունը, հայկական բիզնեսի հեռանկարների զարգացումը, բիզնես-ծրագրերի կազմումը՝ ՌՀՄ ֆինանսական ինքնապահովման և ստացված եկամուտների զգալի մասը ՌՀՄ ծրագրերի իրականացմանն ուղղելու նպատակով,

սոցիալ-իրավական, որն իրականացնելու էր իրավական աջակցություն, քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրում կարիքավոր հայրենակիցներին, աշխատատեղերի ստեղծում,

պետական մարմինների հետ փոխգործակցության մարմին իրականացնելու էր դաշնային, ռեզիդենտ և տեղական գործադիր

ու օրենսդիր մարմինների հետ կապերի հաստատում ու զարգացում,

հումանիտար, որն զբաղվելու էր մշակույթի, կրթության և լեզվի զարգացման հարցերով, հասարակական կազմակերպությունների հետ կապի, որն իրականացնել էր ՌԴ հասարակական-քաղաքական միավորումների, ազգային-մշակութային ինքնավարությունների, կրոնական կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանի հայկական Սփյուռքի և նրա ներկայացուցչական ինստիտուտների հետ կապերի հաստատում:

2002 թ. մարտի 22-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթել»-ի կոնֆերանսների սրահում տեղի է ունեցել «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության **Երկրորդ համագումարը**, որին մասնակցել են ՌԴ բոլոր դաշնային օկրուգները ներկայացնող ՌՀՄ ռեզիդնալ կառույցների 150 պատվիրակներ⁴⁴²:

Երկրորդ համագումարի հրավիրյալների շարքում էին ՀՀ և ՌԴ բարձրաստիճան գործիչներ, Պետդումայի պատգամավորներ, հայ Առաքելական և ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներ, մերձավոր և հեռավոր սփյուռքի հայկական համայնքների առաջնորդներ, հասարակական գործիչներ, ազդեցիկ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Համագումարի բացմանը հնչել է «Ռուսաստանի հայերի միության» հիմնը, որի երաժշտության հեղինակն է Կարեն Խաչատուրյանը:

Համագումարն ընտրել է Նախագահություն, որի կազմի մեջ են մտել ՌՀՄ նախագահ Ա. Աբրահամյանը, ՌՀՄ նախագահի տեղակալ Վ. Գալուստյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Խաչատրյանը, ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Վոլոշինը, ՌԴ արդյունաբերության, գիտության և տեխնոլոգիաների մինիստր Ի. Կլեբանովը, ՌԴ - Բելոռուս Միության գործկոմի պետքարտուղար Պ. Բորոդինը, ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Ա.

Զիլինգարովը, ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ս. Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Եզրաս Ներսիսյանը, քաղաքագետ, պրոֆեսոր Ա. Միհրանյանը, Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Ի. Խալեևան և այլ անվանի գործիչներ:

ՌԴ նախագահ Վ. Պուտինի ողջույնի խոսքը համագումարին ներկայացրել է նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Վոլոշինը, որում, մասնավորապես ընդգծվում էր, որ «հայ ժողովրդի հոգևոր ինտելեկտը և գործարար կարողությունները զգալի ներդրում են խաղաղության ամրապնդման և ազգամիջյան համաձայնության գործում»:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ողջույնի խոսքը համագումարին ներկայացրել է ՌԴ-ում ՀՀ դեսպան Ս. Սահակյանը, որում ընդգծվում էր, որ ՌԴ հայ համայնքն ամենամեծն ու հզորագույնն է Սփյուռքի մեջ և կարող է առանցքային դեր խաղալ ՌԴ-ից դեպի Հայաստան ներդրումների ներգրավման առումով:

Համագումարին ընթերցվել են նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի, Մոսկվայի քաղաքապետ Յ. Լուժկովի և ՌԴ ԶՈւ Գլխավոր Շտաբի պետ, գ-լ Ա. Կվաշնինի ողջույնները:

«Ռուսաստանի հայերի միության» նախագահ Ա. Աբրահամյանն իր ելույթի խոսքում ընդգծել է, որ ՌՀՄ ստեղծումը կարևոր սահմանգիծ էր ազգային համախմբման և հայության առջև ծառայած բազմապիսի ակտուալ խնդիրների նախանշման ու լուծման համար:

Որպես համագումարի հրավիրման գլխավոր նպատակներից մեկը՝ առանձնացվել է միասնական գործողության ծրագրի մշակումը: Համագումարի մասնակիցներին կոչ է ուղղվել իրականացնելու սոցիալական ակտիվ քաղաքականություն և ծրագրային աջակցություն հայրենակիցներին: Այդ նպատակին հասնելու համար մատնանշվել են գործոն մեխանիզմների

⁴⁴² <http://www.sarinfo.org/way/syezd2.shtml>

մշակման անհրաժեշտությունը՝ հասցեավորված սոցիալական աջակցութեան համար:

ՌՀՄ գործունեության կարևոր ուղղություններ են առանձնացվել.

- տնտեսական արդյունավետ ծրագրերի իրականացումը՝ Ռուսաստանում հայկական մանր, միջին և մեծ բիզնեսին աջակցության համար,

- գործարար կապերի ստեղծումն արտերկրի բիզնես էլիտաների հետ և ՌԴ տնտեսության մեջ ներդրումների ներգրավումը, երկրում ընթացող տնտեսական բարեփոխումներին աջակցությունը,

- ՀՀ-ին հումանիտար ու տնտեսական մասշտաբային օժանդակության իրականացումը և ՀՀ-ՌԴ ինտեգրացիոն կապերի զարգացմանը նպաստելը:

Հատկանշական է, որ 2000-2001 թթ. ՌՀՄ շրջանակներում ռուսաստանցի արդյունաբերողների և լրագրողների բազմաթիվ ներկայացուցչական այցեր են կատարվել Հայաստան:

ՌՀՄ նախագահի կողմից համագումարում հնչեցվեց և որպես հատուկ ուշադրության արժանի խնդիր, առանձնացվեց հոգածությունն աճող սերնդի նկատմամբ, որից կախված է հասարակական և պետական կյանքի առողջացումը: Ընդգծվել է, որ ճգնաժամի պայմաններում, բարքերի և արժեքների վերարժեվորումը նոր սերնդի առջև բարդ խնդիրներ է հարուցել, ուստիև ՌՀՄ-ն առաջնահերթություն է տեսնում համառուսաստանյան հասարակական շարժման կազմակերպումը, որը հանդես կգար որբ երեխաների պաշտպանությամբ, աղքատության և թափառաշրջիկության դեմ պայքարով:

Մանկական և պատանեկան սպորտի զարգացումն երկրում ՌՀՄ-ն դիտարկում է որպես կանխարգելիչ միջոցառում այնպիսի գլոբալ և վտանգավոր չարիքի դեմ ինչպիսին թմրամոլությունն է, ուստիև ՌՀՄ միջոցներով Մոսկվայում գործում է «Արարատ-Մոսկվա» ֆուտբոլային ակումբը:

Այս խնդիրների համատեքստում «Ռուսաստանի հայերի միություն»-ը մասնակցում է ՄԱԿ-ին ուղղվելիք «Ռուսաստանի երեխաների դրության մասին» ազգային զեկույցի պատրաստմանը:

ՌՀՄ համագումարի ժամանակ նշվել է, որ նախանշած նպատակների ու ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է ամրապնդել սեփական կազմակերպվածությունը, կատարելագործել կատարողական կարգապահությունը, բարձրացնել պատասխանատվությունն ու պահանջկոտությունը: Համոզմունք է հայտնվել, որ ՌՀՄ քաղաքականությունը հիմնված է պրագմատիկ մոտեցումների վրա և ուղղված է ռուսահայության ու Ռուսաստանի բարգավաճմանը:

Համագումարի ընթացքում, «Ռուսաստանի հայերի միության» պարզևատրման Հանձնաժողովի 2002 թ. փետրվարի 27-ի որոշման համաձայն, բարձրագույն պարզևներ են հանձնվել համագումարի մի շարք մասնակիցների:

«Ռուսաստանի հայերի միության» I աստիճանի «Ոսկե խաչ»-ով են պարգևատրվել Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը՝ միջկրոնական համերաշխության, համաձայնության և երկու եկեղեցիների միջև եղբայրական հարաբերությունների ամրապնդման համար⁴⁴³:

ՌՀՄ I աստիճանի «Ոսկե խաչ»-ով են պարգևատրվել նաև Հայ-ռուսական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի համանախագահներ ՀՀ Անվտանգության Խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանն ու ՌԴ արդյունաբերության, գիտության և տեխնոլոգիաների մինիստր Իլյա Կլեբանովը՝ հայ-ռուսական միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում ակնառու ներդրման համար:

Այդ պարգևին են արժանացել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը (խորհրդային և ռուսական մշակույթի

⁴⁴³ <http://www.sarinfo.org/way/syezd2.shtml>

ասպարեզում բացառիկ գործունեության և հայ-ռուսական մշակութային կապերի ամրապնդման համար), Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Իրինա Խալեևան (ռուս-հայկական հարաբերությունների ամրապնդման գործում ունեցած մեծ ներդրման և ՄՊԼԴ-ում հայ լեզվի Կենտրոնի բացման համար), Լևոն Մկրտչյանը (պարզևատրվել է հետմահու՝ հայ-ռուսական հունանիտար կապերի ամրապնդման գործում մեծ ներդրման և Երևանում Սլավոնական համալսարանի հիմնադրման համար):

ՌԶՄ II աստիճանի «Արծաթե Խաչ»-ով են պարգևատրվել Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Եզրաս Ներսիսյանն ու Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Մովսես Մովսեսյանը՝ ռուսահայ համայնքի, հայ եկեղեցու և հայ-ռուսական եղբայրական կապերի ամրապնդման գործում մեծ ներդրում ունենալու համար:

ՌԶՄ II աստիճանի «Արծաթե Խաչ»-ով են պարգևատրվել նաև ՌԴ-ում ՀՀ դեսպան Ս. Սահակյանն ու ՀՀ-ում ՌԴ դեսպան Ա. Դրյուկովը՝ միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում ունեցած ավանդի համար:

Համագումարի բոլոր մասնակիցներին բաժանվել է «Ռուսաստանի հայերի միության» ստեղծման և գործունեության մասին պատմող ֆիլմի սկավառակներ:

2006 թ. մայիսի 25-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթել»-ում կայացել է «Ռուսաստանի հայերի միության» **երրորդ համագումարը**, որին մասնակցել են 230 պատվիրակներ ՌԴ 72 ռեզիդենտներից⁴⁴⁴:

Համագումարը բացվել է «Ռուսաստանի հայերի միության» և Համաշխարհային հայկական կոնգրեսի անցած տարիներին կատարված աշխատանքներն ամփոփող ֆիլմի ցուցադրությամբ, որում ներկայացվել են ՌԴ ռեզիդենտների հայկական

համայնքները, ՀՀ, ԼՂՀ, մերձավոր և հեռավոր արտասահման կատարված այցերը:

Առանձնահատուկ անդրադարձ է կատարվել ՌԶՄ Կրասնոդարի երկրամասային կազմակերպության արդյունավետ ու ակտիվ աշխատանքին, տեղական և մարզային իշխանությունների հետ համագործակցության օրինակելի փորձին:

ՌԶՄ երրորդ համագումարին իրենց ողջույնի խոսքն են հղել ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, ՌԴ նախագահ Վ. Պուտինը, ՌԴ Դաշնային Ժողովի նախագահ Ս. Միրոնովը, ԼՂՀ նախագահ Ա. Դուկասյանը, Ամենայն Հայոց և Կիլիկիո կաթողիկոսներ Գարեգին Բ-ն ու Արամ Ա-ն, ուրիշներ:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն իր ուղերձում մասնավորապես նշել է, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններն անփոփոխ կերպով զարգացել են գործընկերության և փոխադարձ հարգանքի վրա, որում մշտապես մեծ է եղել ռուսահայ համայնքի դերը: Այն արդյունք է հայ համայնքի ազգային ինքնության, ավանդույթների և մշակույթի՝ քաղաքացիական պարտքի զգացումի հետ համադրելու կարողության: Հայկական համայնքը միշտ լիարժեք ինտեգրված է եղել ռուս հասարակությանը՝ իր ավանդը բերելով ռուսական պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում: ՀՀ նախագահն հույս է հայտնել, որ հետագայում ևս ՌԶՄ-ն և ռուսահայ համայնքն ակտիվորեն կներգրավվեն պատմական հայրենիքում համահայկական ծրագրերի իրականացմանը:

ՌԴ նախագահի ներկայացուցիչ Օ. Գովոռունը համագումարին ընթերցել է նախագահի շնորհավորական ուղերձը, որում, մասնավորապես նշվում էր. «Հայերը հարյուրավոր տարիներ շարունակ հանդիսանում են ռուս հասարակության օրգանական մասը: ՌԶՄ ակտիվության և նախաձեռնության շնորհիվ ընդլայնվում են ՌԴ և ՀՀ քաղաքացիների ուղիղ կապերը, լայն հորիզոններ են բացվում գործարար և հունանիտար ծրագրերի համար: Հայկական համայնքը 21-րդ դարում, պահպանելով

⁴⁴⁴ <http://www.sarinfo.org/way/syezd3.shtml>

ազգային արձագանքներն ու մշակութային ժառանգությունը, հարստացնում է բազմազգ Ռուսաստանի ժամանակակից կյանքի ներկայացնակը, որում նկատելի դերակատարություն ունի «Ռուսաստանի հայերի միությունը»:

Համագումարի ընթացքում ելույթ ունեցած գործիչները փաստել են, որ ՌՀՄ անցած վեց տարիների ընթացքում հիրավի դարձել է ՌԴ ամենազդեցիկ և գործնական հասարակական կազմակերպությունը:

Համագումարին ներկա ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանն անդրադարձել է հայ-ռուսական հարաբերություններին, հայկական համայնքի ձևավորմանը, համատեղ դիմագրաված պատմական փորձություններին ու ստեղծագործ աշխատանքին. «Հայերն ու ռուսները միասին ստեղծագործ աշխատանք են տարել գիտության ու լուսավորության տարածման գործում, հիմնել են արդյունաբերություն, յուրացրել Կովկասը, Թուրքեստանը և անգամ հեռավոր Պրիմորիեն»: Ընդգծելով ՌՀՄ կարևոր և շահակապող դերակատարությունը ՀՀ-ՌԴ հարաբերություններում, Ա. Ղուկասյանը նշել է, որ ՌՀՄ կոչված է ոչ միայն միավորելու ռուսահայերին, լուծելու նրանց խնդիրները, այլ նաև նպաստելու այնպիսի համահայկական խնդրի, ինչպիսին Արցախի միջազգային ճանաչումն է, ռուսահայերի գիտակցան, մտավոր ու վերլուծական ներուժի ծառայեցումը Արցախի ամրապնդմանն ու կայացմանը: Առանձնացվել են Արցախում ՌՀՄ կողմից շարունակաբար իրականացվող միջոցառումները սոցիալ-տնտեսական, տեղեկատվական, կրթական և մշակութային ոլորտներում:

Համագումարում արժարժվել են հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ երկքաղաքացիության խնդիրը:

«Ռուսաստանի հայերի միության» 2002-2006 թթ. գործունեության վերաբերյալ հաշվետվությամբ հանդես է եկել կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանը: ՌՀՄ նախագահը ընդգծել է, որ կազմակերպությունը ներկայացնում է ՌԴ շուրջ 2.5

մլն հայության շահերը, առանձնացրել է համատեղ գործունեության հետևյալ ուղղությունները.

- շարունակել աշխատանքները ՌԴ-ում, պատմական հայրենիքում՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում, ինչպես նաև Սփյուռքում: ՌԴ-ում բազմազգ հասարակության պայմաններում համերաշխությամբ հանդես գալ՝ բազմապատկելով ջանքերն ազգային ավանդույթների պահպանման ուղղությամբ, ակտիվորեն մասնակցել պետության և հասարակության ուժեղացմանը:

- ըստ արժանվույն գնահատելով ՌԴ նախագահի օբյեկտիվ ու բարձր գնահատականը ռուսահայերի սերունդներին երկրի կենսագործունեության տարբեր ոլորտներում ունեցած դերի համար, այնուհանդերձ, մտահոգություն է հայտնվել վերջին շրջանում հայերի նկատմամբ, ազգային պատկանելիությամբ պայմանավորված, հաճախակի բնույթ կրող իրավակարգի խախտումների վերաբերյալ⁴⁴⁵:

Այս առնչությամբ ՌՀՄ ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել համագործակցել դաշնային և տեղական իշխանության իրավապահ մարմինների հետ՝ ազգային անհանդուրժողականության և քսենոֆոբիայի հետագա երևույթները կանխելու նպատակով⁴⁴⁶:

⁴⁴⁵ Տե՛ս Эмиров Р. М., Приоритеты национальной безопасности Российской Федерации на Северном Кавказе, М., 2011, с. 154-155; Маркарян В., Армянская диаспора Кубани: проблемы сохранения, 1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր, համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 306-323:

⁴⁴⁶ Տե՛ս Զոհրաբյան Է., Ռուսաստանի հայությունը հետխորհրդային շրջանում, Պատմություն և Մշակույթ, (Հայագիտական հանդեսի հատոր Ա), ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2011 էջ 157-158; Кузуб, М., Социально-культурная характеристика армян Краснодарского края в связи с проблемами репатриации в Армению, 1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր, նշվ. աշխ., էջ 329-330:

- ընդգծվել է դարաբաղյան խնդրի կարգավորման անհրաժեշտությունը՝ այդ հանրապետության բնակչության ինքնորոշման ճանապարհով:

Համագումարին ներկա ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանը ՌԴ հայերին հորդորել է «միավորել ջանքերը Արցախի հերոսական ժողովրդին բարոյական, մտավոր և տնտեսական աջակցության համար»: Համագումարի հյուր ՌԴ լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար, Պետդումայի փոխխոսնակ Վ. Ժիրինովսկին իր ելույթում աջակցություն է հայտնել ԼՂ հայերին՝ առաջարկելով գործածել երկրամասի Արցախ պատմական անվանումը, միևնույն ժամանակ նշելով, որ հայ ժողովուրդն «իրավունք ունի վերադարձնելու իրենը, այլ ոչ՝ ուրիշինը, ուստիև պատահական չէ, որ տարբեր երկրների խորհրդարանները շարունակում են ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Վ. Ժիրինովսկին ընդգծել է նաև, որ «...հայերը ոչ թե ուղղակի համայնք են ՌԴ-ում, այլ՝ երկրի քաղաքացիներ, ովքեր իրավացիորեն արժանի տեղ են զբաղեցում իրենց բարի գործերով: Հայերը հնագույն, խելոք և քրիստոնյա ժողովուրդներից մեկն են ու համոզված են, որ կհասնեն իրենց հուզող խնդիրների լուծմանը: Հաջողություններ են ցանկանում ու լավ հարաբերություններ Ռուսաստանի, ռուս ժողովրդի և քաղաքական կուսակցությունների հետ»:

Համագումարի ընթացքում ելույթով հանդես են եկել նաև ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Ա. Զիլինգարովը, ՌԴ-ում ՀՀ դեսպան Ա. Սմբատյանը, ՌԴ-Բելուռուս Միության Պատասխանատու քարտուղար Պ. Բորոդինը և այլք:

ՌԴ-ում ՀՀ դեսպան Ա. Սմբատյանն իր խոսքում կարևորել է ՌԴ իշխանությունների կազմակերպած օգնությունը Սոչիի շրջանում հայկական A-320 ինքնաթիռի ավիավթարից տուժածների հարազատներին: Այնուհետև հաշվետու ելույթով հանդես են եկել ՌՀՄ Վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Ա.

Կազինյանը և կազմակերպության մարզային մարմինների ղեկավարները:

Եզրափակիչ քննարկումների ժամանակ ճանաչված գիտնական, միջազգային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Յուրի Բարսեղովը համագումարին առաջարկել է հատուկ հայտարարություն ընդունել “Коммерсант-Деньги” և “Коммерсант-Власть” պարբերականների՝ Հայոց ցեղասպանության ժխտման, ապատեղեկատվության տարածման, փաստերի խեղաթյուրման ու հայերին միջազգային հանրության աչքում վարկաբեկելու փորձերի համար:

Համագումարի օրակարգի համաձայն տեղի է ունեցել «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության նախագահի և Վարչության հորհրդի ընտրություններ:

Ընտրությունների արդյունքում ՌՀՄ նախագահի պաշտոնում 2006-2010 թթ. միաձայն վերընտրվել է Արա Արահամյանը:

«Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության չորրորդ համագումարը տեղի է ունեցել 2010 թ. նոյեմբերի 17-ին, որը նվիրվել է կազմակերպության հիմնադրման 10-ամյակին: Համագումարին մասնակցել են ՌԴ 61 ռեզիդենտներ ներկայացնող 224 պատվիրակներ, պատվավոր հյուրեր⁴⁴⁷:

Համագումարին ներկա են գտնվել ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, ՌԴ-ում ՀՀ դեսպան Օ. Եսայանը, Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Եզրասը, ՌԴ նախագահի լիազոր-ներկայացուցիչը Հյուսիս-Արևմտյան դաշնային օկրուգում Ի. Կլեբանովը, ՌԴ նախագահի ներքին քաղաքականության հարցերով խորհրդական Ա. Ռոտերմեյլը, Պետդումայի պատգամավորներ Ա. Զիլինգարովն ու Կ. Ջատուլինը, դաշնային հորհրդի անդամ Ա. Տեր-Ավանեսովը, Մոսկվա քա-

⁴⁴⁷ <http://www.sarinfo.org/sarnews/19-11-10-2.shtml>

ղաքի միջոցառումները կապերի և ազգային քաղաքականության հարցերով Կոմիտեի նախագահ Ս. Սուլունենցը և այլք:

Համագումարը, որի աշխատանքները ղեկավարել է ՌՀՄ փոխնախագահ Գ. Տեր-Ղազարյանը⁴⁴⁸, բացվել է ՌԴ, ՀՀ և «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության օրհներգերի կատարմամբ: ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն ելույթի խոսքում բարձր է գնահատել ՌՀՄ շարունակական աշխատանքն ու կազմակերպության կողմից Հայաստանում իրականացվող բազմաբնույթ ծրագրերը. «Մենք մշտապես հետեւում եւ առանձնահատուկ կարեւորություն ենք տալիս ձեր նվաճումներին ու խնդիրներին, քանի որ Ռուսաստանի Դաշնությունում է գտնվում աշխարհի ամենաստվար հայկական համայնքը: Դրանով է նաեւ բացատրվում այն հանգամանքը, որ շարունակաբար ամրացող հայկական կազմակերպությունը՝ Ռուսաստանի հայերի միությունը, ձգտում է միշտ լինել համահայկական նախաձեռնությունների առաջամարտիկների շարքում: Տարիների հետեւողական աշխատանքի արդյունքն է նաեւ, որ այսօր միությունը դարձել է այն յուրօրինակ ամրասյունը, որն իր շուրջ կարողանում է համախմբել Ռուսաստանի հայությանը: Պատահական չէ, որ Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է եւ հուսալի գործընկերը: Պատահական չէ նաեւ, որ Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի ասպարեզում հենց Ռուսաստանն է զբաղեցնում առաջին տեղը: Սա օրինակելի միջպետական հարաբերությունների դրսեւորում է, որի զարգացմանը

⁴⁴⁸ Խորհրդային կուսակցական և պետական գործիչ՝ 1964-1973 թթ. ՀԿԿ ԿԿ երկրորդ քարտուղար, 1970-1980-ական թթ. ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպանը Սենեգալում, Գամբիայում, Ջիմբաբվեում, 1987-2004 թթ. Հեղինակային Իրավունքի պաշտպանության Համամիութենական գործակալության փոխնախագահ, ապա ՌԴ Հեղինակային Իրավունքի միության Վարչության նախագահ և փոխպրեզիդենտ: 2011թ. սեպտեմբերին ՀՀ Նախագահի հրամանգրով պարգևատրվել է Մխիթար Գոշի մեդալով:

նաեւ նպաստում է այս երկրում ապրող հայ համայնքը», - իր ելույթում նշել է նախագահ Սարգսյանը⁴⁴⁹:

ՀՀ նախագահը բարձր է գնահատել ռուսաստանաբնակ հայերի ներդրումը հայ-ռուսական համագործակցության ընդլայնման եւ հատկապես դրա տնտեսական բաղադրիչի զարգացման մեջ: ՀՀ նախագահը «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանին պարգևատրեց ՀՀ Պատվո շքանշանով՝ հայ-ռուսական բարեկամության խորացման եւ ազգային շահերի պաշտպանության գործում ներդրած նշանակալի անձնական ավանդի համար:

Համագումարին ընթերցվել են ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի, ՌԴ վարչապետ Վ. Պուտինի, Պետդումայի նախագահ Բ. Գրիգլովի, Դաշնային Խորհրդի նախագահ Ս. Միրոնովի, Մոսկվայի քաղաքապետ Ս. Սոբյանինի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա-ի ողջույնի և շնորհավորական ուղերձները:

ՌՀՄ 10-ամյակի կապակցությամբ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը շնորհավորական ուղերձում, մասնավորապես նշվում էր. «Դարեր շարունակ ռուս և հայ ժողովուրդներին միավորում է անկեղծ բարեկամությունն ու համակրանքը, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի վրա: Սերտ համագործակցության ու բարիդրացիական հարաբերությունների ավանդույթը փոխանցվել է սերնդեսերունդ և նպաստել է մեր մշակույթների զարգացմանը: Հարյուր հազարավոր հայերի համար, որոնց շարքում կան նաև շատ նշանավոր մարդիկ, Ռուսաստանն իրապես դարձել է երկրորդ հայրենիք: Այսօր հայկական սփյուռքն ակտիվորեն մասնակցում է ռուս հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի ամրապնդման և առաջխաղացման գործին, և քիչ բան չի անում մեր երկրի ազգամիջյան համաձայնության և մշակութային

⁴⁴⁹ <http://www.azatutyun.am/archive/news/20100212/2031/2031.html?id=2222689>

<http://www.sarinfo.org/sarnews/19-11-10-2.html>

բազմազանության պահպանման համար: Ցանկանում եմ ձեզ բարօրություն, հաջողություններ և ամենայն բարիք,- ասված է ուղերձում»⁴⁵⁰:

Այսպիսով, բոլոր ելույթներում շեշտվում էր, որ ՌԴ 2.5 մլն կազմող հայ համայնքի հզոր տնտեսական, մտավոր և քաղաքական ներուժը ծառայում է ինչպես հյուրընկալ երկրի այնպես էլ՝ մայր հայրենիքի բարգավաճմանը:

Շնորհավորական ուղերձների ներկայացումից հետո, անվանի բեռախույզ ԽՍՀՄ ու Ռուսաստանի հերոս, ՌՀՄ Վարչության անդամ Ա. Զիլինգարովը, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանին և ՌՀՄ նախագահ Ա. Աբրահամյանին է հանձնել Հյուսիսային բեռ տարված Հայաստանի և «Ռուսաստանի հայերի միության» դրոշները:

Համագումարին հաշվետվություններով հանդես են եկել ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը, Վերհսկիչ հանձնաժողովի նախագահ Սիմոն Կազիմյանը, Մոսկվայի քաղաքային մասնաճյուղի Խորհրդի փոխնախագահ, ակադեմիկոս Առնոլդ Ադամյանը, Կրասնոդարի /Ռ. Գևորգյան/, Ստավրոպոլի /Ա. Արզումանյան/, Օմսկի /Ա. Թաթոյան/, Իվանովոյի /Ա. Ղարիբյան/, Ուլյանովսկի /Ա. Աբրահամյան/ Տվերի /Ս. Կոչկանյան/ կառույցների նախագահները, ՌՀՄ երիտասարդության հարցերով փոխնախագահ Լ. Սուկանյանը, Ռուսաստանի ժողովրդական նկարիչ, Լենինյան մրցանակի դափնեկիր Ֆ. Սողոյանը, ՌՀՄ Վարչության անդամ, գեներալ Ն. Տեր-Գրիգորյանը:

Համագումարն Ա. Աբրահամյանին վերընտրել է ՌՀՄ նախագահի պաշտոնում, որից հետո հորեյրանական միջոցառումը, պատվիրակների ու հյուրերի մասնակցությամբ, շարունակվել է Կրեմլյան պալատում ՀՀ և ՌԴ արվեստի գործիչների համերգային ծրագրի շրջանակներում:

⁴⁵⁰ <http://www.yerkramas.org/2010/11/17/prezident-rf-dmitrij-medvedev-pozdravil-soyuz-armyan-rossii-s-yubileem/>,
<http://www.kremlin.ru/letters?fill=31.12.2010&since=01.01.2010&page=4>

Այսպիսով, ՌՀՄ Համառուսաստանյան հասարակական կազմակերպության ձևավորման ու գործունեության ավելի քան տասնամյա ընթացքի կարևոր ձեռքբերումներից էին.

- ՌԴ-ում իրարից առանձին գործող ու մեկ ամբողջություն չներկայացնող հարյուրավոր բազմաբնույթ հայկական կազմակերպությունների համախմբումը մեկ կառույցի՝ «Ռուսաստանի հայերի միության» ներքո և, որպես այդպիսին, նրա ճանաչումն ինչպես ՌԴ, այնպես էլ ՀՀ իշխանությունների կողմից: ՌՀՄ-ն կարևոր օղակ է դարձել հայ-ռուսական բազմաբնույթ նախաձեռնություններում, ինչպես նաև ՌԴ-ՀՀ միջպետական հարաբերություններում:

- ՌԴ տասնյակ սուբյեկտներում, քաղաքներում ու շրջաններում կազմակերպվեցին ՌՀՄ մասնաճյուղեր⁴⁵¹, որոնց հիմնական նպատակն էր միավորել հայությանը, պաշտպանել նրանց աշխատանքային, իրավական, կրթա-մշակութային շահերը և համախմբել ազգային ծրագրերի շուրջ:

- ՌՀՄ մեծ ջանքեր է ուղղել գիտակրթական և ստեղծագործական ոլորտների ծրագրերի աջակցությանն ինչպես ՌԴ-ում, այնպես էլ ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

- Վերջինի առնչությամբ մեծ աշխատանքներ են կատարվել, որոնք բերել են կարևոր արդյունքների: Այսպես, 2001 թ. Մոսկվայում հիմնադրվել է Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտը /տնօրեն՝ Յ. Բարսեղով/, որի գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ Հայոց ցեղասպանության, Արցախի անկախության ճանաչման, Հայ դատի, Հայկական սփյուռքի, ՌԴ և ՀՀ ռազմավարական դաշինքի տնտեսական, ռազմական և

⁴⁵¹ ՌՀՄ-ն Կրասնոդարի երկրամասում ունի 43 բաժանմունք, որոնց կայացման գործընթացը սկսվել է 2000 թվականից: Մինչ այդ երկրամասի տարածքում գործում էին մոտ 20 ոչ առևտրային կազմակերպություն, որոնց մեծ մասը մտել են ՌՀՄ կազմի մեջ: Տես, Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Եր., Նորավանք, 2010, էջ 159-160:

անվտանգության հարցերը: Վերոհիշյալ Ինստիտուտը 2004 թ. երևանում կազմակերպել է «Ցեղասպանության գործոնը հայթուրքական հարաբերությունների կարգավորման գործում» միջազգային գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցել են աշխարհի տասը երկրների նշանավոր մասնագետներ: Գիտաժողովի զլխավոր արդյունքներից էր այն, որ ձևավորվել է Հայոց ցեղասպանության հրատապ հիմնախնդիրներն ուսումնասիրող փորձագիտական հանձնախումբ, կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ՌԶՄ միջոցներով հրատարակվել են տասնյակ գրքեր, ինչպես ցեղասպանության, այնպես էլ Արցախի հիմնահարցի կարգավորմանն առնչվող խնդիրների վերաբերյալ:

- 2001 թ. ՌԶՄ նախաձեռնությամբ հիմնվել է նաև «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն», որի նպատակն է աջակցել ՀՀ-ում ռուսաց լեզվի տարածմանն ու դասավանդման կատարելագործմանը:

ՌԶՄ լայնածավալ նախաձեռնություններից է ՀՀ-ում և Արցախում իրականացված կրթական հաստատությունների համակարգչայնացման ռազմավարական ծրագիրը, որի լուծման նպատակով տրամադրվել է մի քանի տասնյակ միլիոն դոլար, որոնցով ձեռք են բերվել հազարավոր համակարգիչներ և օժանդակ սարքավորումներ: Այդ ամենի արդյունքում ՀՀ և Արցախի շուրջ 700 դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում ստեղծվել են համակարգչային դասարաններ և լսարաններ:

2007 թ. ՌԶՄ նախաձեռնությամբ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ, հիմնվել է «Գիտության զարգացման» հիմնադրամ: ՌԶՄ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հետ և ֆինանսական օժանդակությունը կարևոր աջակցություն

էր հայ գիտնականների աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ⁴⁵²:

ՌԶՄ-ն զգալի աջակցություն է ցուցաբերում ՀՀ ստեղծագործական կազմակերպություններին ու միություններին՝ խրախուսելով նկարիչներին, գրողներին, կոմպոզիտորներին, լրագրողներին և անհատ կատարողներին: 2007 թվականից անցկացվում են մրցույթներ, որոնց նպատակը գիտական ու ստեղծագործական կյանքի աշխուժացումն է: 2009 թ. ավանդական դարձած համահայկական այդ մրցույթներն իրականացվում են ՀՀ սփյուռքի, մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների աջակցությամբ:

Ստեղծագործական գործունեությունը խթանելու, հայռուսական գրական կապերը ամրապնդելու նպատակով հիմնվել է «Գրականության համահայկական հիմնադրամ» և այլն:

- ՌԶՄ գործունեության առաջին քայլերից է ՀՀ-Սփյուռք և Սփյուռք-Սփյուռք կապերի աշխուժացումն ու վերափմաստավորումը: Այդ նպատակով դեռևս 2001 թ. իրականացվում է ավանդույթ դարձած մի նախաձեռնություն՝ Ռուսաստանի հայերի միության ու Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերը ՀՀ-ում և Արցախում ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ամեն տարի ՀՀ ու Արցախ են ժամանում սփյուռքի մեծաթիվ ներկայացուցիչներ ՌԴ-ից, ԱՊՀ երկրներից և հեռավոր արտերկրից: Այստեղ նրանք հնարավորություն են ստանում շփվելու, մտքեր ու գաղափարներ փոխանակելու միմյանց հետ, մշակելու համատեղ ծրագրեր, անցկացնելու տարբեր միջոցառումներ՝ որոշակիորեն նպաստելով հայության համախմբմանը:

- ՌԶՄ գործունեության սկզբից գերակա ուղղություն է եղել աջակցությունը Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ռուսահայ համայնքի տնտեսական, գիտական,

⁴⁵² Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2010 /ՀՀ Սփյուռքի նախարարություն; Կազմ. հեղ. խումբ՝ Զրանուշ Հակոբյան և այլք/, Ե., Նորք գրատուն, 2011, էջ 117:

կրթամշակութային հսկա ներուժի ընդգրկմամբ: Այդ խնդրի կենսագործման առումով մեծ նշանակություն են ունեցել Միության նախաձեռնությամբ կազմակերպված համահայկական տնտեսական համաժողովները: Դրանց նպատակը ՌԴ և այլ երկրների մասնավոր կապիտալի միջոցով ՀՀ տնտեսություն ներդրումային հոսքի ավելացմանն օժանդակելն էր, ինչպես նաև բիզնես ծրագրերի մշակումն ու իրագործումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը:

- ՌՀՄ իրականացրած ծրագրերը չեն շրջանցել նաև սոցիալական ոլորտը: Սոցիալագրերի իրականացումը և հայրենակիցներին բազմապլանային օգնության տրամադրումը, աշխատանքի և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին, փախստականներին, անապահով ընտանիքներին տրվող հասցեական օժանդակությունը ևս գտնվել է Ռուսաստանի հայերի միության ուշադրության կենտրոնում: ՀՀ-ում և Արցախում իրականացվող բազմաթիվ ներդրումային ծրագրերից է փախստականներին և անապահով ընտանիքներին կացարաններով ապահովելը: Այսպես, 2004 թ. Երևանում կազմակերպության կողմից ձեռք է բերվել 140 բնակարան, որոնք անհատույց սեփականության իրավունքով, տրամադրվել են փախստականներին /90 բնակարան/ և Ադեֆի գոտուց Երևան տեղափոխված անապահով ընտանիքներին /50 բնակարան/: ՌՀՄ ուշադրության կենտրոնում է գտնվել նաև ՀՀ ռուսական համայնքը, մասնավորապես Լեռնոնտովո և Ֆիոլետովո գյուղերը:

Առկա ձեռքբերումների կողքին ՌԴ հայ համայնքում դեռևս լիարժեք ավարտված չեն համախմբման և ինքնակազմակերպման գործընթացները, թեև «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության ավելի քան 70 տարածքային, հարյուրավոր քաղաքային և շրջանա-

յին մասնաճյուղերի⁴⁵³ իրականացրած ազգանպաստ և հայապահպան գործունեությամբ:

Հարկ է ընդգծել, որ «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը, հանդիսանալով ՌԴ-ում գործող հայկական համայնքային-հասարակական կազմակերպություններից առավել մասշտաբայինն ու ազդեցիկն, այդուհանդերձ, իր շարքերում չի միավորում ռուսահայության գերակշիռ հատվածը և, բացի այդ, ՌԴ-ում գործում են մեծ ու փոքր տասնյակ հայկական այլ կազմակերպություններ, որոնք, ՌՀՄ հետ գործակցելով կամ առանձին, նույնպես իրականացնում են նմանօրինակ գործառույթներ և գործունեություն:

Ամփոփելով հետխորհրդային շրջանի ՌԴ հայկական համայնքի ստվարացման, աշխուժացման և համայնքային կյանքի վերելքի գործընթացի վերհանումը՝ անհրաժեշտ է ընդգծել.

ՌԴ ավանդաբար ստվար և համախումբ հայկական համայնքային կենտրոններում կազմակերպվածությունը ձեռք բերեց ցանկալի մակարդակ, իսկ նորաստեղծ համայնքներում ազգային կառույցների ձևավորման գործընթացը կրեց դժվարություններ ներքին հակասությունների պատճառով, ինչի արդյունքում հայության զգալի հատվածը հեռացել է համայնքային կառույցների հետ սերտ գործակցությունից:

Անվիճելի է, որ դեռևս խորհրդային տարիներից Ռուսաստանում բնակվող հայությունը վաղուց հարմարվել և ինտեգրվել էր ռուսական միջավայրին, որով հայության հնաբնակ այս հատվածն էականորեն տարբերվում էր 1990-ական թթ. սկսած և հիմնականում սոցիալ-տնտեսական պատճառներով ՌԴ տեղափոխված հայերից: Վերջիններս բազմաշերտ էին, անկազմա-

⁴⁵³ Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2009, Ե., 2009, էջ 123-124: Տես նաև Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2010 /ՀՀ Սփյուռքի նախարարություն; Կազմ. հեղ. խումբ՝ Հրանուշ Հակոբյան և այլք/, Ե., Նորք գրատուն, 2011, էջ 116-117; Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2012 /ՀՀ Սփյուռքի նախարարություն; Հեղ. խմբի ղեկավար՝ Հրանուշ Հակոբեան և այլք/, Ե., 2012, էջ 104:

կերպ, ցաքուցրիվ և հեռու ավանդական համայնք-սփյուռք բնորոշումից, որն հատուկ էր Արևմուտքի ու մերձավորարևելյան երկրներում բնակվող հայությանը՝ երբեմն նույնիսկ հանդիսանալով օտար միջավայրում հակահայ վերաբերմունքի պատճառ: Այս համատեքստում էլ առանձնակի խնդիր է հանդիսանում ՌԴ հնաբնակ և նորաբնակ հայության էթնիկ ինքնանույնականացման հարցը⁴⁵⁴:

Այդուհանդերձ, հետխորհրդային տարիներին սկիզբ է առել ՌԴ հայկական համայնքի պատմության նոր փուլը, համայնք, որը որակական և քանակական առումով բոլորովին նոր իրականություն է մեր արդի պատմության մեջ:

Համայնքային կառույցների հետ հարաբերություններում ՌԴ հայության տարբեր շերտերի մոտ նկատելի են զուտ արտաքին կամ ֆորմալ դրսևորումներ, որը հետևանք է համայնքային լիդերների կողմից հաճախ նկատվող ձգտումների՝ օգտագործելու համայնքային կառույցների ղեկը սեփական դերակատարությունը սոցիալական-կառավարչական ապարատում մեծացնելու նպատակով: Որպես հետևանք, նմանօրինակ գործելաոճը կարող է հանգեցնել համայնքային կառույցների թուլացմանը և արդյունավետության անկմանը, պետության կողմից դրանց դիտարկմանն իբրև լծակ, այլ ոչ թե առանցք միջպետական հարաբերություններում:

Քսանմեկերորդ դարի սկզբին ՀՀ, ԼՂՀ և համայն հայության առջև ծառայած համազգային խնդիրների բարձրացման, լուծման, միջազգայնացման և հետապնդման, ինչպես նաև հակահայկական ծրագրերի կանխարգելման գործում խիստ մեծ է հայկական սփյուռքի դերը, այդ թվում՝ ամենաստվար հայ սփյուռքը հանդիսացող ռուսահայության ու նրա կառույցների դերը, որոնց հասարակական-քաղաքական, քարոզչական և լոբբիստական աշխատանքների ակտիվացումը մեծ նպաստ կարող է բերել համահայկական խնդիրների լուծմանը:

Տնտեսական մրցակցությունը, սոցիալական լարվածությունը, ազգային անհանդուրժողականությունը մշտական լարվածության մեջ են պահում ՌԴ բազմաէթնիկ տարածաշրջանները և դրանցում բնակվող հայությանը: Հայության անվտանգության ապահովման խնդրում կարևոր նշանակություն են ստանում ինքնակազմակերպական բարձր մակարդակը, զգոնությունն ու մշտական կապը պետական և տեղական մարմինների հետ: Այս հարցում նկատվող տեղաշարժը հեռու է բավարար լինելուց՝ հաճախ դրսևորելով ծայրաստիճան անցանակալի զարգացումներ:

Ազգային-մշակութային, էթնիկ ինքատիպությունը, ավանդույթներն ու ազգային արժեքները պահպանելուն ուղղված ջանքերը դեռևս չեն տալիս անհրաժեշտ արդյունք, որի հետևանքով տեղի է ունենում ռուսահայերի ոչ թե ինտեգրում ռուսական միջավայրին, այլ՝ ձուլում: Անհրաժեշտ է ջանքերի կրկնապատկում և հայապահպանության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրում, պետական աջակցություն՝ ապահովելու ՌԴ հայության հարատևությունն ու հնարավոր վերադարձի կազմակերպումը Հայաստան:

6.2. Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԴ-ում 2000-ական թթ. (ըստ 2002 թ. և 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարների վիճակագրական տվյալների)

Ռուսաստանի Դաշնության հայ ազգաբնակչության թվաքանակը հետխորհրդային տարիներին անշեղորեն աճել է, ընդլայնվել է հայության բնակության աշխարհագրությունը:

ՀՀ սոցիալ-տնտեսական դժվարին իրողություններով, արցախյան ազգային-ազատագրական պայքարով, Սպիտակի աղետալի երկրաշարժով և հետխորհրդային տարածքում տեղի ունեցած հակամարտությունների, կրոնական ու էթնիկ խտրա-

⁴⁵⁴ Арутюнян Ю. В., Об армянской диаспоре в России, նշվ. աշխ., с. 143.

կանությամբ պայմանավորված հարյուր հազարավոր հայեր ապաստանել են ՌԴ-ում:

Այսպիսով, վերջին քսանհինգ տարիներին ՌԴ-ում բնակություն հաստատած հայերի շրջանում նկատելի են ինչպես 1990-ական թվականներից առկա ծանր սոցիալ-տնտեսական պատճառներով արտագաղթած, այնպես էլ հարկադրված հայ վերաբնակիչների, փախստականների, աշխատանքային և մեծաթիվ ապօրինի միգրանտների խմբեր:

1990-ական թթ. ՌԴ-ում բնակչության հաշվառման նպատակով անցկացվել են մարդահամարներ (միկրոմարդահամար), որոնք, սակայն համընդգրկուն չեն եղել, ուստիև ամբողջական տվյալներ ՌԴ-ում բնակվող հայության քանակի վերաբերյալ ներկայացնում են միայն 2002 և 2010 թվականներին անցկացված համապետական մարդահամարները: Վերոհիշյալ մարդահամարներով ներկայացված են հայության տեղաբաշխվածությունն ըստ ՌԴ դաշնային օկրուգների, սուբյեկտների, գյուղական և քաղաքային բնակչության, քաղաքացիության, հայերեն և ռուսերեն լեզուներին տիրապետման:

Առաջին անգամ ՌԴ հայ ազգաբնակչության թվաքանակը ներկայացված է ըստ Դաշնային օկրուգների, որոնցում ներգրավված առանձին սուբյեկտների կազմը փոփոխվել է:

Այս երկու մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում ՌԴ-ում վարչատարածքային որոշ փոփոխություններ են տեղի ունեցել, առանձնացվել են Դաշնային օկրուգներ, կատարվել են տարածքների անվանափոխումներ կամ լուծարումներ, որոնք արտացոլել են նաև ՌԴ հայության սեռատարիքային և աշխատունակ կազմերը:

Ներկայացված են սեռատարիքային կազմի տարբեր խմբերի կրթական մակարդակները՝ միջնակարգ, թերի բարձրագույն, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական:

ՌԴ հայության թվաքանակի, տեղաբաշխման շրջանների ու մարդահամարներով ամփոփված այլ տվյալների ամբողջական

ներկայացումը շատ կարևոր է բազմաբնույթ գործընթացների վերաբերյալ հնարավոր ճշգրիտ պատկեր ապահովելու:

Աղյուսակ № 8

ՌԴ հայ բնակչության թվաքանակը, սեռային կազմն ու ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁵⁵

ՌԴ	մարդը	արական	իգական	ռուս. տիրապետող
Հայեր, որից՝	1,130,491	620,178	510,313	1,113,215
Քաղաքաբնակ	805,621	446,424	359,197	794,135
Գյուղաբնակ	324,870	173,754	151,116	319,080

Հետաքրքրական է, որ այս մարդահամարով, որպես առանձին էթնիկ խումբ, ներկայացված են հեմշիլները (համշենցիներ), որոնց գերակշիռ մասն, անշուշտ, ներկայացել են հայեր: Դրանով է բացատրվում հեմշիլների ընդամենը 1.512 արձանագրված թվաքանակը, որի հիմնական մասը գյուղաբնակներ են:

2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալներով ՌԴ հայության ավելի քան 71%-ը քաղաքաբնակ էր, գյուղաբնակ

⁴⁵⁵ Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, М., ИИЦ "Статистика России", 2004, стр. 8, 20.

ՌԴ Պետական Դաշնային Վիճակագրական Ծառայության վերոհիշյալ հրատարակության մեջ առկա են թերություններ, որով պայմանավորված ՌԴ հայության նշված ընդհանուր թվաքանակի և ըստ Դաշնային օկրուգների, սուբյեկտների նշվող թվաքանակի միջև առկա է տարբերություն: Ըստ սուբյեկտներում բնակվող հայության թվաքանակին վերաբերող տվյալների գումարի հայության ընդհանուր թվաքանակը ՌԴ-ում կազմում է 1,139,199 մարդ: Վրիպակներ և անհամապատասխանություններ կան Հյուսիս-Արևմտյան, Պրիվոլժսկի, Սիբիրի, Հեռավորարևելյան և Ուրալի Դաշնային օկրուգների հայության թվաքանակի առումով: Стен Основные Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 14 (Сводный), М., 2005, էջեր 278-279, 281-287:

եր շուրջ 29%-ը, ինչն ուրբանիզացման բարձր մակարդակ էր Այսպիսով, 1989 թ. մարդահամարի տվյալների համեմատ (532.390 մարդ) Ռուսաստանի հայ բնակչության թվաքանակն աճել էր ավելի քան կրկնակի անգամ:

ՌԴ հայ բնակչության գերակշիռ մասը տիրապետում էր ռուսերենին: Հայերենին տիրապետողների թվաքանակը ՌԴ-ում կազմում էր 904.892 մարդ, որից հայեր էին՝ 827.930-ը, ռուսներ՝ 31.346-ը, ադրբեջանցիներ՝ 6.468-ը, օսեր՝ 1342-ը, ուկրաինացիներ՝ 1413-ը և այլ ազգությունների ներկայացուցիչներ⁴⁵⁶: Այսպիսով, ՌԴ-ում բնակվող ավելի քան 300 հզ հայեր չէին տիրապետում մայրենի լեզվին:

Հետաքրքրական է ՌԴ-ում բնակվող հայության սեռատարիքային կազմը. այսպես մինչև 35 տարեկան հայերի թվաքանակը կազմում էր 606.996 մարդ, իսկ 35-50 տարեկան էր 300.740 մարդ⁴⁵⁷:

Աշխատունակ տարիքի էր ՌԴ-ում բնակվող ավելի քան 727 հզ հայ, աշխատունակ տարիքից փոքր էր 256 հզ մարդ: Այս ցուցանիշներից հստակ երևում է ՌԴ-ում բնակվող հայության երիտասարդ տարիքային և աշխատունակ կազմերի առկայությունը:

2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալներով ՌԴ-ում բնակվող 136.841 հայեր ունեին ՀՀ քաղաքացիություն:

ՌԴ Կենտրոնական Դաշնային օկրուգի (17 սուբյեկտներ և Մոսկվա քաղաքը) և Հյուսիս-Արևմտյան Դաշնային օկրուգի (10 սուբյեկտ և Սանկտ-Պետերբուրգ քաղաքը) հայ բնակչությունը ներկայացնում էր հետևյալ տեղաբաշխվածությունը.

⁴⁵⁶ Итоги Всероссийской переписи населения 2002 года, том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, նշվ. աշխ., էջ 123-126:

⁴⁵⁷ Նույն տեղում, էջ 182:

ՌԴ Կենտրոնական և Հյուսիս-Արևմտյան Դաշնային օկրուգների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2002 թ.

Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁵⁸

Կենտրոնական ԴՕ, որից՝	Ամբողջը	ռուս. տիրապետող.	Հյուսիս-Արևմտյան ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետող.
1. Բելգորոդի մարզ	7.824	7.741	1. Կարելիայի համր.	1.599	1.557
2. Բրյանսկի	3.618	3.559	2. Կոմի	2.102	2.087
3. Վլադիմիրի	4.999	4.932	3. Նենեցական ԻՕ	26	26
4. Վորոնեժի	8.813	8.667	4. Արխանգելսկի մարզ	1.159	1.150
5. Իվանովոյի	4.012	3.874	5. Վոլոգդայի	2.150	2.113
6. Կալուգայի	7.095	7.011	6. Կալինինգրադի	8.415	8.237
7. Կոստրոմայի	1.462	1.449	7. Լենինգրադի	5.518	5.449
8. Կուրսկի	5.899	5.810	8. Մուրմանսկի	1.954	1.922
9. Լիպեցկի	5.398	5.245	9. Նովգորոդի	1.940	1.925
10. Մոսկվայի	39.660	38.900	10. Պսկովի	2.270	2.240
11. Օրյոլի	3.507	3.465	11. ք. Սանկտ-Պետերբուրգ	19.164	18.882
12. Ռյազանի	4.458	4.391	-	-	-
13. Սմոլենսկի	3.893	3.853	-	-	-
14. Տամբովի	4.326	4.255	-	-	-
15. Տվերի	7.331	7.179	-	-	-
16. Տուլայի	6.507	6.418	-	-	-
17. Յարոսլավի	5.993	5.869	-	-	-
18. ք. Մոսկվա	124.425	122.155	-	-	-

Կենտրոնական Դաշնային օկրուգում բնակվում էին 295.517 հայ, որի կեսից ավելին Մոսկվա քաղաքում, իսկ Հյուսիս-Արևմտյան Դաշնային օկրուգում՝ 46.297 մարդ⁴⁵⁹: Դաշնային եր-

⁴⁵⁸ Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, М., ИИЦ «Статистика России», 2004, стр. 25-56.

⁴⁵⁹ Հարկ է նշել, որ առկա է սխալ Հյուսիս-Արևմտյան Դաշնային օկրուգի հայության ընդհանուր թվաքանակի հաշվարկման մեջ: Նշված 46,271 հայերի թվաքանակը չի համապատասխանում հայության թվաքանակի

կու օկրուզներում միասին բնակվում էր ՌԴ հայության 26%-ից ավելին: Կենտրոնական և Հյուսիս-Արևմտյան Դաշնային օկրուզների շարքում մեծաթիվ հայ բնակչությանը առաձնանում էին Վորոնեժի և Կալինինգրադի մարզերը, ինչպես նաև Սանկտ-Պետերբուրգ քաղաքը:

Աղյուսակ № 10

ՌԴ Հարավային և Պրիվոլժսկի Դաշնային Օկրուզների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2002 թ.

Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶⁰

Հարավային ԴՕ, որից՝	Ամբողջը	ռուս. տիրապետ.	Պրիվոլժսկի ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետ.
1. Դաղստանի հանր.	5.702	5.602	1. Բաշկորտաստանի հանր.	8.784	8.448
2. Ինգուշեթիայի	64	62	2. Մարի Էլի	1.104	1.095
3. Կարաբաղի մարզի բաղկարական	5.342	5.237	3. Մորդովիայի	1.310	1.282
4. Կարաչաև-Չերքեզական	3.197	3.139	4. Թաթարստանի	5.922	5.676
5. Հյուսիսային Օսեթիա-Ալանական	17.147	16.809	5. Ուլանուդեի	3.283	3.213
6. Չեչենական	424	410	6. Զուլախայի	1.261	1.243
7. Ադղեական	15.268	15.042	7. Պերմի մարզ	4.979	4.875
8. Կալմիկական	887	875	8. Կիրովի	2.123	2.088
9. Աստրախանի մարզ	6.309	6.167	9. Նիժնեգորոդի	10.786	10.569

գումարին ըստ նույն օկրուզի առանձին սուբյեկտներում առկա տվյալների գումարի:

⁴⁶⁰ Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, стр. 57-87.

10. Վոլգոգրադի	26.974	26.401	10. Օրենբուրգի	10.574	10.354
11. Ռոստովի	109.994	108.479	11. Պենզայի	3.670	3.631
12. Ստավրոպոլի երկրամաս	149.249	147.644	12. Սամարայի	21.566	20.931
13. Կրասնոդարի	274.566	272.005	13. Սարատովի	24.976	24.505
-	-	-	14. Ուլյանովսկի	4.745	4.670
-	-	-	15. Կոմի-Պերմյակական ԻՕ	46	46

ՌԴ Հարավային Դաշնային օկրուզի 13 վարչական միավորներում միասին բնակվում էին 615.123 հայեր, որը կազմում էր ՌԴ ամբողջ հայ բնակչության ավելի քան 54 %-ը: Ընդ որում, միայն Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում և Ռոստովի մարզում միասին բնակվում էր ավելի քան կես մլն հայ կամ ՌԴ ամբողջ հայության 47 %-ից ավելին: Պրիվոլժսկի Դաշնային օկրուզի 15 վարչական միավորներում միասին բնակվում էր 105.129 հայ, որոնք գլխավորապես կենտրոնացած էին Սարատովի, Սամարայի, Օրենբուրգի և Նիժնեգորոդի մարզերում:

Աղյուսակ № 11

ՌԴ Ուրալի, Սիբիրի և Հեռավորարևելյան Դաշնային Օկրուզների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶¹

Սիբիրի ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապ.	Հեռավորարևելյան ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապ.
1. Ալթայի հանր.	493	483	1. Սախա (Յակուտիա) հանր.	2.764	2.692
2. Բուրյատիայի	2.165	2.131	2. Հրեական ԻՄ	282	281
3. Տիվայի	500	482	3. Չուկոտկայի ԻՕ	83	83
4. Խաբարովսկի	839	833	4. Կորյակական	22	22
5. Ալթայի երկր.	8.105	7.931	5. Խաբարովսկի երկր.	2.666	2.633

⁴⁶¹ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, М., ИИЦ “Статистика России”, 2004, стр. 95-122.

6. Իրկուտսկի	6.849	6.722	6. Պրիմորիե	5.641	5.552
7. Կրասնոյարսկի	10.807	10.587	7. Կամչատկայի	948	940
8. Նովոսիբիրսկի մարզ	7.850	7.677	8. Մագադանի մարզ	330	328
9. Կեմերովայի	10.104	9.867	9. Սախալինի	1.144	1.131
10. Չիտայի	3.594	3.737	10. Ամուրի	4.045	3.997
11. Օմսկի	6.644	6.529	Ուրալի ԴՕ, որից՝	-	-
12. Տոմսկի	2.336	2.306	1. Տյումենի մարզ	14.802	14.412
13. Թայմիր (Դոլ-գանո-Նենեցա-կան) ԻՕ	53	52	2. Սվերդլովսկի	11.093	10.777
14. Էվենկյական	12	12	3. Կուրգանի	2.109	2.063
15. Ուստ-Օրդին-սկի Բուրյաթա-կան	363	351	4. Չելյաբինսկի	8.601	8.454
16. Ազիմսկի Բուրյաթական	161	157	5. Յամալո-Նենեցա-կան ԻՕ	1.554	1.520
-	-	-	6. Խանթի-Մանսիյսկի ԻՕ-Յուգրա	6.471	6.342

ՌԴ Սիբիրի Դաշնային օկրուգում բնակվում էր ավելի քան 60 հզ, Ուրալի Դաշնային օկրուգում՝ 44 հզ⁴⁶², իսկ Չեռավոր-արևելյան Դաշնային օկրուգում՝ 17.9 հզ հայ: Սիբիրում հայությանը հիմնականում կենտրոնացած էր Կրասնոյարսկի, Կեմերովոյի, Նովոսիբիրսկի մարզերում և Ալթայի երկրամասում:

Չեռավոր Արևելքում հայերը մեծաքանակ էին Պրիմորիեի երկրամասում, իսկ Ուրալում՝ Տյումենի և Սվերդլովսկի մարզերում:

2010 թ. ՌԴ-ում անցկացվել է հերթական Համառուսաստանյան մարդահամարը, որի տվյալներով հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդող ութ տարիների ընթացքում ավելացել էր շուրջ 50 հազարով: Այս մարդահամարի արդյունքներով նկատելի էր գյուղական վայրերում հայության թվաքանակի աճ:

⁴⁶² Ուրալի Դաշնային օկրուգի հայության ընդհանուր թվաքանակի հաշվարկման մեջ նկատված սխալն ակնհայտ է: Դաշնային օկրուգի 44.630 հայերի թվաքանակի փոխարեն նշված է 8.025-ով պակաս թվաքանակ՝ 36.605:

ՌԴ քաղաքաբնակ հայության կշիռը 69 % էր, գյուղաբնակներինը՝ 31 %:

Աղյուսակ № 12

ՌԴ հայ բնակչության թվաքանակը, սեռային կազմն ու ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶³

ՌԴ	Ամբողջը	արական	իգական	ռուս. տիրապետող.
Հայեր, որից՝	1.182.388	638.479	543.909	1.165.256
Քաղաքաբնակ	816.375	441.798	374.577	804.512
Գյուղաբնակ	366.013	196.681	169.332	360.744

2010 թ. մարդահամարով ՌԴ հայ բնակչության ճնշող մեծամասնությունը տիրապետում էր ռուսերենին: Նախորդ մարդահամարի տվյալների համեմատ կտրուկ կերպով նվազել էր հայերենին տիրապետողների թվաքանակը: Հայերենին տիրապետում էր 660.935 մարդ, որից հայեր՝ ընդամենը 592.086 կամ ՌԴ հայ բնակչության ուղիղ 50%-ը: Այս մտահոգիչ ցուցանիշն ամենացածրն էր երբևիցե անցկացված մարդահամարների ժամանակ արձանագրված տվյալներից: Հայերենին տիրապետում էին նաև ՌԴ ոչ հայազգի քաղաքացիները՝ ռուսներ՝ 30.537, ադրբեջանցիներ՝ 3.491, վրացիներ՝ 2.211, հույներ՝ 1.176, ուկրաինացիներ՝ 860, օսեր՝ 723 մարդ և այլն⁴⁶⁴:

⁴⁶³ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, №2р. աշխ., стр. 11, 25.

Մեր հաշվարկներով, որոնք հիմնված են ՌԴ Պետական Դաշնային վիճակագրական Ծառայության պաշտոնական հրատարակությունների ուսումնասիրման վրա, 2010 թ. մարդահամարով ՌԴ-ում արձանագրված հայ բնակչության թվաքանակը պետք է լինի 1,190,377 մարդ: Անճշտությունը երևում է ըստ սուբյեկտների հայության թվաքանակը հաշվելիս:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 142-149:

Մարդահամարով վեր են հանվել ՌԴ առավել մեծաքանակ ազգությունների, այդ թվում՝ հայության տարիքային կազմին և կրթական մակարդակին վերաբերող տվյալներ: ՌԴ 15-45 տարեկան հայազգի բնակչության թվաքանակը կազմում էր 489.139 մարդ կամ հայության ավելի քան 41%-ը: Աշխատունակ տարիքի էր ՌԴ ավելի քան 800 հզ հայ քաղաքացի, որից բարձրագույն կրթություն ունեին 176. 815-ը կամ 22 %-ը⁴⁶⁵: Ոչ լիարժեք բարձրագույն կրթություն ունեին 49.269 մարդ:

Հետրուհական կրթություն ուներ 4.920 հայ, իսկ գրագետ չէին ընդամենը 676-ը: Մեծ թիվ էին կազմում մասնագիտական ու միջնակարգ կրթություն ունեցողները:

ՌԴ-ում բնակվում էին 59.351 ՀՀ քաղաքացիներ, որոնցից աշխատունակ էր ավելի քան 46 հզ մարդ: Նրանցից մոտ 26 հզ մինչև 30 տարեկան էր, 22.8 հզ՝ 30-49 տարեկան: ՌԴ-ում բնակվող ՀՀ քաղաքացիների գերակշիռ մասը բնակվում էր քաղաքներում՝ 48.222, իսկ գյուղական վայրերում՝ 11.129 մարդ: Ընդ որում, ՌԴ Կենտրոնական Դաշնային օկրուգում էին բնակվում ՀՀ ավելի քան 24 հզ քաղաքացիներ:

Սղյուակ № 13

ՌԴ Կենտրոնական, Հյուսիս-Արևմտյան և Հարավային Դաշնային Օկրուգների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶⁶

Կենտրոնական ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետող.	Հյուսիս-Արևմտյան ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետող.
1. Բելգորոդի մարզ	7.588	7.526	1. Կարելիայի հանր.	1.606	1.580

2. Բրյանսկի	4.592	4.516	2. Կոմի	1.717	1.702
3. Վլադիմիրի	6.247	6.178	3. Նենեցկան ԻՕ	41	41
4. Կոռոնեծի	10.369	10.262	4. Արխանգելսկի մարզ	1.042	1.040
5. Իվանովոյի	4.645	4.582	5. Վոլոգդայի	2.469	2.434
6. Կալուգայի	9.962	9.823	6. Կալինինգրադի	9.226	9.112
7. Կոստրոմայի	1.656	1.628	7. Լենինգրադի	7.072	6.992
8. Կուրսկի	5.726	5.650	8. Մուրմանսկի	1.618	1.601
9. Լիպեցկի	7.129	7.025	9. Նովոգորոդի	1.836	1.823
10. Մոսկվայի	63.306	62.108	10. Պսկովի	2.379	2.352
11. Օրյոլի	3.916	3.881	11. ք. Սանկտ-Պետերբուրգ	19.971	19.574
12. Ոյազանի	5.549	5.475	Հարավային ԴՕ, որից՝	-	-
13. Սմոլենսկի	4.776	4.728	1. Ադղեական հանր.	15.561	15.405
14. Տամբովի	4.544	4.471	2. Կալմիկական	867	855
15. Տվերի	8.222	8.121	3. Կրասնոդարի երկ.	281.680	278.361
16. Տուլայի	9.145	9.024	4. Աստրախանի մարզ.	5.824	5.736
17. Յարոսլավլի	7.158	7.060	5. Վոլգոգրադի	27.846	27.324
18. ք. Մոսկվա	106.466	104.612	6. Ոոստովի	110.727	108.913

ՌԴ Կենտրոնական Դաշնային օկրուգի հայ բնակչությունը 2010 թ. մարդահամարի տվյալներով կազմում էր 270.996 մարդ, որից միայն Մոսկվա քաղաքում՝ 106.466 մարդ:

Նախորդ մարդահամարի տվյալների համեմատ Կենտրոնական Դաշնային օկրուգի հայ բնակչության թվաքանակի անկում է արձանագրվել մոտ 25 հզ մարդով, որից միայն Մոսկվա քաղաքում՝ 18 հազարով: Հետաքրքրական է, որ Մոսկվայի հայության

⁴⁶⁵ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 2, Изд. «Росстат», стр.860.

⁴⁶⁶ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, М., ИИЦ «Статистика России», 2012, стр. 29-76.

թվաքանակը, հարյուրամյակներ շարունակ անշեղորեն աճել է և առաջին անգամ առկա է հայության թվաքանակի անկում մոտ 15 %-ով, այն էլ՝ հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում:

Աղյուսակ № 14

ՌԴ Հյուսիսկովկասյան, Պրիվոլժսկի և Ուրալի Դաշնային Օկրուգների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶⁷

Հյուսիսկովկասյան ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետ.	Պրիվոլժսկի ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապետ.
1. Դաղստանի հանր.	4.997	4.907	1. Բաշկորտաստանի հանր.	9.407	9.268
2. Ինգուշեթիայի	16	16	2. Մարի Էլի	1.003	995
3. Կարաբոլինա-Բալկարական	5.002	4.949	3. Մորդովիայի	1.342	1.326
4. Կարաչաև-Չերքեզական	2.737	2.687	4. Թաթարստանի	5.987	5.835
5. Հյուսիսային Օսեթիա-Ալանական	16.235	15.944	5. Ուլմուրտիայի	3.170	3.118
6. Չեչենական	514	506	6. Զուվաշիայի	1.290	1.275
7. Ստավրոպոլի երկրամաս	161.324	159.708	7. Պերմի մարզ	5.464	5.354
Ուրալի ԴՕ, որից՝	-	-	8. Կիրովի	1.825	1.804
1. Կուրգանի մարզ	1.750	1.731	9. Լիժնգորոդի	13.294	13.044
2. Սվերլովսկի	11.501	11.238	10. Օրենբուրգի	10.547	10.397
3. Տյումենի	15.542	15.241	11. Պենզայի	4.103	4.056
4. Խանթի-Մանսիյսկի ԻՕ- Յուգրա	6.343	6.235	12. Սամարայի	22.981	22.433
5. Յամալ-Նենեցա-կան ԻՕ	1.605	1.594	13. Սարատովի	23.841	23.555
6. Չելյաբինսկի	9.311	9.134	14. Ուլյանովսկի	4.520	4.460

⁴⁶⁷ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, ԳՀԿ. աշխ., стр. 76-113.

Հյուսիսային Կովկասի Դաշնային օկրուգում միասին բնակվում էին 190.825 հայ, ընդ որում, գերակշիռ մասը՝ միայն Ստավրոպոլի երկրամասում: Չեչենական և Ինգուշական հանրապետություններում հայության թվաքանակը զգալիորեն փոքր էր կապված հետխորհրդային տարիներին տեղի ունեցած պատերազմական իրադարձությունների հետ:

Ուրալի Դաշնային օկրուգի հայության թվաքանակը նախորդ մարդահամարի համեմատ փոքր աճ էր արձանագրել՝ կազմելով 46.052 մարդ: Տյումենի մարզն Ուրալի ամենահայաշատ վարչական միավորն էր:

Պրիվոլժսկի Դաշնային օկրուգի հայության թվաքանակը կազմում էր 108.774 մարդ: Հայությունը բազմամարդ էր Սարատովի և Սամարայի մարզերում: Պրիվոլժսկում, նախորդ մարդահամարի տվյալների համեմատ, հայության թվաքանակն որոշակիորեն աճել էր:

Աղյուսակ № 15

ՌԴ Սիբիրի և Հեռավորարևելյան Դաշնային Օկրուգների հայության թվաքանակն ու տեղաբաշխումը, ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների⁴⁶⁸

Սիբիրի ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապ.	Հեռավորարևելյան ԴՕ, որից՝	ամբողջը	ռուս. տիրապ.
1. Ալթայի հանր.	528	523	1.Սախա (Յակուտիա) հանրապետ.	3.691	3.538
2. Բուրյատիայի	2.179	2.158	2. Գրենական ԻՄ	311	310
3. Տիվայի	512	497	3. Զուլկոտկայի ԻՕ	105	105
4.Խաբարսխայի	776	771	4. Կամչատկայի երկ.	748	742

⁴⁶⁸ Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, ԳՀԿ. աշխ., стр.113-141.

5. Ալթայի երկր.	7.640	7.526	5. Խաբարդուսկի	2.943	2.881
6. Անդրդարյալայի	3.943	3.861	6. Պրիմորիե	5.924	5.827
7. Կրասնոյարսկի	10.677	10.502	7. Ամուրի մարզ	3.948	3.880
8. Նովոսիբիրսկի մարզ	9.508	9.359	8. Մագադանի	247	243
9. Կեմերովայի	10.669	10.468	9. Սախալինի	1.240	1.219
10. Իրկուտսկի	6.558	6.438	-	-	-
11. Օմսկի	7.300	7.198	-	-	-
12. Տոմսկի	2.801	2.755	-	-	-

2010 թ. Համառուսաստանյան մարդահամարն արձանագրել է հայ բնակչության թվաքանակի փոքր աճ նաև Սիբիրի և Հեռավորարևելյան Դաշնային օկրուգներում; Սիբիրում հայության թվաքանակը կազմում էր 63.091, Հեռավոր Արևելքում՝ 19.157 մարդ:

Սիբիրի վարչական միավորներից հայությունը հիմնականում տեղաբաշխված էր Կրասնոյարսկի, Կեմերովոյի և Նովոսիբիրսկի մարզերում, իսկ Հեռավոր Արևելքում՝ Պրիմորիեի երկրամասում: ՌԴ ասիական մասի այս երկու դաշնային միավորներում միասին բնակվում էին 82.248 մարդ:


Այսպիսով, 2010 թ. մարդահամարը նախորդի (2002 թ.) համեմատ արձանագրել էր հայ բնակչության անկում ՌԴ միայն կենտրոնական Դաշնային օկրուգում:

Չնայած 2002-2010 թթ. անցկացված Համառուսաստանյան մարդահամարների պաշտոնական տվյալներին, այդուհանդերձ, ՌԴ հայության իրական թվաքանակը տարբեր գնահատականներով, այդ թվում՝ ՌԴ բարձրագույն ղեկավարության կողմից հնչեցված հայտարարություններով, «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպու-

թյան տվյալներով, կազմում է շուրջ 2.5 մլն մարդ: Հայության, որպես ՌԴ խոշոր էթնիկ համայնքի, թվաքանակի նվազեցումը կարող է պայմանավորված լինել քաղաքական հստակ նկատառումներով, քանի որ այդպիսի մեծաթիվ համայնքի առկայության փաստն ընդունելիս հարկ կլինեիր հաշվի առնել նրա ներկայացուցիչների առավել մեծ ներգրավվածության ապահովումն իշխանության դաշնային (օրենսդիր, գործադիր) և, հատկապես, տեղական մարմիններում, ինչպես նաև երկրում ընթացող քաղաքական, տնտեսական և այլ գործընթացներում:

ՌԴ-ում բնակվող հայության թվաքանակն անկասկած աճ է արձանագրել նաև 2010 թ. հետո՝ պայմանավորված ՀՀ-ում և հետխորհրդային տարածքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լարվածությամբ:

ՀՀ-ից դեպի Ռուսաստանի Դաշնություն կատարվող շարունակական արտագաղթին լրացնելու է եկել ՌԴ կառավարության կողմից իրականացվող կամավոր վերաբնակեցման «Հայրենակիցներ» ծրագիրը, որն հաստատվել է ՌԴ Նախագահի 2006 թ. հունիսի 22-ի թիվ 637 հրամանագրով: «Հայրենակիցներ» ծրագիրն իրականացվում է նախկին ԽՍՀՄ տարածքում, որին մասնակցում են այն անձինք, ովքեր ծնվել են նախկին Խորհրդային Միության հանրապետություններում: Ծրագրի գլխավոր նպատակն ակնհայտ է նրա ձևակերպումից. «Պետական ծրագիրը նպաստելու է Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ինչն անհնար է առանց ժողովրդագրական իրավիճակի արմատական փոփոխության, որն այսօր բնորոշվում է բնակչության արտահոսքով Ռուսաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներից, բնակչության ընդհանուր թվաքանակի, այդ թվում՝ աշխատունակ տարիքի կրճատմամբ»:



Այս ծրագիրը ՀՀ-ում սկսվել է կիրառվել 2007 թվականից, որին մասնակցած հազարավոր ընտանիքներ արդեն իսկ տեղափոխվել են բնակության ՌԴ տարբեր սուբյեկտներ:

ՌԴ հայ համայնքի թվաքանակի ներկա աճը (մեխանիկական և հարկադրված) որոշակիորեն պայմանավորված է նաև 2014 թ. փետրվարից Ուկրաինայի շուրջ ծավալվող քաղաքական և ռազմական իրադարձություններով, ինչի արդյունքում Ղրիմը միացվեց ՌԴ-ին, իսկ Դոնեցկի և Լուգանսկի հայաշատ մարզերից բազմաթիվ հայեր արտագաղթեցին ՌԴ տարբեր շրջաններ:

Այսպիսով, հետխորհրդային տարիներին ՌԴ հայության թվաքանակի շարունակական աճն այդ երկրի հայկական համայնքը դարձրել է խոշորագույնն աշխարհում, որի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ներուժը դեռևս լիովին բացահայտված չէ: Համոզված կարելի է նշել, որ ՌԴ-ն հետայսու ևս հանդիսանալու է ՀՀ-ից և հետխորհրդային այլ երկրներից հայության միգրացիայի հիմնական ուղղություններից մեկը, ուր կարող է ձևավորվել արևմտյան և մերձավորարևելյան հայկական սփյուռքից զգալիորեն տարբերվող միջավայր:

Ակնհայտ է, որ հետխորհրդային տարածքում (ՌԴ առանցքով) հայկական համայնքների ստվարացումն ու ընդլայնումն անխուսափելիորեն հանգեցնելու է ազգային-մշակութային, արժեհամակարգային և մենթալիտետային ընկալումներով որոշակիորեն նոր «սփյուռքյան ցանցի» վերջնական ձևավորմանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ռուսաստանի տարածքը հայերով բնակեցումից, այստեղ հայկական առաջին գաղթավայրերի հիմնումից և կազմակերպված համայնքների ձևավորումից անցել է շուրջ հազար տարի, որի ընթացքում հայության թվաքանակն անշեղորեն աճել է, ընդլայնվել է բնակության աշխարհագրությունը: Ռուսաստանի հայության պատմությունը ներառում է արտերկրում բնակվող և էթնիկ խմբերին ներկայացվող գաղթավայր, գաղթօջախ, համայնք բնորոշումները, ձևավորման գործընթացում է բազմամիլիոն այդ համայնքի անցումը դասական սփյուռքի:

Տարբեր պատմափուլերում ռուսահայ գաղթօջախներն առանձնացել են իրենց սոցիալ-տնտեսական և իրավական կարգավիճակով, երկրի հասարակական-քաղաքական և մշակութային ասպարեզներում ունեցած նշանակալի դերակատարմամբ: Ռուսաստանի մի շարք հայահոծ կենտրոններում տեղի հայ բնակչությունն օժտվել է ներքին ինքնակառավարմամբ՝ մագիստրատով, դատարանով (Աստրախան, Ղզլար, Մոզդոկ, Կամենեց-Պոդոլսկ): Ռուսաստանում հիմնվել են նաև զուտ հայկական քաղաքային և գյուղական բնակավայրեր, որոնք ի սկզբանե միայն հայաբնակ էին (Նոր Նախիջևան, Սուրբ Խաչ, Գրիգորիոպոլ և այլն) և նույնպես օգտվում էին ազգային ինքնակառավարումից ու տնտեսական արտոնություններից:

Հայերի շարունակական ներգաղթը Ռուսաստան և տնտեսական գործունեությունը նպաստել է թույլ զարգացած շրջանների բնակեցմանն ու յուրացմանը, ներքին և արտաքին առևտրի զարգացմանը, ուստիև լայնորեն խրախուսվել է ռուսական իշխանությունների կողմից, իսկ մյուս կողմից ծանրակշիռ դերակատարություն է ունեցել հայության տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի վերելքի համար: Ռուսահայ կենտրոնների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Մոսկվան և Պետերբուրգը, որոնք մինչև օրս հանդիսա-

նում են ռուսահայության մտավոր, տնտեսական և հասարակական կյանքի խոշոր դերակատարները:

Ռուսահայ գաղթօջախների պատմության տարբեր ասպեկտների հետազոտությունն ու քննությունը թույլ է տալիս նշելու, որ դրանց զարգացումը նպաստել է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային վերելքին, դրանց անկումը՝ հայության նկատելի հատվածի ուժացմանը, ազգային արձատներից կտրվելուն, արժեքների ու մշակույթի կորստին:

Ռուսաստանի հայկական գաղթօջախների պատմության համար շրջադարձային էր 1917 թ. հեղափոխությունը, քաղաքացիական պատերազմը և երկրում խորհրդային իշխանության հաստատումը: Խորհրդային 70 տարիները ռուսահայության համար դարձան ազգային հիմքերից՝ լեզվից, եկեղեցուց, համայնքային կառույցներից օտարման դժվարին տարիներ: Չնայած Խորհրդային Հայաստանի զգալի առաջադիմությանը, միութենական հանրապետություններում բնակվող հայությունը, որոշակի վերապահումներով հանդերձ, չապահովվեց հայ ազգային կյանքի զարգացմամբ: Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին փակվեցին ազգային դպրոցները, համայնքային-հասարակական կառույցները, եկեղեցին, մամուլը: Համայնքային այդ կառույցներն ու կազմակերպությունները որակվեցին որպես ազգային-բուրժական և անհավասարություն սերմանող: Հետապնդումների ու բռնությունների ենթարկվեցին նախ Ռուսաստանի, ապա և միութենական մյուս հանրապետությունների հայկական ազգային հաստատությունները, հոգևոր և աշխարհիկ շատ գործիչներ: Ազգային կյանքի դրսևորման իրական հնարավորությունները վերացվեցին, ՌԽՖՍՀ հայությունը հայտնվեց հասարակական-քաղաքական և գաղափարական նոր իրողությունների պայմաններում:

Խորհրդային իշխանության տարիներին ՌԽՖՍՀ հայությունը, մասնավորապես, նրա համախումբ բնակեցման շրջանները՝ Հյուսիսային Կովկասը, Դոնը, Ղրիմը, Պոլովժին, հայտնվեցին

ամբողջատիրական հասարակարգի թելադրած պայմանների մեջ, որտեղ կատարվեցին բռնի կոլլեկտիվացումը, սովը, 1920-1940-ական թթ. քաղաքական, ազգային բռնաճնշումներն ու զանգվածային աքսորը: Առանձնապես դաժան բնույթ ուներ 1944 թ. դրիմահայերի զանգվածային աքսորը ՌԽՖՍՀ արևելյան շրջաններ և Միջին Ասիայի հանրապետություններ, որից հետո Ղրիմի հայ բնակչությունը տասնամյակներ շարունակ գրկվեց վերադարձի իրավունքից:

Հետպատերազմյան տարիներին նույնպես հայ ազգային կյանքի կազմալուծումը ՌԽՖՍՀ-ում շարունակվեց. որոշակիորեն թուլացավ ճնշումը հայ եկեղեցու նկատմամբ, հայությանը վերադարձվեցին մի քանի եկեղեցիներ, նրանց հետագա ավերումը կանխվեց (Մոսկվա, Դոնի Ռոստով):

ԽՍՀՄ-ում կյանքի կոչված Վերակառուցման քաղաքականությունը, ազգային-ազատագրական շարժումը Լեռնային Ղարաբաղում հնարավորություն ընձեռեցին նորոգել հայ ազգային կյանքը Հայաստանից դուրս: Ազգային ինքնագիտակցության վերելքի պայմաններում ՌԽՖՍՀ-ում և մյուս միութենական հանրապետություններում աստիճանաբար վերստեղծվեցին ազգային մշակութային կառույցները՝ մշակութային միությունները, դպրոցները, մամուլը, հասարակական-բարեգործական բազմաբնույթ կազմակերպությունները:

Ազգային կյանքի վերելքը հատկապես ակնառու էր Մոսկվայում, Պետերբուրգում, Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի և Աստրախանի մարզերում:

Խորհրդային տարիներին Ռուսաստանի հայության թվաքանակն աննախադեպ աճ ունեցավ. 1989 թ. Համամիութենական մարդահամարով ՌԽՖՍՀ հայությունը կազմում էր ավելի քան կես մլն մարդ, որից Կրասնոդարի երկրամասում ավելի քան 182 հզ, Ստավրոպոլում՝ 72 հզ, Ռոստովի մարզում՝ 62 հզ, Մոսկվա քաղաքում շուրջ 44 հզ, իսկ Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգում)՝ 12 հզ հայ: ՌԽՖՍՀ հայ բնակչությունը 1939-

1989 թթ. ընթացքում բազմապատկվել էր 2.4 անգամ և ԽՍՀՄ փլուզման նախօրեին այստեղ բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայ բնակչության 11.5 %-ը, իսկ ՌԽՖՍՀ-ն հանդիսանում էր Հայաստանից հետո ամենահայահոծ միութենական հանրապետությունը՝ առաջ անցնելով Վրաստանից և Ադրբեջանից:

Հետխորհրդային տարիներին ևս, ՌԴ կազմավորումից հետո հայ ազգաբնակչության թվաքանակը շարունակեց աճել՝ պայմանավորված Ադրբեջանից, Վրաստանից, Աբխազիայից, միջինասիական հանրապետություններից հայ բնակչության բռնագաղթով և աստիճանական արտահոսքով: Նորանկախ ՀՀ սոցիալ-տնտեսական դժվարությունները, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրողությունները պատճառ դարձան Հայաստանից դեպի ՌԴ հարյուր հազարավոր հայերի ներգաղթի՝ հայաշատ համայնքների հայության թվաքանակի մեծացման, Կալինինգրադից Կամչատկա հայկական նոր համայնքների ձևավորման:

ՌԴ-ում անցկացված երկու համապետական մարդահամարներով (2002 թ. և 2010 թ.) այստեղ արձանագրվել է հայության թվաքանակի սրընթաց աճ, ընդ որում, երկրի բոլոր Դաշնային օկրուգներում:

2010 թ. Համառուսաստանյան վերջին մարդահամարով ՌԴ հայության թվաքանակն ըստ պաշտոնական վիճակագրության կազմում էր 1.182.388 մարդ, որից՝ Կենտրոնական Դաշնային օկրուգում ավելի քան 270 հզ (Մոսկվա քաղաքում՝ ավելի քան 106 հզ), Հարավային Դաշնային օկրուգում՝ 442 հզ (Կրասնոդարի երկրամասում՝ ավելի քան 280 հզ, Ռոստովի մարզում՝ 110 հզ), Հյուսիսարևմտյան Դաշնային օկրուգում՝ 48 հզ (Սանկտ-Պետերբուրգ քաղաքում՝ շուրջ 20 հզ), Հյուսիսկովկասյան Դաշնային օկրուգում՝ 190 հզ մարդ, Պրիվոլժսկի Դաշնային օկրուգում՝ 108 հզ, Ուրալի Դաշնային օկրուգում՝ 46 հզ, Սիբիրի Դաշնային օկրուգում՝ 63 հզ, Հեռավորարևելյան Դաշնային օկրուգում՝ 19 հզ հայ:

Չնայած պաշտոնական վիճակագրական տվյալներին՝ Ռուսաստանի հայության իրական թվաքանակը տարբեր գնահատականներով, այդ թվում՝ ՌԴ բարձրագույն դեկավարության հրապարակային և համայնքնային մարմինների հայտարարություններով, կազմում է ավելի քան 2.5 մլն մարդ: Դեպի ՌԴ հայության շարունակվող միգրացիան հետևանք է նաև ՌԴ կողմից իրականացվող «Հայրենակիցներ» ծրագրի, Ուկրաինայի արևելյան շրջաններում ընթացող ռազմաքաղաքական իրադարձությունների և Դոնբասից հայության արտահոսքի: Դրիմի միացումը ՌԴ-ին նույնպես հայության թվաքանակի մեխանիկական աճ արձանագրեց: Այսպիսով, ՌԴ-ն ներկայումս հանդիսանում է աշխարհի ամենամեծ հայ համայնք ունեցող երկիրը:

Հայության թվաքանակի աճը, ազգային կյանքի և մշակույթի վերելքը, համայնքային կյանքի կազմակերպումը մեծապես կառուցվեց տարաբնույթ կազմակերպությունների շուրջ, որոնք հիմնվեցին ՌԴ բոլոր տարածաշրջաններում: 1990-ական թթ. ՌԴ-ում հիմնված հայկական տարբեր կազմակերպությունների միավորման անհաջող փորձերից հետո 2000 թ. հաջողվեց հիմնել ամենամասշտաբային համայնքային-հասարակական կառույցը՝ «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը, որը լուրջ դերակատարություն է ստանձնել ՌԴ հայության կյանքում: Այդուհանդերձ, ՌՀՄ-ից բացի ՌԴ տարբեր սուբյեկտներում և Մոսկվայում գործում են տասնյակ հայկական այլ կազմակերպություններ ու միություններ, որոնք ևս ներկայացնում են ռուսահայության շահերն ու դիրքորոշումը, ներգրավված են ազգային արժեքների պահպանման ու զարգացման գործին:

Առկա կարևոր ձեռքբերումների կողքին նկատելի են նաև բացթողումներ, կազմակերպական խնդիրներ, հայապահպանությանն ու հայկականությանը վտանգող մարտահրավերներ: ՌԴ հայկական համայնքների հետագա զարգացումը, հզորացումը, կազմակերպական նոր որակը կարող են այն դարձնել ՀՀ-ին և համայն հայությանը սատարող կարևոր գործոնի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բաժին առաջին (Բարխուդարյան Վ. Բ.)

1. Սկզբնաղբյուրներ

Արխիվային

1.1 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆ. 139, գ. 488, 1541, 1318:

Ֆ. 387, գ. 1, գ. 350:

Ֆ. 52, գ. 5, գ. 39, 58:

Ֆ. 52, գ. 1, գ. 5500:

Ֆ. 1152, գ. 10, գ. 20:

Ֆ. 55, գ. 1, թղթ. 1, գ. 73:

Ֆ. 399, գ. 1, գ. 145, 970, 978, 987, 989, 989, 1018, 1037, 1048, 1077, 1225:

1.2 Центральный государственный исторический архив России (ЦГИАР)

ф. 1281, оп. 5, д. 60.

ф. 1152, оп. 3, д. 66.

1.3 Государственный архив Ставропольского края (ГАСК)

ф. 79, оп. 1, д. 342.

1.4 Крымоблархив

Փ. 27, օպ. 1, Ժ. 9796.

Փ. 179, Ժ. 333, Ժ. 226.

1.5 Մերոպ Մաշոցի անվան Մատենադարան Վավերագրեր

Կաթողիկոսական դիվան, թղթ. 88, վավ. 169:

Կաթողիկոսական դիվան, թղթ. 206, վավ. 1961:

Կաթողիկոսական դիվան, թղթ. 130, վավ. 396:

Լազարյանների արխիվ, թղթ, 119, վավ. 56, 94:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

Ղատաստանագիրք Աստրախանի Հայոց, աշխատասիրու-
թյամբ՝ Ֆ. Գ. Պողոսյանի, Եր., 1967:

Армяно-русские отношения в XVIIв., Сборник документов,
Ер., 1953.

Архив Раевских, т. I, С. Петербург, 1908.

Бумаги, относящиеся до Отечественной войны 1812 года,
Часть десятая. М., 1908.

Веселовский Н. И., Памятники дипломатических и торговых
сношений Московской Руси с Персией, т. III, СПб.

Кеппин П., Крымский сборник, СПб., 1837.

Ставропольская губерния в статистическом, географическом,
историческом, сельскохозяйственном отношениях, Ставрополь,
1987.

Присоединение Крыма к России, сост. Дуброван Н., т. II, СПб.,
1885.

Присоединение Крыма к России. Рескрипты, письма, реляции
и донесения, т. I-III, Спб., 1887.

Материалы для географии и статистики России
(Екатеринославская губерния), сост. В. Павлович, СПб., 1862.

Мельников П., Нижегородская ярмарка в 1843, 1844 и 1845 гг.,
Н. Новгород, 1846.

Новароссийский календарь на 1840 г.

3. Մենագրություններ, աշխատություններ, հոդվածներ

Արովյան Խ., ԵԼԺ, հատոր 10, Եր., 1961:

Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական
գաղութի պատմություն, գիրք առաջին, Ե. 1967, գիրք երկրորդ,
Ե., 1985:

Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական
գաղութների պատմություն (XVIII դ. կես- XX դ. սկիզբ), Ե., 2010:

Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական
կայսրության հայկական դպրոցների պատմության (18-րդ դարի
վերջ 20-րդ դարի սկիզբ), Ե., 2006:

Երիցյան Ա., Գրիգոր Արծրունու ու նրա քսանը հինգ տարվա
գրական գործունեության առթիվ (1865-1890), Թիֆլիս, 1890:

Թաղևոսեան Յ., Պատմութիւն Լազարեան տոհմի եւ
Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վիեննա, 1953:

Թումանյան Հ., ԵԼԺ հ. 6, հ. 10, Ե.

Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև
1920 թ.), հ. 1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի
հայկական գաղութները, խմբ.՝ Վ. Միրայեյան, Ե., 2003:

Մսերեանց Ս., Յիշատակարան կենաց եւ գործոյ մեծանուն
պայազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856:

Մարյան Ս., Գրառումներ իմ կյանքից, գիրք 1, Եր., 1966:

Միրայեյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն,
հատոր Ա, Ե., 1964, հատոր Բ, Ե., 1970:

Միրայեյան Վ., Ղրիմահայոց պատմություն, Ե., 1989:

Միքայելյան Վ., Հայ-իտալական առնչությունները ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, Ե., 1974:

Մարտիրոսյան Ա. Ա., Մարտիրոս Ղրիմեցի, Ե., 1958:

Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Ե., 1940:

Շահագիզ Երվանդ, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, Թիֆլիս, 1903:

Հոդվածներ

Անանյան Ժ., Խաչատրյան Վ., Հայ վաճառականական կապիտալը Ռուսաստանում 17-18-րդ դդ., «Հայաստանի ժող. տնտեսություն», Ե., 1989, N 8:

Խաչատրյան Վ. Ա., Հայ տպագրությունը Աստրախանում, «Գիտություն և Տեխնիկա», Ե., 1988, N 1:

Մելիքսեթ-Բեկ Լ., Գևորգ Մելիքսեթյան Խուրով (նյութեր և նոթեր), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., Ե., 1950, N 1-2:

Յուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը 18-րդ դարի առաջին կեսին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., Ե., 1957, N 7:

Ոսկանյան Վ., Հայերը Մոսկվայում 15-17-րդ դարերում, ՊԲՀ, Ե., 1971, N 1,

Восканян В., Ново-торговый договор с армянской торговой компанией в 1667 г., «Տեղեկագիր» հաս. գիտ., Ե., 1947, N 6:

Терещенко А. Г., Новонахичеванцы в революционном народническом движении, ՊԲՀ, Ե., 1975, N 4

Юхт А. И. Армянские ремесленники Астрахани в первой половине XVIII века, Изв. общ. Наук АН Арм. ССР, Ե., 1958, N 1.

Юхт А. И., Торговые связи России со странами Востока в 20-40-х годах XVIII в., Историческая география России XVIIIв., ч. I, М., 1981.

4. Պարբերականներ, հանդեսներ և մամուլ

Արծազանք, 1888 նո. 26:

Նոր դար, 1888, N 169:

Մշակ, 1875, 1881, 1887, 1893, 1899, 1902, 1910, 1914:

Մեղու Հայաստանի, 1867, N 42:

Լույս, 1905:

Արարատ, 1873:

Հյուսիսափայլ, 1864, թիվ 4:

Северный архив, ч. 29, СПб., 1827.

Армянский вестник, 1916, N 16, 17.

Крым, 1889, N 39.

Բաժին երկրորդ (Ալեքսանյան Հ. Ս.)

1. Սկզբնաղբյուրներ

Արխիվային

1.1 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆ. 200, ց. 1, գ. 73, 151, 158, 164, 210, 254, 498, 530:

Ֆ. 1265, ց. 1, գ. 40:

Ֆ. 276, ց. 1, գ. 114:

Ֆ. 178, ց. 1, գ. 347, 361, 365, 366:

Ֆ. 409, ց. 1, գ. 5787:

Ֆ. 823, ց. 1, գ. 254; ց. 3, գ. 108; ց. 4, գ. 23:

1.2 Ռուստովի մարզային պետական արխիվ (ԴԱՐՕ)

Ֆ. 151, ց. 3, գ. 42, 43, 141, 539:

Ֆ. 181, ց. 3, գ. 491:

Ֆ. 806, ց. 1, գ. 34:

Ֆ. 1818, ց. 1, գ. 477:

Ֆ. P-1475, ց. 1, գ. 3:

1.3 Ղրիմի Ինքնավար հանրապետության պետական արխիվ (ГААРК)

Ֆ. 1188, ց. 3, գ. 31:

Ֆ. 4988, ց. 1, գ. 4:

Ֆ. P-663, ց. 2, գ. 457; ց. 3, գ. 986:

1.4 Մոսկվայի հասարակական-քաղաքական պատմության կենտրոնական արխիվ (ЦАОПИМ)

Ֆ. 635, ց. 1, գ. 886:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ հայերեն

Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը կրոնի և եկեղեցու մասին, Ե., Հայպետհրատ, 1960:

Համկոմկուսի (ք) Հյուսիսային Կովկասի Յերկրային կազմակերպության 6-րդ կոնֆերենցիայի բանաձեւերն ու վորոշումները, Ռոստով Դ-Վ., Ազգային փոքրամասնությունների Հյուսիսային Կովկասի յերկրային հրատարակչություն, 1930:

Ռուսահայ հոգեւորականութեան համագումարի (1917 թ. յունիս) բանաձեւեր, Ս. Էջմիածին, Էլեւտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ, 1917:

Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ.՝ Բեհրուդյան Ս., հ. Ա, Ե., 1994:

Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955-1994թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ժՁ, կազմող՝ Գ. Եազըճեան, Եր., 2008:

Ռուսերեն

Борьба за Советскую власть на Кубани в 1917-1920 гг., сб. док. и мат., Краснодар, кн. Изд., 1957.

Борьба трудящихся масс за установление и упрочение Советской власти на Ставрополье (1917-апрель 1921 гг.), сб. док. и мат., изд. 2-е, доп., Ставрополь, Ст. кн. изд., 1968.

Борьба за власть Советов на Дону 1917-1920 гг., сб. док., Ростов-на-Дону, Ростовское книжное издательство, 1957.

Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, сб. док., Е., Айпетрат, 1957.

Всесоюзная перепись населения 1926 года, том I, отдел I, Народность. Родной язык. Грамотность, Северный район. Ленинградско-Карельский район, М., Издание ЦСУ СССР, 1928.

Նրւյնի՝ том II, Западный район Центрально-Промышленный район. М., 1928.

Том III, Центрально-Черноземный район, Средне-Волжский район. Нижне-Волжский район, М., 1928.

Том IV, Вятский район, Уральская область Башкирская АССР, М., 1928.

Том VI, Сибирский край. Бурято-Монгольская АССР, М., 1928,

Том VII, Дальне-Восточный край. Якутская АССР, М., 1928.

Том VIII, Казакская АССР. Киргизская АССР. М., 1928,

Том IX, Российская Социалистическая Федеративная Республика, М., 1929,

Дагестанская АССР. Статистическое Управление. Материалы Всесоюной переписи населения 1926 года по Дагестанской АССР, вып. 1, Махач-Кала, изд. "Дагстатуправление", 1927.

Декреты Советской власти, том I, М., Госполитиздат, 1957, 626 с, նրւյնի՝ том II, М., 1959, 686 с.

том III, М., 1964.

том IV, М., 1968.

Всесоюзная перепись населения 1937 года. Краткие итоги, М., "Ин-т. ист. АН СССР", 1991.

Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги.,

М., "Наука", 1992.

Итоги десятилетия Советской власти в цифрах (1917-1927), М., ЦСУ СССР, тип. 14-я Мосполиграф, 1927.

Итоги Всесоюзной городской переписи 1923 г., том XX, отдел демографии, часть IV, М., Издание ЦСУ Союза ССР, 1927.

Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, М., ИИЦ Статистика России, 2004.

Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, М., ИИЦ Статистика России, 2012.

Основные итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 14 (Сводный), М., 2005.

Резолюции первой Всекрымской армянской беспартийной конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, изд. Крымсовнаркома, 1926.

2. Մենագրություններ և աշխատություններ հայերեն

Ալիխանյան Ա., Հայկական գործերի Կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Ե., Հայաստանի պետական հրատարակչություն, 1958:

Ալիխանյան Ա., Վահան Տերյանի պետական գործունեությունը, Ե., Հայպետհրատ, 1956:

Արշարունի Ա., Մոսկվայի հայ մամուլը, Ե., «Հայաստան» հրատ., 1971:

Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), հ. 2, Ե., «ՀՍՍՀ ԳԱ», 1985:

Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (18-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ), Ե., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինս. հրատ., 2006:

Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դ. կես- XX դ. սկիզբ), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010:

Դավթյան Ա., Հայկական և հայախառն բնակավայրերը Հյուսիսսային Կովկասում, Ե., Նահապետ, 2001:

Եղիշե ա. Քահյ. Սարգսեան, «Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը». Գեորգեան ճեմարան. Աստուածաբանական համալսարան (1945-2006), Ս. Էջմիածին, 2009:

Զաքարյան Հ., Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը (1809-1918 թթ.), Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1999:

Համշեն եւ համշենահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պէյրուք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 2007:

Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ, գ.10, Գեվորգյան Գ., Ղզլար, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1980:

Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Մ. Բաբլոյան, Ե., 1986:

Հայ սփյուռք հանրագիտարան, Ե., Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2003:

Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ.1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, խմբ.՝ Վ. Միքայելյան, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմ. ին-տ, 2003:

Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Ե., Նորավանք, 2010:

Հայկական Սփյուռք: Տարեգիրք, 2009, Ե., 2009:

Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2010 /ՀՀ Սփյուռքի նախարարություն; Կազմ. հեղ. խումբ՝ Հրանուշ Հակոբյան և այլք/, Ե., Նորք գրատուն, 2011:

Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2012 /ՀՀ Սփյուռքի նախարարություն; Հեղ. խմբի ղեկավար՝ Հրանուշ Յակոբեան եւ այլք/, Ե., 2012:

Հարությունյան Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական եվ դիվանագիտական գործունեությունը 1918-1920 թվականներին, Ե., հեղինակային հրատարակություն, 2004:

Ղազարյան Խ. Ռ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20 -րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, տպ. Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1999:

Սանուկյան Ա., Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Ե., «Ամրոց», 1997:

Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975:

Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն. 1801-1917, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

Միքայելյան Վ., Ղրիմահայոց պատմություն, Ե., «Հայաստան» հրատ., 1989:

Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006:

Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., Ապոլոն, 1994:

Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008:

Տերչանյան Ա., Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), Ե., «Նոր կյանք», 2001:

Տեր-Հարությունյան Հ., Մեր Նպատակը. Հայոց եկեղեցական բարեփոխությունը յեվ նրան հասնելու միջոցները, Թիֆլիս, Յեկ. յեղբ. հրատ., 1926:

1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր, համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., Լիմուշ, 2009:

Ռուսերեն

Агзамходжаев С., История Туркестанской Автономии (Туркистон Мухторияти), Ташкент, ИПО "Тошкент ислом университети", 2006.

Акопян В. З., Армянская Апостольская церковь города Пятигорска, Пятигорск, 2007.

Акопян В. З., Возражение церковной жизни армян Пятигорска, Армяне Ставрополя и Терека, Коллективная монография, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007.

Ананян Ж., Хачатурян В., Армянские общины России, изд. "М. Варандян", Е., 1993. Армяне юга России: история, культура, общее будущее: материалы Всероссийской научной конференции (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону) /отв. ред. акад. Г.Г. Матишов, Ростов н/Д., Изд-во ЮНЦ РАН, 2012.

Армяне Ставрополя и Терека, /Коллективная монография под общей ред. В. З. Акопяна, Пятигорск, 2007.

Армянский настольный календарь на 1919 года, Ростов-на-Дону, тип, "Ашхатанк", 1918.

Арутюнян Ю. В., Об армянской диаспоре в России, Е., 2011.
Асвацатуров А., Дружба, сотрудничество, братство, Орджоникидзе, изд. "ИР", 1969.

Базиянц А., Лазаревский институт в истории отечественного востоковедения., М., Наука, 1973.

Белозеров В., Этническая карта Северного кавказа, М., ОГИ, 2005.

В семье единой, Ростов-на-Дону, Мяскоковский райисполком, 1989.

Выдро М., Население Москвы (по материалам переписей

населения 1871-1970 гг.), М., "Статистика", 1976.

Вторые Лазаревские чтения по истории армян России: 25-27 ноября 2003 г., М., 2006.

Гизгизов А., Мяскоковский район, Ростов-на-Дону, "МП книга", 1999.

Гозулов А., Григорьянц М., Народонаселение СССР, М., "Статистика", 1969.

Григорьянц В., Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., изд. Научно-исследовательским институтом Айк, 1994.

Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Е., Институт Кавказа, 2009.

Игнатъева В., Национальный состав населения Якутии (Этно-статистическое исследование), Якутск, Якут. науч. центр СО РАН, 1994.

Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, Е., тип. N 1 Госкомитета Арм ССР по делам издательств, полиграфии и кн. Торговли, 1982.

Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г., Е., тип. Исполкома Ергорсовета, 1991.

Люди земли Донской: Очерки, Ростов-на-Дону, Ростовское книжное издательство, 1983.

Микаелян В., На Крымской земле. История армянских поселений в Крыму, Е., Айастан, 1974.

Минасян М., Армяне Причерноморья, Е., "Айастан", 1990.

Национальный состав населения СССР (по итогам переписи 1959 г.), под ред. П. Г. Подьячих, М., 1961.

Погосян Л., Армянская колония Армавира, Е., изд. АН Арм ССР, 1981.

Рафиенко Л. С., Армянский религиозный, культурный и багатворительный центр в Москве в конце XVIII-первой прети XX вв., Московский регион: этноконфессиональная ситуация, М., 2000.

Симонян Р., Едесия-Эдиссия. Историко-этнографический очерк (к 200-летию создания села), с. Эдиссия, 1998.

Тезисы научной конференции: "Армяне на Дону и Северном Кавказе", Ростов-на-Дону, апрель 1993.

Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, Москва, 1998.

Худавердян К. С., Культурные связи Советской Армении, Е., 1977.

Эмиров Р. М., Приоритеты национальной безопасности Российской Федерации на Северном Кавказе, М., 2011.

225-летию основания города Нахичевани-на-Дону и сел Мясниковского района Ростовской области, Ростов-на-Дону, 2004.

3. Հանդեսներ և ամսագրեր

«Ալիք», Պյատիգորսկ, գիրք 1, 1919, գիրք 2, 1920:

«Արարատ», Եջմիածին, 1917, Յունիս-Յուլիս:

«Բազմավեպ», Վենետիկ - Ս. Ղազար, թիւ 1-4, 2003:

«Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1983, N 2/66), 1967, N3 (18), 1968 N 7/302), 1970, N3 (27), 1979 N 3 (55), 2006, N 1 (107), N 2/108):

«Լրաբեր Հայաստանի Օգնության Կոմիտեի Մուկվայի ճյուղի», Ս., 1924, N 1:

«Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1968, N 7, 1975, N 6 (390), 1976, N 12/432), 1978, N 12 (432), 1991, N 6 (582):

«Հայրենիք», Բոստոն, 1928, նոյեմբեր, 1929, նոյեմբեր:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Ե., 2004, N XXIII:

«Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1983, N4, 1992, N 2-3:

«Պատմություն և Մշակույթ», (Հայագիտական հանդեսի հատոր Ա), Ե., 2011:

«Վէմ», Փարիզ, 1934, 1935, 1938:
«Քուրա», Մոսկվա, 1923, N 1, N 2, 1923; N3, 1928:
“Замайнк” (“Община”), Пятигорск, 1997, вып. 6.
Жизнь национальностей, книга I (VI), М., 1924.
Историческое наследие Крыма, Симферополь, 2004, N 5.

4. Մամուլ

«Անաստված», Ե., 1932, N17-18, 21-24, 1934, N 2-3:
«Բանվոր», Նոր Նախիջևան, 1921, N 6, N 1, N 5, N 52:
«Բոլշևիկ», Դոնի Ռոստով, 1937, NN 44, 47, 48, 53, 54, 62, 68, 69, 70, 71, 73, 77, 78, 80, 86, 87, 88, 91, 95, 100, 104, 118, նույնի՝ 1938, NN 4, 6, 14, 28, 62, 95:
«Խորհրդային Հայաստան», Ե., 1925, N 264 (1318):
«Կոմունար», Չալտր (Նոր Նախիջևան), 1941, N 55:
«Հայ համայնք», Նոր Նախիջևան, 1918, NN 7, 8, 9, 10, 11, 16, 21, 23, 24, 25, 1919 թ., NN 17, 21, 26, 27, 28, 29:
«Հայ դպրոցի օրը», Կրասնոդար, 1922, N 1:
«Հոսանք», Օդեսա, 1918, NN 1, 6, 7, 9, 11, 12, 13, 17, 26, 27, 28, 29, 38, 1919 թ., NN 12, 15, 16, 17, 18, 21, 23, 24, 25, 26, 33, 14, 37, 38, 45, 54, 66, 67, 1920 թ., N 1:

5. Կայք-էջեր

<http://www.president.am/hy/foreign-visits/item/2013/09/16/President-Serzh-Sargsyan-attended-the-ceremony-of-consecration-of-Armenian-Church-in-Moscow-foreign/>
<http://www.sarinfo.org/way/syezd1.shtml>
<http://www.sarinfo.org/way/syezd2.shtml>
<http://www.sarinfo.org/way/syezd3.shtml>
<http://www.sarinfo.org/sarnews/19-11-10-2.shtml>

<http://www.azatutyun.am/archive/news/20100212/2031/2031.html?id=2222689>

<http://www.sarinfo.org/sarnews/19-11-10-2.shtml>

<http://www.yerkramas.org/2010/11/17/prezident-rf-dmitrij-medvedev-pozdravil-soyuz-armyan-rossii-s-yubileem/>

<http://www.kremlin.ru/letters?till=31.12.2010&since=01.01.2010&page=4>

<http://noev-kovcheg.ru/mag/2008-06/1193.html#ixzz32YPKPrsl>
(N 6 (129) Июнь 2008 г.)

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Ա**
Աբամելիք-Լազարյան Ս. 152, 158
Աբելյան Յ. 66
Աբով 272
Աբովյան Խ. 66, 132
Աբրահամյան Ա. 362, 363, 366, 367, 372, 375, 377, 378
Ադամյան Ա. 378
Ադամյան Պ. 66, 148, 180
Ադի-Ղայդաչ 27
Ադոնց Ն. 177
Ալամդարյան Յ. 60
Ալաջալյան Ղ. 86, 148
Ալեքսանդր I 171
Ալեքսանդր II 33, 173
Ալեքսեյ Միխայլովիչ 40
Ալեքսանյան Ա. 213
Ալեքսանյան Յ. 6
Ալեքսի Երկրորդ 364, 367, 369
Ալիխանյան Ս. 275
Ախշարունով Դ. Դ. 66
Աղաբաբյան Յ. 61
Աղաբաբյան Ն. (Աղաբաբով) 59, 60
Աղաբալյան Ա. 90
Աղազար 151
Աղայանց Գ. 362
Աղանյանց Գ. քահանա 179
Աղաջանյան Ա. 149
Ամիրյան Յ. 283
Այվազյաններ 26
Այվազովսկի Գ. 32-36
Այվազովսկի Յ. 25, 30, 36, 37, 167
Անանովա Ն. (Շերմազանյանց) 85
Անուփյան Գ. 145
Աշտարակեցի Ն. 22, 30
Ապրեսյան Դ. 233
Առաքելյան Յ. 231, 296
Ասլանյան Թ. 90
Ասլանյան Վ. 266
Ավագյան Ս. 289
Ավագով 278, 281
Ավանեսով Վ. 238, 245, 285
Ավճալով Մ. 57
Արակչեև Ալ. 170, 171
Արամ Ա 371
Արզունանյան Ա. 378
Արծաթպանյան Յ. 148
Արծրունի Ար. 198, 239
Արծրունի Վ. 361, 363
Արղության Կ. (Երկայնաբազուկ) 156
Արղության Յ. (Երկայնաբազուկ) 20, 52, 55, 61, 69, 73, 74, 94, 96, 130, 144, 154
Արմենյան Ա. 265
Արշարունի Ա. 272
- Բ**
Բաբաջանյան Ա. 266

- Բաբաջանյան Ս. 130
Բաբաև 78
Բագրատունի 186
Բախչիսարայցև Խ. 134
Բախրով Գ. 61
Բահաթրյան Ա. 142
Բաղդասարյան Յ. 287
Բաղդասարեան Յ. 206
Բաղրամյան Մովսես 52
Բաշինջաղյան Բ. 270
Բարաթով Ս. 359
Բարանով 78
Բարդուղիմեոս 63
Բարխուդարեան Ար. 198
Բարխուդարյան Վ. 122
Բարսեղյան Ե. 280, 281
Բարսեղով Յ. 379, 375
Բեգլարով Ա. 58
Բելոգյորով Վ. 218, 299
Բերբերյան Մ. 135, 145, 287
Բերբերյան Ռ. 139, 147, 189, 241, 242, 289, 290
Բզնունի Լ. 270
Բժշկյան Յ. 284, 285
Բժշկյան Մ. 37
Բլոկ Ա. 283
Բոգդանով Բոգդան 40
Բոգդանովիչ Դ. 84
Բոզբորողկո Ի. 99
Բոյաջին Գր. 276
Բորոդին Պ. 366, 374
Բրյուսով Վ. 160, 283, 287
Բուլգանին Ն. Ա. 339, 341
Բունիաթով Ի. 48
Բունիաթով Գ. 48
Բուռնազյան Պ. 266
Բուսկով Վ. 173
- Գ**
Գաբրիելյանց Գ. 362
Գազին Ս. 287
Գաղաթեցի Ստ. 54
Գալուստյան Վ. 366
Գասպարյան Ս. 343, 346
Գասպարով (Գասպարյան) Եսայի (Սահակ) Մովսեսի 54, 165
Գարեգին Ա Սարգիսյան 348
Գարեգին Բ (Երկրորդ) 352, 367, 369, 371
Գերասիմով Ս. (Սիխբեստրոս) 49
Գիգոյան Է. 233
Գիգոյան Մ. 281
Գիլդենշտեդ 67
Գյանջունյանց Յ. 86
Գյուլիքևիսյան Յ. 66, 272
Գյունուշխանեցի Մանվել 27, 30
Գոգրբերիծե 277
Գոգով Ն. 127
Գոգոյան Մ. 143
Գովոռուն Օ. 371
Գորկի Մ. 283
Գրիգորյան Ե. 50
Գրիգորյան Թ. 266
Գրիգորյան Յր. 336
Գրիգով Բ. 377
Գրիկեան Սիմ. 198
Գրիգորյան Ս. 360, 362
Գրիկյան Ել. 239
Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյան (Գևորգ Զ) 329-336

Գևորգ Դ կաթողիկոս 84, 85,
133, 164
Գևորգ Ե 325
Գևորգյան Ա. 363
Գևորգյան Ռ. 378
Գևորկով Գ. 28

Դ

Դավիթ 17, 61
Դարբինյան Մ. 274
Դեյանով Դ. Ա. 66
Դեյանով Յ. 174
Դենիկին Ա. 210, 211
Դիլանյանց Մինաս (Դեյանով)
46
Դիրացու Ա. 194
Դոստյան Ալ. 256
Դոկուկին 280
Դրյուկով Ա. 370

Ե

Եգյան Կ. 162, 163
Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյան
367, 370
Եկատերինա II 3, 18, 51, 54, 92,
94, 154, 172
Եղիազարյան 280
Եսայան Ջ. 132
Եվանգուլյան Լ. 211
Երամյան 177
Երզնկյան Յ. 265
Երիցյան Կ. 162
Երկունի Գ. 270
Երտևցյան Ա. 285
Եփրեմ կաթողիկոս 83, 171

Զ

Զալին Ռ. 48
Զակրուտկին 277
Զատուլին Կ. 375
Զարաֆյան Ե. 244
Զինովա Ի. 158
Զուրեբով Գր. 57

Է

Էլդարյան Մ. 63
Էմին Գ. 266
Էմին Յ. 52, 53
Էմին Մ. 178
Էմին Վ. 359

Թ

Թաթոյան Ա. 378
Թաթուլով 277, 279
Թայիրյան Գ. Բ. 205
Թադեոս 63
Թովալովներ 26
Թունանյան Յ. 180, 271
Թունանով Ա. 26
Թունանյան Գ. 85
Թունանյան Յ. 86
Թունանյան Ք. 85
Թևանյան Ն. 361

Ժ

Ժիրինովսկի Վ. 374
Ժուկովսկի Վ. 127

Ի

Իգնատոսյան Օ. 57
Իզբիլ Գ. 48
Իզմիրյան Ե. 90

Իսաև Մատվեյ 46
Իսրայելյան Ա. 255
Իվանեն 12
Իվանեսով Վ. 48
Իվանով Ս. Ա. 48
Իվանով Սերգեյ (Սարգիս
Օհանյան) 48, 50

Լ

Լազարյան Խ. 152, 156, 166,
171-174
Լազարյան Հովհաննես 60,
152, 154, 155, 166, 170-173
Լազարյան Հովակիմ 152
Լալայան Ե. 179
Լենին Վ. 184, 245, 277, 279
Լերմոնտով Մ. 128
Լիսիցյան Պ. 369
Լուժկով Յ. 367
Լուկաշին Ա. 273
Լուսիկով Գ. 38

Խ

Խաղամյան Թ. 148
Խաղամյան Յ. 148
Խալաթյան Գ. 359, 360, 363
Խալդարյան Գր. 61, 144
Խալեևա Ի. 367, 370
Խալիբյան Ա. 126
Խաչանյան Յ. 274
Խաչատրյան Ա. 366
Խաչիկյան Մ. 259
Խաչիկյան Վ. 266
Խաստատով 45, 66
Խլիջյան 228
Խոջաֆյան Ջ. 240

Խոջամալով Իվան 48
Խոջյան 83
Խորեն արք. Մուրադբեկյան
(Խորեն Ա) 329, 330
Խորեն սրբազան 325
Խոճաճյան Խ. 132
Խրիմյան Հայրիկ 133, 271
Խրուշչով Ն. 339, 342
Խուրով Գ. 83
Խուդաբաշյան Ալ. 156
Խուդոյան Ա. 266
Խունարյան Ա. 66

Ծ

Ծատուրյան Ա. 160, 164

Կ

Կազինյան Ա. 374, 375, 378
Կալուստով Նիկիտա (Մկրտում
Գալստյան) 46
Կամպանյան Գր. (Կամպանով)
50, 155
Կայալով Մ. 138
Կապուտիկյան Ա. 266
Կարապետեան Յար. 198
Կարապետյան Ա. 353
Կարապետյան Շ. 363
Կարատով Ա. (Կարապետով) 66
Կարա-Մուրզա Ք. 37, 91
Կարինյան Ա. 284, 285
Կիրիլ պատրիարք 352, 377
Կլեբանով Ի. 366, 369, 375
Կյուլպենկյան Գ. 338
Կյունուշլի Մարկոս 12
Կոլչակ Ա. 212
Կոսիգին Ա. 339, 344, 345

Կոչկանյան Ա. 378
Կոստանյան Կ. 245
Կոտեչնիկով 168
Կվաշնին Ա. 367
Կուբաթով Յ. 57
Կուսիկյան Յ. 90
Կուրդիանյան Շ. 147

Հ

Հախվերդև 78
Հակոբյան Յ. 284, 375
Համալեան Սիմ. 198, 201, 251
Համբարձումյան Ա. 273
Հայկունի Գ. 272, 273, 285
Հայրապետյան Կ. 126, 130, 226, 228
Հարությունյան Աբակում 28, 145, 266
Հարությունյան Յ. 91, 176
Հարությունյան Ա. 208, 270
Հարությունով Ռ. 361
Հալաբով 56
Հոմեր դը Յելլ 130
Հովհաննիսյան Ա. 187, 255, 270, 279, 280-283, 285
Հովսեփյան Գ. արք. 132, 325, 329

Ձ

Ձամոյան Գ. 205, 210, 212

Ղ

Ղարիբյան Ա. 378
Ղարիբյան Վ. 213
Ղրիմեցի Մարտիրոս 17
Ղուլյան Ա. 351

Ղուկաս կաթողիկոս 73
Ղուկասյան Ա. 371, 372, 374
Ղուկասյան Յ. 278, 279, 282

Ճ

Ճանճիկյան Ա. 330

Մ

Մագնիցկի Մ. 83
Մաղաքիա պատրիարք 158
Մաթևոսյան Մ. արքեպիսկոպոս 326
Մատթեոս II Իզմիրյան 133
Մալաֆյան Պ. 197
Մալխասյան Յ. 146
Մալյանց 327
Մալյուտին 168
Մակարով 45
Մակինցյան Պ. 187, 245, 284
Մահտեսյան Է. 37
Մամաջանյան Գ. 84
Մամաջանյան Մ. 90
Մամիկոնյան Ա. 159, 160
Մայակովսկի 277
Մանասև 83
Մանդինյանց Մ. 89, 146
Մանվելով Ե. 79
Մանուկ Բեյ 172
Մանուկյան Մ. 202
Մառ Ն. 178, 179, 245
Մարգարյան Մ. 266
Մարգարյանց Ա. 188
Մարուկյան Թ. 62
Մարքս Կ. 279, 344
Մեդվեդև Գ. 377
Մեժլումյան Կ. 359

Մելիքյան Ռ. 181
Մելիքենցյան Ա. 63
Մեծփեցի Թովմա 16
Մելքոնյան Ռ. 359
Միհրանյան Ա. 362, 367
Մերզին Կարապետ 12
Միլլեր Վ. 164
Միկոյան Ա. 233
Մինաս վարդապետ 53, 54
Մինասյան Ռ. 265
Մինասյան Ա. 266
Միրզախանյան 213
Միրզյան Յ. 198
Միրզյան Է. 266
Միրոնով Ա. 371
Միքայելյան 36
Մխիթարով Մ. 61
Մկրտիչ Խ. 193
Մկրտչյան Լ. 370
Մյասնիկյան Ալ. 139, 233, 255, 284
Մյասնիկյան Ա. 146
Մնտիկյան Յ. 206
Մոմջյան Բ. 28
Մովսես եպիսկոպոս 363
Մովսիսյան Մ. 370
Մսերյան Զ. 245
Մսերյան Մ. 178
Մուրադյան Ն. 361
Մուրզաթ Խոջա 38
Մուրզաևներ 26

Յ

Յակունին Վ. 353
Յաղուբով Ա. (Յաղուբյան) 213

Յարալով 56

Ն

Նազարյան Ա. 132, 140, 163
Նալբանդյան Միքայել (Նալբանդովներ) 4, 26, 66, 99, 130, 131, 133, 134, 138, 147, 163
Նալբանդյան Յովհաննես 37, 181
Նալբանդյան Վ. 213
Նահապետյան Կ. 359
Նեմիրովիչ-Դանչենկո Վ. 161, 283
Նիկիտին Ա. (Մկրտչյան) 61
Նիկոլայ Առաջին 58, 127, 156
Նոր-Արևյան Լ. 194

Շ

Շախ Ռու. 168
Շահազիզ Ե. 131, 139, 143, 147, 289, 292
Շահազիզ Ա. 134
Շահինյան Մ. 287
Շահումյան Ա. 257
Շամունց 272
Շապովալով Յ. 138
Շիրվանզադե Ա. 66, 146
Շիրվանով Լ. 48
Շիշկին 168
Շլոյան Գր. 149
Շլոյան Պ. 86
Շողերյան Բ. 266
Շախ 168

Ո

Ոճովեան Ոճ. 198

Չ

Չալխուշյան Գր. 132, 240, 287

Չարենց 272

Չարիխյան Ղ. 143

Չարիխով Ի. 148

Չեբանով-Խաչխայան 194

Չեռնիշևսի Ն. Գ. 67

Չերնիշև Ռ. 138

Չիթունի Վ. 270, 271

Չիլինգարով Ա. 362, 367, 374, 375, 378

Չուբար Գ. 148

Չուբարյան Դովի. 205

Չուբարյան Միք. 240

Պ

Պապայան Ն. 66

Պապայան Ա. 146

Պապյան Ա. 266

Պավել I 51, 58, 69, 73

Պատկանյան Գ. 60, 132, 145

Պատկանյան Պ. 132

Պատկանյան Ռ. 4, 112, 131, 133, 134, 138, 141, 142, 145, 147

Պատկանյան Ա. 60, 140

Պատկանյան Բ. 178

Պարոնքա 14

Պարրոտ 132

Պետրոս առաքյալ 64

Պետրոս I (Պյոտր I, Պյոտր Մեծ)

3, 40, 41, 43, 52, 92, 151

Պետրոս դի Սարգիս Գիլանենց 53

Պոլյակով 203

Պոկրովսկի Մ. 245

Պողոսյան Ա. 359

Պողոս առաքյալ 63

Պոպով Ե. 136

Պոպով Դ. 78

Պոպով Մ 138

Պոպով Տ. 148

Պոտենց Դ. 281

Պոտյոմկին Գ. 14, 19, 51, 53, 154

Պոտյոմկին Պ. 72

Պռոշյան Պ. 66, 134

Պուզին Ա. 344

Պուշկին Ա. Ս. 99, 127, 164

Պուտին Վ. 364, 367, 371, 77

Ջ

Ջիլավյան Ա. 360

Ջիվելեզով Ա. 160, 161, 283

Ռ

Ռանսկի Ն. Ն. 99

Ռաֆայելյան Գ. 28

Ռեիզյան Գ. 146

Ռոմանով Կ. 179

Ռոստովսկի Դ. 94

Ռոտերմել Ա. 375

Ռուշանյանց Մ. 209

Ս

Սահակյան Բ. 274, 352

Սահակյան Ա. 367, 370

Սաթունյան Ն. 208

Սալտիկով Ա. 128

Սահակյան Ա. 367

Սահինյան Ա. 266

Սահրադյան Ջաքար 40

Սաղաթելյան 201

Սանասարյան Մ. 164

Սարյան Մ. 149

Սարաֆյան Մ. 155

Սարգիսով Գ. 265

Սարգսյան Ա. 352, 369, 375-378

Սարուխանյան Ա. 264, 267, 266

Սաֆարյան 213

Սերգեն Դ. 61

Սերեբրյակով Լ. Մ.

(Արծաթագործյան) 12, 26, 37

Սեֆերովներ 26

Սիմեոն Երևանցի 54

Սիմոնյան Ա. 230, 359

Սիմոնով Ռ. 265

Սիրանույշ 66

Սիրոնով Ա. 377

Սմբատյան Ա. 374

Սոբյանին Ա. 377

Սոլոմենցև Մ. 376

Սողոյան Ֆ. 378

Սողոմոնյան Դ. 57

Սպենդիարյան Ալ. 27, 37, 266

Սպենդիարյան Յու. Ի. 31, 196

Սպենդիարով Լեոնիդ 27

Սպենդիարովներ 26, 27

Սվերդլով 238

Ստալին Ի. 280, 332, 333

Ստեփանեն Խ. 37

Ստեփանովներ 26

Ստոլկին 168

Սրապիոնյան Ա. (Լուկաշին) 28, 139

Սուկանյան Լ. 378

Սունդուկյան Գ. 66, 134, 180

Սուվորով Ա. Վ. 53, 93

Սուրաբելյան Մ. 63

Սուրենյանց Վ. 164

Սուրինով Տ. 214

Սուքիասյանց Գ. 270

Վ

Վազգեն եպիսկոպոս Պալճյան (Վազգեն Ա) 336-348

Վաղարշյան Լ. 265

Վայսքիոֆեն 62

Վասիլև Սաֆար 44, 45, 80

Վարդազարյան Բ. արք. 325, 328

Վարդազարյան Տ. 265

Վարդանյան Կ. 266, 277, 279

Վարդանով Պետրոս 46, 48

Վարդանյան Ա. 282

Վարձիգուլյան Վ. 265

Վեսելովսկի Ա. 161, 283

Վեսելովսկի Յ. 161, 283, 287

Վեքիլյան Գ. 286

Վլասև 210

Վոլոշին Ա. 366, 367

Վրացյան Ա. 139

Վրույր 66

Տ

Տատիշև Վ. Ն. 41

Տարասով Դ. 78

Տեղվեթյան Գ. 36

Տեր-Աբրահամյան Դ. 37, 145

Տեր-Ավանեսով Ա. 375
Տեր-Գաբրիելյան Յ. 145
Տեր-Գաբրիելյան Ա. 246
Տեր-Գրիգորյանց Ն. 363, 378
Տեր-Հարությունյան Ա. 239
Տեր-Ղազարյանց Գ. 36, 363, 376
Տեր-Մարտիրոսյան Ե. 271, 272
Տեր-Մարուքյան Ա. 133
Տեր-Միկելով 36
Տեր-Պողոսյան Վ. 213
Տեր-Սիմոնյան Յ. 145
Տեր-Ստեփանյան Ա. 197, 239
Տերյան Ա. 359
Տերյան Վ. 187, 245, 263, 284, 285
Տերտերյան Յ. 139
Տիգրանյան Ա. 149
Տիգրանսկի Ստ. 48
Տիրոսենց Ն. 271
Տոլստոյ Դ. 174
Տոլստոյ Լ. 128, 164
Տրոնցկի Յ. 279, 281
Տոնեան Ա. 290

Ր

Րաֆֆի 66

ՈՒ

Ուղունյան Վ. 363
Ուլուխանյանց Ա. 86
Ունանով Ա. 286

Փ

Փանոսով Ա. 57
Փարսադանյան Յ. 57
Փափազյան Վ. 265
Փեշեքերով Պ. 138
Փեշեքերով Ա. 138
Փոթիկյան Բ. 231

Ք

Քեֆեան Ե. 198, 201
Քոչարեկյան Յովհ. 89
Քոչարյան Ռ. 367, 371
Քոչինյան Ա. 336, 346
Քրիստոսթուրյան Դ. 190, 191
Քուրդյան Ն. 330
Քուշնարյան Ա. 148
Քուշնարյան Ա. 134
Քուշներյան Բ.
(Քուշնարյաններ) 26, 37, 117

Օ

Օրբելի Յ. 245
Օրդուխանյան Գ. քահանա 326
Օրի Իսրայել 52, 53

Ֆ

Ֆասուլյաճյան Թ. 66, 89, 148

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբխազիա 24, 250, 405
Ազամատ 252
Ազինսկի Բուրյաթական ԻՕ
389, 391, 392, 395, 396, 397
Ադլեր 319, 349, 356
Ադղեական ԻՄ, Ադղեա 315,
316, 318, 322, 390, 395
Ադրբեջան, Ադրբեջանական
ԽՍՀ 291, 314, 326, 339, 340,
342, 343, 405
Ազով-Սևծովյան 231, 254, 255,
281, 295
Ազատ 157, 224, 252, 324
Ալթայ 313, 391, 392, 398
Ալուպկա 304
Ալուշտա 304
Ակկերման 129, 287
Ամերիկա 124, 333
Ամուր 320, 392, 398
Անապա 303, 319
Անտոնովկա 252
Ապշերոնսկ 319, 349
Ասիա 10, 38, 43, 44, 51, 73,
125, 151, 158, 239, 246, 313,
340, 404
Ասնա, 224, 252
Աստրախան 7, 38, 39, 40-46,
48, 49, 51-67, 72-74, 82, 85, 88,
95, 133, 138, 140, 150, 155,
187, 237, 243, 268, 285, 298,
308, 316, 321, 326, 328, 330,
333, 345, 347, 354, 390, 395,
402, 404

Արարատ գ. 222

Արխանգելսկ 40, 305, 389, 395
Արմավիր 70, 72, 78, 88, 89, 91,
143, 187, 256, 268, 276, 285,
286, 294, 296, 300-304, 326,
328, 330, 338, 347, 349, 351
Արևելյան Եվրոպա 9
Արևելք 8, 10, 11, 23, 38, 164,
212-214, 309, 314, 320, 324,
333, 349, 392, 398
Արևմուտք 8, 10, 144, 384
Աքսայ 232, 233

Բ

Բաքու 188, 333, 336, 337
Բաթումի 196, 340, 341
Բալակլավա 9, 304
Բալկաններ 191, 204
Բախմուտ 121
Բախչիսարայ 9, 10, 14
Բառնաուլ 349, 355
Բարին 252
Բելգորոդ 320, 389, 394
Բելոռուս 188, 348, 366, 374
Բելորեչենս 303, 319
Բերդավան 76,
Բեսարաբիա 27, 34, 141, 333
Բրյանսկ 306, 389, 395
Բուլղարիա 287, 333
Բուրյաթիա 391, 397

Գ

Գալիցիա 12
Գեորգիևսկ 72, 80, 122, 351

Գերմանիա 159
Գերմանական ԻԽՍՀ 308
Գրինիչկա 252
Գրոզնի 71, 72, 88, 122, 301,
302, 320
Գունայ (կա) 225, 327
Գուրզուֆ 304
Գորյաչի Կլուչ 31

Դ
Դաղստան, Դաղստանի ԻԽՍՀ
70, 89, 302, 303, 315, 317, 322,
351, 390, 396
Դոնբաս 406
Դոնեցկ 401
Դորպատ 132

Ե
Եգիպտոս 333,
Եդեսիա, Յեդեսիա գ. 77, 88,
222, 250, 256, 268, 349, 353
Ելիսավետապոլսկոյե (Շահում-
յան) 225, 229, 231, 257, 296
Եկատերինոսլավ 1 (Նովոնոս-
կովսկ) 19
Եսենտուկի 343
Եվպատորիա 9, 24, 25, 30, 37,
202, 304
Եվրոպա 9, 10, 11, 44, 151, 166
Երևան 54, 71, 110, 128, 131,
286, 326, 328, 361, 370, 380,
382

Զ
Զեյթուն 205
Զմյուռնիա 11

Է
Էջմիածին 20, 27, 129, 181,
326, 334
Էվենկական ԻՕ 391

Թ
Թաթարստանի ԻԽՍՀ,
Թաթարստան 307, 390, 396
Թայմիր (Ղուզանո-Նենեցական)
ԻՕ 389, 391, 392, 395, 396,
397
Թբիլիսի, Թիֆլիս 71, 72, 78,
85, 128, 131, 132, 148, 185,
208-210, 244, 286, 291, 337,
340

Թեիրան 333
Թենգինկա 357
Թեոդոսիա 17, 19, 20, 21, 24,
25, 28, 30, 36, 37, 203, 292,
304, 310
Թերեք 44, 68, 71, 72, 79, 80,
87, 88, 208, 209, 211, 221, 298,
299, 300, 301, 303
Թոփսի 94, 98
Թուրքիա 3, 10, 18, 20, 23, 38,
92, 135, 157, 158, 159, 161,
177, 191, 287, 299
Թուրքմենստան 348

Ժ
Ժելեզնովոդսկ 343

Ի
Ինգուշական ԻԽՍՀ,
Ինգուշեթիա 312, 320
Ինկերման 10

Ինոկենտևսկոյե 286
Իվանովո 48, 50, 268, 378, 389,
399
Իրկուտսկ 212, 213, 286, 392,
398

Լ
Լազարևսկ 319
Լեհաստան 10, 12
Լենինական 234, 337
Լենինավան 234, 255
Լենքորան 79
Լեռնային ԻԽՍՀ 300
Լերմոնտովո 382
Լիպեցկ 385, 395
Լվով 11, 12
Լուզանսկ 401

Խ
Խաբարովսկ 391, 398
Խաղիժենսկ 225, 299
Խանթի-Մանսիյսկի ԻՕ –
Յուզրա 385, 391, 392, 395-397
Խապոր 234
Խարբին 213, 309
Խարկով 123, 143, 188, 286
Խաբասիա 391, 397
Խերսոնես 10
Խոյթա 327
Խոստիանսկ 319
Խորիրդային Միություն, ՍՍՌՄ,
ՍՍՀՄ, ԽՍՀՄ 216, 217, 250,
253, 255, 261, 264, 267, 297,
300, 305, 313-316, 318, 320,
324, 325, 329, 330, 332, 333,

335, 337-340, 342-347, 369,
378, 399, 404, 405

Կ
Կաբարդինա-Բալկարական
ԻՍՍՀ 317, 322, 390, 396
Կազան 83, 307
Կազարաթ 10
Կալինին գ. 234
Կալինինգրադ 389, 395, 405
Կալմիկական ԻՄ, Կալմիկիա
308
Կալմուկարա 224, 252
Կալուգա 320
Կամչատկա 392, 405
Կանասկ 223
Կարաչաևո-Չերքեզական ԻՍՍՀ
390, 396
Կարելական ԻԽՍՀ, Կարելիա
305, 306, 389, 394
Կաֆա 9, 11, 13-18
Կեմերովո 392, 398,
Կերչ 10, 25, 30, 252, 292, 304
Կեոզլև (Եվպատորիա) 9, 10,
205
Կիլիկիա 9, 10, 205
Կիշկենե 224, 234, 252
Կիսլովոդսկ 263, 302, 343, 349
Կիրգիզական ԻԽՍՀ 310, 311
Կիրով 349, 355, 390, 396
Կիրովաբադ 336, 337, 339
Կիև 188, 208, 210, 286
Կյուրինսկ 304
Կոմի ԻՄ, Կոմի ԻԽՍՀ, Կոմի
305, 322, 389, 391, 395

Կոստրոմա 389, 395
Կովկաս, Անդրկովկաս, Հարավային Կովկաս 3, 4, 7, 10, 11, 21, 23, 28, 43, 51, 68, 69, 70, 71, 72, 73, 76, 78-83, 88, 89, 91, 92, 99, 109, 110, 112, 115, 118, 119, 120, 122, 125, 129, 131, 135, 150, 147, 176, 177, 183, 185, 186, 187, 196, 205, 207, 208, 209, 210, 215, 218, 221, 222, 225, 226, 234, 236, 237, 239, 244, 245, 250, 251, 254, 260, 261, 263, 269, 271, 272, 274, 276, 286, 287, 291, 292, 294, 295, 296, 299, 300, 302, 303, 308, 313, 316, 317, 318, 323, 324, 326, 327, 328, 329, 330, 333, 336, 342, 343, 345, 346, 347, 349, 353, 372, 397, 403
Կորյակական ԻՕ 391
Կրասնոդար, Եկատերինոդար 70, 86-88, 91, 137, 138, 208, 210, 231, 232, 243, 248, 249, 262, 263, 271, 276, 285, 294, 296, 299, 302, 303, 312, 315 - 321, 330, 341, 345, 346, 348 351, 357, 365, 371, 378, 391, 395, 404, 405, 420
Կրասնոյարսկ 268, 349, 356, 392, 398
Կրոպոտկին 303
Կուրան 71, 78, 86, 89, 186, 208, 209, 211, 223, 225, 232, 249, 261, 262, 291, 294, 298 - 304
Կուրանո-Արմյանսկ 225,

Կուրգան 392, 396
Կուրգանինսկ 349
Կուրսկ 320, 389, 395
Կուրսկի շրջան 222, 307
Կ. Պոլիս 11, 89, 90, 129, 148, 158, 159, 167, 177
Հ
Հայաստան, Հայկական ԽՍՀ, ՀՀ 4-9, 11-13, 17, 18, 150, 154-157, 159, 164, 165, 168, 175-178, 182, 185, 205 - 208, 210 - 214, 216, 230, 236, 246, 258, 263-267, 275, 283, 285, 287, 288, 290, 291, 308, 319, 323 - 325, 335, 338, 340, 342, 343, 351, 352, 361, 364, 366-376, 378-381, 385, 388, 394, 399, 401, 403, 405, 406
Հայկական (Արմյանսկի) շրջան 226, 227, 228, 229, 230, 232, 249, 250, 296
Հայկական Կիլիկիա՝ 9
Հայկաշեն 224, 252
Հանքային Ջրեր, Կովկասյան Հանքային Ջրեր Միներալնիե Վոդի 270, 317, 343
Հեռավոր Արևելք 212, 213, 214, 309, 314, 320, 324, 333, 349, 352, 398
Հին Ղրիմ 20-29, 37, 304
Հյուսիսային Կովկաս 7, 43, 69, 70, 72, 76, 78, 81, 82, 89, 91, 115, 120, 122, 125, 147, 183, 186, 187, 207, 209, 210, 218,

221, 222, 225, 234, 236, 237, 239, 244, 250, 251, 254, 260, 261, 263, 269, 271, 272, 276, 291, 294, 295, 296, 299, 300, 302, 303, 313, 316, 319, 326, 327, 328, 330, 333, 336, 343, 346, 347, 349, 353, 397, 403
Հռոմ 30
Հրեական ԻՄ 391, 397
Հունգարիա 10
Ղ
Ղազախստան, Ղազախական (Կազակական) ԻՄՍՀ 300, 301, 302, 304, 305, 307, 308, 310-312, 314, 315, 317, 318, 322, 348
Ղարաբաղ, Արցախ, ԼՂԻՄ, 357, 72, 134, 304, 336, 339, 342, 348, 358, 359, 372, 374, 379-382, 404, 405
Ղարաբաղլի 304
Ղարասուբազար 9, 10, 14, 18, 19, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 32, 33, 202, 292, 304
Ղզլար 26, 53, 59, 67-70, 72-84, 88-91, 302, 303, 330, 402
Ղրիմ, Ղրիմի ԻՄՍՀ, Տավրիկյան նահանգ 7-10, 11-22, 23, 27
Ղրիմ գ. 236
Ս
Մազադան 392, 398
Մայկոպ 71, 221, 225, 226, 299, 301 - 303, 327

Մարաթուկ 327
Մարի Էլ 390, 396
Մելիտոպոլ 292
Մեծ Սալա 94, 193, 194, 259, 328
Մեչետինսկ 303
Մերձավոր Արևելք 23
Մերձբալթիկա 348
Միջին Ասիա (Թուրքեստան) 38, 43, 239, 313, 326, 333, 336, 340, 372, 404
Մյասնիկյանի (Մյասնիկովսկի) շրջան 233, 234, 250, 259, 294, 260, 303
Մոզդոկ 59, 68 - 70, 73 - 75, 77, 80, 81, 85, 86, 88, 90, 91, 143, 222, 300, 303, 330, 402
Մոլդովա, Մոլդավիա 20, 21, 348
Մոնաստիրկա 252
Մորդովիա 390
Մոսկվա 7, 12, 40, 47, 54, 80, 89, 115, 118, 119, 138, 143, 148, 150, 152, 170, 249, 250, 272, 283, 338, 347
Մուրմանսկ 305, 389, 395
Յ
Յալթա 10
Յակուտիա, Սախա-Յակուտիա 391, 397
Յամալո-Նենեցական ԻՕ 392, 396
Յարոսլավլ 320, 395

Ն

Նաղեժդենակ 222
 Նալչիկ 122
 Նարիմ 327
 Նեդվիդովկա 259
 Նեկլինովսկ 234
 Նենեցական ԻՕ 395, 389,
 Նեսվիթա 94, 193, 233, 259
 Նիժնի Նովգորոդ 56, 150, 349,
 356
 Նովգորոդ 56, 305, 389, 395
 Նովոռոսիյսկ 212, 249, 276,
 302, 303, 326, 327, 349
 Նովոուզնեցկ 349, 356
 Նովոսիբիրսկ 268, 365, 392,
 398
 Նախիջևան, Նոր Նախիջևան
 (Դոնի Նախիջևան) 4, 7, 19, 22,
 27, 34, 61, 71, 72, 75, 91, 93,
 94, 95, 97-100-107, 109, 110,
 112, 113, 114, 116, 118-150,
 188, 189, 191, 193, 194, 200,
 232, 233, 235, 239, 240, 241,
 242, 288, 290, 294, 302, 303,
 326, 328, 330, 333, 336, 344,
 346, 347, 348, 351, 363, 367,
 370, 375, 402

Շ

Շահումյանովկա 224, 252
 Շամախի 169
 Շիրակ 333

Ո

Ոսկե Հորդա 8, 10

Չ

Չալթր 94, 233, 259, 295, 337,
 347
 Չեյարինսկ 347, 392, 396
 Չեչենական ԻԽՄՅ 397
 Չերեպովեց 305
 Չերկասկ 47
 Չերնիգով 19
 Չերնիգովսկոյե 232
 Չերնոմորիե 221, 222, 225, 226,
 249, 298-303, 305, 310
 Չերքեզիա 11, 23, 24
 Չիտա, Անդրբայկալ 212, 213,
 392, 398
 Չուկոտկա 391, 397
 Չուվաշական ԻԽՄՅ, Չուվաշիա
 307, 390, 396

Պ

Պարսկաստան 3, 11
 Պենգա 268, 307, 320, 391, 396
 Պետերբուրգ, Սանկտ Պետեր-
 բուրգ, Պետրոգրադ, Լենին-
 գրադ 4, 7, 37, 47, 54, 66, 89,
 115, 138, 143, 144, 145, 151,
 152, 153, 154, 156, 158-162,
 164, 167, 168, 169, 172, 175-
 177, 179-182, 186, 237, 269,
 275, 286, 305, 306, 315, 316,
 317, 322, 328, 330, 347, 354,
 365, 388, 389, 390, 395, 402,
 404, 405
 Պետրովսկ 234
 Պերեվալնայա 327
 Պյատիգորսկ 330, 341, 343,
 349, 350, 351

Պրիմորիե 391

Պրոլետարսկի շրջան 232
 Պոպովիե, Պրիվոլժսկ 39, 187,
 244, 307, 308, 387, 390, 391,
 396, 397, 403, 405
 Պսկով 305, 385, 395
 Պրիկումսկ 300, 302, 303

Ջ

Ջանայ 252
 Ջանկոյ 292, 304
 Ջենովա 10

Ռ

Ռեժեք 225,
 Ռյազան 70, 268, 389, 395
 Ռոմանովսկի 271
 Ռոստով, Դոնի Ռոստով, Դոն 14,
 19, 47, 94, 96, 97, 99, 100-103,
 105-107, 109, 110, 113-121,
 123, 124, 126-139, 140, 144-
 149, 183, 186-195, 200, 206-
 210, 218, 219, 221, 228, 232,
 234, 236, 237, 239, 240-242,
 247, 248, 250, 254-258, 260,
 261, 267, 268, 269, 276, 277,
 280, 282, 283, 286, 291-296,
 298-303, 309, 310, 312, 315-
 318, 321, 337, 338, 340, 341,
 343, 344, 346, 347, 354, 365,
 391, 395, 401, 403-406
 Ռումինիա 287, 333
 Ռուսաստան, ՌԽՖՍՅ, ՌԴ 3, 4,
 5, 6, 7, 10, 12, 13, 18, 19, 20,
 24, 25, 28, 29, 32, 35, 37, 38,
 39, 41, 42, 43, 44, 45, 46, 47,

48, 50, 52, 53, 54, 55, 56, 62,
 63, 66, 69, 70, 72-74, 82, 88,
 92, 95, 105, 112, 117, 118, 119,
 120, 121, 123, 125, 127, 129,
 135, 139, 143, 144, 147, 153,
 154, 155, 156, 157, 158, 161,
 162, 166, 169, 170, 181, 183,
 184, 185, 186, 187, 188, 189,
 201, 207, 209, 210, 211, 214,
 215, 217, 218, 219, 232, 235,
 236, 237, 238, 239, 243, 244,
 245, 246, 247, 254, 255, 258,
 261, 263, 266, 268, 269, 272,
 274, 276, 283, 284, 285, 286,
 289, 293, 297, 298, 299, 300,
 301-303, 305, 306, 307, 310-
 321, 323, 324, 326, 330, 338,
 343, 346, 347, 348, 349, 350,
 351, 352, 353, 354, 358-379,
 381-395, 398-399, 401-406

Ս

Սադովայա 327
 Սադովի 225
 Սալսկ 300
 Սախալին 392, 398
 Սակի 304
 Սամարա 286, 307
 Սարատով 391, 396, 397
 Սարաֆիննիկովո 80
 Սարպուզ 224, 252
 Սերպուխով 306
 Սիբիր 119, 188, 213, 214, 309,
 313, 314, 320, 349, 391, 392,
 397, 398, 405

Սիմֆերոպոլ (Աբմեչեթ) 9, 10,
17, 21, 24, 25, 28, 31, 33, 37,
195-203, 223, 252, 287, 291,
292, 304, 305, 329
Սիրիա 10, 325
Սլավյանսկ 304
Սմոլենսկ 306, 320, 389, 395
Սոչի 210, 211, 226, 228, 244,
249, 251, 268, 299, 303, 349,
351, 374
Սոսնովկա 356
Սպիտակ 173, 385
Սվերդլովսկի մարզ 392
Ստավրոպոլ 250, 263, 268,
298, 299, 300, 302, 303, 315,
316, 318, 320, 321, 327, 328,
330, 338, 349, 351, 353, 365,
378, 391, 396, 397, 404
Ստեպնովսկի շրջան 222, 304
Սուբաշի 25, 292
Սուդակ 9, 14, 17, 27, 292, 304
Սուլթան-Սալա 233
Սուխումի 210, 211, 340, 341
Սուվորովկա 351
Սուրբ Խաչ (Բուդյոնովսկ) 9, 17,
20, 70, 87, 98, 141, 267, 330,
340, 341, 347, 349, 352, 354,
402
Սուրխաթ (Հին Ղրիմ, Ստարի
Կրիմ) 9, 10, 13-15, 17, 18, 20-
29, 37, 203, 304
Սևաստոպոլ 19, 25, 28, 202,
252, 292, 304
Սևերո-Ղվիմսկ 305

Վ
Վան 64
Վենետիկ 10, 11, 419
Վեսայոլի 234
Վերին Ուզինակ
Վլադիկովկաս (Օրջոնոկիձե)
235, 263, 300 - 302, 347, 349,
353
Վլադիմիր 127, 351, 353, 389,
395
Վլադիվոստոկ 212, 213, 349,
355
Վսեվոլժսկ 349
Վոլգոգրադ (Ստալինգրադ)
268, 308, 321, 349, 356, 391,
396
Վոլոգդա 305, 390, 396
Վորոնեժ 19, 307, 320, 390,
391, 396
Վրաստան, Վրացական ԽՍՀ
48, 156, 211, 291 - 293, 314,
333, 336, 340, 342, 343, 406
Տ
Տազանրոզ 100, 101, 107, 109,
110, 120, 121, 123, 137, 279,
282
Տամբով 123, 307, 390, 396
Տենզինկա 349
Տիվա 392, 398
Տյոմեն 268, 320, 393, 397,
398
Տոմսկ 213, 327, 393, 399
Տվեր 379, 390, 396
Տուապսե 296, 299, 303, 319
Տուլա 390, 396

Տրուդ 234

ՈՒ

Ուդմուրտիա 390, 396
Ուզբեկստան 348
Ուլյանովսկ 307, 378, 391, 396
Ուկրաինա, Ուկրաինական ԽՍՀ
314, 345, 401, 406
Ուստ-Լաբինսկ 304
Ուստ-Օրդինսկի Բուրյաթական
ԻՕ 392
Ուրալ 309

Փ

Փարիզ 36, 66, 131, 241, 329
Փուրլուջա 252

Օ

Օդեսա 34, 188, 204, 205, 206,
286-288
Օմսկ 212, 213, 268, 378, 392,
398
Օշական 338
Օսեթիա, Հյ. Օսեթիա-Ալանիա
299, 390, 396
Օր (Պերեկոպ) 12, 24, 27
Օրաբազար (Արմյանսկի
Բազար, Արմյանսկ) 9, 17, 28,
30, 37, 225, 283, 284, 303, 304,
359
Օրեխովո-Ջուկո 306
Օրենբուրգ 307, 390, 391, 396
Օրյոլ 123, 307, 389, 395

Ֆ

Ֆիլիստով 382

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Բաժին 1. ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1917 Թ.: ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՏՆՏԵԱՍԿԱՆ, ՀԱՍԱՐԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ	7
Գլուխ 1. Ղրիմ	8
Գլուխ 2. Աստրախան	37
Գլուխ 3. Հյուսիսային Կովկաս	67
Գլուխ 4. Նոր Նախիջևան	92
Գլուխ 5. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութները	150
Բաժին 2. ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՌԴ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ	183
Գլուխ 1. Հայկական հասարակական-համայնքային կառույցները Ռուսաստանում հետհեղափոխական տարիներին. Խորհրդային իշխանության հաստատումն ու դրանց գործունեության ավարտը	183
Գլուխ 2. Հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները ՌԽՖՍՀ-ում	218
Գլուխ 3. Կրթամշակութային կյանքը. դպրոցը, գրական կյանքը, մամուլը	236
Գլուխ 4. Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԽՖՍՀ-ում 1920-1989 թթ.	297
Գլուխ 5. Հայության հոգևոր-եկեղեցական կյանքը ՌԽՖՍՀ-ում	323

Գլուխ 6. ՌԴ հայ համայնքն արդի փուլում. Թվաքանակի ու տեղաբաշխման ընդլայնում, ինքնակազմակերպական խնդիրներ.	358
6.1 «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության ստեղծումն ու գործունեության ուղղությունները	358
6.2. Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԴ-ում 2000-ական թթ. (ըստ 2002 թ. և 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարների վիճակագրական տվյալների)	385
ՎԵՐՋԱԲԱՆ	402
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..	407
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	422

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վ. Բ.

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Յ. Ս.

ՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան,
Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Բարթիկյան
Համակարգչային շարվածքը՝ Ա. Մարանդոզյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 22.03.2015 թ.

Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

RA, 0019, Yerevan, pr. Marshala Baghramyan 24/4

24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>